

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2014

ՀԱՏՈՐ VIII

Երևան
Փրինթինգո
2015

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410
Հ 247

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի
Հ 247 (հունվար-դեկտեմբեր 2014). -Եր.: Փրինթինֆո, 2015.
Հատոր VIII. –720 էջ:

Կազմող՝ **Աշխեն Ղարսյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի
խորհրդական, իրավագիտության թեկնածու

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-831-81-7

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2015
© Աշխեն Ղարսյան (բովանդակության համար), 2015



german
cooperation

DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

«Չարավային Կովկասում իրավական և դատական
բարեփոխումների համար խորհրդատվություն»
ծրագիր

Programm "Rechts- und Justizreformberatung im Südkaukasus"

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային
համագործակցության ընկերության (GIZ)
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,
որ արտացոլեն ԳԴՅ կառավարության տեսակետները

ՆԱԽԱԲԱՆ

Մարդու իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք հռչակած յուրաքանչյուր իրավական պետության առաջնային խնդիրներից է այդ իրավունքների և ազատությունների պաշտպանության համար գործուն կառուցակարգեր ապահովելը, որոնք առավելագույն կերպով ապահովեն դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը: Ման կառուցակարգերի ներդրումը, անշուշտ, պահանջում է տևական ժամանակ և շարունակական բնույթի միջոցառումների որոշակի համակարգ: Այս առումով ՀՀ-ում դեռևս շարունակում է առաջնային համարվել դատավարական օրենսդրությունների կատարելագործման խնդիրը: Ուստի պատահական չէ, որ ՀՀ քաղաքացիադատավարական և վարչադատավարական օրենսդրություններն իրենց կարճատև գոյության ընթացքում արդեն իսկ բազմիցս ենթարկվել են արմատական փոփոխությունների: Ընդ որում, օրենսդրական փոփոխությունները որոշ դեպքերում եղել են այնքան առանցքային, որ էապես փոփոխել են այս կամ այն դատավարական ինստիտուտի էությունը: Վերոգրյալի համատեքստում վճռաբեկ բողոքարկման ինստիտուտը ևս բացառություն չէ: Դատավարական այս ինստիտուտի թերևս առաջին էական փոփոխությունը 2005 թվականին իրականացված սահմանադրական բարեփոխումներն էին, որոնց արդյունքում Վճռաբեկ դատարանին, որպես ՀՀ բարձրագույն դատական ատյանի, վերապահվեց օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթ՝ սկիզբ դնելով իրավական այնպիսի նոր մշակույթի ձևավորմանը, ինչպիսին նախադեպային իրավունքն է: Վերջին տարիների զարգացումները, սակայն, փաստեցին, որ 2005 թվականին ներդրված վճռաբեկ բողոքարկման մոդելը կատարյալ չէ և պահանջում է որոշակի փոփոխություններ և լրացումներ: Ման անհրաժեշտությունն արձանագրվեց նաև ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով», որը կոչված է նպաստել քաղաքացիական և վարչական արդարադատության արդյունավետության բարձրացմանը, դատավարական գործառույթների մատչելիության ապահովմանը:

Վերոգրյալին համահունչ՝ ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով առանցքային փոփոխության ենթարկվեց վճռաբեկ բողոքարկման ինստիտուտը: Կանխատեսելի արդարադատության ապահովման, վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի արդյունավետության բարձրացման նկատառումով հստակեցվեցին վճռաբեկ բողոքի ընդունելիության չափանիշները: Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակին համահունչ սահմանվեցին վճռաբեկ բողոքի բովանդակությանը և վճռաբեկ դատարանի կողմից ընդունվող որոշումներին ներկայացվող նոր պահանջներ, ներդրվեցին վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու դատավարական ինստիտուտները:

Շշված փոփոխությունները, անշուշտ, չէին կարող չանդրադառնալ պալատի ընթացիկ գործունեության և մասնավորապես՝ պալատի կողմից կայացվող որոշումների կառուցվածքի և բովանդակության վրա: 2014 թվականը նախ և առաջ առանձնացավ նրանով, որ կատարված օրենսդրական փոփոխություններից հետո պալատի կողմից վարույթ ընդունված վճռաբեկ բողոքների կապակցությամբ կայացվող որոշումները բովանդակում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վար-

չական դատավարության օրենսգրքերով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:

Անցնող տարին առանձնացավ նաև նախադեպային բազմաթիվ որոշումների ընդունմամբ, որոնք, անշուշտ, ուղղված են միասնական դատական պրակտիկայի ապահովմանը և իրավունքի զարգացմանը:

Քաղաքացիական գործերով հատկապես պետք է առանձնացնել սեփականության իրավունքի, գործարքների անվավերության, հայցային վաղեմության ինստիտուտի որոշ խնդրահարույց հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները: Մասնավորապես, վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններից՝ գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու նախապայմանի գնահատման առանձնահատկություններին՝ սահմանելով այդ պայմանի գնահատման որոշակի չափանիշներ: Հատկանշական է ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի և դրա բաժանման խնդրի վերաբերյալ որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ համատեղ սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի օտարումից ստացված դրամական միջոցները ևս հանդիսանում են ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը և այդպիսի միջոցների բաժանման հայցերով հայցվորը պետք է ապացուցի համապատասխան դրամական միջոցների գոյության փաստը: Առանձնահատուկ պետք է համարել արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ վճեի ենթակայության հարցի շուրջ կայացված որոշումը, որում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է քննության բացառապես դատարանում: Հատկանշական է նաև շահագրգռվածության առկայությամբ գործարքների վիճարկման առանձնահատկությունների վերաբերյալ որոշումը: Գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում էլ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայցային վաղեմության և նեգատոր հայցի հարաբերակցության խնդրին, միանշանակ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ նեգատոր հայցերով հայցային վաղեմություն ենթակա չէ կիրառման:

Ուղղորդող նշանակություն ունեն սնանկության ինստիտուտի առանձին վիճահարույց հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հատկանշական է գործերից մեկով կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարտապանին սնանկ ճանաչելու գործի վարույթի կարճման խնդրին այն դեպքում, եթե նախկինում նույն պարտապանի դեմ սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը մերժվել է: Մեկ այլ որոշմամբ էլ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու միջոցով պետության գույքային շահերի պաշտպանության առաջնայնությանը և կանխամտածված սնանկության հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների առանձնահատկություններին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու՝ որպես պետության գույքային շահերի պաշտպանության միջոցի առաջնայնությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը, իրավասու պետական համապատասխան մարմնի կամ համայնքի ղեկավարի **պարտականությունն է**, որը չկատարելու դեպքում այդ պարտականությունը պետք է կատարի դատախազությունը, և որը չկատարելու համար նշ-

ված մարմինների իրավասու պաշտոնատար անձինք անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի համար: Անդրադառնալով կանխամտածված սնանկության հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կանխամտածված սնանկության դեպքում պարտապան իրավաբանական անձի ղեկավարը կարող է պարտապանի պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն կրել միայն այն դեպքում, երբ սնանկության վարույթում արձանագրվել է պարտավորությունը կատարելու համար պարտապանի գույքի անբավարարությունը:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը բողոքարկվելու դեպքում դրամական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տոկոսների և տուժանքների հաշվարկման ու գանձման խնդրին՝ արձանագրելով, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են վերջինիս դրամական պարտավորությունների նկատմամբ տուժանքի հաշվարկումը, վճարումը կամ գանձումը՝ անկախ տվյալ վճռի բողոքարկված լինելու հանգամանքից:

Հիշատակման արժանի է նաև այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը հանգամանալից վերլուծել է բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման կարգը, անդրադարձել է ընկերության բաժնետիրոջ՝ այդ պարտատոմսերի գնման նախապատվության իրավունքի իրացման հնարավորության հարցին:

2014 թվականին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև աշխատանքային իրավունքի որոշ խնդրահարույց հարցերի: Մասնավորապես, որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արտադատարանական կարգով աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով պետական մարմիններին դիմելը չի ընդհատում կամ կասեցնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների ընթացքը: Մեկ այլ որոշման շրջանակներում էլ, անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու և այդ դեպքերում աշխատանքում վերականգնելու առանձնահատկություններին, Վճռաբեկ դատարանը գտել է, որ քննարկվող դեպքում վերականգնվել հնարավոր է միայն նախկին աշխատանքում, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ:

Վճռաբեկ դատարանը 2014 թվականին ընդունված մի շարք որոշումներում իրավական դիրքորոշում է հայտնել նաև ապացուցման և նախադատելիության ինստիտուտների, գործը դատաքննության նախապատրաստելու փուլի, վերաքննության վարույթի վիճահարույց որոշ հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, հատկանշական է ապացույցների թույլատրելիության կանոնների վերաբերյալ ընդունված որոշումը, որում Վճռաբեկ դատարանը հանգամանալից սահմանել է այն կանոնները, որոնցով պետք է ղեկավարվեն դատարանները յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս: Հիշատակման արժանի է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետաքննության ընթացքում տրված բացատրության և նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի՝ քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցների թույլատրելիության հարցին և դրանց արժանահավատության գնահատման առանձնահատկություններին: Այսպես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ բացատրությունը և ցուցմունքը քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապա-

ցույցներ գնահատելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել դրանց ձեռքբերման՝ քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգը, մասնավորապես՝ այն, որ ցուցմունքի պարագայում դրա ձեռքբերման ընթացակարգն առավել հիմնավոր երաշխիքներ է բովանդակում այդ ապացույցի արժանահավատությունն ապահովելու առումով:

Դատական պրակտիկայի համար ուղղորդող նշանակություն ունի Վճռաբեկ դատարանի այն որոշումը, որում վերջինս իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ նախկինում քննված վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև քննվող քաղաքացիական գործի համար ունեն նախադատելի նշանակություն:

Գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում էլ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նախնական դատական նիստի ավարտից անմիջապես հետո գործի դատաքննությանն անցնելու հնարավորության հարցին՝ արձանագրելով, որ դատարանը նախնական դատական նիստի ավարտից անմիջապես հետո կարող է որոշում կայացնել դատաքննությունը սկսելու մասին բացառապես այն դեպքում, երբ նախնական դատական նիստին ներկայացել են գործին մասնակցող բոլոր անձինք և նրանց հնարավոր է իրագրել կլ գործը դատաքննության նշանակելու մասին որոշման վերաբերյալ:

Մի շարք այլ գործերով կայացված որոշումներում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել վերաքննության սահմանների, վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները փոփոխելու, վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի հետաձգված բողոքարկման խնդիրների վերաբերյալ:

2014 թվականը հատկանշական էր նաև վարչական գործերով ընդունված որոշումներով: Հարկ է առանձնացնել գործերից մեկով կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մեկից ավելի անձանց հասցեագրված, պատասխանատվություն սահմանող վարչական ակտի առ ոչինչ լինելու հարցին՝ արձանագրելով, որ ակտում մեկից ավելի հասցեատեր նշված լինելու դեպքում, երբ պարզ է, թե կոնկրետ ովքեր են այդ հասցեատերերը, ակտի առոչնչության հատկանիշն առկա չէ: Հիշատակման արժանի է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին՝ բացահայտելով այդպիսի իրավական ակտերի էությունը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավական ակտը համարվում է պատասխանատվությունը վերացնող, եթե դրանով իրավախախտում չի համարվում այն արարքը, որը նախկին իրավական ակտով համարվում էր իրավախախտում, իսկ իրավական ակտը համարվում է պատասխանատվությունը մեղմացնող, եթե սանկցիայում նախատեսված պատասխանատվության տեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատասխանատվության տեսակով:

Գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում էլ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն խնդրին, թե արդյոք խանութի տարածքում պիտանիության ժամկետն անցած ապրանքների գտնվելու փաստն ինքնին բավարար է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված գանցանքը կատարված համարելու և անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Այսպես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վկայակոչված հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման առկայության համար անհրաժեշտ է ապրանքների վաճառքի փաստի առկայություն, այսինքն՝ վաճառք իրականացնող սուբյեկտի (վաճառողի) կողմից ապրանքների վաճառքին ուղղված գործողություններ (օրինակ՝ վաճառողի կողմից գնորդին ապրանք հանձնելու և գնորդի կողմից այդ ապրանքն ընդունելու և դրա համար ապրանքի գինը վաճառողին վճարելու փաստը կամ գնորդների համար տեսանելի (հասանելի) վայրում ապրանքները տեղադրված (ցուցադր-

ված) լինելու՝ ապրանքի վաճառքի հրապարակային օֆերտայի փաստի առկայությունը):

Մեկ այլ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքը գործնականում իրացնելը: Ընդ որում, օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը:

Ուղղորդող նշանակություն ունեն «գովազդ» և «արտաքին գովազդ» հասկացությունների, արտաքին գովազդի տեղադրման համար թույլտվության տրամադրման հարցի վերաբերյալ որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Առանձնահատուկ կարևորություն ունի նաև գործերից մեկով կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապրանքային նշանի իրավական պահպանության երաշխիքներին, ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոններին, ինչպես նաև՝ հանրահայտ ապրանքային նշանների իրավական պահպանության առանձնահատկություններին:

2014 թվականին ընդունված մի շարք որոշումներում անդրադարձ է կատարվել նաև հարկային, մաքսային օրենսդրության խնդրահարույց հարցերին, մասնավորապես՝ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն օրենքով սահմանված դեպքերում կադաստրային արժեքով որոշելու համար վերաբերելի և թույլատրելի ապացույցների հարցին, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի կանոնակարգումները խախտելու հետևանքով առաջացող իրավահարաբերություններին: Որոշումներից մեկում էլ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձանց համար սահմանված ապրանքների հայտարարագրման պարտականությունը կարող է համարվել պատշաճորեն կատարված, երբ վերջինս, ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելով երրորդ անձի անձնական օգտագործման իրերը, ընտրել է մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կանաչ» ուղին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հանգամանալից սահմանելով, թե որ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող իրը հանդիսանում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխող ֆիզիկական անձի անձնական օգտագործման իր, գտել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված արտոնությունից ֆիզիկական անձը կարող է օգտվել միայն իրեն պատկանող անձնական իրերի պարագայում:

Մի շարք որոշումներով Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել նաև վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման առանձնահատկություններին՝ արձանագրելով, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ, այլ խոսքով՝ շահագրգիռ անձին:

Հատկանշական է գործերից մեկով կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է երրորդ անձանց ներկայացուցիչների վճարների՝ որպես դատական ծախսի բաշխման հնարավորության հարցին: Համակարգային վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ երրորդ անձանց ներկայացուցիչների վճարները ևս ներառվում են դատական ծախսերի կազմում, իսկ երրորդ անձինք, որոշակի բացառություններով օգտվելով կողմի իրավունքներից, այդուհանդերձ, ունեն իրենց կրած դատական ծախսերի հատուցում ստանալու իրավունք:

Վարչական դատավարության շրջանակներում անդրադառնալով վերաքննության վարույթի առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը որոշումներից մեկում արձանագրել է, որ թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել:

Դատական պրակտիկայի համար ուղղորդող նշանակություն ունի նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք օրենսդիրը հարկադիր կատարողին օժտել է պարտապանի դիմումի հիման վրա որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքի վերացման լիազորությամբ: Վերաբերելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու, հայցի ապահովումը վերացնելու, ինչպես նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովման միջոցը ձևափոխելու լիազորությամբ օժտված է բացառապես դատարանը, որն իր այդ լիազորությունն իրականացնում է համապատասխան որոշում ընդունելով, հետևաբար հարկադիր կատարողը նման լիազորություն չունի:

Իհարկե, վերը թվարկված որոշումներն ամբողջը չեն և առկա են նաև բազմաթիվ այլ գործեր, որոնցով կայացված որոշումներն ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու դատական պրակտիկայի ձևավորման համար: Դրանք առավել ամփոփ ձևով ներկայացված են սույն ընտրանում:

Այս ընտրանին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների թվով ութերորդ ժողովածուն է և բովանդակում է նաև գրքում ընդգրկված դատական ակտերի համառոտագրերը: Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը:

Հուսով եմ, որ սույն ժողովածուն, ինչպես և նախորդները, շարունակելու է նպաստել կայացված նախադեպային որոշումների հասանելիության և կիրառության ապահովմանը, խթանելու է դատավորների և դատական ծառայողների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, իրավակիրառ հանրության այլ ներկայացուցիչների գործունեության արդյունավետության բարձրացմանը, դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ Ե. Հ. Խունդկարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 8

Հունվար-դեկտեմբեր 2014

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| | |
|--|------------|
| Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ | 1 |
| Ձեռքբերման վաղեմություն | 1 |
| Ընդհանուր սեփականություն | 10 |
| Ընդհանուր դրույթներ գրավի մասին | 32 |
| Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանություն | 48 |
| Գործարքներ | 73 |
| Հայցային վաղեմություն | 108 |
| Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին | 135 |
| Պարտավորություններ կատարելը | 135 |
| Պարտավորությունների կատարման ապահովում | 143 |
| Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար | 159 |
| Պայմանագրերից ծագող պարտավորություններ | 171 |
| Նվիրատվություն | 171 |
| Վարձակալություն | 179 |
| Հանձնարարություն | 186 |
| Բանկային հաշիվ | 195 |
| Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ | 204 |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ | 231 |
| ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ | 250 |
| ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ | 272 |
| ՀՈՂԱՅԻՆ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ | 287 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ | 302 |
| Ինքնաբացարկի միջնորդության լուծման կարգը | 302 |

| | |
|--|-----|
| Ապացույցներ և ապացուցում | 307 |
| Դատական ծախսեր | 369 |
| Գործի վարույթի կարճումը | 377 |
| Դատական նիստի արձանագրումը..... | 384 |
| Գործը դատաքննության նախապատրաստելու կարգը..... | 390 |
| Վարույթը վերաքննիչ դատարանում | 396 |
| Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով..... | 424 |

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

| | |
|--|------------|
| ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԵԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ..... | 430 |
| ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ..... | 456 |
| ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... | 502 |
| ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ | 517 |
| ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ | 538 |
| Հիմնական դրույթներ | 538 |
| Ապացույցներ և ապացուցում..... | 565 |
| Վարույթը վերաքննիչ դատարանում..... | 574 |
| Դատական ակտերի հարկադիր կատարումը | 583 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ձեռքբերման վաղեմություն

08.05.2014թ.

1. Լուսյա Մարյանյան v. Վալերիկ Սողոմոնյան և մյուսներ, քաղ. գործ թիվ Էջ ԵՄԴ/0333/02/12 1-9

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններից՝ գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու նախապայմանի գնահատման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար կարևորվում են տիրապետման ժամկետը, այն է՝ տասը տարի, և այդ ժամկետի ընթացքում տիրապետման անընդմեջ լինելու հանգամանքը, այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի:

Ընդ որում, տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ՝ գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու նախապայմանին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի բովանդակության առումով գնահատական տալու համար էական է պարզել անշարժ գույքը տիրապետողի վարքագիծը և վերաբերմունքը, տիրապետվող գույքի նպատակային նշանակությունը, որակական և այլ հատկանիշները, տիրապետման նպատակն ու առանձնահատկությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ օրենսդիրը չի նախատեսել, թե ինչ եղանակով կարող է իրականացվել գույքի տիրապետումը՝ յուրաքանչյուր դեպքում այդ փաստի գնահատումը թողնելով իրավակիրառողի հայեցողությանը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ գույքի տիրապետման փաստի մասին կարող է վկայել ինչպես գույքի օգտագործումը, այնպես էլ դրա կառավարմանը մասնակցելը, այդ գույքի մասին հոգ տանելը կամ ցանկացած այլ եղանակ, որը հավաստում է գույքը տիրապետողի տնտեսական իշխանության ներքո գտնվելու փաստը:

Ընդ որում, քանի որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ պայման է գույքը որպես սեփականը տիրապետելու նախապայմանը, հետևաբար գույքի տիրապետումը կարող է արտահայտվել նաև գույքն այլ անձանց օգտագործմանը հանձնելով:

Սույն գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բնակելի տան դեպքում տիրապետումը կարող է արտահայտվել ինչպես գույքը փաստացի գրառեցնելու (այնտեղ բնակվելու), այնպես էլ այն իր հայեցողությամբ այլ ձևով տիրապետելու միջոցով, հետևաբար գույքն իր հայեցողությամբ տիրապետելու օրինակ կարող է հանդիսանալ նաև գույքը բացահայտ տիրապետողի կողմից այն իր հայեցողությամբ այլ անձի ժամանակավոր պահպանությանը կամ օգտագործմանը հանձնելը: Ընդ որում, այս դեպքում այլ անձի ժամանակավոր պահպանությանը կամ օգտագործմանը հանձնելը հիմք չէ ձեռքբերման վա-

ղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ տիրապետման տասը տարվա անընդմեջ լինելու նախապայմանի ընդհատման համար:

Ընդհանուր սեփականություն

26.12.2014թ.

2. Լուսրա Դավթյան v. Արսեն Մակարյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԼԴ4/0280/02/12

Էջ
10-17

Խնդիր. Ընդհանուր գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու հայցապահանջով պարտապանի մոտ այլ գույքի առկայության փաստը վիճելի լինելու դեպքում ո՞վ պետք է կրի դրա բացասական հետևանքները:

**Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահասարակել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածների վերաբերյալ նախկինում արդարահայրած իրավական դիրքորոշումները:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պարտատիրոջ պահանջի իրավունքը ծագում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված այն դեպքի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակից պարտապանի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար: Նման իրավակարգավորումը, Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ, նպատակ է հետապնդում ապահովել ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքների առավելագույն պաշտպանությունն իրենց հետ ընդհանուր գույքում բաժին ունեցող պարտապանի ունեցած պարտավորությունների կատարման գործընթացում:

Օրենսդիրը, ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների համար իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ սահմանելով հանդերձ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում, այն է՝ ընդհանուր գույքից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության, ինչպես նաև ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից պարտապանի բաժինը գնելուց հրաժարվելու պարագայում, նախատեսել է այդ իրավունքների սահմանափակման հնարավորություն, որի նպատակն է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների և պարտատիրոջ իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելը: Նման իրավիճակում օրենսդիրը պարտատիրոջ իրավունքների պաշտպանության միակ հնարավոր միջոց է համարել պարտատիրոջ իրավունքը՝ պահանջելու ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը հրապարակային սակարկություններով վաճառել՝ դրանից ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաշխելով և բռնագանձումը պարտապանի բաժին գումարի վրա տարածելով:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն իրավական հարցին, թե երբ է կարելի պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով վաճառել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,

2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,

3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը (*յրեւս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Դերենիկ Սարգսյանի և նյութների թիվ ԳԴ4/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի մեկնաբանությանը՝ արձանագրելով, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*յրեւս, Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱԿԳ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վկայակոչված իրավաբանության և դրանց մեկնաբանման ուղղված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով պարտապանի մոտ այլ գույքի առկայության փաստն ապացուցելու պարտականության բաշխման խնդրին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտատերն ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնելու իր իրավունքը կարող է իրացնել միայն պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում, հետևաբար և պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության փաստն ապացուցելու պարտականությունը կրում է պարտատերը: Միաժամանակ այն դեպքում, երբ պարտապանն առարկում է նշված փաստի դեմ՝ վկայակոչելով այլ գույքի առկայությունը, վերջինս է կրում այլ գույքի առկայությունն ապացուցելու պարտականությունը, հետևաբար նաև այդ փաստի վիճելի լինելու դեպքում՝ դրանից բխող բացասական հետևանքները:

08.05.2014թ.

3. Սամվել Մելիքյան v. Առլեթ Ավարյան, քաղ. գործ թիվ ԵԿԳ-1418/02/12

Խնդիր. 1) Արդյոք ամուսիններից մեկի կողմից նրանց ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքն օտարելու արդյունքում ստացված դրամական միջոցների նկատմամբ մյուս ամուսինն ունի ընդհանուր սեփականության իրավունք, և

2) արդյոք այդ դրամական միջոցների՝ որպես ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքի, բաժանման հայցով ենթակա է ապացուցման այդ դրամական միջոցների առկայության փաստը:

**Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահասարտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անտուժվ է ձևակերպված, մինևույն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը (*յրեւս, Ռաֆայել Աբազյանը և Ամիլ Երիցյանն ընդդեմ Ռուբեն Աբազյանի և «Գեմարոն» նորարարական փարմաթի նորարի թիվ 3-415(ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը*):

Վերը նշված հոդվածի իմաստով բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամու-

Էջ
18-24

սիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտագործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը (*յոն'ս, Ռուզաննա Ծապուրյանն ընդդեմ Գևորգ Մաղունյանի և այլոց թիվ ԵԱԲԴ/2304/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.06.2006 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումն ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսանալու և այդ հարցում առկա բացառությունների վերաբերյալ՝ Վճարելի դատարանը հավելել է, որ օրենսդիրը, նախատեսելով «գույք» հավաքական եզրույթը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանափակումներից բացի, այլ բացառություն չի նախատեսել, հետևաբար ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում կարող են ներառվել նաև **դրամական միջոցները**:

Վճարելի դատարանի վերոնշյալ եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտ է **գույքը**՝ ներառյալ **դրամական միջոցները**, արժեթղթերը և գույքային իրավունքները:

Դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, մի դեպքում դրամը կարող է հանդիսանալ քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն, մեկ այլ դեպքում՝ որպես այդ հարաբերությունների համարժեքային (էկվիվալենտային) օբյեկտ:

Վճարելի դատարանը, հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունը, գտել է, որ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքային զանգվածի կազմում դրամական միջոցները կարող են ներգրավվել՝

- ուղղակիորեն, օրինակ՝ որպես ամուսիններից մեկի աշխատավարձ, հոնորար, շահաբաժին կամ այլ եկամուտ.

- անուղղակիորեն, որպես այդ գույքային զանգվածի կազմի մեջ մտնող մեկ այլ գույքի համարժեք, օրինակ՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի վաճառքից ստացված դրամական միջոցները:

Վերջինիս պարագայում, ըստ էության, տեղի է ունենում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող մի գույքի փոխակերպում մեկ այլ գույքով:

Նույն որոշման շրջանակներում Վճարելի դատարանն անդրադարձել է նաև դրամական միջոցների՝ որպես ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքի, բաժանման հայցով այդ դրամական միջոցների առկայության փաստն ապացուցելու խնդրին:

Վերլուծելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասը, նույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածը՝ Վճարելի դատարանը նշել է, որ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը կարող է բաժանվել ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծվելուց հետո:

Վճարելի դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում ամուսիններից որևէ մեկի կողմից ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի բաժանման պահանջ ներկայացվելիս որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ պետք է հիմնավորվի բաժանման ենթակա գույքի առկայությունը, այսինքն՝ այն, որ բաժանման ենթակա գույքն օբյեկտիվ իրականությունում գոյություն ունի:

Ընդ որում, վերոնշյալ փաստի ապացուցման բեռը և դրանից բխող բացասական հետևանքները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի համաձայն, կրում է այդ փաստը վկայակոչող կողմը:

08.05.2014թ.

4. Գագիկ Միսակունի v. Սարգիս Գարուկյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԱՆԳ/1628/02/11

Էջ 25-31

Խնդիր. Այս որոշմամբ Վճարելի դատարանն անդրադարձել է ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բոլոր մասնակիցների կողմից տիրապետելու և օգտագործելու, ինչպես նաև այդ պայմաններում մասնակցի կողմից գույքն ապօրինի տի-

րապետողից հետ պահանջելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետը, 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սեփականատիրոջ իրավագործությունների (տիրապետում, օգտագործում, տնօրինում) ամբողջությունը կազմում է սեփականության իրավունքի բովանդակությունը, և դրանց ամբողջությունն օրենքով պատկանում է սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի կրողի, և սահմանում սեփականության իրավունքի իրականացման սահմանները, ինչն ապահովում է գույքի նկատմամբ սեփականատիրոջ լիակատար գերիշխանությունը՝ սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, նույն օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը, սահմանելով սեփականության ներքո գտնվող գույքի բաժնային և համատեղ սեփականության իրավունքի իրավական ռեժիմները, միաժամանակ ամրագրել է համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը մասնակիցների կողմից միասին տիրապետելու և օգտագործելու ընդհանուր կարգ, ընդ որում, ելնելով համասեփականատերերի հայեցողությունը հաշվի առնելու սահմանադրական պահանջից, հնարավորություն է վերապահել համասեփականատերերին՝ փոխադարձ համաձայնությամբ սահմանելու տիրապետման և օգտագործման այլ կարգ:

Վերը նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տիրապետման և օգտագործման այլ կարգ նախատեսված չլինելու դեպքում նշված գույքը կարող է տիրապետվել և օգտագործվել բացառապես բոլոր մասնակիցների համաձայնությամբ, որը կոչված է ապահովել համասեփականատերերից յուրաքանչյուրի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գույքը միասին տիրապետելու և օգտագործելու իրավունքի իրացումը:

Վերոգրյալով է պայմանավորված համասեփականատերերից յուրաքանչյուրի կողմից իր տիրապետության ներքո գտնվող գույքի նկատմամբ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ընդդեմ այն անձանց, որոնց գործողությունները խոչընդոտում են սեփականատիրոջը պատշաճ իրականացնելու իր օգտագործման, տիրապետման, տնօրինման իրավագործությունները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում սեփականատերն իրավասու է պահանջել վերացնելու իր սեփականատիրական իրավունքները լիարժեք իրականացնելու հետ կապված սահմանափակումները, ընդ որում, սահմանափակումները կարող են լինել ինչպես օրինական, այնպես էլ անօրինական, երբ ապօրինի գործողությունների միջոցով խոչընդոտում են սեփականատիրոջը օգտագործել, տիրապետել և տնօրինել իր գույքը:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, արձանագրել է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքն այլ անձանց կողմից ապօրինի տիրապետվելու պայմաններում համատեղ սեփականության մասնակիցներից որևէ մեկը զրկված չէ հետ պահանջելու իր գույքն ապօրինի տիրապետողից, հատկապես այն պարագայում, եթե անգամ առկա չէ մյուս մասնակիցների համաձայնությունը գույքն այլ անձանց տիրապետումից հետ պահանջելու վերաբերյալ: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետը չի սահմանափակում մասնակցի սեփականության իրավունքի պաշտպանությունն ընդդեմ ապօրինի տիրապետող անձանց, եթե անգամ առկա չէ բոլոր մասնակիցների համաձայնությունը:

1 Այսուհետք սույն բաժնում Կոնվենցիա:

Ընդհանուր դրույթներ գրավի մասին

08.05.2014թ.

5. Արծրուն Պողոսյան v. «ԳԻՏԻ-SOUSO» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ՏԴ-1/0046/02/13

Էջ
32-40

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գրավադրված անշարժ գույքի տարածքում գտնվող շարժական գույքի՝ պատկանելիք լինելու խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիտարկումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 138-րդ հոդվածի, 228-րդ հոդվածի 1-ին կետի, 230-րդ հոդվածի 1-ին կետի, 232-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գրավը պարտավորության կատարման ապահովման միջոց է, որով կարող է գրավադրվել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ), բացառությամբ այն գույքի, որն օրենքով սահմանված կարգով գրավադրման ենթակա չէ, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով: Ընդ որում, օրենսդիրը, գրավի առարկայի նկատմամբ սահմանելով գրավառուի իրավունքները, ամրագրել է նաև գրավառուի իրավունքները գրավի առարկայի պատկանելիքների վրա՝ նշելով մեկ բացառություն, այն է՝ պայմանագրով այլ բան նախատեսված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գրավի առարկայի պատկանելիքների վրա գրավառուի գույքային իրավունքների տարածման հարցը լուծելիս դատարանները նախ պետք է պարզեն տվյալ գործով գրավի առարկան, որից հետո նոր միայն որոշեն այլ գույքի՝ գրավի առարկայի (գլխավոր իրի) պատկանելիք լինելու հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ յուրաքանչյուր առանձին դեպքում այս կամ այն իրի պատկանելիք լինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է վեր հանել այդ իրի կապն այն իրի հետ, որը հանդիսանում է գործով վիճելի իրավահարաբերության օբյեկտը: Ընդ որում, իրի պատկանելիքները հարկ է տարբերակել իրի բաղկացուցիչ մասերից:

Այսպես՝ եթե մի քանի իր միմյանց հետ փոխկապակցված են որոշակի տնտեսական նշանակությամբ, ապա գլխավոր հանդիսանում է այն իրը, որն ունի ինքնուրույն նշանակություն և կախված չէ այլ իրերից, իսկ պատկանելիք է այն իրը, որը ծառայում է ի օժանդակություն գլխավորին և լրացնում է այն: Պատկանելիքը, փոխկապակցված լինելով գլխավոր իրի հետ, ծառայում է այդ իրի տնտեսական նշանակությանը և բարձրացնում դրա օգտագործման օգտակարությունը՝ ավելացնելով ոչ միայն օգտագործվող իրի նյութական, այլև էսթետիկական կողմը: Ընդ որում, պատկանելիքը չլինելով գլխավոր իրի բաղկացուցիչ մաս, այլ ծառայելով գլխավոր իրին, վերջինիս հետ հանդես է գալիս որպես մեկ ամբողջություն: Դա է պատճառը, որ օրենսդիրն ամրագրել է պատկանելիքի՝ գլխավոր գույքի ճակատագրին հետևելու դրույթը՝ բացառություն նախատեսելով պայմանագրում այլ բան նախատեսված լինելը:

Ի տարբերություն իրի (գույքի) բաղկացուցիչ մասի, պատկանելիքն ունի ինքնուրույն նշանակություն: Բացի այդ, ֆիզիկապես և գլխավոր իրը, և պատկանելիքը կարող են գոյություն ունենալ առանձին (օրինակ՝ ակնոցն ու իր պատյանը, որում ակնոցը՝ գլխավոր, իսկ պատյանը՝ պատկանելիք, շախմատը, որում խաղատախտակը՝ գլխավոր, իսկ խաղաքարերը՝ պատկանելիք):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 01.09.2012 թվականին Արծրուն Պողոսյանի և Ընկերության տնօրեն **Գրիգոր Ոսկանյանի** միջև անորոշ ժամկետով կնքվել է գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր, համաձայն որի՝ Ընկերության ժամանակավոր, անհատույց օգտագործմանն է հանձնվել նույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածում նշված գույքը: Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրի 1.2 կետում նշված գույքը սեփականության իրավունքով պատկանել է փոխատուին՝ Արծրուն Պողոսյանին:

31.08.2012 թվականին Բանկի (այսուհետ՝ Գրավառու), Ընկերության (այսուհետ՝ Վարկառու) և **Գրիգոր Ոսկանյանի** (այսուհետ՝ Գրավատու) միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ Կ2605/3 պայմանագրով (այսուհետ՝ Հիփոթեքի պայմանագիր) վարկատուի կողմից հատկացվող վարկի շրջանակներում ապահովվել է Բանկի (վարկառու) և Ըն-

կերության (վարկառու) միջև 21.08.2012 թվականին կնքված թիվ Կ2605 գլխավոր վարկային պայմանագրի կատարումը: Հիփոթեքի պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ գրավադրվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 բնակելի տունը:

03.12.2012 թվականին Բանկին հասցեագրված դիմումով Ընկերության տնօրեն **Գրիգոր Ոսկանյանը** հայտնել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող, գրավի առարկա չհանդիսացող շարժական գույքը հանդիսանում է Արծրուն Պողոսյանի սեփականությունը, որը վերջինիս կողմից հանձնվել է Ընկերության անհատույց օգտագործմանը, և խնդրել է թույլատրել նշված շարժական գույքը հանել գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի ներսից:

Բանկի 11.12.2012 թվականի թիվ 12-54 գրությամբ Ընկերությանը հայտնվել է, որ դիմումը ենթակա է մերժման, քանի որ «Գնահատողների Միություն» ՓԲԸ-ի կողմից տրված գնահատման հաշվետվությունը կազմվել է՝ կիրառելով նաև գույքից ստացվող եկամուտների կապիտալավերածման մեթոդը, իսկ նշված անշարժ գույքից հնարավոր չէ ակնկալել միևնույն եկամուտն առանց պատկանելիք հանդիսացող շարժական գույքի:

Սույն գործով ստորադաս դատարանները, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գնահատման հաշվետվությանը կից հավելվածով Բանկին ներկայացվել են նաև գույքի լուսանկարները, որոնցից երևում են հայցվորի կողմից նշված շարժական գույքի մի մասը, հանգել են այն հետևության, որ վիճելի շարժական գույքը գրավադրված հիմնական գլխավոր գույքի պատկանելիքն է, հետևաբար գրավի առարկա գույքի նկատմամբ գրավառուի իրավունքները (գրավի իրավունքները) տարածվում են նաև դրա պատկանելիքների վրա:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված հաշվետվությունից պարզ չէ, թե ինչպիսի շարժական գույք է գնահատվել գնահատման եկամուտների կապիտալավերածման եղանակն օգտագործելիս: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ 01.09.2012 թվականի Պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված թվով 80 անուն շարժական գույքը նույնական է գնահատման եկամուտների կապիտալավերածման եղանակով գնահատված շարժական գույքի հետ, որի դեպքում միայն հնարավոր կլիներ որոշել այդ իրի կապը գրավի առարկայի հետ, այսինքն՝ վիճելի շարժական գույքի պատկանելիք լինելու փաստը:

Բացի այդ, ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ վիճելի թվով 80 անուն շարժական գույքի վերաբերյալ անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվել է 01.09.2012 թվականին, այսինքն՝ ավելի ուշ, քան կատարվել է վերոնշյալ գնահատումը:

Ավելին, ստորադաս դատարանները որևէ կերպ չեն հիմնավորել վիճելի շարժական գույքի և սույն գործով գրավի առարկայի, այն է՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 բնակելի տան որոշակի տնտեսական նշանակությամբ փոխկապակցվածության փաստը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վեճի առարկա թվով 80 անուն շարժական գույքի պատկանելիք լինելու հարցը սույն գործով հաստատված համարելիս ստորադաս դատարանները հանգել են սխալ հետևության:

28.11.2014թ.

6. Անահիտ Միմոնյան և մյուսներ v. «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԴ-2013/02/12

Էջ
41-47

Խտնիք. Արդյո՞ք մեկից ավելի գրավատուների առկայության դեպքում բռնագանձման ծանուցումը մեկ գրավատուին ուղարկելը կարող է համարվել պատշաճ ծանուցում մյուս գրավատուների համար, եթե վերջիններս հաշվառված և բնակվում են նույն հասցեում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գրավատուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է գրավատուի այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ

հողվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը ենթադրում է գրավատուի կողմից գրավատուին՝ **վերջինիս կողմից գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին իրազեկելու (ծանուցելու) կապակցությամբ գրավատուի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն պատշաճ:** Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց դատարան դիմելու գրավատուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի տեղեկանալու իրավունքը և գրավատուի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գրավատուի իրավունքների ապահովման հետ: Այդ իրավունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գրավատուին ընձեռված է առանց դատարան դիմելու գրավատուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկանալու հնարավորություն: Այդ իսկ պատճառով **գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի իրազեկումը գրավատուի պարտականությունն է, որի չպահպանման դեպքում վերջինս չի կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը (յո՛ւն է, Վարդան Պեպրոսյանն ընդդեմ «Արարար» նույրարական ցարածքի նույրար Ալվարդ Հովհաննիսյանի թիվ ՎԴՅ/0092/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2010 թվականի որոշումը):**

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը գրավատուի համար սահմանել է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելուց առաջ գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուին պատշաճ ծանուցելու պարտականություն, հետևաբար օրենսդրական տեխնիկայի վերը նշված կանոնի կիրառմամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ մեկից ավելի գրավատուների առկայության դեպքում գրավատու պատշաճ ծանուցման պարտականություն կրում է յուրաքանչյուր գրավատուի նկատմամբ: Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ օրենսդրական նման կարգավորումը միտված է պաշտպանելու գույքի սեփականատիրոջ իրավունքները, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածին համահունչ գրավի առարկան իրացնելիս անձը գրկվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից արտադատական կարգով, որը բացառություն է ընդհանուր՝ դատական կարգով սեփականության իրավունքից գրկվելու կանոնից: Հետևաբար սեփականատիրոջ իրավունքները, այդ թվում գույքի իրացման վերաբերյալ ծանուցված լինելու իրավունքը, առավելագույն պաշտպանության են ենթարկված վերոնշյալ իրավակարգավորմամբ: Մասնա պայմաններում գրավի առարկայի իրացման վերաբերյալ ծանուցման իրականացումը կասկած չպետք է հարուցի ծանուցագիրը հասցետախիրոջ կողմից ստանալու վերաբերյալ:

Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանություն

08.05.2014թ.

7. Նվարդ Ղուկասյան v. Համլետ Մադոյան, քաղ. գործ թիվ ՇԳ/1609/02/11

Էջ 48-54

Խնդիր. Արդյո՞ք օրինական ճանաչված կառույցի վրա բացված պատուհանի առկայությունն ինքնին կարող է համարվել այլ սեփականատիրոջ իրավունքների իրականացման խոչընդոտ:

Վճռաբեկ դատարանի դիմադրությունը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածը, 163-րդ հոդվածի 1-ին կետը, 277-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ սեփականատերն օժտված է իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներով և իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, որը կապված է այդ իրավունքների իրականացման հետ:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածով ամրագրվել է այնպիսի խախտումները վերացնելու պահանջ ներկայացնելու իրավունքը (նեգատոր հայց), որոնք, չգրկելով սեփականատիրոջը գույքի տիրապետման իրավունքից, խոչընդոտում են նրա այլ՝ գույքի օգտագործման և տնօրինման իրավունքների լիարժեք իրականացմանը՝ դրանով իսկ խախտելով այդ իրավունքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նեգատոր հայցով սեփականատիրոջ իրավունքները ենթակա են պաշտպանության այն դեպքում, երբ պատասխանողի գործողություններն օրինական չեն, իսկ այն դեպքում, երբ պատասխանողի գործողությունները հիմնված են վարչական ակտի վրա, ապա իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի վարչական ակտը վիճարկելու եղանակով:

28.11.2014թ.

8. Լևոն Արշակունի v. Կոմիտաս Հայրապետյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԿԳ-3/0450/0213

**Էջ
55-62**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նեգատոր հայցերի գործերով ապացուցման առարկան պարզելու և ապացուցման դատավարական բեռը բաշխելու հարցերին:

Վճռաբեկ դատարանի դիմադրությունը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով **գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից:** Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը **վիճելի լինելու դեպքում** դրա բացատրական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*որև՛ս, Էդգար Մարկոսյան և Ջարոտի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԼՆԳ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածում նախատեսված իրավունքի ապահովումը հնարավոր է նեգատոր հայցի միջոցով, որը որպես սեփականության իրավունքի պաշտպանության միջոց ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման և/կամ փաստացի տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Նեգատոր հայցի ներկայացման հնարավորություն առաջանում է այն դեպքում, երբ գույքի սեփականատերը և երրորդ անձը վիճելի գույքի առնչությամբ չեն գտնվում պարտավորական հարաբերությունների մեջ, և երբ թույլ տրված իրավախախտումը չի հանգեցրել գույքի նկատմամբ սեփականության սուբյեկտիվ իրավունքի դադարման: Վերոնշյալ մեկնաբանությունների ընդհանրացման արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ նեգատոր հայցի ներկայացման դեպքում միաժամանակ պետք է առկա լինեն հետևյալ երկու պայմանները.

1) *հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական (փրփողոսային) փրփապետող,*

2) *հայցի ներկայացման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի գույքի սեփականարիտոջը*

կամ օրինական (գրիդուսային) այլ տիրապետողին օգտագործել և/կամ փնտրիներ գույքը:

Վերոնշյալ պայմանները որպես փաստ ներառվում են նեգատոր հայցերով հարուցված գործերի ապացուցման առարկայում: Այդուհանդերձ, դրանք ապացուցման առարկան կազմող միակ փաստերը չեն: Ի թիվս վերոնշյալի՝ ապացուցման է ենթակա նաև երրորդ փաստը, այն է՝ գույքի օգտագործմանը և/կամ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության իրավական լինելու փաստը: Նեգատոր հայցը սեփականության իրավունքի պաշտպանության ինքնուրույն միջոց է, որն իր հիմքում ունի փաստերի առանձնահատուկ կազմ, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը կիրառելիս դատարանները պետք է հաշվի առնեն տվյալ գործով ապացուցման առարկան և դրա հիմքը, որից հետո միայն կողմերի միջև ճիշտ բաշխեն ապացուցման պարտականությունը: Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նեգատոր հայցերի դեպքում դատավարական բեռը բաշխելիս հայցվորն է կրում գույքի սեփականատերը լինելու և այդ գույքի օգտագործմանը և/կամ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության փաստերն ապացուցելու պարտականությունը: Ինչ վերաբերում է երրորդ փաստին՝ գործողությունների կամ անգործության հակաիրավական բնույթին, ապա հայց ներկայացնելու պահին վերջիններիս առչությանը գործում է հակաիրավական լինելու կանխավարկածը, քանի դեռ պատասխանողը չի ապացուցել հակառակը: Հետևաբար նշված փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է պատասխանողը:

08.05.2014թ.

9. Վարդան Ղազարյան v. Լևոն Գրիգորյան, քաղ. գործ թիվ ԼԴ1/0030/02/10

Էջ
63-72

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով (վինդիկացիոն հայց) պատշաճ հայցվորի և պատշաճ պատասխանողի հարցին, ինչպես նաև վինդիկացիոն հայցի և վնասի հատուցման հայցի հարաբերակցության խնդրին:

**Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի (յու՛ն ս, Արմենուհի Թադևոսյանն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԾԴ/0613/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը):

Ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է:

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքն ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը (յու՛ն ս, Միասկ-Նուբար Թեբեղեկյանն ընդդեմ Ռուբեն Քոչարի և մյուսների թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ հայցի իրավունքը նյութական և դատավարական իրավունքների ինտիտուտ է: Հայցի իրավունքի դատավարական կողմը ենթադրում է դատարան դիմելու իրավունքը, իսկ նյութաիրավական կողմը՝ օրինական և հիմնավորված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունքը:

Յուրաքանչյուր դեպքում հայցվորի պատշաճ լինելու հարցը լուծելիս դատարանները պետք է պարզեն հայցի իրավունքի նյութաիրավական կողմի առկայությունը, մասնավոր-

րապես՝ արդյոք հայցվորը հանդիսանում է վիճելի իրավահարաբերության մասնակից, և արդյոք վիճելի իրավունքը պատկանում է վերջինիս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով պատշաճ հայցվոր հանդիսանում է գույքի սեփականատերը:

Մինևույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածը սահմանում է, որ նույն օրենսգրքի 274-րդ հոդվածով նախատեսված իրավունքը պատկանում է նաև այն անձին, ով թեև սեփականատեր չէ, սակայն գույքը տիրապետում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքով:

Վերոգրյալից հետևում է, որ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով պատշաճ հայցվոր կարող է լինել նաև գույքն օրենքով կամ պայմանագրով տիրապետող, սեփականատեր չհանդիսացող անձը:

Վինդիկացիոն հայցը կարող է հարուցվել միայն ապօրինի տիրապետողի դեմ, հետևաբար այդպիսի հայցով պատշաճ պատասխանող կարող է լինել այն անձը, ում ապօրինի տիրապետման ներքո գտնվում է սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի գույքը:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վինդիկացիոն հայցի միջոցով սեփականատերը կամ օրինական տիրապետողը ներկայացնում են գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից **բնեղենով** վերադարձնելու պահանջ: Այն դեպքում, երբ գույքը բնեղենով այլևս գոյություն չունի՝ ոչնչացվել է, օգտագործվել, էականորեն վերամշակվել կամ փոփոխվել, սեփականատերը կամ օրինական տիրապետողն իր իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացնել **վնասի հատուցման հայց** հարուցելով: Այս դեպքում սեփականատիրոջը կարող է փոխհատուցվել գույքի արժեքը կամ հատկացվել նույն տիպի գույք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սեփականատերը (օրինական տիրապետողը), ելնելով այն հանգամանքից՝ գույքը բնեղենով գոյություն ունի, թե ոչ, իր իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացնել կամ վինդիկացիոն հայցի, կամ վնասի հատուցման հայցի միջոցով: Հետևաբար մինևույն գույքի կապակցությամբ խախտված իրավունքները վերականգնելու համար սեփականատերը չի կարող ակնկալել և վինդիկացիոն, և վնասի հատուցման պահանջների միաժամանակյա բավարարում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելիս սեփականատերն իրավունք ունի այն անձից, ով գիտեր կամ պետք է իմանար իր տիրապետման ապօրինի լինելու մասին (անբարեխիղճ տիրապետող), պահանջել վերադարձնելու կամ հատուցելու նաև այն բոլոր եկամուտները, որոնք այդ անձն ստացել է կամ կարող էր ստանալ գույքի ապօրինի տիրապետման ամբողջ ժամանակամիջոցում, իսկ բարեխիղճ տիրապետողից՝ վերադարձնելու կամ հատուցելու այն բոլոր եկամուտները, որոնք նա ստացել է կամ կարող էր ստանալ սկսած այն պահից, երբ նա իմացել է կամ պետք է իմանար իր տիրապետման ապօրինի լինելու մասին կամ ծանուցում է ստացել գույքը վերադարձնելու մասին սեփականատիրոջ հայցով:

Վկայակոչված իրավաբանությունից հետևում է, որ վինդիկացիոն և վնասի հատուցման հայցերի զուգակցման հնարավորություն օրենսդիրը նախատեսել է բացառապես այն դեպքում, երբ վնասի հատուցման պահանջը կրում է ածանցյալ բնույթ և անմիջականորեն բխում է վինդիկացիոն հայցի բովանդակությունից:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական պրակտիկայում, այդ թվում նաև սույն գործով արձանագրված այն դեպքերին, երբ մինևույն գույքի նկատմամբ խախտված իրավունքները վերականգնելու համար միաժամանակ հարուցվել է և վինդիկացիոն հայց, և վնասի հատուցման հայց: Նման դեպքերում դատարանները նախ և առաջ պետք է պարզեն գույքի՝ բնեղենով գոյություն փաստը: Այս փաստի առկայությունը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող մյուս հանգամանքների հիմնավորման դեպքում հանգեցնում է վինդիկացիոն հայցի բավարարման և վնասի հատուցման հայցի մերժման, իսկ այդ փաստի բացակայությունը՝ պատճառված վնասի համար պատասխանատվության այլ պայմանների հաստատման դեպքում՝ վնասի հատուցման հայցի բավարարման և վինդիկացիոն հայցի մերժման, սակայն նշված հայցերի միաժամանակյա բավարարման հնարավորությունն օբյեկտիվորեն բացառվում է,

որը բխում է նաև կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը բացառել է նաև նշված հայցերի միաժամանակյա բավարարումը պայմանով, քանի որ այն կարող է հանգեցնել դատական ակտի որոշակիության սկզբունքի խախտման, որպիսի սկզբունքը թեև քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն այն իրավական հասկացություն է և միջազգայնորեն ճանաչված սկզբունք ու ենթադրում է, որ դատական ակտը պետք է լինի որոշակի՝ այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դատավարության մասնակիցների համար ակնառու և ակնհայտ լինի, թե իրենց ինչ իրավունք է տրամադրվում, իրենց որ իրավունքն է սահմանափակվում, իրենց ինչ իրավունքից են զրկում կամ իրենց վրա ինչ պարտականություն է դրվում (*դե ս. Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվեյրանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

08.05.2014թ.

10. Արթուր Անդրեասյան v. «Սարջոն» ՍՊԸ և մյուսներ, քաղ. գործ թիվ Էջ ԼԳ/0678/02/12 73-82

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է բաժնետիրական ընկերության կողմից կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքների վիճարկման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն պահանջելու անվավեր ճանաչել նույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը:

Վերլուծելով վկայակոչված հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման պահանջ ներկայացնող Ընկերության բաժնետերը պետք է միաժամանակ հիմնավորի՝

- շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման փաստը և

- այդպիսի գործարքի՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի

խախտմամբ կնքված լինելու հանգամանքը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝

ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով փոխկապակցված են համարվում ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառնություններ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ **փոխկապակցված** են համարվում երկու և ավելի անձինք, եթե՝

ա. նրանցից որևէ մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի (մյուսների) ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին.

բ. նրանցից որևէ մեկի տնօրենների խորհրդի անդամների կեսից ավելին, տնօրենը կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձը միաժամանակ հանդիսանում

է մյուսի (մյուսների) տնօրենների խորհրդի անդամ, տնօրեն կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձ.

գ. նրանցից մեկը հսկում է մյուսին, կամ նրանք ընդհանուր հսկողության տակ են գտնվում, կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներով նրանցից որևէ մեկը մյուսի որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի կամ պայմանագրով ամրագրված հնարավորություն ունի.

դ. նրանք **միևնույն ընտանիքի անդամներ են** կամ տվյալ դեպքում գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Եռյն հոդվածի 37-րդ կետի համաձայն՝ **միևնույն ընտանիքի անդամներ են** համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, **եղբայրը**, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինը և երեխաները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված իրավական նորմերով սահմանված են այն անձինք և այն պայմանները, որոնց առկայության դեպքում նշված անձինք՝ ազգակցական կապի, զբաղեցրած դիրքի կամ այլ հանգամանքների ուժով ընկերության գործարքներում ճանաչվում են **շահագրգիռ անձ:**

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վկայակոչված նորմերում շահագրգիռ անձանց հասկացությունը սահմանելու համար օգտագործվում է նաև «**փոխկապակցված անձ**» հասկացությունը, և սահմանված է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող են երևան գալ փոխկապակցվածության հարաբերություններ:

Ընդ որում, թեև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում «փոխկապակցված անձ» հասկացությունն ամբողջությամբ բացահայտված չէ, այդուհանդերձ դրա 62-րդ հոդվածի 2-րդ կետը հղում է կատարում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, որում ի լրումն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձանց, սպառիչ կերպով սահմանված է այն անձանց շրջանակը, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց նկատմամբ հանդիսանում են փոխկապակցված անձինք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը, վերլուծելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքների՝ վերը նշված դրույթները, եզրակացրել է, որ **շահագրգիռ անձինք են ճանաչվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձինք, ինչպես նաև վերջիններիս փոխկապակցված անձինք, որոնց սպառիչ շրջանակը սահմանված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետում և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ և 37-րդ կետերում, իսկ այն գործարքները, որոնցում որպես կողմ հանդես են գալիս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձինք և/կամ վերջիններիս՝ նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետով և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված փոխկապակցված անձինք, Ընկերության համար համարվում են շահագրգռվածության առկայությամբ գործարքներ:**

Վկայակոչելով և վերլուծելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածը, նույն օրենքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 67-րդ հոդվածի 1-ին կետը, 83-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված է շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման ընթացակարգը, համաձայն որի՝ գործարքի կնքմանը պետք է նախորդի համապատասխան որոշման ընդունումը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին որոշումը պետք է ընդունի Ընկերության **խորհուրդը**, սակայն օրենքով նախատեսված դեպքերում որոշման ընդունման իրավասությունը վերապահված է Ընկերության ընդհանուր **ժողովին**:

Այսպես, եթե գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված **շուկայական արժեքը** գերազանցում են Ընկերության **ակտիվների արժեքի 10 տոկոսը**, ապա շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից քվեարկող

բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ:

Բացի այդ, եթե մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում, ապա վերջինիս իրավասությունները, այդ թվում՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշման ընդունման իրավասությունն իրականացնում է ժողովը, հետևաբար այն դեպքում, երբ Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում, շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումը բոլոր դեպքերում ընդունվում է ժողովի կողմից՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ՝ անկախ գործարքի առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքից:

Մյուս կողմից, այլ ընթացակարգ է նախատեսված շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունման համար, **եթե այդ գործարքը միևնույն ժամանակ հանդիսանում է Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք:**

Այս դեպքում շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին որոշումը, հաշվի առնելով խոշոր գործարքի կնքման՝ օրենքով սահմանված իրավակարգավորումը, պետք է ընդունվի՝

- **խորհրդի՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված անդամների կողմից միաձայն**, եթե գործարքի առարկա է հանդիսանում գույք, որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների **հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը**,
 - **ժողովի՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների 3/4-ով**, եթե՝

ա) գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, կամ

բ) գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, կամ

գ) օրենքով մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ ստեղծված չլինելու դեպքում:

Վերը նշված վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտել է, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքն օրենքի խախտումով կնքված լինելու հարցը պարզելու համար դատարանները պետք է պարզեն՝

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է Ընկերության կառավարման այն մարմնի կողմից, որի իրավասության է պատկանում նման որոշման ընդունումը,

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է Ընկերության իրավասու մարմնի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից,

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է օրենքով սահմանված ձայների անհրաժեշտ քանակի համամասնությամբ,

- արդյո՞ք շահագրգռվածության առկայությամբ գործարքը միևնույն ժամանակ հանդիսանում է խոշոր գործարք, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միայն նշված հանգամանքները պարզելուց հետո հնարավոր կլինի պարզել գործարքի կնքման՝ օրենքով սահմանված ընթացակարգը պահպանված կամ խախտված լինելու հարցը:

28.11.2014թ.

11. Սերգեյ Սարգսյան v. Արա Սարգսյան և մյուսներ, քաղ. գործ թիվ Եջ 83-92 ԵԿԳ/0881/02/12

Խնդիր. Արդյո՞ք համատեղ սեփականության մասնակիցների կողմից կնքված՝ ընդհանուր համատեղ սեփականություն համարվող գույքի նկատմամբ իրավունքները փոխանցող գործարքն ամբողջությամբ կարող է անվավեր ճանաչվել համատեղ սեփականատերերից միայն մեկի պահանջով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, նույն օրենսգրքի 305-րդ և 316-րդ հոդվածները, 198-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար պետք է միաժամանակ առկա լինեն երկու պայմաններ՝

1. համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը.
2. գործարքի մյուս կողմի այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը (տե՛ս, *Թագուշ Պետրոսյանն ընդդեմ ժամնա Ղազարյանի թիվ 3-459(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով իր նախկին դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ գույքի տնօրինման հարցը լուծելու համար պարտադիր պայման է համատեղ սեփականության մասնակիցների կամքի առկայությունը, և նման պայմաններում էական չէ բոլոր մասնակիցների, թե միայն մեկ մասնակցի պահանջով գործարքը կարող է անվավեր ճանաչվել, քանի որ համատեղ սեփականության դեպքում գույքը տնօրինելու յուրաքանչյուր մասնակցի հայեցողությունը ստորադասված է մյուս բոլոր համասեփականատերերի կամքին: Մասն պայմաններում ենթադրվում է, որ գույքի տնօրինման իրավունքը պետք է իրացվի բացառապես գույքի սեփականատիրոջ կամ բոլոր սեփականատերերի ինացությունը և կամքով, բացի այդ, գործարքի վավերականության համար անհրաժեշտ է, որ գործարք կնքող սուբյեկտն իր կամքն արտահայտի ազատորեն, առանց հակաիրավական կամ կամքի դրսևորման վրա անբարենպաստ ազդեցություն ունեցող արտաքին ազդակների, և այդ կամահայտությունը պետք է համապատասխանի գործարք կնքողի (տվյալ դեպքում լիազորողի) իրական ցանկություններին՝ ներքին կամքին, արտահայտված լինի ոչ թե ձևականորեն, այլ առաջացնի այն իրավական հետևանքները, որը վերջինս ցանկացել է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սերգեյ Սարգսյանը, նկատի ունենալով, որ բացակայելու է Հայաստանի Հանրապետությունից, 13.01.2007 թվականին նոտարական կարգով վավերացված լիազորագրով իր մորը՝ Արփենիկ Բաբաջանյանին, լիազորել է իր անունից հանդես գալու ՀՀ նոտարական գրասենյակում՝ Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27-րդ հասցեի բնակարանի իր բաժնեմասն Արթուր Սարկիսյանին նվիրելու մասին նվիրատվության պայմանագիր կնքելու համար. Արփենիկ Բաբաջանյանը Սերգեյ Սարգսյանի բաժնեմասը վերձևելու լիազորություն չի ունեցել:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս գտել է, որ սույն գործով հայցը պետք է բավարարել մասնակիորեն՝ Սերգեյ Սարգսյանի բաժնեմասի մասով պետք է գործարքն անվավեր ճանաչել, քանի որ Արփենիկ Բաբաջանյանը նման լիազորություն չի ունեցել, իսկ մնացած սեփականատերերի մասով գործարքը վավեր ճանաչելը համարել է օրինաչափ՝ պատճառաբանելով, որ նման պայմաններում մնացած սեփականատերերի կամքն առկա է եղել առուվաճառքի ձևով Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27-րդ հասցեի բնակարանն օտարելու համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սերգեյ Սարգսյանը, հանդիսանալով վիճելի գույքի համասեփականատեր և օգտվելով օրենքով իրեն վերապահված գույքի տնօրինման իր իրավունքից, Արփենիկ Բաբաջանյանին լիազորել է իր անունից հանդես գալու ՀՀ նոտարական գրասենյակում և կնքելու Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27-րդ հասցեի բնակարանի իր բաժնեմասն Արթուր Սարկիսյանին նվիրելու մասին **նվիրատվության պայմանագիր**, սակայն Արփենիկ Բաբաջանյանը կնքել է **առուվաճառքի պայմանագիր**: Արփենիկ Բաբաջանյանն առուվաճառքի պայմանագիր կնքելիս չի ստացել վիճելի գույքի բոլոր համասեփականատերերի թույլտվությունը, քանի որ Սերգեյ Սարգսյանն իրեն լիազորել էր կնքելու միայն նվիրատվության գործարք: Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ մնացած սեփականատերերը և գնորդը իրական հնարավորություն են ունեցել իմանալու նշված փաստի մասին, քանի որ ներկա են գտնվել առուվաճառքի պայմանագրի կնքմանը, որի ժամանակ հրապարակվել և օգտագործվել է Սերգեյ Սարգսյանի տված լիազորագիրը, ուստի նշված առուվաճառքի պայմանագիրը ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի իմաստով ամբողջությամբ հանդիսանում է անվավեր գործարք, քանի որ կնքվել է օրենքի, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ առկա են համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու երկու հիմքերը՝ համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունները բացակայել են, և գործարքի մյուս կողմն էլ այդ մասին իմացել կամ այդ մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորություն ունեցել է:

08.05.2014թ.

12. Նունյա Առաքելյան v. Քնարիկ Մարտիրոսյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԱԶԳ/1299/02/11

Էջ 93-100

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է շինծու գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ գործերով ապացուցման առարկան որոշելու առանձնահատկություններին և ապացուցման բեռի բաշխման իրավական խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, **կամ** այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ **շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց (լրե՛ս, «Մինկրիստալ» ՍՊԸ-ն ընդդեմ Գագիկ Բդդոյանի, Եվգենյա Բդդոյանի և երրորդ անձ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի թիվ 3-623(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը):**

Վճռաբեկ դատարանը, գարգացնելով վերը նշված դիրքորոշումը, հավելել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման գործերով ապացուցման առարկան, մասնավորապես, կազմում են հետևյալ փաստերը.

- օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայությունը.
- այդ գործարքը վիճարկելու իրավունք ունենալը (շահագրգիռ անձ հանդիսանալը).
- գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտությունը.
- վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայությունը.
- կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայությունը:

18.07.2014թ.

13. Սեյրան Մանթաշյան և մյուսներ v. «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/1910/02/13

Էջ 101-107

Խնդիր. Արդյոք արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճը ենթակա է արբիտրաժի քննությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքներից է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Այդ իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ ստեղծել ան-

հրաժեշտ և գործուն կառուցակարգեր՝ ուղղված նշված իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացմանը: Մասնավորապես, քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը գործող իրավակարգավորման պայմաններում կարող է իրականացվել դատական, վարչական և հասարակական (արբիտրաժային) ձևերով, որոնցից առավել երաշխավորվածը դատական պաշտպանությունն է: Իրավունքների պաշտպանության այս ձևի առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վեճի ընտրությունը և լուծումն իրականացվում է օրենքով հստակ սահմանված դատավարական կարգով ու պարունակում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու, կողմերի դատավարական իրավունքների իրացումն ապահովող կայուն երաշխիքներ:

Միևնույն ժամանակ օրենսդիրը, հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի բարդությունը, պաշտպանության հայցվող արժեքի կարևորությունը, քաղաքացիական շրջանառության սուբյեկտների համար որոշակի վեճերի ընտրության և լուծման համար սահմանել է միայն իրավունքի պաշտպանության դատական ձևը՝ բացառելով այդպիսի վեճերի ընտրության և լուծման հնարավորությունը վարչական և հասարակական (արբիտրաժային) կարգով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ **քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով** և դրա անվավերության հետևանքները կիրառելով:

Նույն օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով **դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով** (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները**՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը**, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Վերը նշված հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գործող կարգավորման համաձայն՝ **վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է ընտրության հենց ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից**:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջների ընտրությունը բացառապես դատարանին վերապահելը պայմանավորված է ինչպես գործարքի անվավերության հիմքերի բացառիկությամբ, որոնց առկայության կամ բացակայության փաստը կարող է պարզվել միայն դատավարական որոշակի գործողությունների իրականացման արդյունքում, այնպես էլ այն հանգամանքով, որ գործարքներն ուղղված են քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն, հետևաբար նման վեճերի ընտրությունն անմիջականորեն առնչվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքներին և պատակասություններին ու պահանջում է նմանատիպ վեճերի լուծման հնարավորինս երաշխավորված և արդյունավետ ընթացակարգ, որպիսին դատական պաշտպանությունն է:

ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

18.07.2014թ.

14. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն v. «Գորիս-Ապակի» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ՄԳ-3/0055/02/13

Էջ
108-120

Խնդիր. Արդյո՞ք կիրառման ոչ ենթակա օրենքի կիրառումը որպես հետևանք կարող

է հանգեցնել հայցային վաղեմության սխալ կիրառման:

**Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի հիմք ընդունել «ի լրումն վերաքննիչ բողոքի» վերադառնալու փաստաթղթին այն դեպքում, երբ այն ներկայացվել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո, և այդ փաստաթղթում նշված դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումների հիման վրա վերանայել դատական ակտը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 333-րդ հոդվածները, 335-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հայցի մերժման ինքնուրույն և բացառիկ հիմք է: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, սակայն, հայցը մերժելու նշված հիմքը չի կարող մեկուսացված լինել գործի փաստական հանգամանքներից և դրանց նկատմամբ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերից: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հայցային վաղեմության ինստիտուտի առանձնահատկությունները, գտել է, որ հայցը մերժելու նշված հիմքի առկայությունը որոշակիորեն պայմանավորված է վիճելի իրավահարաբերության ճիշտ որակմամբ, դրա առանձին տարրերի՝ սուբյեկտի, օբյեկտի և բովանդակության բացահայտմամբ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է օրենսդրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքից հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դատաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում գնահատական տա հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությանը: Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը:

Վճռաբեկ դատարանը հավելել է, որ նման անհրաժեշտությունը որոշ դեպքերում ուղղակի բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումից: Մասնավորապես, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ քանի դեռ դատարանը չի պարզել կիրառելի օրենսդրության հարցը, նյութական իրավունքի նորմերով արժևորվող փաստերի շրջանակը, չի վերլուծել կողմերի փոխհարաբերություններում առկա պայմանագրային դրույթները, չի պարզել սուբյեկտիվ իրավունքի կամ պարտականության ծագման պահը, չի կարող եզրահանգման գալ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ՝ նման դիրքորոշումը հիմնավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի իրավակարգավորման վերլուծության տեսանկյունից: Մասնավորապես՝ օրենսդիրը նշված հոդվածով ամրագրել է այն պահանջների շրջանակը, որոնց նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտը կիրառելի չէ, հետևաբար քանի դեռ դատարանը չի պարզել հայցի փաստական և իրավական հիմքը, չի որակել վիճելի իրավահարաբերությունը, չի կարող դատողություններ անել հայցային վաղեմության կիրառելիության հարցի վերաբերյալ:

Այսպիսով, վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճելի իրավահարաբերության սխալ որակումը, կիրառման ոչ ենթակա իրավանորմի կիրառումը որպես հետևանք կարող է հանգեցնել հայցային վաղեմության սխալ կիրառման:

Անդրադառնալով վերաքննության փուլում վերաքննիչ բողոքի հիմքերը լրացնելու թույլատրելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և

Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորությունն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դատական ակտերի վերանայման վարույթներում, պայմանավորված այդ վարույթների առանձնահատկություններով, քաղաքացիական դատավարության վերը նշված սկզբունքը ենթարկվում է որոշակի սահմանափակման:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոքի հիմքերը չեն կարող փոփոխվել, լրացվել բողոքի քննության ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում **հրապարակման պահից մեկ ամիս հետո**, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Վերը նշված իրավակարգավորումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ տնօրինչականության սկզբունքի դրսևորումների մինչև վերաքննիչ վարույթի հարուցումը (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը) և վերաքննիչ վարույթի հարուցումից հետո:

Վերաքննիչ վարույթի հարուցման փուլը ներառում է վերաքննիչ բողոքարկման և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու շրջանակներում իրականացվող դատավարական գործողությունները: Վերաքննիչ վարույթի հարուցումը պայմանավորված է օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացմամբ, որը ենթադրում է օրենսդրի կողմից ամրագրված ժամկետում օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ վերաքննիչ բողոքի ներկայացումը վերաքննիչ դատարան: Պայմանավորված բողոքարկման ենթակա դատական ակտի տեսակով՝ գործն ըստ էության լուծող, թե միջանկյալ, օրենսդիրը նախատեսել է բողոքարկման իրավունքի իրացման տարբեր ժամկետներ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի և 140-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման պարագայում այդ ժամկետը մեկ ամիս է: Վճռաբեկ դատարանը նշել է, որ նշված մեկամսյա ժամկետն օրենսդրի տեսանկյունից այն անհրաժեշտ ժամանակահատվածն է, որի շրջանակներում անձը կարող է իրապես իրացնել իր բողոքարկման իրավունքը: Հետևաբար այդ ժամանակահատվածում բողոքարկման իրավունքի սուբյեկտն օժտված է իրավունքների առավել լայն շրջանակով, քան վերաքննության մյուս փուլերում, և հակառակը, վերաքննիչ վարույթի հարուցման փուլում

վերաքննիչ դատարանի մասնակցությունը դատավարական իրավահարաբերություններին կրում է պասիվ բնույթ՝ ի տարբերություն վերաքննության մյուս փուլերի: Վերոգրյալով պայմանավորված՝ վերաքննության հարուցման փուլում տնօրինչականության սկզբունքն առավել լայն դրսևորում ունի, քան վերաքննության մյուս փուլերում: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննության հարուցման փուլում տնօրինչականության սկզբունքը կարող է դրսևորվել նաև վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները փոփոխելով կամ լրացնելով, ինչը, սակայն, կարող է կատարվել մինչև բողոքարկման իրավունքի իրականացման համար սահմանված մեկամսյա ժամկետի ավարտը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, համաձայն որի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում: Այդ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան վերջնաժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Նշված մեկամսյա ժամկետի ավարտից հետո կայացնելով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում՝ վերաքննիչ դատարանը հարուցում է վերաքննիչ վարույթ, իսկ վերաքննիչ վարույթի հարուցմամբ սկսվում է բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում, որի ընթացքում գործում է վերաքննիչ բողոքի հիմքերը փոփոխելու, լրացնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 5-րդ կետով ամրագրված արգելքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոքի հիմքերը կարող են փոփոխվել և/կամ լրացվել բացառապես վերաքննության հարուցման փուլում՝ մինչև բողոքարկման իրավունքի իրացման ժամկետը լրանալը:

18.07.2014թ.

15. Կարինե և Սամվել Չարգարյաններ v. ՀՀ ֆինանսների նախարարություն, քաղ. գործ թիվ ԵԿԳ/0181/02/13

**Էջ
121-127**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ և 278-րդ հոդվածները, նույն օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան հայցային վաղեմության կիրառությունը բացառելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1) *հայցվորը պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ տիրապետող, և*

2) *ներկայացված հայցով հայցվորը պետք է պահանջի իր իրավունքի ցանկացած խախտման վերացում, թեկուզև այդ խախտումը կապված չի եղել գույքի տիրապետումից գրկելու հետ:*

Առաջին պայմանի վերլուծությունից հետևում է, որ վերոհիշյալ նորմը չի կարող կիրառվել, եթե հայցվորը չի հանդիսանում այն գույքի սեփականատեր կամ այլ տիրապետող, որի հետ կապված պահանջում է իր իրավունքի խախտման վերացում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է քննարկվող նորմի տառացի մեկնաբանությամբ, ինչից ուղղակիորեն բխում է, որ այդ նորմը վերաբերում է «սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի» իրավունքի խախտման վերացմանը:

Ինչ վերաբերում է երկրորդ պայմանին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմությունը տարածելու արգելքը վերաբերում է սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ոչ բոլոր խախտումների վերացման պահանջներին, այլ միայն այն խախտումներին, որոնք կապված չեն եղել տիրապետումից գրկելու հետ: Այս հետևությունը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված իրավանորմի բովանդակության շարադրանքից անմիջապես հետո օրենսդիրը փակագծերում մատնանշել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, որը վերաբերում է տիրապետումից գրկելու հետ կապված խախտումներից սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությանը (սեզատոր հայցերին):

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ եթե օրենսդրի կամքն ուղղված լիներ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի բոլոր տեսակի խախտումների վերացման պահանջների վրա հայցային վաղեմությունը չտարածելուն, ապա քննարկվող հոդվածում այլևս անհրաժեշտություն չէր լինի հատուկ մատնանշելու տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների մասին, այլ ուղղակի կարող էր սահմանվել, որ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ցանկացած խախտման վերացման պահանջների նկատմամբ հայցային վաղեմությունը չի տարածվում: Մինչդեռ քննարկվող հոդվածը նման կարգավորում չի նախատեսել, հետևաբար սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ կապված իրավունքի խախտումների վերացման պահանջների (վիճակագրիկ հայցերի) նկատմամբ հայցային վաղեմությունը տարածվում է, իսկ քննարկվող նորմի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում միայն սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների վերացման պահանջների վրա: Մասն իրավակարգավորումը պայմանավորված է նեգատոր հայցի առանձնահատկություններով: Մասնավորապես՝ նեգատոր հայցը գույքի սեփականատիրոջ կողմից արտապայմանագրային հարաբերություններից բխող սեփականության իրավունքի պաշտպանության միջոց է, որն ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման կամ տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Ընդ որում, գույքի տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումները, որպես կանոն, տևական և շարունակական են, ինչն էլ պայմանավորել է սեփականության իրավունքի պաշտպանության այս միջոցի նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման բացառումը: Այսինքն՝ եթե սեփականատերը կամ այլ տիրապետողը ինչ-որ ժամանակահատվածում չի պահանջել նման խախտումների վերացում, ապա դա դեռևս հիմք չէ, որպեսզի նա հետագայում ևս զրկվի այդ խախտումներից պաշտպանվելու հնարավորությունից:

08.05.2014թ.

16. Լեոնիդ Դավթյան, Ալլա Դուրյան v. Տատյանա Մաֆոնովա, ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/1240/02/12 **Էջ 128-134**

Խնդիր. Արդյո՞ք վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է համարվել որպես տիրապետումից զրկելու հետ չգուցորդված խախտումը վերացնելու պահանջ, որի նկատմամբ հայցային վաղեմությունը չի տարածվում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ և 333-րդ հոդվածները, 317-րդ հոդվածի 2-րդ կետը, արձանագրել է, որ օրենսդիրը վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու համար սահմանել է կրճատ ժամկետ՝ մեկ տարի: Ընդ որում, պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ հիմքով է ներկայացվել վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը, հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է բռնության կամ սպառնալիքի ազդեցության դադարման կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող այլ հանգամանքների մասին:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, 344-րդ հոդվածի 4-րդ կետը, 335-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հայցային վաղեմությունը չի տարածվում նեգատոր հայցերով ներկայացվող պահանջների նկատմամբ: Նեգատոր հայցը գույքի սեփականատիրոջ կողմից արտապայմանագրային հարաբերություններից բխող սեփականության իրավունքի պաշտպանության միջոց է, որն ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման կամ տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Նեգատոր հայցը կարող է հարուցվել այն դեպքում, երբ պատասխանողի գործողություններն ապօրինի են, իսկ այն դեպքում, երբ պատասխանողի գործողություններն ունեն օրինական հիմք, սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է այլ եղանակով, որպիսին կարող է հանդիսանալ

վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու հայցը: Այլ կերպ ասած՝ նեգատոր հայցը և վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու հայցը սեփականության իրավունքի պաշտպանության ինքնուրույն միջոցներ են, ընդ որում, եթե առաջինը հասնիսանում է սեփականության իրավունքի պաշտպանության ուղղակի միջոց, անմիջականորեն բխում է այդ իրավունքից, սպա երկրորդը սեփականության իրավունքի պաշտպանության անմիջական եղանակ է, որը հիմնվում է ոչ թե անմիջականորեն սեփականության իրավունքի վրա, այլ բխում է քաղաքացիաիրավական այլ ինստիտուտներից, տվյալ պարագայում՝ գործարքի անվավերության ինստիտուտից: Վերոգրյալից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանության նշված միջոցներից յուրաքանչյուրն իր հիմքում ունի փաստերի առանձնահատուկ կազմ, ըստ այդմ՝ տարբեր իրավակարգավորում, հետևաբար դրանց նույնակա-նացումն անթույլատրելի է:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պարտավորություններ կատարելը

08.05.2014թ.

17. Ղախմ Աբդոլահ Նեժադ v. Աշոտ Հարությունյան և այլոց, քաղ. գործ թիվ ԵԱԶԳ/0704/02/11

Էջ
135-142

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է կատարման հիմքով պարտավորության դադարման փաստն ապացուցելու առանձնահատկություններին:

** Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է փաստաթղթի բնօրինակը՝ որպես գրավոր ապացույց, դատարանն ներկայացնելու պարտադիր հիմքերին:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենսդիրը պարտատիրոջ վրա պարտակա-նություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին նրան ստացական տալ, իսկ պար-տապանի կողմից պարտատիրոջն ի հավաստումն պարտավորության պարտքային փաս-տաթուղթ տրված լինելու դեպքում՝ պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարիության դեպքում՝ այդ մասին նշել իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրու-թյամբ: Ընդ որում, այլ բան ապացուցված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պար-տապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը (*յո՛ւս, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պեպրոսյանի թիվ ԵԿԻ/1587/02/10 քաղաքացիական գոր-ծով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.06.2012 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումից հետևում է, որ պարտավորության կատարման փաստն ապացուցված չլինելու պարագայում քանի դեռ պարտքային փաստաթղթի բնօրինակը գտնվում է պարտատիրոջ մոտ, գործում է պարտավորությունը կատարված չլինելու կան-խավարկածը:

Այսպիսով, պայմանավորված այն հանգամանքով, թե պարտավորության որ կողմն է (պարտատերը կամ պարտապանը) դատարան ներկայացնում պարտքային փաստաթղթի բնօրինակը, այն մի դեպքում կարող է հաստատել պարտավորության առկայության, մեկ այլ դեպքում՝ պարտավորության դադարման փաստը:

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ պարտա-պանը որպես պարտավորության կատարման փաստը հաստատող ուղղակի ապացույց դա-տարան կարող է ներկայացնել՝

- պարտքային փաստաթղթի բնօրինակը կամ
- պարտատիրոջ կողմից տրված ստացականը՝ կատարումն ընդունելու մասին մա-կագրությամբ:

Օրենսդիրը, սահմանելով պարտավորության դադարման փաստը հաստատող ուղ-

դակի ապացույցների շրջանակը, միաժամանակ չի բացառել անուղղակի ապացույցներով նման փաստի հաստատման հնարավորությունը:

Սույն գործով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է քննարկել է այն դեպքերը, երբ պարտապանն անուղղակի ապացույցներով ևս, իսկ որոշ դեպքերում նաև՝ գործում ուղղակի ապացույցի բացակայությամբ կարող է հիմնավորել պարտավորության կատարման փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 3-րդ կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ որոշ դեպքերում պարտատերը, ընդունելով պատշաճ կատարումը, կարող է դրսևորել անբարեխիղճ վարքագիծ՝ հրաժարվելով վերադարձնել պարտքային փաստաթուղթը կամ այն վերադարձնելու անհնարինության մասին նշում կատարել ստացակալում: Մասն իրավիճակում առաջանում է պատշաճ կատարման փաստը գործակալանում ապացուցելու հնարավորության խնդիր, որը հարկ է քննարկել անձի արդար դատաքննության իրավունքի համատեքստում: Արդար դատաքննության իրավունքը ենթադրում է դատավարության կողմերի իրավահավասարություն և մրցակցություն, ինչն էլ իր հերթին՝ ապացուցման գործընթացին մասնակցելու իրական երաշխիքների առկայություն և դրանց իրացման հնարավորություն: Վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտավորության կատարման փաստը միայն ուղղակի ապացույցներով հաստատելու պահանջը նմանատիպ իրավիճակներում պարտապանին կարող է զրկել իր առարկությունները հիմնավորող այլ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից՝ սահմանափակելով մրցակցության և իրավահավասարության պայմաններում վերջինիս գործի արդար դատաքննության իրավունքը:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական պրակտիկայում, այդ թվում նաև սույն գործով արձանագրված այն դեպքերին, երբ պարտապանը վկայակոչում է պարտավորության կատարման փաստը, սակայն պարտքային փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու անհնարինությունը պատճառաբանում է այն պարտավորության կատարման հիմքով ոչնչացված լինելու հանգամանքով: Մասն դեպքերում դատարանները պարտավոր են ապացուցման գործընթացը կազմակերպել և ապացուցման բեռը բաշխել՝ հավասարակշռելով կողմերի շահերը և ապացուցման գործընթացին մասնակցելու իրական հնարավորությունները: Մասնավորապես՝ քննարկվող դեպքում դատարանները պետք է պարտատիրոջը պարտավորեցնեն պարտավորության առկայության փաստը հիմնավորել բացառապես պարտքային փաստաթղթի բնօրինակով, իսկ դրա անհնարինության դեպքում կրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված բացասական հետևանքները:

Մասն պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտքային փաստաթղթի բնօրինակի բացակայությունը, ելնելով գործի հանգամանքների առանձնահատկություններին, ևս կարող է վկայել պարտավորության դադարման փաստի մասին:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի իրավակարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավոր ապացույցները դատարան կարող են ներկայացվել կամ բնօրինակով, կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Միևնույն ժամանակ օրենսդիրը վերոնշյալ ընդհանուր կանոնից սահմանել է հետևյալ բացառությունները՝

ա) փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն բոլոր այն դեպքերում, երբ գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթերով;

բ) անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է պահանջել ներկայացնելու փաստաթղթերի բնօրինակները: Մասն անհրաժեշտություն կարող է, մասնավորապես առաջանալ, երբ գործով ներկայացված միևնույն փաստաթղթի պատճենները տարբերվում են իրենց բովանդակությամբ, և դատարանը չի կարող պարզել գրավոր ապացույցի իրական բովանդակությունն առանց դրա բնօրինակը հետազոտելու: Այդպիսի անհրաժեշտություն կարող է ծագել նաև պատճենի անորակության, դրա իսկության մեջ համոզվելու անհրաժեշտության և այլ դեպքերում:

Պարտավորությունների կատարման ապահովում

18.07.2014թ.

18. «Կոնվերս բանկ» ՓԲԸ v. Մարինե Նազարյան, Վահան և Սամվել Ավետիսյաններ, քաղ. գործ թիվ ԵՇԴ/0700/02/12

Էջ
143-158

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է երաշխավորի մոտ համապարտ կամ սուբսիդիար պատասխանատվության ծագման հիմքերին և այդ պատասխանատվության ծավալին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը, 368-րդ հոդվածի 1-ին կետը, 375-րդ հոդվածի 1-ին կետը, 377-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրն ամրագրել է երաշխավորի համապարտ պատասխանատվության կանխավարկածը, ինչը ենթադրում է, որ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի կատարման պահանջ ներկայացնել ինչպես պարտապանին և երաշխավորին միասին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Երաշխավորի սուբսիդիար պատասխանատվությունը կարող է նախատեսվել միայն օրենքով կամ պայմանագրով: Պայմանագրով երաշխավորի պատասխանատվությունը կրում է սուբսիդիար բնույթ, եթե այդ մասին **ուղղակիորեն սահմանված է պայմանագրում կամ երաշխավորին պահանջի ներկայացման ընթացակարգի վերաբերյալ պայմանագրային դրույթների կարգավորումից հետոնում է, որ այն այդպիսին է:**

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատերը սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած անձին պարտավորության կատարման պահանջ կարող է ներկայացնել միայն հիմնական պարտապանին այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո և միայն այն չափով, որ չափով պարտավորությունը չի կատարվել վերջինիս կողմից: Այսինքն՝ սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին պահանջը կարող է ներկայացվել, եթե

- հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ

- պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի իրավունքը կյուրակական և դատավարական իրավունքների ինստիտուտ է: Հայցի իրավունքի դատավարական կողմը ենթադրում է դատարան դիմելու իրավունքը, իսկ կյուրափրավական կողմը՝ օրինական և հիմնավորված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված լինելու պարագայում պարտատիրոջ հայցի իրավունքը (դատավարական կողմը) ծագում է հիմնական պարտապանի կողմից պարտավորության կատարումից հրաժարվելուց կամ ողջամիտ ժամկետում ներկայացված պահանջին պատասխան չստանալուց հետո միայն, հետևաբար նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող գործերով վերոնշյալ հարցադրումների պարզաբանումը դատարանների կողմից կրում է պարտադիր բնույթ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ նշված հարցադրումների պարզաբանումը պետք է իրականացվի երաշխավորության պայմանագրերի հետազոտման և պայմանագրային դրույթների համակողմանի վերլուծության և մեկնաբանության հիման վրա:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև երաշխավորի պատասխանատվության ծավալին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հա-

տուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով: Վերոգրյալից հետևում է, որ գործում է երաշխավորի լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքը, եթե այլ բան նախատեսված չէ **երաշխավորության պայմանագրով**:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով նաև երաշխավորության ինստիտուտի մի շարք իրավանորմների դիսպոզիտիվ կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում երաշխավորի պատասխանատվության բնույթը և ծավալը հնարավոր է պարզել՝ երաշխավորության պայմանագրի դրույթները վերլուծելով և գնահատելով գործող իրավակարգավորման և վերոնշյալ վերլուծությունների համատեքստում:

Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար

08.05.2014թ.

19. «Ժիրարմ» ՍՊԸ v. «Վառմաշ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԼԴ/0248/02/13

**Էջ
159-164**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների և պայմանագրով նախատեսված տույժի միաժամանակյա կիրառման հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապահի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա սույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենսդրության նման ձևակերպումը կոչված է ապահովելու կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքը (*դե ս, թիվ 3-27(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, հավելել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում և

- եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով կամ օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման ոչ միայն այն պարագայում, երբ կողմերի համաձայնությամբ նախատեսված չեն պատասխանատվության միջոցներ պարտավորությունների խախտման համար, այլ նաև այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված է պատասխանատվություն պարտավորությունների խախտման համար, սակայն այդ պատասխանատվությունը որոշակի ժամանակահատվածով է նախատեսված: Վերջինիս պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման այդ ժամանակահատվածի ավարտից սկսած մինչև գումարը վերադարձնելու օրը: Այսինքն՝ օրենքով նախատեսված տվյալ պատասխանատվության միջոցը լրացուցիչ միջոց է, որը

առաջ է գալիս այն դեպքում, երբ պարտավորությունների խախտումը շարունակվում է:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով և Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելով, արձանագրել է, որ Դատարանը, պարզելով, որ հայցվորի առջև պատասխանողն ունի դրամական պարտավորություններ, եկել է այն անհիմն եզրահանգման, որ սույն ժամանակահատվածի համար, այն է՝ նշված պարտավորության ծագման պահից մինչև դրա դադարման պահը պատասխանողից հոգուտ հայցվորի պետք է հաշվարկել և բռնագանձել դրամական միջոցների նկատմամբ հաշվեգրված և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները, և կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված տուժանքի գումարը, ինչը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ և 411-րդ հոդվածների պահանջներին: Վերը շարադրվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը պատասխանողից հոգուտ հայցվորի պետք է բռնագանձեր միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվեգրված տոկոսները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ժիրարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և «Վառմաշ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 15.04.2012 թվականին կնքված պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է 2012 թվականի ընթացքում Կազմակերպությանը հանձնել 3-րդ համարի 60-70 և 85-100 մակնիշի նավթային բիտում՝ քանակությունն ըստ գնորդի պահանջի, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել և վճարել 1 ամսվա ընթացքում իր պահանջած ապրանքների համար: Նշված պայմանագրով նախատեսվել է, որ գնորդի կողմից պայմանագրով սահմանված կարգով վճարումը չկատարելու կամ ոչ լրիվ կատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկում է տույժ՝ չփոխանցված կամ պակաս փոխանցված գումարի 0,15 տոկոսի չափով: 17.04.2012 թվականին կազմված թիվ Ա4120564682 ապրանքների մատակարարման հարկային հաշվի համաձայն՝ Ընկերությունը Կազմակերպությանը մատակարարել է 45,24 տոննա նավթային բիտում, որի համար վճարման ենթակա գումարը կազմել է 13.580.685 ՀՀ դրամ, որը Կազմակերպության կողմից չի վճարվել:

Վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կողմերն իրենց միջև կնքված պայմանագրով պատասխանատվություն են նախատեսել մատակարարված ապրանքների դիմաց գնորդի կողմից վճարելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ պայմանագրի 2.7 կետում սահմանված ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չփոխանցված կամ պակաս փոխանցված գումարի 0,15 տոկոսի չափով տույժ վճարելու պարտականություն: Միաժամանակ, նկատի ունենալով, որ նշված պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 30.12.2012 թվականը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պայմանագրով նախատեսված պատասխանատվությունը ենթադրել է ժամկետային որոշակի սահմանափակում:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերոնշյալ փաստերը, գործով սխալ հետևության է հանգել և կողմերի միջև կետանցի որոշակի ժամանակահատվածի համար պատասխանատվության այլ կարգ նախատեսված լինելու պարագայում նշված ժամանակահատվածի համար բռնագանձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներն այն դեպքում, երբ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները կարող են հաշվարկվել 30.12.2012 թվականից հետո միայն, իսկ 18.05.2012 թվականից մինչև 30.12.2012 թվականը վճարումներ չկատարելու ժամանակահատվածի նկատմամբ ենթակա է հաշվարկման և բռնագանձման 15.04.2012 թվականին կնքված ապրանքի մատակարարման պայմանագրի 2.7 կետով նախատեսված օրական 0,15 տոկոսի չափով տույժի գումարը:

18.07.2014թ.

20. Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ v. Եջ
«ԱՐՄԻՆԵԿՈ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0930/02/13 165-170

Խնդիր. Արդյո՞ք դատարանը կարող է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածների կիրառմամբ պարտապանին ամբողջությամբ ազատել տույժի վճա-

րումից կամ պատասխանատվությունից, եթե այդ հողվածներում նախատեսված է միայն պարտապանի պատասխանատվության չափը նվազեցնելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ, 372-րդ, 420-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակադրված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անսպառնալից կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն:

Ընդ որում, չսահմանակցելով պայմանագրերով նախատեսվող տուժանքի գումարի չափը, օրենսդիրը միևնույն ժամանակ իրավունք է վերապահել դատարաններին որոշելու հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները՝ ապահովելով սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Դատարաններին վերապահված նման իրավունքն իրավական այն միջոցներից մեկն է, որոնք ուղղված են անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը կանխելուն, ինչն իր հերթին համահունչ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքի որևէ ձևով չարաշահելու արգելքին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն, ըստ էության, նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին:

Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանն առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ տուժանքի չափի նվազեցումը չի կարող նշանակել տուժանքի վճարումից ընդհանրապես ազատում: Հակառակ դեպքում տուժանքի ինստիտուտը կհիմաստագրկվի, և հանդիսանալով պարտավորությունների կատարման երաշխիք, չի ծառայի իր նպատակին:

Տվյալ պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատարանին վերապահել է բացառապես տուժանքը նվազեցնելու լիազորություն, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ դատարանը պարտապանին ազատում է տուժանքի վճարումից, թույլ է տալիս վերոնշյալ հողվածների խախտում:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրատվություն

28.11.2014թ.

21. Սանիկ Խաչատրյան v. Ռադմիլա Մակարյան, քաղ. գործ թիվ ԵԱՆԳ/0474/02/13

Էջ
171-178

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է անշարժ գույքի նվիրատվության խոստման իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 595-րդ հոդվածի 1-ին կետը, նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է նվիրատվության պայմանագրի երկու տեսակ՝ ռեալ, երբ պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը (պահանջը) հանձնելու կամ գույքային պարտավորությունից ազատելու պահից, և կոնսենսուալ, երբ մեկ կողմը (նվիրատուն) պարտավորվում է մյուս կողմին (նվիրառուին) հանձնել նվերն ապագայում: Այսինքն՝ նվիրատվության պայմանագրի կնքման պահը կարող է չհամընկնել այդ պայմանագրով տրամադրվող գույ-

քի նկատմամբ իրավունքի փոխանցման հետ (տե՛ս, Արարապ Արշակյանն ընդդեմ Կարինե Տոնոյանի թիվ ԵՄԴ/0250/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ նվիրատվության խոստումը **միակողմանի պայմանագիր է**, որի դեպքում առաջանում է պարտավորական իրավահարաբերություն, և որի բովանդակությունն են կազմում մի կողմից նվիրատուի պարտականությունը՝ ապագայում ավելացնել նվիրատուի գույքն իր գույքի նվազման հաշվին, և մյուս կողմից՝ գույքը նվիրատուից պահանջելու՝ նվիրատուի իրավունքը: Նվիրատվության կոնսենսուալ պայմանագիրը՝ նվիրատվության խոստումը, պահանջում է ոչ միայն դրա պարտադիր գրավոր ձևի պահպանում, այլ նաև դրանում պետք է ձևակերպված լինի **ապագայում նվիրատվությունն իրականացնելու պարզ արտահայտված ցանկությունը**, այսինքն՝ նվիրատվության խոստումը պետք է ձևակերպված լինի այնպես, որ դրանից հստակ երևա անձի՝ գույքը նվիրատվության եղանակով օտարելու մտադրությունը: Ի թիվս վերոգրյալի՝ նվիրատվության խոստումը պետք է նշում պարունակի **նվիրատուի**, ինչպես նաև **նվիրատվության կոնկրետ առարկայի վերաբերյալ**: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ նվիրատվություն իրականացնելու պարզ արտահայտված ցանկությունը, նվիրատվության կոնկրետ առարկան և նվիրատուն նվիրատվության կոնսենսուալ պայմանագրի՝ նվիրատվության խոստումի էական պայմաններն են:

Անդրադառնալով նվիրատվության խոստման պարագայում դրանից բխող իրավունքի պետական գրանցման հարցին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ նվիրատվության պայմանագրի (նվիրատվության խոստումի) կնքման պահը կարող է չհամընկնել այդ պայմանագրով տրամադրվող գույքի նկատմամբ իրավունքի փոխանցման հետ, քանի որ նվիրատվության խոստման էությունը կայանում է հենց նրանում, որ նվիրատվության բուն գործարքը կնքվում է ապագայում, ընդ որում, նվիրատվության խոստումը, որպես ապագայում կատարվելիք գործարքի խոստում, կարող է կնքվել նաև հետաձգվող պայմանով: Մասնավորապես՝ նվիրատվության պայմանագրի կնքումը կարող է կախվածության մեջ դրվել նվիրատուի կողմից որոշակի գործողություններ կատարելու հետ: Մինչդեռ նվիրատուի՝ գույքը նվիրատուից պահանջելու իրավունքը ծագում է նվիրատվության խոստումից և/կամ դրանում նշված պայմանների վրա հասնելուն պես՝ անկախ գույքի նկատմամբ նվիրատվության պայմանագրից բխող իրավունքի պետական գրանցում կատարելու հանգամանքից:

Վարձակալություն

28.11.2014թ.

22. Էջմիածնի քաղաքապետարան v. Վյաչեսլավ Ավետյան, քաղ. գործ թիվ ԱՐԳ-1/1159/02/13

**Էջ
179-185**

Խնդիր. Արդյո՞ք վարձակալության պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո վարձավճարի վճարումն ուղացնելու պարագայում պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջը կարող է դատարանով մերժվել այն պատճառաբանությամբ, որ հետագայում վարձակալը մուծել է չվճարված վարձավճարը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 468-րդ հոդվածի 2-րդ կետը, 622-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ պայմանագրի լուծումը հնարավոր է ոչ միայն կողմերի համաձայնությամբ, այլ նաև օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերից մեկի պահանջով դատարանի վճռի հիման վրա: Օրենսդրական նման իրավակարգավորումն իրավունք է վերապահում կողմերին վարձակալության պայմանագրում նախատեսել վարձատուի պահանջով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու այլ հիմքեր: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պայմանագրի կողմը կարող է պայմանագրի լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն այն դեպքում, երբ պայմանագրի լուծման առաջարկ է ներկայացրել պայմանագրի մյուս կողմին և դրա վերաբերյալ ստացել է մերժում կամ առաջարկում նշված

ժամկետում, իսկ այդ ժամկետի բացակայության դեպքում՝ երեսուրյա ժամկետում պատասխան չի ստացել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Էջմիածնի քաղաքային համայնքի ղեկավարի, և Վյաչեսլավ Ավետյանի միջև 02.03.2005 թվականին կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որով համապատասխան վարձավճարի դիմաց Վյաչեսլավ Ավետյանի տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնվել ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքի Չարենցի փողոցի թիվ 8ա/1 տանը կից 48քմ մակերեսով հողամասը: Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ հողամասի տարեկան վարձավճարը կազմել է տվյալ հողամասի կադաստրային արժեքի 10 տոկոսը՝ 3.341 ՀՀ դրամ, իսկ 11-րդ կետի համաձայն՝ վարձակալական ընթացիկ վճարումները վարձակալի կողմից պետք է մուծվեն հավասար չափերով՝ տարվա օրացուցային եռամսյակների համաձայն՝ ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Միաժամանակ Պայմանագրի կողմերը Պայմանագրի 20.1-րդ կետով նախատեսել են վարձատրի նախաձեռնությամբ վարձակալության հարաբերությունները վաղաժամկետ դադարեցնելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված հիմքերից տարբերվող այլ հիմք, այն է՝ Պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձատրի կողմից, եթե վարձակալը երեք ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ վարձակալը պարտավորվել է վարձակալական ընթացիկ վճարումները կատարել հավասար չափերով՝ տարվա օրացուցային եռամսյակների համաձայն՝ ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը, մինչդեռ գործում առկա վճարների, հաշվարկների և գոյացած պարտքերի վերաբերյալ 16.12.2013 թվականի դրությամբ առկա տեղեկանքի ուսումնասիրությունից հետևում է, որ Վյաչեսլավ Ավետյանը 2006 թվականի դեկտեմբեր ամսից հետո վարձավճար չի մուծել: Քաղաքապետարանը 16.12.2013 թվականի թիվ 1593 գրությամբ Վյաչեսլավ Ավետյանին առաջարկել է 7-օրյա ժամկետում ներկայանալ Քաղաքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժին 36.393 ՀՀ դրամի չափով առաջացած վարձավճարի պարտքը մարելու և Պայմանագիրը լուծելու համար: Նշված գրությունն ստանալով 18.12.2013 թվականին՝ Վյաչեսլավ Ավետյանը 20.12.2013 թվականին 36.400 ՀՀ դրամ է մուտքագրել Էջմիածնի տեղական զանձապետարանի համապատասխան հաշվեհամարին, որպիսի փաստը հաստատվում է 20.12.2013 թվականի թիվ 131220064215017 անդորրագրով, իսկ Պայմանագիրը լուծելու Քաղաքապետարանի առաջարկի վերաբերյալ ինչպես չի ուղարկել մերժում, այնպես էլ չի ներկայացրել պատասխան: Առաջարկում նշված ժամկետը լրանալուց հետո՝ 27.12.2013 թվականին, Քաղաքապետարանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Վյաչեսլավ Ավետյանի՝ Պայմանագիրը լուծելու պահանջի մասին:

Սույն գործով Դատարանը հայրը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունները, որ «Վյաչեսլավ Ավետյանը պատշաճ կերպով կատարել է Պայմանագրով ստանձնած՝ վարձավճարները վճարելու իր պարտավորությունը, որը հաստատվում է նրա կողմից Դատարան ներկայացված 20.12.2013 թվականի թիվ 131220064215017 անդորրագրով, որով վերջինս Քաղաքապետարանի հաշվեհամարին վճարել է 36.400 ՀՀ դրամ որպես Պայմանագրով վարձավճարների գումար» և «սման պայմաններում, երբ Վյաչեսլավ Ավետյանը կատարել է վարձակալության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը, իսկ Քաղաքապետարանը դատարանին որևէ ապացույց չի ներկայացրել Վյաչեսլավ Ավետյանի կողմից վարձակալության պայմանագրի էական խախտումների վերաբերյալ, դատարանը գտել է, որ Վյաչեսլավ Ավետյանի միջև 02.03.2005 թվականին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու հիմքեր չկան և հայրը ենթակա է մերժման»:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 14.05.2014 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «20.12.2013 թվականին, այն է՝ մինչև Քաղաքապետարանի կողմից Դատարան դիմելը, Վյաչեսլավ Ավետյանը պատշաճ կերպով կատարել է Պայմանագրով ստանձնած՝ վարձավճարները վճարելու իր պարտավորությունը»:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունը և հիմք ընդունելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատա-

րանն արձանագրել է հետևյալը. թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Քաղաքապետարանը որպես Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի իրավական հիմնավորում վկայակոչել է Պայմանագրի 20.1-րդ կետը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետը, իսկ որպես փաստական հիմք՝ վարձավճարի մուծումը վարձակալի կողմից բազմակի ուշացնելու փաստը: Հետևաբար, ստորադաս դատարանները պետք է քննության առարկա դարձնեն Պայմանագիրը լուծելու՝ վերը նշված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու հարցը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նշել է, որ Պայմանագրի 20.1-րդ կետի մեկնաբանությունից հետևում է, որ Պայմանագրի լուծման համար բավարար է վարձակալի կողմից վարձավճարը երեք ամիս ուշացնելու խախտման փաստի արձանագրումը՝ անկախ այդ պարտավորությունը հետագայում կատարվելու հանգամանքից: Նմանատիպ իրավական դիրքորոշում Վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև նույնանման փաստական հանգամանքներ ունեցող ՀՀ Արարարի մարզի Պարույր Սևակի գյուղական համայնքն ընդդեմ «Մարս ֆրոյթ» ՍՊԸ-ի թիվ 3-1785(ՏԴ)/2006 քաղաքացիական գործով 26.10.2006 թվականին կայացված որոշմամբ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով կողմերի միջև առկա պայմանագրային կարգավորումը, և կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետը, սխալ եզրահանգման է եկել Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հիմքի բացակայության վերաբերյալ այն դեպքում, երբ գործով հիմնավորվում է վարձակալի կողմից վարձավճարի վճարումը երեք ամիս ավել ուշացնելու փաստը, ինչը բավարար է Պայմանագիրը վարձատրի պահանջով դատարանի վճռով լուծելու համար:

Հանձնարարություն

28.11.2014թ.

23. Սամվել Մարտիրոսյան v. Գեղամ Մելիքսեթյան, քաղ. գործ թիվ Էջ ԵՁ ԵԱԿԴ/0976/02/13 186-194

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է փաստաբանի և վստահորդի միջև պայմանագրային հարաբերությունների կարգավորման այն դեպքերին, երբ վստահորդի՝ փաստաբանին վարձատրելու պարտականությունը ծագում է որոշակի պայմանի իրականացման արդյունքում:

**Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահասարակել է զարգացրել է պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետը, 782-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 783-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ հանձնարարության պայմանագրի ուժով հանձնակատարը հանձնարարողի անունից և նրա հաշվին պարտավոր է կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, պայմանագրում կարող է նշվել նաև այն ժամկետը, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից: Միաժամանակ, ինչպես ցանկացած պայմանագիր, այնպես էլ հանձնարարության պայմանագիր կնքելիս կողմերը՝ **հանձնակատարը և հանձնարարողը, չփոխելով օրենսգրքի իմպերատիվ դրույթներով ամրագրված պայմանները, ազատ են որոշելու պայմանագրի պայմաններն իրենց հայեցողությամբ, այդ թվում՝ նաև՝ հանձնարարողի կողմից հանձնակատարին վարձատրելու չափը և վճարման ժամկետը** (յո՛ւս, «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ն ընդդեմ «Օլիմպոտորդ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2043/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ փաստաբանը և վստահորդը սեփական հայեցողությամբ ոչ միայն կարող են սահմանել փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը, այլև վճարման պարտավորության ծագման պահը կարող են պայմանավորել որո-

շակի պայմանի իրականացման փաստով (օրինակ՝ գործի բարենպաստ ելքով, գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքով կամ այդ դատական ակտի կատարմամբ): Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանի և վստահողի հարաբերությունների պայմանագրային կարգավորումը կրում է համանման բնույթ, և կողմերի միջև ծագել է վեճ փաստաբանական գործունեության վճարի չվճարման կապակցությամբ, դատարանները պարտավոր են նախ և առաջ պարզել.

1) պայմանագրով նախատեսված համապատասխան պայմանն իրականում ինչ է ենթադրում.

2) արդո՞ր այդ պայմանի իրականացումը որևէ կերպ պայմանավորված է պայմանագրի կողմի կամ կողմերի վարքագծով.

3) պայմանը փաստացի իրականացել է, թե՛ ոչ.

4) եթե ոչ, արդո՞ր կողմերից որևէ մեկն իր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) նպաստել է պայմանի չիրականացմանը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վերը նշված հարցադրումներին անդրադառնալիս դատարանները պետք է ղեկավարվեն պայմանագրերի մեկնաբանման կանոններով:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Մույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները, ներառյալ՝ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին: Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը՝ կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*primo*, «*հարաբար*» ՄՊԸ-ն ընդդեմ «*Էգնա Շին*» ՄՊԸ-ի թիվ ԾԳ1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ առանձին դեպքերում, գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններով պայմանավորված, պայմանագրի որևէ պայմանի մեկնաբանությունն իրականացնելիս չի բացառվում նաև վերը նշված կանոնների միաժամանակյա կիրառումը: Մասնավորապես՝ իրավակիրառ պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ պայմանագրի համապատասխան պայմանը թեև դրանում շարադրված բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ հստակ է, սակայն կողմերի կամ կողմի իրական կամքին չի համապատասխանում: Մասն իրավիճակում միայն պայմանագրի մեկնաբանման տառացի կանոնը կիրառելով ոչ միայն կարող է սահմանափակվել շահագրգիռ անձի՝ գործի լրիվ և բազմակողմանի քննության իրավունքը, այլև պայմանագրի մեկնաբանման նպատակը կարող է ընդհանրապես չիրականացվել: Մինչդեռ, պայմանագրի մեկնաբանումն ինքնանպատակ գործընթաց չէ և նպատակաուղղված է կողմերի իրական կամքի բացահայտմանը՝ որպես հիմք ունենալով քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ բարեխղճության սկզբունքը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ առաջանում է կամքի և կամահայտության համապատասխանությունը պարզելու անհրաժեշտություն, պայմանագրի համապատասխան պայմանի մեկնաբանումը պետք է իրականացնել՝ հաշվի

առնելով հետևյալ առանձնահատկությունները. այն դեպքերում, երբ պայմանագիրը կնքած կողմի կամքը չի համապատասխանում կամահայտնությանը, և պայմանագրի մյուս կողմը գիտեր կամ կարող էր իմանալ այդ մասին, պայմանագրի համապատասխան պայմանի մեկնաբանումը պետք է իրականացվի նաև կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Մինչդեռ այն դեպքում, երբ պայմանագիրը կնքած կողմի կամքը չի համապատասխանում կամահայտնությանը, և պայմանագրի մյուս կողմը չգիտեր կամ չէր էլ կարող իմանալ այդ մասին (բարեխիղճ կողմ), պայմանագրի մեկնաբանումը պետք է իրականացվի վերը շարադրված ընդհանուր կանոններին համապատասխան:

Բանկային հաշիվ

08.05.2014թ.

24. Արա Խաչատրյան v. «Ինելոբանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0426/02/13

Էջ
195-203

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է բանկի և հաճախորդի միջև համապատասխան պայմանագրի առկայության դեպքում հաճախորդի հաշվից գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները բանկի կողմից կատարելու պարտականության հարցին ընդհանրապես, ինչպես նաև գնահատման առարկա է դարձել այն դեպքերը, երբ այդ կարգադրությունները տրվել են էլեկտրոնային միջոցներով և հավաստվել ծածկագրի օգտագործմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 912-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի (հաշվի տիրոջ) բացած հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 915-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հաճախորդի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու՝ անձանց իրավունքները հաճախորդը հավաստում է օրենքով, դրան համապատասխան բանկային կանոններով ու բանկային հաշվի պայմանագրով նախատեսված փաստաթղթերը բանկին ներկայացնելու միջոցով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով կարող է նախատեսվել հաշվում եղած դրամական միջոցներն էլեկտրոնային միջոցներով և այլ փաստաթղթերով տնօրինելու իրավունքների հավաստում՝ դրանցում օգտագործելով հաճախորդի ստորագրության, ծածկագրերի, նշանաբանների և այլ միջոցների նմանօրինակները, որոնք հավաստում են, որ կարգադրությունն արել է դրա համար լիազորված անձը:

Նշված հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բանկի և հաճախորդի միջև համապատասխան պայմանագրի առկայության դեպքում **բանկը պարտավոր է կատարել էլեկտրոնային միջոցներով (բանկոմատներ, POS-տերմինալներ և այլն), ծածկագրի օգտագործմամբ հավաստված հաճախորդի կարգադրությունները՝ կապված հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու հետ:** Ընդ որում, բանկը պարտավոր է կատարել ոչ միայն հաճախորդի, այլ նաև նման կարգադրություններ տալու համար լիազորված անձի կարգադրությունները՝ որպես դրանք տալու համար լիազորության առկայության հավաստիք ընդունելով նաև էլեկտրոնային միջոցներում օգտագործված հաճախորդի ծածկագիրը:

Բացի այդ, այդ կարգադրությունները կատարելիս բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ:

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ժա» մասի համաձայն՝ նույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով վճարային քարտը դեբետային, վարկային, էլեկտրոնային քսակի կամ միջազգային պրակտիկայում ընդունված այլ տեսակի քարտի ձևով վճարային գործիք է, որն օգտագործվում է կանխիկ դրամ ստանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու, ինչպես նաև վճարային քարտ թողարկողի սահմանած այլ գործառնություններ կատարելու համար:

Նույն հոդվածի «ե» կետի համաձայն՝ նշված օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով վճարային գործիքը թղթային, էլեկտրոնային, ձայնային (կամ այլ եղանակով ներկայացված) հաղորդագրություն է, փաստաթուղթ կամ համաձայնություն, որը, անկախ օգտագործման, կիրառման կամ իրականացման ձևից ու եղանակից, հնարավորություն է ընձեռում դրա տիրապետողին և (կամ) օգտագործողին կատարելու վճարումներ:

Վերլուծելով նշված հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ **վճարային քարտը** որոշակի էլեկտրոնային հաղորդագրություն պարունակող վճարային գործիք է. այդ **քարտի օգտագործում է համարվում դրա միջոցով կանխիկ դրամ ստանալը**, անկանխիկ եղանակով վճարումներ կատարելը կամ վճարային քարտ թողարկողի սահմանած այլ գործառնությունները կատարելը: Ընդ որում, վճարային քարտի (դրա վրա առկա հաղորդագրության) օգտագործման հնարավորությունը՝ **անկախ այն օգտագործելու ձևից և եղանակից**, ընձեռվում է ոչ միայն բանկի հաճախորդին, այլ նաև **տվյալ վճարային քարտը տիրապետողին և (կամ) օգտագործողին:**

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18.07.2014թ.

25. Քարոլին Բաղումյան v. Նունուֆար Հովհաննիսյան, քաղ. գործ թիվ Էջ 204-210
ԵԿԳ/1447/0212

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ներկայացուցչի կողմից իր ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում ներկայացվողին պատճառված վնասի հատուցման հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը, 345-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 347-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գույքի փոխանցման, աշխատանքաների կատարման, ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները հանդիսանում են պարտավորական իրավահարաբերություններ: Ընդ որում, ձևավորված պարտավորաիրավական հարաբերությունների շրջանակում կողմերից մեկը հանդես է գալիս իրավագոր անձ՝ «պարտատեր», իսկ մյուս կողմը՝ պարտավոր անձ՝ «պարտապան»: Ուստի իրավագոր անձի՝ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը: Այսպիսով, պարտավորական իրավահարաբերության մեջ պարտատիրոջ սուբյեկտիվ իրավունքը պահանջի իրավունքն է, որը կարող է իրացվել միայն այն ժամանակ, երբ պարտապանը պատշաճ կատարի իր վրա դրված պարտավորությունը:

Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող են լինել ինչպես գործարքները, այդ թվում՝ նաև միակողմ (պայմանագրային պարտավորություններ), այնպես էլ ոչ իրավաչափ գործողությունները (դելիկտներ), այն է՝ վնաս պատճառելու հետ-

ևանքով առաջացած իրավաբանական փաստերը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող է հանդիսանալ նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի ուժով ներկայացուցիչը պարտավոր է **պատշաճ** իրականացնել լիազորագրով ստանձնած լիազորությունները՝ պարտավորությունները, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պարագայում վերջինս իր վրա կրում է դրա արդյունքում առաջացած անբարենպաստ հետևանքների, այդ թվում՝ նաև պատճառված վնասի ռիսկը:

18.07.2014թ.

26. ՀՀ գլխավոր դատախազություն v. Արտյոմ Գևորգյան, քաղ. գործ թիվ ԾԳ/0743/02/12

Էջ 211-219

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու միջոցով պետության գույքային շահերի պաշտպանության և կանխամտածված սնանկության հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտապանին սնանկ ճանաչելու նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում **պարտավոր են** պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դիմել դատարան հետևյալ դեպքերում և ժամկետներում՝

ա) լիազորված պետական համապատասխան մարմինը՝ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուղացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում.

բ) համայնքի ղեկավարը՝ տեղական տուրքերի կամ պարտադիր վճարումների, ինչպես նաև համայնքի այլ դրամային պահանջներով պարտավորությունների կատարումն ուղացնելու դեպքում՝ պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված պետական մարմինների սահմանված ժամկետում սնանկության դիմում չներկայացնելու դեպքում դրանք ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է տվյալ անձին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելուց ձեռնպահ մնալու մասին կառավարության որոշումը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ

վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձինք նույն հոդվածում նախատեսված դեպքերում և ժամկետում պարտապանին սնանկ ճանաչելու դիմում չներկայացնելու դեպքում անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց թույլ տալու, և նշված կետանցը շարունակվելու դեպքում («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում) որպես Հայաստանի Հանրապետության կամ համայնքի գույքային շահերի պաշտպանության առաջնային միջոց օրենսդիրը նախատեսել է տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը:

Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու՝ որպես պետության գույքային շահերի պաշտպանության միջոցի առաջնայնությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը, իրավասու պետական համապատասխան մարմնի կամ համայնքի ղեկավարի **պարտականությունն է**, որը չկատարելու դեպքում այդ պարտականությունը պետք է կատարի դատախազությունը, և որը չկատարելու համար նշված մարմինների իրավասու պաշտոնատար անձինք անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի համար:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի համաձայն՝ կանխամտածված սնանկությունը պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումն է կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս:

Քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության հետ կապված իրավահարաբերությունների հիմնական կարգավորումը տրված է «Մասնկության մասին» ՀՀ օրենքում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտապանը սնանկ է ճանաչվել պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտհավաք) կապիտալին տիրապետող կամ նրան կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի մեղքով (ուղղակի կամ անուղղակի գործողություններով պարտապանի գործունեությունն ուղղորդելը և այլն (կանխամտածված սնանկություն), ապա պարտապան իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ այդ անձինք կրում են համապարտ պատասխանատվություն պարտապանի պարտավորություններով՝ վերջինիս գույքի անբավարարության դեպքում:

Նշված նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ կանխամտածված սնանկության դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում նշված սուբյեկտները, այդ թվում՝ պարտապան իրավաբանական անձի ղեկավարը կարող են պարտապանի պարտավորություններով համապարտ պատասխանատվություն կրել **միայն այն դեպքում, երբ պարտապանի գույքն անբավարար է պարտավորությունները**

կատարելու համար, ինչը, բնականաբար, կարող է բացահայտվել միայն սնանկության վարույթում սնանկության գործով կառավարչի՝ օրենքով նախատեսված գործողությունների իրականացման արդյունքում:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ կանխամտածված սնանկության դեպքում պահանջատերերի պահանջների բավարարման և օրինական շահերի պաշտպանության հետ կապված սուբյեկտիվ իրավունքների իրացումն օրենսդիրը նախատեսել է միայն սնանկության վարույթի շրջանակներում, քանի որ միայն սնանկության վարույթի շրջանակներում հնարավոր կլինի պարտապանի գույքի անբավարարության դեպքում բոլոր պահանջատերերին համամասնորեն բավարարում տալը:

Հենց այդ նպատակին է ուղղված կանխամտածված սնանկության գործերով սնանկ ճանաչված պարտապանի գույքի անբավարարության դեպքում օրենքով նախատեսված որոշակի անձանց համար համապարտ պատասխանատվության նախատեսումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտները պարտապանի նկատմամբ պահանջի առկայության դեպքում ինքնին չեն դառնում պարտապան, հետևաբար նաև՝ պարտավորության կողմ՝ սնանկության վարույթում գրանցված պահանջներով, այլ վերջիններին՝ պարտապանի պարտավորությունների համար համապարտ պատասխանատվությունը ծագում է միայն այն դեպքում, երբ սնանկության վարույթում արձանագրվում է պարտավորությունը կատարելու համար պարտապանի գույքի անբավարարությունը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի վերլուծության՝ վերը նշված եզրահանգումների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև օրենսդիրը հստակ չի սահմանել, թե ով կարող է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքում ներկայացնել համապարտ պատասխանատվության պահանջը, այնուամենայնիվ, այդպիսի պահանջ սնանկության գործի շրջանակներում կարող է ներկայացնել միայն սնանկության գործով կառավարիչը:

Այսպես, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտների համապարտ պատասխանատվությունն օրենսդիրը կապել է բացառապես սնանկության գործով կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացակարգերով սահմանված կարգով կատարված պարտապանի գույքի անբավարարության փաստի արձանագրման հետ, որից հետո պահանջատերերից յուրաքանչյուրի կողմից քաղաքացիական հայցի հարուցումը, հաշվի առնելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, անվիճելիորեն կվատթարացնի մյուս պահանջատերերի վիճակը և անհավասար պայմաններ կստեղծի նրանց համար, իսկ բոլոր պահանջատերերի կողմից նման հայցի հարուցումը կխաթարի սնանկության վարույթի իրականացումը՝ անհնարին դարձնելով օրենքով սնանկության գործով կառավարչի վրա դրված պահանջատերերի պահանջների համաչափ բավարարման առաքելությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքում նույն հոդվածով նշված սուբյեկտների նկատմամբ համապարտ պատասխանատվության հիմքով գումարի բռնագանձման պահանջ կարող է ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում և միայն սնանկության գործով կառավարչի կողմից: Այլ է հարցը, որ նման պահանջի ներկայացման նախաձեռնողը կարող են լինել ինչպես կառավարիչը, այնպես էլ պահանջատերերը (պարտատերերի խորհուրդը, որը ներկայացնում է պարտատերերի շահերը և նույն օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում կառավարչի գործունեության նկատմամբ):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտի տնօրենի դեմ ներկայացվել է վնասի հատուցման պահանջ և որպես վնասի պարտավորության ծագման իրավական հիմք վկայակոչվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, դատարանները նմանատիպ փաստական և իրավական հանգամանքներ ունեցող գործերով պետք է առաջնահերթ պարզեն հետևյալ փաստերը՝

- պարտապան իրավաբանական անձի վերաբերյալ սնանկության գործ հարուցված է, թե ոչ.

- եթե այո՝ տվյալ սնանկության գործով նս ներկայացված է համապատասխան

պահանջը.

- արդյո՞ք պատասխանողները հանդիսանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իմաստով սուբյեկտ.

- արդյո՞ք սնանկության վարույթի շրջանակներում արձանագրվել է պարտապան իրավաբանական անձի գույքի անբավարարությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ փաստերի ապացուցման բեռը և դրանից բխող բացասական հետևանքները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի համաձայն, կրում է հայցվոր կողմը:

08.05.2014թ.

27. Անիկ Դավթյան v. Տիգրան Վիրաբյան, քաղ. գործ թիվ ԱՎԴ/0179/02/13

Էջ
220-230

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է անձի պատվիլը, արժանապատվությունն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը որպես վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ հաշվի առնելով այս հարցի կապակցությամբ նախկինում ձևավորած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը, 14-րդ հոդվածը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի² իրավական դիրքորոշման՝ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության հիմքում, այն ժողովրդավարական հասարակության, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկն է: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է ոչ միայն այն տեղեկությունները և գաղափարները, որոնք ընդունվում են քաղաքացիականությամբ կամ անտարբերությամբ, այլ նաև այն տեղեկությունները և գաղափարները, որոնք ցնցում կամ անհանգստություն են պատճառում պետությանը կամ հասարակության տարբեր խմբերին, այդպիսին են բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը, առանց որոնց չկա ժողովրդավարական հասարակություն (յո՛ւն, Լինգենսն ընդդեմ Ավստրիայի թիվ 9815/82 դիմումով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի որոշում պարբ. 41): Միաժամանակ, Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքը բացարձակ իրավունք չէ: Ազատ արտահայտվելու իրավունքը չի կարող գոյություն ունենալ մեկուսացման պայմաններում, այն պետք է հավասարակշռվի հասարակության և պետության կենսական շահերի, ինչպես նաև մարդու այլ հիմնարար իրավունքների հետ: Այդ իսկ պատճառով էլ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացումը կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ և կարող է պայմանավորվել ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնական աղբյուրն է, պետության գոյության հիմնական պատճառներից մեկը: Մարդու արժանապատվության մասին նշված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որոնց համաձայն՝ մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ է արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությունը հռչակել է, որ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվությունը ճանաչվում է որպես բարձրագույն արժեք, որպես մարդու իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմք, ինչից հետևում է, որ յուրաքանչյուր մարդու արժանա-

² Այսուհետք սույն բաժնում Եվրոպական դատարան:

պատվությունը ենթակա է պաշտպանության պետության կողմից: Միաժամանակ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության և իրավական պետության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը և ՀՀ Սահմանադրության 27-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածներն անվերապահորեն հետապնդում են վերը նշված նպատակը: Սակայն ինչպես նշված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասում, այս ազատության իրականացումը կապված է պարտականությունների և պատասխանատվության հետ: Չպետք է անտեսել նաև այլ իրավունքները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային՝ մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող փաստաթղթերում նշված արժանապատվության և մասնավոր կյանքի իրավունքը, որոնք պակաս կարևոր չեն ժողովրդավարական հասարակության և իրավական պետության համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 15.11.2011 թվականի թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ նշել է, որ մամուլի դեմ անձի պատմի և արժանապատվության պաշտպանության նպատակով հարուցված հայցերի դեպքում առկա է արտահայտվելու ազատության իրավունքի և անձի արժանապատվության բախում, և լուծումները պետք է գտնվեն դրանց հավասարակշռման տիրույթում: ՀՀ Սահմանադրության անձի արժանապատվությանը և արտահայտվելու ազատության իրավունքին վերաբերող հոդվածների, ինչպես նաև 43-րդ և 47-րդ (1-ին մաս) հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ մարդու արժանապատվությունից, ներառյալ՝ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել արտահայտվելու ազատության սահմանափակումը միայն իրավաչափ շրջանակներում: Այդ մոտեցումն է դրված նաև Կոնվենցիայի 10-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 17-րդ և 19.3-րդ, Սարդու իրավունքների հանրկրթադրու հռչակագրի 12-րդ հոդվածների հիմքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ մարդու արժանապատվության և արտահայտվելու ազատության իրավունքի բախում է տեղի ունենում, անհրաժեշտ է գտնել պարզ հավասարակշռություն սրանց միջև: Սրանցից յուրաքանչյուրն էլ ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ բաղադրամասեր են, և երկուսն էլ պետք է ներդաշնակորեն առկա լինեն ժողովրդավարական հասարակությունում:

Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված անձի արժանապատվության գործնականում ապահովման իրավական երաշխիք է, միաժամանակ վերահաստատել է նշված հոդվածի մեկնանման վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ վիրավորանքը (պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը) կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլյացիաներ, սիմվոլներ): Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակել միջոցների շարքը, որոնք կարող են կիրառվել վիրավորանքն արտահայտելիս՝ հնարավորություն տալով իրավակիրառողին, կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, որոշել՝ արդյոք տվյալ միջոցի օգտագործմամբ կատարված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք: Հետևաբար վիրավորանքը կարող է արտահայտվել ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, որը ներառված չէ վերոնշյալ թվարկման մեջ:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ՝

1) արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստն ապացուցելու դատավարական բեռը ողջամտության սահմաններում կրում է հայցվորը:

2) արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրածանակի, ունակ է անձին վերածել ատելության կամ արհա-

մարանքի առարկայի կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից:

3) արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը:

4) արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, որպիսի փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը): Մասն դեպքերում առկա է վնասի համատեղ պատճառում:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ուղիղի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ՝ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց:

Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային (անձը վիրավորել է տուժողին առանց երրորդ անձանց ներկայության):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրն ամրագրել է որոշակի դեպքեր, երբ արտահայտությունը թեև բավարարում է վերոնշյալ պայմաններին, սակայն կոնկրետ իրավիճակում և իր բովանդակությամբ օրենքի ուժով կարող է չհամարվել վիրավորանք: Այդպիսիք են այն դեպքերը, երբ տեղեկատվությունը հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ **պայմանավորված է գերակա հանրային շահով**: Օրենսդրական նման ձևակերպումը հիմք է արձանագրելու, որ այդ դեպքերը յուրաքանչյուր կոնկրետ գործով ենթակա են առանձին գնահատման՝ պարզելու, թե արդյոք տվյալ **բովանդակությամբ** և տվյալ **իրավիճակում** ներկայացված արտահայտությունը պարունակում է վիրավորանք, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ յուրաքանչյուր դատական գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ներկայացված փաստացի տվյալները տվյալ իրավիճակում և իրենց բովանդակությամբ բխել են «Գերակա հանրային շահից», որն անմիջականորեն պայմանավորված է հասարակության տեղեկացված լինելու իրավունքի շահով, արդյոք հանրության համար այդ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է եղել, արդյոք հասարակությունը հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել է դրանց հետագա հրապարակմանը: «Գերակա հանրային շահը» գնահատելիս վերոնշյալ հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում՝ գաղափարների տարածման պարտականություն: Զանգվածային լրատվության միջոցների

այդ գործառնություն (պարտականությունը) զուգորդվում (համապատասխանում) է հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մտտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյոք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մտտեցում:

Հետևաբար, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որպեսզի վիրավորանքի և գրապարտության գործերով հստակ տարանջատում կատարվի գնահատողական դատողության և փաստերի միջև՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումներ թույլ տալը բացառելու նպատակով (յո՛ւնս, Վանտ Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

18.07.2014թ.

28. Սեյրան Ստեփանյան v. «Երևանի քաղաքապետարանի Գ. Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, քաղ. գործ թիվ ԵՇԳ/0906/02/13

Էջ
231-239

Խնդիր. Արդյոք արտադատարանական կարգով աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով պետական մարմիններին դիմելն ընդհատում կամ կասեցնում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների ընթացքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի իրավանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար սահմանելով հայցային վաղեմության ընդհանուր՝ երեք տարվա ժամկետ, նախատեսել է նաև որոշակի բացառություններ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դեպքերի համար: Այսպես, աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների վրա հայցային վաղեմություն ընդհանրապես չի տարածվում, իսկ որոշ պահանջների համար հնարավոր է համարել օրենքով հայցային վաղեմության ընդհանուր ժամկետների համեմատ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետների նախատեսումը:

Իրավահարաբերության ծագման պահին (05.06.2013 թվականի դրությամբ) գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ դատարան դիմելու մեկամսյա ժամկետին, նախկինում կայացրած իր որոշմամբ նշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը չի կարգավորում մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում հայցվորի իրավունքների պաշտպանության հարցը, սակայն հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դրանով սահմանված ժամկետն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար, այդ ժամկետն իր բնույթով համապատասխանում է հայցային վաղեմության ժամկետին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ վեճերի համար վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է եղել ընդհանուր վաղեմության ժամկետի համեմատությամբ կրճատ՝ մեկամսյա վաղեմության ժամկետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաղեմության մեկամսյա ժամկետը՝ որպես հայցային վաղեմության հատուկ ժամկետ, տարածվում է միայն նույն հոդվածով նախատեսված՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ վեճերով դատարան ներկայացրած հայցերի նկատմամբ, և որպես օրինական հիմքերի բացակայությամբ կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխվելու կամ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետևանք՝ հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման պահանջի վրա:

Անդրադառնալով աշխատանքային վեճերով հայցային վաղեմության կիրառման խնդրին՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ նշել է նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքից չի պարունակում հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ որևէ դրույթ, ուստի աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները (*տե՛ս, Արիկ Արդարյանն ընդդեմ Սարգսյանի թիվ ԼԳ/1071/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածը, 337-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տե՛ս, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Դասարողյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի թիվ 07-Ա հրամանը փոստային առաքման եղանակով 06.06.2013 թվականին հանձնվել է Սեյրան Ստեփանյանին, իսկ վերջինիս կողմից վերը նշված հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի, վերջնահաշվարկի, տուժանքի և օվերդաֆտի տույժի գումար բռնագանձելու պահանջների մասին հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 19.07.2013 թվականին, այն է՝ հրամանը ստանալու պահից մեկ ամիս տասներկու օր հետո:

Դատարանը, նկատի ունենալով, որ Սեյրան Ստեփանյանն իր իրավունքների պաշտպանության հայցով դատարան է դիմել 19.07.2013 թվականին, այսինքն՝ բաց է թողել դատարան դիմելու՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետը, իսկ վեճի կողմ հանդիսացող Դպրոցի ներկայացուցիչ Արմեն Գրիգորյանը մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը դիմում է ներկայացրել՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի լրանալը և պատասխանողի կողմից հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի ուժով հիմք

են ըստ Սեյրան Ստեփանյանի ընդդեմ Դպրոցի՝ աշխատանքից ազատելու հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և դրանցով պայմանավորված՝ տուժանք և հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջներով հայրը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ սույն գործով հայցվորն իր իրավունքի պաշտպանության համար դատարան դիմելու՝ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում փորձել է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել արտադատարանական, մասնավորապես՝ վարչական կարգով՝ դիմելով պետական մարմիններին, որոնց կողմից իրականացված գործողությունների արդյունքները ստանալուց (Երևանի քաղաքապետարանի գրությունը ստացվել է 18.07.2013 թվականին)՝ վարչական կարգով իրավունքների պաշտպանության եղանակները սպառելուց անմիջապես հետո՝ 19.07.2013 թվականին (հրամանը ստանալու պահից մեկ ամիս 12 օր հետո), հայց է ներկայացրել Դատարան: Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ պայմաններում անձի աշխատանքային իրավունքների և դատարան դիմելու իրավունքի հաշվին տվյալ գործատուի մոտ աշխատանքային իրավահարաբերությունների կայունությունն ու որոշակիությունն ապահովվելը (որպես հայցային վաղեմության ժամկետի նպատակի իրագործում), չի ապահովի հայցային վաղեմության՝ որպես սահմանափակման միջոցի և հետապնդված նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը, և եզրակացրել է, որ Դատարանը, կիրառելով հայցային վաղեմություն և չիրականացնելով գործի ըստ էության քննություն, թույլ է տվել Սեյրան Ստեփանյանի արդար դատաքննության իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

Վերոնշյալ իրավանորմի բովանդակությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը նախատեսել է աշխատանքային հարաբերություններում ծագած՝ անձի իրավունքների պաշտպանության միայն մեկ՝ դատական պաշտպանության եղանակը, մինչդեռ սույն գործով հայցվոր Սեյրան Ստեփանյանը Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի՝ իրեն աշխատանքից ազատելու մասին թիվ 07-Ա հրամանն օրենքով սահմանված կարգով և ժամկետում դատարանում վիճարկելու փոխարեն իր իրավունքների պաշտպանությունը փորձել է իրականացնել արտադատարանական կարգով, ինչի արդյունքում դատարան է դիմել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն առ այն, որ հայցվորը դատարան դիմել է իր իրավունքների պաշտպանության մյուս եղանակները սպառելուց հետո, քանի որ այն աշխատանքային վեճերով դատական պաշտպանությունից բացի որևէ այլ եղանակ աշխատանքային իրավունքների պաշտպանության համար օրենսդիրը չի նախատեսել:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ մի կողմից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված վեճերի համար հատուկ՝ կրճատ հայցային վաղեմության ժամկետի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել գործատուի մոտ աշխատանքային իրավահարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը՝ կապված թափուր հաստիքը հնարավորինս արագ համարելու, աշխատանքային բնականոն ընթացքն արագ վերականգնելու հետ, և այս առումով, հայցային վաղեմությունն իսկապես ուղղված է գործատուի շահերի պաշտպանությանը, սակայն մյուս կողմից, հաշվի առնելով, որ աշխատողն ունի ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունք, որպես սոցիալական ազատության երաշխիք՝ օրենսդրի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված վեճերի համար հատուկ՝ կրճատ հայցային վաղեմության ժամկետի սահմանումը պայմանավորված է նաև աշխատողի շահերի

պաշտպանությամբ և ուղղված է աշխատողի իրավունքների, այդ թվում՝ աշխատանքի դիմաց ժամանակին վարձատրություն ստանալու իրավունքի արագ և արդյունավետ պաշտպանությանը:

Հետևաբար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված կրճատ ժամկետը պայմանավորված է թե՛ գործատուի, և թե՛ աշխատողի իրավունքներով և օրինական շահերով:

Այս առումով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված ժամկետն ապահովում է գործատուի և աշխատողի իրավունքների և օրինական շահերի միջև արդարացի հավասարակշռություն, հետևաբար Վճռաբեկ դատարանն անհիմն է համարել հայցային վաղեմության ժամկետի՝ որպես սահմանափակման միջոցի և հետապնդված նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ սույն գործով հայցվորը Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի թիվ 07-Ա հրամանն անվավեր ճանաչելու, իրեն նախկինում զբաղեցրած աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապտողի գումարը բռնագանձելու պահանջներից բացի ներկայացրել է նաև այլ գումարների՝ վերջնահաշվարկի, աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման պարտականությունը՝ նախապես չկատարելու համար սահմանված տուժանքի, օվերդրաֆտի տույժի բռնագանձման պահանջներ, որոնց համար ոչ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ոչ այլ օրենքներով հատուկ վաղեմության ժամկետներ նախատեսված չեն, գտել է, որ այդ պահանջների նկատմամբ կիրառելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված ընդհանուր՝ 3 տարվա հայցային վաղեմության ժամկետը:

18.07.2014թ.

29. Բրիտանիա Նեբիշ v. «ԱրմենՏել» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/1879/02/11

Էջ
240-249

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու և այդ դեպքերում աշխատանքում վերականգնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները, արձանագրել է, որ վկայակոչված կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների **միաժամանակյա** առկայությունը: Մասնավորապես՝

1. պայմանագիրը պետք է կնքված լինի անորոշ կամ որոշակի ժամկետով.
2. պայմանագրի լուծումը պետք է պայմանավորված լինի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ.
3. պետք է կրճատված լինեն աշխատողների քանակը և (կամ) հաստիքները.
4. գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պետք է աշխատողին առաջարկված լինի նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը պետք է հրաժարված լինի առաջարկված աշխատանքից, կամ
5. գործատուի մոտ պետք է բացակայեն աշխատողին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորությունները:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գործատուի մոտ միայն արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությունն **ինքնին բավարար չէ աշխատողի հետ**

անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը (յրե՛ս, Արյուսկ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը, Սուրեն Թարևոսյանը և Եվգենիա Մանուկյանն ընդդեմ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի թիվ ԵԿԴ/3613/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին անդրադառնալիս նշել է, որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք, այլ պարտադիր պայման է համարվում, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին: Միայն աշխատողի կողմից մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան առաջարկված աշխատանքից հրաժարումը կարող է հանգեցնել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը: Մասնագիտական համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն, որ օրենքի վերոնշյալ հոդվածը նպատակ է հետապնդում պաշտպանության տակ առնելու աշխատողներին այն բոլոր դեպքերում, երբ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) նախկինում կատարած աշխատանքին համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք (յրե՛ս, Գայանե Դանիլովան ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/2378/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը):

Իրավահարաբերության ծագման ժամանակ (22.08.2011 թվականի դրությամբ) գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտ (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա **աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են:** Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշ-**

խատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմանը անդրադարձել է աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու հարցին այն դեպքերում, երբ գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում **գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է աշխատողը, և առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:** Մասնավորապես, Անաստաս Գիշյանը, Նորայր Եղիկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքում աշխատողներ Անաստաս Գիշյանի և Նորայր Եղիկյանի նախկին հաստիքային միավորը գոյություն չունի, իսկ գործող գյուղական մոդեռնիզացված անալոգային կոորդինատային կայանների սպասարկման համար նախկին աշխատակիցների անհրաժեշտությունը չլինելու, ինչպես նաև չսպասարկվող կայանները կարիքն առաջանալու դեպքում կայանային խմբի ղեկավարի և ճարտարագետի կողմից սպասարկվելու պայմաններում, գործատուի մոտ բացակայում են նաև նրանց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, գտել է, որ հայցվորների հետ աշխատանքային պայմանագրերը լուծվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ներկայիս գործող խմբագրությամբ նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետի) և 3-րդ մասի պահանջների պահպանմամբ (*լրէ ս, Անաստաս Գիշյանը, Նորայր Եղիկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԸԴ/0605/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով այն հարցին, թե արդյոք դատարանը պետք է վերականգնի աշխատողին իր նախկին պաշտոնում այն դեպքում, երբ ընկերության գործող վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է հայցվորը, ըստ էության, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ՀՀ **աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու հիմքի առկայության պայմաններում դատարանի կողմից ընկերության վրա չի կարող դրվել այնպիսի պարտավորություն, որի փաստացի կատարումն օբյեկտիվորեն անհնար է, և նման դեպքերում՝ դատարանի կողմից վերը նշված հոդվածը չկիրառելը կհանգեցնի գործատուի համար լրացուցիչ պարտավորության՝ ստեղծելու կառուցվածքային նոր միավոր, նոր հաստիք, իսկ նման պարտավորության սահմանումը կհանգեցնի գործատուի՝ ՀՀ Սահմանադրության՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի երաշխիքային նորմերի և օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակմանը:** Շշվել է նաև, որ այդ իսկ նպատակով օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորությունը՝ վերապահելով դատարանին այդ վարքագծի իրավաչափության գնահատման իրավասություն՝ որոշելու տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինությունը կունկրետ գործի փաստերից ելնելով (*լրէ ս, Զոյա Տապրոդյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ 3-496(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծված լինելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով աշխատանքում վերականգնելու առանձնահատկություններին՝ արձանագրելով, որ՝

1. ոչ բոլոր դեպքերում է, որ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխելը, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելը կարող է հիմք հանդիսանալ աշխատողին **նախկին աշխատանքում վերականգնելու** համար.

2. այդ կանոնից բացառություն է այն դեպքը, երբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում անգամ վերը նշված խախտումների փաստը հաստատված համարելու պայմաններում աշխատողին **չվերականգնել նախկին աշխատանքում**, եթե դա անհնարին է նաև տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով: Այս դեպքում **նախկին աշխատանքում վերականգնելու փոխարեն** դատարանը գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապրոլի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ նրա միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով.

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը գնում է **միայն նախկին աշխատանքում վերականգնվելու** մասին, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

08.05.2014թ.

30. «ԴՎին Հողինգ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղափրամանյան Վ. «Հայէլեկտրամերենա» ԲԲԸ, քաղ. գործ թիվ ԵՇԴ/0023/04/13

Էջ
250-256

Խնդիր. Արդյո՞ք պարտապանին սնանկ ճանաչելու գործի վարույթը ենթակա է կարճման, եթե նախկինում նույն պարտապանի դեմ սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը մերժվել է:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սնանկության հիմքերի ակնհայտ չլինելու պատճառաբանությամբ դիմումի մերժումը **չի արգելում նույն անձին նույն դիմումով նույն պարտապանի դեմ դիմել դատարան**՝ սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում:

Վերլուծելով վերը նշված իրավանքումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության դիմումը մերժելու դեպքում սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում անձը հնարավորություն ունի նույն պարտապանի դեմ դիմելու դատարան՝ **նույն դիմումով:**

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը դատարան է ներկայացվում քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ձևով և բովանդակությամբ, հետևաբար դիմումի ձևի և բովանդակության նկատմամբ ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված պահանջները: Մասնավորապես, վկայակոչված հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը պետք է պարունակի հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, ինչպես նաև հայցվորի պահանջները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը կարճում է գոր-

ծի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին **մինևնույն հիմքերով** վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է «հայցի հիմք» օրենսդրական եզրույթին՝ նշելով, որ այն ներառում է հայցի փաստական և իրավական հիմքերը, ընդ որում, հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար, իսկ հայցի իրավական հիմքը այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը (*յո՛ւն*, *Վիգեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված «նույն դիմում» եզրույթը նշանակում է նույն ձևի և բովանդակության, այսինքն՝ մինևնույն փաստական և իրավական հիմքեր պարունակող, նույն առարկայի մասին դիմում, որը ներկայացվել է նախկինում, և որի վերաբերյալ առկա է դիմումը մերժելու մասին վճիռ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը կիրառելի չէ, քանի որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նույն առարկայի մասին և մինևնույն հիմքերով դիմում կրկին ներկայացնելու հնարավորություն:

18.07.2014թ.

31. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչություն v. «Հիդրոէներգաշին» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0137/04/13

Էջ
257-264

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտած դիրքորոշման համատեքստում անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկավորված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու համար: Վճարային պարտավորության անվիճելիությունն առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ: Այդուհանդերձ, օրենքի վերոնշյալ դրույթը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ սասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Ման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «դ» ենթակետի համատեքստում: Մասնավորապես՝ այն պարտավորությունը, որը վիճարկվում է պարտապանի կողմից կամ որի դեմ պարտապանը ներկայացրել է առարկություն, անվիճելի է, եթե այդպիսի առարկությունն ուղղված է պահանջի մի մասի դեմ, իսկ մնացած մասը չի վիճարկվում: Այլ կերպ՝ չվիճարկվող մասը, եթե այն գերազանցում է օրենքով սահմանված սվազագույն աշխատավարձի հազարապատիկը, անվիճելի է դարձնում պարտավորությունն առնվազն այդ մասով (*յո՛ւն*, «Յուսիբյան» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարությունի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն դեպքերին, երբ պար-

տատերն ի հիմնավորումն վճարային պարտավորության անվիճելիության վկայակոչում է օրինական ուժի մեջ մտած վճիռ և նշում, որ այն գտնվում է հարկադիր կատարման փուլում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման դեպքերում պարտատերը միաժամանակ պետք է հիմնավորի հարուցված կատարողական վարույթի՝ իր համար բացասական ելքը, այն է՝ կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ կասեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով:

Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել և հարկադիր կատարողի՝ նույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով իրականացված հետախուզումը և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վկայակոչված հոդվածներով ամրագրված՝ կատարողական վարույթն ավարտելու կամ կասեցնելու հիմքերը ևս իրենց բնույթով փաստում են պարտապանի անվճարունակության վերաբերյալ:

Ավելին, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի իրավակարգավորումն իր շարունակական զարգացումն է ստացել «Մասնկության մասին» ՀՀ օրենքում: Այսպես, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

08.05.2014թ.

32. «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ v. «Գրեյի Նատոր» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԱՎԴ/0060/04/12

Էջ
265-271

Խնդիր. Արդյո՞ք դրամական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տոկոսների և տու-

ժանքների հաշվարկումն ու գանձումը կատարվում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, թե այդ վճիռը Վերաքննիչ դատարանի կողմից անսկզբությամբ թողնելու և վճարեկ բողոքը Վճարեկ դատարանի կողմից վերադարձնելու կամ այդ վճարեկ բողոքը մերժելու պահից:

Վճարեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճարեկ դատարանն արձանագրել է, որ նշված օրենքն ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանությանը, որը դրսևորվում է նախ և առաջ անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող ընկերության առողջացմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարմամբ:

Այսինքն՝ սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարելիզիչ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել նրա կենսունակությունը և **մինչև ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը:**

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը (որոշումները, վճիռները) օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռն բողոքարկումը **չի կասեցնում սնանկության վերաբերյալ գործի վարույթը**, ինչպես նաև դատարանի նշանակած ժամանակավոր կառավարչի կամ կառավարչի գործողությունները:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր տրամաբանության լույսի ներքո անդրադառնալով օրենքի 17.1-րդ հոդվածին՝ Վճարեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու դրույթն անխառնելի ինքնանպատակ չէ և ժամանակի գործոնի ազդեցությամբ պայմանավորված՝ ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանության ապահովմանը:

Մինչև ժամանակ հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած վճիռը բողոքարկելու օրենսդրի ընձեռած հնարավորությունը Վճարեկ դատարանի գնահատմամբ ուղղված է սնանկության վարույթում ներգրավված մասնակիցների, այդ թվում՝ պարտապանի դատավարական երաշխիքների ապահովմանը, սնանկության վարույթում ներգրավված մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը:

Վերոգրյալի հիման վրա Վճարեկ դատարանը գտել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը բողոքարկելու դեպքում, ըստ էության, բողոքարկվում է **օրինական ուժի մեջ մտած** դատական ակտը, այսինքն՝ օրենսդիրը հնարավորություն է ընձեռում դատավարության կողմերին վերադաս առյանի դատարանին բողոք ներկայացնելու, ինչը, սակայն, չի կարող կասեցնել օրենքով սահմանված կարգով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը և դրանով պայմանավորված՝ սնանկության գործի վարույթը: Հակառակ դեպքում՝ օրենսդրի կողմից սահմանված՝ դատական ակտերը հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած համարելու մասին դրույթները կիմաստագրվեն:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով «Գրեյի Նատուր» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռն կայունության և ռեալ կերպով իրացվելու ընդունակություններն արտահայտվում են որոշակի իրավական հետևանքներում: Վճիռն օրինական ուժի իրավական հետևանքներն են դրա անհերքելիությունը (անսկզբությունը), բացառիկությունը, պարտադիրությունը, նախադատելիությունը, կատարելիությունը: Վճիռն անհերքելիության (անսկզբություն) էությունը կայանում է նրանում, որ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց պահից, որպես կանոն, ավարտվում է սովյալ քաղաքացիական գործի քննության և լուծման վարույթը: Հետևաբար այն պարագայում, երբ օրինական ուժի մեջ մտած վճիռը բողոքարկվում է վերաքննության կամ վճարեկության կարգով, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերոգրյալ իրավական

հետևանքների մասին խոսելն անհիմն է: Մասնավորապես, բողոքարկված դատական ակտեր չի կարող այլևս համարվել անհերքելի (անփոփոխ), վերջնական և անվերապահ կատարման ենթակա: Իսկ նշված իրավական հետևանքների բացակայության պայմաններում դատական ակտն այլևս չի կարող համարվել օրինական ուժ ունեցող:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ սույն պարագայում 17.12.2012 թվականի վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել, ու թեև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սնանկ ճանաչելու մասին վճիռը որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ, օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, սակայն տվյալ դեպքում դատարանի վճիռը բողոքարկվել է վերաքննության և վճռաբեկության կարգով, որպիսի պայմաններում նշված վճռի վերջնական, անփոփոխելիության, որպես վճռի օրինական ուժ ունենալու իրավական հետևանքների մասին խոսելն անհիմն է: Ուստի մինչև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով 15.05.2013 թվականին որոշում կայացնելու սնանկ ճանաչելու մասին վճռի իրավական հետևանքները, ըստ էության, առկա չեն եղել, որպիսի պայմաններում Բանկն իրավունք է ունեցել պարտավորության վերաբերյալ հաշվարկը ներկայացնել 15.05.2013 թվականի դրությամբ, երբ սնանկ ճանաչելու մասին վճիռը դարձել է վերջնական, անփոփոխելի և անհերքելի»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ հանգել է սխալ եզրակացության հետևյալ պատճառաբանությամբ.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ **պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից** կասեցվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տուժանքների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված պարտապահների պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապահի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է, որն սկսում է կիրառվել պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից, հետևաբար վճռի բողոքարկումը չի կարող իրենից կախվածության մեջ դնել ոչ պարտապահի շահերի պաշտպանությունը, ոչ էլ պարտապահի վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցների գործադրումը ճիշտ այնպես, ինչպես որ վճռի բողոքարկումը չի կարող իրենից կախվածության մեջ դնել պահանջատերերի շահերի ապահովումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված մորատորիումը սկսում է գործել պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ անկախ այդ վճռի բողոքարկված լինելու հանգամանքից:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրակացությունը բխում է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունից, ըստ որի՝ դատարանի վճռի բողոքարկումը չի կասեցնում սնանկության վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև դատարանի նշանակած ժամանակավոր կառավարչի կամ կառավարչի գործողությունները:

Վերոնշյալ վերլուծությունների և գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն իրավաչափ չէ, քանի որ Բանկն իր պահանջի մեջ ներառված տուժանքի գումարի հաշվարկը կատարել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 15.05.2013 թվականի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման կայացման օրվա դրությամբ, ինչը չի բխում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջներից, մասնավորապես՝ Բանկն իր հաշվարկները ներկայացնելիս պետք է առաջնորդվեր «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի պահանջով պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ կասեցնելով դրամական պարտավորությունների նկատմամբ տուժանքի հաշվարկումը, վճարումը կամ գանձումը: Հետևաբար Բանկն իր պա-

հանցի մեջ ներառված տուժանքի գումարի հաշվարկը Դատարանին պետք է ներկայացնել 17.12.2012 թվականի դրությամբ, քանի որ Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 17.12.2012 թվականին:

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

08.05.2014թ.

33. Նարինե Նալբանդյան v. «Իտարկո-Քոնսյորաքչև» ՓԲԸ և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/1459/02/10

Էջ
272-286

Խնդիր. Արդյո՞ք այն դեպքերում, երբ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերը հրաժարվել է փոխառություն տրամադրել ընկերությանը, իսկ բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ դեմ քվեարկել բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանը, վերջինս գրկվում է որպես ընկերության բաժնետեր այդ պարտատոմսերի գնման նախապատվության իրավունքից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ կետը, 154-րդ հոդվածը, 877-րդ հոդվածի 1-ին կետը, 878-րդ հոդվածի 1-ին կետը, 879-րդ հոդվածի 1-ին կետը, արձանագրել է, որ հետապնդվող նպատակի առումով ինչպես փոխառությունը, այնպես էլ պարտատոմսը փոխառու միջոցների ներգրավվման ձևեր են: Մասնավորապես, թե փոխառության պայմանագրի, և թե պարտատոմսի պարագայում խոսքը գնում է ապրանքային շրջանառության մի մասնակցի կողմից մյուսին հատուցմամբ և վերադարձնելու պայմանով դրամ կամ այլ գույք տալու մասին: Այդուհանդերձ, փաստել է, որ ապրանքային շրջանառության մասնակիցների միջև փոխառության տնտեսական ընդհանրության առկայության պայմաններում տարբեր են փոխառության պայմանագրի և պարտատոմսի իրավական ձևակերպումները և կարգավորումները:

Այսպես, օրինակ, եթե փոխառության պայմանագիրը կնքվում է իրավահարաբերության կողմերի միջև, ապա պարտատոմսը թողարկում է էմիտենտը, ընդ որում, եթե փոխառության պայմանագրի կողմերը՝ փոխառուն և փոխառուն, հայտնի են ի սկզբանե, ապա պարտատոմսի դեպքում երբեմն հայտնի չէ, թե ով է լինելու դրա տիրապետողը, եթե փոխառության պայմանագիրը կնքվում է հասարակ գրավոր ձևով, ապա օրենքով սահմանված են պարտատոմսի՝ որոշակի պարտադիր վավերապայմաններ և այլն: Հետևաբար, փոխառության պայմանագիրը և պարտատոմսը չեն կարող նույնացվել քաղաքացիաիրավական կարգավորման էական տարբերությունների պատճառով:

Վերոգրյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործով բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերությունն իրավունք ունի համաձայն իր կանոնադրության թողարկել պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է խորհրդի որոշմամբ, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտատոմս է համարվում այն արժեթղթերը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած ընկերությունից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունքներ՝ ընկերության սահմանած ժամկետներում:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատուներ և այլ արժեթղթեր, որոնք տալիս են ընկերության պարտատուները և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք:

Վերը նշված հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ինվեստիցիոն (ներդրումային) արժեթուղթ հանդիսացող պարտատուները, ունենալով անվանական արժեք և գին, դրա տեղաբաշխումից հետո այն ձեռք բերողին (ներդրողին) հատուցում ստանալու իրավունք է վերապահում՝ դրամով կամ այլ գույքային համարժեքով: Ընդ որում, օրենսդիրը նախատեսել է պարտատուների մարումն ընկերության բաժնետոմսի փոխարկելու ձևով իրականացնելու հնարավորություն:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերությունը համարվում է փակ, եթե ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա բաժնետերերի (այդ թվում՝ հիմնադիրների) կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Փակ ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որն իրականացվում է Ընկերության արժեթղթերի փոխարկումը բաժնետոմսերի ապահովելու համար, կատարվում է միայն այդ փոխարկման միջոցով: Փոխարկման կարգը սահմանվում է փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ փակ ընկերությունն իրավունք չունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով կամ այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք անսահմանափակ թվով անձանց:

Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը՝ բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերն ընկերության բաժնետոմսերի փոխարկման միջոցով, իրականացվում է ընկերության բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման հնարավորություն իրավունք, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ կետով և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:

Վերը նշված իրավական դրույթների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **արժեթղթի փոխարկումը, ըստ էության, բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է: Ընկերությունն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնել բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերն ընկերության բաժնետոմսերի փոխարկելու միջոցով:**

Հաշվի առնելով, որ **արժեթղթի փոխարկումը, ըստ էության, բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է**, ապա պետք է հանգել այն եզրակացության, որ Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նաև բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Հակառակ պարագայում, բաժնետոմսի փոխարկվող ընկերության արժեթղթերը ձեռք բերելու՝ բաժնետիրոջ նախապատվության իրավունքի բացակայությունը կամ սահմանափակումը կհանգեցնի վերջինիս՝ նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի խախտման:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ **օրենսդիրը բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման ընթացքում բաժնետերերի կողմից դրանց ձեռքբերման նախապատվության իրավունքի համար չի սահմանել որևէ նախապայման, այդ թվում՝ մինչև արժեթղթի թողարկումն ու տեղաբաշխումը փոխառության կամ օրենքով չարգելված այլ ձևով ներդրում անելու կամ գույք և դրան համարժեք իրավունքներ փոխանցելու պայման:**

Ավելին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընկերության բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել, ներառյալ՝ Ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով, չի թույլատրվում:

Հետևաբար, վերոգրյալ վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերը վճարելու պարտականությունից ևս բաժնետիրոջն ազատել չի թույլատրվում: Այսինքն՝ բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսի տեղաբաշխման ընթացքում էական է դրա դիմաց իրական վճարումը դրամով կամ գույքային այլ համարժեքով, քանի որ բաժնետոմսերի թողարկումը և տեղաբաշխումը, հետևաբար նաև՝ բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսի թողարկումը և տեղաբաշխումը հանգեցնում է ընկերության կանոնադրական կապիտալի մեծացմանը: Առկա պարտքերի դիմաց բաժնետոմսի փոխարկվող պարտատոմսի տրամադրումը հակասում է ինվեստիցին (ներդրումային) արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման սկզբունքներին, քանի որ ներդրումային արժեթղթի թողարկումն ու տեղաբաշխումը նպատակ է հետապնդում նույն տեսակի և դասի արժեթղթերի համար որոշված ընդհանուր պայմաններով դրամական միջոցներ կամ այլ համարժեք գույքային իրավունքներ ներգրավել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ կողմից ընկերությանը տրամադրված փոխառության դիմաց չեն կարող թողարկվել ընկերության բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերը, իսկ ընկերության բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերը չեն կարող տեղաբաշխվել բացառապես փոխառուների միջև:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը մինևույն իրավունքներ: Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը նույն օրենքի և կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե նույն օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ե) ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

- գ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
- ե) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
- ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
- թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
- ժ) ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը.

ժա) ունենալ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընկերության կառավարմանը մասնակցելու իր իրավունքը **հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը** կարող է իրականացնել՝ մասնակցելով ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, և ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի քանակի չափով:

Հետևաբար, ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքը չի կարող պայմանավորվել ժողովների ընթացքում քվեարկելու իրավունքով, քանի որ քվեարկելու իրավունքը բաժնետիրոջ մեկ այլ՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի իրականացման միջոց է, իսկ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը և ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքը զուգահեռ իրավունքներ են, որոնք ուղղված են բաժնետիրոջ հիմնական իրավունքի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու և շահույթից շահաբաժին ստանալու իրավունքի իրականացմանը:

Այսինքն՝ առանց որևէ նախապայմանի բաժնետերն ունի կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում **կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համամասնորեն** նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք:

Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը հիմնվում է նաև սուբյեկտների քաղաքացիաիրավական հավասարության սկզբունքի վրա, որը, չնայած բաժնետիրական իրավունքում որոշակի ձևափոխման է ենթարկվում, մասնավորապես՝ **միննույն դասի, միննույն տեսակի բաժնետոմսերի բաժնետերերն ունեն միննույն իրավունքները, սակայն իրավունքների ամբողջ ծավալը որոշվում է վերջիններիս պատկանող բաժնետոմսերի քանակով**, այդուհանդերձ հանգում է այն եզրակացության, որ փակ բաժնետիրական ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերն ունեն նոր բաժնետոմսեր ձեռքբերելու նախապատվության իրավունք, և այդ իրավունքը բաժնետերերից որևէ մեկի համար որևէ նախապայմանով չի կարող պայմանավորված լինել:

Վերը նշված վերլուծության լույսի ներքո, հաշվի առնելով, որ արժեթղթի փոխարկումը, ըստ էության բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ **փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ՝ բաժնետոմսի փոխարկվող պարտատոմս գնելու նախապատվության իրավունքը չի կարող պայմանավորված լինել այն հանգամանքով, որ վերջինս հրաժարվել է փոխառություն տրամադրել ընկերությանը կամ բաժնետերերի ընդհանուր ժողովում դեմ է քվեարկել բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանը:**

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ նաև «արժեթղթի թողարկում» և «արժեթղթի տեղաբաշխում» հասկացությունների տարանջատմանը, քանի որ օրենսդիրը բաժնետիրոջ կողմից փակ տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքից լրիվ կամ մասնակի օգտվելու իրավունքի իրականացման ժամկետները կապել է արժեթղթի *տեղաբաշխման* օրվա հետ:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է արժեթղթերի թողարկում և տեղաբաշխում հասկացությունները:

Այսպես՝ **արժեթուղթ թողարկելն** անձի գործողությունների ամբողջությունն է՝ ուղղված նույն դասի արժեթղթերի համախմբի առաջացմանը, իսկ **տեղաբաշխումն** արժեթղթերի առաջին վաճառքն է ներդրողին:

Այսպիսով՝ տեղաբաշխումն արժեթղթի (տվյալ դեպքում՝ պարտատոմսի) վաճառքը կամ այլ կերպ հատուցելի օտարումն է առաջին ձեռք բերողին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է նույն օրենքով ժողովի գումարման մասին սահմանված կարգով Ընկերության դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ ծանուցվեն նույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկող արժեթղթերի ձեռքբերման մասին Ընկերությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով (...): Ծանուցումը պետք է ներկայացվի Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նախապատվության իրավունքից լրիվ կամ մասնակի օգտվելու մասին բաժնետերը պետք է պատշաճ կարգով տեղեկացված լինի դրանց *տեղաբաշխման օրվանից* առնվազն **երեսուն** օր առաջ, իսկ նախապատվության իրավունքից օգտվելու համար բաժնետերը ընկերությանը պետք է ծանուցի արժեթղթերի տեղաբաշխումից առնվազն **մեկ** օր առաջ:

ՀՈՂԱՅԻՆ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

28.11.2014թ.

34. Իջևանի քաղաքապետարան *v.* «Իջևանի շուկա» ՍՊԸ և մյուսներ, քաղ. գործ թիվ ՏԳ/0074/02/13

Էջ
287-293

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հողամասի նպատակային նշանակության փոփոխման փաստի ապացուցման հարցին, ինչպես նաև դրա փոփոխման հետևանքով արդեն իսկ կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիտարկումը. ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հողերի նպատակային նշանակությունը, հողատեսքերն ու գործառնական նշանակությունը և հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումները նշվում են՝

1) հողամասեր տրամադրելու (փոխանցելու) կամ հատուկ պահպանվող տարածքների և այլ նշանակության հողերի օգտագործման համար հատուկ իրավական ռեժիմներ սահմանելու մասին պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներում.

2) հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականներում, պայմանագրերում և այլ փաստաթղթերում.

3) անշարժ գույքի պետական միասնական կադաստրի փաստաթղթերում.

4) պետական գրանցման փաստաթղթերում.

5) համայնքների հողերի օգտագործման սխեմաներում, գլխավոր հատակագծերում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով, այլ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հողերի նպատակային և գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելը հիմք է՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը, ինչպես նաև դրանց հիման վրա հողամասերի առնչությամբ կնքված գործարքները դատական կարգով անվավեր ճանաչելու համար.

2) հողի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու համար:

Նույն հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը սեփականատիրոջ նախաձեռնությամբ սահմանված կարգով փոփոխելու դեպքում, բացառությամբ՝ ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի

սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող (նախատեսվող) հողամասերի, հողամասի սեփականատերը, ըստ գույքի գտնվելու վայրի, եռամսյա ժամկետում համայնքային բյուջե է մուծում հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

Վերոնշյալ հողվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հողամասի նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկատվությունն ի թիվս այլ փաստաթղթերի արտացոլվում է իրավունք հաստատող վկայականներում և պայմանագրերում: Նշված փաստաթղթերում կոնկրետ հողամասի նպատակային նշանակության վերաբերյալ կատարված նշումն իրավաչափ է, քանի դեռ վերջինս չի վիճարկվել կամ փոփոխվել: Կախված այն հանգամանքից, թե նպատակային նշանակությունն ում կողմից է փոփոխվել՝ առաջանում են իրավական տարբեր հետևանքներ:

Այսպես, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումն իրականացվել է ինքնակամ, ապա հողամասի առնչությամբ կայացված ակտերը և կնքված գործարքները դատական կարգով կարող են ճանաչվել անվավեր: Եթե հողամասի նպատակային նշանակությունը փոփոխվել է հողամասի սեփականատիրոջ կողմից, ապա հնարավոր միակ իրավական հետևանքը նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը վճարելու պարտականությունն է, եթե նոր նպատակային նշանակության փոփոխումը հանգեցրել է հողամասի կադաստրային արժեքի ավելացման: Այսպիսով, հողամասի սեփականատիրոջ նախաձեռնությամբ հողամասի նպատակային նշանակության փոփոխումը չի հանգեցնում պայմանագիրը կամ վերջինիս կնքման համար հիմք հանդիսացող իրավական ակտն անվավեր ճանաչելուն:

26.12.2014թ.

35. «ՄԻՄՈՆԵԱ ԱԿՎԱ» ՍՊԸ v. Արարատի մարզի Դաշտաքար համայնքի ղեկավար և մյուսներ, քաղ. գործ թիվ ԱՎԴ/0487/02/12

**Էջ
294-301**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը, միասնական դատական պրակտիկա ապահովելու նկատառումով, մեկնաբանել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը (ուժի մեջ է մտել 01.01.2012 թվականին) տրամադրված ընդերքօգտագործման իրավունքները պահպանում են իրենց ուժը նաև նույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո: Նշված օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատակացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքն է:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց ուժը մինչև նոր օրենսգրքին համապատասխան թույլտվությունների ստացումը: Ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպման դեպքում նույն օրենսգրքով սահմանված թույլտվությունների տրման և գործողության ժամկետներ են համարվում մինչև նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելն ընդերքօգտագործման ոլորտում տրված լիցենզիաների տրման և գործողության ժամկետները:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, ընդերքօգտագործողները պարտավոր են դիմել լիազոր մարմին՝ իրենց ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատակացման ակտ) վերաձևակերպելու համար:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքը (լի-

ցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) չվերաձևակերպելու դեպքում ընդերքօգտագործողի գործունեությունը համարվելու է առանց թույլտվության իրականացրած գործունեություն, և կիրառվելու են պատասխանատվության միջոցներ:

Վկայակոչված հողվածների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման այն բացառիկ իրավունքները, որոնք հավաստված են մինչև 01.01.2012 թվականը տրամադրված համապատասխան փաստաթղթերով, 01.01.2012 թվականից հետո իրենց ուժը պահպանելու են մինչև նշված օրենսգրքին համապատասխան 12 ամսվա ընթացքում թույլտվությունների ստացումը (ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպումը), որպիսի ժամկետում ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) չվերաձևակերպելու դեպքում ընդերքօգտագործողի գործունեությունը համարվելու է առանց թույլտվության իրականացրած գործունեություն, և կիրառվելու են պատասխանատվության միջոցներ: Ելնելով նման իրավակարգավորումից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաձևակերպման նպատակով իրավատիրոջ կողմից անգործություն դրսևորելու արդյունքում ընդերքօգտագործման իրավունքն օրենքի ուժով դադարում է: Ընդ որում, նշված վերլուծությունը բխում է նաև նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից, որն ընդերքօգտագործող է ճանաչում այն իրավաբանական անձին (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությանը), որն ընդերքօգտագործումն իրականացնում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան, այսինքն՝ պահպանելով նաև նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի պահանջները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինքնաբացարկի միջնորդության լուծման կարգը

28.11.2014թ.

36. Հուսիկ Թ-ադուսյան v. Արմեն Արիստակեսյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԱՐԳ-1/0019/02/13

**Էջ
302-306**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ինքնաբացարկի միջնորդությունը քննության առևելու անհրաժեշտության հարցին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին կետը, 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի լիարժեք իրականացումը, սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել:

Այդ հիմքերն են՝

1) երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցիչ, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, կամ

2) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքն արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ օրինական կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը սուբյեկտիվ մոտեցումն է, որը փորձում է պարզել տվյալ դատավորի անձնական համոզմունքները քննվող գործի

կապակցությամբ, և երկրորդը՝ օբյեկտիվ մոտեցումը, որը սահմանում է, թե արդյոք դատավորի կողմից առաջարկվող երաշխիքները բավարար են այդ կապակցությամբ առաջացած ցանկացած օրինաչափ կասկած բացատրելու համար (*լրե ս, ըստ դիմումի Կարինե Հարությունյանի՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտեր վերանայելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵԱԲԳ/1137/02/08 որոշումը*):

Վերը նշված վերլուծության յույսի ներքո անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի իրավակարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ ինքնաբացարկի ինստիտուտն արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխիքներից է, որն արտահայտվում է դատավորի անաչառության վերաբերյալ կասկած առաջանալու դեպքում վերջինիս ինքնաբացարկ հայտնելու իրավական հնարավորությամբ: Ինքնաբացարկի ինստիտուտը նպատակ ունի կողմերի և գործին մասնակցող այլ անձանց մոտ անրապնդել համոզմունք առ այն, որ գործը քննվել և լուծվել է անկողմնակալ և օբյեկտիվ, ինչն իր հերթին նախադրյալներ է ստեղծում տվյալ գործով օրինական դատական ակտ կայացնելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ օրենսդիրը, ամրագրելով դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը, միաժամանակ խնայերատիվ կերպով սահմանել է, որ ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունն ընդհատվում է՝ մինչև ինքնաբացարկի հարցի լուծումը, քանի որ առանց դատավորի անաչառության վերաբերյալ կասկածները փարատելու գործի քննությունը շարունակելու դեպքում չի կարող խոսք լինել գործի անկողմնակալ և օբյեկտիվ քննության մասին: Ընդ որում, դատավորի անաչառության վերաբերյալ կասկածները փարատվում են կամ դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելով, կամ ինքնաբացարկի միջնորդությունը պատճառաբանված որոշմամբ մերժելով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հուսիկ Թադևոսյանի կողմից 22.04.2014 թվականին Վերաքննիչ դատարան է ներկայացվել «Դատավորի ինքնաբացարկի մասին» միջնորդություն, որով վերջինս հայտնել է, որ 28.03.2013 թվականին Վերաքննիչ դատարանը նույն դատական կազմով՝ նախագահությամբ Ս. Միքայելյանի, Ե. Տավարցյանի և Դ. Բախատրյանի, նույն անձանց միջև մինևույն գույքի վերաբերյալ թիվ ԱՐԴ-1/0049/02/11 քաղաքացիական գործով քննության է առել վերաքննիչ բողոք, ինչը վերջինիս մոտ կասկած է հարուցել սույն գործով վերաքննիչ բողոքը քննող դատական կազմի անկողմնակալության վերաբերյալ:

Սույն գործում, սակայն, առկա չէ որևէ ապացույց վերը նշված միջնորդությունը Վերաքննիչ դատարանի դատավորների կողմից քննարկելու և դրա վերաբերյալ եզրահանգման գալու վերաբերյալ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը նշել է, որ շահագրգիռ անձն իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենքով նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի՝ միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: Հետևաբար, հաշվի առնելով նաև ինքնաբացարկի ինստիտուտի կարևորությունը՝ անձի արդար դատաքննության իրավունքի իրացման հարցում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է Հուսիկ Թադևոսյանի՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակալին քննության իրավունքը (արդար դատաքննության իրավունք):

Ապացույցներ և ապացուցում

08.05.2014թ.

37. «ՁԻ ԷՅՁ ՍԹՈՐԻՔ ԷՆԹԵՐՓՐՈՒՅԶՍ» ՍՊԸ v. Սևակ Արզարունի, Արտյոմ Մարտիրոսյան, քաղ. գործ թիվ ԵԿԳ-2593/02/10

Էջ
307-319

Խոսքը. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացույցների թույլատրելիության ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (յո՛ւն ս, *Սվեյլանա ժուլիկյան ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով.

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որով սպառնիչ սահմանված է ապացուցման միջոցների շրջանակը: Մասնավորապես՝ գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել միայն գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների և գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

2) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված թույլատրելիության նշված կանոնը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ենթադրում է ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վերոնշյալ կանոնի համատեքստում ապացույցի թույլատրելիությունը պետք է դիտարկվի ոչ միայն դատավարական, այլ նաև նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու առումով:

3) գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնի բովանդակությունից Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած ապացույցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնը Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է հետևյալ կերպ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով, այլ ապացույցների կիրառումը բացառվում է, կամ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել օրենքով նախատեսված ապացույցներով (անհրաժեշտ ապացույց), սակայն այլ ապացույցների վարույթ ներգրավելու հնարավորությունը սահմանափակված չէ:

Ապացույցների թույլատրելիության նշված կանոնի մասնավոր դրսևորումներից է նաև այս կամ այն ապացույցի օգտագործման արգելքը, որը նշանակում է, որ ի հավաստում գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի չի կարող ներկայացվել որ-

և է կոնկրետ ապացույց, եթե կյուրական օրենսդրությունն արգելում է դրա օգտագործումը:

26.12.2014թ.

38. Արմեն Խուրշուդյան v. «Գինո Գոլդ Մայնինգ Քամինի» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ՄԳ/0111/02/13

Էջ 320-327

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն ապացույցների թույլատրելիության կանոնների վերաբերյալ դիրքորոշման համատեքստում անդրադարձել է ՀՀ աշխատանքային 226-րդ հոդվածի վերլուծությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածին՝ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածում նշված նորմը կրում է իմպերատիվ (պարտադիր) բնույթ, որի համաձայն՝ գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է մինչև կարգապահական տույժի կիրառումը (*լրե ս, Ալբերտո Ջանիբելլյանն ընդդեմ «ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ-ի թիվ ԵԿԳ/2998/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը*):

Վերը նշված վերլուծության լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ընկերության աշխատակիցներ Ընկերության մարդկային ռեսուրսների աշխղեկ Մարիաննա Հովհաննիսյանի և Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանի՝ գործի քննության ընթացքում որպես վկա տված ցուցմունքները սույն գործով թույլատրելի ապացույցներ են, և Ընկերության մարդկային ռեսուրսների աշխղեկ Մարիաննա Հովհաննիսյանի 12.03.2013 թվականի հայտարարության, Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանի 13.03.2013 թվականի գեկուցագրի հետ համակցության մեջ բավարար են հաստատված համարելու մինչև կարգապահական տույժի կիրառումն Արմեն Խուրշուդյանից կարգապահական խախտման վերաբերյալ բացատրություն պահանջելու փաստը՝ նկատի ունենալով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը չի պարտավորեցնում գործատուին աշխատողից խախտման մասին բացատրություն պահանջել բացառապես գրավոր ձևով:

28.11.2014թ.

39. Վանա Վարուցի Մաֆաիեի v. Ադլեն Պետրոսյանս, քաղ. գործ թիվ ԿԳ-3/0085/02/09

Էջ 328-334

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները դատական ակտի հիմնավորման հիմքում դնելու իրավաչափության խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջներին և առարկություններին հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույց ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի

տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան: Միջնորդությունում պետք է նշվեն ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաև ապացույցի գտնվելու վայրը, եթե այն հայտնի է, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

Վկայակոչված իրավադրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության սկզբունքի հիման վրա: Մրցակցության սկզբունքը, որպես քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունք, կոչված է խթանել գործին մասնակցող անձանց դատավարական ակտիվությունը, ինչն առաջնահերթ դրսևորվում է ապացուցման գործընթացում: Մրցակցային դատավարության պայմաններում ապացուցման պարտականությունը կրում են գործին մասնակցող անձինք: Դատարանը պատասխանատու է ապացուցման գործընթացի կազմակերպման համար, կարող է իրականացնել մրցակցությանն օժանդակող, այն երաշխավորող որոշակի գործառույթներ, սակայն իր նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու իրավունք չունի:

Դատարանը սեփական նախաձեռնությամբ ապացույց կարող է ձեռք բերել բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետով և 60-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում, այլ դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով միայն կարող է օժանդակել գործին մասնակցող անձանց՝ համապատասխան ապացույցը ձեռք բերելու հարցում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ կանոնների խախտմամբ ձեռք բերված ապացույցները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ են, իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմնավորման հիմքում:

18.07.2014թ.

40. Մանյա Մանուկյան v. Աշտարակի քաղաքապետարան, քաղ. գործ թիվ ԱՐԱԳ/0209/02/13

**Էջ
335-342**

Խնդիր. Արդյո՞ք նախկինում քննված վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև քննվող քաղաքացիական գործի համար նախադատելի նշանակություն ունեն, թե ոչ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոնշյալ հոդվածի վերլուծությանը, նշել է, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետ): Հետևաբար, նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունե-

նում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյտդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս (*տե՛ս*, «Սարթնե» ՄՊԸ-ն ընդդեմ Աշուր և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ համաձայն ընդհանուր կանոնի՝ նախադատելիությունն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմաններ: Նախադատելիության օբյեկտիվ սահմանները կազմում են այն փաստական հանգամանքները, որոնք հաստատվել են ավելի վաղ քննված գործով օրինական ուժի մեջ մտած վճռով: Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած վկայակոչված որոշմամբ նշել է, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի հետևյալ երկու դատավարական կանոնների պահպանումը՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը):

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդված):

Նախադատելիության սուբյեկտիվ սահմաններն այն անձինք են, որոնց համար դատական ակտով հաստատված հանգամանքներն ունեն նախադատելի նշանակություն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ այն անձանց համար, որոնք մասնակցել են գործի քննությանը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ ընդգծել է, որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհարթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից կոչված է բացառելու մինևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման:

Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտի նախադատելիության վերոշարադրյալ կանոնները և դրանց վերաբերյալ մեկնաբանությունները քաղաքացիական դատավարությունում հավասարապես կիրառելի են վարչական գործերով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքների նկատմամբ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ընդունվել է 17.06.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականից) ընդունման պահին ընդգրկված են եղել «Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 26-րդ գլուխը, ինչպես նաև վարչական այլ իրավահարաբերությունների վերաբերյալ վեճերի վարույթը կարգավորող 24-րդ և 25-րդ գլուխները, որոնք իրենց ուժը կորցրել են 20.12.2007 թվականի թիվ ՀՕ-277-Ն, 26.12.2007 թվականի թիվ ՀՕ-269-Ն ՀՀ օրենքներով՝ կապված ՀՀ վարչական դատարանի ստեղծման և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) ընդունման հետ:

Հետևաբար 01.01.1999 թվականից մինչև 01.01.2008 թվականը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով է կարգավորվել վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ վեճերով գործերի քննության կարգը, այդ թվում՝ վճիռների նախադատելիության հարցը: 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ կետը և 05.12.2013 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում են, որ նախկինում քննված քաղաքացիական և վարչական գործերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ նույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:

Վերոհիշյալ իրավակարգավորումների համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վճիռների նախադատելիության կանոնները միևնույն են ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունում, հետևաբար քաղաքացիական գործեր քննելիս վարչական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերով հաստատված հանգամանքները, ինչպես այլ քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները, ևս ունեն նախադատելի նշանակություն: Հակառակ դեպքում կստացվի, որ տարբեր դատարաններ միևնույն փաստական հանգամանքներին կարող են տալ տարբեր իրավական գնահատականներ՝ հանիրավի ընդլայնելով դատական հայեցողության սահմանները: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նորմի նպատակն է պարզեցնել ապացուցման գործընթացը, այն է՝ միևնույն փաստը մեկ անգամ մեկ այլ դատարանի կողմից հաստատված լինելու դեպքում կողմերին և դատարանին ազատել այդ փաստերը հաստատելու գործընթացը կրկին կատարելու բեռից, ընդ որում, նախադատելիության կիրառման համար օրենսդիրը կարևորել է այն հանգամանքը, որ նոր քննվող գործը վերաբերի **միևնույն անձանց միջև** վեճին:

18.07.2014թ.

41. Արմեն Կուրդինյան v. Սեդա Խուրշուդյան, քաղ. գործ թիվ ԵՇԴ/1342/02/11

Էջ
343-352

Խտնիք. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետաքննության ընթացքում տրված բացատրության և նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի՝ քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցների թույլատրելիության հարցին և դրանց արժանահավատության գնահատման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, **այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (լրե՛ս, Վարթևես Հագոփյանն ընդդեմ Մսահիր Հակոբջանյանի և մյուսների թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը):**

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հետաքննության և նախաքննության ընթացքում տրված բացատրությունները և ցուցմունքները, քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, թույլատրելի են: Նշված ապացույցները, սակայն, Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ արժանահավատության գնահատման առումով ունեն որոշակի առանձնահատկություններ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նախ նշել, որ ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացուցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապա-

ցույցը, որը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով: Մասնավորապես՝ եթե վկայի ցուցմունքը գնահատելիս դատարանը նախ և առաջ պետք է հաշվի առնի վկայի անձնական հատկանիշները (ունակ է արդյոք նա ընկալել և վերարտահայտել համապատասխան փաստը, ինչ փոխհարաբերությունների մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց հետ և այլն), ապա գրավոր ապացույցների պարագայում դատարանը նախ և առաջ պետք է պարզի այդ ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը գրավոր ապացույցների տեսակների բավականին լայն շրջանակ է նախատեսել, ընդ որում՝ ոչ սպառիչ, գտել է, որ վերջիններիս գնահատման, այդ թվում՝ նաև արժանահավատության առումով, չափորոշիչները ևս բազմազան են: Այսպես, օրինակ, եթե որպես գրավոր ապացույց ներկայացվել է պաշտոնական փաստաթուղթ, դատարանը նախ պետք է պարզի՝ արդյոք տվյալ փաստաթուղթը տրվել է իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, և արդյոք պահպանված են նմանատիպ փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները: Վճռաբեկ դատարանը նշել է, որ որոշակի առանձնահատկություններ ունեն նաև հետաքննության և նախաքննության ընթացքում տրված բացատրությունները և ցուցմունքները, որոնց արժանահատավության ստուգումն իրականացնելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև դրանց ձեռքբերման՝ քրեադատավարական իրավաւորմերով սահմանված ընթացակարգը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ *բացարձայնությունը* բանավոր կամ գրավոր փաստարկումներն են, որոնք բերում են դատավարության մասնակիցները և դիմողները՝ հիմնավորելու համար իրենց կամ ներկայացվող անձի պահանջները, ինչպես նաև այլ անձանց բանավոր կամ գրավոր հաղորդումները, որոնք տրվում են մինչև քրեական գործ հարուցելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, նույն օրենսգրքը և մյուս օրենքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ տուժողը, նույն օրենսգրքով սահմանված կարգով, ի թիվս այլ իրավունքների, իրավունք ունի նաև **տալ ցուցմունքներ, տալ բացատրություններ:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝ վկան, օրենքով նախատեսված ի թիվս այլ իրավունքների և պարտականությունների, պարտավոր է նաև ցուցմունքներ տալու, քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, տալ ճշմարտացի ցուցմունքներ՝ հայտնել գործով իրեն ամբողջ հայտնի դարձածը և պատասխանել առաջադրված հարցերին, ստորագրությամբ հաստատել քննչական կամ այլ դատավարական գործողության, արձանագրության մեջ իր տված ցուցմունքների գրառումների ճշտությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են՝ կասկածյալի ցուցմունքները, մեղադրյալի ցուցմունքները, **տուժողի ցուցմունքները, վկայի ցուցմունքները**, տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն

ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթերը: Քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել նույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով նախաքննություն կատարում են հատուկ քննչական ծառայության, ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հարցաքննությունից առաջ քննիչը հավաստիանում է վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ գործով է նա կանչվել և նախազգուշացնում է գործով նրան հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև **ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին**: Վկային հաղորդվում է, որ նա պարտավոր չէ տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ: Դրանից հետո քննիչը պարզում է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցաքննությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի համաձայն՝ տուժողի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար՝ նույն օրենսգրքով սահմանված կանոններով:

Վկայակոչված իրավադրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բացատրությունը և ցուցմունքը քրեադատավարական տարբեր հասկացություններ են: Մասնավորապես՝ ցուցմունքը քրեադատավարական վարույթում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի հիմքով ապացույց է, իսկ բացատրությունը՝ ոչ: Վերը նշվածով պայմանավորված՝ ցուցմունքի ձեռքբերման համար օրենսդիրն ամրագրել է այնպիսի ընթացակարգ, որը գործուն երաշխիքներ է բովանդակում վերջինիս արժանահավատության ապահովման առումով: Այսպես, թե՛ վկան և թե՛ տուժողը նախքան հարցաքննությունը տեղեկացվում են, թե որ դեպքի (փաստի) առթիվ է հարուցված քրեական գործը և պարզաբանման ենթակա որ հանգամանքների շուրջ են հարցաքննվում, ինչպես նաև նախազգուշացվում են տվյալ գործով իրենց հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության և սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Քրեական պատասխանատվության վերաբերյալ նախազգուշացման նպատակը դատավարության մասնակիցներից գործի հանգամանքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ ստանալն է: Մասնավորապես՝ ցուցմունք տալ պատրաստվող դատավարության մասնակիցը, նախազգուշացվելով սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ըստ էության պետք է գիտակցի ճիշտ ցուցմունք տալու կարևորությունը և այն չպահպանելու իրավական հետևանքները:

Մինչդեռ բացատրության պարագայում, պայմանավորված քրեադատավարական վարույթում վերջինիս առանձնահատկություններով (տրվում է հետաքննության փուլում, դատավարության մասնակիցների և դիմողների՝ պահանջի հիմնավորմանն ուղղված բանավոր կամ գրավոր փաստարկումներն են), քրեական պատասխանատվության վերաբերյալ նախազգուշացման մասով վերը նշված ընթացակարգը կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ բացատրությունը և ցուցմունքը քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ գնահատելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել դրանց ձեռքբերման քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգը, մասնավորապես՝ այն, որ ցուցմունքի պարագայում դրա ձեռքբերման ընթացակարգն առավել հիմնավոր երաշխիքներ է բովանդակում այդ ապացույցի արժանահավատությունն ապահովելու առումով:

28.11.2014թ.

42. Մանե Մուրադյան v. «Արտաշատի գինու-կոնյակի գործարան» ԲԲԸ, քաղ. գործ թիվ ԱՎԴ/0111/02/13

**Էջ
353-360**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացուցման պարտականության բաշխման և ապացույց պահանջելու ընթացակարգերի իրավակարգավորման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 149⁸-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի կողմից ապացուցման առարկան որոշելու և ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունների իրականացումն ինքնանպատակ չէ: Նշված դատավարական գործողությունները մի կողմից կոչված են ապահովել գործի ըստ էության ճիշտ լուծումը, մյուս կողմից երաշխավորել գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների իրականացումը: Մասնավորապես՝ մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքների ապահովման նկատառումով գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է հստակ պատկերացում ունենա գործի լուծման համար նշանակություն ունեցող այն հանգամանքների մասին, որոնք ապացուցելու պարտականությունը կրելու է: Հետևաբար, դատարանը, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում որոշելով ապացուցման առարկան, պետք է ձեռնամուխ լինի ապացուցման պարտականության բաշխմանը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ընդհանուր կանոնի համաձայն, որն ամրագրված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչյաձ փաստերը: Ընդհանուրը, սակայն, կիրառելի է բոլոր այն դեպքերում, քանի դեռ դատավարական կամ նյութական իրավունքի նորմերով որոշակի փաստի հաստատման վերաբերյալ հատուկ կանոն սահմանված չէ: Մասնավորապես՝ առանձին դեպքերում, պայմանավորված վիճելի իրավահարաբերության փաստակազմի առանձնահատկությամբ, որոշակի փաստերի առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունն արդեն իսկ օրենքով կարող է դրված լինել դատավարության կոնկրետ մասնակցի վրա: Ման դեպքերում դատարանն ապացուցման պարտականության բաշխումը պետք է իրականացնի համապատասխան իրավակարգավորման հաշվառմամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապացուցման պարտականությունը բաշխելիս դատարանները չպետք է սահմանափակվեն միայն ընդհանուր կանոնով և յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնեն վիճելի նյութաիրավական հարաբերության իրավակարգավորումը:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերը, 49-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նշված իրավանորմերի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցներ հավաքելու և դատարան ներկայացնելու պարտականությունը կրում են կողմերը՝ ապացուցման բեռի բաշխմանը համամասնորեն: Դատավարական օրենքը դատարանին պարտավորեցնում է միայն կողմերի միջնորդությամբ օժանդակել ապացույցների ձեռքբերման հարցում: Ման միջնորդության ներկայացման համար նախապայման է հանդիսանում այն, որ միջնորդող կողմը պետք է հիմնավորի (ապացուցի), որ չունի հնարավորություն ինքնուրույն ձեռք բերելու ապացույցները: Միջնորդությունը պետք է պարունակի կոնկրետ տեղեկություն հայցվող ապացույցի, ապացուցման ենթակա փաստի, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև ապացույցի գտնվելու վայրի վերաբերյալ: Միջնորդությունը ոչ հստակ լինելու դեպքում դատարանը, ելնելով գործի քննության արդյունավետությունից, կարող է պահանջել միջնորդություն ներկայացրած կողմին հստակեցնել այն (*պե՛ս, Հեղինկ Երիցյանն ընդդեմ Մերուժան Դզրոյանի և մյուսների թիվ ԾԴ3/0325/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

28.11.2014թ.

43. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնք v. Տարոն Գասպարյան, քաղ. գործ թիվ ԾԴ/0613/02/13

Էջ
361-368

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է ՀՀ քաղաքացիա-

կան օրենսգրքի 466-րդ հոդվածի հիմքով հայցապահանջ ներկայացվելու դեպքում ապացուցման առարկայի և ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունների վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն հետևյալ երեք դեպքերում՝

1. մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման առկայության դեպքում կամ

2. օրենքով նախատեսված դեպքում կամ

3. պայմանագրով նախատեսված դեպքում:

Վերոնշյալ երեք հիմքերից որևէ մեկով պահանջ ներկայացված լինելու դեպքում պայմանագրի փոփոխման կամ լուծման պահանջ ներկայացրած կողմը պետք է ապացուցի իր համար այնպիսի բացասական հետևանքի (վնասի) առաջացումը, որը զգալիորեն գրկում է վնաս կրած կողմին (պայմանագրի լուծման պահանջ ներկայացրած կողմին) ստանալ այն, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս: Հետևաբար պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած հանգամանքի ապացուցման բեռը կրում է այդպիսի պահանջ ներկայացնող կողմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածում «վնաս» եզրույթը ենթադրում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում ամրագրված իրական վնաս, բաց թողնված օգուտ կամ խախտված իրավունքների համար կատարված ծախսեր: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի հիմքով հայցապահանջ ներկայացվելու դեպքում ապացուցման առարկան են կազմում պայմանագրի խախտման փաստը (կամ օրենքով նախատեսված դեպքը կամ պայմանագրով նախատեսված դեպքը), այդ խախտումը պայմանադիր կողմի կողմից կատարելը, խախտման արդյունքում վնասի առաջացումը: Նշված փաստերի հաստատումից բացի դատարանի կողմից ինքնուրույն գնահատման են ենթակա խախտման էական լինելը և վնասի այնպիսին լինելը, որը պահանջ ներկայացրած կողմին գրկել է պայմանագրով ստացվող ակնկալիքից (*լրե՛ս, Միսակ-Նուրար Թերեղեկյանն ընդդեմ Ռուբեն Բոչարի թիվ ԵԿԳ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը միաժամանակ հավելել է, որ քննարկվող դրույթում օգտագործված «զգալիորեն» հասկացությունը գնահատողական կատեգորիա է, և յուրաքանչյուր դեպքում այն գնահատելու համար պետք է ելնել պայմանագրից ստացվող այն ակնկալիքի բնույթից և ծավալից, որից գրկվել է պայմանագիրը լուծելու պահանջ ներկայացնող կողմը: Պայմանագրի պայմանների էական խախտումը բացահայտելու նպատակով պայմանագրից ստացվող ակնկալիքի բնույթն ու ծավալը գնահատելու համար պայմանագիրը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոնների պահպանմամբ: Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին՝ նշելով, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*լրե՛ս, «Կարպո» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի թիվ ԾԴ1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Դատական ծախսեր

28.11.2014թ.

44. Լևիկ և Սարգիս Ազարեկյաններ v. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/0139/02/13

Էջ
369-376

Խնդիր. 1. Արդյո՞ք վճռի եզրակացության մասում հայցադիմումը դատարան ներկայացնելու համար պետական տուրքի գումարը գործին մասնակցող անձից բռնագանձելու հարցին չանդրադառնալու պարագայում այդ հարցը կարող է լուծվել վճռում վրիպակ ուղղելու միջոցով:

2. Հայցադիմումը դատարան ներկայացնելիս սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը կամ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդությունը հայցադիմումին կցված չլինելու պայմաններում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում կարող է արդյո՞ք հետագայում այդ գումարը բռնագանձել հայցվորից, եթե նշված հարցին չի անդրադարձել հայցադիմումը վարույթ ընդունելիս:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Առաջին խնդրի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարության կարգի համաձայն՝ դատարանը լիազորված է վճիռ կայացնելուց հետո մի դեպքում **լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով լուծել դատական ծախսերի, այդ թվում՝ հայցադիմումի համար պետական տուրքի հարցը**, եթե այդ հարցը չի լուծվել վճիռ կայացնելիս, իսկ մյուս դեպքում՝ **ուղղել այդ վճռում թույլ տրված վրիպակները:** Օրենսդիրը չլուծված դատական ծախսերի հարցը տարանջատել է վճռում թույլ տրված վրիպակի բովանդակության կազմից և դրա համար նախատեսել է լուծման այլ ընթացակարգ, այն է՝ **դատական ծախսերի հարցը լուծված չլինելու դեպքում այդ հարցը բացատրապես կարող է լուծվել լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով:**

Երկրորդ խնդրի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ոչ բոլոր դեպքերում է, որ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի լրացուցիչ վճիռ կայացնել չլուծված դատական ծախսերի հարցի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և դատական ծախսերի հարցը լուծված չլինելու դեպքում յուրաքանչյուր գործով լրացուցիչ վճիռ կայացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն հետևյալ անհամաձայնությունները՝

1. հայցադիմումը դատարան ներկայացնելիս կցվել է սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը.

2. այդպիսին կցված չլինելու դեպքում դատարանին ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու մասին միջնորդություն.

3. հայցադիմումը վարույթ ընդունելիս դատարանն անդրադարձել է այդ միջնորդությանը.

4. ինչ որոշում է կայացվել նշված միջնորդության վերաբերյալ.

5. գործի քննության ընթացքում փոփոխվել է հայցի հիմքը կամ առարկան, ավելացվել է հայցապահանջի չափը:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է ստորև նշված հիմնավորումներից:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցադիմումին կցվում է սահմանված կարգով և չափով պետական տուրքի

վճարած լինելը հավաստող փաստաթուղթ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է վարույթ ընդունել նույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Մույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, հայցադիմումն ստանալու օրվանից ետոյա ժամկետում հայցադիմումի ընդունումը չմերժելու կամ դիմումը չվերադարձնելու դեպքում կայացնում է դա ընդունելու մասին որոշում, որում նշվում են նաև գործի քննության ժամանակը և վայրը:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն իմպերատիվ ձևով սահմանել է պարտականություն՝ վարույթ ընդունելու միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ դատարանի կողմից կայացվել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում, ապա հայցվորի մոտ արդեն իսկ ձևավորվում է այն համոզմունքը, որ հայցը ներկայացվել է օրենքի պահանջների պահպանմամբ, այդ թվում՝ պահպանված է նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելու պահանջը: Դատավարության յուրաքանչյուր փուլը, այդ թվում նաև քաղաքացիական գործի հարուցման փուլն ուղղված է յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի իրացման ապահովմանը, տվյալ պարագայում՝ դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորմանը:

Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում նաև այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, և կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի (*յոնս, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների թիվ ԱՐԳ/0062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հավելել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի յուրաքանչյուր ներքո, որն ի թիվս այլոց, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության հիմնարար հայեցակետերից է **իրավական որոշակիության սկզբունքը**, որը *inter alia* պահանջում է, որպեսզի դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (*յոնս, Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանգաք թիվ 28342/95, կետ 61*):

Գործի վարույթի կարճումը

28.11.2014թ.

45. ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե v. Հակոբ Զիլիկյան, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/0666/02/08

Էջ
377-383

Խնդիր. Արդյո՞ք 01.01.2008 թվականի դրությամբ ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող և դատաքննության փուլում կասեցված գործի վարույթը վերսկսելու պայմաններում այն ենթակա է կարճման՝ ենթակայության փոփոխության հիմքով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ընդհանուր իրավասության դատարաններում նշված օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված գործերի հետագա դատաքննությունը շարունակվում է նույն օրենսգրքով սահմանված կարգով: Մույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատաքննության

փուլում չգտնվող գործերը հնգօրյա ժամկետում փոխանցվում են վարչական դատարանին՝ այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնելով դատավարության մասնակիցներին:

Նշված իրավադրույթներով օրենսդիրը, ըստ էության, կարգավորել է 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին) հետո ընդհանուր իրավասության դատարանների վարչություն գտնվող հանրային իրավահարաբերություններից ծագող գործերի հետագա քննության կարգը:

28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:

Վերոհիշյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո նույն օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան այդ օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված գործերի հետագա դատաքննությունն ընդհանուր իրավասության դատարաններում շարունակելու համար անհրաժեշտ է հետևյալ երեք պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1) գործը պետք է նախատեսված լինի 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով.

2) այդ գործը 01.01.2008 թվականի դրությամբ պետք է գտնվի ընդհանուր իրավասության դատարանի վարչություն.

3) այդ գործի քննությունը պետք է գտնվի դատաքննության փուլում:

Երրորդ պայմանի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ 01.01.2008 թվականի դրությամբ ընդհանուր իրավասության դատարանների վարչություն գտնվող՝ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված գործերի հետագա քննությունը չի կարող շարունակվել նույն դատարաններում, եթե այդ գործերը չեն գտնվում 28.11.2007 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի իմաստով դատաքննության փուլում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է քննարկվող նորմի տառացի մեկնաբանությամբ, ինչից ուղղակիորեն բխում է, որ այդ նորմը վերաբերում է «դատաքննության փուլում չգտնվող» գործերին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդրական նման իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և բխում է արդարադատության արդյունավետության սկզբունքից, անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի բովանդակությունից: Այսպես, ընդհանուր իրավասության դատարանների վարչություն 01.01.2008 թվականի դրությամբ գտնվող հանրային իրավահարաբերություններից ծագող այն գործերով, որոնցով դատարանը ձեռնամուխ է եղել գործի ըստ էության քննությանն ուղղված որոշակի դատավարական գործողություններ իրականացնելուն, նույն դատավարական գործողությունների կրկին իրականացումը բացառելու, գործի քննության անհարկի ձգձգումը կանխելու, դատավարական ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործումն ապահովելու նկատառումով օրենսդիրն առավել նպատակահարմար է համարել այդպիսի գործերի հետագա քննությունն ընդհանուր իրավասության դատարանում շարունակելու դատավարական կարգը: Մինչդեռ, այն գործերը, որոնցով գործի ըստ էության քննություն չի իրականացվել, պետք է

հանձնվեն վարչական դատարանին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածը վերը քննարկված գործերով, ըստ էության, բացառել է ենթակայության փոփոխության հիմքով վարույթի կարճման հնարավորությունը: Մնան իրավակարգավորումը կոչված է երաշխավորելու անձի արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացումը: Վճռաբեկ դատարանը նշել է, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: **Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում:** Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեու, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Դատական նիստի արձանագրումը

18.07.2014թ.

46. Կոբեն Ստեփանյան v. Ջուլետտա Սմբատյան, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/2279/02/11

Էջ
384-389

Խնդիր. Արդո՞ք քաղաքացիական գործում էլեկտրոնային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրումների բացակայությունը կարող է համարվել դատական նիստի արձանագրության բացակայություն, եթե քաղաքացիական գործում առկա են այդ նիստերի համակարգչային համառոտագրումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ հարկ է համարել անդրադառնալ դատավարության ընթացքում դատական նիստի արձանագրության ունեցած դերին և նշանակությանը՝ ընդգծելով, որ դատական նիստի արձանագրությունը՝ որպես դատավարական գործողությունների կատարման բոլոր էական հանգամանքները հաստատող փաստաթուղթ, ունի կարևոր ապացուցողական նշանակություն:

Մասնավորապես՝ դատավարության կողմերը կարող են հիմնավորել իրենց վերաքննիչ և վճռաբեկ բողոքները՝ հղում կատարելով դատական նիստերի արձանագրությանը, իսկ վերադաս ատյանի դատարանները դատական նիստերի արձանագրությունների միջոցով կարող են ստուգել ստորադաս դատարաններում գործի քննության օրինակայությունը, մասնավորապես, արդյո՞ք ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը համապատասխանում է այն փաստերին, որոնք հաստատվել են դատաքննության ընթացքում կամ որևէ դատավարական գործողություն իրականացնելիս դատարանը պահպանել է սահմանված դատավարական կարգը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական նիստի արձանագրությունն անձի դատական պաշտպանության իրավունքի և հատկապես՝ բողոքարկման իրավունքի իրացումն ապահովող կարևորագույն միջոցներից է, ինչով էլ պայմանավորված է դատական նիստի արձանագրության բացակայության դեպքում օրենսդրի կողմից դատական ակտի բեկանման պարտադիր պահանջի սահմանումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին կետի, 148-րդ հոդվածի 3-րդ կետի փոխկապակցված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում դատական նիստի արձանագրումը ենթադրում է ձայնային արձանագրում՝ ամրագրված լազերային կրիչի վրա և համառոտագրում՝ արտատպված թղթի վրա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ձայնային արձանագրումը ներկայումս հանդիսանում է դատական նիստի բոլոր տվյալների անընդմեջ արձանագրման հիմնական միջոցը, հետևաբար նաև դատավարության հրապարակայնության ապահովման միջոցը:

Ինչ վերաբերում է թղթային համառոտագրմանը, ապա վերջինս ուղղակի դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են, որն ունի ուղղորդիչ բնույթ, հետևաբար առանց ձայնային արձանագրման այն չի կարող բավարար պատկեր ստեղծել դատական նիստի ընթացքի վերաբերյալ, չի կարող բավարար չափով ապահովել դատավարության հրապարակայնությունը և ծառայել որպես անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման երաշխիք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում լազերային կրիչի վրա ամրագրված ձայնային արձանագրման և համակարգչային համառոտագրման միաժամանակյա առկայությունը պարտադիր է յուրաքանչյուր դատական նիստով, և դրանցից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է դատական նիստի արձանագրության բացակայություն:

Գործը դատաքննության նախապատրաստելու կարգը

18.07.2014թ.

47. «Արտադրա-Տպագրական» ՓԲԸ v. Սուսանա Հարությունյան, քաղ. գործ թիվ ԵՄԳ/0826/02/12

Էջ
390-395

Խնդիր. Արդյոք դատարանը նախնական դատական նիստի ավարտից անմիջապես հետո կարող է անցնել գործի դատաքննությանը այն պարագայում, երբ կողմերից մեկը ներկա չէ և չի իրագրվել գործը դատաքննության նշանակելու մասին որոշման մասին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ամրագրելով քաղաքացիական դատավարության փուլերը (գործի հարուցման, գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության և այլն), պարտավորեցնում է դատարանին դատավարության մի փուլից անցումը մյուսին ձևակերպել առանձին դատավարական փաստաթղթով: Նշված իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և կոչված է երաշխավորելու գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրականացումը: Մասնավորապես՝ քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր փուլ ունի քաղաքացիական դատավարության ընդհանուր նպատակից բխող իր նպատակը, խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունների շրջանակը: Վերը նշվածով պայմանավորված՝ յուրաքանչյուր փուլում գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների շրջանակը ևս տարբեր է, հետևաբար վերջիններիս կողմից դատավարության համապատասխան փուլին անցնելու վերաբերյալ իրագրելու միջոցով անհրաժեշտություն է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁹-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավորը, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, որոշում է կայացնում գործը դատաքննության նշանակելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործը դատաքննության նշանակելու մասին որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, որում նշվում է գործի դատաքննության ժամանակի և վայրի մասին:

Կայացնելով գործը դատաքննության նշանակելու մասին որոշումը՝ դատարանը մի կողմից արձանագրում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ավարտը, մյուս կողմից՝ անցումը դատաքննության փուլին, որի շրջանակներում էլ իրականացվում է գործի ըստ էության քննությունը և լուծումը: Մասնավորապես՝ դատավարության այս փու-

լում դատարանը պարզում է հայցվորի պահանջները, պատասխանողի առարկությունները, անմիջականորեն հետազոտում է ապացույցները, պարզում է գործի փաստական հանգամանքները, կոնկրետ իրավահարաբերության սահմաններում կողմերի իրական իրավունքները և պարտականությունները: Վերը շարադրվածով պայմանավորված՝ դատավարության այս փուլում գործին մասնակցող անձանց հիմնական իրավունքները հանգում են իրենց դիրքորոշումը ներկայացնելուն և ապացույցների հետազոտմանը մասնակցելուն: Հետևաբար օրենսդրի պահանջը՝ դատաքննության նշանակելու մասին որոշումն առանձին ակտի ձևով կայացնելու և այն գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ, կոչված է ապահովելու վերջիններիս կողմից դատավարության այս փուլին նախապատրաստվելու և դատարան ներկայանալու իրական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգումը բխում է նաև Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուրի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավակցներն և ապացույցներից: Մասնավորապես, *Անվերլ ընդդեմ Եվրոպայի գործով* Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով (*Կոնս, Լիլիթ Գևորգյան ընդդեմ Սվեդլանա Միքայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Հետևաբար այն դեպքում, երբ անձը չի տեղեկացվում դատաքննության փուլին անցնելու վերաբերյալ, որպես հետևանք գրկվում է դատավարության այդ փուլում օրենսդրորեն իրեն վերապահված դատավարական իրավունքներն իրացնելու հնարավորությունից՝ հայտնվելով դատավարության մյուս կողմի հետ համեմատ էականորեն նվազ բարենպաստ վիճակում, ինչն իրավահավասարության սկզբունքի խախտում է:

Վճռաբեկ դատարանը, միաժամանակ ելնելով գործի արդյունավետ քննության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից, հավելել է, որ դատարանը նախնական դատական նիստի ավարտից անմիջապես հետո կարող է որոշում կայացնել դատաքննությունը սկսելու մասին բացառապես այն դեպքում, երբ նախնական դատական նիստին ներկայացել են գործին մասնակցող բոլոր անձինք և նրանց հնարավոր է իրազեկել գործը դատաքննության նշանակելու մասին որոշման վերաբերյալ:

Վարույթը վերաքննիչ դատարանում

26.12.2014թ.

48. «ԱՐՄԵՆ-ՕՍՍ» ՍՊԸ v. «ՄԱՎԱ ԻՄՊՈՒՆՍ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵՏԳԴ/1617/02/09

Էջ
396-402

Խնդիր. Արդյո՞ք վերաքննիչ բողոք բերող անձի կողմից վերաքննիչ բողոքում մի քանի հիմքեր և մի քանի պահանջներ ներկայացնելու պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից այդ հիմքերից ու պահանջներից միայն մեկին իր որոշմամբ անդրադառնալը չի հանդիսանում արդարադատության մատչելիության սկզբունքի խախտում և չի սահմանափակում անձի՝ օրենսդրությամբ երաշխավորված բողոքարկման իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դա-

տավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հանդատակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հռչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադատնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ *(տե՛ս, Համայակ Ոսկանյանն ընդդեմ Վրոդյա Հակոբյանի թիվ ԵԵԳ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը, հավելել է, որ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու պահանջը ոչ միայն կոչված է ապահովել վերաքննիչ բողոքի արդյունավետ քննությունը, այլև՝ երաշխավորել անձի վերաքննիչ բողոքարկման իրավունքի լիարժեք իրականացումը:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված իրավադրույթով ամրագրված են գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանի կիրառման ենթակա լիազորությունները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նշել է, որ թվարկված լիազորությունների կիրառումը պետք է պայմանավորված լինի բացառապես վերաքննիչ բողոքում շարադրված հիմքերի և հիմնավորումների քննարկման և դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կայացված եզրահանգումներով: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հավելել է, որ վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր լիազորություններից օգտվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատավարական նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է նաև վերաքննության փուլում տնօրինչականության սկզբունքի դրսևորման առանձնահատկություններին՝ նշելով, որ վերաքննիչ բողոքի հիմքերը կարող են փոփոխվել և/կամ լրացվել բացառապես վերաքննության հարուցման փուլում՝ մինչև բողոքարկման իրավունքի իրացման ժամկետը լրանալը *(տե՛ս, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՍԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ նման սահմանափակումը վերաբերում է նաև վերաքննիչ բողոքի պահանջին: Վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջը ևս կարող է փոփոխվել բացառապես վերաքննության հարուցման փուլում, սակայն նման փոփոխությունն անթույլատրելի է վերաքննիչ վարույթի հարուցումից՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ բողոք բերող անձի՝ վերաքննիչ բողոքում ներկայացված երեք պահանջներն առանց «կաս» շաղկապի օբյեկտիվորեն անհամատեղելի են, իսկ նիստի ընթացքում բողոք բերող անձի դիրքորոշումը պարզելու նպատակով վերջինիս ներկայացուցչին ուղղված հարցերի արդյունքում ներկայացուցիչը պնդել է միայն վճիռը բեկանելու և գործի վարույթը կարճելու մասին դատական ակտ կայացնելու պահանջը, հետևաբար վերաքննիչ բողոքը քննության է առել միայն այդ պահանջին վերաբերող հիմքի շրջանակներում և հանգել է այն եզրակացության, որ թիվ ԵԱԴԴ/1000/02/08 և թիվ ԵԱԴԴ/1617/02/09 քաղաքացիական գործերով տարբեր են ինչպես հայցի առարկան, այնպես էլ հայցի հիմքը, ուստի ՀՀ քա-

դաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմաններն առկա չեն:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրել է հետևյալը.

Ի տարբերություն առաջին աստիճանի դատարանի, որը կաշկանդված է հայցապահանջով և պարտավոր է գործը քննել ու լուծել ներկայացված պահանջի շրջանակներում, վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով բողոքի հիմքերով, քննության է առնում դրանից յուրաքանչյուրի հիմնավորվածության հարցը՝ համապատասխանաբար կիրառելով օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորություններից որևէ մեկը: Հետևաբար բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում մի քանի պահանջների միաժամանակյա ներկայացումը որևէ կերպ չի կարող խոչընդոտել վերաքննության քնակառուցման ընթացքը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական ակտի վերանայումը կոնկրետ պահանջի շրջանակներում իրականացնելու սահմանափակում գործող օրենսդրությամբ նախատեսված չէ: Մնան պայմաններում սույն գործով վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «բողոք բերող անձի» վերաքննիչ բողոքում ներկայացված երեք պահանջներն առանց «կամ» շաղկապի օբյեկտիվորեն անհամատեղելի են», անհիմն է: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը ոչ իրավաչափ է համարել նաև արդեն իսկ հարուցված վերաքննության վարույթում Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի հստակեցմանն ուղղված դատավարական գործողությունների իրականացումը՝ հաշվի առնելով այն, որ նման դատավարական կարգ գործող օրենսդրությամբ նախատեսված չէ, ինչպես նաև այն, որ վերաքննիչ բողոք բերող անձը համապատասխան գործողությունն իրականացնելու հնարավորություն ունի միայն վերաքննության հարուցման փուլում:

Մնան պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննության առնել վերաքննիչ բողոքում ներկայացված բոլոր հիմքերը և եզրահանգումներ անել դրանցից յուրաքանչյուրի հիմնավորվածության վերաբերյալ՝ չսահմանափակվելով միայն գործի վարույթը կարճելու մասին դատական ակտ կայացնելու պահանջով:

28.11.2014թ.

49. Տարբերակ Գ-ալստյան v. «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1118/02/12

Էջ
403-409

Խտնդիր. Արդյո՞ք վերաքննիչ դատարանը կարող է կիրառել դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը, եթե առկա է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, մասնավորապես՝ գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը քննարկվող հոդվածում առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատարանի վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և վճիռը բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Մնան խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և պետք է գնահատվի որպես թույլ տրված խախտման հետևանք: Գործից դատական նիստի արձանագրության բացակայությունը սերտորեն կապված է գործերի քննության հրապարակայնության և կողմերի իրավահավասարության սկզբունքների խախտման հետ, իսկ նման խախտմամբ գործի քննության իրականացման արդյունքում

կայացված դատական ակտն էլ չի կարող լինել օրինական և հիմնավորված: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված մյուս խախտումները ևս վերաբերում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված արդարադատության սկզբունքներին (օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարան, դատարանի օրինական կազմ, լսված լինելու իրավունք, դատավարության լեզու և այլն), ուստի դրանց առկայությունը կասկածի տակ է դնում ընդհանրապես արդարադատություն իրականացված լինելու կամ արդարադատությունը դատարանի կողմից իրականացված լինելու իրողությունը: Վերադաս ատյանի կողմից նման խախտումների արձանագրումը *ipso facto* հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը՝ անկախ բողոքում բարձրացված նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ չկիրառման վերաբերյալ հիմքերի հիմնավոր լինելուց: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացվելու դեպքում: Նշված պատճառաբանությամբ էլ վերաքննիչ դատարանի կողմից վճռի բեկանման անվերապահ որևէ հիմքի առկայությունը հաստատված լինելու դեպքում կիրառման է ենթակա դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը:

26.12.2014թ.

50. Գևորգ Ալեքյան v. Վերգուշ Բոզանյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԱԳԳ/0976/02/08

Էջ 410-416

Խնդիր. Արդյո՞ք մի քանի հայցապահանջների հիման վրա հարուցված քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանն իրավասու է որոշել հայցապահանջի բավարարման կամ մերժման ենթակա լինելու հարցն այն պայմաններում, երբ առաջին ատյանի դատարանն ընդհանրապես քննության առարկա չի դարձրել այդ հայցապահանջը և գործի քննության արդյունքում կայացված վճռով չի անդադարձել դրան:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցադիմումը ներկայացվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները:

Մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափա-

կիչ մասերից:

Մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ պարբերության համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ յուրաքանչյուր հայցապահանջը բավարարելու կամ մերժելու, ինչպես նաև նշում՝ վճիռը բողոքարկելու ժամկետի և կարգի մասին:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով վկայակոչված հոդվածները, նշել է, որ դատարաններում քաղաքացիական գործը հարուցվում է միմիայն ներկայացված հայցի (դիմումի) հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Այսինքն՝ մի քանի հայցապահանջների հիման վրա հարուցված գործի քննության արդյունքում դատարանը պարտավոր է անդրադառնալ բոլոր հայցապահանջներին և վճիռ կայացնել միայն այդ պահանջների շրջանակներում: Այդ իսկ պատճառով օրենսդրի կողմից ամրագրվել է, որ հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործով դատարանի վճիռը պետք է պարունակի եզրահանգումներ յուրաքանչյուր հայցապահանջի բավարարման կամ մերժման մասին: Ընդ որում, հայց ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր հայցապահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով (*լրե՛ս, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ալյակի» ՍՊԸ-ի թիվ ՍԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հավելել է, որ յուրաքանչյուր գործով ներկայացված հայցապահանջի շրջանակը ոչ միայն էական նշանակություն ունի առաջին ատյանի դատարանում գործի ըստ էության քննության և լուծման համար, այլև՝ կարևորվում է դատական ակտերի վերանայման փուլերում: Մասնավորապես՝ վերաքննիչ դատարանի գործունեությունն ուղղված է վերաքննիչ բողոքի քննության արդյունքում առաջին ատյանի դատական ակտը վերանայելուն, որը ներառում է ստորադաս դատարանի գործողությունները (անգործությունը) ստուգելը: Հետևաբար այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում առաջին ատյանի դատական ակտը վերանայելիս հայտնաբերում է, որ գործով ներկայացված որևէ հայցապահանջ ըստ էության չի քննվել և լուծվել առաջին ատյանի դատարանի կողմից, պարտավոր է արձանագրել համապատասխան խախտումը և գործն ուղարկել նոր քննության: Վերաքննիչ դատարանը, սակայն, առաջին ատյանի դատարանի կողմից չքննված հայցապահանջը քննելու իրավունք չունի: Ման սահմանափակումը պայմանավորված է ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի առաձևահատկություններով: Մասնավորապես՝ ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննության օբյեկտը ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտն է, այլ ոչ թե՛ գործն ընդհանրապես, հետևաբար, եթե ստորադաս դատարանը որևէ պահանջով վերջնական եզրահանգում չի կատարել, վերաքննության օբյեկտը բացակայում է: Ման սահմանափակումը պայմանավորված է նաև վերաքննության սահմաններով: Գործող իրավակարգավորման պայմաններում վերաքննիչ դատարանը կաշկանդված է առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերով ու հետազոտված ապացույցներով և նոր փաստ հաստատելու կամ նոր ապացույց ընդունելու լիազորություն ունի միայն բացառիկ դեպքերում:

28.12.2014թ.

51. Անժելա Գևորգյան v. Նիկոլ Շահվերդյան, քաղ. գործ թիվ ԱՐԱԳ-2/0169/02/11

Էջ
417-423

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի հետաձգված բողոքարկման խնդրին, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու պարագայում այն կրկին ներկայացնելու համար անհրաժեշտ հիմքերի հարցին, բողոքը ներկայացնելու ձևին, կարգին և բովանդակությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ կետը, 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 223-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական և հետաձգված կարգեր: Անմիջական բողոքարկման են ենթակա այն միջանկյալ դատական ակտերը, որոնց չբողոքարկման արդյունքում օբյեկտիվ արգելքներ են առաջանում գործի հետագա քննության համար, իսկ դրանց բողոքարկման անհնարինությունը դատական ակտի կայացման չարդարացված ձգձգումների և քաղաքացու իրավունքների խախտման է հանգեցնում, որոնց հետագա դատական պաշտպանությունն ապագայում չի կարող ապահովվել կամ չի կարող հանգեցնել արդյունավետ վերականգնման: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտերի համար սահմանել է **անմիջական բողոքարկման կարգ:** Իսկ նշված դրույթներով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերի համար օրենսդիրը սահմանել է «**հետաձգված բողոքարկման» կարգ,** այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ցանկացած դատավարական գործողություն, այդ թվում նաև՝ **տվյալ միջանկյալ դատական ակտի բողոքարկումը, կարող է կատարվել միայն այն կարգով, որը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:** Հետևաբար, հաշվի առնելով, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար սահմանել է անմիջական բողոքարկման կարգ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **այդ դրույթով նախատեսված միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն անմիջական բողոքարկման կարգով:** Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքն իրացնող սուբյեկտներն իրավական պաշտպանության միջոցներից, այդ թվում՝ ընդդեմ միջանկյալ դատական ակտերի, պետք է օգտվեն բարեխղճորեն: Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցից չօգտվելու դեպքում դատավարության մասնակիցը չի կարող դիմել այնպիսի պաշտպանության միջոցի, որն օրենսդիրը տվյալ դեպքի համար չի նախատեսել:

Վերոհիշյալ իրավական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը չի իրացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտն անմիջական բողոքարկման կարգով բողոքարկելու իր իրավունքը, երբ նա ողջամտորեն կարող էր դա անել, ապա չի կարող այլևս տվյալ միջանկյալ դատական ակտը բողոքարկել «**հետաձգված բողոքարկման կարգով**», այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ եկթայկետերը, նույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 214-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միմիայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում և այն պարագայում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին

ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը երկշաքայա ժամկետ է տրամադրում դրանք վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ մնացած բոլոր դեպքերում թերությունները շտկելու և բողոք ներկայացնելու ժամկետ չի տրամադրվում: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանի վերը նշված լիազորությունների իրականացումը (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, վերադարձնելու մասին որոշումներ կայացնելը) անմիջականորեն կապված է վերաքննիչ բողոքի առկայության հետ: Ընդ որում, օրենսդիրը վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու հանգամանքը պայմանավորել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության հետ:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանում դատական ակտի վերանայում կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով ներկայացված վերաքննիչ բողոքի առկայության դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Անժելա Գևորգյանի կողմից 23.01.2014 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 04.02.2014 թվականի որոշմամբ վերադարձվել է՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալու և ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չպարունակելու պատճառաբանությամբ: Այնուհետև Վերաքննիչ դատարանը «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այն վերականգնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» 12.02.2014 թվականի որոշմամբ Անժելա Գևորգյանի կողմից 12.02.2014 թվականին ներկայացված **դիմումի** և **կից ներկայացված միջնորդության** քննարկման արդյունքում որոշել է միջնորդությունը բավարարել և վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ: Ընդ որում, սույն գործում առկա չէ 12.02.2014 թվականի դիմումին և դրան կից միջնորդությանը Անժելա Գևորգյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք:

Հիմք ընդունելով վերը նշվածը և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Անժելա Գևորգյանի 23.01.2014 թվականին ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշումից հետո, 12.02.2014 թվականին ներկայացված **դիմումը** և դրան **կից միջնորդությունը** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի հիմքով վերաքննիչ բողոք դիտվել չեն կարող: Մասն ապամասնեում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ վարույթ է հարուցվել և վերաքննիչ բողոքի քննություն է իրականացվել առանց դրա համար օրենքով նախատեսված հիմքի, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքի առկայության:

Մասն ապամասնեում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր հարուցել գործի վերաքննիչ վարույթ և վերաքննիչ բողոքի բացակայության պայմաններում վերանայել դատարանի 19.12.2013 թվականի որոշումը:

Գատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով

18.07.2014թ.

52. Տիգրան Կովկասյան և Կարինե Հարությունյան v. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/2017/02/11 Էջ 424-429

Խտղիք. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավական կարգավորմանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի, 94-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի, ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի, 204.30-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարաններն իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այսպես, ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերով կայացված դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու համար օրենսդրի կողմից սահմանվել է հետևյալ կարգը՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և յուրաքանչյուր գործով նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելիս դատարանները պետք է հաշվի առնեն, թե տվյալ գործով կայացված վերջնական դատական ակտը դատական որ ատյանի կողմից է կայացվել: Այսինքն՝ այն դեպքում, երբ վերանայման ենթակա գործով վերջնական դատական ակտը կայացրել է առաջին ատյանի դատարանը, ապա համապատասխան բողոքի առկայության դեպքում նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթը հարուցում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, իսկ եթե վերջնական դատական ակտը կայացրել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կամ ՀՀ վճռաբեկ դատարանը, ապա՝ ՀՀ վճռաբեկ դատարանը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով վերաքննիչ դատարանը, 19.09.2013 թվականի որոշմամբ հարուցելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը վերանայելու վարույթ, քննության առնելով Ընկերության վերաքննիչ բողոքը և այն բավարարելով, դուրս է եկել իր իրավասությունների շրջանակից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ դատարանի 22.11.2011 թվականի վճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, իսկ վերջինիս կողմից 05.09.2012 թվականին կայացված որոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ վերաքննիչ դատարանի 05.09.2012 թվականի որոշումը բեկանվել է, և օրինական ուժ է տրվել դատարանի 22.11.2011 թվականի վճիռին, այսինքն՝ դատարանի 22.11.2011 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով վերը նշված իրավական վերլուծությունների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշումն է, որպիսի պայմաններում նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու հարցը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ենթակա է լուծման միայն Վճռաբեկ դատարանի կողմից:

Բացի այդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան/«տրիբունալ» հասկացությունը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ներառում է դատարանների ամբողջ կազմակերպչական համակարգը՝ ներառյալ համապատասխան դատարանների իրավասության մեջ մտնող հարցերը: Այսինքն՝ «օրենքի հիման վրա ստեղծված» սահմանումը ներառում է ոչ միայն դատարանի/«տրիբունալի» գործելու իրավական հիմքը, այլ նաև դատարանի/«տրիբունալի» կողմից կոնկրետ այն իրավական նորմերին հետևելը, որոնք կարգավորում են նրա գործունեությունը (լրենս, Սոկուրենկոն և Սյրիզոուն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 20.07.2006 թվականի վճիռը, կետ 24):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատա-

րանը, նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը վերանայելու վարույթ հարուցելով, Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարելով և դատարանի 22.11.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը բեկանելով, անտեսել է, որ դատարանի 22.11.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը վերաքննիչ դատարանի կողմից վերանայման ենթակա չէ, քանի որ սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտը ՀՀ վճռարենկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշումն է եղել:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

28.11.2014թ.

53. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն v. Էջ
Վալերի Ցակալյան, վարչ. գործ թիվ ՎԳ/3135/05/13 430-437

Խնդիր. Այս որոշմամբ Վճռարենկ դատարանն անդրադարձել է վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Վճռարենկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն նույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև սլոյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Տեստադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն,

այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա:

Վերոհիշյալ իրավանորմերի համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ

- եթե վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքը նախատեսում է ավելի խիստ պատասխանատվություն (պատասխանատվությունը խստացնող օրենք), քան նախատեսված էր իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքով, ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը մեղմացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքին համապատասխան, եթե այդ օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա անձը ենթակա է պատասխանատվության վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ (*տե՛ս, «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի ԿԵՕԵՆ Ալեքսանդր Աբրահամյանին ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը*):

Զարգացնելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել, թե որոնք են համարվում պատասխանատվությունը վերացնող, պատասխանատվությունը մեղմացնող ակտեր:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավական ակտը համարվում է պատասխանատվությունը վերացնող, եթե դրանով իրավախախտում չի համարվում այն արարքը, որը նախկին իրավական ակտով համարվում էր իրավախախտում:

Իրավական ակտը համարվում է պատասխանատվությունը մեղմացնող, եթե սանկցիայում նախատեսված պատասխանատվության տեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատասխանատվության տեսակով: Ընդ որում, տուգանքների դեպքում պատասխանատվությունը մեղմացնող է դիտվում այն դրույթը, որով նախկինում գործող տուգանքը փոխարինվել է նվազ չափի տուգանքով: Ինչ վերաբերում է պատասխանատվության այլ միջոցների մեղմացմանը, օրինակ՝ տուգանքը որոշակի իրավունքից զրկելով փոխարինելուն, ապա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքի պարզումը յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հանգամանք է:

18.07.2014թ.

54. Սուրեն Սիմոնյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ԷԶ 438-447
ՎԳ/4842/05/12

Խնդիր. Արդյո՞ք խանութի տարածքում պիտանիության ժամկետն անցած ապրանքների գտնվելու փաստն ինքնին բավարար է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված զանցանքը կատարված համարելու և անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ, 245-րդ, 251-րդ, 275-րդ, 279-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, 43-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հատակ սահմանել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները: Դրանցից են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում ապացույցներ են համարվում այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատում են գործի հանգամանքները, վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Սակայն ցանկացած փաստական տվյալ չէ, որ կարող է համարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ապացույց: Փաստական տվյալները կարող են համարվել ապացույց, եթե առաջին՝ բովանդակում են տվյալներ վարչական իրավախախտման կամ դրա բացակայության մասին, տվյալ անձի մեղավորության կամ անմեղության մասին, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների մասին, և երկրորդ՝ այդ փաստական տվյալների բացահայտման, հավաքագրման և ձևակերպման գործընթացները պետք է համապատասխանեն օրենսդրության պահանջներին: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզելու գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Վճռաբեկ դատարանը վերը նշված իրավանդությունների և դրանց վերլուծության հիման վրա գտել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները: Վերը նշվածն իրականացնելու համար համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս պետք է պատշաճ ձևով լուծի նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք օրենքին համապատասխան են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված

վարչական իրավախախտման առկայության համար անհրաժեշտ է ապրանքների վաճառքի փաստի առկայություն, այսինքն՝ վաճառք իրականացնող սուբյեկտի (վաճառողի) կողմից ապրանքների վաճառքին ուղղված գործողությունները, մասնավորապես՝ ապրանքի ուղղակի վաճառքի փաստի առկայությունը՝ վաճառողի կողմից գնորդին ապրանք հանձնելու և գնորդի կողմից այդ ապրանքն ընդունելու և դրա համար ապրանքի գինը վաճառողին վճարելու փաստը կամ գնորդների համար տեսանելի (հասանելի) վայրում ապրանքները տեղադրված (ցուցադրված) լինելու՝ ապրանքի վաճառքի հրապարակային օֆերտայի փաստի առկայությունը, ինչպես նաև վաճառվող և/կամ վաճառված ապրանքների պիտանիության ժամկետի անցած լինելու, առանց պիտանիության ժամկետի, ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով կամ հայերեն մակնշումն արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված փաստի միաժամանակյա առկայությունը: Այսպիսով, յուրաքանչյուր կոնկրետ գործով Վարչական իրավախախտման վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է պարզի վերը նշված փաստերի միաժամանակյա առկայությունը:

28.11.2014թ.

55. Արտաշես Մելիքյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ԳՎ/1876/05/13

Էջ 448-455

Խնդիր. Արդյո՞ք շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չավարտելու դեպքում կառուցապատողը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի հիմքով կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե շինարարության թույլտվություն տվող մարմինը կառուցապատողին նախագգուշացրել է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու վերաբերյալ, իսկ կառուցապատողը մինչև վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման կայացումը դիմել է շինարարության թույլտվություն տվող մարմնին՝ շինարարության թույլտվության սահմանված ժամկետը երկարաձգելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 1541-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասում իրավախախտումը (զանցանքը) դրսևորվում է՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը կատարված (սկսված և ավարտված) է համարվում կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետն ավարտվելու հաջորդ օրը: Նշված իրավախախտման տեսանկյունից որևէ արժեք չի տրվում իրավախախտումից հետո անձի դրսևորած վարքագծին: Հետևաբար, եթե իրավախախտում թույլ տված անձը դիմել է շինարարության թույլտվությունը երկարացնելու խնդրանքով, ապա այդ գործողությունը չի վերացնում իրավախախտում թույլ տալու փաստը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի չորրորդ մասի «ժ» կետով նախատեսված ժամկետներում կառուցապատումը (բացառությամբ գյուղական բնակավայրերում իրականացվող կառուցապատման և անհատական բնակելի տների) չավարտվելու դեպքում, շինարարության թույլտվություն տվող մարմինը գրավոր նախագգուշացնում է կառուցապատողին շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գոր-

ծունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ: Ընդ որում, շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից շինարարության տնտղությունը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան տվյալ օբյեկտի չիրականացված աշխատանքների համար շինարարության տնտղության նորմերով հաշվարկված ժամկետի չափով:

Նշված պահանջը չկատարելու դեպքում կառուցապատողը շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ենթարկվում է վարչական պատասխանատվության:

Եթե նախագգուշացումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կառուցապատողը չի դիմում շինարարության թույլտվություն տվող մարմին՝ շինարարության ժամկետը երկարաձգելու հայտով, կամ շինարարության թույլտվությամբ սահմանված նոր ժամկետում չի ավարտում կառուցապատումը, կամ չի օտարում սեփականության իրավունքով իրեն պատկանող օբյեկտը, ապա շինարարության թույլտվություն տվող մարմինը նրան կրկին անգամ ենթարկվում է վարչական պատասխանատվության և դիմում է դատարան տվյալ օբյեկտը վաճառելու հայցով՝ դատարանի սահմանած կարգով և գնով, բայց ոչ պակաս, քան օբյեկտի կադաստրային արժեքի 75 տոկոսի չափով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դրանցով նախատեսված են կառուցապատողին **օրենքով սահմանված կարգով** վարչական պատասխանատվության ենթարկելու երկու դեպք.

1. երբ կառուցապատողը, վարչական մարմնից ստանալով նախագգուշացումը, **անհապաղ** չի դիմում վերջինիս՝ շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար,

2. երբ կառուցապատողը, վարչական մարմնից ստանալով նախագգուշացումը, **մեկամսյա ժամկետում** չի դիմում վարչական մարմնին՝ շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար:

Այսինքն՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումները դրսևորվում են՝ նույն հոդվածով նախատեսված նախագգուշացումը ստանալուց հետո շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար վարչական մարմնի չդիմելով, հետևաբար միայն նշված զանցանքի համար վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման դեպքում էական նշանակություն ունի վարչական մարմնի՝ վերը նշված նախագգուշացումն ուղարկելու պարտականության պատշաճ կատարումը:

Մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը տեղ ունի համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետն ավարտվելու հաջորդ օրը, եթե այդ ժամկետում կառուցապատումը չի ավարտվել, հետևաբար վարչական մարմնի կողմից կառուցապատողին «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված նախագգուշացում ուղարկելը չի կարող որևէ նշանակություն ունենալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար կառուցապատողին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար: Հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի հիմքով կառուցապատողը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե շինարարության թույլտվություն տվող մարմինը կառուցապատողին նախագգուշացրել է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու վերաբերյալ, իսկ կառուցապատողը մինչև վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման կայացումը դիմել է շինարարության թույլտվություն տվող մարմնին՝ շինարարության թույլտվության սահմանված ժամկետը երկարաձգելու համար:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

18.07.2014թ.

56. Երևանի քաղաքապետարան v. Արա և Մանուկ Մարգարյաններ, վարչ. գործ թիվ ՎԳ/5666/05/11

**Էջ
456-463**

Խնդիր. Արդյո՞ք կարող է առ ոչինչ համարվել պատասխանատվություն սահմանող այն վարչական ակտը, որը հասցեագրված է մեկից ավելի անձանց:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է վարչական ակտի առ ոչինչ լինելու հարցին, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն** դնելը կամ անձին **ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք** տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի **ակնհայտ ոչ իրավաչափ**: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առ ոչինչ դիտելու համար: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունն **առերևույթ** ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առ ոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոսինովնայ» ՍՊԸ-ի թիվ ՎԳ/0562/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ այն դեպքում, երբ անձը համարում է, որ վարչական ակտով իր վրա պարտականություն է դրվել օրենքի խախտմամբ, այդ թվում օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, վերջինս վարչական-դատավարական կարգով կարող է պահանջել անվավեր ճանաչել այդպիսի ոչ իրավաչափ պարտականություն դնող վարչական ակտը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության պետի 11.09.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման չվիճարկման պայմաններում այն ենթակա է կատարման (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Կարապետ Գևորգյանի թիվ ՎԳ/4608/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա է, մասնավորապես, հետևյալ ակնառու կոպիտ սխալը՝ ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում:

Նշված նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարչական ակտի առոչնչության հատկանիշն առկա է, երբ ակտի բովանդակությունից հնարավոր չէ ճշտել, թե կոնկրետ որ անձն է դրա հասցեատերը: Ակտում մեկից ավելի հասցեատեր նշված լինելու դեպքում, երբ պարզ է, թե կոնկրետ ովքեր են այդ հասցեատերերը, քննարկվող նորմի առումով ակտի առոչնչության հատկանիշն առկա չէ, քանի որ այդ դեպքում ակտից պարզ է, որ այն ունի մեկից ավելի հասցեատեր, այսինքն՝ ակտը հասցեագրված է մեկից ավելի անձանց: Ո՛չ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը,

ո՛չ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չեն պարունակում որևէ դրույթ այն մասին, որ եթե իրավախախտումը կատարվել է մեկից ավելի անձանց կողմից, ապա յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է հարուցվի և իրականացվի առանձին վարչական վարույթ: Դա նշանակում է, որ միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում հնարավոր է մեկ վարույթի շրջանակներում պատասխանատվության ենթարկել իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց: Այլ հարց է, որ պատասխանատվության ենթարկելիս վարչական մարմինը պարտավոր է յուրաքանչյուր իրավախախտի նկատմամբ ճիշտ կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, այդ թվում՝ ըստ մեղքի պատասխանատվության, անձնական պատասխանատվության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Վարչական մարմնի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վերոհիշյալ պահանջները չպահպանելու դեպքում առկա կլինի օրենքի խախտում, ինչը կարող է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն վարչական ակտի անվավերության հիմք հանդիսանալ: Վարչական ակտն օրենքի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքն իր հերթին կարող է քննարկվել և պարզվել այդ ակտի վիճարկման վարույթում, իսկ եթե ակտը չի վիճարկվել, ապա դրա առ ոչինչ լինելը հաստատված չլինելու դեպքում այն ենթակա է կատարման:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն իրավական որոշակիության սկզբունքն է: Իրավական որոշակիության սկզբունքը տարածվում է բոլոր իրավական ակտերի վրա: Օրենսդիր վարչական ակտերի համար իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը կոնկրետացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում: Օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, միաժամանակ, վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականությունն է դրվում:

Վկայակոչելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածը, 214-րդ հոդվածի 1-4-րդ կետերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշմանը ներկայացվող պահանջները սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածում:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը վարչական ակտ է, քանի որ համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված վարչական ակտի հասկացության սահմանմանը, այն է՝ վերաբերում է որոշակի անձի, ունի արտաքին ներգործություն, ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում ամրագրված վարչական ակտի որոշակիության պահանջը տարածվում է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումների վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում ամրագրված վարչական ակտի որոշակիության պահանջն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի մասնավոր դրսևորում է: Հաշվի առնելով վարչական ակտի որոշակիության սկզբունքի կարևորությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որևէ վարչական ակտ չի կարող համարվել իրավաչափ, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է, որ ոչ իրավաչափ վարչական ակտերը հանդես են գալիս երկու ձևով՝ որպես անվավեր և որպես առ ոչինչ վարչական ակտեր: Օրենսդիրը, հաշվի առնելով վարչական ակտի որոշակիությանը ներկայացվող պահանջի կարևորությունը, նախատեսել է, որ առանձին

դեպքերում վարչական ակտի որոշակիության պահանջի չպահպանումը հանգեցնում է վարչական ակտի առ ոչինչ լինելուն: Այսպես՝ եթե վարչական ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում, ապա այդ վարչական ակտն ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի և «գ» կետի առ ոչինչ վարչական ակտ է: Սակայն, եթե վարչական ակտը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, և միաժամանակ, առկա չեն օրենսդրի կողմից սահմանված վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերը, իրավական որոշակիության պահանջին չհամապատասխանող վարչական ակտը չի կարող դիտվել առ ոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր:

28.11.2014թ.

57. Տիգրան Աբաղյան v. Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար, վարչ. գործ թիվ ՎԳ/5539/05/11

**Էջ
464-472**

Խնդիր. Արդյո՞ք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը կարող է իրավաչափ հիմք հանդիսանալ վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի սահմանափակման համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 13-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, 38-րդ հոդվածի, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լաված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ: Հետևաբար, վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակցից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին: Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը, սակայն, չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փատական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքը գործնականում իրացնելը:

28.11.2014թ.

58. «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ՎԳ/0429/05/13

**Էջ
473-482**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը բացահայտել է «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված «գովազդ» և «արտաքին գովազդ» հասկացությունները:

**Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք ար-
պարհն գովազդի տեղադրման համար թույլտվություն պետք է տրամադրվի կախված արտա-
րին գովազդի չափերից:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գովազդը տեղեկություն է, որը պետք է տարածվի տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ, պետք է հասցեագր-ված լինի անորոշ թվով անձանց, պետք է վերաբերի կոնկրետ իրավաբանական կամ ֆիզի-կական անձանց, ապրանքներին, գաղափարներին կամ նախաձեռնություններին, պետք է նպատակ հետապնդի հետաքրքրություն ձևավորել կամ պահպանել տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ: Գովազդը, լինելով տեղեկություն, ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս այդ տեղեկությունը բնորոշել որպես գովազդ:

Այսպես, նախ և առաջ գովազդն իր բովանդակությամբ տեղեկություն է, որը կարող է արտահայտվել բանավոր խոսքի, գրաֆիկական, ֆոտո, աուդիո և տեսապատկերների, երաժշտության, գույնի և այլ միջոցներով, ինչպես առանձին, այնպես էլ նշված միջոցների համակցությամբ: Որպես տեղեկություն այն կարող է տարածվել տարբեր տեղեկատվական միջոցների օգնությամբ, այսինքն՝ պետք է հրապարակվի և հասանելի դառնա սպառողին: Հետևաբար, տեղեկությունն առանց տարածելու չի կարող համարվել գովազդ: Գովազդը պետք է նախատեսված լինի անորոշ թվով անձանց շրջանում տարածելու համար, ինչը նշա-նակում է, որ թեև հնարավոր է կանխատեսել գովազդի համար թիրախային անդիսա-ցող խումբը, սակայն ի սկզբանե հնարավոր չէ պարզել տարածվող տեղեկության կոնկրետ հասցեատերերին, հետևաբար նաև գովազդվող օբյեկտի իրացումից ծագող իրավահարա-բերության կողմին:

Գովազդը պետք է վերաբերի կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքներին, գաղափարներին կամ նախաձեռնություններին, որոնք էլ հանդիսանում են գովազդի օբյեկտը: Այս առումով Վճռաբեկ դատարանը նշել է, որ տարածվող տեղեկու-թյան մեջ ապրանքների կամ ծառայությունների որոշակի խմբի ընդհանրացնող անվանման ներառումը (օրինակ՝ «հագուստ», «մթերք», «հյուրեր», «գեղեցկության սրահ» և այլն) չի կարող համարվել գովազդ, որովհետև այդպիսի անվանումները հնարավորություն չեն տա-լիս միատես ապրանքների և ծառայությունների շրջանակից առանձնացնել կոնկրետ ապ-րանք կամ ծառայություն, և դրա նկատմամբ ձևավորել դրական վերաբերմունք: Այսինքն՝ ընդհանրացնող անվանում պարունակող տեղեկությունը չի կարող համարվել գովազդ, քա-նի որ դրանում բացակայում է գովազդի օբյեկտը:

Գովազդը պետք է գովազդվող օբյեկտի նկատմամբ ձևավորի կամ պահպանի հե-տաքրքրությունը: Այսինքն՝ տեղեկությունը պետք է նպատակաուղղված լինի գովազդի օբյեկտը սպառողի ուշադրությանը ներկայացնելուն, վերջինիս համոզելուն, հետևաբար գո-վազդի կարևոր առանձնահատկությունը օբյեկտի նկատմամբ հետաքրքրվածության խթա-նումն է, նրա նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն ու այդպիսի վերաբերմուն-քի պահպանումը:

Վերը նշված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տեղե-կությունը գովազդ համարելու համար անհրաժեշտ է տեղեկության հետևյալ հատկանիշնե-րի միաժամանակյա առկայություն.

- տեղեկությունը պետք է հնարավորություն տա անհատականացնել կոնկրետ իրա-վաբանական կամ ֆիզիկական անձին, ապրանքը, գաղափարը կամ նախաձեռնությունը, այսինքն՝ պետք է առկա լինի գովազդի օբյեկտը,
- տեղեկությունը պետք է տարածվի տեղեկատվական առավազն մեկ միջոցով,
- տեղեկությունը պետք է նախատեսված լինի անորոշ անձանց շրջանում տարածե-լու համար,
- տեղեկությունը պետք է նպատակ հետապնդի ձևավորել և պահպանել գովազդ-վող օբյեկտի նկատմամբ հետաքրքրությունը:

Նշված առանձնահատկություններից որևէ մեկի բացակայության պայմաններում տե-ղեկությունը գովազդ համարվել չի կարող:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքով տրված «գովազդ» հասկացության վերը նշված մեկնաբանության լույսի ներքո մեկնաբանելով նույն օրենքի 11-րդ հոդվածում նշված «արտաքին գովազդ» հասկացությունը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ արտաքին գովազդն այնպիսի տեղեկությունն է, որը, վերաբերելով կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, ապրանքի, գաղափարի կամ նախաձեռնության, գովազդվող օբյեկտի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու և պահպանելու նպատակով անորոշ անձանց շրջանում տարածվում է բնակավայրերում՝ պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով: Ընդհանրացնելով արտաքին գովազդի տարածման միջոցների առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արտաքին գովազդը գովազդի հատկանիշներ պարունակող այնպիսի տեղեկությունն է, որը ժամանակավոր կամ հիմնական, շարժական կամ ստացիոնար տեխնիկական միջոցների ձևով տարածվում է բնակավայրերում՝ տեղակայվելով բաց տեղաբերում, շենքերի, շինությունների արտաքին մակերևույթին, փողոցային սարքավորումների տարրերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վրա: Եկատի ունենալով, որ տեխնիկական առաջընթացին զուգահեռ իբրև գովազդի տարածման միջոց կարող են օգտագործվել գանազան նոր տեխնիկական միջոցներ, օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակվել ներկայումս օգտագործվող տեխնիկական միջոցների թվարկմամբ՝ հնարավոր համարելով գովազդի տարածումը նաև այլ տեխնիկական միջոցներով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների, ինչպես նաև դրանց վրա գետեղված տեղեկության՝ նյութապես արտահայտված արդյունքի չափերը որևէ նշանակություն չունեն տեղեկությունը արտաքին գովազդ համարելու կամ չհամարելու համար, քանի որ, եթե բնակավայրում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով տեղակայված տեղեկությունն ունի գովազդին բնորոշ վերը նշված հատկանիշները, ապա վերջինս պետք է դիտարկվի որպես արտաքին գովազդ՝ անկախ դրա չափերից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել հետևյալը. «Գովազդի մասին» ՀՀ օրենքով տրված «գովազդ» հասկացության սահմանումից բխում է, որ գովազդի օբյեկտ են հանդիսանում իրավաբանական և ֆիզիկական անձինք, ապրանքները, գաղափարներն ու նախաձեռնությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, սպասարկման նշանն իրավաբանական անձի, արտադրանքի, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների անհատականացման միջոցներ են, հետևաբար դրանք «Գովազդի մասին» ՀՀ օրենքի իմաստով ևս կարող են գովազդ հանդիսանալ այնքանով, որքանով որպես անհատականացման միջոցներ՝ տեղեկություններ են պարունակում իրավաբանական անձի, ապրանքի կամ ծառայության մասին: Այսինքն՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, սպասարկման նշանը կարող են համարվել գովազդ, եթե օգտագործվում են գովազդի օբյեկտի նկատմամբ անորոշ թվով անձանց շրջանակում հետաքրքրություն առաջացնելու կամ պահպանելու համար: Սակայն Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կազմակերպության գտնվելու, գործունեություն իրականացնելու վայրերում դրա ֆիրմային անվանման, ապրանքային կամ սպասարկման նշանների տեղադրումը կարող է արտաքին գովազդ չհամարվել, եթե դրա նպատակը ոչ թե անորոշ անձանց շրջանում հետաքրքրության, դրական վերաբերմունքի ձևավորումն է, այլ կազմակերպության գտնվելու, գործունեություն իրականացնելու վայրի և/կամ գործունեության տեսակի մասին տեղեկացնելը, ինչը համապատասխանում է գործարար շրջանառության սովորույթներին:

Հետևաբար բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով իրավաբանական անձի անհատականացման միջոցներ տեղադրելն արտաքին գովազդի տարածում դիտարկելու համար նախ և առաջ պետք է գնահատման առարկա դարձվի այդպիսի տեղեկության տեղադրման նպատակային նշանակությունը:

Անդադադառանալով արտաքին գովազդի համար թույլտվության անհրաժեշտությունը

որա չափերով պայմանավորելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.
«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով: Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները: Երևան քաղաքի քաղաքային նշանակություն ունեցող փողոցներում, այգիներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալիս է Երևանի քաղաքապետը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես պարտադիր լիազորություն քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում քաղաքապետն օրենքով սահմանված կարգով տալիս է քաղաքային նշանակության գովազդային գոտում (քաղաքային նշանակության փողոցներում և դրանց անմիջապես հարող տարածքներում, ինչպես նաև քաղաքային նշանակության հրապարակներում և այգիներում) արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Նույն օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարն օրենքով սահմանված կարգով տալիս է քաղաքային նշանակության գովազդային գոտի չհամարվող տարածքներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արտաքին գովազդ տեղադրելու համար բոլոր դեպքերում անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն՝ անկախ արտաքին գովազդի մակերեսներից, իսկ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները տեղական ինքնակառավարման մարմնի կողմից որոշելու իրավասությունն օրենքով սահմանված քաղաքաշինության բնագավառում վերջինիս լիազորությունների բաղկացուցիչ մասն է:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Երևան քաղաքի ավագանու 18.11.2009 թվականի թիվ 37-Ն որոշմամբ, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով պայմանավորված, սահմանվել են Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները, որոնք իրենց մեջ ներառում են ընդհանուր դրույթներ, գովազդի թույլտվություն տալու կարգը և Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչները: Նման պայմաններում արտաքին գովազդի ծավալի և քանակության սահմանումը, դրա շրջանակներում արտաքին գովազդի համար որոշակի սահմանային չափերի ամրագրումը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի կարող մեկնաբանվել որպես արտաքին գովազդի թույլտվության անհրաժեշտության նախապայման:

18.07.2014թ.

59. «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ v. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն, վարչ. գործ թիվ ՎԴ/4241/05/11

Էջ
483-501

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է՝

- 1) ապրանքային նշանի իրավական պահպանության երաշխիքներին՝ ընդհանրապես.
- 2) ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոններին.
- 3) հանրահայտ ապրանքային նշանների իրավական պահպանության առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Անդրադառնալով առաջին խնդրին՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում արձանագրել է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով, իսկ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, բացի վե-

րոգրյալ երաշխիքներից, իրականացվում է նաև օրենքի ուժով: Ավելին, Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածն ըստ էության կիրառելի է նաև մտավոր սեփականության նկատմամբ:

Վերոնշյալ իրավունքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ապրանքային նշաններին իրավական պահպանություն է տրամադրվում ոչ միայն դրանց գրանցման, այլ նաև դրանց հանրահայտ ճանաչելու, ինչպես նաև որոշ դեպքերում (հայտատուի անբարեխիղճ գործելու դեպքում)՝ ապրանքային նշանի օգտագործման ուժով: Վճռաբեկ դատարանը հավելել է, որ ապրանքային նշանի իրավական պահպանությունը նպատակաուղղված է անարդար մրցակցությունը կանխելուն, ներդրումների պաշտպանվածությունը երաշխավորելուն, սպառողների շահերի պաշտպանությանն ընդդեմ կեղծ կամ ապակողմնորոշող գովազդի և անորակ ապրանքների կամ ծառայությունների:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի, 1172-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանի 92-րդ կետի, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանով, ինչպես նաև գործող՝ ՀՀ կառավարության 18.11.2010 թվականի թիվ 1538-Ն որոշման համակարգային վերլուծության համատեքստում, միաժամանակ նկատի ունենալով, որ դատական պրակտիկայում առավել խնդրահարույց է «*շփոթելու ապրիճան նման ապրանքային նշանների*» օգտագործման եղանակով ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների խախտման դրսևորումներին իրավական գնահատական տալու հարցը, հարկ է համարել հնարավորինս մանրամասն անդրադառնալ ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի կիրառումը մեկ այլ ապրանքային նշանի տարրերի նմանակումն է, որը թեև չի կարող գնահատվել որպես նույնական նշանի կիրառում, սակայն բավարար է սպառողի մոտ շփոթություն առաջացնելու համար: Շփոթությունը, մասնավորապես, կարող է արտահայտվել սպառողի մոտ՝ տպավորություն ստեղծելով, որ երկու տարբեր ապրանքներ կամ ծառայություններ համապատասխանաբար արտադրվում կամ մատուցվում են միևնույն անձի կողմից այն դեպքում, երբ իրականում այդպես չէ: Ընդ որում, սպառողը, ակնկալելով կոնկրետ անձի արտադրանքի որոշակի որակ, որին նախապես ծանոթ է եղել, կարող է միայն հիասթափություն ապրել մեկ ուրիշի արտադրանքում դրա բացակայության պատճառով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը յուրաքանչյուր կոնկրետ գործով գնահատման ենթակա փաստ է, որն իրականացնելու պարտականությունը կրում է դատարանը, և որը պետք է իրականացվի մի շարք պարտադիր չափորոշիչների (ապրանքային նշանների նմանությունը, ապրանքային նշանի պաշտպանվածության աստիճանը, ապրանքատեսակների նմանությունը, փաստացի շփոթության հնարավորությունը, օգտագործված մարքեթինգային ուղիները, ապրանքի տեսակը, գնորդի հավանական ուշադրությունը, արտադրանքի տեսականին ընդլայնելու հավանականությունը, ապրանքների մրցունակությունը և այլն) գնահատման արդյունքում:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի կիրառման փաստն արձանագրելու համար հարկավոր է հետևյալ 3 տարրերի միաժամանակյա առկայությունը: Դրանք են՝

1. համապատասխան ապրանքների նույնական կամ նույնատիպ լինելը (բացառությամբ հանրահայտ ապրանքային նշանների):

2. նշանների նմանությունը:

3. սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգը:

Նմանակման վերոնշյալ առաջին երկու տարրերը՝ ապրանքների նույն կամ նույնատիպ լինելը, ինչպես նաև նշանների նմանությունը, օբյեկտիվ տարրեր են, իսկ սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգը՝ սուբյեկտիվ տարր: Բացահայտելով նշված տարրերից յուրաքանչյուրի բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ օրենսդրական կարգավորումից հետևում է, որ առաջնային է ապրանքների մասնագիտացման սկզբունքը, համաձայն որի՝ ապրանքային նշանը սեփականատիրոջ կողմից գրանցվում է որոշակի տեսակի ապրանքների անհատականացման համար, որոնք վերջինիս կողմից նշվում են գրացման հայտում, իսկ համապատասխան նշանը մնում է ազատ այլ ապրանքների համար (բայց ոչ նույնատիպ):

Իրավակիրատ պրակտիկայում որոշակի բարդություն է ներկայացնում «նույնատիպ ապրանքներ» հասկացությունը, ուստի Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ վերջինիս բովանդակության բացահայտմանը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 106-րդ կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ շփոթելու աստիճան նմանության փաստն արձանագրելու համար բավականին մեծ կարևորություն է տրվում մի այնպիսի հանգամանքի առկայությանը, ինչպիսին է ապրանքների նույն կամ նույնատիպ լինելը: Մասնավորապես, վերջինիս մանրակրկիտ և պատշաճ գնահատման դեպքում կարելի է եզրահանգումներ անել այն մասին, թե որքանով ապրանքների նույն կամ նույնատիպ լինելը կարող է ազդեցություն ունենալ սպառողների գիտակցության վրա՝ այս կամ այն ապրանքային նշանով անհատականացված ապրանքի ընտրության հարցում, և որն է ապրանքի նույն կամ նույնատիպ լինելու ազդեցությունը և դրա չափաբաժինը՝ սպառողների շրջանում համապատասխան ապրանքն արտադրողի հարցում շփոթության առաջացման համար:

Նույնատիպ են համարվում այն ապրանքները, որոնք իրականացնում են նույնանման գործառնություն, ծառայում են նույնանման նպատակի (օրինակ՝ թթվասերը և մածուկը), իսկ որպես նույն տեսակի ապրանք կարող է համարվել ավտոմեքենան և հեծանվով: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ բավականին մեծ է այն բանի հավանականությունը, որ թե ավտոմեքենան և թե հեծանվով արտադրվում են միևնույն անձի կողմից:

Նմանակման օբյեկտիվ տարրերից երկրորդին անդրադառնալիս՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշանների նմանությունը գնահատելիս հարկավոր է դրանք համեմատել այն տեսքով, որով դրանք գրանցվել են:

Ինչ վերաբերում է բառային (տառային) ապրանքային նշաններին, ապա այդ նշանները, որպես կանոն, դասվում են այն ապրանքային նշանների շարքին, որոնք ընկալվում են միաժամանակ տեսողական, իմաստային և ձայնային եղանակով: Այսինքն՝ բառային ապրանքային նշանն առկա է և իրականացնում է իր առջև դրված գործառնությունը՝ անկախ դրա հավելումներից, հետևաբար երկու նշանները պետք է գնահատվեն ինքնուրույնաբար՝ առանց հաշվի առնելու դրանց ներկայացման եղանակը, իսկ համեմատության առարկա պետք է դառնա միայն համապատասխան նշանը՝ առանց հաշվի առնելու այդ նշանի գեղագրությունը: Այսինքն՝ ապրանքային նշաններում պաշտպանության օբյեկտ է հանդիսանում միայն հիմնական տարրերակիչ տարրը, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան նշանին կատարված հավելումներն այնքանով են փոխում այդ նշանը, որ հիմնական տարրը կորցնում է իր անհատականությունը և տարրերակիչ նշանակությունը:

Իրավակիրատ պրակտիկայում առանձնակի կարևորվում է համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելու հարցը:

Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ ապրանքային նշանի համեմատության ընթացքում նախ և առաջ պետք է հաշվի առնվի տարրերակիչ նշանակություն ունեցող տարրը՝ անկախ լրացուցիչ և գուտ սիմվոլիկ տարրերի առկայությունից: Այսինքն՝ եթե ապրանքային

նշանում կրկնվում է տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը, ապա կարելի է եզրակացնել, որ այն ունի շփոթելու աստիճան նմանություն:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքային նշանները պետք է համեմատության առարկա դարձվեն որպես ամբողջություն, որպեսզի ստեղծվի նույն իրադրությունը, որն առկա է սպառողի մոտ, քանի որ վերջինս իր տրամադրության տակ չունի երկու նշանները, որպեսզի կարողանա գտնել դրանց տարբերակիչ հատկանիշները:

Այսինքն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ապրանքային նշանի հիմնական նպատակն է անհատականացնել ապրանքը և ուղղորդել հնարավոր սպառողներին, ապրանքային նշանների նմանությունը գնահատելիս պետք է հաշվի առնել նաև սպառողների զարգացվածության և պատրաստվածության մակարդակը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև անդրադառանալ այն խնդրին, որ երկու ապրանքային նշանների համեմատության ընթացքում դատարանը պետք է հաշվի առնի ապրանքային նշանների թե՛ նմանությունները, թե՛ տարբերությունները:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ, հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանի 92-րդ կետի 2-րդ պարբերությունը, եկել է այն եզրահանգման, որ ապրանքային նշանները համեմատելիս նախ և առաջ պետք է հաշվի առնվեն այդ նշանների նմանությունները (որն ունի տարբերակիչ նշանակություն)՝ անկախ լրացուցիչ և աննշան տարրերի առկայության: Այսինքն՝ եթե ապրանքային նշանում կրկնվում է տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը, կարելի է եզրակացնել, որ այն ունի շփոթելու աստիճանի նմանություն (*յրե՛ս, թիվ 3-1763(SԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը*):

Ապրանքային նշանների շփոթության աստիճան նմանության հարցի նկատմամբ նման մտեցումը բացատրվում է այն հանգամանքով, որ սպառողը այս կամ այն ապրանքն ընտրելիս առաջին հերթին ուշադրություն է դարձնում հենց ապրանքային նշանին և դրանում գտնելով իրեն արդեն իսկ հայտնի ապրանքային նշանի հիմնական բաղադրատարրերը՝ կարող է սխալ համոզմունք ձեռք բերել համապատասխան ապրանքն արտադրողի հարցում՝ առանց նկատելու այն չնչին տարբերությունները, որոնք սպառողը կարող էր նկատել միայն այդ երկու ապրանքային նշաններն իրար կողք կողքի համեմատելիս:

Սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգին անդրադառնալիս Վճռաբեկ դատարանը նշել է, որ ապրանքային նշանի նմանական փաստն արձանագրելու համար պարտադիր է նաև սուբյեկտիվ տարրի առկայությունը, այն է՝ սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգի առկայությունը:

Շփոթության վտանգն առկա է այն դեպքում, երբ նմանակումը սպառողին մղում է այն մտքին, որ այդ նշանով անհատականացված ապրանքն իրեն նախկինում հայտնի արտադրողի ապրանքն է, ինչը նրան ստիպում է կամ կարող է ստիպել ընտրելու ոչ այն ապրանքը, որը նա փնտրում է: Ընդ որում, իրավախախտման փաստն արձանագրելու համար բավարար է «շփոթության իրական հավանականությունը», այլ ոչ «փաստացի շփոթությունը»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքային նշանը կարող է որակվել որպես նմանակված, եթե ապացուցվի, որ այն շփոթություն է առաջացրել այն անձանց շրջանակներում, որոնք քաջատեղյակ էին համապատասխան ապրանքային նշանի մասին: Միաժամանակ, այն հանգամանքը, որ երկու ապրանքային նշաններ բավականին երկար ժամանակաշրջանի ընթացքում համատեղությամբ գործել են առանց սպառողների շրջանակում որևէ շփոթություն առաջացնելու, վկայում է շփոթության առաջացման հնարավորության բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ, որպես կանոն, շփոթության առաջացման վտանգն ուղղակիորեն կապված է ապրանքային նշանների նմանության հետ, և այն վերջինիս տրամաբանական հետևանքն է: Այսինքն՝ ոչ նման ապրանքային նշանների դեպքում շփոթության առաջացման վտանգը բացառվում է: Մակայն որոշ դեպքերում կարող է հանդիպել հակառակ իրավիճակը, երբ նույնիսկ արտաքնապես նման ապրանքային նշանները կարող

են սպառողի համար շփոթության վտանգ չստեղծել, օրինակ՝ երբ ապրանքային նշանները պարունակում են ոչ թե որոշակի հորինված բառեր, այլ հանրորեն ճանաչված բառեր, որոնք ունեն տարբեր նշանակություններ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ շփոթության առաջացման վտանգը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև ապրանքային նշանի հանրահայտ լինելու հանգամանքը, քանի որ հանրահայտ ապրանքային նշանների նմանակման դեպքում սպառողի սխալվելու հավանականությունն ավելի է մեծանում: Այս պարագայում սպառողը, նմանակված ապրանքային նշանը նմանեցնելով հանրահայտ ապրանքային նշանին, այլևս կարող է ուշադրություն չդարձնել այն չնչին տարբերություններին, որոնք առկա են այդ ապրանքային նշանների միջև: Բացի այդ, նման դեպքերում էական չէ նաև հանրահայտ ապրանքային նշանով անհատականացված ապրանքի նույն կամ նույնատիպ լինելու հանգամանքը, քանի որ հանրահայտ ապրանքային նշաններին իրավական պահպանություն է տրվում նաև դրանք միանգամայն տարբեր ապրանքների անհատականացման համար օգտագործելու դեպքերում:

Վճռաբեկ դատարանը վերոշարադրյալի հիման վրա արձանագրել է, որ միայն վերը թվարկված երեք տարրերի մանրակրկիտ գնահատման արդյունքում դատարանները կարող են հետևություն անել ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանության փաստի վերաբերյալ:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ համանման իրավակարգավորում նախատեսված է նաև ՀՀ կառավարության 18.11.2010 թվականի թիվ 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգով», Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վերոնշյալ մեկնաբանությունները կիրառելի են նաև նշված կարգի իրավադրույթների մեկնաբանության դեպքում:

Անդրադառնալով երրորդ հարցադրմանը և վերլուծելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 29-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ օրենքը որպես ապրանքային նշանի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմք՝ նախատեսում է նաև սպառողների շրջանում այդ նշանի հանրահայտ ճանաչվելը: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտը պարտավորված չէ գրանցելու ապրանքային նշանը: Ապրանքային նշանի իրավական պաշտպանությունը տրամադրվում է սպառողների շրջանում այդ նշանի ճանաչված լինելու ուժով:

Այսպիսով, վերոնշյալ ակտերով սահմանված իրավական կարգավորման վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրահայտ ճանաչված ապրանքային նշաններն օգտվում են պահպանության առանձնահատուկ մեխանիզմներից: Մասնավորապես՝ վերջիններիս իրավական պահպանությունը դուրս է գալիս գրանցամատյանում նշված ապրանքների շրջանակից և կառուցվում է այդ ապրանքային նշանների հանրահայտության հիման վրա: Այսինքն՝ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանը պաշտպանված է ոչ միայն այն ապրանքների համար (կամ դրանց նույնանման), որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, այլև մյուս բոլոր ապրանքների նկատմամբ, եթե նման օգտագործումն անհիմն առավելությունների կրելի կամ վնաս կհասցնի հանրահայտ ապրանքային նշանի տարբերակիչ բնույթին կամ համբավին (ճանաչվածությանը): Վերոնշյալ պայմաններից որևէ մեկի առկայությունը բավարար է հանրահայտ ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքների խախտումն արձանագրելու համար:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ հանրահայտ ապրանքային նշանների իրավական պահպանությունն իր ամրագրումն է գտել նաև «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի Փարիզյան կոնվենցիայում, ինչպես նաև «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» 1994 թվականի համաձայնագրում: Վերջինս ոչ միայն հաստատում է հանրահայտ ապրանքային նշանների պահպանության անհրաժեշտությունը, այլ նաև հնարավորություն է ստեղծում կազմակերպելու դրանց առավել լայնածավալ պաշտպանությունը:

Մասնավորապես՝ Փարիզյան կոնվենցիայի 6-րդ BIS հոդվածի համաձայն՝ բոլոր անդամ պետությունները պարտավորվում են մերժել կամ անվավեր ճանաչել ապրանքային

նշանի գրանցումը, ինչպես նաև արգելել այն ապրանքային նշանի օգտագործումը, որոնք այդ երկրում հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների վերարտադրությունը, նմանակումը կամ թարգմանությունն են և շփոթելու աստիճան նման են այդ նշանին, և որոնք օգտագործվում են նույն կամ նույնանման ապրանքների նկատմամբ:

«Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրի 16-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվում է «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզյան կոնվենցիայի 6-րդ BIS հոդվածը՝ հանրահայտ ապրանքային նշաններին տրամադրելով լրացուցիչ պաշտպանություն: Մասնավորապես՝ վերոնշյալ համաձայնագրով պահպանության տակ է առնվել նաև հանրահայտ ճանաչված ապրանքային նշանն այն դեպքերի համար, երբ այն օգտագործվում է ոչ նույնատիպ ապրանքների նկատմամբ, ինչը մոլորեցնելով ստիպում է այդ ապրանքների և հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրել՝ պայմանով, որ այդպիսի օգտագործումը կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

Այսինքն՝ վերոնշյալից կարելի է ենթադրել, որ ի տարբերություն նույն կամ նույնատիպ ապրանքների՝ պրակտիկապես տարբեր ապրանքների անհատականացման դեպքերում հանրահայտ ապրանքային նշանների պաշտպանությունն առավել խոցելի է դառնում, այդ է պատճառը, որ օրենսդիրը ոչ նույնանման ապրանքների համար օգտագործվող հանրահայտ ապրանքային նշանի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների խախտման փաստն արձանագրելու համար ավելի խիստ պայման է նախատեսել, որը հնարավորություն կտա վերջինիս սեփականատիրոջն արգելելու իր ապրանքային նշանի օգտագործումը նույնիսկ այն ապրանքների անհատականացման համար, որի արտադրությամբ նա չի զբաղվում:

Այսպիսով, օրենսդիրն իրավական լծակներ է ստեղծել ոչ միայն նույն կամ նույնատիպ ապրանքների համար այլ անձի կողմից ապրանքային նշանի օգտագործումն արգելելու, այլ որոշ դեպքերում նաև տարբեր ապրանքների անհատականացման համար դրանց օգտագործումն արգելելու համար:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գնահատման առարկա է դարձրել նաև հանրահայտ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների խախտման առկայության մասին փաստող այնպիսի նախապայմանների առկայությունը, ինչպիսին է հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջը հասցված վնասի առկայությունը: Մասնավորապես՝ այդպիսին կարող է լինել՝

- ապրանքային նշանի բարի համբավին վնաս հասցնելը:

Մասնավորապես՝ երբ հանրահայտ ապրանքային նշանն օգտագործվում է անորակ ապրանքների նկատմամբ, որը վնասում է հանրահայտ ապրանքային նշանի բարի համբավին:

- հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ համար նոր շուկաներ զբաղեցնելուն խոչընդոտելը:

- մեծ տարածում ստանալու հետևանքով ապրանքային նշանի միասնականության և յուրահատկության կորուստը:

Վճռաբեկ դատարանը կարևորել է նաև ապրանքային նշանի հանրահայտության աշխարհագրության հարցը, մասնավորապես՝ արդյոք ապրանքային նշանը հանրահայտ ճանաչվելու համար պարտադիր է, որ այն հանրահայտ լինի համապատասխան երկրի ողջ բնակչության շրջանում: Վճռաբեկ դատարանը հաստատել է նախկինում կայացրած որոշմամբ արտահայտված այն դիրքորոշումը, ըստ որի՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասը չի սահմանում ՀՀ ողջ տարածքում ապրանքային նշանի՝ որպես տվյալ անձի կողմից արտադրվող ապրանքների տարբերակման (անհատականացման) միջոցի հանրահայտության ճանաչում, այլ մատնանշում է միայն սպառողների համապատասխան շրջանակի մոտ հանրահայտ լինելու հանգամանքը: Սա նշանակում է, որ «սպառողների համապատասխան շրջանակը» կարող է որոշվել մի շարք տեսակային հատկանիշներով, այդ թվում նաև բնակչության տարածքի հատկանիշով: Իսկ «սպառողների համապատասխան շրջանակ» հասկացությունը չի կարող նույնացվել «բոլոր սպառողներ» հասկացության հետ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ նույն իրավակարգավորումն է ամրագրված նաև «Ապրանքային

նշանների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում կարող է հանրահայտ ճանաչվել, եթե օգտագործման արդյունքում այն լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է ապրանքային նշանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ ապրանքային նշանի հանրահայտությունը որոշելիս պետք է հաշվի առնվեն տվյալ նշանի օգտագործման տևողությունը և աստիճանը, նշանի գովազդման տևողությունը և աստիճանը, նշանի ճանաչված լինելու աստիճանը, արտադրանքի տարածման մեթոդները («առևտրի ուղիներ»), այն տարածաշրջանի սպառողների կարծիքը, որտեղ կատարվում է ապրանքների սպառումը:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

26.12.2014թ.

60. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչություն v. Տիգրան Հակոբյան, վարչ. գործ թիվ ՎԴ/8383/05/12

Էջ
502-509

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն օրենքով սահմանված դեպքերում կադաստրային արժեքով որոշելու համար վերաբերելի և թույլատրելի ապացույցների հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 5-րդ հոդվածների, 6-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 9-րդ կետի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի սեփականատեր հարկատու կաշկանդված չէ գույքն իր հայեցողությամբ որոշված գնով օտարելու հարցում, այդ թվում նաև՝ իրական արժեքից էականորեն ցածր գնով: Սակայն հարկային պարտավորությունը հաշվարկելիս հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք առնվազն պետք է ընդունվի տվյալ շինության կադաստրային արժեքը: Քննարկվող հարաբերության նմանատիպ կարգավորում նախատեսված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետով և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (*տե՛ս*, «Կոմունալսպասգիծ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1 հարկային փեսչության թիվ ՎԴ/3112/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարկ վճարողն է պարտավոր ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ հարկերի ճիշտ հաշվարկը և ժամանակին վճարումը ապահովելու համար, որպիսի պայմաններում, անդրադառնալով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք տվյալ շինության կադաստրային արժեքը հիմք ընդունելուն, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հարկ վճարողը պարտավոր է համապատասխան մարմնից ձեռք բերել անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկություն, որի հիման վրա էլ պետք է հաշվարկի և վճարի ավելացված արժեքի հարկը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Հակոբյանը 10.05.2012 թվականին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր: Գործում առկա՝ Տիգրան Հակոբյանին հասցեագրված Կադաստրի 12.09.2012 թվականի թիվ ԱՏ-11/09/2012-1-0230 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող Տիգրան Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կադաստրային արժեքը 04.05.2012 թվականի դրությամբ կազմել է 63.659.443 ՀՀ դրամ: 2012 թվականի 2-րդ եռամսյակի ֆիզիկական անձի իրականացված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկի համաձայն՝ Տիգրան Հակոբյանը Արմավիրի տեսչություն է ներկայացրել նշված հաշվարկը, որի 10-րդ տողում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն կազմել է 885.084 ՀՀ դրամ: Արմավիրի տեսչության 06.02.2012 թվականի թիվ 3065/2 տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Հակոբյանն ըստ Արմավիրի տեսչություն ներկայացրած ԱԱՀ հաշվարկի՝ բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ գործի փաստերով հաստատվում է այն հանգամանքը, որ Մյասնիկյան պողոտա թիվ 1/5 հասցեում գտնվող, Տիգրան Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կադաստրային արժեքը 04.05.2012 թվականի դրությամբ կազմել է 63.659.443 ՀՀ դրամ, որի նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 32-րդ և 33-րդ հոդվածներին համապատասխան պատասխանող Տիգրան Հակոբյանի կողմից Արմավիրի տեսչություն է ներկայացվել 2012 թվականի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկ և կատարվել է 885.084 ՀՀ դրամի վճարում՝ այդ հաշվարկին համապատասխան: Վերոգրյալը հաստատվել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 04.03.2013 թվականի «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշմամբ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով և Դատարանի վճիռը փոփոխելով, նշել է, որ Տեսչությունը, Կադաստրի «Երևան» տարածքային ստորաբաժանումից ստացել է տեղեկություն այն մասին, որ Երևանի Մյասնիկյան պողոտա թիվ 1/5 հասցեում գտնվող հասարակական նշանակության օտարված գույքի (ավտոտեխսպասարկման կայան) կադաստրային արժեքը կազմել է 143.936.984 ՀՀ դրամ և արդյունքում, ղեկավարվելով ՀՀ կառավարության 30.12.2010 թվականի թիվ 1775-Ն որոշմամբ, հաշվարկել է ավելացված արժեքի հարկ: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Տեսչությունը ղեկավարվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներով, որի համաձայն՝ վերջինս անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկություն է ստանում Կադաստրից, գտել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Կ. Խանջյանը չէր կարող գնահատել վեճի առարկային առնչվող անշարժ գույքի կադաստրային արժեքը, իսկ ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ 06091307 փորձագիտական եզրակացությունը, Կադաստրի 04.02.2014 թվականի «Գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների/սահմանափակումների վերաբերյալ» տեղեկանքը սույն գործի լուծման համար որևէ էական նշանակություն ունենալ չեն կարող՝ մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ 1-ին մասի հիմքով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Կադաստրի կողմից Տիգրան Հակոբյանին տրված տեղեկության համաձայն՝ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքը 04.05.2012 թվականի դրությամբ կազմել է 63.659.443 ՀՀ դրամ, որպիսի տեղեկության հիման վրա էլ Տիգրան Հակոբյանը կազմել է Տեսչություն է ներկայացրել 2012 թվականի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, և այդ հաշվարկին համապատասխան՝ կատարել է 885.084 ՀՀ դրամի վճարում, իսկ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տիգրան Հակոբյանը, որպես հարկ վճարող, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ավելացված արժեքի հարկը ճիշտ հաշվարկելու պարտավորությունը կատարելու համար պետք է Կադաստրից ստանար անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկություն, հետևաբար Կադաստրի 12.09.2012 թվականի թիվ ԱՏ-11/09/2012-1-0230 տեղեկանքը սույն գործով վերաբերելի և

թույլատրելի ապացույց է, որը 2012 թվականի 2-րդ եռամսյակի ֆիզիկական անձի իրականացված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկի և Արմավիրի տեսչության 06.02.2012 թվականի թիվ 3065/2 տեղեկանքի հետ համակցության մեջ ապացուցում է Տիգրան Հակոբյանի կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և օրենքով սահմանված ժամկետներում ավելացված արժեքի հարկի գումարը հաշվարկելու, 10.05.2012 թվականին իրականացրած անշարժ գույքի գործարքի համար նախատեսված ԱԱՀ-ի հաշվարկը Արմավիրի տեսչություն ներկայացնելու և օրենսդրությամբ սահմանված կարգով նշված հաշվարկի հիման վրա առաջացած հարկային պարտավորությունները կատարելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը բավարարելու համար հիմք ընդունված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 23.07.2012 թվականի գրությանը, որին կից ներկայացվել է Կադաստրի կողմից տրամադրված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ 2012 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների տեղեկությունները, որոնց համաձայն՝ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 ավտոտեխսպասարկման կայանի կադաստրային արժեքը կազմում է 143.936.984 ՀՀ դրամ, ապա վերը նշված ապացույցների առկայության պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված փաստաթուղթը չէր կարող դրվել Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում, քանի որ Կադաստրի կողմից մինևույն օբյեկտի կադաստրային արժեքների վերաբերյալ հարկային մարմնին և հարկ վճարողին տրված տեղեկություններում առկա է հակասություն, որը, սակայն, չի կարող կիրառվել ի վնաս հարկ վճարողի, հատկապես այն դեպքում, երբ վերջինս արդեն իսկ իրեն տրամադրված տեղեկության հիման վրա հաշվարկել և կատարել է հարկային պարտավորությունը: Դեռ ավելին, նշված հանգամանքը հաստատվել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 04.03.2013 թվականին որոշմամբ, համաձայն որի՝ կատարվել է Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքի վերահաշվարկ, որի արդյունքում նշված անշարժ գույքի օտարումից առաջացած հարկի գումարը կազմել է 885.084 ՀՀ դրամ, որը վճարվել է: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից հիմք ընդունված ապացույցը՝ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ, չէր կարող դիտվել որպես արժանահավատ ապացույց:

28.11.2014թ.

61. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արթիկի տարածքային հարկային տեսչություն v. «ՎԱ-ԱՐՏ» ՍՊԸ, վարչ. գործ թիվ ՎԳ/0136/05/13 **Էջ 510-516**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 30.1-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, առաջնորդվելով հարկատուների իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությամբ, սահմանել է, որ հարկային օրենսդրությամբ հնարավոր է նախատեսել հարկային պարտավորության դադարման այլ դեպքեր: Մասնավորապես՝ հարկային իրավահարաբերություններում կանխատեսելիությունն ապահովելու նպատակով նույն օրենքի 30.1-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է հարկային պարտավորության դադարեցման լրացուցիչ հիմք: Այն դեպքերում, երբ հարկային օրենսդրության խախտումը հայտնաբերվում է կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, հարկային պարտավորությունը համարվում է դադարած, ուստի անձն ազատվում է համապատասխան հարկային պատասխանատվությունից:

Վճռաբեկ դատարանը վերստին ընդգծել է, որ հարկատուի մոտ հարկային պարտավորություններ չեն առաջանում, եթե վերջինիս կողմից թույլ տրված հարկային օրենսդրության խախտումը դրան հաջորդող երեք տարիների ընթացքում հարկային մարմնի կողմից

չի հայտնաբերվել (տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Շահունյանի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գայանե Ադյանի թիվ 3-1150 (ՏԳ) գործով ՀՀ վճարելի դատարանի 01.08.2007 թվականի որոշումը):

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

08.05.2014թ.

62. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե v. Լիլիթ Բաբասևա, վարչ. գործ թիվ ՎԳ-7537/05/12

Էջ
517-527

Խնդիր. Այս որոշմամբ Վճարելի դատարանն անդրադարձել է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի կանոնակարգումները խախտելու հետևանքով առաջացող իրավահարաբերությունների՝ անմատչի գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի, ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «գ», «զ», «ժգ» և «ժը» կետերի, 97-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 40-րդ և 198-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում Վճարելի դատարանն արձանագրել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքով անձին իրավունք է վերապահված ընտրել կամ փոփոխել իր կողմից ընտրված մաքսային ռեժիմը: ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված այս իրավունքն անձանց համար երաշխավորում է հետևյալ իրավական հնարավորությունները. առաջին՝ ընտրել օրենքով սահմանված մաքսային ռեժիմներից որևէ մեկը՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները, երկրորդ՝ փոփոխել իր կողմից ընտրված մաքսային ռեժիմն օրենքով սահմանված մաքսային ռեժիմով՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները: Օրենսդրի կողմից սահմանված՝ անձանց մաքսային ռեժիմն ընտրելու կամ փոփոխելու իրավունքը նրանց համար չի երաշխավորում օրենքով սահմանված մաքսային ռեժիմն ընտրելու կամ չընտրելու իրավական հնարավորություն կամ օրենքով սահմանված պայմաններում մաքսային ռեժիմը փոփոխելու կամ փոփոխելուց ձեռնպահ մնալու իրավական հնարավորություն:

Վճարելի դատարանը նշել է, որ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում, բացառությամբ մաքսավճարի և ՀՀ մաքսային օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ վճարների, մաքսային վճարներ չեն գանձվում, իսկ ապրանքների բացթողումն այդ ռեժիմի շրջանակներում թույլատրվում է հայտարարատուի խնդրարկած ժամկետով, որը, սակայն, չի կարող մեկ տարուց ավելի լինել, այդ ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է դրանք վերահայտարարագրել «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով կամ հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը, որի ընթացքում միայն անձի կողմից հետագա արտահանման պարտավորությունը համարվում է չխախտված:

Միաժամանակ, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքներն օրենքով սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում այդ ապրանքները վերահայտարարագրել կամ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար», կամ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմներից որևէ մեկով՝ վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը:

Ընդ որում, «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմի շրջանակներում օրենքով սահմանված չափով գանձվում են մաքսային վճարներ, իսկ «Վերաներմուծում»

նեժիմի շրջանակներում գանձվում են միայն մաքսավճարներ: Ավելին, վերջին նեժիմի դեպքում պահանջվում է արտահանման պահի համեմատ վերաներմուծվող ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի այլ փոփոխության բացակայություն:

Այսինքն՝ օրենսդիրը սահմանել է, որ «Վերաներմուծում» մաքսային նեժիմի շրջանակներում ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի որևէ այլ փոփոխության առաջացման դեպքում անձը զրկվում է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային նեժիմով ներմուծված ապրանքները «Վերաներմուծում» մաքսային նեժիմով հայտարարագրելու հնարավորությունից: Նման պայմաններում անձը պարտավոր է ապրանքները հայտարարագրել «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային նեժիմով, քանի որ այս դեպքում արդեն առկա է միայն ապրանքն այդ մաքսային նեժիմով հայտարարագրելու միջոցով իր պարտականությունները կատարելու իրավական հնարավորություն:

Անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու հետևանքով առաջացող տուգանքի նշանակմանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ այն իրենից ներկայացնում է հանրային-իրավական պատասխանատվության միջոց՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցն առանց մաքսային մարմնի թույլտվության տնօրինելու համար և չի վերաբերում անձի կողմից մաքսային վճարներ վճարելու պարտավորության կատարումից խուսափելուն:

Այսպիսով, համադրելով նշված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային նեժիմով ներմուծված ապրանքներն օրենքով սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում այդ ապրանքները վերահայտարարագրել կամ «Ներմուծում» ազատ շրջանառության համար», կամ «Վերաներմուծում» մաքսային նեժիմներից որևէ մեկով՝ վճարելով այդ նեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ «Վերաներմուծում» մաքսային նեժիմի շրջանակներում ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի որևէ այլ փոփոխության առաջացման հետևանքով անձը պարտավորվում է ապրանքները հայտարարագրել «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային նեժիմով, ուստի և տվյալ անձը պարտավորվում է վճարել տվյալ նեժիմով նախատեսված մաքսային վճարները, ինչպես նաև դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը: Հետևաբար, օրենսդիրը հստակ և ոչ երկիմաստ ձևով սահմանել է անձի պարտականությունը «Վերաներմուծում» մաքսային նեժիմի շրջանակներում ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի որևէ այլ փոփոխության առաջացման դեպքում անձը պարտավորվում է ապրանքները հայտարարագրել «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային նեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայտարարատուն «Ժամանակավոր ներմուծում» նեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում «Ներմուծում» ազատ շրջանառության համար» կամ «Վերաներմուծում» մաքսային նեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը վճարելու պարտավորությունը չի ստանձնում ՀՀ մաքսային օրենսգրքի 55-րդ հոդվածի ուժով, ինչը քննարկվող պարագայում բացակայում է, իսկ ապրանքների և

տրանսպորտային միջոցների հայտարարագրումը պարտավորվում է իրականացնել նույն օրենսգրքով նախատեսված կարգով, ինչպես նաև մաքսային մարմինների պահանջով պարտավորվում է ներկայացնել հայտարարագրվող ապրանքները և տրանսպորտային միջոցները, այսինքն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները ներկայացնելու համար պարտադիր պայման է մաքսային մարմնի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում դրանք պահանջելը:

26.12.2014թ.

63. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն v. Վահե Հարությունյան, վարչ. գործ թիվ ՎԳ-5170/05/12

**Էջ
528-537**

Խնդիր. 1) Ինչ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող իրը հանդիսանում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխող ֆիզիկական անձի անձնական օգտագործման իր,

2) արդյո՞ք միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձանց համար սահմանված ապրանքների հայտարարագրման պարտականությունը կարող է համարվել պատշաճորեն կատարված, երբ վերջինս, ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելով երրորդ անձի անձնական օգտագործման իրերը, ընտրել է մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կանաչ» ուղին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի, ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի, 105-րդ հոդվածի 5-րդ մասի, 128-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 131-րդ հոդվածի 1-ին մասի, 132-րդ հոդվածի 2-րդ մասի, վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկրության համակարգի կիրառման կարգի մասին» թիվ 1927-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկրության համակարգի կիրառման» կարգի 7-րդ, 13-րդ, 14-րդ 15-րդ և 16-րդ կետերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, սահմանել է, որ ՀՀ մաքսային սահմանը հատելու ֆիզիկական անձինք պարտավոր են հայտարարագրել իրենց կողմից տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները: Օրենսդիրը, միաժամանակ, նշված ընդհանուր կանոնից նախատեսել է բացառության հնարավորություն՝ ամրագրելով, որ բացառությունները պետք է սահմանվեն օրենքով:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենսդրի կողմից ՀՀ մաքսային սահմանը հատող անձանց համար սահմանված ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման պարտականությունն նախատեսելն ինքնանպատակ չէ: Նման իրավակարգավորման նպատակը ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված հարկեր, տուրքեր վճարելու, պարտադիր այլ վճարումներ կատարելու անձի սահմանադրաիրավական պարտականության պատշաճ կատարման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ապահովումն է, քանի որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու միջոցով լուծվում է տվյալ ապրանքի կամ տրանսպորտային միջոցի ներմուծման կամ արտահանման համար գանձվող մաքսատուրքի վճարման հարցը, ինչպես նաև պարզվում է գանձման ենթակա մաքսատուրքի չափը:

ՀՀ-ում մաքսային սահմանը հատելիս ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումն իրականացվում է թղթային, բանավոր, էլեկտրոնային եղանակներով կամ գործողությամբ: Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը, ըստ էության, ՀՀ մաքսային սահմանը հատող անձի կողմից մաքսային մարմինների որոշակի տեղեկատվություն տրամադրելու օրենսդրորեն սահմանված եղանակ է: Մասնավորապես՝

ՀՀ մաքսային սահմանը հատող անձը պարտավոր է տեղեկություններ ներկայացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև՝ մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ տրամադրել: Միաժամանակ, ՀՀ մաքսային սահմանը հատող անձինք պարտավոր են համապատասխան մաքսային մարմիններին ներկայացնել ոչ թե ցանկացած, այլ ապրանքների մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ և ճշգրիտ տեղեկություններ:

ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի թիվ 1927-Ն որոշումը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի վերը նշված կարգավորումների լույսի ներքո վերլուծելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության համար սահմանված է առանձնահատուկ կարգ կամ այսպես կոչված՝ երկուդային համակարգ: Այն դեպքում, երբ միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձի կողմից ներմուծվում է այնպիսի ապրանք, որը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար օրենքով սահմանված է մաքսատուրք վճարելու պարտականություն, ապա միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձը պարտավոր է ընտրել մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կարմիր» ուղին: Այն դեպքում, երբ տվյալ ֆիզիկական անձի կողմից ներմուծվում է այնպիսի ապրանք, որը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար օրենքով սահմանված չէ մաքսատուրք վճարելու պարտականություն, ապա միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձը կարող է ընտրել մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կանաչ» ուղին, որն ընտրելը համարվում է գրավոր հայտարարագրման ենթակա ապրանքներ չունենալու մասին բանավոր հայտարարագրում: Այսինքն՝ «Կանաչ» ուղու ընտրության դեպքում բանավոր հայտարարագրումն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձը ՀՀ չի ներմուծում այնպիսի ապրանք, որը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար օրենքով սահմանված է մաքսատուրք վճարելու պարտականություն:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք մետաղներով երեսապատված մետաղներից պատրաստված ոսկերչական իրերը և դրանց մասերը ՀՀ մաքսային սահմանով ներմուծելու դեպքում սահմանված է մաքսատուրք վճարելու պարտականություն: Մինևույն ժամանակ, նույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը ֆիզիկական անձանց համար սահմանել է արտոնություն, այն է՝ առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը, և որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք՝

ա) չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում.

բ) ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի նույն 105-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ապրանքատեսակների:

Միայն վերը նշված պայմանների առկայության պարագայում է անձն օգտվում օրենսդրությամբ սահմանված արտոնությունից, որի դեպքում ապրանքների սխալ հայտարարագրելը կամ ընդհանրապես չհայտարարագրելը չի հանգեցնում նրա սահմանադրափրավական պարտականության ոչ պատշաճ կատարմանը:

Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նաև իր նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, որը կարող է արտահայտվել նաև դրանց մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելու միջոցով, մեղավոր անձի նկատմամբ առաջացնում է այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով տուգանքի նշանակում: Ընդ որում, մաքսային կանոնները խախտած անձը պատասխանատվության է ենթակա այդ կանոն-

ներն ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգուշորեն խախտելու համար (տե՛ս, Արամ Բաբայանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/2122/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը):

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնական դրույթներ

08.05.2014թ.

64. «Սպիտակ լիճ» արտադրական կոտայերատիվ v. Իջևանի քաղաքապետարան և մյուսներ, վարչ. գործ թիվ ՎԴ-2/0159/05/12

**Էջ
538-549**

Խնդիր. Արդյո՞ք անձը, ում իրավունքները և օրինական շահերը խախտված չեն, այսինքն՝ չունի «իրական (ոեալ)» իրավունք, իրավունք ունի դիմելու դատարան՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձը ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Վերը նշված իրավական դրույթների վերլուծությունից հետևում է, որ վկայակոչված իրավանքները սահմանում են, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների պաշտպանության համար իրավունք ունի դիմելու վարչական դատարան: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում է, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ունի, և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի դիմելու վարչական դատարան:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որպես ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ անկա է նրա իրավունքների խախտման վտանգ, այլ խոսքով՝ շահագրգիռ անձին: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը:

26.12.2014թ.

65. Տիգրան Սանասարյան v. Երևանի քաղաքապետարան և մյուսներ, վարչ. գործ թիվ ՎԴ/3477/05/13

**Էջ
550-564**

Խնդիր. Արդյո՞ք առկա է ենթադրաբար խախտված իրավունքը տվյալ անձին չպատկանելու, այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» չհանդիսանալու ակնհայտությունը, եթե դատարանը միայն դատաքննության ընթացքում է պարզում հայցվորի «շահագր-

գիտ անձ» չհանդիսանալու հանգամանքը:

* Վճռաբեկ դատարանը միաժամանակ անդրադարձել է երրորդ անձանց ներկայացուցիչների վճարների՝ որպես դատական ծախսի բաշխման հնարավորության հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով «Սպիտակ լիճ» արտադրական կոտակերտի միջոցով Իջևանի քաղաքապետարանի և մյուսների, Կարինե Ջրավիթի ընդունված ՀՀ կառավարության ստրիկեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործերով արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները՝ պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՛ ոչ:

ՀՀ սահմանադրական դատարանը 17.04.2012 թվականի թիվ ՍԳ-Ռ-1022 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ՝ նշելով, որ «(...) ՀՀ սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը, այսինքն, հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը (...):»:

Գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի տառացի մեկնաբանության և նույն օրենսգրքի այլ իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված «ակնհայտություն» եզրույթն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվիպող ու կասկած չհարուցող ակնբերություն: Այսինքն՝ սույն իրավական նորմում տեղ գտած կարգավորումը կարող է վերաբերել միայն հայցադիմում ներկայացնելու՝ չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չունի, և չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես՝ նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ եզրահանգման:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ թե՛ գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, և թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է, որ հայցադիմում ներկայացնելու իրավունքի ակնհայտ բացակայության պարագայում դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է մերժել դրա ընդունումը: Օրենսդիրը նման իրավակարգա-

վորմամբ իրավացիորեն խուսափել է ոչ տեղին ու քննության ոչ ենթակա գործերի հետազոտությունից, ինչը հանգեցնում է դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածության և դատարանի վարույթում գտնվող մյուս գործերի քննության ձգձգումների:

Այսպիսով, ակնհայտորեն նման իրավունք չունեցող անձի կողմից հայցադիմում ներկայացվելու պարագայում հայցադիմումը վարույթ չի ընդունվում, քանի որ ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի ընդհանրական ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայցվորն այդ գործով շահագրգիռ անձ չի հանդիսանում:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել էր այն իրավական հիմքերի սպառնիչ ցանկը, որոնց առկայության ուժով դատարանը պարտավոր էր կարճել գործի վարույթը: Այդ հիմքերն էին՝ 1) վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին, 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, 3) գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը, 4) գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է, 5) հայցվորը հրաժարվել է հայցից:

Վերլուծելով հիշյալ իրավական հիմքերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրենց իրավական բնույթով դրանք հստակեցնում են այն պայմանները, որոնց առկայությունն օրենքի ուժով անհնարին է դարձնում տվյալ հայցադիմումի հիման վրա վարչական դատավարության իրականացումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետի 03.12.2007 թվականի «Նոյ թաղամասի թիվ 10/1 հասցեում պետական սեփականություն հանդիսացող 5.110.52քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինության նկատմամբ Երևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 5223-Ա որոշման համաձայն՝ «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեում Ընկերության կողմից պետական սեփականություն հանդիսացող 5.110.52քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունը (բնակելի տանը կից օժանդակ շինություններ, պարիսպ) ճանաչվել է պետական սեփականություն՝ հանձնիս Քաղաքապետարանի: Սահմանվել է, որ հողամասի սահմանները որոշվում են Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով, իսկ շինության մակերեսները՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից տրված վկայականով:

Սույն գործով Դատարանը Տիգրան Սանասարյանի հայցադիմումն ընդունել է վարույթ և գործի քննության ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ հաստատված է համարել այն փաստը, որ Քաղաքապետի վիճարկվող որոշումը չի վերաբերում Տիգրան Սանասարյանի նշած՝ 1.700քմ մակերեսով հողամասին և արդյունքում գտել է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման՝ Դատարանին ընդդատյա չլիներու հիմքով:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վճիռը՝ եզրահանգելով, որ թեև Քաղաքապետի 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշման կարգավորման անմիջական առարկան հանդիսանում է «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեում Ընկերության կողմից ինքնակամ կառուցված շինության նկատմամբ պետության սեփականության իրավունքի ճանաչումը, սակայն նույն որոշմամբ սահմանվել է նաև այն համապատասխան հողամասի մակերեսը, որի վրա առկա է ինքնակամ շինությունը, ինչպես նաև տվյալ շինությամբ (կառույցով) զբաղեցված և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմանները: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում բացակայում է Տիգրան Սանասարյանի՝ սույն հայցադիմումը վարչական դատարան ներկայացնելու իրավունք չունենալու, այսինքն՝ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը, ուստի անհրաժեշտ է սույն գործն ուղարկել նոր քննության:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը բեկանել է գործի վարույթը կարճելու վերաբերյալ Դատարանի վճիռը՝ գտնելով, որ սույն գործի քննությամբ չի հիմնավորվել Տիգրան Սանասարյանի կողմից վարչական դատարան հայց ներկայացնելու իրավունք չունենալու, այսինքն՝ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարան հայց ներկայացնելու իրավունքի բացակայության ակնհայտությունը, գործով շահագրգիռ անձ հանդիսանալու կամ չհանդիսանալու ակնհայտությունը սույն գործի քննության և լուծման համար չունեն որևէ էական նշանակություն:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերը նշված իրավական վերլուծությունը, արձանագրել է, որ գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում տեղ գտած «հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը» ձևակերպումը վերաբերում է միայն հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալու չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ դեպքերին, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, և չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես, նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ դիրքորոշման: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայցով դատարան դիմելու իրավունքի բացակայության ակնհայտություն» եզրույթը վերաբերում է վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության փուլին: Այլ կերպ ասած՝ հայցով դատարան դիմելու իրավունքի բացակայության ակնհայտության հարցը կարող է լուծվել միայն հայցադիմումի ընդունելիության փուլում, սակայն ոչ բուն դատաքննության ընթացքում: Դատաքննության ընթացքում ապացույցների մանրամասն ուսումնասիրության արդյունքում կոնկրետ անձի այդ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու հանգամանքը դատարանի կողմից պարզելու պարագայում բացակայում է անձի տվյալ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի քննության պահին գործող վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ եթե հայցադիմումի ընդունելիության փուլում վարչական դատարանը հանգում է այն եզրակացության, որ անձն ակնհայտորեն չունի դատարան դիմելու իրավունք, ապա պետք է որոշում կայացնի վերջինիս հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ: Եթե վարչական դատարանը գործի դատաքննության ընթացքում է գալիս այն եզրահանգման, որ անձը չուներ դատարան դիմելու իրավունք, ապա տվյալ դեպքում բացակայում է հայցով դատարան դիմելու իրավունքի բացակայության ակնհայտությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի պատճառարանություններն առ այն, որ սույն գործով Տիգրան Սանասարյանի կողմից վարչական դատարան հայց ներկայացնելու իրավունք չունենալու, այսինքն՝ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը չի հիմնավորվել, որևէ իրավական նշանակություն չունի վերջինիս հայցը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ հիմնավորված եզրահանգման գալու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հատուկ նշել, որ ի տարբերություն գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի, որը գործի վարույթը կարճելու որևէ հիմք չի նախատեսում այն դեպքերի համար, երբ դատարանը դատաքննության ընթացքում պարզում է, որ հայցադիմում ներկայացրած անձը չի հանդիսանում շահագրգիռ անձ, գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին այդպիսի հիմք նախատեսում է: Այսպես, ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում օրենսդիրը սահմանել է, որ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում օրենսդիրն ամրագրել է, որ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Օրենսդրական ներկայիս իրավակարգավորումներից բխում է, որ եթե դատարանը գործի քննության ժամանակ պարզում է, որ հայցը հարուցվել է ակնհայտորեն սնան իրավունք չունեցող անձի կողմից, ապա պարտավոր է կարճել գործի վարույթը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ակնհայտության հասկացության վերաբերյալ վերը նշված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև գործող իրավակարգավորման պայմաններում: Միաժամանակ, դատարանները, ելնելով արդարադատության արդյունավետության անհրաժեշտությունից, պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր դատավարական միջոցները՝ գործի վարույթի կարճման (հայցադիմումի ընդունելիության մերժման) նշված հիմքը դատավարության հնարավորինս վաղ փուլերում բացահայտելու համար՝ այդուհանդերձ նկատի ունենալով, որ այդ հիմքի բացահայտումը դատաքննության փուլում ևս գործող իրավակարգավորման պայմաններում գործի վարույթի կարճման հիմք է:

Երրորդ անձանց ներկայացուցիչների վճարների՝ որպես դատական ծախսի բաշխման հնարավորության հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են **դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները**:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վկայակոչված իրավանդումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի կազմում ներառել է նաև ներկայացուցիչների վճարները: Միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դատարանը դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցիչների վճարների բաշխման հարց կարող է լուծել միայն կողմերի պարագայում:

Վճռաբեկ դատարանը, սակայն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մի շարք նորմերի համակարգային վերլուծության արդյունքում հանգել է այն եզրահանգման, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կանոնները կիրառելի են նաև երրորդ անձանց պարագայում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երրորդ անձինք այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են կամ մարմինները, որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ հայց (ներառյալ՝ հակընդդեմ հայց) ներկայացնելու, հայցի հիմքը և (կամ) առարկան փոխելու, հայցային պահանջների չափը ավելացնելու և (կամ) նվազեցնելու, հայցն ընդունելու կամ հայցից հրաժարվելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքներից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածը, որը սահմանում է կողմերի իրավունքները և պարտականությունները, 7-րդ մասում նախատեսել է, որ կողմերն իրավունք ունեն օգտվելու նույն օրենսգրքով իրենց վերապահված այլ դատավարական

իրավունքներից:

Տվյալ պարագայում, նկատի ունենալով, որ երրորդ անձինք որոշակի բացառություններով հանդերձ օգտվում են կողմի իրավունքներից, իսկ իր կրած դատական ծախսերի հատուցում ստանալը կողմի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական իրավունք է, Վճռաբեկ դատարանը գտել է, որ երրորդ անձինք ևս օգտվում են նշված իրավունքից և նրանց նկատմամբ նույնպես կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կանոնները:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ վերահաստատել է փաստաբանի վարձատրության խելամտության հարցի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (յու՛ս, Ֆերդինանսը Առաքելյանն ընդդեմ Հարություն Պեղրոյանսի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):

Ապացույցներ և ապացուցում

28.11.2014թ.

66. Բարսեղ Աղազարյան v. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուրի գյուղապետարան, վարչ. գործ թիվ ՎԴ-1729/05/09

Էջ
565-573

Խնդիր. Արդյո՞ք 1988 թվականի դեկտեմբերի 07-ի երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը հաստատող որևէ ապացույցի բացակայության պայմաններում քաղաքացին կարող է ունենալ օրենսդրությամբ սահմանված բնակարանային պայմանները բարելավելու իրավունք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության» կարգի /այսուհետ՝ Կարգ/, գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերը նշված Կարգով սահմանված է բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային առաջնահերթության որոշման չափանիշները: Կարգով սահմանված է, որ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունքը ծագում է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր մինչև երկրաշարժը՝ 07.12.1988 թվականը, ունեցել են բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է կամ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն ենթակա է քանդման: Բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիների դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձանց դիմումները, ովքեր չեն ներկայացրել Կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես

նաև 9.1-ին կետով պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, այսինքն՝ Կարգի վերոնշյալ դրույթներին համապատասխան այն փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը:

Վարույթը վերաքննիչ դատարանում

18.07.2014թ.

67. ՀՀ առողջապահության նախարարություն v. «Ռեվերդի» ՍՊԸ, վարչ. գործ թիվ ՎԳ-3271/05/12

Էջ
574-582

Խնդիր. Արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել վերահաստատել հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ նախկինում ձևավորած հետևյալ դիրքորոշումը.

Հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը դատական ակտ է կայացնում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը:

Փաստորեն, հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու իրավական հնարավորություն, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ներկայացնում է այն հանգամանքների փոփոխությունը, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքին համապատասխան հայցի հիմքը և առարկան փոխելու իրավունքը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայց-

վորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի:

Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործով ապացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա նորմերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից (*յրեն, Ա/2 Էդմոնդ Ասպրյանը և Կարինե Բաղջյանն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական գործի քննության ընթացքում հայցի հիմքը կամ առարկան կարող են փոփոխվել միայն մինչև գործը դատարանության նշանակելը և այն էլ՝ միայն հայցվորի կողմից: Հայցի հիմքը կամ առարկան փոփոխելը, փաստորեն, համարվում է հայցվորի իրավունքը և միայն հայցվորը վարչական գործի քննության ընթացքում իր հայեցողությամբ կարող է որոշել՝ օգտագործել այդ իրավունքը, թե ոչ: Դատարանն իր հերթին կարող է որոշել՝ թույլ տալ հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն, այսինքն՝ բավարարել հայցվորի նման խնդրանքը, թե ոչ: Սա նշանակում է, որ դատարանն իրավասու չէ իր նախաձեռնությամբ փոխել հայցի հիմքը և առարկան և պետք է քննի գործը հայցվորի կողմից վկայակոչված հայցի հիմքի և առարկայի շրջանակներում:

Իր նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության իրացման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*յրեն, ՀՀ կառավարությանն առընթեր պեպուական եկամուտների կումիրելի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ «Ջորջ ընդ Բրանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշմանն ի հավելում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն և չի վերաբերում դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայցի իրավական հիմքերը լրացնելուն, դատարանի նախաձեռնությամբ վեճի սահմաններից դուրս գալուն, ինչպես նաև սույն սկզբունքը վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում սեփական նախաձեռնությամբ և ինքնուրույն լրացնել վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել:

Դատական ակտերի հարկադիր կատարումը

18.07.2014թ.

68. «Ինեկորանկ» ՓԲԸ v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/2127/05/11

Էջ 583-595

Խնդիր. Արդյո՞ք օրենսդիրը հարկադիր կատարողին օժտել է պարտապանի դիմումի հիման վրա որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքի վերացման լիազորությամբ, թե ոչ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի և դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոսվենցիայով երաշխավորված՝ անձի հիմնական իրավունքների լույսի ներքո:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, 97-րդ հոդվածի 1-ին կետը, 98-րդ հոդվածը, 100-րդ հոդվածի 1-ին կետը, 101-րդ հոդվածի 1-ին կետը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 4-րդ և 5-րդ հոդվածները, 43-րդ, 44.1-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հայցի ապահովումն օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է: Այն ուղղված է անձանց խախտված գույքային իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հայցի ապահովման ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ դրանով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը: Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (*յո՛ւ ս, ՀՀ կատավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալմես Քոնսոլթինգ» ՍՊԸ-ի թիվ ՎԳ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը*):

Այսպիսով, հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճիռ կատարումը, ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է հանդիսանում: Օրենսդիրը, միաժամանակ, հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի առանձնահատկությունները, հստակ սահմանել է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու, հայցի

ապահովումը վերացնելու, ինչպես նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովման միջոցը ձևափոխելու լիազորությամբ օժտված է բացառապես դատարանը, որն իր այդ լիազորությունն իրականացնում է համապատասխան որոշում ընդունելով:

Իրավական պետության սահմանադրական սկզբունքի և իրավունքի գերակայության երաշխավորման նպատակով օրենսդիրն ամրագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ միաժամանակ սահմանելով դատական ակտերի կատարումն ապահովելու պայմանները և կարգը, նշելով, որ դատական ակտերի հարկադիր կատարումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության խնդիրն է, որը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն իրականացնում է հարուցված կատարողական վարույթի շրջանակներում՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կատարողական գործողություններ իրականացնելու միջոցով:

Վերը նշված նպատակներին համապատասխան օրենսդիրը նախատեսել է նաև պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ինստիտուտը՝ նշելով, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է նաև գույքի վրա արգելանք դնելը: Միաժամանակ, օրենսդիրը հստակ սահմանել է այն իրավական հիմքերը, որոնց առկայության պարագայում հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը արգելանքից հանվում է, դրանք են՝ 1. առկա են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը, 2. դատարանը որոշում է կայացրել գույքն արգելանքից հանելու մասին, և 3. պահանջատերը հետ է պահանջել կատարողական թերթը. բացի այս հիմքերից որևէ այլ հիմքով հարկադիր կատարողն իրավասու չէ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքն արգելանքից հանելու մասին որոշում կայացնել:

Այսպիսով, վերաբերելի իրավական նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը հարկադիր կատարողին չի օժտել պարտապանի նմանօրինակ դիմումի հիման վրա որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքի վերացման լիազորությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0333/02/12
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական ԵՄԴ/0333/02/12
2014թ.

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱՎՈՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լույսա Մարյանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.09.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լույսա Մարյանյանի ընդդեմ Վալերիկ Սողոմոնյանի, Սոֆյա Աճեմյանի, Մարինե, Անահիտ և Սոնա Աճառյանների, Ալեքսան Գրիգորյանի, երրորդ անձ ՀՀ «Արթիկ» նոտարական տարածքի նոտար Աիդա Մկրտչյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու և ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լույսա Մարյանյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 32^ա հասցեում գտնվող իր կողմից օգտագործվող հողամասի և տան նկատմամբ, իրեն ճանաչել Վահան Ստեփանյանին պատկանող նույն տան բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ, անվավեր ճանաչել 14.04.2003 թվականին Վալերիկ Սողոմոնյանին, Սոֆյա Աճեմյանին, Մարինե, Անահիտ և Սոնա Աճառյաններին ու 22.05.2012 թվականին Ալեքսան Գրիգորյանին տրված ըստ օրենքի

ժառանգության իրավունքի վկայագրերը, ընդհանուր գույքից առանձնացնել իր կողմից փաստացի օգտագործվող բաժինը:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Հ. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.06.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.09.2013 թվականի որոշմամբ Լուսյա Մարյանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լուսյա Մարյանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Վալերիկ Սողոմոնյանը, Սոֆյա Աճեմյանը, Ալեքսան Գրիգորյանը, Անահիտ, Սոնա և Մարինե Աճառյանները (այսուհետ՝ Պատասխանողներ):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ և 187-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որի արդյունքում անտեսել է, որ 03.03.1983 թվականին կնքված ներքին առուծախի պայմանագրով Ալեքսան Աճեմյանը 12.000 սովետական ռուբլու դիմաց իր ամուսնուն՝ Վահան Ստեփանյանին է վաճառել Երևանի Շահումյանի շրջանի 7-րդ փողոցի թիվ 32^ա հասցեում գտնվող տան երկու սենյակները՝ 21քմ մակերեսով բնակելի տարածությունը, 20քմ մակերեսով օժանդակ կառույցը և հողամասը: Նշված թվականից ինքն ամուսնու և երեք երեխաների հետ հաշվառվել է այդ հասցեում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ալեքսան Աճեմյանի ժառանգության բացման օրվա դրությամբ ժառանգատուն գրեթե քսան տարի առաջ իրաժարվել է վաճառված գույքի նկատմամբ սեփականության իրավունքից: Հետևաբար այդ մասի նկատմամբ ժառանգություն չէր կարող բացվել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով մահացած ճանաչելու մասին վճիռը վերացված լինելու հանգամանքը, որպես իր բացակայությունը հիմնավորող ապացույց վկայակոչել է այդ վճիռը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.09.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման այն պատճառաբանությամբ, որ 1992 թվականից ոչ Վահան Ստեփանյանը, ոչ էլ Լուսյա Մարյանյանը նշված հասցեում չեն բնակվել, հետևաբար չէին կարող անընդմեջ տիրապետել կամ օգտագործել այդ հասցեում գտնվող գույքը:

Ալեքսան Աճեմյանի և նրա կնոջ՝ Վալերիկ Սողոմոնյանի կողմից կատարվել են գործողություններ, որոնք հաստատում են, որ վերջիններս չեն իրաժարվել իրենց պատկանող գույքից: Մասնավորապես՝ վճարվել է գույքահարկը (հետագայում՝ նաև ժառանգների կողմից), Վալերիկ Սողոմոնյանը դիմել է դատարան՝ Լուսյա Մարյանյանին

մահացած ճանաչելու դիմումով, Ալեքսան Աճեմյանի մահից հետո դիմել են նոտարական գրասենյակ և ձևակերպել ժառանգությունը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 19.01.1973 թվականի գույքային թերթի համաձայն՝ Երևանի Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 32^ա հասցեում գտնվող 600քմ մակերեսով հողամասը, 108,1քմ ընդհանուր մակերեսով բնակելի սենյակները և 88,4քմ ընդհանուր մակերեսով օժանդակ տարածքները սեփականության իրավունքով պատկանել են Ալեքսան Աճեմյանին (հատող 2-րդ, գ.թ. 43-46).

2) 03.03.1983 թվականին կազմված ներքին առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ալեքսան Աճեմյանը 12.000 ռուբլու դիմաց իրեն պատկանող՝ Երևանի Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 32^ա տնից Վահան Ստեփանյանին է վաճառել «երկու սենյակ՝ 21քմ մակերեսով բնակելի տարածությամբ, և 20քմ օժանդակ սենյակներ՝ իրեն առանձին խողով»։ Պայմանագրում նշվել է նաև, որ հողը հատկացվում է նույնպես պայմանով, որ շինարարությունը կատարվի Ալեքսան Աճեմյանի շենքի դիմաց։ Պայմանագիրը ստորագրել են նաև վկաներ Շուրա Սուգյանը, Կամո Քոթյանը, Գուրգեն Մեյրապետյանը (հատող 1-ին, գ.թ. 122).

3) Երևանի Լենինյան շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի 11.04.1981 թվականի ամուսնության վկայականի համաձայն՝ Վահան Ստեփանյանը Լուսյա Մարյանյանի ամուսինն է (հատող 1-ին, գ.թ. 18).

4) 28.08.1981 թվականին, 02.12.1982 թվականին, 20.10.1990 թվականին տրված ծննդյան վկայականների համաձայն՝ Կարեն Վահանի Ստեփանյանը (ծնվ. 28.08.1981 թվականին), Նելսոն Վահանի Ստեփանյանը (ծնվ. 02.12.1982 թվականին) և Վարդան Վահանի Ստեփանյանը (ծնվ. 20.10.1990 թվականին) Վահան Ստեփանյանի և Լուսյա Մարյանյանի զավակներն են (հատող 1-ին, գ.թ. 19-21).

5) Երևանի «Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի թիվ 65, 66 տեղեկանքների համաձայն՝ Կարեն Ստեփանյանը 01.09.1988 թվականից մինչև 02.05.1994 թվականը, իսկ Նելսոն Ստեփանյանը 01.09.1989 թվականից մինչև 02.05.1994 թվականը սովորել են Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 միջնակարգ դպրոցում (հատող 1-ին, գ.թ. 22, 23).

6) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 03.08.2012 թվականի գրության համաձայն՝ Երևանի Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 32^ա հասցեում 2003 թվականի հունվար ամսից մինչև 2011 թվականի նոյեմբեր ամիսը բաժանորդ է հանդիսացել նաև Լուսյա Մարյանյանը։ Էլեկտրաէներգիայի վճարման անդորրագրերի համաձայն՝ նշված հասցեում, որպես բաժանորդ, Վահան Ստեփանյանը կատարել է վճարումներ (հատող 2-րդ, գ.թ. 113, հատող 1-ին, գ.թ. 36-42).

7) 23.04.2012 թվականի նոտարական կարգով տրված հայտարարությամբ Շուրա Սուգյանը հայտնել է, որ «ճանաչում է ամուսիններ Վահան Ստեփանյանին և Լուսյա Մարյանյանին, նրանք բնակվել են Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 32^ա տանը, ունեցել են նաև հողամաս։ Ինքն անձամբ է ներկա գտնվել առուվաճառքին, որի համար ստորագրում է։ Լուսյա Մարյանյանը մինչև ամուսնու մահը և մահվանից հետո տեր է կանգնել իրենց պատկանող սեփական գույքին» (հատող 1-ին, գ.թ. 10).

8) 25.04.2012 թվականի նոտարական կարգով տրված հայտարարությամբ Լիանա Քանքարյանը հայտնել է, որ ամուսիններ Վահան Ստեփանյանի և Լուսյա Մարյանյանի բացակայության ժամանակ նա իր մոր՝ Գոհարիկ Քանքարյանի հետ բնակվել է

Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 32^ա տանը: Չնայած այն բանին, որ Վահան Ստեփանյանը և Լուսյա Մարյանյանը բնակվում էին Ռուսաստանի Դաշնությունում՝ հաճախակի եկել և հոգ են տարել տան մասին, կատարել են ընթացիկ վերանորոգում, վերանորոգել են նաև սանհանգույցը (հատոր 1-ին, գ.թ. 11).

9) Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Շուրա Սուգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ հայցվորի ամուսինը 1983 թվականին առուվաճառքի պայմանագրով Ալեքսան Աճեմյանից գնել է վիճելի տունը, պայմանագիրն անձամբ կազմել է Ալեքսան Աճեմյանը: Հայտնել է նաև, որ տան գինը՝ 12.000 ռուբլի, իր ներկայությամբ պայմանագրի ստորագրման ժամանակ վճարվել է Ալեքսան Աճեմյանին: Նշել է, որ հայցվորն իր ընտանիքով 1983 թվականից մինչև 1994 թվականը բնակվել է վիճելի տանը, իսկ այնուհետև մեկնել Ռուսաստանի Դաշնություն: Հայցվորի ամուսինը մինչև մեկնելը տան բանալիները հանձնել է իրեն և հանձնարարել է հոգ տանել վիճելի անշարժ գույքի մասին (դատական նիստի արձանագրություն, հատոր 2-րդ, գ.թ. 149).

10) Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Լիանա Քանքարյանը ցուցմունքն է տվել այն մասին, որ 2006 թվականից մինչև 2011 թվականը վիճելի տանը բնակվել է վարձակալությամբ, տունն իրենց հանձնել է հայցվորի ամուսնու քույրը (դատական նիստի արձանագրություն, հատոր 2-րդ, գ.թ. 149).

11) 22.01.2002 թվականի մահվան վկայականի համաձայն՝ Ալեքսան Աճեմյանը մահացել է 21.01.2002 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 108).

12) Ալեքսան Աճեմյանի մահվանից հետո՝ 14.04.2003 թվականին, նրա կնոջը՝ Վալերիկ Սողոմոնյանին, Երևանի Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 32^ա հասցեում գտնվող տան 1/2 բաժնի նկատմամբ տրվել է սեփականության իրավունքի վկայագիր, իսկ Վալերիկ Սողոմոնյանին, Ալեքսան Աճեմյանի դուստրերին՝ Սոֆյա Աճեմյանին, Մարինե, Անահիտ և Սոնա Աճաբյաններին ու Օֆելյա Աջամյանին 14.04.2003 թվականին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր (հատոր 1-ին, գ.թ. 110 և 113).

13) 13.01.2011 թվականի մահվան վկայականի համաձայն՝ Վահան Ստեփանյանը մահացել է 06.01.2011 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 17).

14) 23.10.2011 թվականի մահվան վկայականի համաձայն՝ Օֆելյա Աջամյանը մահացել է 22.10.2011 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 109).

15) Օֆելյա Աջամյանի մահվանից հետո՝ 22.05.2012 թվականին, Օֆելյա Աջամյանի որդուն՝ Ալեքսան Գրիգորյանին, տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր (հատոր 1-ին, գ.թ. 111).

16) Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի 27.08.2003 թվականի վճռով բավարարվել է Վալերիկ Սողոմոնյանի դիմումը, և Լուսյա Մարյանյանը ճանաչվել է մահացած (հատոր 1-ին, գ.թ. 72).

17) Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 14.08.2012 թվականի վճռով Լուսյա Մարյանյանի դիմումը բավարարվել է, և վերացվել է Լուսյա Մարյանյանին մահացած ճանաչելու վերաբերյալ Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի 27.08.2003 թվականի վճիռը (հատոր 1-ին, գ.թ. 84-86):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ բարեխղճության և անընդմեջ տիրապետելու պայմանների դրսևորման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. Տիրապետումը պետք է լինի տասը տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. Տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (*յրեւ, Վոյոդյաւ և Միշա Նիկողոսյաններն ընդդեմ Սմանլել Սարիբեկյանի և մյուսների թիվ 3-1435/ՎԳ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պայմանների վերաբերյալ իր նախկին դիրքորոշումը, անդրադարձել է այդ պայմաններից բարեխղճության պայմանի գնահատման առանձնահատկություններին և արձանագրել է, որ նման իրավահարաբե-

րություններում առավել կարևորվում է ինչպես անշարժ գույքի փաստացի տիրապետողի վերաբերմունքը տիրապետվող գույքի նկատմամբ, այնպես էլ գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ:

Ըստ էության օրենքով նախատեսված տասը տարվա ժամանակահատվածն այն սահմանափակ ժամանակահատվածն է, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ գործողությունները կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ գույքը որպես սեփական տիրապետելու բարեղծության վրա, քանի որ այս իրավահարաբերության համար էական է անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը նման տիրապետման վերաբերյալ, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման առումով սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման իրավագործության իրականացումն ինքնին բացառում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչումը որևէ սուբյեկտի համար: Նման մեկնաբանությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից:

Անշարժ գույքի գրանցված սեփականության իրավունք ունեցող անձի վարքագիծը և վերաբերմունքն առանց օրենքի և պայմանագրի հիման վրա գույքը փաստացի տիրապետող անձի տիրապետման նկատմամբ էական է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի բովանդակության առումով գնահատական տալու համար, քանի որ հիշատակված հոդվածը որպես սեփականությունից հրաժարվելու հիմք կարևորում է ոչ միայն գրավոր փաստաթղթի առկայությունը, այլ նաև սեփականատիրոջ գործողությունները (անգործությունը):

Անշարժ գույքի գրանցված սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված ժամկետի ընթացքում՝ մինչև գույքի փաստացի տիրապետողի կողմից ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնելը: Այս առումով պետք է նշել, որ ժառանգման կարգով իրականացված իրավահաջորդության դեպքում գույքի նկատմամբ ժառանգների սեփականության իրավունքի ծագումն ինքնընտանիքային չի վերացնում անշարժ գույքի փաստացի տիրապետողի մոտ առկա տիրապետման բարեխղճությունը:

Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման համար գույքն այլ անձի անցնելու ձևերը, որոնք էլ պայմանավորում են ձեռք բերողի մոտ բարեխղճության առկայությունը կամ բացակայությունը, տարբեր են: Ինչպես կամահայտնության գրավոր կամ բանավոր ձևերը, այնպես էլ անձի գործողությունները և հավասարապես անգործությունը կարող են վկայել տիրապետման բարեխղճության մասին (*յուէս, Օֆիկ Ենոքյանն ընդդեմ Հովակիմ Կարոյանի և Սվեդլանա Կիրակոսյանի թիվ ԵՇԴ/0987/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով իր դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններից՝ գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու նախապայմանի գնահատման առանձնահատկություններին:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար կարևորվում են տիրապետման ժամկետը, այն է՝ տասը տարի, և այդ ժամկետի ընթացքում տիրապետման անընդմեջ լինելու հանգամանքը, այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի:

Ընդ որում, տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ՝ գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու նախապայմանին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի բովանդակության առումով գնահատական տալու համար էական է պարզել անշարժ գույքը տիրապետողի վարքագիծը և վերաբերմունքը, տիրապետվող գույքի նպատակային նշանակությունը, որակական և այլ հատկանիշները, տիրապետման նպատակն ու առանձնահատկությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը չի նախատեսել, թե ինչ եղանակով կարող է իրականացվել գույքի տիրապետումը՝ յուրաքանչյուր դեպքում այդ փաստի գնահատումը թողնելով իրավակիրառողի վրա: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքի տիրապետման փաստի մասին կարող է վկայել ինչպես գույքի օգտագործումը, այնպես էլ դրա կառավարմանը մասնակցելը, այդ գույքի մասին հոգ տանելը կամ ցանկացած այլ եղանակ, որը հավաստում է գույքը տիրապետողի տնտեսական իշխանության ներքո գտնվելու փաստը:

Ընդ որում, քանի որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ պայման է գույքը որպես սեփականը տիրապետելու նախապայմանը, հետևաբար գույքի տիրապետումը կարող է արտահայտվել նաև գույքն այլ անձանց օգտագործմանը հանձնելով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բնակելի տան դեպքում տիրապետումը կարող է արտահայտվել ինչպես գույքը փաստացի զբաղեցնելու (այնտեղ բնակվելու), այնպես էլ այն իր հայեցողությամբ այլ ձևով տիրապետելու միջոցով, հետևաբար գույքն իր հայեցողությամբ տիրապետելու օրինակ կարող է հանդիսանալ նաև գույքը բացահայտ տիրապետողի կողմից այն իր հայեցողությամբ այլ անձի ժամանակավոր պահպանությանը կամ օգտագործմանը հանձնելը: Ընդ որում, այս դեպքում այլ անձի ժամանակավոր պահպանությանը կամ օգտագործմանը հանձնելը հիմք չէ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ տիրապետման տասը տարվա անընդմեջ լինելու նախապայմանի ընդհատման համար:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ թույլատրելի կամ վերաբերելի ապացույց, որով հիմնավորվում է, որ վիճելի անշարժ գույքը հայցվորի և նրա ամուսնու տիրապետմանն է անցել օրինական հիմքով, հետևաբար գտել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ բարեխղճության նախապայմանը բացակայում է: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ հայցվորի կողմից չի հիմնավորվել նաև վիճելի անշարժ գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու փաստը՝ պատճառաբանելով, որ գործում առկա ապացույցներով հիմնավորվում է, որ հայցվորը 1992 թվականից բացակայել է նշված հասցեից:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին, ուստի սույն որոշմամբ այդ հարցին կրկին չի անդրադառնում (*լրեն, Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեմիան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նորարարական գրասենյակի թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Լուսյա Մարյանյանի կողմից չի հիմնավորվել վիճելի անշարժ գույքի ձեռքբերման բարելավությունը, որպիսի վավերության մասին բացակայությունն ինքնին բավարար է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու մասին պահանջը մերժելու վերաբերյալ Դատարանի դիրքորոշման իրավաչափությունը փաստելու համար, գնահատման առարկա չի դարձրել սույն գործում առկա ապացույցները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի կողմից գնահատման առարկա չի դարձվել 03.03.1983 թվականին կազմված ներքին առուվաճառքի պայմանագիրը, որը հիմք է հանդիսացել Լուսյա Մարյանյանի և նրա իրավանախորդի մոտ այն համոզմունքի ձևավորմանը, որ վիճելի անշարժ գույքն իրենց տիրապետմանն է անցնում օրինական հիմքով: Նման համոզմունքն ամրապնդվել է նաև գույքի նախկին սեփականատիրոջ հետագա գործողություններով (անգործությամբ)՝ վերջինիս կողմից վիճելի անշարժ գույքն ազատելը, այն Լուսյա Մարյանյանի իրավանախորդի փաստացի տիրապետմանը փոխանցելը, 10 տարուց ավելի, մինչև իր մահը, նրանց տիրապետմանը որևէ կերպ չխոչընդոտելը, որոնք կարող էին ակնհայտ վկայել գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից սեփականատիրոջ մեկուսացման մասին:

Ավելին, սույն գործի փաստերը, մասնավորապես, Լուսյա Մարյանյանի իրավանախորդի և վիճելի անշարժ գույքի նախկին սեփականատիրոջ միջև 1983 թվականին կնքված ներքին առուվաճառքի պայմանագիրը, այդ պայմանագրի կնքմանը որպես վկա մասնակցած Շուրա Սուգյանի, ինչպես նաև մյուս հարևանների գրավոր հայտարարությունները, Լուսյա Մարյանյանի և նրա իրավանախորդի ՌԴ-ում գտնվելու ժամանակ վերջիններիս համաձայնությամբ վիճելի անշարժ գույքը զբաղեցրած Լիանա Քանքանյանի գրավոր հայտարարություններն ու դատարանում տված ցուցմունքները, այդ հասցեում որպես բաժանորդ Լուսյա Մարյանյանի կողմից էլեկտրաէներգիայի դիմաց վճարումներ կատարելու, Լուսյա Մարյանյանի և նրա իրավանախորդի կողմից վիճելի անշարժ գույքը 1983 թվականից բացահայտ որպես սեփական տիրապետելուն պատասխանողների, իսկ դրանից առաջ նաև վերջիններիս իրավանախորդի կողմից չխոչընդոտելու փաստը ցույց են տալիս, որ վիճելի անշարժ գույքը Լուսյա Մարյանյանի և նրա ամուսնու փաստացի տիրապետմանն է անցել նախկին սեփականատիրոջ կամքով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ գոնե սույն գործով կողմերի միջև ծագած վեճին նախորդած վերջին 10 տարիների ընթացքում վիճելի անշարժ գույքի տիրապետումը որևէ կերպ ընդհատվել է, կամ Լուսյա Մարյանյանը և նրա ամուսինը հրաժարվել են գույքի հետագա տիրապետու-

մից, կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններն ուղղվել են գույքը վերադարձնելուն:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքը մերժելու Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանություններին, որ դատարանի 2003 թվականի վճռով Լուսյա Մարյանյանը ճանաչվել է մահացած, սկսած 1992 թվականից՝ վերջինս բացակայել է վիճելի հասցեից, ապա հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված վերլուծությունները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները չէին կարող վիճելի անշարժ գույքն անընդմեջ չտիրապետելու փաստը հաստատված համարելու հիմք հանդիսանալ, քանի որ, չնայած նշված տարվանից վիճելի հասցեից բացակայելու հանգամանքին, Լուսյա Մարյանյանն իր ամուսնու հետ շարունակել են այն տիրապետել՝ գույքը հանձնելով այլ անձի օգտագործմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.09.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ-4/0280/02/12
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ-4/0280/02/12

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

Դատավորներ՝ Ա. Խառատյան

Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լուարա Դավթյանի ներկայացուցիչ Սիրուշ Աղվանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լուարա Դավթյանի ընդդեմ Արսեն Մակարյանի, Լիաննա Ղազարյանի և Ալլա Մակարյանի՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լուարա Դավթյանը պահանջել է հրապարակային սակարկություններով վաճառել Արսեն Մակարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ ստացված գումարը բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև և Արսեն Մակարյանի բաժնեմասի գումարն ուղղել իր նկատմամբ ունեցած պարտավորության մարմանը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.03.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2013 թվականի որոշմամբ Լիաննա Ղազարյանի, Արսեն և Ալլա Մակարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.03.2013 թվականի վճիռը

բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Երիցյան) (այսուհետ՝ Դատարան) 13.11.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.05.2014 թվականի որոշմամբ Արսեն, Ալլա Մակարյանների և Լիաննա Ղազարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 13.11.2013 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լուսրա Դավթյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, մասնավորապես՝ պատշաճ գնահատման չի արժանացրել հայցադիմումին կից ներկայացված գումարի բռնագանձման պահանջի բավարարման մասին վճիռը, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) որոշումները, համասեփականատերերին հայցվորի կողմից ներկայացված՝ անշարժ գույքը գնելու գրավոր առաջարկը, փորձագետի եզրակացությունն ընդհանուր գույքից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության և ընդհանուր գույքի շուկայական արժեքի վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը, ամբողջական վերլուծության չենթարկելով գործում առկա փաստերը, հաշվի չի առել, որ ընդհանուր գույքի բոլոր համասեփականատերերը տեղեկացված են եղել իրենց իրավունքներին վերաբերող դատավարության մասին, նրանց մի մասն ընդհանուր գույքից բաժնեմաս բնեղենով չի պահանջել և համաձայն է եղել Դատարանի ցանկացած որոշման հետ:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը վճռի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործով չի պարզվել՝ պարտապանն այլ գույք ունի, թե ոչ՝ անտեսելով գործում առկա Ծառայության որոշումը, համաձայն որի՝ այլ գույք չի հայտնաբերվել, բացառությամբ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան 23-րդ փողոցի թիվ 76 բնակարանից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.05.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 13.11.2013 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2011 թվականի թիվ ԼԴ4/0174/02/11 վճռով Լուսրա Դավթյանի հայցն ընդդեմ Արսեն Մակարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է (հատոր 1-ին, գ.թ. 7-8).

2) Ծառայության կողմից 09.10.2012 թվականի թիվ 11405 գրությամբ պարտատիրոջը՝ Լուարա Դավթյանին, հայտնվել է, որ կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ Արսեն Մակարյանը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան 23-րդ հասցեում գտնվող բնակելի տան, տնամերձ հողամասի, մառանի, լոգարանի, զուգարանի և կաթսայատան համասեփականատերը, և առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով դիմել դատարան՝ վերջինիս բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու նպատակով (հատոր 1-ին, գ.թ. 21)։

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից 28.12.2005 թվականին տրված թիվ 1164797 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան թիվ 76 հասցեի բնակելի տան (նախկին հասցեն եղել է ՀՀ Լոռու մարզ, քաղաք Սպիտակ, Մյասնիկյան թիվ 23) նկատմամբ գրանցված է Արսեն Մակարյանի, Լիաննա Ղազարյանի և Ալլա Մակարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 40-41)։

4) «Ունիկո գրուպ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2012 թվականին տրված մասնագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Մյասնիկյան թիվ 76 հասցեում գտնվող բնակելի տնից Արսեն Մակարյանի բաժինը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել՝ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու և առանց լրացուցիչ շինարարական աշխատանքներ իրականացնելու (հատոր 1-ին, գ.թ. 26-31)։

5) Լուարա Դավթյանի գրությունների համաձայն՝ վերջինս ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից՝ Լիաննա Ղազարյանից և Ալլա Մակարյանից, պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի՝ Արսեն Մակարյանի բաժինը։ Նշված գրությունները հասցեատերերի կողմից չեն ստացվել (հատոր 1-ին, գ.թ. 46-49)։

6) Դատաքնության ընթացքում ընդհանուր սեփականության մասնակիցներ Լիաննա Ղազարյանը և Ալլա Մակարյանը հայտնել են Դատարանին, որ Արսեն Մակարյանի բաժնեմասը գնելու հնարավորություն չունեն (հատոր 2-րդ, գ.թ. 84-89, 91)։

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար։

Սույն որոշման շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. *ընդհանուր գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու հայցապահանջով* պարտապանի մոտ այլ գույքի առկայության փաստը վիճելի լինելու դեպքում, ո՞վ պետք է կրի դրա բացասական հետևանքները։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար։

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության

մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը: Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ անսպասելի հարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պարտատիրոջ պահանջի իրավունքը ծագում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված այն դեպքի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակից պարտապանի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար: Մասն իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքների առավելագույն պաշտպանությունն իրենց հետ ընդհանուր գույքում բաժին ունեցող պարտապանի ունեցած պարտավորությունների կատարման գործընթացում:

Օրենսդիրը, ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների համար իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ սահմանելով հանդերձ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում, այն է՝ ընդհանուր գույքից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության, ինչպես նաև ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից պարտապանի բաժինը գնելուց հրաժարվելու պարագայում, նախատեսել է այդ իրավունքների սահմանափակման հնարավորություն, որի նպատակն է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների և պարտատիրոջ իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելը: Մասն իրավիճակում օրենսդիրը պարտատիրոջ իրավունքների պաշտպանության միակ հնարավոր միջոց է համարել պարտատիրոջ իրավունքը՝ պահանջելու ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը հրապարակային սակարկություններով վաճառել՝ դրանից ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաշխելով և բռնագանձումը պարտապանի բաժին գումարի վրա տարածելով:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն իրավական հարցին, թե երբ է կարելի պարտապանին ընդհանուր սեփականու-

թյան իրավունքով պատկանող գույքը պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով վաճառել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,

2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,

3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը (*յրե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Դերենիկ Մարգարյանի և մյուսների թիվ ԳԴ-4/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վկայակոչված դատավարական նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար Դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*յրե՛ս, Էդգար Մարկոսյանը և Ջարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱԵԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վկայակոչված իրավադրույթների և դրանց մեկնաբանմանն ուղղված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով պարտապանի մոտ այլ գույքի առկայության փաստն ապացուցելու պարտականության բաշխման խնդրին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ պարտատերն ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնելու իր իրավունքը կարող է իրացնել միայն պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում, հետևաբար և պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության փաստն ապացուցելու պարտականությունը կրում է պարտատերը: Միաժամանակ այն դեպքում, երբ պարտապանն առարկում է նշված փաստի դեմ՝ վկայակոչելով այլ գույքի առկայությունը, վերջինս է կրում այլ գույքի առկայությունն

ապացուցելու պարտականությունը, հետևաբար նաև այդ փաստի վիճելի լինելու դեպքում՝ դրանից բխող բացասական հետևանքները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2011 թվականի թիվ ԼԴ-4/0174/02/11 վճռով Լուարա Դավթյանի հայցն ընդդեմ Արսեն Մակարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է: Դատարանի կողմից տրված կատարողական թերթը ներկայացվել է Ծառայություն, սակայն վճռի պահանջներն ամբողջությամբ կատարել հնարավոր չի եղել՝ պարտապան Արսեն Մակարյանի մոտ այլ գույքի անբավարարության հիմքով, և Լուարա Դավթյանին առաջարկվել է ընդհանուր գույքում՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան 23-րդ հասցեում գտնվող բնակելի տան, Արսեն Մակարյանի բաժինն առանձնացնելու վերաբերյալ պահանջ ներկայացնել դատարան: Լուարա Դավթյանը դիմել է դատարան՝ պահանջելով ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Մյասնիկյան 23-րդ հասցեում գտնվող բնակելի տունը հրապարակային սակարկություններով վաճառել՝ ստացված գումարը բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժինների համաչափ, Արսեն Մակարյանի բաժնեմասին համաչափ գումարն ուղղել իր նկատմամբ ունեցած պարտավորության կատարմանը:

ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից 28.12.2005 թվականին տրված թիվ 1164797 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան թիվ 76 հասցեի բնակելի տան նկատմամբ գրանցված է Արսեն Մակարյանի, Լիաննա Ղազարյանի և Ալլա Մակարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը: Միաժամանակ «Ունիկո գրուպ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2012 թվականին տրված մասնագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան թիվ 76 հասցեում գտնվող բնակելի տնից Արսեն Մակարյանի բաժինը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել՝ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու և առանց լրացուցիչ շինարարական աշխատանքներ իրականացնելու:

Սույն գործով Դատարանը, բավարարելով հայցապահանջը, հաստատված է համարել, որ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2011 թվականի վճռով Արսեն Մակարյանից հոգուտ Լուարա Դավթյանի ենթակա է բռնագանձման 2.050.000 ՀՀ դրամ, որի վերաբերյալ հարուցվել է թիվ 06/1453/11 կատարողական վարույթը: Միաժամանակ Դատարանը, հաստատված համարելով, որ Արսեն Մակարյանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 76 հասցեի բնակելի տունը, ինչպես նաև այն, որ Արսեն Մակարյանի բաժինը տեխնիկապես հնարավոր չէ առանձնացնել՝ առանց գույքին վնաս պատճառելու, գտել է, որ նշված գույքը պետք է հրապարակային սակարկությունների միջոցով վաճառել և գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցների բաժիններին համաչափ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով, պատճառաբանել է, որ սույն գործով Դատարանի առաջին և հիմնական խնդիրն էր պարզել՝ արդյոք պատասխանողները բացի ընդհանուր գույքից այլ գույք ունեն, թե՛ ոչ: Մինչդեռ, Դատարանը գործի քննության ընթացքում չի կատարել գործի արդյունավետ քննությունն իրականացնելու հետ կապված գործողություններ: Մասնավորապես՝ Դատարանը զրկված չի եղել գործը նախնական դատական նիստով անցկացնելու, կողմերի միջև ապացուցման բեռը բաշխելու, վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավունքը որոշելու հնարավորությունից: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը սույն հարաբերությունների նկատմամբ կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ

հողվածի դրույթները՝ առանց պարզելու դրա դիսպոզիցիայում նշված հանգամանքների առկայությունը, որի դեպքում միայն հնարավոր կլիներ կիրառել վերը նշված հողվածով նախատեսված իրավական հետևանքները: Այսինքն՝ գործի քննության արդյունքում ի վերջո չի պարզվել, թե պատասխանողները բացի վիճելի գույքից այլ գույք կամ դրամական միջոցներ ունեցել են, թե՛ ոչ:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Հայցվոր Լուարա Դավթյանը, դիմելով դատարան, հայցադիմումին կից ներկայացրել է Ծառայության 09.10.2012 թվականի թիվ 11405 գրությունը, որով վերջինիս հայտնվել է, որ կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ Արսեն Մակարյանը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Մյասնիկյան 23-րդ հասցեում գտնվող բնակելի տան, տնամերձ հողամասի, մառանի, լոգարանի, զուգարանի և կաթսայատան համասեփականատերը, և առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով դիմել դատարան՝ վերջինիս բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու նպատակով: Գործի քննության ընթացքում պատասխանողների կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր պատասխանող Արսեն Մակարյանի մոտ այլ գույքի առկայության փաստը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լուարա Դավթյանը, իրացնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով իրեն վերապահված իրավունքը, պատշաճ կերպով իրականացրել է օրենսդրի կողմից իր վրա դրված ապացուցման պարտականությունը, այն է՝ ներկայացրել է թույլատրելի և վերաբերելի ապացույց, որը բավարար է հաստատված համարելու պարտապանի մոտ այլ գույքի բացակայության փաստը:

Մինչդեռ պատասխանող Արսեն Մակարյանը, կրելով այլ գույքի առկայության փաստն ապացուցելու պարտականությունը, գործի քննության ընթացքում ի հավաստումն այդ հանգամանքի՝ որևէ ապացույց չի ներկայացրել, հետևաբար և վերջինս էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով պետք է կրի դրանից բխող բացասական հետևանքները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի հիմնավորվածության և այդ փաստի ապացուցման բեռի բաշխման հարցերում, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հիմնավորվում է նաև պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մյուս պայմանների առկայությունը: Մասնավորապես, գործում առկա «Ունիկո գրուպ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2012 թվականին տրված մասնագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Մյասնիկյան թիվ 76 հասցեում գտնվող բնակելի տնից Արսեն Մակարյանի բաժինը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել՝ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու: Ինչ վերաբերում է պարտատիրոջ կողմից ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներին պարտապանի բաժինը գնելու առաջարկ ներկայացնելուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Լիաննա Ղազարյանը և Ալլա Մակարյանը չեն ստացել Լուարա Դավթյանի գրավոր առաջարկը՝ Արսեն Մակարյանի բաժինը գնելու վերաբերյալ, սակայն դատաքննության ընթացքում արտահայտել են իրենց դիրքորոշումը նման առաջարկի վերաբերյալ՝ հայտնելով, որ բավարար միջոցներ չունեն պարտապանի բաժնեմասը գնելու համար:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը քեկանելու համար:

Միաժամանակ, Վճարել դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճարել դատարանի լիազորությունը, հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական

դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.11.2013 թվականի վճռին:

2. Արսեն Մակարյանից, Լիաննա Ղազարյանից և Ալլա Մակարյանից համապարտությամբ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.07.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1418/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1418/02/12
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը
մասնակցությանը դատավորները*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՏՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Առլեթ Ավաքյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Մամվել Մելիքյանի ընդդեմ Առլեթ Ավաքյանի՝ ընդհանուր գույքը բաժանելու և գումար
բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մամվել Մելիքյանը պահանջել է 1/2 մասով բաժանել համատեղ
ամուսնության ընթացքում ձեռք բերված 2002 թվականի արտադրության 20 ՕՏ 657
պետհամարանիշի «ԼԵ-ԶՍՈՒՄ RX 300» մակնիշի ավտոմեքենան, Երևանի Մաշտոցի
պողոտայի 20-րդ շենքի թիվ 9 հասցեի բնակարանում գտնվող շարժական գույքը կամ
նշված գույքի շուկայական արժեքը, Առլեթ Ավաքյանից հոգուտ իրեն բռնագանձել Երևանի
Մաշտոցի պողոտայի 20-րդ շենքի թիվ 9 բնակարանի արժեքի կեսը՝ 24.700.000 ՀՀ
դրամ, և նշված գումարն ապօրինի պահելու ու վերադարձնելուց խուսափելու համար այդ
գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատաս-
խան վճարման եկթակա տոկոսները՝ սկսած 28.01.2010 թվականից մինչև պարտավորու-
թյան փաստացի կատարման օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի (դատավոր Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.03.2013 թվականի վճռով

հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Առլեթ Ավաքյանից հօգուտ Սամվել Մելիքյանի բռնագանձել 24.700.000 ՀՀ դրամ՝ որպես 25.01.2010 թվականին կնքված «Անշարժ գույքի առուվաճառքի» պայմանագրով Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 20-րդ շենքի թիվ 9 բնակարանի վաճառքի արդյունքում ստացված գումարի 1/2 բաժնային սեփականություն, և այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 24.11.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը. հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.07.2013 թվականի որոշմամբ Սամվել Մելիքյանի և Առլեթ Ավաքյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 22.03.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Առլեթ Ավաքյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սամվել Մելիքյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ և 201-րդ հոդվածները, խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 48-րդ, 53-րդ և 220-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, որի արդյունքում անտեսել է, որ ամուսինների միջև ամուսնության պայմանագիր չի կնքվել, բացակայում է համատեղ սեփականություն հանդիսացող գույքը տիրապետելու և օգտագործելու վերաբերյալ համաձայնությունը: Նման պայմաններում առարկայագուրկ և անհիմն է բնակարանի վաճառքից առաջացած գումարի կեսը բռնագանձելու մասին պահանջը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նշված գումարը տիրապետվել և օգտագործվել է դրա համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսինների համաձայնությամբ, համատեղ: Հակառակը հիմնավորող որևէ ապացույց դատարան չի ներկայացվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 11.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ բավարարված մասով հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ վերը նշված բնակարանի վաճառքից առաջացած գումարը համատեղ ծախսելու և առկա ֆինանսական խնդիրներն այդ գումարով լուծելու փաստերը վկայակոչել է Առլեթ Ավաքյանը, ուստի նշված փաստերի ապացուցման պարտականությունը պետք է կրեր վերջինս: Առլեթ Ավաքյանն այդ փաստերի վերաբերյալ ապացույց դատարան չի ներկայացրել:

Բնակարանի առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո Առլեթ Ավաքյանը երկու տարուց ավելի ժամանակով բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, հետևաբար այդ գումարը չէր կարող համատեղ ծախսվել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սամվել Մելիքյանը և Առլեթ Ավաքյանն ամուսնացել են 20.09.1994 թվականին (1-ին հատոր, գ.թ. 5).

2) 13.11.2001 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա Առլեթ Ավաքյանը ձեռք է բերել Երևանի Մաշտոցի պողոտայի 20-րդ շենքի թիվ 9 բնակարանը: Նշված պայմանագրից բխող իրավունքը գրանցվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, որի հիման վրա Առլեթ Ավաքյանին 24.12.2001 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 676517 վկայականը (1-ին հատոր, գ.թ. 6,7).

3) 25.01.2010 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա Առլեթ Ավաքյանը վերը նշված բնակարանը 49.400.000 ՀՀ դրամով օտարել է Նարինե Հովհաննիսյանին (2-րդ հատոր, գ.թ. 15).

4) Սամվել Մելիքյանը և Առլեթ Ավաքյանն ամուսնալուծվել են 16.09.2010 թվականին, որի վերաբերյալ նույն օրը Երևանի Նոր Նորքի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնում կատարվել է թիվ 173 գրանցումը (1-ին հատոր, գ.թ. 8):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված են հետևյալ իրավական հարցերը.

1) արդյո՞ք ամուսիններից մեկի կողմից նրանց ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքն օտարելու արդյունքում ստացված դրամական միջոցների նկատմամբ մյուս ամուսինն ունի ընդհանուր սեփականության իրավունք, և

2) արդյո՞ք այդ դրամական միջոցների՝ որպես ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքի, բաժանման հայցով ենթակա է ապացուցման այդ դրամական միջոցների առկայության փաստը:

1) ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում՝ ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում

ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, մինևույնն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը (*Կրե՛ս, Ռաֆայել Աբազյանը և Մևծիկ Երիցյանն ընդդեմ Ռուբեն Աբազյանի և «Կենտրոն» նոտարական փարածքի նոտարի թիվ 3-415(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը*):

Վերը նշված հողվածի իմաստով բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտագործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը (*Կրե՛ս, Ռուզաննա Ծարուրյանն ընդդեմ Գևորգ Սաղումյանի և այլոց թիվ ԵԱԲԴ/2304/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2006 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումն ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսանալու և այդ հարցում առկա բացառությունների վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, նախատեսելով «գույք» հավաքական եզրույթը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանափակումներից բացի, այլ բացառություն չի նախատեսել, հետևաբար ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում կարող են ներառվել նաև դրամական միջոցները:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտ է գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները:

Դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, մի դեպքում դրամը կարող է հանդիսանալ քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն, մեկ այլ դեպքում՝ որպես այդ հարաբերությունների համարժեքային (էկվիվալենտային) օբյեկտ:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունը, գտնում է, որ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքային զանգվածի կազմում դրամական միջոցները կարող են ներգրավվել՝

ուղղակիորեն, օրինակ՝ որպես ամուսիններից մեկի աշխատավարձ, հոնորար, շահաբաժին կամ այլ եկամուտ:

անուղղակիորեն, որպես այդ գույքային զանգվածի կազմի մեջ մտնող մեկ այլ գույքի համարժեք, օրինակ՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի վաճառքից ստացված դրամական միջոցները:

Վերջինիս պարագայում, ըստ էության, տեղի է ունենում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող մի գույքի փոխակերպում մեկ այլ գույքով:

2) ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի «գ»

կետի համաձայն՝ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը:

Վկայակոչված հողվածի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի հետ փոխակապակցված վերլուծությունից հետևում է, որ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը կարող է բաժանվել ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծվելուց հետո:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում ամուսիններից որևէ մեկի կողմից ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի բաժանման պահանջ ներկայացվելիս որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ պետք է հիմնավորվի բաժանման ենթակա գույքի առկայությունը, այսինքն՝ այն, որ բաժանման ենթակա գույքն օբյեկտիվ իրականությունում գոյություն ունի:

Ընդ որում, վերոյյալ փաստի ապացուցման բեռը և դրանից բխող բացասական հետևանքները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի համաձայն, կրում է այդ փաստը վկայակոչող կողմը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով վերոնշյալ փաստը պարզելիս դատարանները պետք է հաշվի առնեն նաև բաժանման ենթակա գույքի տեսակը և առանձնահատկությունները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սամվել Մելիքյանն Առլեթ Ավաքյանի հետ ամուսնացել է 20.09.1994 թվականին: Համատեղ ամուսնության ընթացքում՝ 13.11.2001 թվականին, ամուսիններն Առլեթ Ավաքյանի անվամբ ձեռք են բերել Երևանի Մաշտոցի պողոտայի 20-րդ շենքի թիվ 9 բնակարանը: Նշված բնակարանն Առլեթ Ավաքյանը Սամվել Մելիքյանի հետ համատեղ ամուսնության ընթացքում՝ 25.01.2010 թվականին, օտարել է Նարինե Հովհաննիսյանին՝ դրա դիմաց ստանալով 49.400.000 ՀՀ դրամ: Սամվել Մելիքյանը և Առլեթ Ավաքյանն ամուսնալուծվել են 16.09.2010 թվականին: Սույն գործով Սամվել Մելիքյանը ներկայացրել է ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող բնակարանի վաճառքից ստացված վերոնշյալ դրամական միջոցները բաժանելու պահանջ:

Դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքները, որ վերը նշված բնակարանը հանդիսացել է Սամվել Մելիքյանի և Առլեթ Ավաքյանի ընդհանուր համատեղ սեփականությունը, ուստի և այդ բնակարանի վաճառքի արդյունքում ստացված գումարի կեսի նկատմամբ Սամվել Մելիքյանն ունի բաժնային սեփականության իրավունք, գտել է, որ 24.700.000 ՀՀ դրամը բռնագանձելու պահանջի մասով Սամվել Մելիքյանի հայցը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետից և ենթակա է բավարարման:

Իր հերթին Վերաքննիչ դատարանը, նշելով, որ Դատարանը գործում առկա բոլոր ապացույցները հետազոտել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ու դրանք գնահատել է պատշաճ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ և 201-րդ հոդվածների խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոք բերած անձանց փաստարկներն անհիմն են, գտել է, որ Դատարանը կայացրել է օրինական և հիմնավորված վճիռ:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Սույն գործով ներկայացվել է ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող բնակարանի վաճառքից ստացված դրամական միջոցները բաժանելու պահանջ, որպիսի պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ենթակա են պարզման

հետևյալ հանգամանքները.

1) երբ է օտարվել այդ բնակարանը՝ համատեղ ամուսնության ընթացքում, թե դրանից հետո.

2) ու՞մ կողմից է այն օտարվել.

3) ո՞վ է ստացել դրա օտարումից առաջացած դրամական միջոցները.

4) առկա են, արդյո՞ք, այդ դրամական միջոցները, ինչ չափով և ինչ եղանակով (կանխիկ, թե՛ անկանխիկ):

Գործում առկա ապացույցներով հիմնավորվում է այն փաստը, որ Սամվել Մելիքյանին և Առլեթ Ավաքյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանն օտարվել է համատեղ ամուսնության ընթացքում, առուվաճառքի պայմանագիրը կնքվել է Առլեթ Ավաքյանի կողմից, գույքի օտարումից ստացված դրամական միջոցները, որոնք վերագրյալ մեկնաբանությունների ուժով հանդիսացել են կողմերի ընդհանուր համատեղ սեփականությունը, ստացել է Առլեթ Ավաքյանը, ով դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանով հայտնել է, որ նշված դրամական միջոցները ծախսվել են համատեղ ամուսնական կյանքի ընթացքում՝ ընտանիքի կարիքները հոգալու համար (հատոր 3-րդ, գ.թ. 51): Սամվել Մելիքյանը որևէ ապացույց չի ներկայացրել դատարանին, որով կհիմնավորեր իր և Առլեթ Ավաքյանի համատեղ սեփականությունը հանդիսացող բնակարանի վաճառքից ստացված դրամական միջոցների՝ վեճի լուծման պահին առկայության փաստը: Ավելին, վերջինս թե՛ դատարան ներկայացված հայցադիմումով (հատոր 1-ին, գ.թ. 4), և թե՛ գործի քննության ընթացքում հայտնել է (հիմք՝ դատական նիստերի արձանագրությունների կրիչը, հատոր 3-րդ, գ.թ. 99), որ վեճի առարկա դրամական միջոցները ծախսվել են պատասխանողի կողմից, այսինքն՝ գոյություն չունեն:

Վկայակոչված փաստերը համադրելով և գնահատելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Սամվել Մելիքյանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով չի ապացուցել վեճի առարկա գույքի, այն է՝ դրամական միջոցների՝ այդ վեճի քննության պահին առկայության փաստը, հետևաբար վերջինիս պահանջի բավարարումը ստորադաս դատարանների կողմից անհիմն է:

Ելնելով վերագրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակի բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի

տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2013 թվականի որոշման՝ Առլեթ Ավաքյանի վերաքննիչ բողոքը մերժելու և Առլեթ Ավաքյանից հոգուտ պետական բյուջեի 741.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված պետական տուրքի գումար, բռնագանձելու մասերը և այդ մասերով այն փոփոխել: Սամվել Մելիքյանի հայցն ընդդեմ Առլեթ Ավաքյանի՝ Երևանի Մաշտոցի պողոտայի 20-րդ շենքի թիվ 9 բնակարանի արժեքի կեսը՝ 24.700.000 ՀՀ դրամ, և նշված գումարն ապօրինի պահելու ու վերադարձնելուց խուսափելու համար այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 28.01.2010 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը բռնագանձելու պահանջի մասին, մերժել:

2. Սամվել Մելիքյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 741.000 ՀՀ դրամ և 24.700.000 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 24.11.2012 թվականից մինչև 08.05.2014 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսների 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից, գումար՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.11.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք, 741.000 ՀՀ դրամ և 24.700.000 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 24.11.2012 թվականից մինչև 11.07.2013 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսների 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք, 494.000 ՀՀ դրամ և 24.700.000 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 28.01.2010 թվականից մինչև 22.03.2013 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսների 2 տոկոսի չափով գումար՝ որպես հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/1628/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1628/02/11
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատիկյան
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գագիկ Սիսակունու վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.10.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Գագիկ Սիսակունու հայցի ընդդեմ Սարգիս, Տիգրան և Հայկ Գարուկյանների, Մարիամ Համբարյանի, Աննա Մասունյանի, երրորդ անձինք Ամալյա, Արմեն Քոչարյանների, Լիլի Բերգի (Լիլիթ Քոչարյան)՝ ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջի մասին, ինչպես նաև Սարգիս Գարուկյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Գագիկ Սիսակունու, Ամալյա, Արմեն Քոչարյանների, Լիլի Բերգի՝ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Սիսակունին պահանջել է Սարգիս Գարուկյանին և նրա ընտանիքի անդամներին պարտավորեցնել դադարեցնել Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանի ապօրինի տիրապետումը, այն է՝ ազատել բնակարանը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սարգիս Գարուկյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանի նկատմամբ:

27.02.2013 թվականի դիմումով Սարգիս Գարուկյանը հրաժարվել է հակընդդեմ հայցից:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ն. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 31.05.2013 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Գագիկ Միսակունին վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 31.05.2013 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասի դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.10.2013 թվականի որոշմամբ Գագիկ Միսակունու վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 31.05.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Միսակունին:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սարգիս Գարուկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 198-րդ, 274-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Գագիկ Միսակունուն համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանը Սարգիս Գարուկյանի և նրա ընտանիքի անդամների կողմից տիրապետվում և օգտագործվում է ապօրինի, այսինքն՝ վերջիններիս տիրապետումը և օգտագործումը հիմնված չէ ինչպես օրենքի կամ պայմանագրի, այնպես էլ սեփականատիրոջ՝ Գագիկ Միսակունու համաձայնության հիման վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և օգտագործվում է բոլոր մասնակիցների կողմից՝ փոխադարձ համաձայնությամբ, հետևաբար ընդհանուր համատեղ սեփականատերերից մի քանիսի բանավոր թույլտվությամբ այլ անձանց կողմից ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելը կամ օգտագործելը դեռևս հիմք չէ այդ գույքի տիրապետումն օրինական համարելու համար: Ավելին, Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ վիճելի բնակարանի համասեփականատերերի և Սարգիս Գարուկյանի հետ նշված բնակարանը տիրապետելու և օգտագործելու մասին պայմանագիր չի կնքվել, այնուամենայնիվ՝ Սարգիս Գարուկյանի և նրա ընտանիքի անդամների կողմից նշված բնակարանի տիրապետումը և օգտագործումը համարել է օրինական:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ սույն վեճը վերաբերում է գույքն ապօրինի տիրապետողներից հետ պահանջելուն և որևէ կապ չունի բնակարանի մյուս սեփականատերերի հետ, առավել ևս, բնակարանից Գագիկ Միսակունու բաժինն առանձնացնելու կամ օգտագործման կարգ սահմանելու հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.10.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Գագիկ Միսակունու հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտն օրինական է և հիմնավոր, ավելին, Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանը Սարգիս Գարուկյանի և նրա ընտանիքի անդամների կողմից տիրապետվում և օգտագործվում է նշված բնակարանի սեփականատերերի համաձայնությամբ, հետևաբար բերված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 22.09.1994 թվականի անունը, հայրանունը, ազգանունը փոխելու մասին թիվ I-ՇՄ 265770 վկայականի համաձայն՝ 03.02.1948 թվականին ծնված Գագիկ Լիպարիտի Քոչարյանը փոխել է հայրանունը և ազգանունը՝ Գագիկ Արմենակի Սիսակունի (հատոր 1-ին, գ.թ.7).

2) 08.02.2002 թվականի թիվ 795442 և 12.05.2011 թվականի թիվ 2478200 սեփականության իրավունքի գրանցման վկայականների համաձայն՝ Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանը համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Գագիկ Սիսակունուն, Ամալյա, Լիլիթ և Արմեն Քոչարյաններին, հիմք՝ Խորհրդային շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 01.08.1994 թվականի թիվ 30/10 որոշումը, 22.09.1994 թվականի անունը, հայրանունը, ազգանունը փոխելու մասին թիվ I-ՇՄ 265770 վկայականը (հատոր 1-ին, գ.թ.5-6, 9-11).

3) «Նոր Նորք 1/8» համատիրության 18.03.2013 թվականի թիվ 67 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանում առանց հաշվառման բնակվում են Սարգիս Գարուկյանն իր ընտանիքի՝ Մարիամ Համբարյանի, Աննա Մասումյանի, Հայկ և Տիգրան Գարուկյանների հետ (հատոր 5-րդ, գ.թ.6).

4) Սարգիս Գարուկյանը, ներկայացնելով հակընդդեմ հայցադիմում, պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանի նկատմամբ (հատոր 2-րդ, գ.թ.29-34), որպիսի հայցային պահանջից 27.02.2013 թվականի դիմումով Սարգիս Գարուկյանը հրաժարվել է (հատոր 4-րդ, գ.թ.112).

5) Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանը Սարգիս Գարուկյանի և նրա ընտանիքի անդամների կողմից օգտագործելու և տիրապետելու վերաբերյալ համատեղ սեփականատերերի կողմից տրված որևէ համաձայնություն կամ պայմանագիր սույն գործում առկա չէ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությանից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական արակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բոլոր մասնակիցների կողմից տիրապետելու և օգտագործելու, ինչպես նաև այդ պայմաններում մասնակցի կողմից գույքն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այսպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում՝ իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի, կամ մյուս տուրքերի, կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Նշված դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ սեփականատիրոջ իրավագործությունների (տիրապետում, օգտագործում, տնօրինում) ամբողջությունը կազմում է սեփականության իրավունքի բովանդակությունը, և դրանց ամբողջությունն օրենքով պատկանում է սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտի իրավունքի կրողի, և սահմանում սեփականության իրավունքի իրականացման սահմանները, ինչն ապահովում է գույքի նկատմամբ սեփականատիրոջ լիակատար գերիշխանությունը՝ սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով: Գույքը կարող է ընդհանուր սեփականությանը պատկանել սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով սեփականության ներքո գտնվող գույքի բաժնային և համատեղ սեփականության իրավունքի իրավական ռեժիմները, միաժամանակ ամրագրել է համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը մասնակիցների կողմից միասին տիրապետելու և օգտագործելու ընդհանուր կարգ, ընդ որում, ելնելով համասեփականատերերի հայեցողությունը հաշվի առնելու սահմանադրական պահանջից, հնարավորություն է վերապահել համասեփականատերերին՝ փոխադարձ համաձայնությամբ սահմանելու տիրապետման և օգտագործման այլ կարգ:

Վերը նշվածից հետևում է, որ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տիրապետման և օգտագործման այլ կարգ նախատեսված չլինելու դեպքում նշված գույքը կարող է տիրապետվել և օգտագործվել բացառապես բոլոր մասնակիցների համաձայնությամբ, որը կոչված է ապահովել համասեփականատերերից յուրաքանչյուրի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գույքը միասին տիրապետելու և օգտագործելու իրավունքի իրացումը:

Վերոգրյալով է պայմանավորված համասեփականատերերից յուրաքանչյուրի կողմից իր տիրապետության ներքո գտնվող գույքի նկատմամբ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ընդդեմ այն անձանց, որոնց գործողությունները խոչընդոտում են սեփականատիրոջը պատշաճ իրականացնելու իր օգտագործման, տիրապետման, տնօրինման իրավագործությունները:

Տվյալ դեպքում սեփականատերն իրավասու է պահանջել վերացնելու իր սեփականատիրական իրավունքները լիարժեք իրականացնելու հետ կապված սահմանափակումները, ընդ որում, սահմանափակումները կարող են լինել ինչպես օրինական, այնպես էլ անօրինական, երբ ապօրինի գործողությունների միջոցով խոչընդոտում են սեփականատիրոջը օգտագործել, տիրապետել և տնօրինել իր գույքը:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի:

Վերոգրյալ նորմերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքն այլ անձանց կողմից ապօրինի տիրապետվելու պայմաններում համատեղ սեփականության մասնակիցներից որևէ մեկը զրկված չէ հետ պահանջելու իր գույքն ապօրինի տիրապետողից, հատկապես այն պարագայում, եթե անգամ առկա չէ մյուս մասնակիցների համաձայնությունը գույքն այլ անձանց տիրապետումից հետ պահանջելու վերաբերյալ: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետը չի սահմանափակում մասնակցի սեփակա-

նության իրավունքի պաշտպանությունն ընդդեմ ապօրինի տիրապետող անձանց, եթե անգամ առկա չէ բոլոր մասնակիցների համաձայնությունը:

Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելիս վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 198-րդ, 274-րդ հոդվածները, պատճառաբանել է, որ Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանում 1995 թվականից մինչ այժմ բնակվում է, այսինքն՝ այն անհատույց օգտագործում է Սարգիս Գարուկյանն իր ընտանիքի անդամներով՝ նշված բնակարանի համասեփականատերերի՝ Ամալյա, Արմեն, Լիլիթ Քոչարյանների թույլտվությամբ, և հայցվորն այդ կապակցությամբ, մինչև սույն հայցով դատարան դիմելը (շուրջ 16 տարի), չի առարկել: Մյուս բնակարանից հայցվորի բաժինն առանձնացված չէ, և հայցվորը երբեք չի դիմել դատական պաշտպանության՝ բնակարանի համատեղ օգտագործման կարգ սահմանելու պահանջով: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում հայցվորը չի հիմնավորել այն վկայակոչած փաստը, որ պատասխանողները վիճելի բնակարանում բնակվում են ապօրինի, մինչդեռ միայն այդ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն նա կարող էր պահանջել գույքը հետ վերադարձնել պատասխանողների տիրապետումից: Վիճելի բնակարանում պատասխանողները բնակվում են դրա համասեփականատերերի թույլտվությամբ, որն ապօրինի համարվել չի կարող, քանի որ դա բնակարանի սեփականատերերի՝ նման ձևով բնակարան օգտագործելու կամքի դրսևորումն է, և այս իրավիճակում հայցվորը խնդիր ունի ոչ թե պատասխանողների հետ, այլ բնակարանի մյուս համասեփականատերերի հետ՝ բնակարանը տիրապետելու և համատեղ օգտագործելու առումով:

Վերը շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանը համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Գագիկ Միսակունուն, Ամալյա, Լիլիթ և Արմեն Քոչարյաններին: Ավելին, նշված բնակարանում առանց հաշվառման բնակվում են Սարգիս Գարուկյանն իր ընտանիքի՝ Մարիամ Համբարյանի, Աննա Մասումյանի, Հայկ և Տիգրան Գարուկյանների հետ: Ընդ որում, սույն գործում առկա չէ նշված բնակարանը համատեղ սեփականատերերի կողմից Սարգիս Գարուկյանի և նրա ընտանիքի անդամների օգտագործմանը և տիրապետմանը տրամադրելու վերաբերյալ որևէ համաձայնություն կամ պայմանագիր:

Հաշվի առնելով սույն գործի փաստերի և համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բոլոր մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ տիրապետելու և օգտագործելու վերաբերյալ այլ կարգ սահմանված չլինելու իրավահարաբերությունների առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ընդհանուր սեփականության սուբյեկտները, միմյանց հետ գտնվելով գույքային շահերով փոխադարձ կապվածության և կախվածության մեջ, կրում են պարտավորություն՝ իրականացնել միասնական նպատակ հետապնդող փոխադարձ համաձայնեցված գործողություն: Հետևաբար, ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը մասնակցի կողմից ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահաջելը չի կարող պայմանավորված լինել սեփականության իրավունքում բաժինն առանձնացված լինելու կամ բնակարանի համատեղ օգտագործման կարգ սահմանելու պահանջով դատական պաշտպանության դիմելու կամ բնակարանի մյուս համասեփականատերերի հետ՝ բնակարանը տիրապետելու և համատեղ օգտագործելու հանգամանքով հատկապես այն պարագայում, երբ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բոլոր մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ գույքը տիրապետելու և օգտագործելու այլ կարգ սահմանված չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիա-

կան դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար, ընդ որում, գործի նոր քննությունն անհրաժեշտ է իրականացնել այն ծավալով, որով Դատարանի վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ դատարանում, որպիսի հիմքով նաև Վճռաբեկ դատարանում, այն է՝ Գագիկ Միսակունու հայցի՝ Սարգիս Գարուկյանին և նրա ընտանիքի անդամներին Երևանի Նորքի 1-ին միկրոշրջանի թիվ 97/98 շենքի 38-րդ բնակարանի ապօրինի տիրապետումը դադարեցնելուն պարտավորեցնելու, այն է՝ բնակարանն ազատելու պահանջի մասով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.10.2013 թվականի որոշումը և գործը Գագիկ Միսակունու հայցի մասով ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **SԴ-1/0046/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ SԴ-1/0046/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Խատատյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Արծրուն Պողոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Արծրուն Պողոսյանի ընդդեմ «ԳԻՏԻ-SOUSO» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ
անձ «Անելիք Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ շարժական գույքը վերադարձնելու
պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արծրուն Պողոսյանը պահանջել է Ընկերությունից վերա-
դարձնել 01.09.2012 թվականին կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրով
հանձնված գույքն ամբողջությամբ:

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա.
Խաչիկյան) (այսուհետ՝ Դատարան) 29.05.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դա-
տարան) 17.10.2013 թվականի որոշմամբ Արծրուն Պողոսյանի և Ընկերության վերաքննիչ
բողոքները մերժվել են, և Դատարանի 29.05.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական
ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արծրուն Պողոսյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, վերլուծելով Ընկերության և Բանկի միջև կնքված վարկային պայմանագիրը, գնահատման հաշվետվությունը, հանգել է այն հետևության, որ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին պայմանագրով Բանկը նկատի է ունեցել այն գույքը, որը նշվել է կատարված գնահատման արդյունքում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին պայմանագրով Ընկերության վարկային պարտավորության մի մասի դիմաց է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեի անշարժ գույքը հանձնվել Բանկին: Տվյալ դեպքում վարկային պայմանագիրը և այդ ընթացքում կատարված գրավի առարկայի գնահատումը չեն կարող էական նշանակություն ունենալ սույն իրավահարաբերության համար, քանի որ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին կողմերի միջև կնքվել է առանձին պայմանագիր, որում հստակ նշվել է միայն անշարժ գույքը պարտքի դիմաց Բանկին հանձնելու մասին Ընկերության համաձայնությունը, իսկ վիճելի շարժական գույքի վերաբերյալ նշված պայմանագիրը որևէ նշում չի պարունակում:

Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գույքի գնահատման կապիտալվերածման մեթոդի կիրառմամբ գույքի արժեքն ավելացել է ընդամենը 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամով, մինչդեռ շարժական գույքի շուկայական արժեքը 100.000.000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ է:

Վերաքննիչ դատարանը, ամբողջական վերլուծության չենթարկելով գործում առկա փաստերը, հաշվի չի առել այն հանգամանքը, որ 03.12.2012 թվականին, այսինքն՝ մինչև անշարժ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին պայմանագիր կնքելը, Ընկերությունը Բանկին տեղեկացրել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող շարժական գույքը սեփականության իրավունքով պատկանում է Արծրուն Պողոսյանին:

Վերաքննիչ դատարանը, նշելով, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որով հիմնավորվում է շարժական գույքը սեփականության իրավունքով հայցվոր Արծրուն Պողոսյանին պատկանելու հանգամանքը, անտեսել է այն, որ վիճելի շարժական գույքը սեփականության իրավունքով հայցվորին պատկանելու հանգամանքը որևէ անձի կողմից չի վիճարկվել:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.10.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- 1) 01.09.2012 թվականին Արծրուն Պողոսյանի և Ընկերության տնօրեն Գրիգոր

Ոսկանյանի միջև անորոշ ժամկետով կնքվել է գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Ընկերության (փոխառուի) ժամանակավոր, անհատույց օգտագործմանն է հանձնվել նույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածում նշված գույքը: Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրի 1.2 կետում նշված գույքը սեփականության իրավունքով պատկանում է փոխառուին՝ Արծրուն Պողոսյանին (հատոր 1-ին, գ.թ. 11-17):

2) 31.08.2012 թվականին Բանկի (այսուհետ՝ Գրավառու), Ընկերության (այսուհետ՝ Վարկառու) և Գրիգոր Ոսկանյանի (այսուհետ՝ Գրավատու) միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ Կ2605/3 պայմանագրի (այսուհետ՝ Հիփոթեքի պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ վարկատուի կողմից հատկացվող վարկի շրջանակներում ապահովվել է Բանկի (վարկատու) և Ընկերության (վարկառու) միջև 21.08.2012 թվականին կնքված թիվ Կ2605 գլխավոր վարկային պայմանագրի կատարումը: Հիփոթեքի պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ գրավադրվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 բնակելի տունը (հատոր 2-րդ, գ.թ. 75):

3) 03.12.2012 թվականին Բանկին հասցեագրված դիմումով Ընկերության տնօրեն Գրիգոր Ոսկանյանը հայտնել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող, գրավի առարկա չհանդիսացող շարժական գույքը հանդիսանում է Արծրուն Պողոսյանի սեփականությունը, որը վերջինիս կողմից հանձնվել է Ընկերության անհատույց օգտագործմանը, և խնդրել է թույլատրել նշված շարժական գույքը հանել գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի ներսից (հատոր 1-ին, գ.թ. 18):

4) Բանկի 11.12.2012 թվականի թիվ 12-54 գրությամբ Ընկերությանը հայտնվել է, որ դիմումը ենթակա է մերժման, քանի որ «Գնահատողների Միություն» ՓԲԸ-ի կողմից տրված գնահատման հաշվետվությունը կազմվել է՝ կիրառելով նաև գույքից ստացվող եկամուտների կապիտալավերածման մեթոդը, իսկ նշված անշարժ գույքից հնարավոր չէ ակնկալել միևնույն եկամուտն առանց պատկանելիք հանդիսացող շարժական գույքի: Նշված գրության 1-ին պարբերությամբ նշվել է նաև, որ Ընկերության կողմից որպես գրավ առաջարկվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը (հատոր 1-ին, գ.թ. 19):

5) Ի պատասխան Արծրուն Պողոսյանի նույնաբովանդակ դիմումի՝ Բանկի 28.12.2012 թվականի գրությամբ վերջինիս հայտնվել է, որ ներկայացված առաջարկը չի կարող քննարկվել՝ անհիմն լինելու պատճառով (հատոր 1-ին, գ.թ. 20):

6) Բանկի վարչության նիստի 12.12.2012 թվականի թիվ 159 արձանագրության եզրափակիչ մասի 1-ին կետի համաձայն՝ որոշվել է Ընկերության վարկային պարտավորության մի մասի դիմաց ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքն ընդունել Բանկին ի սեփականություն՝ 927.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով: Նույն արձանագրության եզրափակիչ մասի 4-րդ կետով որոշվել է գույքագրված շարժական գույքը ձևակերպել Բանկի արտահաշվեկշռում՝ որպես մեկ միավոր (հատոր 1-ին, գ.թ. 36):

7) 25.12.2012 թվականին նոտարական կարգով վավերացված գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը 31.08.2012 թվականին կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ Կ2605/3 պայմանագրով գրավադրված ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը պարտավորության մի մասի՝ 377.289.000 ՀՀ դրամի դիմաց հանձնել է Բանկին՝ ի սեփականություն (հատոր 1-ին, գ.թ. 61):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին. արդյո՞ք անձի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքի գրավադրումը ենթադրում է նաև այլ անձի սեփականության իրավունքով պատկանող, սակայն գրավադրված անշարժ գույքի տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպության անհատույց օգտագործմանը հանձնված շարժական գույքի գրավադրում:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականության իրավունքից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփակա-

նության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

Նշված դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ սեփականատիրոջ իրավագործությունների (տիրապետում, օգտագործում, տնօրինում) ամբողջությունը կազմում է սեփականության իրավունքի բովանդակությունը, և դրանց ամբողջությունն օրենքով պատկանում է սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի կրողի, և սահմանում սեփականության իրավունքի իրականացման սահմանները, ինչն ապահովում է գույքի նկատմամբ սեփականատիրոջ լիակատար գերիշխանությունը՝ սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը:

Վերոգրյալով է պայմանավորված սեփականատիրոջ կողմից իր գույքի նկատմամբ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ընդդեմ այն անձանց, որոնց գործողությունները խոչընդոտում են սեփականատիրոջը պատշաճորեն իրականացնելու իր օգտագործման, տնօրինման և տիրապետման իրավագործությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով (փոխատվության պայմանագիր) մի կողմը (փոխատուն) պարտավորվում է գույքը հանձնել կամ հանձնում է մյուս կողմի (փոխառուի) անհատույց ժամանակավոր օգտագործմանը, իսկ վերջինս պարտավորվում է այդ գույքը վերադարձնել նույն վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածքը, կամ պայմանագրով որոշված վիճակում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 686-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 688-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքն անհատույց օգտագործման հանձնելու իրավունքը պատկանում է դրա սեփականատիրոջը և օրենքով կամ սեփականատիրոջ կողմից դրա համար լիազորված այլ անձանց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 693-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի անհատույց օգտագործման համար ստացված գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը միայն փոխառուի համաձայնությամբ՝ պատասխանատու մնալով փոխառուի առջև:

Նշված դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով գույքի սեփականատերը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) անհատույց ժամանակավոր օգտագործմանն է հանձնում (կամ պարտավորվում է հանձնել) գույք, որի նկատմամբ բացառիկ իրավունքը (տնօրինման իրավագործությունը) պատկանում է գույքի սեփականատիրոջը կամ դրա համար լիազորված այլ անձանց: Միաժամանակ փոխառուն, հանդիսանալով անհատույց օգտագործման պայմանագրով հանձնված գույքի բացառապես օգտագործման իրավունք կրող սուբյեկտ, գրկված է առանց փոխառուի համաձայնության վերջինիս սեփականության իրավունքով պատկանող գույքը երրորդ անձի օգտագործմանը հանձնելու իրավունքից, որպիսի իրավունքի չարաշահման արդյունքում փոխառուն է հանդիսանում դրա հետևանքների ռիսկը կրող սուբյեկտ:

Այսպիսով, փոխառուն կարող է անհատույց օգտագործման համար ստացված գույքը հանձնել երրորդ անձի բացառապես օգտագործման իրավունքով և այն էլ միայն

փոխատուի համաձայնությամբ՝ պատասխանատու մնալով փոխատուի առջև:

Տվյալ դեպքում Դատարանը, հաստատված համարելով, որ 01.09.2012 թվականին կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրին կից թիվ 1 հավելվածով հաստատված գույքը հանդիսացել է Արծրուն Պողոսյանի սեփականությունը, որը վերջինս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել է Ընկերությանը, հանգել է այն հետևության, որ վիճելի շարժական գույքը հանդիսացել է գրավադրված գույքի հիմնական մասը՝ որպես գլխավոր գույքի պատկանելիք, հետևաբար գրավի առարկա գույքի նկատմամբ գրավատուի իրավունքները (գրավի իրավունքը) տարածվում են նաև դրա պատկանելիքների վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին» պայմանագրով Գրիգոր Ոսկանյանը Բանկին ի սեփականություն է հանձնել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Փարաբար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը, ինչպես նաև նույն հասցեում գտնվող շարժական գույքը՝ առանց Բանկին տեղեկացնելու վիճելի շարժական գույքի սեփականատեր չհանդիսանալու մասին, Դատարանն արձանագրել է, որ Բանկը շարժական գույքը ձեռք է բերել օրինական հիմքերով, հետևաբար բացակայում է նշված շարժական գույքը բարեխիղճ ձեռքբերողից վերադարձնելու հիմքերը:

Վերաքննիչ դատարանը 17.10.2013 թվականի որոշմամբ պատճառաբանել է, որ Գրիգոր Ոսկանյանի կողմից Բանկին գույքի գնահատման ակտ ներկայացնելու պահին հայտնի է եղել, որ գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքը գնահատվում է դրանում առկա շարժական գույքի հետ միասին, մինչդեռ վերջինիս կողմից ինչպես Բանկին, այնպես էլ վիճելի շարժական գույքի սեփականատիրոջը՝ Արծրուն Պողոսյանին, չի տեղեկացվել նշված փաստի մասին: Պատճառաբանելով, որ վիճելի շարժական գույքն Արծրուն Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանելու վերաբերյալ առկա չէ որևէ ապացույց, իսկ վարկային պայմանագիրը կնքելիս Ընկերությունը սահմանափակված չի եղել Բանկին տեղեկություն տալու գրավադրված անշարժ գույքում առկա շարժական գույքն այլ անձի պատկանելու վերաբերյալ, ինչը չի արել, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դատարանն իրականացրել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննություն՝ կայացնելով օրինական, արդար և պատճառաբանված դատական ակտ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ 01.09.2012 թվականին Արծրուն Պողոսյանի և Ընկերության տնօրեն Գրիգոր Ոսկանյանի միջև անտրոշ ժամկետով կնքված Պայմանագրի համաձայն՝ Ընկերության ժամանակավոր, անհատույց օգտագործման է հանձնվել նույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածում նշված գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է փոխատու Արծրուն Պողոսյանին:

31.08.2012 թվականին կնքված Հիփոթեքի պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ վարկատուի կողմից հատկացվող վարկի շրջանակներում ապահովվել է Բանկի (վարկատու) և Ընկերության (վարկառու) միջև 21.08.2012 թվականին կնքված թիվ Կ2605 գլխավոր վարկային պայմանագրի կատարումը, և գրավադրվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաբար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 բնակելի տունը:

25.12.2012 թվականին նոտարական կարգով վավերացված գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը 31.08.2012 թվականին

կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ Կ2605/3 պայմանագրով գրավադրված ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը պարտավորության մի մասի՝ 377.289.000 ՀՀ դրամի դիմաց հանձնել է Բանկին՝ ի սեփականություն:

Վերոգրյալից հետևում է, որ ինչպես Հիփոթեքի, այնպես էլ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին պայմանագրերի առարկան հանդիսացել է միայն ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեի անշարժ գույքը, իսկ նշված հասցեում առկա վիճելի շարժական գույքը սեփականության իրավունքով պատկանել է Արծրուն Պողոսյանին և վերոնշյալ գրավի պայմանագրի կնքումից հետո է միայն 01.09.2012 թվականին կնքված Պայմանագրով հանձնվել Ընկերության ժամանակավոր, անհատույց օգտագործմանը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ Ընկերության տնօրենը Բանկին չի տեղեկացրել շարժական գույքն այլ անձին պատկանելու վերաբերյալ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության տնօրենի կողմից 03.12.2012 թվականին Բանկին հասցեագրված դիմումի համաձայն հայտնվել է, որ գրավի առարկա չհանդիսացող շարժական գույքը հանդիսանում է Արծրուն Պողոսյանի սեփականությունը, որը տրված է եղել Ընկերության անհատույց և ժամանակավոր օգտագործմանը, միաժամանակ պահանջ է ներկայացվել նշված շարժական գույքը գրավի առարկա անշարժ գույքի ներսից հանելու վերաբերյալ, որպիսի պահանջը Բանկի 11.12.2012 թվականի թիվ 12-54 գրությամբ մերժվել է: Այսինքն՝ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին պայմանագիրը կնքելու ժամանակ՝ 25.12.2012 թվականին, Բանկը տեղյակ է եղել վիճելի շարժական գույքն այլ անձի պատկանելու մասին, ավելին՝ Բանկն իր գործողություններով մերժել է վիճելի շարժական գույքը սեփականատիրոջը վերադարձնելու մասին Ընկերության պահանջը:

Հաշվի առնելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ շարժական գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագրով հանձնված գույքի տնօրինման իրավունքը բացառապես պատկանում է գույքի սեփականատիրոջը՝ փոխատուին, և վերջինիս համաձայնության բացակայության պայմաններում այն չի կարող տնօրինվել փոխատուի կողմից այն պատճառաբանությամբ, որ գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիրը ենթադրում է հանձնված գույքի՝ փոխատուի միայն օգտագործման իրավունքը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում է, որ տվյալ պարագայում Վերաքննիչ դատարանի կողմից չի պահպանվել սեփականատիրոջ՝ փոխատուի գույքի սեփականության իրավունքի իրացման և փոխատուի օգտագործման իրավունքի միջև հավասարակշռությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, դրանք չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Միաժամանակ հաշվի առնելով, որ ստորադաս դատարանների կողմից հայցի մերժման հիմքում դրվել է նաև այն հանգամանքը, որ վիճելի շարժական գույքը գրավադրված գույքի պատկանելիքն է, որը հետևել է գրավի առարկայի ճակատագրին, ուստի Բանկից այն հետ պահանջելու իրավական հիմքը բացակայում է, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի առարկա կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ), բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների՝ ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը

պատճառված վնասի հատուցման պահանջների, պետական (գանձապետական) անվանական այն արժեթղթերի, որոնց թողարկման պայմաններով կնախատեսվեն, որ այդ արժեթղթերը գրավադրման ենթակա չեն, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականատերը, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավատու կարող է լինել ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի առարկա գույքի նկատմամբ գրավառուի իրավունքները (գրավի իրավունքը) տարածվում են նաև դրա պատկանելիքների վրա, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 138-րդ հոդվածի համաձայն՝ այլ (զլխավոր) գույքի սպասարկման համար նախատեսված և դրա հետ ընդհանուր նշանակությամբ կապված գույքը (պատկանելիք) հետևում է գլխավոր գույքի ճակատագրին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ գրավը պարտավորության կատարման ապահովման միջոց է, որով կարող է գրավադրվել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ), բացառությամբ այն գույքի, որն օրենքով սահմանված կարգով գրավադրման ենթակա չէ, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով: Ընդ որում, օրենսդիրը, գրավի առարկայի նկատմամբ սահմանելով գրավառուի իրավունքները, ամրագրել է նաև գրավառուի իրավունքները գրավի առարկայի պատկանելիքների վրա՝ նշելով մեկ բացառություն, այն է՝ պայմանագրով այլ բան նախատեսված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի առարկայի պատկանելիքների վրա գրավառուի գույքային իրավունքների տարածման հարցը լուծելիս դատարանները նախ պետք է պարզեն տվյալ գործով գրավի առարկան, որից հետո նոր միայն որոշեն այլ գույքի՝ գրավի առարկայի (զլխավոր իրի) պատկանելիք լինելու հարցը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ յուրաքանչյուր առանձին դեպքում այս կամ այն իրի պատկանելիք լինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է վեր հանել այդ իրի կապն այն իրի հետ, որը հանդիսանում է գործով վիճելի իրավահարաբերության օբյեկտը: Ընդ որում, իրի պատկանելիքները հարկ է տարբերակել իրի բաղկացուցիչ մասերից:

Այսպես՝ եթե մի քանի իր միմյանց հետ փոխկապակցված են որոշակի տնտեսական նշանակությամբ, ապա գլխավոր հանդիսանում է այն իրը, որն ունի ինքնուրույն նշանակություն և կախված չէ այլ իրերից, իսկ պատկանելիք է այն իրը, որը ծառայում է ի օժանդակություն գլխավորին և լրացնում է այն: Պատկանելիքը, փոխկապակցված լինելով գլխավոր իրի հետ, ծառայում է այդ իրի տնտեսական նշանակությանը և բարձրացնում դրա օգտագործման օգտակարությունը՝ ավելացնելով ոչ միայն օգտագործվող իրի նյութական, այլև էթետիկական կողմը: Ընդ որում, պատկանելիքը չլինելով գլխավոր իրի բաղկացուցիչ մաս, այլ ծառայելով գլխավոր իրին, վերջինիս հետ հանդես է գալիս որպես մեկ ամբողջություն: Դա է պատճառը, որ օրենսդիրն ամրագրել է պատկանելիքի՝ գլխավոր գույքի ճակատագրին հետևելու դրույթը՝ բացառություն նախատեսելով պայմանագրում այլ բան նախատեսված լինելը:

Ի տարբերություն իրի (գույքի) բաղկացուցիչ մասի, պատկանելիքն ունի ինքնուրույն նշանակություն: Բացի այդ, ֆիզիկապես և՛ գլխավոր իրը, և՛ պատկանելիքը կարող են գոյություն ունենալ առանձին (օրինակ՝ ակնոցն ու իր պատյանը, որում ակնոցը՝ գլխավոր, իսկ պատյանը՝ պատկանելիք, շախմատը, որում խաղատախտակը՝ գլխավոր, իսկ խաղաքարերը՝ պատկանելիք):

Սույն գործով ստորադաս դատարանները, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գնահատման հաշվետվությանը կից հավելվածով Բանկին ներկայացվել են նաև գույքի լուսանկարները, որոնցից երևում են հայցվորի կողմից նշված շարժական գույքի մի մասը, հանգել են այն հետևության, որ վիճելի շարժական գույքը գրավադրված հիմնական գլխավոր գույքի պատկանելիքն է, հետևաբար գրավի առարկա գույքի նկատմամբ գրավառուի իրավունքները (գրավի իրավունքները) տարածվում են նաև դրա պատկանելիքների վրա:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված հաշվետվությունից պարզ չէ, թե ինչպիսի շարժական գույք է գնահատվել գնահատման եկամուտների կապիտալավերածման եղանակն օգտագործելիս: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ 01.09.2012 թվականի Պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված թվով 80 անուն շարժական գույքը նույնական է գնահատման եկամուտների կապիտալավերածման եղանակով գնահատված շարժական գույքի հետ, որի դեպքում միայն հնարավոր կլիներ որոշել այդ իրի կապը գրավի առարկայի հետ, այսինքն՝ վիճելի շարժական գույքի պատկանելիք լինելու փաստը:

Բացի այդ, ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ վիճելի թվով 80 անուն շարժական գույքի վերաբերյալ անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվել է 01.09.2012 թվականին, այսինքն՝ ավելի ուշ, քան կատարվել է վերոնշյալ գնահատումը:

Ավելին, ստորադաս դատարանները որևէ կերպ չեն հիմնավորել վիճելի շարժական գույքի և սույն գործով գրավի առարկայի, այն է՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաբար համայնքի Դեմիրճյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 բնակելի տան որոշակի տնտեսական նշանակությամբ փոխկապակցվածության փաստը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վեճի առարկա թվով 80 անուն շարժական գույքի պատկանելիք լինելու հարցը սույն գործով հաստատված համարելիս ստորադաս դատարանները հանգել են սխալ հետևության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2013/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2013/02/12**
Նախագահող դատավոր՝ **Ն. Տավարացյան**
Դատավորներ՝ **Ս. Միքայելյան**
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի սոյեմբերի 28-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Անահիտ Սիմոնյանի, Սամվել և Լիա
Դանիելյանների ներկայացուցիչ Կարեն Մելիքսեթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ
քաղաքացիական դատարանի 22.04.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Անահիտ Սի-
մոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների հայցի ընդդեմ «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն), «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ի
(այսուհետ՝ Բանկ), Արմենուի Բոլոյանի՝ Երևանի Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ
32 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին և
ըստ Արմենուի Բոլոյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Անահիտ Սիմոնյանի, Սամվել և Լիա
Դանիելյանների՝ բնակարանն ապօրինի տիրապետումից ազատելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անահիտ Սիմոնյանը, Սամվել և Լիա Դանիելյանները պահանջել են անվավեր ճանաչել Երևանի Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արմենուի Բոլոյանը պահանջել է Երևանի Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող բնակարանն ազատել Անահիտ Սիմոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների ապօրինի տիրապետումից:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-

սության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.01.2014 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.04.2014 թվականի որոշմամբ Ասահիտ Միմոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.01.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ասահիտ Միմոնյանը, Սամվել և Լիա Դանիելյանների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 130-132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտում՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Բանկի 07.02.2011 թվականի գրությունն Ասահիտ Միմոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների կողմից 11.02.2011 թվականին ստանալը հավաստող որևէ ապացույց սույն գործում առկա չէ: Մասնավորապես՝ 039391846 փոստային առաքման հետադարձ ծանուցման վրա որպես միակ հասցեատեր նշված է Լիա Դանիելյանը, իսկ ստորագրությունն էլ անհայտ է Լիա Դանիելյանինն է, թե՛ ոչ, քանի որ վերջինս չի հիշում բռնագանձման ծանուցում ստացած լինելու հանգամանքը. որևէ փաստով չի ապացուցվում նաև ծրարի պարունակությունը: Եթե նույնիսկ ստորագրությունը Լիա Դանիելյանինն է, այնուամենայնիվ, Ասահիտ Միմոնյանին և Սամվել Դանիելյանին Բանկից որևէ նամակ չի ուղարկվել և նրանք բռնագանձման ծանուցումներ չեն ստացել:

2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 8-րդ և 16-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Անշարժ գույքի աճուրդն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, մասնավորապես՝ «Ազգ» օրաթերթի 25.08.2011 թվականի համարի 8-րդ էջում տպագրված հետևյալ բովանդակությամբ անվերնագիր հայտարարությունը. «Ընկերությունը «ԱԴԱՄԱՆԴ» ԵՍՀԲ ՓԲԸ-ի հարթակում և վերջինիս միջոցով իրականացնելու է Բանկին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառք հրապարակային սակարկություններով՝ Բնակարան, ընդ. մակերեսը՝ 54,0քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 15 փող. շենք 5, բնակարան 32: Մեկն. գինը՝ 12.400.000 ՀՀ դրամ»:

Հիշյալ հայտարարության տեքստն ակնհայտորեն չի համապատասխանում օրենքով սահմանված՝ հրապարակային ծանուցմանը ներկայացվող պահանջներին: Այսպես, տեքստից պարզ չէ, թե դա համարվում է հրապարակային ծանուցում, թե՛ ոչ, տեքստի բովանդակությունից հնարավոր չէ որոշել, թե երբ է անցկացվելու վեճի առարկա հանդիսացող բնակարանի աճուրդը: Հայտարարության տեքստում աճուրդների անցկացման ժամանակահատվածը նշվել է 26.09.2011 թվականից մինչև 30.12.2011 թվականը, սակայն աճուրդը կազմակերպվել է 19.04.2012 թվականին, որի մասին հրապարակային ծանուցում չի հրապարակվել: Բացի այդ, տեքստում նշված չէ լոտի նկատմամբ սահմանափակումները (գրավի իրավունք), լոտի անվանումը (ամբողջությամբ), լոտերի վաճառքի հերթականությունը, աճուրդում հաղթողին որոշելու կարգը, աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը, աճուրդի ձևը և անցկացման

կարգը: Հայտարարության տեքստում նշված «Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետև՝ հովանդական եղանակով» բովանդակությամբ արտահայտությունից հնարավոր չէ հասկանալ ո՛չ աճուրդի ձևը, ո՛չ անցկացման կարգը, ո՛ր էլ հաղթողին որոշելու կարգը:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.04.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցը վերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և Լիա Դանիելյանի միջև 30.06.2010 թվականին կնքված թիվ VTM02090 վարկային պայմանագրի համաձայն՝ Լիա Դանիելյանը 1097 օր ժամկետով, մինչև 01.07.2013 թվականը ներառյալ մարման պայմանով, տարեկան 22% անվանական տոկոսադրույքի չափով, վարկային պայմանագրի անբաժան մասը կազմող վարկի մարման ժամանակացույց-պարտավորագրով սահմանված չափերով, հաճախակա՛նությամբ և ժամկետներում մարելու պայմանով, Բանկից ստացել է 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամի չափով վարկ՝ սպառողական նպատակներով օգտագործելու համար (հատոր 1-ին, գ.թ. 21-29):

2) 30.06.2010 թվականի թիվ VTM02090 հիփոթեքի պայմանագրի համաձայն՝ Անահիտ Սիմոնյանը, Սամվել և Լիա Դանիելյանները, որպես Բանկի և Լիա Դանիելյանի միջև 30.06.2010 թվականին կնքված թիվ VTM02090 վարկային պայմանագրով վերջինիս կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ Բանկում գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող Երևանի Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող 54քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (հատոր 1-ին, գ.թ. 30-34):

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման կողմից 02.07.2010 թվականին տրվել է թիվ 0221404 գրավի, հիփոթեքի վկայականը, որի համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող 54քմ ընդհանուր մակերեսով բնակարանի նկատմամբ գրանցված է Բանկի գրավի իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 39):

4) Բանկի 07.02.2011 թվականի թիվ ԿՓ05/125 գրության համաձայն՝ Անահիտ Սիմոնյանին, Սամվել և Լիա Դանիելյաններին ներկայացվել է բռնագանձման ծանուցումով պահանջագիր՝ պահանջելով մինչև 11.02.2011 թվականը մարել Բանկի նկատմամբ Լիա Դանիելյանի ընդհանուր պարտքը, և տեղեկացնելով, որ հակառակ դեպքում Բանկը կդիմի «Ադամանդ» ապրանքահումքային բորսա կամ այլ լիցենզավորված ընկերություններ՝ հրապարակային սակարկություններով երրորդ անձնաց օտարելու միջոցով պարտավորությունները կատարելու նպատակով (հատոր 1-ին, գ.թ. 40-41):

5) Համաձայն թիվ 039391846 փոստային առաքման հետադարձ ծանուցման՝ գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցագրի հասցեատեր նշված է Լիա Դանիելյանը, առաքանու համար ստորագրել և այն ստացել է միայն Լիա Դանիելյանը (հատոր 1-ին, գ.թ. 42):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին՝ մեկից ավելի գրավատուների առկայության դեպքում բռնագանձման ծանուցումը մեկ գրավատուին ուղարկելը

կարող է արդյոք համարվել պատշաճ ծանուցում մյուս գրավատուների համար, եթե վերջիններս հաշվառված և բնակվում են նույն հասցեում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավատուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում):

Վճարել դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերոգրյալ նորմի վերլուծությանը և արձանագրել, որ գրավատուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է գրավատուի այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Մասնավորապես, Վճարել դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը ենթադրում է գրավատուի կողմից գրավատուին՝ վերջինիս կողմից գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին իրագելելու (ծանուցելու) կապակցությամբ գրավատուի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն պատշաճ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց դատարան դիմելու գրավատուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը: Միաժամանակ Վճարել դատարանը նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի տեղեկանալու իրավունքը և գրավատուի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գրավատուի իրավունքների ապահովման հետ: Այդ իրավունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գրավատուին ընձեռված է առանց դատարան դիմելու գրավատուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկանալու հնարավորություն: Այդ իսկ պատճառով գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի իրագելումը գրավատուի պարտականությունն է, որի չպահպանման դեպքում վերջինս չի կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը (*յուես, Վարդան Պետրոսյանն ընդդեմ «Արարալ» նուրարական փարածքի նուրար Ալվարդ Հովհաննիսյանի թիվ ՎՊ3/0092/05/10 վարչական գործով ՀՀ վճարել դատարանի 27.12.2010 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճարել դատարանը հարկ է համարում հավելել հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը գրավատուի համար սահմանել է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելուց առաջ գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուին պատշաճ ծանուցելու պարտականություն, հետևաբար օրենսդրական տեխնիկայի վերը նշված կանոնի կիրառմամբ Վճարել դատարանը փաստում է, որ մեկից ավելի գրավատուների ակայության դեպքում գրավատուն պատշաճ ծանուցման պարտականություն կրում է յուրաքանչյուր գրավատուի նկատմամբ: Օրենսդրական նման կարգավորումը միտված է պաշտպանելու գույքի սեփականատիրոջ իրավունքները, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածին համահունչ գրավի առարկան իրացնելիս անձը գրկվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից արտադատական կարգով, որը բացառություն է ընդհանուր՝ դատական կարգով սեփականության իրավունքից գրկվելու կանոնից: Հետևաբար սեփականատիրոջ իրա-

վունքները, այդ թվում գույքի իրացման վերաբերյալ ծանուցված լինելու իրավունքը, առավելագույն պաշտպանության են ենթարկված վերոնշյալ իրավակարգավորմամբ: Նման պայմաններում գրավի առարկայի իրացման վերաբերյալ ծանուցման իրականացումը կասկած չպետք է հարուցի ծանուցագիրը հասցեատիրոջ կողմից ստանալու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տե՛ս, Արվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն Խաչատրյանի և այլոց թիվ ԿԴՅ/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Անահիտ Միմոնյանը, Սամվել և Լիա Դանիելյանները, որպես Բանկի և Լիա Դանիելյանի միջև 30.06.2010 թվականին կնքված թիվ VTM02090 վարկային պայմանագրով վերջինիս կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ Բանկում գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող Երևանի Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 հասցեում գտնվող 54քմ ընդհանուր մակերեսով բնակարանը:

Բանկի կողմից 07.02.2011 թվականին Անահիտ Միմոնյանին, Սամվել և Լիա Դանիելյաններին ուղարկվել է գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցագիր, որը համաձայն թիվ 039391846 փոստային առաքման հետադարձ ծանուցման՝ ստորագրել և ստացել է միայն Լիա Դանիելյանը: Համաձայն թիվ 039391846 փոստային առաքման հետադարձ ծանուցման՝ գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցագրի հասցեատեր նշված է միայն Լիա Դանիելյանը:

Դատարանը, մերժելով հայցը և բավարարելով հակընդդեմ հայցը, պատճառաբանելով, որ Բանկը բազմիցս բանավոր ձևով նախազգուշացրել է վարկառուին և գրավատուներին վարկային պայմանագրով սահմանված դրամական պարտավորությունները մարելու անհրաժեշտության մասին, և քանի որ Լիա Սամվելի Դանիելյանը, Սամվել Լյուդվիգի Դանիելյանը և Անահիտ Լեկտարի Միմոնյանը հաշվառված բնակվել են նույն հասցեում, նրանց է ուղարկվել թվով 1 (մեկ) բռնագանձման ծանուցում, որը Բանկի կողմից Լիա Սամվելի Դանիելյանին, Սամվել Լյուդվիգի Դանիելյանին և

Անահիտ Լեկտարի Միմոնյանին ուղարկելը և վերջիններիս կողմից ստանալու փաստը հավաստվում է համապատասխան ստորագրությամբ, գտել է, որ հայցվորները բնակվում են նույն հասցեում, հանդիսանում են նույն ընտանիքի անդամները, վարում են ընդհանուր տնտեսություն, հայցվորները ծանոթ են եղել հիփոթեքի պայմանագրի բովանդակությանը, գիտակցել են բռնագանձման ծանուցում ուղարկելու և այն ստանալու իրավական հետևանքները, և եզրակացրել է, որ բռնագանձման ծանուցումն ուղարկվել է բոլոր հայցվորներին, նրանք ստացել են այն, տեղյակ են եղել վերոնշյալ անշարժ գույքի արտադատական կարգով իրացման գործընթացի մասին:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները, գտել է որ Բանկը կատարել է գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու մասին գրավատուներին ծանուցելու իր պարտականությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստերի հաշվառմամբ, արձանագրում է, որ Բանկի կողմից թեև 07.02.2011 թվականին Անահիտ Միմոնյանին, Մամվել և Լիա Դանիելյաններին ուղարկվել է գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցագիր, սակայն բռնագանձման ծանուցագիր ստացել է միայն Լիա Դանիելյանը, քանի որ այդ ծանուցագիրը, ըստ փոստային ծրարի, հասցեագրված է եղել վերջինիս, ով, հանդիսանալով գրավատու, չի կրում և չի կարող կրել բռնագանձման մասին յուրաքանչյուր գրավատուին պատշաճ ծանուցելու կամ իրազեկելու գրավատուի պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրողը:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տե՛ս, Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱԵԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Անահիտ Միմոնյանն ու Մամվել Դանիելյանն ստացել են բռնագանձման ծանուցումը, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի ընդհանուր կանոնի կիրառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկը չի կատարել վերջիններիս պատշաճ ծանուցելու իր պարտականությունը, առանց որի չէր կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերը նշված խախտման պայմաններում այն չի կարող դառնալ քննության առարկա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քա-

դաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Անահիտ Միմոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների հայցը բավարարել. անվավեր ճանաչել «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ի կողմից 19.04.2012 թվականին իրականացված Երևան քաղաքի Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 բնակարանի աճուրդը և որպես դրա հետևանք՝ անվավեր ճանաչել Արմենուհի Բդոյանի հետ կնքված Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 բնակարանի առուվաճառքի պայմանագիրն ու նույն բնակարանի նկատմամբ Արմենուհի Բդոյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Արմենուհի Բդոյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Անահիտ Միմոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների՝ Նոր Արեշ 15-րդ փողոցի 5-րդ շենքի թիվ 32 բնակարանն Անահիտ Միմոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների ապօրինի տիրապետումից ազատելու, բնակարանից վտարելու պահանջի մասին, մերժել:

2. «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ից, «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ից և Արմենուհի Բդոյանից համապարտության կարգով հոգուտ Անահիտ Միմոնյանի, Սամվել և Լիա Դանիելյանների բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/1609/02/11
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/1609/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Համլետ Մադոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նվարդ Դուկասյանի ընդդեմ Համլետ Մադոյանի՝ սեփականության իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նվարդ Դուկասյանը պահանջել է վերացնել իր սեփականության իրավունքի խախտումը՝ պարտավորեցնել Համլետ Մադոյանին փակել տան հյուսիսային պատում՝ իր բակի կողմում, բացված պատուհանը:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Միքայելյան) (այսուհետ՝ Դատարան) 18.04.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.07.2013 թվականի որոշմամբ Համլետ Մադոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.04.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համլետ Մադոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ, 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 163-րդ, 277-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ ՀՀ ժողովրդական դեպուտատների Կոմայրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 03.11.1990 թվականի թիվ 20 արձանագրությունը, ինչպես նաև անհատական բնակելի տան վերակառուցման համար 1990 թվականին տրված Լենինականի Շիրակացի փողոցի թիվ 139ա տան վերաբերյալ բնակելի տան նախագիծը, որին համապատասխան վերակառուցվել է վերոնշյալ հասցեի բնակելի տունը և հենց այդ նախագծով վերակառուցված տան բացված պատուհանի մասով էլ ներկայացվել է հայցվորի պահանջը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանն առանց որևէ գնահատական և իրավական դիրքորոշում հայտնելու վերոգրյալ ապացույցների վերաբերյալ, վճռի հիմքում դրել է միայն ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի գրավոր կարծիքը, ըստ որի՝ բացված պատուհանը հայցվորի համար ստեղծում է անհարմարություններ և ոտնահարում է նրա իրավունքները և շահերը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե վեճի առարկա պատուհանն ինչ կերպով է խոչընդոտում հայցվորին իրականացնելու իր օգտագործման և տնօրինման իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայրը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ժողովրդական դեպուտատների Կոմայրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 03.11.1990 թվականի թիվ 20 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Մեղրակ Մադոյանին տրվել է թույլտվություն սեփական տունը քանդելու և նոր տուն կառուցելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 64).

2) Անհատական բնակելի ֆոնդի տան տեխնիկական անձնագրի համաձայն՝ Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի թիվ 139ա բնակելի տունը պատկանել է Համլետ Մադոյանի հորը՝ Սերգեյ-Մեղրակ Մադոյանին (հատոր 1-ին, գ.թ. 66-69).

3) 04.09.2009 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2400800 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների փողոցի թիվ 71 տունը 02.09.2009 թվականին կնքված թիվ 6077 նվիրատվության պայմանագրի հիման վրա սեփականության իրավունքով պատկանում է Նվարդ Դուկասյանին (հատոր 1-ին, գ.թ. 9-11).

4) 29.06.2010 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի

համաձայն՝ Համլետ Մադոյանը Գյումրի քաղաքի Շիրակացի թիվ 139ա բնակելի տան սեփականատերն է (հատոր 1-ին, գ.թ. 19)։

5) Գյումրու քաղաքապետի 26.10.2011 թվականի թիվ 4267-Ա որոշմամբ ճանաչվել է Համլետ Մադոյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի թիվ 139/1 հասցեի տնատիրության հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ (հատոր 2-րդ, գ.թ. 53)։

6) ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Ի. Վանոյանին հասցեագրված ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի 09.11.2011 թվականի գրության համաձայն՝ ինքնակամ բացված պատուհանը գտնվում է Շիրակացի թիվ 139ա բնակելի տան այն պատի բացվածքում, որը սահմանակից է Նվարդ Ղուկասյանին պատկանող Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների թիվ 71 բնակելի տան հողամասին։ Ինքնակամ կառույցի պատուհանից տեսանելի է հարևան բակի ամբողջ տարածքը, ինչն անհարմարություններ է ստեղծում Նվարդ Ղուկասյանի համար և ոտնահարում նրա շահերը՝ սահմանափակելով նրա սեփականությունից օգտվելու իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 21)։

7) ՀՀ վարչական դատարանի 06.06.2012 թվականի վճռով Նվարդ Ղուկասյանի հայցը՝ Գյումրու քաղաքապետի 26.10.2011 թվականի թիվ 4267-Ա որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, մերժվել է։ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.11.2012 թվականի որոշմամբ նշված վճռի դեմ Նվարդ Ղուկասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.01.2013 թվականի որոշմամբ Նվարդ Ղուկասյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է (հատոր 3-րդ, գ.թ. 4-14)։

8) Դատարանի 29.03.2013 թվականի տեղատեսության արձանագրության համաձայն՝ Համլետ Մադոյանի երկրորդ սենյակի պատուհանը բացվում է դեպի Նվարդ Ղուկասյանի հողամասը։ Համլետ Մադոյանի տունը հյուսիսային կողմից սահմանակից է հայցվոր Նվարդ Ղուկասյանի բակին և անմիջականորեն կառուցված նրա հողամասի սահմանագծին։ Այսինքն՝ պատուհանից ամբողջությամբ տեսանելի է հայցվոր Նվարդ Ղուկասյանի տան բակը (հատոր 3-րդ, գ.թ. 29)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար։

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե արդյոք օրինական ճանաչված կառույցի վրա բացված պատուհանի առկայությունն ինքնին կարող է համարվել այլ սեփականատիրոջ իրավունքների իրականացման խոչընդոտ։

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը։

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը։ Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը իրականացվում է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները գուցե դեռ չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն օժտված է իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներով և իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, որը կապված է այդ իրավունքների իրականացման հետ:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածով ամրագրվել է այնպիսի խախտումները վերացնելու պահանջ ներկայացնելու իրավունքը (սեգատոր հայց), որոնք, չգրկելով սեփականատիրոջը գույքի տիրապետման իրավունքից, խոչընդոտում են նրա այլ՝ գույքի օգտագործման և տնօրինման իրավունքների լիարժեք իրականացմանը՝ դրանով իսկ խախտելով այդ իրավունքները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նեգատոր հայցով սեփականատիրոջ իրավունքները ենթակա են պաշտպանության այն դեպքում, երբ պատասխանողի գործողություններն օրինական չեն, իսկ այն դեպքում, երբ պատասխանողի գործողությունները հիմնված են վարչական ակտի վրա, ապա իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի վարչական ակտը վիճարկելու եղանակով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտն ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ Համլետ Մադոյանի տունը սահմանակից է Նվարդ Ղուկասյանին պատկանող 26 Կոմիսարների թիվ 71 բնակելի տան հողամասին և նրա տան հյուսիսային պատում բացված պատուհանից ամբողջությամբ տեսանելի է Նվարդ Ղուկասյանին պատկանող տան բակը, որն ուղղակի միջամտություն է նրա անձնական ու ընտանեկան կյանքին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչ Ս. Հայրապետյանի թիվ 25/25.1/5605-11 09.11.2011 թվականի գրությունը, ըստ որի՝ վիճելի պատուհանն իր գոյությամբ անհարմարություններ է ստեղծում Նվարդ Ղուկասյանի համար և ոտնահարում է նրա շահերը՝ սահմանափակելով նրա՝ սեփականությունից օգտվելու իրավունքը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ «տվյալ դեպքում պատուհանի առկայությունն ինքնին վկայում է հայցվորի սեփականության իրավունքի խախտման մասին, վիճելի պատուհանն ի սկզբանե եղել է ինքնակամ կառույց և օրինականացվել է սույն գործի քննության ընթացքում, Դատարանի կողմից հայցի ապահովման մասին որոշում կայացված լինելու պարագայում, հետևաբար սույն քաղաքացիական գործով Դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով և պատշաճ գնահատելով գործում առկա բոլոր ապացույցները, կայացրել է օրինական և հիմնավորված վճիռ»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի թիվ 139ա բնակելի տունը պատկանել է Համլետ Մադոյանի հորը՝ Սերգեյ-Սեդրակ Մադոյանին, ՀՀ ժողովրդական դեպուտատների

Կումայրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 03.11.1990 թվականի թիվ 20 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Մեղրակ Մադոյանին տրվել է թույլտվություն սեփական տունը քանդելու և նոր տուն կառուցելու մասին: 04.09.2009 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2400800 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների փողոցի թիվ 71 տան սեփականատերը Նվարդ Ղուկասյանն է: Գործում առկա՝ Գյումրու քաղաքապետի 26.10.2011 թվականի թիվ 4252-Ա և 4267-Ա որոշումներով օրինական են ճանաչվել Համլետ Մադոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացի թիվ 139/1 հասցեի տնատիրության հողամասը և ինքնակամ կառուցված բնակելի շինությունները: ՀՀ վարչական դատարանի 06.06.2012 թվականի վճռով Նվարդ Ղուկասյանի հայցը՝ Գյումրու քաղաքապետի 26.10.2011 թվականի թիվ 4267-Ա որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, մերժվել է: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.11.2012 թվականի որոշմամբ նշված վճռի դեմ Նվարդ Ղուկասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.01.2012 թվականի որոշմամբ Նվարդ Ղուկասյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը վերադարձվել է: 14.12.2011 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2885119 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի թիվ 139/1 բնակելի տունն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 10.04.2008 թվականի թիվ 2243, 29.06.2010 թվականի թիվ 4418 վկայագրերի և ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.08.2010 թվականի վճռի, Գյումրու քաղաքապետի 26.10.2011 թվականի թիվ 4252-Ա և 4267-Ա որոշումների հիման վրա՝ սեփականության իրավունքով պատկանում է Համլետ Մադոյանին:

Վերը նշված իրավական վերլուծությունները հիմք ընդունելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի թիվ 139/1 բնակելի տան նկատմամբ 14.12.2011 թվականին Համլետ Մադոյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման հիմքում դրվել է նաև Գյումրու քաղաքապետի 26.10.2011 թվականի թիվ 4267-Ա որոշումը, որով օրինական են ճանաչվել վերոնշյալ հասցեի հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունները:

Տվյալ որոշումը Նվարդ Ղուկասյանի կողմից դատական կարգով վիճարկվել է, սակայն ՀՀ վարչական դատարանի՝ 06.06.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով այն չի ճանաչվել ոչ իրավաչափ անվավեր, հետևաբար Գյումրու քաղաքապետի 26.10.2011 թվականի թիվ 4267-Ա որոշումն իրավաչափ է, որի հիմքով էլ օրինական են Համլետ Մադոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացի թիվ 139/1 հասցեի տնատիրության հողամասում գտնվող ինքնակամ կառուցված բնակելի շինությունները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վեճի առարկա պատուհանը գտնվում է Շիրակացի թիվ 139/1 հասցեի օրինական ճանաչված շինության՝ բնակելի տան պատի բացվածքում (ընդ որում, ինքնակամ շինությունն օրինական ճանաչելու պահին վիճելի պատուհանն առկա էր, որպիսի փաստն ընդունել է նաև Նվարդ Ղուկասյանը թիվ ՎԴ5/0093/05/12 վարչական գործով ներկայացված հայցադիմումով (տե՛ս, ՀՀ վարչական դատարանի 06.06.2012 թվականի թիվ ՎԴ5/0093/05/12 վճռի «Հայցվորի իրավական դիրքորոշումը» մասը՝ հարցը 3-րդ, գ.թ. 69-70)), որը սահմանակից է Նվարդ Ղուկասյանի բնակելի տան հողամասին, այսինքն՝ խնդրո առարկա պատուհանի առկայությունն ինքնին չի կարող համարվել սեփականատիրոջ իրավունքների իրականացման խոչընդոտ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար:

Նշվածը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչ Ս. Հայրապետյանի 09.11.2011 թվականի գրությունը, ըստ որի՝ Գյումրի քաղաքի Շիրակացի թիվ 139ա տան երկրորդ հարկի հյուսիսային կողմում գտնվող պատուհանը սահմանակից է Նվարդ Ղուկասյանին պատկանող Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների թիվ 71 բնակելի տան հողամասին, որից տեսանելի է հարևան բակի ամբողջ տարածքը, ինչն անհարմարություններ է ստեղծում Նվարդ Ղուկասյանի համար և ոտնահարում նրա շահերը՝ սահմանափակելով նրա սեփականությունից օգտվելու իրավունքը, ինքնին բավարար չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի ուժով Նվարդ Ղուկասյանի սեփականության իրավունքի խախտման փաստը հաստատելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ սույն քաղաքացիական գործով Դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով և պատշաճ գնահատելով գործում առկա բոլոր ապացույցները, կայացրել է օրինական և հիմնավորված վճիռ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի որջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը որջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Նվարդ Ղուկասյանի հայցը մերժել:

2. Նվարդ Ղուկասյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.10.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-3/0450/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-3/0450/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Մատինյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄԱՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լևոն Արշակունու ներկայացուցիչ Մարատ Գինոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Լևոն Արշակունու հայցի ընդդեմ Կոմիտաս Հայրապետյանի, երրորդ անձ ՀՀ Կոտայքի մարզի Զովունու գյուղապետարանի՝ հողամաս մուտք գործելու արգելքները վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լևոն Արշակունին պահանջել է պարտավորեցնել Կոմիտաս Հայրապետյանին վերացնել ՀՀ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 38-րդ փողոցի թիվ 3-3ա հասցեում գտնվող, Լևոն Արշակունուն սեփականության իրավունքով պատկանող հողամաս մուտք գործելու արգելքները, այն է՝ հողամաս տանող ճանապարհն ազատել քարե պարսպից, ինչպես նաև Կոմիտաս Հայրապետյանից հոգուտ Լևոն Արշակունու բռնագանձել 55.000 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության համար վճարված գումար, ինչպես նաև 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանական ծառայության գումար:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Հերոյան) (այսուհետ՝ Դատարան) 14.02.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.04.2014 թվականի որոշմամբ Կոմիտաս Հայրապետյանի վերաքննիչ բողոքը բավա-

րարվել է՝ բեկանվել է Դատարանի 14.02.2014 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լևոն Արշակունու ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 202-րդ, 277-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Կոմիտաս Հայրապետյանն ակնհայտորեն դուրս է եկել իր հողամասի սահմաններից, ճանապարհի վրա կատարել է ինքնակամ կառուցապատում, ինչի հաշվին դեպի Լևոն Արշակունու հողամաս տանող ընդհանուր օգտագործման ճանապարհին ավտոմեքենաների համար դարձել է անանցանելի, ուստի վիճելի պարսպի օրինական լինելը պետք է ապացուցեր պատասխանողը:

Վերաքննիչ դատարանն անհարկի հղում է կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետին՝ հաշվի չառնելով, որ վեճի առարկան ոչ թե անձի սեփական հողամասում կամ ուրիշի հողամասում ինքնակամ կառույցի իրականացումն է, այլ ընդհանուր օգտագործման, համայնքային նշանակության ճանապարհի ինքնակամ զավթումն է և ապօրինի պարսպապատումը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով երրորդ անձի ներկայացուցչի կողմից տրված հայտարարությունն այն մասին, որ ճանապարհը նեղացվել է ոչ թե Կոմիտաս Հայրապետյանի կողմից, այլ համայնքային ճանապարհի մյուս կողմում հարևանի կողմից իր հողամասը բաժանելու և ցանկապատ տեղադրելու հետևանքով, գործում առկա այլ ապացույցների պայմաններում չէր կարող դիտվել և գնահատվել ինքնակամ կառուցապատումը հերքող ապացույց:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ հարևանի կողմից 1,20 մետր ճանապարհիը նեղացնելու փաստի ընդունումը ոչ մի ապացույցով հիմնավորված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.04.2014 թվականի որոշումը և օրինական ուժ փալ Դատարանի 14.02.2014 վճիռն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից 01.12.2010 թվականին տրված թիվ 2746955 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Լևոն Արշակունին ՀՀ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 38-րդ փողոցի 3-3ա հասցեում գտնվող 0034-0048 կադաստրային համարի 0,1060հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի, դրա վրա տեղակայված 44,2քմ մակերեսով մատանի և 45,2քմ մակերեսով ավտոտնակի սեփականատերն է (հատոր 1-ին, գ.թ. 87-88):

2) Կոմիտեի կողմից 03.05.2011 թվականին տրված անշարժ գույքի թիվ 2809911 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Կոմիտաս Հայրապետյանը ՀՀ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 38-րդ փողոցի թիվ 3-4ա հասցեում գտնվող 0034-0049 կադաստրային համարի 0,0960հա մակերեսով տնամերձ հողամասի սեփականատերն է:

3) Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից տրամադրված Զովունի համայնքի կադաստրային քարտեզի համաձայն՝ Լևոն Արշակունուն պատկանող հողամասի հարևանությամբ գտնվում է Կոմիտաս Հայրապետյանի հողամասը: Ըստ տվյալ կադաստրային քարտեզի՝ Լևոն Արշակունուն պատկանող հողամաս տանող միակ ճանապարհն անցնում է պատասխանողին պատկանող հողամասի հարևանությամբ և ճանապարհի լայնությունը կազմում է 5 մետր (հատոր 1-ին, գ.թ. 83-84):

4) «ՎԱՐՄՕՇ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2013 թվականին տրված թիվ 157-01/Վ-013 հաշվետվության համաձայն՝ ավտոտնակ և մատան մուտք գործելու համար նախատեսված ընդհանուր օգտագործման ճանապարհի ձախ կողմը սահմանազատված է մետաղական ցանկապատով, իսկ այց կողմում կառուցված է պարիսպ: Պարիսպը կառուցված է ոչ թե մատանի շինության եզրից, այլ 61սմ-ով ներկառուցված է հետագոտվող ճանապարհի մեջ, ինչի հետևանքով երկու կողմերից մատանի և ավտոտնակի համար նախատեսված ճանապարհը նեղացել է: Կառուցված պարսպի վերջին՝ 2,75 մետր երկարությամբ հատվածը դեպի հետագոտվող ճանապարհ, ունի 1,32 մետր շեղություն, ինչը հարմարեցված է հետագայում հարևան տնատիրության բակ մտնող մուտքի վրա մետաղական դարպաս տեղադրելու համար: Արդյունքում ավտոտնակ և մատան մուտք գործելու համար նախատեսված ճանապարհի այց մասում պարիսպ կառուցելու հետևանքով հետագոտվող ճանապարհի մուտքի համար մնացել է 2,12 մետր լայնությամբ հատված: Ընդ որում, մատանի կողմից հետագոտվող ճանապարհը փոքրացել է 61սմ-ով, իսկ պարիսպի վերջնամասի թեքության պատճառով՝ 1,32 մետրով, ընդհանուրը՝ 1,93 մետրով (հատոր 1-ին, գ.թ. 69-78):

6) Սույն գործում առկա չէ որևէ բավարար ապացույց այն մասին, որ վեճի առարկա ճանապարհը նեղացել է համայնքային ճանապարհի մյուս կողմում հարևանի կողմից իր հողամասը բաժանելու և ցանկապատ տեղադրելու հետևանքով, ինչպես նաև ապացույց այն մասին, որ հարևանն ընդունում է, որ 1մ 20սմ-ի չափով նեղացրել է ճանապարհը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նեգատոր հայցերի գործերով ապացուցման առարկան պարզելու և ապացուցման դատավարական բեռը բաշխելու հարցերին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է

այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*լրե՛ս, Էդգար Մարկոսյանն և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱԽ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հոդվածում նախատեսված իրավունքի ապահովումը հնարավոր է նեգատոր հայցի միջոցով, որը որպես սեփականության իրավունքի պաշտպանության միջոց ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման և/կամ փաստացի տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Նեգատոր հայցի ներկայացման հնարավորություն առաջանում է այն դեպքում, երբ գույքի սեփականատերը և երրորդ անձը վիճելի գույքի առնչությամբ չեն գտնվում պարտավորական հարաբերությունների մեջ, և երբ թույլ տրված իրավախախտումը չի հանգեցրել գույքի նկատմամբ սեփականության սուբյեկտիվ իրավունքի դադարման: Վերոնշյալ մկենաբանությունների ընդհանրացման արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ նեգատոր հայցի ներկայացման դեպքում միաժամանակ պետք է առկա լինեն հետևյալ երկու պայմանները.

հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական (տիրոջուսային) տիրապետող,

հայցի ներկայացման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի գույքի սեփականատիրոջը կամ օրինական (տիրոջուսային) այլ տիրապետողին օգտագործել և/կամ տնօրինել գույքը:

Վերոնշյալ պայմանները որպես փաստ ներառվում են նեգատոր հայցերով հարուցված գործերի ապացուցման առարկայում: Այդուհանդերձ դրանք ապացուցման առարկան կազմող միակ փաստերը չեն: Ի թիվս վերոնշյալի՝ ապացուցման է ենթակա նաև երրորդ փաստը, այն է՝ գույքի օգտագործմանը և/կամ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության իրավական լինելու փաստը: Նեգատոր հայցը սեփականության իրավունքի պաշտպանության ինքնուրույն միջոց է, որն իր հիմքում ունի փաստերի առանձնահատուկ կազմ, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը կիրառելիս դատարանները պետք է հաշվի առնեն տվյալ գործով ապացուցման առարկան և դրա հիմքը, որից հետո միայն կողմերի միջև ճիշտ բաշխեն ապացուցման պարտականությունը: Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նեգատոր հայցերի դեպքում դատավարական բեռը բաշխելիս հայցվորն է կրում գույքի սեփականատերը լինելու և այդ գույքի օգտագործմանը և/կամ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության փաստերն ապացուցելու պարտականությունը: Ինչ վերաբերում է երրորդ փաստին՝ գործողությունների կամ անգործության հակաիրավական բնույթին,

ապա հայց ներկայացնելու պահին վերջիններիս առնչությամբ գործում է հակաիրավական լինելու կանխավարկածը, քանի դեռ պատասխանողը չի ապացուցել հակառակը: Հետևաբար նշված փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է պատասխանողը:

Սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործում առկա ապացույցներով հաստատվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի հիմքով հայցի հիմնավորված լինելը:

Վերաքննիչ դատարանը պատասխանող Կոմիտաս Հայրապետյանի վերաքննիչ բողոքը բավարարելիս և դատական ակտը բեկանելիս հիմք է ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետը և հանգել այն հետևության, որ հայցվոր Լևոն Արշակունին պարտավոր էր ապացուցել, որ կառուցված պարիսպն ինքնակամ կառույց է, և այդ ինքնակամ կառույցը, գտնվելով այլ անձի սեփականությունը հանդիսացող հողամասի (ընդհանուր օգտագործման ճանապարհ) վրա, սահմանափակել է իր հողամաս մուտք գործելու հնարավորությունը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը չի անդրադարձել և չի գնահատել ապացույցները, մասնավորապես՝ տեղագնության ժամանակ երրորդ անձի ներկայացուցչի կողմից կատարված այն հայտարարությունը, որ ճանապարհը նեղացվել է ոչ թե Կոմիտաս Հայրապետյանի կողմից, այլ համայնքային ճանապարհի մյուս կողմում հարևանի կողմից իր հողամասը բաժանելու և ցանկապատ տեղադրելու հետևանքով, իսկ հարևանն ընդունում է, որ 1մետր 20սմ-ի չափով նեղացրել է ճանապարհը:

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջինս սխալ եզրահանգման է եկել Դատարանի կողմից ապացուցման բեռի բաշխման հարցը գնահատելիս: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ապացուցման առարկան են կազմում հետևյալ փաստերը՝

Լևոն Արշակունու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չովունի գյուղի 38-րդ փողոցի թիվ 3-3ա հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատեր լինելը,

կառուցված քարե պարսպի հետևանքով դեպի հայցվոր Լևոն Արշակունու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չովունի գյուղի 38-րդ փողոցի թիվ 3-3ա հասցեում գտնվող ավտոտնակ և մառան մուտք գործելու համար նախատեսված ընդհանուր օգտագործման ճանապարհի մուտքի՝ պատասխանողի կողմից նեղացումը,

վիճելի պարսպի օրինական լինելը:

Նշված փաստերից առաջին երկուսի ապացուցման բեռը կրում է հայցվորը, քանի որ դրանք այն իրավաբանական փաստերն են, որոնք կազմում են նեգատոր հայցով դատարան դիմելու պայմանները: Երրորդ փաստի ապացուցման բեռը կրում է պատասխանողը: Ընդ որում, գործում է պարսպի՝ առանց իրավական հիմքի կառուցված լինելու կանխավարկածը, քանի դեռ հայցվորը չի ապացուցել հակառակը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա՝ հայցվոր Լևոն Արշակունու անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով, պատասխանող Կոմիտաս Հայրապետյանի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով, Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից տրամադրված Չովունի համայնքի կադաստրային քարտեզից, ինչպես նաև «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2013 թվականին տրված թիվ 157-01/Վ-013 հաշվետվությամբ հիմնավորվում է փաստն այն մասին, որ Կոմիտաս Հայրապետյանի կողմից կառուցված վիճելի քարե պարսպի հետևանքով դեպի հայցվոր Լևոն Արշակունու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չովունի գյուղի 38-րդ փողոցի թիվ 3-3ա հասցեում գտնվող ավտոտնակ և մառան մուտք գործելու համար նախատեսված ընդհանուր օգտագործման ճանապարհի մուտքը նեղացվել է, և ճանապարհի մուտքի համար մնացել է 2,12 մետր

լայնությամբ հատված: Ընդ որում, մատանի կողմից հետազոտվող ճանապարհը փոքրացել է 61սմ-ով, իսկ պարսպի վերջնամասի թեքության պատճառով՝ 1,32 մետրով, ընդհանուրը՝ 1,93 մետրով: Սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ վիճելի քարե պարիսպն օրինական է:

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լևոն Արշակունուն սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակ և մատան մուտք գործելու համար նախատեսված ընդհանուր օգտագործման ճանապարհի աջ կողմում կառուցված պարսպի հետևանքով խախտվում են նրա՝ որպես սեփականատիրոջ՝ գույքն օգտագործելու և փաստացի տիրապետելու իրավունքները: Միաժամանակ վիճելի քարե պարսպի օրինական լինելու հանգամանքը սույն գործով ապացուցված չլինելու պայմաններում, դրա բացասական հետևանքները կրում է պատասխանող կողմը, այսինքն՝ գործում է պարսպի հակաօրինական լինելու կանխավարկածը: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով հայցվոր Լևոն Արշակունին պարտավոր էր ապացուցել, որ կառուցված պարիսպը ինքնական կառույց է, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությանը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնական կառույցը: Չօրինականացված ինքնական կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնական կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնական կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, որպես սեփականության իրավունքի պաշտպանության միջոց, իրավունք է վերապահել սեփականատիրոջը քանդելու իր հողամասում կառուցված ինքնական շինությունը: Այդ իսկ պատճառով այդ հիմքով հարուցված գործերի քննության համար էական նշանակություն ունի սեփականատիրոջ հողամասում գտնվող կառույցի ինքնական լինելու հանգամանքը, որի ապացուցման բեռը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով կրում է հողամասի սեփականատերը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վեճը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի հիմքով սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությանը, որի դեպքում գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը այլ է: Ավելին, սույն գործով վեճի առարկան ընդհանուր օգտագործման ճանապարհի վրա գտնվող քարե պարիսպն է, որի առկայությունն ինքնին առաջ է բերում սեփականատիրոջ գույքի տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտում:

Շեռևարար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները կիրառելի չեն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Դատարանը չի գնահատել տեղագնություն ժամանակ երրորդ անձի ներկայացուցչի կողմից կատարված այն հայտարարությունը, որ ճանապարհը նեղացվել է ոչ թե Կոմիտաս Հայրապետյանի կողմից, այլ համայնքային ճանապարհի մյուս կողմում հարևանի կողմից իր հողամասը բաժանելու և ցանկապատ տեղադրելու հետևանքով, իսկ հարևանն ընդունում է, որ 1 մետր 20 սմ-ի չափով նեղացրել է ճանապարհը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն տվյալ հայտարարությունը բավարար չէ հաստատված

համարելու, որ ընդհանուր օգտագործման համայնքային ճանապարհը նեղացվել է մյուս կողմում գտնվող հարևանի կողմից, և վերջինս ընդունել է նշված փաստը:

Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանության առնչությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ հայցի հարուցումն ընդհանրապես, իսկ նեգատոր հայցի հարուցումը մասնավորապես անհրաժեշտ է դիտարկել տնօրինչականության սկզբունքի լույսի ներքո: Սեփականատերն ինքն է որոշում, թե իր սեփականության նկատմամբ ոտնձգություն իրականացրած մեկից ավելի անձանցից որի նկատմամբ պաշտպանության ինչ միջոց պետք է ընտրել: Հետևաբար Վերաքննիչ դատարանը նշված պատճառաբանությամբ չէր կարող միջամտել հայցվորի սեփականության իրավունքին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, ուստի Դատարանի վճռին պետք է տալ օրինական ուժ՝ սույն որոշման պատճառաբանություններով հանդերձ:

Միաժամանակ վերոհիշյալ դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.02.2014 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Կոմիտաս Հայրապետյանից հոգուտ Լևոն Արշակունու բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ-1/0030/02/10
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ-1/0030/02/10

Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լևոն Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարդան Դազարյանի ընդդեմ Լևոն Գրիգորյանի՝ ավտոմեքենան ապօրինի տիրապետումից հետ պահանջելու կամ դրա արժեքը վճարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Դազարյանը պահանջել է վերադարձնել «Կամազ» ավտոմեքենան կամ 5.000.000 ՀՀ դրամ՝ ավտոմեքենայի արժեքը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 20.07.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 29.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Պարտավորեցնել պատասխանող Լևոն Գրիգորյանին հայցվորին հետ վերադարձնելու «Կամազ-53212» մակնիշի 43-71ԱԴՇ պետհամարանիշի ավտոմեքենան կամ վճարելու մեքենայի շուկայական արժեքը: Հայցապահանջը՝ մնացած մասով, մերժել»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.02.2010 թվականի թիվ 3-177(ՎԴ) որոշմամբ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 29.10.2007 թվականի վճիռը նոր երևան եկած հանգամանքների հիմքով

բեկանվել և գործն ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Բ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 12.03.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Պարտավորեցնել պատասխանող Լևոն Գրիգորյանին հայցվոր Վարդան Ղազարյանին վերադարձնել 1985 թվականի արտադրության, հենասարքը՝ 021921, շարժիչը՝ 616461, թափքը՝ ֆուրգոն, «Կամազ-53212» մակնիշի, նախկին պետհամարանիշը՝ 43-71ԱԴԾ ավտոմեքենան կամ դրա արժեքը՝ 3.150.315 ՀՀ դրամ: Հայցը՝ մնացած մասով, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.07.2013 թվականի որոշմամբ Լևոն Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.03.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լևոն Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վարդան Ղազարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, կիրառել է նույն օրենսգրքի 1058-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 31-րդ, 39-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն հետազոտել և գնահատել գործում առկա ապացույցները: Դատարանը վճիռ կայացնելիս դուրս է եկել հայցի շրջանակներից, իսկ Վերաքննիչ դատարանը, կայացնելով անհիմն դատական ակտ, վճիռը թողել է օրինական ուժի մեջ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անտեսել է և չի գնահատել Էդվարդ Շահբազյանի բացատրությունն ու ՀՀ Լոռու մարզի դատախազին ուղղված հայցվորի դիմումը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ պատասխանողի ոչ օրինաչափ վարքագծի, այն է՝ ավտոմեքենան չվերադարձնելու և վարձավճարը չվճարելու հետևանքով Վարդան Ղազարյանին պատճառվել է վնաս, ինչպես նաև հաստատված է համարել վնասի և ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառական կապի առկայությունը՝ արձանագրելով, որ եթե պատասխանողը, պայմանավորվածության համաձայն, կատարեր իր ստանձնած պարտավորությունները, հայցվորը վնասներ չէր կրի: Մինչդեռ, հայցվորը, դիմելով դատարան, պահանջել է ավտոմեքենան ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնել, հետևաբար պետք է ապացուցեր, որ ավտոմեքենան գտնվում է պատասխանողի ապօրինի տիրապետման ներքո: Սույն քաղաքացիական գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորի այն փաստը, որ պատասխանողն է ապօրինի տիրապետում տվյալ գույքը: Ավելին, գործի դատական քննության ժամանակ հիմնավորվել է, որ պատասխանողը ոչ օրինական և ոչ էլ ապօրինի հիմքերով չի տիրապետում վիճելի ավտոմեքենան: Նշվածը հիմնավորվել է հայցվորի այն ցուցմունքով, որ Լևոն Գրիգորյանն է իրեն ասել, որ ավտոմեքենան Էդվարդ Շահբազյանի մոտ է, և այն տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն (այսուհետ՝ ՌԴ) հայցվորի գիտությամբ ու հանձնարարությամբ (հայցվորն այդ մասին իմացել է դեռ ավտոմեքենան հանձնելու պահին), ինչպես նաև հայցվորի՝ ՀՀ Լոռու մարզի դատախազին հասցեագրված դիմումով, որում հայցվորը մանրամասն

նկարագրել է, թե ինչպես է ավտոմեքենան ապառիկ վաճառել Էդվարդ Շահբազյանին, և վերջինս էլ իր գիտությամբ այն տեղափոխել է Ռ-Դ: Նշված ապացույցների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ցանկացած պարագայում ավտոմեքենան պատասխանողի տիրապետման ներքո չի գտնվել, հետևաբար վերջինս չի կարող համարվել պատշաճ պատասխանող:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ «Կամազ-53212» մակնիշի 1985 թվականի արտադրության բեռնատար ավտոմեքենայի սեփականատերը հանդիսանում է «Կարմրախայտ» կոոպերատիվը, իսկ գործում առկա չէ որևէ հիմնավոր ապացույց, որը կհաստատեր, որ Վարդան Ղազարյանը սույն քաղաքացիական գործով հանդիսանում է պատշաճ հայցվոր, մինչդեռ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերով հայցը բավարարվել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.07.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը

Դատարանն ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում հանգել է հիմնավոր և պատճառաբանված եզրահանգման, որպիսի պայմաններում բացակայում է դատական սխալը, որը կարող է հիմք հանդիսանալ դատական ակտը բեկանելու համար, հետևաբար Լևոն Գրիգորյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն ակնհայտ անհիմն է և ենթակա չէ բավարարման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 05.11.1992 թվականին տրված ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի համաձայն՝ «Կամազ-53212» մակնիշի թիվ 43-71ԱԴՇ պետհամարանիշի 1985 թվականի արտադրության (շարժիչը՝ 409715 համարի) բեռնատար ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է «Կարմրախայտ» կոոպերատիվին (հատոր 1-ին, գ.թ. 3):

2) Էդվարդ Շահբազյանը Վճռաբեկ դատարանին ուղղված, նոտարական կարգով հաստատված 25.03.2009 թվականի բացատրությամբ հայտնել է, որ Վարդան Ղազարյանի հետ իրեն ծանոթացրել է Լևոն Գրիգորյանը, 1996 թվականից իր և Վարդան Ղազարյանի միջև կնքվել են տարբեր ավտոտեխնիկայի ձեռքբերման գործարքներ, «Կամազ-53212» մակնիշի ավտոմեքենայի հետ կապված Լևոն Գրիգորյանը որևէ մասնակցություն չունի (հատոր 2-րդ, գ.թ. 76-77):

3) ՀՀ Լոռու մարզի դատախազությանը հասցեագրված իր դիմումով Վարդան Ղազարյանը հայտնել է, որ «Կամազ-53212» մակնիշի թիվ 43-71ԱԴՇ պետհամարանիշի ավտոմեքենան ապառիկ կարգով վաճառել է Էդվարդ Շահբազյանին, իսկ վերջինս իր գիտությամբ ավտոմեքենան տեղափոխել է Ռ-Դ և մեքենայի համար գումար չի վճարել (հատոր 2-րդ, գ.թ. 71-72):

4) Ստեփանավանի նոտարական տարածքի նոտար Ա. Հարությունյանի 12.04.2012 թվականի գրության համաձայն՝ վերջինիս կողմից ստուգվել է 1995, 1996, 1997 թվականների տրանսպորտային միջոցի օտարման գործարքները, և պարզվել է, որ Վարդան Ղազարյանի կողմից Վարդաբլուր գյուղի բնակիչ Լևոն Գրիգորյանի հետ բեռնատար տրանսպորտային միջոցի կամ այլ շարժական տեխնիկայի օտարման պայմանագրեր չեն կնքվել: Վարդան Ղազարյանի և Էդվարդ Շահբազյանի միջև 06.06.1996 թվականին թիվ 1392, 1393, 1394 սեղանամատյաններով և 28.06.1996 թվականին թիվ 1656

սեղանամատյանով կնքվել են ինքնագնաց տրանսպորտային միջոցի (տրակտորների) առուվաճառքի պայմանագրեր (հատոր 4, գ.թ. 80):

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Քննության առարկա վճռաբեկ բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանը կարևորում է՝

- գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով (վինդիկացիոն հայց) պատշաճ հայցվորի և պատշաճ պատասխանողի հարցը.

- վինդիկացիոն հայցի և վնասի հատուցման հայցի հարաբերակցության խնդիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի (*լրե ս, Արմենուհի Թադևոսյանն ընդդեմ «Հայասրանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ՇԴ/0613/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*):

Ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է:

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքն ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը (*լրե ս, Միսակ-Նուբար Թերեղեկյանն ընդդեմ Ռուբեն Բոչարի և մյուսների թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցի իրավունքը նյութական և դատավարական իրավունքների ինստիտուտ է: Հայցի իրավունքի դատավարական կողմը ենթադրում է դատարան դիմելու իրավունքը, իսկ նյութաիրավական կողմը՝ օրինական և հիմնավորված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունքը:

Յուրաքանչյուր դեպքում հայցվորի պատշաճ լինելու հարցը լուծելիս դատարանները պետք է պարզեն հայցի իրավունքի նյութաիրավական կողմի առկայությունը, մասնավորապես՝ արդյոք հայցվորը հանդիսանում է վիճելի իրավահարաբերության մասնակից, և արդյոք վիճելի իրավունքը պատկանում է վերջինիս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով պատշաճ հայցվոր հանդիսանում է գույքի սեփականատերը:

Մինևույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածը սահմանում է, որ սույն օրենսգրքի 274-րդ հոդվածով նախատեսված իրավունքը պատկանում է նաև այն անձին, ով թեև սեփականատեր չէ, սակայն գույքը տիրապետում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքով:

Վերոգրյալից հետևում է, որ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով պատշաճ հայցվոր կարող է լինել նաև գույքն օրենքով կամ պայմանագրով տիրապետող, սեփականատեր չհանդիսացող անձը:

Վինդիկացիոն հայցը կարող է հարուցվել միայն ապօրինի տիրապետողի դեմ, հետևաբար այդպիսի հայցով պատշաճ պատասխանող կարող է լինել այն անձը, ում ապօրինի տիրապետման ներքո գտնվում է սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի գույքը:

Սույն գործով Դատարանը, հաստատված համարելով, որ «Կամագ-53212» մակնիշի թիվ 43-71ԱԴԾ «Ֆոտ» տիպի բեռնատարը բեռնված վիճակում տեղափոխվել է Ռոստովի մարզի Սալսկ քաղաք պատասխանող Լևոն Գրիգորյանի և Էդվարդ Շահբազյանի ուղեկցությամբ, պատասխանողը թե՛ մեքենայի արժեքը, թե՛ «Բուլդոչ» տիպի ավտոմեքենան և թե՛ վարձավճարը չի վճարել, միևնույն ժամանակ չի վերադարձրել նաև ավտոմեքենան, որի հետևանքով հայցվորը կրել է վնաս, վճռել է հայցը բավարարել մասնակի՝ պարտավորեցնել պատասխանող Լևոն Գրիգորյանին հայցվոր Վարդան Ղազարյանին վերադարձնել 1985 թվականի արտադրության «Կամագ-53212» մակնիշի թիվ 43-71ԱԴԾ պետահամարանիշի ավտոմեքենան կամ դրա արժեքը՝ 3.150.315 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ «պատասխանող Լևոն Գրիգորյանը հայցվոր Վարդան Ղազարյանի հետ պայմանավորվել է մեքենան գնելու կամ վարձակալելու մասին, որին տեղյակ է եղել և հետագայում միացել է Էդվարդ Շահբազյանը: Հիմնավոր է Դատարանի հետևությունն առ այն, որ մեքենան տեղափոխելու վարձը վկա Բաբկեն Ղազարյանին՝ «Կայծ»-ին, վճարել է պատասխանողը, այսինքն՝ սկզբից մինչև վերջ հայցվորի հետ հարաբերությունների մեջ նախաձեռնող և գործնականում կապի մեջ է եղել պատասխանող Լևոն Գրիգորյանը»: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «տվյալ դեպքում պատասխանողի ոչ օրինաչափ վարքագծի հետևանքով, որը դրսևորվել է վերջինիս կողմից մեքենայի արժեքը, վարձավճարը չվճարելով, «Վուլգա-3129» մակնիշի ավտոմեքենաները չհանձնելով, միևնույն ժամանակ նաև ավտոմեքենան չվերադարձնելով, հայցվոր Վարդան Ղազարյանին պատճառվել է վնաս: Վերաքննիչ դատարանը հաստատված է համարում նաև վնասի և ոչ իրավաչափ վարքագծի միջև պատճառական կապի առկայությունը, քանզի եթե պատասխանողը, պայմանավորվածության համաձայն, կատարեր իր ստանձնած պարտականությունները, հայցվորը վնասներ չէր կրի»:

Թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը հաստատված են համարել հետևյալ փաստերը՝ «Կամագ-53212» մակնիշի թիվ 43-71ԱԴԾ պետահամարանիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է «Կարմրախայտ» կոոպերատիվին, հայցվոր Վարդան Ղազարյանը «Կարմրախայտ» կոոպերատիվի նախագահն է, պատասխանողը վիճելի ավտոմեքենան տեղափոխել է Ռ-Դ:

Վերոնշյալ վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Հայցվորը, հայցադիմումում վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, ներկայացրել է վինդիկացիոն հայց, որով պահանջել է պարտավորեցնել պատասխանողին վերադարձնել «Կամագ-53212» մակնիշի 1985 թվականի արտադրության (շարժիչը՝ 409715 համարի, պետահամարանիշը՝ թիվ 43-71ԱԴԾ) բեռնատարը: Հետևաբար հայցվորը պետք է ապացուցեր, որ հանդիսանում է վերոնշյալ ավտոմեքենայի սեփականատերը կամ օրինական տիրապետողը, և որ ավտոմեքենան գտնվում է պատասխանողի ապօրինի տիրապետման ներքո:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի

համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Սույն գործում առկա ապացույցներով հիմնավորվում է այն փաստը, որ վիճելի «Կամազ-53212» մակնիշի 1985 թվականի արտադրության (շարժիչը՝ 409715 համարի, պետհամարանիշը՝ թիվ 43-71ԱԴԾ) բեռնատար ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է «Կարմրախայտ» կոոպերատիվին: Նշված փաստը գործի քննության ընթացքում ընդունել է նաև հայցվորը (հիմք՝ 27.03.2006 թվականի դատական նիստի արձանագրությունը՝ հատոր 1-ին, գ.թ. 11): Գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորեր վիճելի ավտոմեքենան հայցվորի օրինական տիրապետմանը հանձնված լինելու հանգամանքը:

Նման պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարդան Ղազարյանը սույն գործով պատշաճ հայցվոր չէ, քանի որ չի հանդիսանում վիճելի «Կամազ-53212» մակնիշի 1985 թվականի արտադրության (շարժիչը՝ 409715 համարի, պետհամարանիշը՝ թիվ 43-71ԱԴԾ) բեռնատար ավտոմեքենայի սեփականատերը կամ օրինական տիրապետողը, մինչդեռ ստորադաս դատարանների կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող նշված փաստը պատշաճ գնահատման չի արժանացել, ինչը հանգեցրել է հայցի անհիմն բավարարման:

Ավելին, ստորադաս դատարանները, հաստատված համարելով, որ հայցվոր Վարդան Ղազարյանը «Կարմրախայտ» կոոպերատիվի նախագահն է, նախ անտեսել են այն հանգամանքը, որ գործում առկա չէ այդ փաստը հաստատող որևէ ապացույց (կոոպերատիվի կանոնադրությունը, պետական ռեգիստրի վկայական), և երկրորդ՝ հայցը ներկայացված է ոչ թե կոոպերատիվի, այլ Վարդան Ղազարյանի անունից և ի շահ նրա իրավունքների պաշտպանության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով հայցվորի կողմից չի ապացուցվել նաև վիճելի ավտոմեքենան պատասխանողի ապօրինի տիրապետման ներքո գտնվելու փաստը: Մասնավորապես, ի հիմնավորումն այդ փաստի՝ հայցվորը հայցադիմումում նշել է, որ «1996 թվականին վիճելի ավտոմեքենան վարձավճարով կամ մեքենայի դիմաց երկու «Վոլգա-3129» մակնիշի ավտոմեքենա տալու կամ դրանց փոխարեն վեց ամիս հետո ավտոմեքենայի արժեքը՝ 12.000 ԱՄՆ դոլար վճարելու նպատակով այն հանձնել է պատասխանողին»: Մինչդեռ գործում առկա ապացույցներով, մասնավորապես՝ Էդվարդ Շահբազյանի՝ Վճռաբեկ դատարանին ուղղված, նոտարական կարգով հաստատված 25.03.2009 թվականի բացատրությամբ, ՀՀ Լոռու մարզի դատախազությանը հասցեագրված Վարդան Ղազարյանի դիմումով հիմնավորվում է այն փաստը, որ վերջինս վիճելի ավտոմեքենան հանձնել է այլ անձի, տվյալ պարագայում՝ Էդվարդ Շահբազյանին, որն էլ այն տեղափոխել է Ռ-Դ, և որտեղ էլ ներկայումս գտնվում է ավտոմեքենան: Հետևաբար անհիմն են Վերաքննիչ դատարանի այն հետևությունները, որ «պատասխանող Լևոն Գրիգորյանը հայցվոր Վարդան Ղազարյանի հետ պայմանավորվել է մեքենան գնելու կամ վարձակալելու մասին, որին տեղյակ է եղել և հետագայում միացել է Էդվարդ Շահբազյանը», «... սկզբից մինչև վերջ հայցվորի հետ հարաբերությունների մեջ նախաձեռնող և գործնականում կապի մեջ է եղել պատասխանող Լևոն Գրիգորյանը», «սույն գործով ներկայացված չեն բավարար թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, որոնցով կհիմնավորվեր այն հանգամանքը, որ ավտոմեքենան վերցրել և մեքենայի արժեքը վճարելու կամ այն վերադարձնելու պարտականություն ստանձնել է Էդվարդ Շահբազյանը»: Ավելին, Վճռաբեկ դատարանը

հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ եզրահանգումներ չի արել սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի առկայության մասին: Մասնավորապես, վինդիկացիոն հայցի լուծման համար էական նշանակություն ունի վիճելի գույքի՝ վեճի քննության և լուծման պահին բնեղենով պատասխանողի ապօրինի տիրապետման ներքո գտնվելու փաստը, հետևաբար գործում առկա ապացույցների գնահատման արդյունքում Վերաքննիչ դատարանը պետք է հետևություններ աներ նշված փաստի առկայության կամ բացակայության վերաբերյալ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության համար կարևորել է հայցվորի և պատասխանողի միջև գործարքի կնքման, այդ գործարքին պատասխանողի ցուցաբերած մասնակցության փաստերը և իր դատողությունները կառուցել է այդ փաստերի առկայության կամ բացակայության շուրջ, ինչն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որով հիմնավորվում է վիճելի ավտոմեքենան բնեղենով պատասխանողի ապօրինի տիրապետման ներքո գտնվելու փաստը, հետևաբար վերջինս սույն գործով պատշաճ պատասխանող չի հանդիսանում:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վինդիկացիոն հայցի միջոցով սեփականատերը կամ օրինական տիրապետողը ներկայացնում են գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից բնեղենով վերադարձնելու պահանջ: Այն դեպքում, երբ գույքը բնեղենով այլևս գոյություն չունի՝ ոչնչացվել է, օգտագործվել, էականորեն վերամշակվել կամ փոփոխվել, սեփականատերը կամ օրինական տիրապետողն իր իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացնել վնասի հատուցման հայց հարուցելով: Այս դեպքում սեփականատիրոջը կարող է փոխհատուցվել գույքի արժեքը կամ հատկացվել նույն տիպի գույք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականատերը (օրինական տիրապետողը), ելնելով այն հանգամանքից՝ գույքը բնեղենով գոյություն ունի, թե ոչ, իր իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացնել կամ վինդիկացիոն հայցի, կամ վնասի հատուցման հայցի միջոցով: Հետևաբար մինևսույն գույքի կապակցությամբ խախտված իրավունքները վերականգնելու համար սեփականատերը չի կարող ակնկալել նվ վինդիկացիոն, նվ վնասի հատուցման պահանջների միաժամանակյա բավարարում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելիս սեփականատերն իրավունք ունի այն անձից, ով գիտեր կամ պետք է իմանար իր տիրապետման ապօրինի լինելու մասին (անբարեխիղճ տիրապետող), պահանջել վերադարձնելու կամ հատուցելու նաև այն բոլոր եկամուտները, որոնք այդ անձն ստացել է կամ կարող էր ստանալ գույքի ապօրինի տիրապետման ամբողջ ժամանակամիջոցում, իսկ բարեխիղճ տիրապետողից՝ վերադարձնելու կամ հատուցելու այն բոլոր եկամուտները, որոնք նա ստացել է կամ կարող էր ստանալ սկսած այն պահից, երբ նա իմացել է կամ պետք է իմանար իր տիրապետման ապօրինի լինելու մասին կամ ծանուցում է ստացել գույքը վերադարձնելու մասին սեփականատիրոջ հայցով:

Վկայակոչված իրավադրույթից հետևում է, որ վինդիկացիոն և վնասի հատուցման հայցերի զուգակցման հնարավորություն օրենսդիրը նախատեսել է բացառապես այն դեպքում, երբ վնասի հատուցման պահանջը կրում է ածանցյալ բնույթ և անմիջականորեն բխում է վինդիկացիոն հայցի բովանդակությունից:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատական պրակտիկայում, այդ թվում նաև սույն գործով արձանագրված այն դեպքերին, երբ մինևսույն գույքի նկատմամբ խախտված իրավունքները

վերականգնելու համար միաժամանակ հարուցվել է ն վինդիկացիոն հայց, ն վնասի հատուցման հայց: Նման դեպքերում դատարանները նախ և առաջ պետք է պարզեն գույքի՝ բնեղենով գոյության փաստը: Այս փաստի առկայությունը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող մյուս հանգամանքների հիմնավորման դեպքում հանգեցնում է վինդիկացիոն հայցի բավարարման և վնասի հատուցման հայցի մերժման, իսկ այդ փաստի բացակայությունը՝ պատճառված վնասի համար պատասխանատվության այլ պայմանների հաստատման դեպքում՝ վնասի հատուցման հայցի բավարարման և վինդիկացիոն հայցի մերժման, սակայն նշված հայցերի միաժամանակյա բավարարման հնարավորությունն օրյեկտիվորեն բացառվում է, որը բխում է նաև կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքից:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը բացառում է նաև նշված հայցերի միաժամանակյա բավարարումը պայմանով, քանի որ այն կարող է հանգեցնել դատական ակտի որոշակիության սկզբունքի խախտման, որպիսի սկզբունքը թեև քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն այն իրավական հասկացություն է և միջազգայնորեն ճանաչված սկզբունք ու ենթադրում է, որ դատական ակտը պետք է լինի որոշակի՝ այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դատավարության մասնակիցների համար ակնառու և ակնհայտ լինի, թե իրենց ինչ իրավունք է տրամադրվում, իրենց որ իրավունքն է սահմանափակվում, իրենց ինչ իրավունքից են զրկում կամ իրենց վրա ինչ պարտականություն է դրվում (*տե՛ս, Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվեդրյանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Սույն գործով հայցվորը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, դատարանից պահանջել է պարտավորեցնել պատասխանողին ավտոմեքենան ապօրինի տիրապետումից հետ վերադարձնել կամ վճարել դրա արժեքը, այսինքն՝ միաժամանակ ներկայացրել է ն վինդիկացիոն հայց, ն վնասի հատուցման հայց:

Դատարանը, հայցը մասնակի բավարարելով, վճռել է պարտավորեցնել պատասխանող Լևոն Գրիգոյանին հայցվոր Վարդան Ղազարյանին վերադարձնել 1985 թվականի արտադրության «Կամազ-53212» մակնիշի թիվ 43-71ԱԴԾ պետահամարանիշի ավտոմեքենան կամ դրա արժեքը՝ 3.150.315 ՀՀ դրամ: Տվյալ պարագայում Դատարանը միաժամանակ բավարարել է ն վինդիկացիոն հայցը, ն վնասի հատուցման հայցը՝ կայացնելով պայմանով վճիռ:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը վերը շարադրված վերլուծությունների հիմքով անթույլատրելի է համարում նշված հայցերի միաժամանակյա բավարարումը՝ արձանագրելով իրավական որոշակիության և կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքների խախտում:

Մինևույն ժամանակ վնասի հատուցման պահանջի բավարարումը ստորադաս դատարանների կողմից Վճռաբեկ դատարանը գնահատում է ոչ իրավաչափ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությանը, արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի

մեղքի միաժամանակյա առկայությունը (տե՛ս, Նապոլյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀԶԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հայցի հիմքը և վիճելի իրավահարաբերության բնույթը, գտնում է, որ սույն գործով վնասի հատուցման հայցապահանջի շրջանակներում պետք է հիմնավորվեր՝

1) վնասը՝ վիճելի ավտոմեքենայի՝ բնեղենով գոյություն չունենալու փաստը, և

2) մինչ բնեղենով գոյության դադարումը՝ այդ ավտոմեքենայի՝ պատասխանողի ապօրինի տիրապետման ներքո գտնվելու փաստը:

Միայն նշված փաստերի հաստատման դեպքում դատարանները կարող էին անդրադառնալ և դատողություններ անել պատճառված վնասի համար պատասխանատվության մյուս պայմանների առկայության վերաբերյալ:

Մինչդեռ սույն գործով ստորադաս դատարանները վերոնշյալ փաստական հանգամանքների հիմնավորված չլինելու պարագայում հաստատված են համարել վնասի և ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառական կապի առկայությունը, ինչը հանգեցրել է վնասի հատուցման պահանջի անհիմն բավարարման:

Վերոգրյալ պատճառաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների՝ վնասի հատուցման հայցի բավարարման վերաբերյալ եզրահանգումներն ապացուցման առարկան կազմող փաստերի շրջանակը սխալ պարզելու և գործում առկա ապացույցները սխալ գնահատելու արդյունք են, որն էլ ազդել է սույն գործի ելքի վրա:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի հիմքը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել. Վարդան Ղազարյանի հայցն ընդդեմ Լևոն Գրիգորյանի՝ ավտոմեքենան ապօրինի տիրապետումից հետ պահանջելու կամ դրա արժեքը վճարելու պահանջի մասին, մերժել:

2. Վարդան Ղազարյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 104.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարման ենթակա և ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 13.03.2006 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Վարդան Ղազարյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար պակաս վճարված պետական տուրքի գումար:

Վարդան Ղազարյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 114.510 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.12.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Վարդան Ղազարյանից հոգուտ Լևոն Գրիգորյանի բռնագանձել 94.500 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վարդան Ղազարյանից հոգուտ «ՀՀ Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես 19.11.2010 թվականի թիվ 17591010 փորձագետի եզրակացության համար 19.11.2010 թվականի թիվ 4030 հաշիվ-ապրանքագրով վճարման ենթակա գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ **ԼԳ/0678/02/12** 2014թ.
Քաղաքացիական գործ թիվ **ԼԳ/0678/02/12**
Նախագահող դատավոր՝ Կ. Զիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Ա. Խատատյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին դռնբաց դատական նիստում, քննելով Արթուր Անդրեասյանի վճռարեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արթուր Անդրեասյանի ընդդեմ «Մարջոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), Արմեն Դալլաբյանի և Վանաձոր նոտարական տարածքի նոտար Մամիկոն Ասլանյանի, երրորդ անձինք «Արարատ ՋԷԳ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), Արարատ Անդրեասյանի, Համլետ Հակոբջանյանի՝ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արթուր Անդրեասյանը պահանջել է անվավեր ճանաչել Կազմակերպության և Ընկերության միջև 01.04.2011 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել դրա հիման վրա կատարված պետական գրանցումը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Խ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 13.11.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2013 թվականի որոշմամբ Արթուր Անդրեասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.11.2012 վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Անդրեասյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Դավաթյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ, 305-րդ հոդվածների, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի, 65-րդ հոդվածի 6-րդ կետի, 83-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 40-րդ, 41-րդ, 55-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 55-րդ, 131-րդ, 219-րդ և 220-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր կայացրած որոշմամբ չի անդրադարձել վերաքննիչ բողոքում բարձրացրած հարցերին և չի հիմնավորել դրանք: Վերաքննիչ դատարանի կողմից հիմնավոր է համարվել այն հանգամանքը, որ ժողովի որոշման օրենքին հակասող լինելու վերաբերյալ դատական ակտը միակ թույլատրելի ապացույց ճանաչելը և ապացուցման պարտականությունը հայցվորի վրա դնելն իրավաչափ չի կարող լինել, սակայն գտել է, որ այն ինքնին վճռի բեկանման հիմք չէ, մինչդեռ տվյալ պարագայում ընդհանուր իրավասության դատարանում հայցի մերժման հիմնավորումը հանդիսացել է բացառապես ժողովի որոշումն օրենքին հակասող լինելու վերաբերյալ դատական ակտի բացակայությունը, տվյալ պարագայում Դատարանը այլ ապացույցներով պետք է հիմնավորեր հայցի մերժումը, ինչը չի արել, իսկ բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության դեպքում Դատարանը կհանգեր այլ եզրակացության:

Բացի այդ, Դատարանն իր վճռում նշել է, որ շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքը վիճարկելու համար անհրաժեշտ է ապացուցել այդ գործարքի օրենքի խախտմամբ կնքված լինելու փաստը, ինչը հայցվորի կողմից չի ապացուցվել, մինչդեռ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի, 65-րդ հոդվածի 6-րդ կետի և 83-րդ հոդվածների համադրումից հետևում է, որ շահագրգռվածությամբ կնքված գործարքի հիմք հանդիսացող որոշումն ընդունվում է շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների (տվյալ դեպքում ժողովի մասնակիցների) ձայների մեծամասնությամբ, և Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի որոշման մեջ Արմեն Դավաթյանի ստորագրությունն ինքին ապացուցում է նշված օրենքի 64-րդ հոդվածի 1-ին կետի խախտման փաստը:

Ըստ էության, սույն գործով կնքվել է գործարք, որտեղ չեն պահպանվել օրենքով սահմանված կանոնները, որոնք նախատեսված են պաշտպանելու բաժնետերերի գույքային իրավունքները: Լիազորված անձը վաճառել է գույք, որը վաճառելու լիազորություն չի ունեցել: Ինչպես նաև նոտարը վավերացրել է պայմանագիր՝ խախտելով օրենքով նախատեսված և վավերացման համար անհրաժեշտ կանոնները, ինչի արդյունքում խախտվել են բաժնետիրոջ իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Գործարքն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է միաժամանակ երկու վավերապայմանների առկայություն. գործարքն օրենքի խախտմամբ կնքված լինելու փաստը և շահագրգռվածության առկայությունը: Հետևաբար, շահագրգռվածության առկայությունը պայմանագրի (գործարքի) անվավերության հիմք չի կարող հանդիսանալ,

քանի դեռ նման հիմքով գործարքն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնող անձը չի ապացուցել գործարքը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ կնքվելու փաստը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1894954 վկայականի համաձայն՝ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Շարեկացու փողոցի թիվ 30 հասցեում գտնվող գազալցման ճնշակայանի նկատմամբ սեփականության իրավունքը 14.08.2008 թվականին գրանցվել է Կազմակերպության անվամբ (հատոր 1, գ.թ. 39-41)։

2) 30.03.2011 թվականին Կազմակերպության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշել է վերը նշված գազալցման ճնշակայանի շարժական և անշարժ գույքը 75.600.000 ՀՀ դրամով վաճառել Ընկերությանը: Ըստ նշված ժողովի թիվ 1/11 արձանագրության՝ ժողովին մասնակցել են բաժնետոմսերի 27,9803 տոկոսի սեփականատեր Արարատ Անդրեասյանը, բաժնետոմսերի 45 տոկոսի սեփականատեր Արթուր Անդրեասյանը՝ հեռախոսով, և բաժնետոմսերի 27 տոկոսի սեփականատեր Արմեն Դալլաքյանը (վերջինս արձանագրությունը ստորագրել է որպես ժողովի քարտուղար) (հատոր 1, գ.թ. 33)։

3) 30.03.2011 թվականին Կազմակերպության տնօրեն Արարատ Անդրեասյանը լիազորագիր է տվել Արմեն Դալլաքյանին՝ գազալցման ճնշակայանի առուվաճառքի գործարքն իրականացնելիս իր փոխարեն ստորագրելու համար (հատոր 1, գ.թ. 34)։

4) 01.04.2011 թվականին նոտարական կարգով վավերացվել է շարժական և անշարժ գույքից բաղկացած գազալցման ճնշակայանի առուվաճառքի վերաբերյալ Կազմակերպության և Ընկերության պայմանագիրը, որը Կազմակերպության անունից 30.03.2011 թվականի լիազորագրի հիման վրա ստորագրել է Արմեն Դալլաքյանը: Պայմանագրում նշվել է վաճառվող շարժական գույքի ցանկը, որը ներառել է 4 հատ գազամղիչ, 5 հատ կուտակիչ՝ 80քմ, 4 հատ կուտակիչ՝ 20քմ, 11 հատ հաստոց, 630 կվ ուժային տրանսֆորմատոր, գազաբաշխիչ վահան, 5 հատ եռակցման սարք, ազոտաթթվածնային ստացման և լիցքավորման ԱԳ-ԿՄ-70 սարք և 204 հատ թթվածնի բալոն (հատոր 1, գ.թ. 35, 36)։

5) 21.04.2011 թվականին Կազմակերպության և Ընկերության տնօրենները ստորագրել են գույքի փոխանցման ակտ, ըստ որի՝ 01.04.2011 թվականին պայմանագրի հիման վրա Կազմակերպությունը հանձնել, իսկ Ընկերությունն ընդունել է գազալցման ճնշակայանի անշարժ գույքը՝ հողամասը և դրա վրա տեղակայված շենքերն ու շինությունները, ներառյալ՝ ջրամատակարարման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման արտաքին և ներքին ցանցերը, ինչպես նաև հետևյալ շարժական գույքը՝ 3 հատ գազամղիչ, 5 հատ կուտակիչ՝ 80քմ, 1 հատ 630 կվտ ուժային տրանսֆորմատոր և 1 հատ գազաբաշխիչ վահան: Ակտում կատարվել է նշում այն մասին, որ հանձնված գույքն անորոշ ժամկետով թողնվում է Կազմակերպության պատասխանատու պահպանությանը՝ օգտագործման իրավունքով (հատոր 1, գ.թ. 37, 38)։

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելիության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գլխում, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ բաժնետիրական ընկերության կողմից կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքների վիճարկման առանձնահատկություններին, *ինչպես նաև* այն իրավական խնդրին, թե արդյոք ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում չվիճարկված փաստը, որը դատարանի կողմից գնահատվել է որպես անվիճելի, Վերաքննիչ դատարանի կողմից կարող է համարվել որպես չապացուցված փաստ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն պահանջելու անվավեր ճանաչել սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը:

Վկայակոչված հոդվածից հետևում է, որ նման պահանջ ներկայացնող Ընկերության բաժնետերը պետք է միաժամանակ հիմնավորի՝

- շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման փաստը և
- այդպիսի գործարքի՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ կնքված լինելու հանգամանքը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝

ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով փոխկապակցված են համարվում ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ փոխկապակցված են համարվում երկու և ավելի անձինք, եթե՝

ա. նրանցից որևէ մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի (մյուսների) ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին.

բ. նրանցից որևէ մեկի տնօրենների խորհրդի անդամների կեսից ավելին, տնօրենը կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձը միաժամանակ հանդիսանում է մյուսի (մյուսների) տնօրենների խորհրդի անդամ, տնօրեն կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձ.

գ. նրանցից մեկը հսկում է մյուսին, կամ նրանք ընդհանուր հսկողության տակ են գտնվում, կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներով նրանցից որևէ մեկը մյուսի որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի կամ պայմանագրով ամրագրված հնարավորություն ունի.

դ. նրանք միևնույն ընտանիքի անդամներ են կամ տվյալ դեպքում գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Նույն հոդվածի 37-րդ կետի համաձայն՝ միևնույն ընտանիքի անդամներ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը,

եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինը և երեխաները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական նորմերով սահմանված են այն անձինք և այն պայմանները, որոնց առկայության դեպքում նշված անձինք՝ ազգակցական կապի, զբաղեցրած դիրքի կամ այլ հանգամանքների ուժով ընկերության գործարքներում ճանաչվում են շահագրգիռ անձ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերը նշված նորմերում շահագրգիռ անձանց հասկացությունը սահմանելու համար օգտագործվում է նաև «փոխկապակցված անձ» հասկացությունը, և սահմանված է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող են երևան գալ փոխկապակցվածության հարաբերություններ:

Ընդ որում, թեև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում «փոխկապակցված անձ» հասկացությունն ամբողջությամբ բացահայտված չէ, այդուհանդերձ դրա 62-րդ հոդվածի 2-րդ կետը հղում է կատարում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, որում ի լրումն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձանց, սպառիչ կերպով սահմանված է այն անձանց շրջանակը, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց նկատմամբ հանդիսանում են փոխկապակցված անձինք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը, վերլուծելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքների՝ վերը նշված դրույթները, եզրակացնում է, որ շահագրգիռ անձինք են ճանաչվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձինք, ինչպես նաև վերջիններիս փոխկապակցված անձինք, որոնց սպառիչ շրջանակը սահմանված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետում և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ և 37-րդ կետերում, իսկ այն գործարքները, որոնցում որպես կողմ հանդես են գալիս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձինք և/կամ վերջիններիս՝ նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետով և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված փոխկապակցված անձինք, Ընկերության համար համարվում են շահագրգռվածության առկայությամբ գործարքներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Մնացած դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Սույն գործով Դատարանը վճռում որպես չվիճարկվող փաստ նշել է այն, որ Կազմակերպության անունից գազացման ճնշակայանի առուվաճառքի գործարքը 30.03.2011 թվականի լիազորագրով լիազորվել է կատարելու Արմեն Դալլաքյանը, որը հանդիսացել է Ընկերության տնօրենի հարազատ եղբայրը՝ վճռում նշելով, որ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի առ 18.05.2011 թվականի դրությամբ Կազմակերպության գրանցված սեփականատերերի (անվանատերերի) տոկոսային բաշխման ցուցակի, նույն ընկերության 24.10.2012 թվականի տեղեկանքի և Կազմա-

կերպության կանոնադրության հետազոտմամբ և դրանք համադրելու կարգով գնահատմամբ դատարանը գործարքում շահագրգռվածության փաստի առկայությունը համարում է ապացուցված, քանի որ, ըստ նշված ապացույցների, գործարքի կնքման պահին Կազմակերպության անունից գործարքը կնքելու համար ներկայացուցիչը և միևնույն ժամանակ ընկերության 27 տոկոս բաժնետոմսի սեփականատերը հանդիսացել է Արմեն Դալլաքյանը, որը գործարքի մյուս կողմ, պատասխանող Ընկերության տնօրենի եղբայրն է (չվիճարկված փաստ):

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածները, Արթուր Անդրեասյանի վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ «շահագրգռվածության առկայությունը Դատարանում գործի քննության ժամանակ հայցվորի կողմից փաստարկվել է սուսկ այն պնդմամբ, թե ժողովի որոշման ընդունմանը մասնակցած Արմեն Դալլաքյանը հանդիսանում է գնորդ ընկերության տնօրենի հարազատ եղբայրը, որպիսի պնդումը հաստատող որևէ ապացույց Դատարանին չի ներկայացվել»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ «Պայմանագիրը շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարք համարելու՝ հայցվորի վկայակոչած հիմքն առկա չէ, ուստի այդ «հիմքին» առնչվող կամ դրանից բխեցվող որևէ փաստարկ հիմնավորված համարվել չի կարող»:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*յոն ս, Էդգար Մարկոսյանն և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱԸԴ/0479/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանի վճռով արձանագրվել է, որ Արմեն Դալլաքյանն Ընկերության տնօրենի եղբայրն է, և նշված փաստը ներառվել է «չվիճարկվող փաստերի» մեջ: Բացի այդ, կողմերի միջև դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտումից հետո տվյալ փաստի առկայությունն անվիճելի է համարվել: Հետևաբար վերոնշյալ փաստը Վերաքննիչ դատարանի կողմից որպես հիմք կարող էր չընդունվել միայն այն դեպքում, եթե այն վիճարկվեր վերաքննիչ բողոքով, և Վերաքննիչ դատարանը հանգեր այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել:

Մինչդեռ սույն գործով Դատարանի կողմից անվիճելի գնահատված լինելու և վերաքննիչ վարույթում վիճարկված չլինելու պայմաններում Արմեն Դալլաքյանի՝ Ընկերության տնօրենի եղբայրը լինելու փաստը Վերաքննիչ դատարանի կողմից չէր կարող գնահատման առարկա դարձվեր և դրվեր վերաքննիչ բողոքի մերժման հիմքում:

Բացի այդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով սահմանված է շահագրգռվածության առկայության դեպքում ընկերության գործարքների կնքման կարգը:

Մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում որոշումը՝ գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝

գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ 500 և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը՝ գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ:

Խորհրդի անկախ անդամ է համարվում այն անձը, որը չի հանդիսանում Ընկերության միանձնյա գործադիր մարմին՝ տնօրեն, գլխավոր տնօրեն (այսուհետ՝ միանձնյա գործադիր մարմին), կամ Ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի՝ վարչության, տնօրինության (այսուհետ՝ կոլեգիալ գործադիր մարմին) անդամ, և որի ամուսինը, ծնողները, երեխաները, քույրերը և եղբայրները պաշտոններ չեն զբաղեցնում Ընկերության կառավարման մարմիններում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ որոշումը՝ գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը գերազանցում են Ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, մինևույն ժամանակ Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև նույն օրենքի VIII գլխի դրույթները:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի VIII գլխում ամրագրված 61-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, ու որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն: Այդ դեպքում խորհրդից դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում:

Եթե գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել՝ հարցը ժողովում քննարկելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի երկրորդ մասով սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժողովի իրավասությանն են պատկանում, մասնավորապես, գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ նույն օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և նույն օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում մասնավորապես Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների

կնքումը՝ նույն օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում, ինչպես նաև նույն օրենքի IX գլխով նախատեսված շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող Ընկերությունում:

Մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում նրա իրավասություններն իրականացնում է ժողովը:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված է շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման ընթացակարգը, համաձայն որի՝ գործարքի կնքմանը պետք է նախորդի համապատասխան որոշման ընդունումը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին որոշումը պետք է ընդունի Ընկերության խորհուրդը, սակայն օրենքով նախատեսված դեպքերում որոշման ընդունման իրավասությունը վերապահված է Ընկերության ընդհանուր ժողովին:

Այսպես, եթե գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը գերազանցում են Ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը, ապա շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ:

Բացի այդ, եթե մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում, ապա վերջինիս իրավասությունները, այդ թվում՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշման ընդունման իրավասությունն իրականացնում է ժողովը, հետևաբար այն դեպքում, երբ Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում, շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումը բոլոր դեպքերում ընդունվում է ժողովի կողմից՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ՝ անկախ գործարքի առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքից:

Մյուս կողմից, այլ ընթացակարգ է նախատեսված շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունման համար, եթե այդ գործարքը միևնույն ժամանակ հանդիսանում է Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք:

Այս դեպքում շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին որոշումը, հաշվի առնելով խոշոր գործարքի կնքման՝ օրենքով սահմանված իրավակարգավորումը, պետք է ընդունվի՝

- խորհրդի՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված անդամների կողմից միաձայն, եթե գործարքի առարկա է հանդիսանում գույք, որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը,

- ժողովի՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների 3/4-ով, եթե՝

ա) գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, կամ

բ) գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, կամ

գ) օրենքով մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ ստեղծված

չլինելու դեպքում:

Վերը նշված վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքն օրենքի խախտումով կնքված լինելու հարցը պարզելու համար դատարանները պետք է պարզեն՝

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է Ընկերության կառավարման այն մարմնի կողմից, որի իրավասությանն է պատկանում նման որոշման ընդունումը,

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է Ընկերության իրավասու մարմնի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից,

- արդյո՞ք այդպիսի գործարք կնքելու մասին որոշումն ընդունվել է օրենքով սահմանված ձայների անհրաժեշտ քանակի համամասնությամբ,

- արդյո՞ք շահագրգռվածության առկայությամբ գործարքը միևնույն ժամանակ հանդիսանում է խոշոր գործարք, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միայն նշված հանգամանքները պարզելուց հետո հնարավոր կլինի պարզել գործարքի կնքման՝ օրենքով սահմանված ընթացակարգը պահպանված կամ խախտված լինելու հարցը:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ ամեն դեպքում շահագրգռվածության առկայությամբ գործարքի, այդ թվում՝ խոշոր գործարքի օրենքի խախտմամբ կնքված լինելն ապացուցվում է այդ հարցով բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի, իսկ եթե ձևավորված է խորհուրդ, ապա խորհրդի՝ ընդունած որոշումը գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին չհամապատասխանելու փաստը հաստատող որոշակի ապացույցով, այն է՝ գործարքի հիմքում ընկած ժողովի կամ խորհրդի որոշումը գործող օրենքներին և իրավական այլ ակտերին չհամապատասխանելու մասին դատական ակտով, իսկ սույն գործում նման դատական ակտ առկա չէ:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Դատարանի՝ վերը նշված դիրքորոշմանը, նշել է, որ «ժողովի որոշումը վիճարկված կարող էր համարվել բացառապես այն դեպքում, երբ ներկայացված լինե՞ր այդ որոշման իրավաբանական կարգավիճակը փոխելուն ուղղված որևէ պահանջ (օրինակ՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջ), ինչը չի արվել, հետևաբար, ժողովի որոշման վավերականության հարցը չի ներառվել հայցի առարկայի կազմում, և այս կապակցությամբ բողոքում բերված փաստարկները հիմնավորված չեն (ճիշտ է, Դատարանը ժողովի որոշման՝ օրենքի պահանջներին չհամապատասխանելու փաստը հաստատող միակ թույլատրելի ապացույց է համարել առանձին դատական ակտը, հաշվի չառնելով, որ նման դատական ակտի բացակայության դեպքում անգամ հայցվորը զրկված չէր սույն գործի շրջանակներում ժողովի որոշումը վիճարկելու իրավունքից, սակայն Դատարանի պատճառաբանություններում առկա այդ թերությունը չի կարող բողոքարկված վճռի բեկանման հիմք ծառայել, քանի որ հայցվորն իր վերոհիշյալ իրավունքը չի իրացրել և ժողովի որոշման վավերականությունը չի վիճարկել նաև սույն գործի շրջանակներում)»:

Վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա՝ Կազմակերպության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 30.03.2011 թվականի թիվ 1/11 արձանագրության (որոշման) վիճարկված լինելու հանգամանքը կամ դրա իրավաչափության վերաբերյալ դատական ակտի առկայությունը սույն գործի լուծման համար չի կարող էական նշանակություն ունենալ, քանի որ նշված արձանագրությունը սույն գործով հանդիսանում է միայն որոշակի հանգամանքների վերաբերյալ ապացույց, որը ենթակա է գնահատման գործում

առկա մյուս ապացույցների հետ համակցության մեջ:

Մասնավորապես, դրանում տեղեկություններ են պարունակվում այն մասին, որ՝

- գործարքը կնքելու հիմքում դրվել է հենց այդ արձանագրությունը,

- գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվել է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից,

- քվեարկությանը մասնակցել են Ընկերության բաժնետոմսերի՝ 99,9803% սեփականատերերը՝ Արարատ Անդրեասյանը, Արմեն Դավլաբյանը, Արթուր Անդրեասյանը (վերջինս քվեարկությանը մասնակցել է հեռախոսով),

- գազաճնշիչ կայանի շարժական և անշարժ գույքը վաճառվել է 75,6 մլն դրամով,

- գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվել է միաձայն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված արձանագրությունը գործում առկա մյուս ապացույցների հետ համակցության մեջ սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով հնարավոր կլինի պարզել՝ արդյո՞ք գործարքը կնքվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումով, թե ոչ, և արդյո՞ք Կազմակերպության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 30.03.2011 թվականի թիվ 1/11 արձանագրությունը կարող էր դրվել գործարքի կնքման հիմքում՝ հաշվի առնելով շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման՝ օրենքով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սխալ եզրահանգման են եկել սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի և այդ փաստի առկայությունը հիմնավորող թույլատրելի և վերաբերելի ապացույցների շրջանակի վերաբերյալ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Վերոգրյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի փաստարկները հիմնավոր են և սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո գործն անհրաժեշտ է ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը բավարար է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.09.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0881/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0881/02/12**

Նախագահող դատավոր՝ **Ն. Բարսեղյան**

Դատավորներ՝ **Ա. Մկրտչյան**

Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռարեկ դատարան**)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սերգեյ Սարգսյանի ներկայացուցիչ Գեղամ Այվազյանի և Արթուր Սարկիսյանի ներկայացուցիչ Անահիտ Աթոյանի վճռարեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սերգեյ Սարգսյանի ընդդեմ Արա Սարգսյանի, Արփենիկ Բարաջանյանի, Բորիս Սարգսյանի, Արթուր Սարկիսյանի, նոտար Էմմա Շաբոյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ 05.04.2007 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սերգեյ Սարգսյանը պահանջել է անվավեր ճանաչել 05.04.2007 թվականին կնքված Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և կիրառել անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչելով Արթուր Սարկիսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ **Դատարան**)

26.07.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.01.2014 թվականի որոշմամբ Արթուր Սարկիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 26.07.2013 թվականի վճիռը մասնակիորեն՝ Արփենիկ Բաբաջանյանի, Արա, Սերգեյ Սարգսյանի և Արթուր Սարկիսյանների միջև 05.04.2007 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն ամբողջությամբ անվավեր ճանաչելու մասով բեկանվել և փոփոխվել է՝ Արփենիկ Բաբաջանյանի, Արա Սարգսյանի, Սերգեյ Բորիսի Սարգսյանի և Արթուր Սարկիսյանի միջև 05.04.2007 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր է ճանաչվել 1/4, այն է՝ Սերգեյ Սարգսյանի մասով ճանաչվել է Սերգեյ Սարգսյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանի 1/4 մասի նկատմամբ. կիրառվել է անվավերության հետևանք՝ Սերգեյ Սարգսյանը պարտավորեցվել է Արթուր Սարկիսյանին վերադարձնել 500.000 ՀՀ դրամ: Արփենիկ Բաբաջանյանի, Արա Սարգսյանի և Բորիս Սարգսյանի մասով՝ 05.04.2007 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասով, հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Սերգեյ Սարգսյանի և Արթուր Սարկիսյանի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

2. Սերգեյ Սարգսյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ, 8-րդ և 31-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ, 305-րդ և 436-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը, 303-րդ և 316-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ և 130-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, մասնավորապես՝ հաշվի չի առել, որ Սերգեյ Սարգսյանը տեղյակ չի եղել կնքված գործարքի մասին, այն չի բխել վերջինիս կամքից, ինչի արդյունքում խախտվել են սեփականատիրոջ իրավունքները: Հետևաբար այդ գործարքի նկատմամբ պետք է կիրառվեին անվավեր գործարքին վերաբերող կանոնները:

Ավելին, Վերաքննիչ դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով, ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ սովյալ իրավիճակում Սերգեյ Սարգսյանն առուվաճառքի գործարքի կնքման ընթացքում պետք է ունենար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի հիմքով երաշխավորված գնման նախապատվության իրավունք:

Բացի այդ, ուշագրավ է նաև այն, որ մի կողմից Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Սերգեյ Սարգսյանը տեղյակ չի եղել կնքված առուվաճառքի գործարքի մասին, իսկ մյուս կողմից, իր որոշմամբ կիրառելով անվավերության հետևանքներ՝ ոչ իրավաչափ պարտականություն է դրել վերջինիս վրա, այն է՝ Սերգեյ Սարգսյանին պարտավորեցրել է Արթուր Սարկիսյանին վերադարձնել 500.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 24.01.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 26.07.2013 թվականի վճռին:

2.1. Արթուր Սարկիսյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 109-րդ հոդվածները, ինչի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ, 331-րդ և 333-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ և 305-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով պետք է կիրառվեր հայցային վաղեմություն, քանի որ Սերգեյ Սարգսյանը որևէ ապացույց չի ներկայացրել առուվաճառքի պայմանագրի մասին իմանալու պահի վերաբերյալ:

Ավելին, գործում առկա է ՀՀ ազգային անվտանգության 07.02.2013 թվականի թիվ 2/71-152 գրությունը, որը պետք է դիտվեր որպես ոչ արժանահավատ և ոչ վերաբերելի ապացույց, քանի որ այն հաստատված չէ նշված մարմնի կնիքով, և դրանում ոչ մի նշում չկա հայցվորի՝ պայմանագրի մասին իմանալու ժամանակի մասին: Այսինքն՝ գործում առկա չէ հայցվորի՝ պայմանագրի մասին իմանալու պահի վերաբերյալ որևէ ապացույց, հետևաբար հայցվորն այդ մասին իմացել է հինգ տարի առաջ՝ պայմանագրի կնքման ժամանակ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.01.2014 թվականի որոշման՝ Սերգեյ Սարգսյանի հայցը բավարարելու մասը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 28.12.2000 թվականին տրված թիվ 810640 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանը՝ բաղկացած 74,4քմ ընդհանուր մակերեսից, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանել է Արփենիկ Բաբաջանյանին, Բորիս Սարգսյանին, Արա Սարգսյանին ու Սերգեյ Սարգսյանին (հատոր 2-րդ, գ.թ. 134-135):

2) Սերգեյ Սարգսյանը 13.01.2007 թվականին նոտարական կարգով վավերացված լիազորագրով մորը՝ Արփենիկ Բաբաջանյանին, լիազորել է իր անունից հանդես գալու ՀՀ նոտարական գրասենյակում՝ Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանի իր բաժնեմասն Արթուր Սարկիսյանին նվիրելու մասին նվիրատվության պայմանագիր կնքելու համար (հատոր 3-րդ, գ.թ. 19-20):

3) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 29.01.2007 թվականի թիվ 2-247/2007 վճռով Արա Սարգսյանը ճանաչվել է անգործունակ, և նրա խնամակալությունը հանձնվել է մորը՝ Արփենիկ Բաբաջանյանին (հատոր 1-ին, գ.թ. 10):

4) Արփենիկ Բաբաջանյանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա Երևան

քաղաքի Դավթաշենի թաղապետի 05.04.2007 թվականի թիվ 17 որոշմամբ Արփենիկ Բաբաջանյանին թույլատրվել է վաճառել Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանը, որպեսզի նա կարողանա հոգալ որդու՝ Արա Սարգսյանի հետագա խնամքն ու բուժումը (հատոր 1-ին, գ.թ. 46):

5) Արփենիկ Բաբաջանյանի և Արթուր Սարկիսյանի միջև 05.04.2007 թվականին կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Արթուր Սարկիսյանին է վաճառվել Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանը (հատոր 1-ին, գ.թ. 18):

6) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից 09.04.2007 թվականին տրված թիվ 2162420 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանը գրանցվել է Արթուր Սարկիսյանի անվամբ (հատոր 1-ին, գ.թ. 11):

7) Գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27 հասցեի բնակարանը վաճառելու մասին Արփենիկ Բաբաջանյանը տեղեկացրել է Սերգեյ Սարգսյանին և ստացել է նրա համաձայնությունը:

8) Գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Արփենիկ Բաբաջանյանը Սերգեյ Սարգսյանի կողմից լիազորված է եղել վաճառելու բնակարանը:

9) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից 07.02.2013 թվականին տրված թիվ 2/7/1-152 գրության համաձայն՝ 01.01.2006 թվականից մինչև 01.01.2013 թվականն ընկած ժամանակահատվածում Սերգեյ Սարգսյանը ՀՀ սահմանը հատել է հետևյալ օրերին. մուտք՝ 16.08.2006 թվականին, ելք՝ 05.09.2006 թվականին, մուտք՝ 24.12.2011 թվականին, ելք՝ 14.01.2012 թվականին, Ռուսաստանի Դաշնություն մուտք՝ 21.02.2012 թվականին, ելք՝ 04.06.2012 թվականին, (հատոր 2-րդ, գ.թ. 115):

10) Ըստ Սերգեյ Սարգսյանի անձնագրում առկա մուտքի կնիքի՝ վերջինս մուտք է գործել Հայաստանի Հանրապետություն միայն 2011 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 37):

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք համատեղ սեփականության մասնակիցների կողմից կնքված՝ ընդհանուր համատեղ սեփականություն համարվող գույքի նկատմամբ իրավունքները փոխանցող գործարքն ամբողջությամբ կարող է անվավեր ճանաչվել համատեղ սեփականատերերից միայն մեկի պահանջով:

1) Քննելով Սերգեյ Սարգսյանի վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով: Գույքը կարող է ընդհանուր սեփականությանը պատկանել՝ սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ

սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով սեփականության ներքո գտնվող գույքի բաժնային և համատեղ սեփականության իրավունքի իրավական ռեժիմները, միաժամանակ ամրագրել է համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը մասնակիցների կողմից միասին տիրապետելու և օգտագործելու ընդհանուր կարգ, ընդ որում, ելնելով համասեփականատերերի հայեցողությունը հաշվի առնելու սահմանադրական պահանջից՝ հնարավորություն է վերապահել համասեփականատերերին՝ փոխադարձ համաձայնությամբ սահմանելու տիրապետման և օգտագործման այլ կարգ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետին՝ նշելով, որ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տիրապետման և օգտագործման այլ կարգ նախատեսված չլինելու դեպքում նշված գույքը կարող է տիրապետվել և օգտագործվել բացառապես բոլոր մասնակիցների համաձայնությամբ, որը կոչված է ապահովել համասեփականատերերից յուրաքանչյուրի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գույքը միասին տիրապետելու և օգտագործելու իրավունքի իրացումը (*տե՛ս, Գազիկ Միսակունին ընդդեմ Սարգիս Գարուկյանի և այլոց թիվ ԵՄՆԴ/1628/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է՝ նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք), իսկ նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել նույն օրենսգրքում նշված անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 316-րդ հոդվածի համաձայն՝ գործարքի մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս մասերի անվավերության, եթե գործարքը կարող էր կնքվել նաև առանց անվավեր մասը նրա մեջ ներառելու:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու պայմաններին՝ նշելով, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար պետք է միաժամանակ առկա լինեն երկու պայմաններ՝

1. Համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը:

2. Գործարքի մյուս կողմի այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը (*լրենս, Թագուշ Պեպրոսյանի ընդդեմ Ժաննա Ղազարյանի թիվ 3-459(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով իր նախկին դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ գույքի տնօրինման հարցը լուծելու համար պարտադիր պայման է համատեղ սեփականության մասնակիցների կամքի առկայությունը, և նման պայմաններում էական չէ բոլոր մասնակիցների, թե միայն մեկ մասնակցի պահանջով գործարքը կարող է անվավեր ճանաչվել, քանի որ համատեղ սեփականության դեպքում գույքը տնօրինելու յուրաքանչյուր մասնակցի հայեցողությունը ստորադասված է մյուս բոլոր համասեփականատերերի կամքին: Նման պայմաններում ենթադրվում է, որ գույքի տնօրինման իրավունքը պետք է իրացվի բացառապես գույքի սեփականատիրոջ կամ բոլոր սեփականատերերի իմացությամբ և կամքով, բացի այդ, գործարքի վավերականության համար անհրաժեշտ է, որ գործարք կնքող սուբյեկտն իր կամքն արտահայտի ազատորեն, առանց հակաիրավական կամ կամքի դրսևորման վրա անբարենպաստ ազդեցություն ունեցող արտաքին ազդակների, և այդ կամահայտությունը պետք է համապատասխանի գործարք կնքողի (տվյալ դեպքում լիազորողի) իրական ցանկություններին՝ ներքին կամքին, արտահայտված լինի ոչ թե ձևականորեն, այլ առաջացնի այն իրավական հետևանքները, որը վերջինս ցանկացել է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սերգեյ Սարգսյանը, նկատի ունենալով, որ բացակայելու է Հայաստանի Հանրապետությունից, 13.01.2007 թվականին նոտարական կարգով վավերացված լիազորագրով իր մորը՝ Արփենիկ Բաբաջանյանին, լիազորել է իր անունից հանդես գալու ՀՀ նոտարական գրասենյակում՝ Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27-րդ հասցեի բնակարանի իր բաժնեմասն Արթուր Սարկիսյանին նվիրելու մասին նվիրատվության պայմանագիր կնքելու համար: Արփենիկ Բաբաջանյանը Սերգեյ Սարգսյանի բաժնեմասը վաճառելու լիազորություն չի ունեցել:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս գտել է, որ սույն գործով հայցը պետք է բավարարել մասնակիորեն՝ Սերգեյ Սարգսյանի բաժնեմասի մասով պետք է գործարքն անվավեր ճանաչել, քանի որ Արփենիկ Բաբաջանյանը նման լիազորություն չի ունեցել, իսկ մնացած սեփականատերերի մասով գործարքը վավեր ճանաչելը համարել է օրինաչափ՝ պատճառաբանելով, որ նման պայմաններում մնացած սեփականատերերի կամքն առկա է եղել առուվաճառքի ձևով Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27-րդ հասցեի բնակարանն օտարելու համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սերգեյ Սարգսյանը, հանդիսանալով վիճելի գույքի համասեփականատեր և օգտվելով օրենքով իրեն վերապահված գույքի տնօրինման իր իրավունքից, Արփենիկ Բաբաջանյանին, լիազորել է իր անունից հանդես գալու ՀՀ նոտարական գրասենյակում և կնքելու Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 27-րդ հասցեի բնակարանի իր բաժնեմասն Արթուր Սարկիսյանին նվիրելու մասին նվիրատվության պայմանագիր, սակայն Արփենիկ Բաբաջանյանը կնքել է առուվաճառքի պայմանագիր: Արփենիկ Բաբաջանյանն առուվաճառքի պայմանագիր կնքելիս չի ստացել վիճելի գույքի բոլոր համասեփականատերերի թույլտվությունը, քանի որ Սերգեյ Սարգսյանն իրեն լիազորել էր կնքելու միայն նվիրատվության գործարք: Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ մնացած սեփականատերերը և գնորդը իրական հնարավորություն են ունեցել իմանալու նշված փաստի մասին, քանի որ ներկա են գտնվել առուվաճառքի պայմանագրի կնքմանը, որի ժամանակ հրապարակվել և օգտագործվել է Սերգեյ Սարգսյանի տված լիազորագիրը,

ուստի նշված առուվաճառքի պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի իմաստով ամբողջությամբ հանդիսանում է անվավեր գործարք, քանի որ կնքվել է օրենքի, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա են համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու երկու հիմքերը՝ համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունները բացակայել են, և գործարքի մյուս կողմն էլ այդ մասին իմացել կամ այդ մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորություն ունեցել է:

Անդրադառնալով գործարքի անվավերության հետևանքների կիրառման վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Սերգեյ Սարգսյանի բաժնեմասը վաճառվել է օրենքի պահանջների խախտմամբ, այդ մասով վճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ հաստատելով, որ Սերգեյ Սարգսյանը հանդիսանում է համասեփականատեր, և վերջինիս պարտավորեցրել է վերադարձնել վիճելի բնակարանի արժեքի 1/4 մասը՝ 500.000 ՀՀ դրամի չափով՝ չունենալով նման պահանջը բավարարելու որևէ փաստական հիմք, քանի որ, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուր պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, սակայն սույն գործի փաստերի համաձայն՝ Սերգեյ Սարգսյանը ոչ միայն չի ստացել առուվաճառքի պայմանագրով սահմանված վաճառքի գումարը, այլ առհասարակ տեղյակ չի եղել նման գործարքի առկայության մասին, ուստի և նշված գործարքով Սերգեյ Սարգսյանն օբյեկտիվորեն չի կարող վերադարձնել այն, ինչը չի ստացել:

Ելնելով վերոգրյալից՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սերգեյ Սարգսյանի վճռաբեկ բողոքն ամբողջությամբ ենթակա է բավարարման:

2) Քննելով Արթուր Սարկիսյանի վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Նույն օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Նույն օրենսգրքի 333-րդ հոդվածը նախատեսում է հայցային վաղեմության հատուկ ժամկետներ՝ ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, եթե գործարքը կնքվել է բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, դրա դադարման օրվանից կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (յու՛ս, *Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի

պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանների օրակարգային խնդիրն է դառնում պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը:

Սույն գործով Դատարանը հայցային վաղեմություն կիրառելու՝ պատասխանողի դիմումը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվոր Սերգեյ Սարգսյանը տեղյակ չի եղել 05.04.2007 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրի մասին, քանի որ հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի և բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում, միաժամանակ 2006 թվականից մինչև 2011 թվականը Հայաստանի Հանրապետություն երբևէ մուտք չի գործել, իսկ գործարքը կնքվել է ՀՀ նտարական գրասենյակներից մեկում:

Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի՝ վերը նշված դիրքորոշմանը, գտել է, որ իր խախտված իրավունքների մասին Սերգեյ Սարգսյանի տեղեկանալու պահ պետք է դիտել Հայաստանի Հանրապետություն ժամանելու պահը՝ 24.12.2011 թվականը, որից մոտ չորս ամիս հետո՝ 19.04.2012 թվականին, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածով սահմանված ժամկետում խախտված իրավունքը վերականգնելու հայցով Սերգեյ Սարգսյանը դիմել է դատարան:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն ներկայացրած կողմը, ի հակադրումն վերը նշվածի, չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ Սերգեյ Սարգսյանն ավելի վաղ է տեղյակ եղել առուվաճառքի գործարքի մասին:

Անդրադառնալով ՀՀ ազգային անվտանգության 07.02.2013 թվական թիվ 2/71-152 գրությունը ոչ արժանահավատ ապացույց դիտելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, հետևաբար բողոքաբերը վերը նշված գրության արժանահավատության հարցը բարձրացնելիս պետք է հիմնվեր այնպիսի փաստարկների վրա, որոնք կապացուցեին տվյալ գրության՝ համապատասխան մարմնի կողմից տրամադրված չլինելու կամ համապատասխան մարմնի կողմից ընթացակարգային խախտումների միջոցով տրամադրված լինելու հանգամանքը: Նման փաստարկների բացակայության պայմաններում յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ նշված փաստաթուղթը տրամադրվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավասու պետական մարմինների լիազորությունների շրջանակում, հետևաբար սույն գործով ներկայացված նշված ապացույցը թույլատրելի է, և ոչ ոք չի կարող կասկածի տակ դնել դրա արժանահավատությունը, քանի դեռ համապատասխան միջոցներով և եղանակով չի ապացուցվել հակառակը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արթուր Սարկիսյանի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Այսպիսով, Սերգեյ Սարգսյանի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Արթուր Սարկիսյանի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ Սերգեյ Սարգսյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2014 թվականի որոշման՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 26.07.2013 թվականի վճիռը մասնակիորեն՝ Արփենիկ Բաբաջանյանի, Արա Սարգսյանի, Սերգեյ Սարգսյանի և Արթուր Սարկիսյանի միջև 05.04.2007 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն ամբողջությամբ անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասով բեկանելու և փոփոխելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 26.07.2013 թվականի վճիռն: Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Արթուր Սարկիսյանից հօգուտ Սերգեյ Սարգսյանի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վերջինիս կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Արթուր Սարկիսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես իր ներկայացրած վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ

վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.04.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/1299/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1299/02/11

Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան

Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նունյա Առաքելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.10.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Նունյա Առաքելյանի հայցի ընդդեմ Քնարիկ Մարտիրոսյանի, Սարգիս և Հայկազ Առաքելյանների՝ տնից վտարելու պահանջի մասին, և ըստ Քնարիկ Մարտիրոսյանի, Սարգիս և Հայկազ Առաքելյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Նունյա Առաքելյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նունյա Առաքելյանը պահանջել է Քնարիկ Մարտիրոսյանին, Սարգիս և Հայկազ Առաքելյաններին վտարել Երևանի Սևքարեցի Սաքոյի փողոցի թիվ 44/2 տնից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Քնարիկ Մարտիրոսյանը, Սարգիս և Հայկազ Առաքելյանները պահանջել են անվավեր ճանաչել Երևանի Սևքարեցի Սաքոյի փողոցի թիվ 44/2 տան վերաբերյալ 17.07.2008 թվականին Քնարիկ Մարտիրոսյանի և Նունյա Առաքելյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավա-ստության դատարանի 13.09.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ

հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2012 թվականի որոշմամբ Քնարիկ Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.09.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 09.07.2013 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է՝ վճռվել է որպես առոչինչ գործարքի՝ 17.07.2008 թվականին Քնարիկ Մարտիրոսյանի և Նունյա Առաքելյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Երևանի Սևքարեցի Սաքոյի փողոցի թիվ 44 տան և հողամասի նկատմամբ Նունյա Առաքելյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը, Քնարիկ Մարտիրոսյանի և Նունյա Առաքելյանի միջև 17.07.2008 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը դիտել որպես Քնարիկ Մարտիրոսյանի կողմից Նունյա Առաքելյանից փոխառությամբ ստացված 6.536.605 ՀՀ դրամի վերադարձելիությունն ապահովելու նպատակով կնքված գրավի պայմանագիր:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.10.2013 որոշմամբ Նունյա Առաքելյանի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.07.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նունյա Առաքելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Քնարիկ Մարտիրոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 49-րդ, 51-րդ, 53-րդ և 132-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ և 306-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է, որ իր և Քնարիկ Մարտիրոսյանի միջև 17.07.2008 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում հստակ նշվել է, որ Քնարիկ Մարտիրոսյանն իրենից ստացել է ամբողջ գումարը, այսինքն՝ 7.000.000 ՀՀ դրամը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև նախաքննության մարմնի որոշումը, որով հաստատվել է, որ Քնարիկ Մարտիրոսյանը 7.000.000 ՀՀ դրամով Նունյա Առաքելյանին է վաճառել իրեն սեփականության իրավունքով պատկանող վիճելի տունը: Նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը հաստատվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Քնարիկ Մարտիրոսյանի և մյուսների ներկայացուցիչը, ընդունելով վիճելի տունը 7.000.000 ՀՀ դրամով վաճառված լինելու փաստը, իրեն առաջարկել է հետ ստանալ նշված գումարը:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել Դատարանում Քնարիկ Մարտիրոսյանի և մյուսների ներկայացուցչի բացատրությունները, վկա Տիմոֆեյ Իլյինի ցուցմունքը, որոնցով հաստատվում է այն փաստը, որ Քնարիկ Մարտիրոսյանի գործողություններն ուղղված են եղել ոչ թե փոխառությամբ գումար վերցնելուն, այլ՝ գույքը վաճառելուն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, մերժելով քրեական գործի նյութերը պահանջելու վերաբերյալ իր միջնորդությունը, իրեն զրկել է վիճելի տունը Քնարիկ Առաքելյանին վարձով տրամադրված լինելու և վերջինիս կողմից 60.000 ՀՀ դրամը՝ որպես այդ տանը բնակվելու համար վարձավճար, վճարելու փաստը հաստատող ապացույցները Դատարան ներկայացնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Քնարիկ Մարտիրոսյանին և մյուսներին թույլատրելով շարունակել բնակվել վիճելի բնակարանում՝ ինքն օգտվել է սեփականատիրոջը վերապահված իր իրավունքներից:

Վերաքննիչ դատարանը, առանց հիմնավորելու իր պատճառաբանությունը, կողմերի միջև փոխառության իրավահարաբերության առկայության փաստը հաստատված է համարել՝ հիմք ընդունելով միայն Քնարիկ Մարտիրոսյանի հայտարարությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.10.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.09.2012 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ Նունյա Առաքելյանը որևէ ապացույց չի ներկայացրել Դատարան, որը կհաստատեր 7.000.000 ՀՀ դրամն ամբողջությամբ վճարված լինելու փաստը, ինչպես նաև կողմերի միջև վարձակալության իրավահարաբերության առկայությունը:

Վճիռ կայացնելիս Դատարանը ուսումնասիրել, հետազոտել և գնահատել է գործում առկա բոլոր ապացույցները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Արաբկիր համայնքի Սևքարեցի Սաքոյի փողոցի թիվ 44 հասցեում գտնվող տունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանել են Քնարիկ Մարտիրոսյանին (հատոր 1-ին, գ.թ. 37-39).

2) «ԻԹԲ» Միջազգային Առևտրային Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և Սամվել Առաքելյանի միջև 04.10.2005 թվականին կնքվել է թիվ Ֆ 80-2005 վարկային պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկը պարտավորվել է Սամվել Առաքելյանին հատկացնել 5.000.000 ՀՀ դրամի չափով վարկ: Դրամական պարտավորության կատարումն ապահովելու նպատակով նույն օրը կնքվել է հիփոթեքի պայմանագիր (հատոր 1, գ.թ. 45).

3) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի ավագ հարկադիր կատարող Հ. Մինասյանը, հիմք ընդունելով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից 01.03.2007 թվականին տրված կատարողական թերթը, 29.01.2008 թվականին որոշում է կայացրել էլեկտրոնային համակարգի կիրառմամբ Երևանի Սևքարեցի Սաքոյի փողոցի թիվ 44

տունը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 43)։

4) 25.06.2008 թվականին Սամվել Առաքելյանի անվամբ Բանկի իրավահաջորդ «Բիրլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ին կանխիկ վճարվել է 6.141.418,40 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 61)։

5) Քնարիկ Մարտիրոսյանի և Նունյա Առաքելյանի միջև 17.07.2008 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ Քնարիկ Մարտիրոսյանը Նունյա Առաքելյանին է վաճառել Երևանի Սևաբերդի Սաքոյի փողոցի թիվ 44 հասցեում գտնվող բնակելի տունն իր հողամասով։ Պայմանագրի 4-րդ կետում նշվել է, որ անշարժ գույքը վաճառվել է 7.000.000 ՀՀ դրամով, գումարն ամբողջությամբ Նունյա Առաքելյանից ստացել է Քնարիկ Մարտիրոսյանը։ Նշված պայմանագրից բխող իրավունքը գրանցվել է, որի վերաբերյալ Նունյա Առաքելյանին 05.08.2008 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2509804 վկայականը (հատոր 1-ին, գ.թ. 6-9)։

6) Երևանի քաղաքապետի 29.07.2008 թվականի թիվ 3499-Ա որոշման հավելվածի համաձայն՝ Նունյա Առաքելյանի դիմումի հիման վրա Երևանի Սևաբերդի Սաքոյի փողոցի թիվ 44 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրվել է Երևանի Սևաբերդի Սաքոյի փողոցի թիվ 44/2 հասցեն (հատոր 1-ին, գ.թ. 101, 102)։

7) 07.07.2011 թվականի դրությամբ Նունյա Առաքելյանը վերը նշված հասցեում չի բնակվել։ Նույն օրվա դրությամբ այդ հասցեում բնակվել են Նունյա Առաքելյանի եղբայրը՝ Սարգիս Առաքելյանը, և վերջինիս կինը՝ Քնարիկ Մարտիրոսյանը (հատոր 1-ին, գ.թ. 10)։

8) Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Մ. Գրիգորյանը քրեական գործի վարույթը կարճելու և Նունյա Առաքելյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 27.12.2011 թվականին որոշում կայացնելիս հիմնավորված է համարել նաև, որ վիճելի տունը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու ընթացքում Քնարիկ Մարտիրոսյանը Նունյա Առաքելյանին առաջարկել է մարել Բանկի հանդեպ ունեցած պարտքերը՝ դրա դիմաց նույն տունն առուվաճառքի պայմանագրով Նունյա Առաքելյանի անվամբ ձևակերպելու պայմանով։ Այդ նպատակով Նունյա Առաքելյանը շուրջ 6.500.000 ՀՀ դրամ է վճարել, որից հետո վիճելի տունը հանվել է աճուրդից, վիճելի տանը բնակվել շարունակելու կապակցությամբ Սամվել Առաքելյանը 2010 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2011 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում ամսական 60.000 ՀՀ դրամ վարձավճար է տվել Նունյա Առաքելյանին, իսկ երբ 2011 թվականի մայիս ամսից սկսած չեն վճարել վարձավճարները՝ Նունյա Առաքելյանը պահանջել է դուրս գալ տնից։ Վիճելի տունը վաճառելու հանգամանքը հիմնավորվել է նաև վկա Տիմոֆեյ Իլյինի ցուցմունքով (հատոր 1-ին, գ.թ. 94, 95)։

9) Երևան քաղաքի դատախազ Հր. Բաղայանը, քննելով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 27.12.2011 թվականի որոշումը վերացնելու վերաբերյալ Քնարիկ Մարտիրոսյանի բողոքը, 30.01.2012 թվականին որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին՝ որոշման մեջ նաև նշելով, որ վերը նշված տունը Նունյա Առաքելյանի կողմից օրինական ճանապարհով ձեռք բերելու հանգամանքը հիմնավորվել է, Նունյա Առաքելյանը նշված տունը գնելիս ծախսել է ընդհանուր 7.000.000 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 104, 105)։

10) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Մ. Գրիգորյանի և Երևան քաղաքի դատախազ Հր. Բաղայանի վերը նշված որոշումների դեմ Քնարիկ Մարտիրոսյանի բողոքը, պատճառաբանելով, որ այդ որոշումները կայացվել են օրենքին համապատասխան, որևէ անձի իրավունքներն ու ազատությունները խախտված չեն, այն մերժել է (հատոր 1-ին, գ.թ. 118, 119)։

11) 17.06.2013 թվականի դատական նիստին վկա Տիմոֆեյ Իլյինը ցուցմունք է տվել այն մասին, որ Քնարիկ Մարտիրոսյանն իրեն առաջարկել է գնել իր տունը 40.000 ԱՄՆ դոլարով, սակայն ինքը չի համաձայնել: Հետագայում Տիմոֆեյ Իլյինն իմացել է, որ Քնարիկ Մարտիրոսյանը տունը վաճառել է Նունյա Առաքելյանին (հատոր 3-րդ, գ.թ. 70, 84):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ շինծու գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ գործերով ապացուցման առարկան որոշելու առանձնահատկություններին և ապացուցման բեռի բաշխման իրավական խնդրին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց (*լրե ս, «Մինկրիպրալ» ՄՊԸ-ն ընդդեմ Գազիկ Բդդոյանի, Եվգինյա Բդդոյանի և երրորդ անձ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի թիվ 3-623(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերը նշված դիրքորոշումը, հարկ է համարում նշել, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման գործերով ապացուցման առարկան, մասնավորապես, կազմում են հետևյալ փաստերը.

- օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայությունը.
- այդ գործարքը վիճարկելու իրավունք ունենալը (շահագրգիռ անձ հանդիսանալը).
- գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտությունը .
- վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայությունը.
- կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայությունը:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին

կետի ընդհանուր կանոնի համաձայն՝ նշված հանգամանքները պետք է ապացուցի այդ փաստերը վկայակոչող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տե՛ս, Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների և մյուսների թիվ ԿԴ03/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, նշելով նաև, որ «դեռևս 28.12.2012 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը նշել է, որ պայմանագրով սահմանված 7.000.000 ՀՀ դրամը Նունյա Առաքելյանը Քնարիկ Մարտիրոսյանին առձեռն չի տվել, թեև պայմանագիրը պարունակել է հակառակի մասին համապատասխան դրույթ», «Նունյա Առաքելյանի՝ որպես վիճելի անշարժ գույքի սեփականատեր գրանցված լինելը դեռևս բավարար չէ փաստելու այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը կատարվել է, քանի որ նախ՝ ինչպես նշվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2012 թվականի որոշմամբ, չի հիմնավորվել բնակարանի արժեքն ամբողջությամբ վճարված լինելու հանգամանքը, բացի այդ, վիճելի պայմանագիրը կնքելուց հետո պատասխանողները շարունակել են ապրել վիճելի տանը, և հայցվորի կողմից վտարման պահանջը ներկայացվել է միայն երեք տարի անց՝ 14.07.2011 թվականին», «Նունյա Առաքելյանի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ Քնարիկ Մարտիրոսյանի կողմից դրամական միջոցների պարբերական վճարումներն ուղղված են եղել ոչ թե կողմերի միջև գոյություն ունեցող փոխառության պարտավորությունների կատարմանը, այլ անշարժ գույքի վարձակալության վարձավճարների վճարմանը», «Նունյա Առաքելյանի կողմից չի ներկայացվել թույլատրելի ապացույց կողմերի միջև վարձակալության իրավահարաբերությունների առկայության մասին», գտել է, որ Նունյա Առաքելյանի վերաքննիչ բողոքը չի պարունակում բավարար հիմքեր և հիմնավորումներ՝ Դատարանի 09.07.2013 թվականի վճիռը բեկանելու համար:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով կողմերի միջև իրականում եղել են փոխառության իրավահարաբերություններ, իսկ անշարժ գույքի առուվաճառքի 17.07.2008 թվականի պայմանագրով այդ իրավահարաբերությունները քողարկվել են առուվաճառքի իրավահարաբերություններով:

Վճռաբեկ դատարանը, վերը շարադրված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են, քանի որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ կողմերի կամքն ի սկզբանե ուղղված է եղել փոխառության պայմանագիր կնքելուն, և որ կողմերը մտադրություն կամ նպատակ են ունեցել քողարկելու փոխառության պայմանագիրը:

Ավելին, սույն գործում առկա է Երևանի քաղաքապետի 29.07.2008 թվականի թիվ 3499-Ա որոշումը, որի քաղվածքի համաձայն՝ Նունյա Առաքելյանի դիմումի հիման վրա Սևքարեցի Սաքոյի թիվ 44 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրվել է Սևքարեցի Սաքոյի փողոց թիվ 44/2 հասցեն:

Երևանի քաղաքապետի վերը նշված որոշումը կարող է հաստատել այն հանգամանքը, որ Նունյա Առաքելյանը, սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքին հասցե տրամադրելու խնդրանքով դիմելով քաղաքապետարան, դրսևորել է այնպիսի վարքագիծ, որը վկայում է վերջինիս՝ հենց անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելու և այդ պայմանագրից ծագած իր իրավունքը իրացնելու մասին, ինչն իր հերթին կարող է բացատրել Նունյա Առաքելյանի մոտ փոխառության պայմանագիր կնքելու մտադրության առկայությունը:

Բացի այդ, սույն գործով վկա Տիմոֆեյ Իլյինի ցուցմունքի համաձայն՝ Քնարիկ Մարտիրոսյանը դիմել է իրեն՝ Սևքարեցի Սաքոյի թիվ 44 հասցեի տունը վաճառելու մտադրությամբ և առաջարկել է այն գնել, սակայն ստանալով իր մերժումը՝ այն վաճառել է Նունյա Առաքելյանին, որպիսի փաստը կարող էր վկայել Քնարիկ Մարտիրոսյանի՝ առուվաճառքի պայմանագիր կնքելու մտադրություն ունենալու մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ կողմերի միջև գոյություն են ունեցել փոխառության պարտավորություններ, անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանը ոչ միայն չի անդրադարձել Վճռաբեկ դատարանի կողմից նշված Երևանի քաղաքապետի 29.07.2008 թվականի թիվ 3499-Ա որոշման հավելվածին, վկա Տիմոֆեյ Իլյինի ցուցմունքին, չի հիմնավորել դրանք մերժելը, այլ նաև անտեսել է, որ չի հաստատվել գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու համար անհրաժեշտ պայմաններից այն, որ գործարքը ստորագրած անձանց կամքը չի համապատասխանել պայմանագրում շարադրվածին:

Վերոգրյալ պատճառաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է նաև վճռաբեկ բողոքի մյուս հիմքը՝ կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետ, քանի որ ստորադաս դատարանները գործում եղած ոչ բոլոր ապացույցներն են գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.10.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1910/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1910/02/13
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատիկյան
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Սեյրան և Ռուզաննա Մանթաշյանների,
Իսկուհի Ավագյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
27.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Սեյրան և Ռուզաննա Մանթաշյանների, Իսկուհի
Ավագյանի հայցի ընդդեմ «Պրոմթեյ Բանկ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ անշարժ գույքի
գրավի և անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրերը մասնակի անվավեր
ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սեյրան և Ռուզաննա Մանթաշյանները, Իսկուհի Ավագյանը
(այսուհետ՝ Հայցվորներ) պահանջել են անվավեր ճանաչել 04.05.2011 թվականին
կնքված թիվ 111 և թիվ 112 անշարժ գույքի գրավի, 29.09.2011 թվականին կնքված թիվ 235,
02.04.2012 թվականին կնքված թիվ 43 և թիվ 44, 27.06.2012 թվականին կնքված թիվ 98
և թիվ 99, 17.12.2012 թվականին կնքված թիվ Ա-08 և թիվ Ա-09, 05.03.2013 թվականին
կնքված թիվ Ա-08 և թիվ Ա-09 անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրերի 7.1 կետը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-
տության դատարանի (դատավոր՝ Է. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.10.2013
թվականի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դա-
տարան) 27.12.2013 թվականի որոշմամբ Հայցվորների վերաքննիչ բողոքը մերժվել է, և

Դատարանի 10.10.2013 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայցվորները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ, 42-րդ, 83.5-րդ և 91-րդ հոդվածները, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 6-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ, 53-րդ, 103-րդ, 132-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 1-ին կետը և 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը որոշում կայացնելիս վկայակոչել է հենց վիճարկվող արբիտրաժային համաձայնությունը և գործը չի քննել ըստ էության:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված հիմքերին և հիմնավորումներին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը, հայցը թողնելով առանց քննության, հայցվորներին զրկել է դատական կարգով իրենց խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ֆինանսական արբիտրաժը ոչ դատարան է, ոչ էլ արդարադատություն իրականացնող մարմին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են «րեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2013 թվականի որոշումը և վերացնել Դատարանի 10.10.2013 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը»:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դատարանի՝ «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը բխում է միջազգային կոնվենցիաների, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթներից:

Դատարանը չի սահմանափակել Հայցվորների՝ ՀՀ ընդհանուր իրավասության դատարան դիմելու իրավունքը, այլ կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթը:

Կողմերն ազատ կամահայտնությամբ են եկել այդ համաձայնությանը, ուստի Դատարանը կատարել է օրենքի իմպերատիվ պահանջը:

Ներկա պահին որևէ օրենքով սահմանափակված չէ ֆինանսական արբիտրաժի կողմից վեճեր լուծելու հնարավորությունների սահմանը: Եթե կողմը գտնում է, որ տվյալ գործի շուրջ քննությունը և որոշում կայացնելը դուրս է ֆինանսական արբիտրաժի իրավասությունից, ապա նա նախ և առաջ պետք է դիմեր ֆինանսական արբիտրաժին՝ արբիտրաժային տրիբունալի իրավասության բացակայության կամ իրավասությունը գերազանցելու վերաբերյալ հայտարարությամբ, իսկ դրա վերաբերյալ կայացված

որոշման հետ համաձայն չլինելու դեպքում՝ նոր դիմեր դատարան, որի կայացրած որոշումը կլիներ վերջնական:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Բանկի և Իսկուհի Ավագյանի՝ նաև որպես անհատ ձեռնարկատեր, Սեյրան Մանթաշյանի միջև 04.05.2011 թվականին կնքված թիվ 111, Բանկի և Ռուզաննա Մանթաշյանի, Դավիթ Հարությունյանի և անհատ ձեռնարկատեր Իսկուհի Ավագյանի միջև 04.05.2011 թվականին կնքված թիվ 112 անշարժ գույքի գրավի, Բանկի և Իսկուհի Ավագյանի՝ նաև որպես անհատ ձեռնարկատեր, Սեյրան և Ռուզաննա Մանթաշյանների, Դավիթ Հարությունյանի միջև 29.09.2011 թվականին կնքված թիվ 235, 02.04.2012 թվականին կնքված թիվ 43 և թիվ 44, 27.06.2012 թվականին կնքված թիվ 98 և թիվ 99, 17.12.2012 թվականին կնքված թիվ Ա-08 և թիվ Ա-09, 05.03.2013 թվականին կնքված թիվ Ա-08 և թիվ Ա-09 անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրերի 7.1 կետով նախատեսվել է, որ նշված պայմանագրերի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության առ այն, որ նշված պայմանագրերի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան: (հատոր 1-ին, գ.թ. 14-46).

2) Սեյրան և Ռուզաննա Մանթաշյանները, Իսկուհի Ավագյանը հայց են ներկայացրել Դատարան ընդդեմ Բանկի՝ անշարժ գույքի գրավի և անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրերի 7.1 կետն անվավեր ճանաչելու պահանջների մասին (հատոր 1-ին, գ.թ. 6-13).

3) Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետով, 10.10.2013 թվականին որոշում է կայացրել հայցն առանց քննության թողնելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 123):

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում է, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճը ենթակա է արբիտրաժի քննությանը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական

մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոն գործող անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վարչական կարգով քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Վարչական կարգով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել դատարան:

Վկայակոչված իրավադրույթների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի իրավակարգավորումից հետևում է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքներից է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Այդ իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ ստեղծել անհրաժեշտ և գործուն կառուցակարգեր՝ ուղղված նշված իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացմանը: Մասնավորապես, քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը գործող իրավակարգավորման պայմաններում կարող է իրականացվել դատական, վարչական և հասարակական (արբիտրաժային) ձևերով, որոնցից առավել երաշխավորվածը դատական պաշտպանությունն է: Իրավունքների պաշտպանության այս ձևի առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վեճի քննությունը և լուծումն իրականացվում է օրենքով հստակ սահմանված դատավարական կարգով ու պարունակում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու, կողմերի դատավարական իրավունքների իրացումն ապահովող կայուն երաշխիքներ:

Մինևույն ժամանակ օրենսդիրը, հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի բարդությունը, պաշտպանության հայցվող արժեքի կարևորությունը, քաղաքացիական շրջանառության սուբյեկտների համար որոշակի վեճերի քննության և լուծման համար սահմանել է միայն իրավունքի պաշտպանության դատական ձևը՝ բացառելով այդպիսի վեճերի քննության և լուծման հնարավորությունը վարչական և հասարակական (արբիտրաժային) կարգով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով և դրա անվավերության հետևանքները կիրառելով:

Նույն օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից բխում է, որ գործող կարգավորման համաձայն՝ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է քննության հենց ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանի և վճռաբեկ

դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջների քննությունը բացառապես դատարանին վերապահելը պայմանավորված է ինչպես գործարքի անվավերության հիմքերի բացառիկությամբ, որոնց առկայության կամ բացակայության փաստը կարող է պարզվել միայն դատավարական որոշակի գործողությունների իրականացման արդյունքում, այնպես էլ այն հանգամանքով, որ գործարքներն ուղղված են քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն, հետևաբար նման վեճերի քննությունն անմիջականորեն առնչվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքներին և պարտականություններին ու պահանջում է նմանատիպ վեճերի լուծման հնարավորինս երաշխավորված և արդյունավետ ընթացակարգ, որպիսին դատական պաշտպանությունն է:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 316-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ գործարքը կարող է վիճարկվել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մի մասով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ մի կողմից Բանկի և մյուս կողմից Սեյրան ու Ռուզաննա Մանթաշյանների, Իսկուհի Ավագյանի և Դավիթ Հարությունյանի միջև կնքվել են անշարժ գույքի գրավի ու անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրեր: Նշված պայմանագրերի 7.1 կետով նախատեսվել է, որ այդ պայմանագրերի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության առ այն, որ նշված պայմանագրերի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան:

Սույն գործով հայցի առարկան նշված պայմանագրերի 7.1 կետն անվավեր ճանաչելու պահանջն է:

Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետով, վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 10.10.2013 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործի քննության ընթացքում պատասխանող կողմը միջնորդել է Դատարանին որոշում կայացնել հայցն առանց քննության թողնելու մասին՝ այն հիմնավորմամբ, որ առկա է կողմերի համաձայնությունը՝ պայմանագրերի հետ կապված վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու վերաբերյալ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում չէր կարող բավարար հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու համար, քանի որ, ինչպես արդեն վերը նշվեց, գործող իրավակարգավորման համաձայն՝ վիճահարույց գործարքը կամ դրա մի մասն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է քննության բացառապես ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից, ու բացի այդ, արբիտրաժային համաձայնության կողմերն իրենք են պայմանավորվել վեճերը լուծման համար Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին հանձնելը կատարել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժի» կանոնա-

դրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան, որը ևս նախատեսում է ընդհանուր սկզբունքից օրենքով նախատեսված սահմանափակումները:

Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է առևտրային արբիտրաժին առնչվող հարաբերությունների վրա՝ Հայաստանի Հանրապետության և այլ պետության կամ պետությունների միջև գործող պայմանագրերի պահպանման պայմանով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով «առևտրային» հասկացությունը ներառում է առևտրային բնույթի բոլոր հարաբերությունները՝ ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային: Առևտրային բնույթի հարաբերությունները, մասնավորապես, ներառում են հետևյալ գործարքները՝ բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված, ապրանքների ու ծառայությունների մատակարարման և փոխանակման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալման, ֆակտորինգի, վարձակալության, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների:

Նշված հոդվածների վերլուծությունից բխում է, որ առևտրային արբիտրաժի կողմից քննության ենթակա են միայն վերը նշված օրենքի իմաստով առևտրային բնույթի վեճերը:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նշված օրենքի դրույթները հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա և պետք է մեկնաբանվեն այդ սկզբունքներին համապատասխան՝ կողմերն ազատ են իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում, որը ենթակա է միայն օրենքով նախատեսված սահմանափակումների:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի սկզբունքներից է կողմերի ազատությունը՝ իրենց միջև վեճի դեպքում ընտրելու դրա լուծման ընթացակարգը: Ընդ որում, այդ սկզբունքը գործում է այնքանով, որքանով սահմանափակված չէ նույն օրենքով կամ մեկ այլ օրենքով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով նման սահմանափակման օրինակ է նույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը, որի բովանդակությունից բխում է, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի բացառում Հայաստանի Հանրապետության մեկ այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը: Այսինքն՝ նշված օրենքը չի բացառում այնպիսի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետության մեկ այլ օրենք բացառի որոշակի վեճերի հանձնումը արբիտրաժի լուծմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Նշված պայմանագրերի 7.1 կետում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով մեկնաբանելով այդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պայմանագրերի կողմերը վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվել են հետևյալ պայմաններին՝

- 1) նշված պայմանագրերի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը հանձնել Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին,
- 2) բացառել ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը,
- 3) վեճերը լուծման համար Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական

արքիտրաժ» հիմնարկին հանձնելը կատարել «Առևտրային արքիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արքիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արքիտրաժի կանոնակարգին» համապատասխան:

Նշված երրորդ պարտադիր պայմանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով 1-ին և 2-րդ կետերում նշված պայմանները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պայմանագրերի կողմերը, ազատ լինելով իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում, այնուամենայնիվ, կատարել են «Առևտրային արքիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված պահանջը, և իրենց այդ ազատությունը ենթարկել են սահմանափակման՝ նախատեսելով, որ վեճերը լուծման համար Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արքիտրաժ» հիմնարկին հանձնելը կատարվելու է «Առևտրային արքիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արքիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արքիտրաժի կանոնակարգին» համապատասխան:

Ավելին, անգամ պայմանագրերում վերը նշված 3-րդ պայմանը չսախատեսելու դեպքում «Առևտրային արքիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված նորմը գործելու էր անմիջականորեն, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով գործարքն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է քննության բացառապես դատարանում, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերը նշված իրավադրոյթների իմպերատիվ պահանջը, ինչպես նաև սխալ գնահատելով կողմերի միջև կնքված արքիտրաժային համաձայնությունը, ոչ ճիշտ հետևության է հանգել հայցն առանց քննության թողնելու հիմքի առկայության վերաբերյալ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական ՍԴ-3/0055/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ՍԴ-3/0055/02/13
Նախագահող դատավոր՝ Կ. Զիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Ա. Խառատյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՏՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության
բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2013
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝
Նախարարություն) ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումար
բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նախարարությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել
21.655.001 ՀՀ դրամ, բռագանձումը տարածել Ընկերությանը պատկանող գույքի և
դրամական միջոցների վրա, ինչպես նաև Ընկերության կողմից պայմանագրային պար-
տավորությունների չկատարման հետևանքով առաջացած տոկոսները հաշվարկել և
բռնագանձել մինչև պայմանագրով սահմանված վարձավճարները Նախարարությանը
վճարելու օրը:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Մ.
Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 26.04.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
26.12.2013 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 26.04.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 467-րդ, 468-րդ, 624-րդ հոդվածները որոնք պետք է կիրառեր, սխալ է կիրառել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանն ընդամենը մեկ դատական նիստով առանց Նախարարության ներկայության իրականացրել է ն՝ նախնական նիստ, ն՝ դատաքննություն, և անցել է վճռի հրապարկման, վկայակոչել և մնացած վարձավճարների գանձման մերժման հիմք համարել ոչ վերաբերելի օրենք՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, իր որոշման հիմքում դրել է այն, որ Դատարանը հայցը մերժել է հայցային վաղեմության հիմքով, իսկ բողոքաբերը չի անդրադարձել դրան, ուստի Վերաքննիչ դատարանը չէր կարող դուրս գալ բողոքի շրջանակներից այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում բարձրացված խախտումների շարքին է ըստ էության դասվում նաև հայցային վաղեմության մասով Դատարանի թույլ տված խախտումը:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է, որ «... հայցապահանջը մերժման ենթակա լինելու մասին հետևության Դատարանը հանգել է նաև հայցային վաղեմություն կիրառելու հիմքով, իսկ վերաքննիչ բողոքը հայցային վաղեմության կիրառման հետ կապված որևէ փաստարկ չի պարունակում», որից պարզ է դառնում, որ Վերաքննիչ դատարանն ընդունել է այն հանգամանքը, որ Դատարանի կողմից հայցը մերժվել է ոչ միայն հայցային վաղեմություն կիրառելու, այլ նաև այլ հիմքերով, սակայն այդ հիմքերին Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Նախարարությունը չի վիճարկել Դատարանի 01.01.2008 թվականից մինչև 31.12.2008 թվականն ընկած ժամանակահատվածի համար կիրառված հայցային վաղեմությունը, այլ Նախարարությունը վիճարկել է մնացած ժամանակահատվածի համար Դատարանի կողմից վարձավճարների գանձման վերաբերյալ դատական ակտում բացահայտված բոլոր, այդ թվում նաև օրենքով սահմանված ժամկետից ավելի կիրառված հայցային վաղեմության մասով առկա հիմքերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը երկու տարբեր գործերով ցուցաբերել է իրար հակառակ մոտեցում այն դեպքում, երբ թիվ ՍԴ-3/0086/02/12 քաղաքացիական գործով իր իսկ կողմից հրապարակված վճռով լուծել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագիրը՝ դրանով իսկ արձանագրելով, որ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Ընկերության միջև վարձակալվարձատու հարաբերություններն առկա են եղել մինչև վարձակալության պայմանագրի լուծումը, սակայն սույն վճռով արդեն հղում կատարելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածին, հիմնավորել է, որ գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանն իր իսկ որոշմամբ արձանագրել է, որ սույն գործով բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ հիմնադրի կողմից սահմանվել են բացառության դեպքեր, և վարձակալը շարունակել է օգտվել գույքից՝ հակասելով արդեն հենց բողոքարկվող դատական ակտի՝ «Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը» բաժնում իր իսկ կողմից հաստատված այն հանգամանքին, որ խնդրո առարկա անշարժ գույքը միայն 19.10.2012 թվականին է հանձնվել Նախարարությանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

Նախարարությունը հայցային վաղեմություն կիրառելու մասով վերաքննիչ բողոք չի ներկայացրել, հետևաբար Վերաքննիչ դատարանն այդ մասով վճիռը բեկանելու իրավասություն չունի: Ուստի Վերաքննիչ դատարանը կայացրել է պատճառաբանված և իրավաչափ դատական ակտ, քանի որ քննության առարկա չի դարձրել և որոշում չի կայացրել Դատարանի վճռի այն մասի վերաբերյալ, որը չէր բողոքարկվել:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ու Ընկերության միջև 08.10.2007 թվականին կնքվել է տարածքի վարձակալության պայմանագիր, որով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը պարտավորվել է վճարի դիմաց Ընկերության ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Գորիս քաղաքի Անտառամերձ հասցեում գտնվող ոչ բնակելի տարածք՝ շերտավոր ապակու արտադրություն կազմակերպելու նպատակով օգտագործելու համար (հատոր 1-ին, գ.թ. 6-10):

2) ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ու Ընկերության միջև 08.10.2007 թվականին կնքված վարձակալության պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ վարձակալը վարձատուի հաշվին փոխանցում է վարձավճարը պայմանագրում նշված հաշվեհամարին՝ վարձակալության պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր ամսվա համար, նույն ամսվա 25-ից ոչ ուշ, որի վերաբերյալ ետոյա ժամկետում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն պետք է ներկայացնի վճարման անդորրագրերի պատճենները: Նշված պայմանագրի 1.2 կետով սահմանված է, որ պայմանագիրը գործում է մեկ տարի ժամկետով՝ 01.01.2008 թվականից մինչև 31.12.2008 թվականը (հատոր 1-ին, գ.թ. 6-10):

3) ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մտած 30.08.2012 թվականի թիվ ՍԴ-3/0086/02/12 վճռով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ու Ընկերության միջև 08.10.2007 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը լուծվել է (հատոր 1-ին, գ.թ. 13-16):

4) Նախարարության ու Ընկերության միջև 19.10.2012 թվականին կատարվել է Գորիս քաղաքի Անտառամերձ հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքի հանձման և ընդունման աշխատանքներ (հատոր 1-ին, գ.թ. 17):

5) Գույքի վարձակալության պայմանագրից առաջացած պարտավորությունների վերաբերյալ հաշվարկի համաձայն՝ 2008 թվականի փետրվար ամսից մինչև 2012

թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Նախարարության կողմից կատարվել է ամսական վարձավճարի, բանկային տոկոսի և տույժերի հաշվարկ, որն ընդհանուր առմամբ կազմել է 21.655.001 ՀՀ դրամ, որից 16.519.355 ՀՀ դրամը՝ որպես պայմանագրով սահմանված վարձավճարի գումար, և 5.135.646 ՀՀ դրամը՝ որպես պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար 31.01.2013 թվականի դրությամբ հաշվարկված տոկոսներ (հատոր 1-ին, գ.թ. 11-12):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

ա) արդյո՞ք կիրառման ոչ ենթակա օրենքի կիրառումը որպես հետևանք կարող է հանգեցնել հայցային վաղեմության սխալ կիրառման.

բ) արդյո՞ք Վերաքննիչ դատարանն իրավունք ունի հիմք ընդունել «ի լրումն վերաքննիչ բողոքի» վերառությամբ փաստաթուղթն այն դեպքում, երբ այն ներկայացվել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո, և այդ փաստաթուղթում նշված դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումների հիման վրա վերանայել դատական ակտը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Վկայակոչված իրավանորմերի կարգավորումից հետևում է, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հայցի մերժման ինքնուրույն և բացառիկ հիմք է: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, սակայն, հայցը մերժելու նշված հիմքը չի կարող մեկուսացված լինել գործի փաստական հանգամանքներից և դրանց նկատմամբ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերից: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հայցային վաղեմության ինստիտուտի առանձնահատկությունները, գտնում է, որ հայցը մերժելու նշված հիմքի առկայությունը որոշակիորեն պայմանավորված է վիճելի իրավահարաբերության ճիշտ որակմամբ, դրա առանձին տարրերի՝ սուբյեկտի, օբյեկտի և բովանդակության բացահայտմամբ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է

օրենսդրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դատաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում գնահատական տա հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությանը: Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ նման անհրաժեշտությունը որոշ դեպքերում ուղղակի բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումից: Այսպես, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքը սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քանի դեռ դատարանը չի պարզել կիրառելի օրենսդրության հարցը, նյութական իրավունքի տրմբերով արժևորվող փաստերի շրջանակը, չի վերլուծել կողմերի փոխահարաբերություններում առկա պայմանագրային դրույթները, չի պարզել սուբյեկտիվ իրավունքի կամ պարտականության ծագման պահը, չի կարող եզրահանգման գալ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահի վերաբերյալ:

Վերը նշված դիրքորոշումը հիմնավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի իրավակարգավորման վերլուծության տեսանկյունից: Մասնավորապես՝ օրենսդիրը նշված հոդվածով ամրագրել է այն պահանջների շրջանակը, որոնց նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտը կիրառելի չէ, հետևաբար քանի դեռ դատարանը չի պարզել հայցի փաստական և իրավական հիմքը, չի որակել վիճելի իրավահարաբերությունը, չի կարող դատողություններ անել հայցային վաղեմության կիրառելիության հարցի վերաբերյալ:

Այսպիսով, վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճելի իրավահարաբերության սխալ որակումը, կիրառման ոչ ենթակա իրավանորմի կիրառումը որպես հետևանք կարող է հանգեցնել հայցային վաղեմության սխալ կիրառման:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում կողմերը 08.10.2007 թվականին կնքված վարձակալության պայմանագրով սահմանել են վարձավճարի չափը և դրա վճարման կարգը, որը, սակայն, պատասխանողի կողմից պատշաճ չի կատարվել, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանդիսանում է պարտավորության խախտում: Հետևաբար, հայցվորը ձեռք է բերել պայմանագրով սահմանված 01.01.2008 թվականից մինչև 31.12.2008 թվականն ընկած ժամանակահատվածի վարձավճարների

հանրագումարը պատասխանողից բռնագանձելու, ինչպես նաև դրա դիմաց հաշվարկված տոկոսագումարները պատասխանողից պահանջելու իրավունք, ինչը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված իրավանորմից: Մինչդեռ հայցվորը դատարան է ներկայացրել 21.655.001 ՀՀ դրամի բռնագանձման պահանջը, որը ներառում է 2008 թվականի փետրվար ամսից մինչև 2012 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում կատարված ամսական վարձավճարի, բանկային տոկոսի և տույժերի հաշվարկ այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված պայմանագրի 1.2 կետով ուղղակիորեն սահմանվել է նաև, որ պայմանագիրը գործում է մեկ տարի ժամկետով՝ 01.01.2008 թվականից մինչև 31.12.2008 թվականն ընկած ժամանակահատվածում: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով (հոդված 612), ապա այն չի կարող պայմանագիրն անորոշ ժամկետով վերսկսված համարելու համար հիմք հանդիսանալ, քանի որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Մինչդեռ սույն քաղաքացիական գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ հիմնադրի կողմից սահմանվել են բացառության դեպքեր և վարձակալը՝ պատասխանողը, շարունակել է օգտվել գույքից: Բացի այդ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ լիազորված պետական մարմինը վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար, որը նույնպես բացակայում է սույն քաղաքացիական գործի կյուրեբում:

Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ Ընկերության ներկայացուցչի հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի դրույթներից, որի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար: Այսինքն՝ Նախարարության կողմից ներկայացված վարձավճարների բռնագանձման մասին հայցապահանջը ենթակա է մերժման նաև պատասխանողի ներկայացուցչի կողմից հայցային վաղեմություն կիրառելու միջնորդության հիման վրա:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ «հաշվի առնելով Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայման ենթակա լինելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնը և այն փաստը, որ «հայցվորի կողմից ներկայացված 21.655.001 ՀՀ դրամի բռնագանձման մասին հայցապահանջը» մերժման ենթակա լինելու մասին հետևության Դատարանը հանգել է նաև «հայցային վաղեմություն կիրառելու

հիմքով», իսկ վերաքննիչ բողոքը հայցային վաղեմության կիրառման հետ կապված որևէ փաստարկ չի պարունակում, Վերաքննիչ դատարանը հիմնավորված համարեց վերաքննիչ բողոքի պատասխանում բերված այն փաստարկը, որ բողոքարկված վճիռը հայցային վաղեմության կիրառմանը վերաբերող մասով վերանայման ենթակա չէ, ինչը նշանակում է, որ այդ վճիռը չի կարող բեկանվել՝ անկախ նրանից, թե վերաքննիչ բողոքում բերված փաստարկներն ինչ գնահատական կատանան Վերաքննիչ դատարանի կողմից: Բանն այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնները վերաբերում են հայցի մերժման ինքնուրույն՝ հայցի հիմնավորվածության աստիճանի հետ չկապված հիմքի, և դատարանի կողմից այդ հիմքի կիրառման իրավաչափությունը վերաքննիչ բողոքում վիճարկված չլինելու պայմաններում այդ հիմքի կիրառմանը վերաբերող մասով վճիռը չի կարող բեկանվել անգամ այն դեպքում, եթե վճռի դեմ այլ հիմքերով բերված վերաքննիչ բողոքն ամբողջությամբ հիմնավորված համարվի, ուստի նշված պայմաններում վերաքննիչ բողոքի փաստարկների գնահատումը որևէ կերպ չի կարող ազդել բողոքարկված վճռի ճակատագրի վրա: Հենց այս նկատառումներից ելնելով էլ Վերաքննիչ դատարանը եզրակացրեց, որ բողոքարկված վճիռը բեկանելու և փոփոխելու վերաբերյալ բողոք բերած անձի պահանջը բավարարվել չի կարող՝ անկախ այն հանգամանքից, թե որքանով են հիմնավորված բողոքում բերված փաստարկները, ուստի այդ փաստարկներից յուրաքանչյուրի գնահատմանն անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է»:

Վճռաբեկ դատարանը վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոնշյալ իրավանդումից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է և վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը որոշում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն գուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ:

Սույն գործով Նախարարությունը 23.05.2013 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքում որպես նյութական իրավունքի նորմի խախտման հիմք նշել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի սխալ մեկնաբանումը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ոչ ճիշտ կիրառումը: Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ հայցը մերժվել է նաև հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով, որևէ գնահատական չի տվել բողոքում ներկայացված հիմքերին և դրանց հիմնավորումներին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ

անկախ այն հանգամանքից, թե բողոքարկման հիմքը նաև դատական ակտի բեկանման հիմք է, թե ոչ, վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել և իր կողմից կայացվող որոշման մեջ գնահատական տալ այդ հիմքերի հիմնավորվածությանը: Ավելին, Վճռաբեկ դատարանը հայցային վաղեմության ինստիտուտի վերաբերյալ վերը շարադրված դիրքորոշումների համատեքստում հերքում է նաև Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնները վերաբերում են հայցի մերժման ինքնուրույն՝ հայցի հիմնավորվածության աստիճանի հետ չկապված հիմքի, և դատարանի կողմից այդ հիմքի կիրառման իրավաչափությունը վերաքննիչ բողոքում վիճարկված չլինելու պայմաններում այդ հիմքի կիրառմանը վերաբերող մասով վճիռը չի կարող բեկանվել անգամ այն դեպքում, եթե վճռի դեմ այլ հիմքերով բերված վերաքննիչ բողոքն ամբողջությամբ հիմնավորված համարվի»: Մասնավորապես՝ սույն գործով վերաքննիչ բողոքը բերվել է վիճելի իրավահարաբերության նկատմամբ նյութական օրենսդրության նորմերի սխալ կիրառման հիմքով, հետևաբար անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում ուղղակիորեն նման հիմք նշված է, թե ոչ, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր պարզել, թե արդյոք նյութական օրենսդրության նորմի սխալ կիրառում առկա է, թե ոչ, և արդյոք կիրառման ոչ ենթակա նյութական նորմի կիրառումը որևէ ազդեցություն ունեցել է դատարանի եզրահանգումների վրա (օրինակ՝ նյութական նորմի սխալ կիրառումը կարող է հանգեցնել նաև հայցային վաղեմության ժամկետի սխալ հաշվարկման):

Մասնավորապես՝ սույն գործով Դատարանը վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը ստեղծվում է Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ պետական մարմիններին (այսուհետ՝ պետական մարմին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով:

«ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ նախագահի 18.07.2007 թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 7-րդ կետի համաձայն՝ կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները (այսուհետ՝ ՀԳՄ), որոնք ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ ՀՀ Նախագահի հրամանագրով, իսկ նույն հրամանագրի 8-րդ կետի համաձայն՝ ՀԳՄ-ներն են՝ ՀՀ նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները:

Նույն հրամանագրի 15-րդ կետի համաձայն՝ ՀԳՄ-ի աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է հանրապետական գործադիր մարմնին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը: ՀԳՄ-ի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկվում են կառուցվածքային ստորաբաժանումներ (վարչություն, բաժին, քարտուղարություն) և առանձնացված ստորաբաժանումներ (գործակալություն, տեսչություն), որոնց ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ պետական ոչ առևտրային կազմակերպություններն էականորեն տարբերվում են պետական կառավարչական հիմնարկներից ինչպես կազմակերպաիրավական ձևով, այնպես էլ իրենց գործառույթներով:

Մասնավորապես՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, մինչդեռ պետական կառավարչական հիմնարկներն այդ կարգավիճակը չունեն: Առաջինները ստեղծվում են միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով, իսկ երկրորդների ստեղծման նպատակն է օժանդակել Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ պետական մարմիններին իրենց վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովմանը:

«Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 06-ի թիվ 197 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1229-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունը «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետին և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1064 հրամանագրով սահմանված կարգի 4-րդ կետին համապատասխան, ինչպես նաև ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 06-ի թիվ 197 որոշման՝ ստեղծել է «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:

Վերը նշված որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 18-րդ կետի համաձայն՝ նախարարության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որը, որպես պետական կառավարչական հիմնարկ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

Վկայակոչված դրոյթներից հետևում է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետական կառավարչական հիմնարկ է, որի նկատմամբ կիրառելի է «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքը, այլ ոչ թե «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, հետևաբար Դատարանը կիրառել է վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ոչ ենթակա օրենք, որպիսի նորմի կիրառման ուժով էլ որոշել է հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկզբնակետը:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը վերոնշյալ հիմքով

հիմնավոր է:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ գնահատման չի արժանացել վերաքննիչ բողոքի այն հիմնավորումը, որ Դատարանն անտեսել է 30.08.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ ՄԴ3/0086/02/12 վճռով պայմանագրի լուծման փաստը: Մինչդեռ վերաքննիչ բողոքում նման փաստարկի առկայությունը ևս անուղղակիորեն վկայում է Դատարանի վճիռը հայցային վաղեմության կիրառման մասով բողոքարկված լինելու վերաբերյալ, քանի որ Դատարանը հայցային վաղեմության կիրառության հարցը լուծելիս պարտավոր էր գնահատել նաև կողմերի միջև պայմանագրային հարաբերությունների դադարման պահը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձի՝ դատավարական իրավունքի խախտումների վերաբերյալ փաստարկներին հնարավոր չէ անդրադառնալ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձիք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական ակտերի վերանայման վարույթներում, սակայն, պայմանավորված այդ վարույթների առանձնահատկություններով՝ քաղաքացիական դատավարության վերը նշված սկզբունքը ենթարկվում է որոշակի սահմանափակման:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի

հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոքի հիմքերը չեն կարող փոփոխվել, լրացվել բողոքի քննության ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Վերը նշված իրավակարգավորումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ տնօրինչականության սկզբունքի դրսևորումներին մինչև վերաքննիչ վարույթի հարուցումը (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը) և վերաքննիչ վարույթի հարուցումից հետո:

Վերաքննիչ վարույթի հարուցման փուլը ներառում է վերաքննիչ բողոքարկման և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու շրջանակներում իրականացվող դատավարական գործողությունները: Վերաքննիչ վարույթի հարուցումը պայմանավորված է օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացմամբ, որը ենթադրում է օրենսդրի կողմից ամրագրված ժամկետում օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ վերաքննիչ բողոքի ներկայացում վերաքննիչ դատարան: Պայմանավորված բողոքարկման ենթակա դատական ակտի տեսակով՝ գործն ըստ էության լուծող, թե միջանկյալ, օրենսդիրը նախատեսել է բողոքարկման իրավունքի իրացման տարբեր ժամկետներ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի և 140-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման պարագայում այդ ժամկետը մեկ ամիս է: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ նշված մեկամսյա ժամկետն օրենսդրի տեսանկյունից այն անհրաժեշտ ժամանակահատվածն է, որի շրջանակներում անձը կարող է իրապես իրացնել իր բողոքարկման իրավունքը: Հետևաբար այդ ժամանակահատվածում բողոքարկման իրավունքի սուբյեկտն օժտված է իրավունքների առավել լայն շրջանակով, քան վերաքննության մյուս փուլերում, և հակառակը, վերաքննիչ վարույթի հարուցման փուլում վերաքննիչ դատարանի մասնակցությունը դատավարական իրավահարաբերություններին կրում է պասիվ բնույթ՝ ի տարբերություն վերաքննության մյուս փուլերի: Վերոգրյալով պայմանավորված՝ վերաքննության հարուցման փուլում տնօրինչականության սկզբունքն առավել լայն դրսևորում ունի, քան վերաքննության մյուս փուլերում: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննության հարուցման փուլում տնօրինչականության սկզբունքը կարող է դրսևորվել նաև վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները փոփոխելով կամ լրացնելով, ինչը, սակայն, կարող է կատարվել մինչև բողոքարկման իրավունքի իրականացման համար սահմանված մեկամսյա ժամկետի ավարտը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, համաձայն որի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում: Այդ

որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան վերջնաժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Նշված մեկամսյա ժամկետի ավարտից հետո կայացնելով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում՝ վերաքննիչ դատարանը հարուցում է վերաքննիչ վարույթ, իսկ վերաքննիչ վարույթի հարուցմամբ սկսվում է բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում, որի ընթացքում գործում է վերաքննիչ բողոքի հիմքերը փոփոխելու, լրացնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 5-րդ կետով ամրագրված արգելքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերը կարող են փոփոխվել և/կամ լրացվել բացառապես վերաքննության հարուցման փուլում՝ մինչև բողոքարկման իրավունքի իրացման ժամկետը լրանալը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 26.04.2013 թվականի վճռի դեմ Նախարարությունը 23.05.2013 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում որպես նյութական իրավունքի նորմի խախտման հիմք՝ նշել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի սխալ մեկնաբանումը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ոչ ճիշտ կիրառումը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2013 թվականի որոշմամբ 23.05.2013 թվականի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ պետական տուրքը վճարված չլինելու պատճառաբանությամբ: Նախարարությունը 21.06.2013 թվականին կրկին ներկայացրել է նույն վերաքննիչ բողոքը՝ կցելով վճարված պետական տուրքի անդորրագիրը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.06.2013 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը ընդունվել է վարույթ: Հետագայում՝ 02.07.2013 թվականին, Նախարարության կողմից փոստային առաքման եղանակով ներկայացվել է «ի լրումն վերաքննիչ բողոքի» վերտառությամբ փաստաթուղթ (որը Վերաքննիչ դատարանում մուտքագրվել է 04.07.2013 թվականին), որում որպես նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ նշվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածը: Մասնավորապես՝ տվյալ փաստաթղթում վկայակոչվել է, որ Դատարանը, հայցվորի բացակայությամբ 2013 թվականի ապրիլի 16-ին սույն գործի շրջանակներում իրականացրել է ընդամենը մեկ դատական նիստ՝ դատաքննություն, և նույն թվականի ապրիլի 26-ին հրապարակել վճիռը:

Վերը նշվածը հիմք ընդունելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո վերաքննիչ բողոք բերած անձի տնօրինչական գործողությունների օրենսդրորեն սահմանափակման պայմաններում 02.07.2013 թվականին ներկայացված «ի լրումն վերաքննիչ բողոքի» վերտառությամբ փաստաթուղթը և դրանում նշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ հիմքերն ու հիմնավորումները չէին կարող դիտվել որպես վերաքննիչ բողոքի հիմքեր և հիմնավորումներ, ուստի և ենթակա չէին քննության Վերաքննիչ դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

Վերը նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը դատավարական նորմերի խախտման հիմքով չի բողոքարկվել վերաքննիչ դատարան, հետևաբար այդ հիմքով վճռաբեկ բողոք բերվել չէր կարող, որպիսի պայմաններում բողոքի նշված փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է վճռաբեկ

բողոքի պատասխանում բերված այն փաստարկը, որ «ի լրումն ներկայացրած վերաքննիչ բողոքի» վերարտադրությամբ փաստաթղթի մեջ առկա հիմքերն ու հիմնավորումները վերաքննիչ բողոքի հիմքեր չեն, քանի որ «ի լրումն ներկայացրած վերաքննիչ բողոքի» փաստաթուղթը ներկայացվել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված մյուս փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործով արձանագրված նյութական և դատավարական նորմերի խախտումները կարող են վերացվել միայն առաջին ատյանի դատարանում քննության ընթացքում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահերից և ուղղված է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0181/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0181/02/13**
Նախագահող դատավոր՝ **Ն. Բարսեղյան**
Դատավորներ՝ **Ա. Մկրտչյան**
Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս
ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Կարինե և Սամվել Զարգարյանների ընդդեմ Նախարարության՝ Երևան քաղաքի
Դավթաշեն թաղամասում երկսենյականոց բնակարան հատկացնելուն կամ դրան
համարժեք փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կարինե և Սամվել Զարգարյանները պահանջել են պարտա-
վորեցնել Նախարարությանը հատկացնելու երկսենյականոց բնակարան Երևան քաղաքի
Դավթաշեն թաղամասում կամ տրամադրել դրան համարժեք դրամական փոխհատուցում:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրա-
վասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ **Դատարան**) 23.10.2013
թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**)
24.01.2014 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 23.10.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Կարինե և Սամվել Զարգարյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածները, 337-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, ՀՀ կառավարության 18.06.1997 թվականի «Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության պետական (հանրային) բազմաբնակարան բնակելի տների բնակարանների սեփականաշնորհման կարգը հաստատելու մասին» թիվ 191 որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը, ՀՀ կառավարության 15.11.1996 թվականի «Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության պետական (հանրային) բնակելի տները (բնակարանները) սեփականաշնորհելու մասին» թիվ 358 որոշման 3-րդ, 4-րդ կետերը, «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 2007 թվականի հունվարի 4-ից) 29-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 2007 թվականի հունվարի 4-ից) 1-ին և 3-րդ հոդվածները, 5-րդ հոդվածի «գ» կետը, խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետը, 149.5-րդ հոդվածը, 149.8-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 15.05.2008 թվականի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1460-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 503-Ն որոշման 8-րդ կետի 12-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ որևէ օրենքով նախատեսված չէ գործադիր կոմիտեի որոշմամբ քաղաքացուն ամրակցված անավարտ շինարարության բնակարանի փոխարեն այդ բնակարանի մակերեսին համապատասխան դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն փաստը, որ նախկին պատգամավորների տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից մինչև 22.06.1993 թվականն ընդունված որոշումներով քաղաքացիներին հատկացված և անավարտ մնացած բնակարանների սեփականաշնորհումն իրականացվել է պետական կառավարման մարմիններին այդ քաղաքացիների կողմից շինարարությունն իրենց միջոցներով ավարտին հասցնելու մասին գրավոր համաձայնություն ներկայացնելու և երկամսյա ժամկետում համապատասխան բնակարանն ապագա բնակարանատերերին հատկացնելու վերաբերյալ որոշում կայացնելու միջոցով: Ընդ որում, անավարտ բնակարանների սեփականաշնորհման գործընթացը սահմանափակվել է 31.12.1998 թվականով, որի ընթացքում քաղաքացու կողմից պետական կառավարման տարածքային մարմնին գրավոր համաձայնություն չներկայացնելը դիտվել է սեփականաշնորհման իրավունքից հրաժարում, իսկ գույքը հանձնվել է համայնքներին: Տվյալ դեպքում Կարինե Զարգարյանին և նրա երկու տղաներին հատկացվել է Երևանի Դավիթաշեն 4-րդ թաղամասի թիվ 25ա շենքի 4-րդ հասցեում գտնվող անավարտ շենքի երկսենյականոց բնակարանը, սակայն վերջիններս մինչև 31.12.1998 թվականը, որպես ապագա բնակարանատերեր, սահմանված կարգով գրավոր համաձայնություն չեն ներկայացրել շինարարություն

իրենց միջոցներով ավարտին հասցնելու մասին, ինչի հետևանքով անավարտ շենքը հանձնվել է համայնքին և չի կառուցվել: Հետևաբար, Կարինե Չարգարյանի և նրա ընտանիքի կողմից բնակարանի սեփականաշնորհման իրավունքից հրաժարվելը հանգեցրել է այդ իրավունքի դադարմանը:

Այսինքն՝ անձն իրեն հատկացված նոր կառուցվող բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում միայն օրենքով սահմանված կարգով այն սեփականաշնորհելու դեպքում, բնակարանի հատկացման փաստը չի հավասարեցվում դրա սեփականաշնորհմանը և որպես հետևանք՝ հատկացման հիմքով սեփականության իրավունքի ծագմանը, ուստի այս պարագայում սեփականության իրավունքի պաշտպանության եղանակները կիրառելի չեն:

Ավելին, առանց համապատասխան գույքի առկայության այդ գույքի նկատմամբ որևէ անձի մոտ չի կարող ծագել որևէ գույքային, այդ թվում՝ սեփականության իրավունք:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում հայցը ենթակա է մերժման նաև հայցային վաղեմության հիմքով, քանի որ հայցվորները 01.01.1999 թվականից իմացել են իրենց ենթադրյալ իրավունքի խախտման մասին, ուստի կարող էին դիմել դատարան մինչև 01.01.2002 թվականը: Եթե նույնիսկ համարվի, որ վերջիններս այդ պահին չեն իմացել իրենց իրավունքի խախտման մասին, ապա քաղաքապետարանի 24.01.2006 թվականի թիվ 20/1-Չ-1 գրությունը ստանալու պահից հստակ իմացել են այդ մասին, իսկ այդ պահից նրանք դատարան կարող էին դիմել մինչև 24.01.2009 թվականը, մինչդեռ վերջիններս դատարան են դիմել 04.02.2013 թվականին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.01.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

ՀՀ կառավարության 15.11.1996 թվականի և 18.06.1997 թվականի որոշումների և «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի դրույթները տվյալ դեպքում կիրառելի չեն, քանի որ 05.11.1992 թվականի գործկոմի որոշմամբ խոսք չի եղել անավարտ շինարարության և անավարտ շենքի կամ բնակարանի մասին: Գործկոմի որոշմամբ հատկացվել է կոնկրետ բնակարան, հետագայում պարզվել է, որ այն կառուցված չէ, ուստի դրա բացասական հետևանքները պետք է կրի պատասխանողը՝ վերականգնելով հայցվորների խախտված գույքային իրավունքը:

Ինչ վերաբերում է Նախարարության այն պնդմանը, որ անցել են հայցային վաղեմության ժամկետները, ապա հարկ է նշել, որ Նախարարությունը որևէ ապացույց չի ներկայացրել դատարան, որով կհաստատվեր, որ հայցվորներն իրենց խախտված իրավունքի մասին իմացել են ավելի վաղ, իսկ հայցային վաղեմության ժամկետը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմանար իր խախտված իրավունքի մասին: Տվյալ դեպքում հայցվորների կողմից դատարան ներկայացված ապացույցներով հաստատվել է այն փաստը, որ հայցվորներն իրենց խախտված իրավունքի մասին իմացել են 2011 թվականին: Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 05.11.1992 թվականի թիվ 34/83 որոշմամբ որոշվել է Կարինե Զարգարյանի ընտանիքի երեք անձին՝ իրեն և տղաներին, հատկացնել Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 25ա շենքի 4-րդ հասցեի երկսենյականոց բնակարանը, քանի որ վերջիններս բնակվում են Նոր Արեշի 35-րդ փողոցի թիվ 125/3 հանրակացարանում, իսկ Կարինե Զարգարյանն աշխատել է խոշոր պանելային տնաշինական թիվ 2 գործարանում և հերթագրված է եղել բնակարան ստացողների ցուցակում (հատոր 1-ին, գ.թ. 76):

2) Երևանի քաղաքապետարանի 24.01.2006 թվականի թիվ 20/1-Ձ-1 գրությամբ Կարինե Զարգարյանին հայտնվել է, որ ՀՀ վարչապետին հասցեագրված Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 25ա շենքի 4-րդ հասցեի բնակարանն իրեն հատկացնելու հարցով դիմումի հետ կապված ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 42 որոշմամբ Երևանի քաղաքային ենթակայության բնակարանային տնտեսության ձեռնարկությունների հաշվեկշիռներում հաշվեգրված բնակարանային ֆոնդը, ներառյալ՝ բնակելի շենքերի բացվածքները և ոչ բնակելի տարածքները, որպես սեփականություն հանձնվել են թաղային համայնքներին (հատոր 1-ին, գ.թ. 10):

3) Երևանի քաղաքապետարանի կողմից 02.09.2011 թվականի թիվ 20/1-Ձ389, 23.03.2011 թվականի թիվ 20/1-Ձ65 և 06.04.2012 թվականի թիվ 20/1-Ձ169, 11.04.2012 թվականի թիվ 20/1-Ձ-179 գրություններով Կարինե Զարգարյանը տեղեկացվել է, որ պետական միջոցներով կառուցվող բնակարանային ֆոնդը սպառվել է և ներկայումս Երևանի քաղաքապետարանն ազատ ֆոնդ չունի և ակնկալել, որ բնակարանային ֆոնդեր՝ ազատվող կամ ազատ բնակարաններ կլինեն, իրատեսական չէ, ներկայումս Երևանի քաղաքապետարանն իր տիրապետության տակ չունի տարածքներ, ուստի նշվածների հիման վրա Երևանի քաղաքապետարանը խնդրանքը բավարարելու հնարավորություն չունի (հատոր 1-ին, գ.թ. 78-81):

4) Սույն գործով հայցադիմումը դատարան է ներկայացվել 29.01.2013 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 5-9):

5) Դատարան ներկայացված Նախարարության 12.03.2013 թվականի առարկությամբ Նախարարությունը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն (հատոր 1-ին, գ.թ. 36-41):

4. Վճարել դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությանը, ինչը պետք է ապահովի դատարանների կողմից վերոնշյալ նորմի միատեսակ կիրառությունը և նպաստի դրա վերաբերյալ նախադեպային իրավունքի զարգացմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ (հոդված 277):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները գուցորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 274-277 հոդվածներով նախատեսված իրավունքները պատկանում են նաև այն անձին, ով թեև սեփականատեր չէ, սակայն գույքը տիրապետում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքով: Այդ անձն իր տիրապետման պաշտպանության իրավունք ունի նաև ընդդեմ սեփականատիրոջ:

Վերոհիշյալ իրավանդությունների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան հայցային վաղեմության կիրառությունը բացառելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1) հայցվորը պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ տիրապետող, և

2) ներկայացված հայցով հայցվորը պետք է պահանջի իր իրավունքի ցանկացած խախտման վերացում, թեկուզև այդ խախտումը կապված չի եղել գույքի տիրապետումից զրկելու հետ:

Առաջին պայմանի վերլուծությունից հետևում է, որ վերոհիշյալ նորմը չի կարող կիրառվել, եթե հայցվորը չի հանդիսանում այն գույքի սեփականատեր կամ այլ տիրապետող, որի հետ կապված պահանջում է իր իրավունքի խախտման վերացում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է քննարկվող նորմի տառացի մեկնաբանությամբ, ինչից ուղղակիորեն բխում է, որ այդ նորմը վերաբերում է «սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի» իրավունքի խախտման վերացմանը:

Ինչ վերաբերում է երկրորդ պայմանին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմությունը տարածելու արգելքը վերաբերում է սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ոչ բոլոր խախտումների վերացման պահանջներին, այլ միայն այն խախտումներին, որոնք կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ: Այս հետևությունը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված իրավանդումի բովանդակության շարադրանքից անմիջապես հետո օրենսդիրը փակագծերում մատնանշել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, որը վերաբերում է տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումներից սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությանը (նեգատոր հայցերին):

Եթե օրենսդրի կամքն ուղղված լիներ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի բոլոր տեսակի խախտումների վերացման պահանջների վրա հայցային վաղեմությունը չտարածելուն, ապա քննարկվող հոդվածում այլևս անհրաժեշտություն չէր լինի հատուկ մատնանշելու տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների մասին, այլ ուղղակի կարող էր սահմանվել, որ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ցանկացած խախտման վերացման պահանջների նկատմամբ հայցային վաղեմությունը չի տարածվում: Մինչդեռ քննարկվող հոդվածը նման կարգավորում չի նախատեսել, հետևաբար սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ կապված իրավունքի խախտումների վերացման պահանջների (վինդիկացիոն հայցերի) նկատմամբ հայցային վաղեմությունը տարածվում է, իսկ քննարկվող նորմի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում միայն սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների վերացման պահանջների վրա: Մյուս կողմից իրավաբանական կարգավորումը պայմանավորված է նեգատոր հայցի առանձնահատկություններով: Մասնավորապես՝ նեգատոր հայցը գույքի սեփականատիրոջ կողմից արտապայմանա-

գրային հարաբերություններից բխող սեփականության իրավունքի պաշտպանության միջոց է, որն ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման կամ տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Ընդ որում, գույքի տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումները, որպես կանոն, տևական և շարունակական են, ինչն էլ պայմանավորել է սեփականության իրավունքի պաշտպանության այս միջոցի նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման բացառումը: Այսինքն՝ եթե սեփականատերը կամ այլ տիրապետողը ինչ-որ ժամանակահատվածում չի պահանջել նման խախտումների վերացում, ապա դա դեռևս հիմք չէ, որպեսզի նա հետագայում ևս զրկվի այդ խախտումներից պաշտպանվելու հնարավորությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 05.11.1992 թվականի թիվ 34/83 որոշմամբ որոշվել է Կարինե Զարգարյանի ընտանիքի երեք անձին՝ իրեն և տղաներին, հատկացնել Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 25ա շենքի 4-րդ հասցեի երկհնայականոց բնակարանը, քանի որ վերջիններս բնակվում են Նոր Արեշի 35-րդ փողոցի թիվ 125/3 հանրակացարանում, իսկ Կարինե Զարգարյանն աշխատել է խոշոր պանելային տնաշինական թիվ 2 գործարանում և հերթագրված է եղել բնակարան ստացողների ցուցակում:

Երևանի քաղաքապետարանի կողմից 24.01.2006 թվականի թիվ 20/1-Ձ-1 գրությամբ Կարինե Զարգարյանը ՀՀ վարչապետին հասցեագրված Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 25ա շենքի 4-րդ հասցեի բնակարանն իրեն հատկացնելու հարցով դիմումի հետ կապված տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 42 որոշմամբ Երևանի քաղաքային ենթակայության բնակարանային տնտեսության ձեռնարկությունների հաշվեշիններում հաշվեգրված բնակարանային ֆոնդը, ներառյալ՝ բնակելի շենքերի բացվածքները և ոչ բնակելի տարածքները, որպես սեփականություն հանձնվել են թաղային համայնքներին:

Երևանի քաղաքապետարանի կողմից 02.09.2011 թվականի թիվ 20/1-Ձ389, 23.03.2011 թվականի թիվ 20/1-Ձ65, 06.04.2012 թվականի թիվ 20/1-Ձ169 և 11.04.2012 թվականի թիվ 20/1-Ձ-179 գրություններով Կարինե Զարգարյանը տեղեկացվել է, որ պետական միջոցներով կառուցվող բնակարանային ֆոնդը սպառվել է և ներկայումս Երևանի քաղաքապետարանն ազատ ֆոնդ չունի և ակնկալել, որ բնակարանային ֆոնդեր՝ ազատվող կամ ազատ բնակարաններ կլինեն, իրատեսական չէ, ներկայումս Երևանի քաղաքապետարանն իր տիրապետության տակ չունի տարածքներ, ուստի նշվածների հիման վրա Երևանի քաղաքապետարանը խնդրանքը բավարարելու հնարավորություն չունի:

Սույն գործով հայցադիմումը դատարան է ներկայացվել 29.01.2013 թվականին:

Դատարան ներկայացված 12.03.2013 թվականի առարկությամբ Նախարարությունը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն:

Դատարանը, հայցը բավարարելով և հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ պատասխանողի միջնորդությունը մերժելով, պատճառաբանել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով սույն գործով հայցային վաղեմությունն առհասարակ կիրառելի չէ:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ հայցվորները զրկվել են սեփականության իրավունքից, քանի որ գործկոմի որոշման հիման վրա որևէ բնակարան վերջիններիս չի հատկացվել, իսկ պատասխանողը հետամուտ չի եղել ապահովելու հայցվորներին անհրաժեշտ բնակարանով: Հայցվորները պետական ֆոնդի բնակարանների սեփականաշնորհմանը

մյուսների հետ հավասար պայմաններով մասնակցելու իրենց իրավունքներն իրագործելուն ուղղված միջոցները գործող օրենսդրությամբ սահմանված կարգով արդեն իսկ ձեռնարկել են, որպիսի պարագայում հայցվորների խախտված սեփականության իրավունքը ենթակա է դատական կարգով վերականգնման: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը համաձայնել է Դատարանի այն դիրքորոշմանը, որ սեփականատիրոջ իրավունքի խախտումների վերացման վերաբերյալ պահանջներով հայցային վաղեմությունն առհասարակ կիրառելի չէ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքները, որ նախ՝ սույն գործով հայցվորները երբևէ գործկոմի որոշմամբ իրենց հատկացված բնակարանի սեփականատեր կամ այլ տիրապետող չեն հանդիսացել, և երկրորդ՝ նրանց պահանջը վերաբերում է տիրապետումից զրկելու հետ կապված իրավունքի (գույքային իրավունքի) խախտման վերացմանը, հետևաբար նման պահանջի նկատմամբ հայցային վաղեմությունը կիրառելի է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված այն փաստարկը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի է սույն գործի նկատմամբ, հերքվում է վերոնշյալ պատճառաբանություններով:

Ինչ վերաբերում է նյութական իրավունքի այլ նորմերի խախտումների հետ կապված վճռաբեկ բողոք բերած անձի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը հայցային վաղեմության հարցը լուծված չլինելու պայմաններում դրանց անհրաժեշտ չի համարում անդրադառնալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար, որպիսի քննության ընթացքում անհրաժեշտ է պարզել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը և որոշել կիրառելի ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1240/02/12
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ի. Վարդանյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1240/02/12
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|----------------------------------|-----------------|
| <i>նախագահությամբ</i> | Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ |
| <i>մասնակցությամբ դատավորներ</i> | Մ. ԴԻՄԵՅԱՆԻ |
| | Վ. ԱԲԵԼՅԱՆԻ |
| | Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ |
| | Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ |
| | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ |
| | Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ |
| | Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ |
| | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| | Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ |

2014 թվականի մայիսի 08-ին դռնբաց դատական նիստում, քննելով Տատյանա Սաֆոնովայի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լեոնիդ Դավթյանի, Ալլա Դուրյանի ընդդեմ Տատյանա Սաֆոնովայի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լեոնիդ Դավթյանը, Ալլա Դուրյանը պահանջել են անվավեր ճանաչել Վալենտինա, Հովհաննես, Մարիամ, Հակոբ Քալաքյանների և Տատյանա Սաֆոնովայի միջև 13.10.2006 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի թիվ 5935 պայմանագիրը և որպես պայմանագրի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել նաև գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003-4-87 մատյանի 000093 համարի տակ 17.10.2006 թվականին Տատյանա Սաֆոնովայի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 07.06.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

27.09.2013 թվականի որոշմամբ Լեոնիդ Դավթյանի և Ալլա Դուրյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 07.06.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տատյանա Սաֆոնովան:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Լեոնիդ Դավթյանը և Ալլա Դուրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, 344-րդ հոդվածի 4-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2րդ կետը, 333-րդ հոդվածի 1-ին կետը, 335-րդ հոդվածի 2-րդ կետը, 337-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անհիմն կերպով հաստատված համարելով, որ հայցի առարկան, ըստ էության, ուղղված է հայցվորների սեփականության իրավունքի պաշտպանությանը, իսկ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը հանդես է գալիս որպես տիրապետումից զրկելու հետ չզուգորդված խախտումը վերացնելու միջոց, բավարարել է վերաքննիչ բողոքը՝ բեկանելով Դատարանի 07.06.2013 թվականի վճիռը և գործն ուղարկելով նոր քննության: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումն առ այն, որ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը հանդես է գալիս որպես տիրապետումից զրկելու հետ չզուգորդված խախտումը վերացնելու միջոց, չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսդրությունից և խեղաթյուրում է հայցային վաղեմության ինստիտուտի էությունն ու բովանդակությունը:

Բացի այդ, սույն գործով հայցվորները հայցադիմումում իրենց սեփականության իրավունքի խախտման մասին որևէ փաստ չեն վկայակոչել, այլ հայցային վաղեմության կիրառումը շրջանցելու նպատակով ուղղակի մատնանշել են, որ Վալենտինա Քալաջյանի և պատասխանող Տատյանա Սաֆոնովայի միջև 13.10.2006 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի թիվ 5935 պայմանագիրը խախտում է իրենց սեփականության իրավունքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ օրենսդիրը սահմանել է բացառություն վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքների կիրառման պահանջով այն հայցերի դեպքում, որոնք ուղղված են սեփականության իրավունքի՝ տիրապետումից զրկելու հետ չզուգորդված խախտումը վերացնելուն, սակայն չի պարզել՝ արդյոք առկա է հայցվորների սեփականության իրավունքի որևէ խախտում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.09.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 07.06.2013 թվականի վճիռն կամ կայացնել նոր դատական ակտ:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Բողոքաբերը գտել է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի և 344-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի լինելու վերաբերյալ փաստը հայցվորը պարտավոր էր վկայակոչել դատարան ներկայացրած սկզբնական հայցադիմումում, այլ ոչ նախնական դատական նիստի ժամանակ: Մինչդեռ հայցվորն իր դատավարական իրավունքները բարելադրոն է իրականացրել, իսկ բողոքաբերի փաստարկը գուրկ է իրավական որևէ հիմնավորումից և չի կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի

որոշումը բեկանելու համար:

Բացի այդ, Դատարանը, հայցային վաղեմության ժամկետները լրացած լինելու հիմքով մերժելով հայցը, թույլ է տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Իսկ Վերաքննիչ դատարանը, չանդրադատնալով վճռի դեմ բերված բողոքի մյուս հիմքերին և հաշվի առնելով այն, որ Դատարանը չի իրականացրել գործի ըստ էության քննություն, գտել է, որ քննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու նպատակով գործով անհրաժեշտ է իրականացնել նոր քննություն ամբողջ ծավալով, ուստի վճիռը բեկանել է: Հետևաբար, վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 04.08.2005 թվականին տրված սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1979382 վկայականի համաձայն՝ Երևանի Փափագյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի 41,2քմ մակերեսով բնակելի տան և 146,54քմ մակերեսով հողամասի նկատմամբ գրանցված է Վալենտինա, Հովհաննես, Մարիամ, Հակոբ Քալաջյանների բաժնային սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 59-60)։

2) Վալենտինա, Հովհաննես, Մարիամ, Հակոբ Քալաջյանների, որոնց անունից 24.05.2005 թվականի լիազորագրի հիման վրա հանդես է եկել Վալենտինա Քալաջյանը (վաճառող), և Տատյանա Սաֆոնովայի (գնորդ) միջև նոտարական վավերացմամբ 13.10.2006 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ վաճառողները վաճառել են, իսկ գնորդը ձեռք է բերել Երևանի Փափագյան 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի բնակելի տունը՝ 41,2քմ մակերեսով, և 0,014654հա մակերեսով հողամասը: 17.10.2006 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2157414 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Փափագյան 2-րդ նրբանցքի թիվ 62 բնակելի տան նկատմամբ Տատյանա Սաֆոնովայի անվամբ կատարվել է սեփականության իրավունքի պետական գրանցում (հատոր 1-ին, գ.թ. 51-52, 53)։

3) Ալլա Դուրյանը և Լեոնիդ Դավթյանը 29.04.2008 թվականին հակընդդեմ հայց են ներկայացրել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ հակընդդեմ հայցով պատասխանող Տատյանա Սաֆոնովայի՝ Փափագյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62/2 հասցեի տան վերաբերյալ 17.10.2006 թվականին տրված թիվ 2157414 սեփականության իրավունքի վկայագրում հողամասի հատակագծի 5, 6, 7 կետերում նշված ուղիղ հատվածը, որը սահմանակից է հակընդդեմ հայցվորների հողամասին, անվավեր ճանաչելու և այդ սույն հատվածն ըստ հակընդդեմ հայցվորներին 21.10.2005 թվականին տրված թիվ 2111835 սեփականության իրավունքի վկայագրի հողամասի հատակագծում նշված 2-3, 4-5, 5-6 աստիճանաձև գծագրի երկու հասցեների համար վավեր և նույնական ճանաչելու պահանջի մասին (հատոր 1-ին, գ.թ. 51-52, 56-57)։

4) Սույն գործով Տատյանա Սաֆոնովան Դատարան միջնորդություն է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու մասին (հատոր 2-րդ, գ.թ. 15-18)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը թխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած

իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է համարվել որպես տիրապետումից զրկելու հետ չզուգորդված խախտումը վերացնելու պահանջ, որի նկատմամբ հայցային վաղեմությունը չի տարածվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, եթե գործարքը կնքվել է բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, դրա դադարման օրվանից կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Վկայակոչված իրավադրույթից հետևում է, որ օրենսդիրը վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու համար սահմանել է կրճատ ժամկետ՝ մեկ տարի: Ընդ որում, պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ հիմքով է ներկայացվել վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը, հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է բռնության կամ սպառնալիքի ազդեցության դադարման կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող այլ հանգամանքների մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Մույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Սույն գործով Դատարանը, արձանագրելով, որ հայցվորները դեռևս 29.04.2008 թվականին իմացել են գործարքն անվավեր ճանաչելու համար ենթադրյալ հիմք ծառայող հանգամանքների մասին, սակայն դատարան են դիմել 03.07.2012 թվականին, հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռի բեկանման հիմքում դրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի և 344-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները և արձանագրել է, որ հայցի առարկան 13.10.2006 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի թիվ 5935 պայմանագիրն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003-4-87 մատյանի 000093 համարի տակ 17.10.2006 թվականին Տատյանա Սաֆոնովայի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներն են: Մշված պահանջների և տվյալ գործի լուծման համար նշա-

նակություն ունեցող փաստերի բովանդակությունից հետևում է, որ հայցի առարկան, ըստ էության, ուղղված է հայցվորների սեփականության իրավունքի պաշտպանությանը, իսկ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը հանդես է գալիս որպես տիրապետումից զրկելու հետ չզուգորդված խախտումը վերացնելու միջոց: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ «այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի՝ տիրապետումից զրկելու հետ չզուգորդված խախտումը վերացնելու պահանջը ներկայացվում է վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու միջոցով, դրա նկատմամբ կիրառելի չէ գործարքի անվավերության և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների համար սահմանված հայցային վաղեմության ընդհանուր կանոնը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի հատուկ կարգավորումը»:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված պահանջի բովանդակային բացահայտմանը:

Մանավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ (հոդված 277):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Վերոնշյալ իրավանդություններից հետևում է, որ հայցային վաղեմությունը չի տարածվում նեգատոր հայցերով ներկայացվող պահանջների նկատմամբ: Նեգատոր հայցը գույքի սեփականատիրոջ կողմից արտապայմանագրային հարաբերություններից բխող սեփականության իրավունքի պաշտպանության միջոց է, որն ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման կամ տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Նեգատոր հայցը կարող է հարուցվել այն դեպքում, երբ պատասխանողի գործողություններն ապօրինի են, իսկ այն դեպքում, երբ պատասխանողի գործողություններն ունեն օրինական հիմք, սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է այլ եղանակով, որպիսին կարող է հանդիսանալ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու հայցը: Այլ կերպ ասած՝ նեգատոր հայցը և վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու հայցը սեփականության իրավունքի պաշտպանության ինքնուրույն միջոցներ են, ընդ որում, եթե առաջինը հանդիսանում է սեփականության իրավունքի պաշտպանության ուղղակի միջոց, անմիջականորեն բխում է այդ իրավունքից, սպա երկրորդը սեփականության իրավունքի պաշտպանության անմիջական եղանակ է, որը հիմնվում է ոչ թե անմիջականորեն սեփականության իրավունքի վրա, այլ բխում է քաղաքացիաիրավական այլ ինստիտուտներից, տվյալ պարագայում՝ գործարքի անվավերության ինստիտուտից: Վերոգրյալից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանության նշված միջոցներից յուրաքանչյուրն իր հիմքում ունի փաստերի առանձնահատուկ կազմ, ըստ այդմ՝ տարբեր իրավակարգավորում, հետևաբար դրանց նույնականացումն անօրյալատրելի է:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործով Լեոնիդ Դավթյանը և Ալլա Դուրյանը ներկայացրել են 13.10.2006 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի թիվ 5935 պայմանագիրն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետա-

կան գրանցման միասնական թիվ 01-003-4-87 մատյանի 000093 համարի տակ 17.10.2006 թվականին Տատյանա Սաֆոնովայի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջ: Ներկայացված պահանջի և դրա հիմքում ընկած փաստերի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորներն իրենց սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացրել են գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքները կիրառելու հայց հարուցելու միջոցով, որի նկատմամբ հայցային վաղեմություն տարածվում է: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, նույնացնելով սեփականության իրավունքի պաշտպանության վերոնշյալ եղանակները, մասնավորապես՝ գործարքն անվավեր ճանաչելու պահանջը դիտարկելով որպես նեգատոր հայց՝ սխալ հետևության է հանգել սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառելիության վերաբերյալ, քանի որ նշված դրույթը բացառապես վերաբերում է նեգատոր հայցին, որպիսին սույն գործով ներկայացված չէ:

Վերոնշյալ վերլուծությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ սույն գործով ներկայացված հայցն իր էությանը նեգատոր հայց չէ, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով հայցային վաղեմություն չի կիրառվում միայն նեգատոր հայցերի դեպքում, գտնում է, որ սույն գործով ներկայացված գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի նկատմամբ պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հայցային վաղեմության ժամկետը, որպիսի պարագայում հիմնավոր է համարում նշված հիմքով հայցը մերժելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը՝ նկատի ունենալով այն, որ սույն գործով հայցային վաղեմության կիրառմամբ հայցի մերժումը Դատարանի կողմից իրավաչափ է:

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2013 թվականի վճիռն:

2. Լեռնիդ Դավթյանից և Ալլա Դուրյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.07.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա գումար:

Լեռնիդ Դավթյանից և Ալլա Դուրյանից հոգուտ Տառյանա Սաֆրոնովայի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0704/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0704/02/11

Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Տ. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երվանդ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.09.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ
Ղասեմ Աբդոլահ Նեժադի հայցի ընդդեմ Աշոտ Հարությունյանի, Գարիկ Խաչատրյանի և
Երվանդ Գրիգորյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ղասեմ Աբդոլահ Նեժադը պահանջել է Աշոտ
Հարությունյանից, Երվանդ Գրիգորյանից և Գարիկ Խաչատրյանից համապարտության
կարգով բռնագանձել 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ պարտքը և 30.000 ՀՀ
դրամ վճարված պետական տուրքը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրա-
վասության դատարանի 27.12.2011 թվականի վճռով վճռվել է. «Աշոտ Հարությունյանից
և Երվանդ Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ Ղասեմ Աբդոլահ
Նեժադի բռնագանձել 10.000 (տաս հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես
փոխառությամբ տրված գումար, ինչպես նաև 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես
հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար: Հայցը՝ Գարիկ
Խաչատրյանի մասով, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.06.2012 թվականի որոշմամբ

Երվանդ Գրիգորյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.12.2011 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիայան) (այսուհետ՝ Դատարան) 02.05.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Երվանդ Գրիգորյանից հոգուտ Ղասեմ Աբդոլահ Նեժադի բռնագանձել 10.000 (տաս հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Հայցը՝ Աշոտ Հարությունյանի և Գարիկ Խաչատրյանի մասով, մերժել: Երվանդ Գրիգորյանից հոգուտ Ղասեմ Աբդոլահ Նեժադի բռնագանձել 30.000 (երեսուն հազար) դրամ՝ որպես նախապես մասնակի վճարված պետական տուրքի գումար»:

Երվանդ Գրիգորյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 02.05.2013 թվականի վճռի՝ Երվանդ Գրիգորյանից հոգուտ Ղասեմ Աբդոլահ Նեժադի գումար բռնագանձելու մասի դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.09.2013 թվականի որոշմամբ Երվանդ Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.05.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երվանդ Գրիգորյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 406-րդ, 424-րդ, 877-րդ, 878-րդ, 880-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 54-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Երվանդ Գրիգորյանի ստացականի պատճենը, որով վերջինս պարտավորվել է Աշոտ Հարությունյանի կողմից 28.11.2010 թվականին Ղասեմ Աբդոլահ Նեժադից վերցրած 10.000 ԱՄՆ դոլարը կամ ապրանքը մինչև 04.03.2011 թվականը վերադարձնել: Երվանդ Գրիգորյանի կողմից տրված ստացականը ստորագրվել է նաև գործընկերներ Աշոտ Հարությունյանի, Գարիկ Խաչատրյանի, Ղասեմ Աբդոլահ Նեժադի և «Ա. Խաչատրյանի և Հասեյն Մուրադի» կողմից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ նշված ստացականի քնօրինակը չի ներկայացվել այն պատռված լինելու պատճառաբանությամբ, ինչը Ղասեմ Աբդոլահ Նեժադի հանդեպ Երվանդ Գրիգորյանի ունեցած պարտավորության դադարման հիմք է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.09.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Աշոտ Հարությունյանի կողմից 13.09.2011 թվականին դատարան ներկայացված

պատասխանին կից առանց թվագրման «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի պատճենի համաձայն՝ «Ես՝ Երվանդ Գրիգորյանս, պարտավորվում եմ Աշոտ Հարությունյանի կողմից նոյեմբերի 28-ին 2010 թվականի Քյախիմ Աբդուլա Նաջաբից վերցրած 10.000\$ կամ ապրանքը մինչև 2011 թվականի մարտի 04-ը կվերադարձնենք», այն ստորագրված է Ե. Գրիգորյանի, ներկաներ Ա. Հարությունյանի, Ա. Խաչատրյանի, Գ. Խաչատրյանի, Ք.Ա. Նաջաբի և Հուսեյն Մարադի կողմից (հատոր 1-ին, գ.թ. 51)։

2) 23.04.2012 թվականին Վերաքննիչ դատարանին հասցեագրված դիմումով Երվանդ Գրիգորյանի ներկայացուցիչը հայտնել է, որ «գործում առկա ստացականի (որը հիմք է հանդիսացել Ե. Գրիգորյանից գումար բռնագանձելու համար) բնօրինակը մինչև գործով իմ ներգրավվելը դատարանին չի ներկայացվել և պատճենի հետ չի համեմատվել», «այդ ստացականի բնօրինակն ընդհանրապես գոյություն չունի, քանի որ այն հայցվորի կողմից պատռվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը Ե. Գրիգորյանից որևէ պահանջ չի ունեցել», «սույն գործի արդարացի և օրինական լուծման համար ստացականի բնօրինակի առկայություն ունենալու կամ չունենալու հարցն ամենաառանցքային հարցն է» (հատոր 2-րդ, գ.թ. 48)։

3) 26.03.2013 թվականին Դատարանին հասցեագրված հայցադիմումի պատասխանով Երվանդ Գրիգորյանի ներկայացուցիչը հայտնել է, որ «Ինչ վերաբերում է գործով որպես ապացույց ներկայացված ստացականի պատճենին, որը գրվել և ստորագրվել է Երվանդ Գրիգորյանի կողմից, ինչպես նաև Ա. Հարությունյանի, Ա. Խաչատրյանի, Գ. Խաչատրյանի, Ք.Ա. Նաջաբի և Հուսեյն Մարադի կողմից, ապա այն չի կարող դիտվել որպես թույլատրելի ապացույց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն», «բնօրինակն այդպես էլ չի ներկայացվել, դեռ ավելին, բնօրինակի վրա պարսկերեն լեզվով ինչ որ գրառումներ են արվել, այստեղից հետևում է, որ բնօրինակը գտնվել է հայցվորի մոտ», «քանի որ հայցվորը Երվանդ Գրիգորյանից որևէ պահանջ չի ունեցել, պատռել է բնօրինակը» (հատոր 3-րդ, գ.թ. 86-87)։

4) Առանց թվագրման «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի պատճենի բնօրինակը սույն գործի քննության ընթացքում չի ներկայացվել և չի հետազոտվել, ավելին, Երվանդ Գրիգորյանը չի վիճարկել այն իր կողմից կազմված, ստորագրված լինելու փաստը կամ դրա բովանդակությունը, սակայն վկայակոչել է ստացականի բնօրինակը հայցվորի մոտ գտնվելու և պարտավորությունն իր իսկ կողմից կատարված լինելու հիմքով այն վերջինիս կողմից ոչնչացնելու (պատռելու) փաստերը (հիմք՝ դատական նիստերի արձանագրությունների կրիչները)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությանից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար։

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ՝

- կատարման հիմքով պարտավորության դադարման փաստն ապացուցելու առանձնահատկություններին.

- փաստաթղթի բնօրինակը՝ որպես գրավոր ապացույց, դատարան ներկայացնելու պարտադիր հիմքերին։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտա-

վորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Մույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին: Եթե պարտապանն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել:

Վճարել դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությանը՝ դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ օրենսդիրը պարտատիրոջ վրա պարտականություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին նրան ստացական տալ, իսկ պարտապանի կողմից պարտատիրոջն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ տրված լինելու դեպքում՝ պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշել իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Ընդ որում, այլ բան ապացուցված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը (*յո՛ւ էս, Ֆերդինանսը Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 28.06.2012 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումից հետևում է, որ պարտավորության կատարման փաստն ապացուցված չլինելու պարագայում քանի դեռ պարտքային փաստաթղթի բնօրինակը գտնվում է պարտատիրոջ մոտ, գործում է պարտավորությունը կատարված չլինելու կանխավարկածը:

Այսպիսով, պայմանավորված այն հանգամանքով, թե պարտավորության որ կողմն է (պարտատերը կամ պարտապանը) դատարան ներկայացնում պարտքային փաստաթղթի բնօրինակը, այն մի դեպքում կարող է հաստատել պարտավորության առկայության, մեկ այլ դեպքում՝ պարտավորության դադարման փաստը:

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճարել դատարանը հարկ է համարում նշել,

որ պարտապանը որպես պարտավորության կատարման փաստը հաստատող ուղղակի ապացույց դատարան կարող է ներկայացնել՝

- պարտքային փաստաթղթի բնօրինակը կամ

- պարտատիրոջ կողմից տրված ստացականը՝ կատարումն ընդունելու մասին մակագրությամբ:

Օրենսդիրը, սահմանելով պարտավորության դադարման փաստը հաստատող ուղղակի ապացույցների շրջանակը, միաժամանակ չի բացառել անուղղակի ապացույցներով նման փաստի հաստատման հնարավորությունը:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ և քննարկել այն դեպքերը, երբ պարտապանն անուղղակի ապացույցներով ևս, իսկ որոշ դեպքերում նաև՝ գործում ուղղակի ապացույցի բացակայությամբ կարող է հիմնավորել պարտավորության կատարման փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պարտատիրոջ կողմից ստացական տալուց, պարտքային փաստաթուղթը վերադարձնելուց կամ այն վերադարձնելու անհնարինության մասին ստացականում նշելուց հրաժարվելու դեպքերում, պարտապանն իրավունք ունի կասեցնել կատարումը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ որոշ դեպքերում պարտատերը, ընդունելով պատշաճ կատարումը, կարող է դրսևորել անբարեխիղճ վարքագիծ՝ հրաժարվելով վերադարձնել պարտքային փաստաթուղթը կամ այն վերադարձնելու անհնարինության մասին նշում կատարել ստացականում: Նման իրավիճակում առաջանում է պատշաճ կատարման փաստը գործնականում ապացուցելու հնարավորության խնդիր, որը հարկ է քննարկել անձի արդար դատաքննության իրավունքի համատեքստում: Արդար դատաքննության իրավունքը ենթադրում է դատավարության կողմերի իրավահավասարություն և մրցակցություն, ինչն էլ իր հերթին՝ ապացուցման գործընթացին մասնակցելու իրական երաշխիքների առկայություն և դրանց իրացման հնարավորություն: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պարտավորության կատարման փաստը միայն ուղղակի ապացույցներով հաստատելու պահանջը նմանատիպ իրավիճակներում պարտապանին կարող է զրկել իր առարկությունները հիմնավորող այլ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից՝ սահմանափակելով մրցակցության և իրավահավասարության պայմաններում վերջինիս գործի արդար դատաքննության իրավունքը:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատական պրակտիկայում, այդ թվում նաև սույն գործով արձանագրված այն դեպքերին, երբ պարտապանը վկայակոչում է պարտավորության կատարման փաստը, սակայն պարտքային փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու անհնարինությունը պատճառաբանում է այն պարտավորության կատարման հիմքով ոչնչացված լինելու հանգամանքով: Նման դեպքերում դատարանները պարտավոր են ապացուցման գործընթացը կազմակերպել և ապացուցման բեռը բաշխել՝ հավասարակշռելով կողմերի շահերը և ապացուցման գործընթացին մասնակցելու իրական հնարավորությունները: Մասնավորապես՝ քննարկվող դեպքում դատարանները պետք է պարտատիրոջը պարտավորեցնեն պարտավորության առկայության փաստը հիմնավորել բացառապես պարտքային փաստաթղթի բնօրինակով, իսկ դրա անհնարինության դեպքում կրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված բացասական հետևանքները: Հետևաբար պարտքային փաստաթղթի բնօրինակի բացակայությունը, ելնելով գործի հանգամանքների առանձնահատկություններից, ևս կարող է վկայել պարտավորության դադարման փաստի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի

համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ փաստաթղթերի բնօրինակները ներկայացվում են այն դեպքում, եթե գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դատարանի պահանջով:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավոր ապացույցները դատարան կարող են ներկայացվել կամ բնօրինակով, կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Մինևույն ժամանակ օրենսդիրը վերոնշյալ ընդհանուր կանոնից սահմանել է հետևյալ բացառությունները՝

ա) փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն բոլոր այն դեպքերում, երբ գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթերով;

բ) անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է պահանջել ներկայացնելու փաստաթղթերի բնօրինակները: Նման անհրաժեշտություն կարող է, մասնավորապես առաջանալ, երբ գործով ներկայացված միևնույն փաստաթղթի պատճենները տարբերվում են իրենց բովանդակությամբ, և դատարանը չի կարող պարզել գրավոր ապացույցի իրական բովանդակությունն առանց դրա բնօրինակը հետազոտելու: Այդպիսի անհրաժեշտություն կարող է ծագել նաև պատճենի անորակության, դրա իսկության մեջ համոզվելու անհրաժեշտության և այլ դեպքերում:

Սույն գործով Դատարանը Երվանդ Գրիգորյանի մասով հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ Երվանդ Գրիգորյանն իր կողմից տրված պարտավորագրով խախտել է Ղասեմ Աբդոլլահ Նեժադի հանդեպ ստանձնած պարտավորությունը, պատշաճ չի կատարել այն, մասնավորապես՝ մինչև 04.03.2011 թվականը Ղասեմ Աբդոլլահ Նեժադին չի վերադարձրել 10.000 ԱՄՆ դոլարը կամ Աշոտ Հարությունյանի և Ղասեմ Աբդոլլահ Նեժադի միջև կնքված պայմանագրի շրջանակներում նախատեսված գառները, հետևաբար 10.000 ԱՄՆ դոլարը Երվանդ Գրիգորյանից ենթակա է բռնագանձման հոգուտ Ղասեմ Աբդոլլահ Նեժադի: Միաժամանակ արձանագրելով, որ կողմերը չեն վիճարկում Երվանդ Գրիգորյանի կողմից գրված սույն քաղաքացիական գործում առկա ստացականի պատճենը, Դատարանն ինչպես հայցվորին, այնպես էլ պատասխանողին ազատել է ստացականի բնօրինակը ներկայացնելու պարտականությունից:

Վերաքննիչ դատարանը, Երվանդ Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի 02.05.2013 թվականի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում Երվանդ Գրիգորյանը չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որով կհաստատվեր ստացականով ստանձնած պարտավորության կատարումը: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածը, գտել է, որ պարտապանի կողմից պարտավորությունը պատշաճ կատարմամբ դադարելու փաստը կարող է հավաստվել գրավոր ապացույցով, ինչը քննարկվող պարագայում քաղաքացիական գործում բացակայում է:

Վճռաբանիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ղասեմ Աբդոլլահ Նեժադը, հիմք ընդունելով Աշոտ Հարությունյանի կողմից 13.09.2011 թվականին ներկայացված պատասխանին կից առանց թվագրման Երվանդ Գրիգորյանի «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի պատճենը, պահանջել է Աշոտ Հարությունյանից, Երվանդ Գրիգորյանից և Գարիկ Խաչատրյանից համապարտության կարգով բռնագանձել 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Գործի քննության ընթացքում Երվանդ Գրիգորյանը պահանջել է հայցվորից ներկայացնել «Ստացական»

վերտառությամբ փաստաթղթի բնօրինակը՝ պատճառաբանելով, որ այն այլևս գոյություն չունի, քանի որ հայցվորը, ընդունելով իր կողմից պարտավորության կատարումը, ոչնչացրել է այն, ինչը պարտավորության դադարման հիմք է:

Վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում համադրելով և գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործով առկա է գրավոր ապացույցի, այն է՝ «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի բնօրինակը պահանջելու անհրաժեշտություն: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով. հայցվորը, հայցի փաստական հիմքում դնելով պատասխանող Երվանդ Գրիգորյանի կողմից պարտավորության չկատարման փաստը, հիմնվելով «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի պատճենի վրա, դատարանից պահանջել է վերջինիցս բռնագանձել պարտքի գումարը: Պատասխանող Երվանդ Գրիգորյանը, պարտավորության կատարման հիմքով առարկելով հայցի դեմ, վկայակոչել է գործում ստացականի բնօրինակի բացակայության փաստը, որը հիմնավորում է վիճելի պարտավորության դադարումը: Այսինքն՝ պատասխանող Երվանդ Գրիգորյանը ըստ էության, վիճարկել է պարտավորության առկայությունը, որն ապացուցելու պարտականությունը կրում է հայցվորը: Վերջինս նշված փաստը կարող է ապացուցել՝ ներկայացնելով ստացականի բնօրինակը կամ հիմնավորելով դրա ներկայացման անհնարինությունը՝ այդ կերպ ժխտելով նաև կատարման հիմքով բնօրինակը ոչնչացված լինելու վերաբերյալ պատասխանողի փաստարկները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքներն ուղղակիորեն վկայել են գրավոր ապացույցի բնօրինակը պահանջելու անհրաժեշտության մասին, որը, սակայն, անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գրավոր ապացույցի բնօրինակի ներկայացման և դրա հետազոտման անհրաժեշտությունը սույն գործով պայմանավորված է այդ ապացույցի ներկայացված պատճենների արժանահավատությունը գնահատելու հանգամանքով: Մասնավորապես՝ սույն գործով ներկայացված «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի պատճենների հետազոտությունից ակնհայտ է, որ վերջիններս ունեն բովանդակային տարբերություններ: Մասնավորապես՝ պատճեններից մեկը բովանդակում է պարսկերեն նախադասություններ: Պատճենների միջև առկա հակասությունը գործի քննության ընթացքում բազմիցս վկայակոչվել է պատասխանող Երվանդ Գրիգորյանի կողմից, սակայն այս հանգամանքը ևս պատշաճ գնահատման չի արժանացել ստորադաս դատարանների կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանը գործի լրիվ, բազմակողմանի քննություն չի իրականացրել, ամբողջությամբ չի պարզել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, ճիշտ չի բաշխել ապացուցման բեռը, գրավոր ապացույցի՝ «Ստացական» վերտառության փաստաթղթի բնօրինակը պահանջելու անհրաժեշտության պարագայում չի պահանջել այն, որպիսի պարագայում չէր կարող իրավաչափ հետևության հանգել պահանջի հիմնավորվածության վերաբերյալ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, ընդ որում, գործի նոր քննությունն անհրաժեշտ է իրականացնել այն ծավալով, որով Դատարանի վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ դատարանում, որպիսի հիմքով նաև Վճռաբեկ դատարանում, այն է՝ Ղասեմ Աբդոլահ Նեժադի հայցի ընդդեմ Երվանդ Գրիգորյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասով:

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.09.2013 թվականի որոշումը և գործն ըստ հայցի Ղասեմ Աբդոլահ Նեժադի ընդդեմ Երվանդ Գրիգորյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասով ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.11.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0700/02/12
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0700/02/12

Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան

Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վահան և Սամվել Ավետիսյանների, Մարինե Նազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) հայցի ընդդեմ Մարինե Նազարյանի, Վահան և Սամվել Ավետիսյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ինչպես նաև Մարինե Նազարյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Բանկի, երրորդ անձինք Վահան և Սամվել Ավետիսյանների՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Վահան և Սամվել Ավետիսյաններից, Մարինե Նազարյանից համապարտությամբ բռնագանձել 27.921,41 ԱՄՆ դոլար և վճարված պետական տուրքը, ինչպես նաև, սկսած 16.06.2012 թվականից մինչև վարկի մնացորդի գումարը՝ 26.976,04 ԱՄՆ դոլարը, վերադարձնելու օրը հաշվարկել և բռնագանձել 10.02.2010 թվականի թիվ 229436 պայմանագրի 1.1 կետով սահմանված տարեկան 14% տոկոսադրույքն ու 3.2 և 3.3 կետերով նախատեսված տույժերը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մարինե Նազարյանը պահանջել է անվավեր ճանաչել 10.02.2010 թվականին կնքված թիվ 229436 անշարժ գույքի վարկավորման և 05.02.2010 թվականին կնքված թիվ N1C146665 անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագրերը:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 02.04.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.08.2013 թվականի որոշմամբ Վահան և Սամվել Ավետիսյանների, Մարինե Նազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.04.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Վահան և Սամվել Ավետիսյանները, Մարինե Նազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետը, 377-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 415-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերը և 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ 10.02.2010 թվականին Բանկի և Մարինե Նազարյանի միջև կնքված բանկային հաշիվներով և սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին թիվ 324900 պայմանագիրն ու 10.02.2010 թվականին Բանկի և Սամվել Ավետիսյանի միջև կնքված բանկային հաշիվներով և սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին թիվ 324901 պայմանագիրը, որոնցով հիմնավորվում է, որ Վահան Ավետիսյանի՝ Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորության նկատմամբ Մարինե Նազարյանը և Սամվել Ավետիսյանը նշված երաշխավորության պայմանագրերով ստանձնել են սուբսիդիար, այլ ոչ թե համապարտ պատասխանատվություն: Ավելին, նշված երաշխավորության պայմանագրերով Բանկն իրավունք է ձեռք բերում դատական կարգով բռնագանձում տարածել երաշխավորներին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա, եթե երաշխավորները հրաժարվում են կամավոր կատարել պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Բանկը նշված երաշխավորության պայմանագրերով սահմանված կարգով երաշխավորներին չի տեղեկացրել պարտապան Վահան Ավետիսյանի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետը և 219-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը, կայացնելով դրամական միջոցներ գանձելու վերաբերյալ հայցը բավարարելու մասին վճիռ, եզրափակիչ մասում չնայած սահմանել է բռնագանձվող գումարի ընդհանուր չափը, սակայն առանձին չի նշել հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի)

չափերը, ինչպես նաև հաշվեգրվող տոկոսների չափը, ինչը վկայում է, որ դատական ակտը գուրկ է որոշակիությունից:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁹-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Դատարանը գործը դատաքննության նշանակելու մասին որոշում չի կայացրել և այն չի ուղարկել կողմերին:

4) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Բանկը պատրաստակամություն է հայտնել քննարկելու հաշտության համաձայնություն կնքելու առաջարկը, սակայն Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված փաստը, կողմերին գրկել է գործը հաշտության համաձայնությամբ ավարտելու իրենց իրավունքից:

5) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, 219-րդ հոդվածի 1-ին կետը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Մարինե Նազարյանը հակընդդեմ հայցով պահանջել է անվավեր ճանաչել 10.02.2010 թվականին կնքված թիվ 229436 անշարժ գույքի վարկավորման և 05.02.2010 թվականին կնքված թիվ N1C146665 անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագրերը, մինչդեռ Դատարանը, դուրս գալով հայցի շրջանակներից, վճռել է մերժել Մարինե Նազարյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Բանկի, երրորդ անձինք Վահան, Սամվել Ավետիսյանների՝ պատճառված վնասը հատուցելու և պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

6) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործում բացակայում է ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության 22.11.2012 թվականի դատական նիստի ձայնային արձանագրումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 02.08.2013 թվականի որոշումը «սկզբնական հայցի մասով և հակընդդեմ հայցի մերժման մասով» և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 05.02.2010 թվականին Բանկի, Ռ-իմա Հովնանյանի, Վահան Ավետիսյանի և Մարինե Նազարյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի թիվ N1C146665 պայմանագրով Ռ-իմա Հովնանյանը սեփականության իրավունքով իրեն

պատկանող՝ Երևանի Մայիսի 9-ի փողոցի թիվ 76 հասցեում գտնվող 183,5քմ մակերեսով անշարժ գույքը և 0,02811հա մակերեսով հողամասը 23.000.000 ՀՀ դրամով վաճառել է Վահան Ավետիսյանին և Մարինե Նազարյանին: Վերջիններս, ի ապահովումն Բանկի հանդեպ ունեցած թիվ 229436 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման, գրավադրել են նշված անշարժ գույքը (հատոր 1-ին, գ.թ. 13-15):

2) 10.02.2010 թվականին Բանկի և Վահան Ավետիսյանի միջև կնքված անշարժ գույքի գրավադրմամբ վարկավորման թիվ 229436 պայմանագրով (այսուհետ՝ Հիմնական պարտավորություն) Բանկը Վահան Ավետիսյանին տրամադրել է 30.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ տարեկան 14,86% տոկոսադրույքով՝ մինչև 10.02.2020 թվականը վերադարձնելու պայմանով: Նշված պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ վարկառուին տրամադրված վարկի, դրա օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսագումարների և նախատեսված տուժանքների վերադարձնելիությունն ապահովված է Երևանի Մայիսի 9-ի փողոցի թիվ 76 տան գրավով (թիվ N1C146665 պայմանագիր), Մարինե Նազարյանի երաշխավորությամբ (թիվ 324900 երաշխավորության պայմանագիր) և Սամվել Ավետիսյանի երաշխավորությամբ (թիվ 324901 երաշխավորության պայմանագիր) (հատոր 1-ին, գ.թ. 7-12):

3) 10.02.2010 թվականին Բանկի և Մարինե Նազարյանի միջև կնքված բանկային հաշիվներով և սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին թիվ 324900 պայմանագրով Մարինե Նազարյանը պարտավորվել է իր բանկային հաշիվներին առկա դրամական միջոցներով, ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (շարժական և անշարժ) պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Բանկի և Վահան Ավետիսյանի միջև 10.02.2010 թվականին կնքված թիվ 229436 պայմանագրով վերջինիս կողմից ստանձնած պարտավորությունները (այն է՝ պարտավորության (վարկի) գումարը, հաշվեգրված տոկոսները և տուժանքը վճարելու պարտավորությունները) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ երաշխավորությունը տրվում է մինչև պարտապանի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով կատարելը: Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ պարտատերը՝ Բանկը, պարտավոր է պարտապանի՝ Վահան Ավետիսյանի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու մասին հայտնել երաշխավորին: Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավորվել է կատարել Հիմնական պարտավորությամբ Վահան Ավետիսյանի ստանձնած պարտավորությունները՝ վերջինիս կողմից այդ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու մասին Բանկի գրավոր կամ բանավոր հաղորդումը ստանալու պահից 5 բանկային օրվա ընթացքում: Պայմանագրի 2.6 կետի համաձայն՝ Բանկն իրավունք է ձեռք բերում դատական կարգով բռնագանձում տարածել երաշխավորին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա, եթե երաշխավորը հրաժարվում է կամավոր կատարել նույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները (հատոր 1-ին, գ.թ. 16):

4) 10.02.2010 թվականին Բանկի և Սամվել Ավետիսյանի միջև կնքված բանկային հաշիվներով և սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին թիվ 324901 պայմանագրով Սամվել Ավետիսյանը պարտավորվել է իր բանկային հաշիվներին առկա դրամական միջոցներով, ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (շարժական և անշարժ) պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Բանկի և Վահան Ավետիսյանի միջև 10.02.2010 թվականին կնքված թիվ 229436 պայմանագրով վերջինիս կողմից ստանձնած պարտավորությունները (այն է՝ պարտավորության (վարկի) գումարը, հաշվեգրված տոկոսները և տուժանքը վճարելու պարտավորությունները) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Պայմանագրի 1.2

կետի համաձայն՝ երաշխավորությունը տրվում է մինչև պարտապանի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով կատարելը: Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ պարտատերը՝ Բանկը, պարտավոր է պարտապանի՝ Վահան Ավետիսյանի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու մասին հայտնել երաշխավորին: Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավորվել է կատարել Հիմնական պարտավորությամբ Վահան Ավետիսյանի ստանձնած պարտավորությունները՝ վերջինիս կողմից այդ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու մասին Բանկի գրավոր կամ բանավոր հաղորդումը ստանալու պահից 5 բանկային օրվա ընթացքում: Պայմանագրի 2.6 կետի համաձայն՝ Բանկն իրավունք է ձեռք բերում դատական կարգով բռնագանձում տարածել երաշխավորի սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա, եթե երաշխավորը հրաժարվում է կամավոր կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները (հատոր 1-ին, գ.թ. 17):

5) Գործում առկա չէ Դատարանի 22.11.2013 թվականի դատական նիստի ձայնային արձանագրությունը (հատոր 1, գ.թ. 160):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությանից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական արակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) երաշխավորի մոտ համապարտ կամ սուբսիդիար պատասխանատվության ծագման հիմքերին և այդ պատասխանատվության ծավալին.

2) դրամական միջոցներ բռնագանձելու վերաբերյալ վճռի եզրափակիչ մասին ներկայացվող պահանջներին.

3) գործը դատաքննության նախապատրաստելիս գործը դատաքննության նշանակելու մասին որոշման կայացման անհրաժեշտությանը.

4) դատական ակտերի վերանայման փուլերում հաշտության համաձայնություն կնքելու առանձնահատկությանը.

5) գործը հարուցված հայցապահանջի շրջանակներում քննելու անհրաժեշտությանը.

6) քաղաքացիական գործում էլեկտրոնային կրիչի վրա դատական նիստի ձայնային արձանագրման բացակայության խնդրին:

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պարճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել երաշխավորությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով, իսկ 3-րդ կետի համաձայն՝ համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրն ամրագրել է երաշխավորի համապարտ պատասխանատվության կանխավարկածը, ինչը ենթադրում է, որ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի կատարման պահանջ ներկայացնել ինչպես պարտապանին և երաշխավորին միասին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Երաշխավորի սուբսիդիար պատասխանատվությունը կարող է նախատեսվել միայն օրենքով կամ պայմանագրով: Պայմանագրով երաշխավորի պատասխանատվությունը կրում է սուբսիդիար բնույթ, եթե այդ մասին ուղղակիորեն սահմանված է պայմանագրում կամ երաշխավորին պահանջի ներկայացման ընթացակարգի վերաբերյալ պայմանագրային դրույթների կարգավորումից հետևում է, որ այն այդպիսին է:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև պահանջներն այն անձին ներկայացնելը, ով օրենքին, այլ իրավական ակտերին կամ պարտավորության պայմաններին համապատասխան կրում է հիմնական պարտապանի պատասխանատվությանը լրացուցիչ պատասխանատվություն (սուբսիդիար պատասխանատվություն), պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին:

Նշված դրույթից հետևում է, որ պարտատերը սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած անձին պարտավորության կատարման պահանջ կարող է ներկայացնել միայն հիմնական պարտապանին այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո և միայն այն չափով, որ չափով պարտավորությունը չի կատարվել վերջինիս կողմից: Այսինքն՝ սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին պահանջը կարող է ներկայացվել, եթե

- հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ
- պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցի իրավունքը նյութական և

դատավարական իրավունքների ինստիտուտ է: Հայցի իրավունքի դատավարական կողմը ենթադրում է դատարան դիմելու իրավունքը, իսկ նյութափրավական կողմը՝ օրինական և հիմնավորված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված լինելու պարագայում պարտատիրոջ հայցի իրավունքը (դատավարական կողմը) ծագում է հիմնական պարտապանի կողմից պարտավորության կատարումից հրաժարվելուց կամ ողջամիտ ժամկետում ներկայացված պահանջին պատասխան չստանալուց հետո միայն, հետևաբար նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող գործերով վերոնշյալ հարցադրումների պարզաբանումը դատարանների կողմից կրում է պարտադիր բնույթ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված հարցադրումների պարզաբանումը պետք է իրականացվի երաշխավորության պայմանագրերի հետազոտման և պայմանագրային դրույթների համակողմանի վերլուծության և մեկնաբանության հիման վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև երաշխավորի պատասխանատվության ծավալին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով: Վերոգրյալից հետևում է, որ գործում է երաշխավորի լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով նաև երաշխավորության ինստիտուտի մի շարք իրավանորմների դիսպոզիտիվ կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում երաշխավորի պատասխանատվության բնույթը և ծավալը հնարավոր է պարզել՝ երաշխավորության պայմանագրի դրույթները վերլուծելով և գնահատելով գործող իրավակարգավորման և վերոնշյալ վերլուծությունների համատեքստում:

Սույն գործով Դատարանը, արձանագրելով, որ պատասխանողների կողմից թույլ է տրվել պարտավորության խախտում, հայցը բավարարել է՝ պատասխանողներից հօգուտ հայցվորի համապարտության կարգով բռնագանձելով 27.921,41 ԱՄՆ դոլար պարտքի գումարը, ինչպես նաև 233.434,20 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածը, 377-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, հիմնավոր է համարել Դատարանի այն եզրահանգումը, որ պատասխանող կողմը թույլ է տվել պարտավորության խախտում, որն էլ հանգեցրել է հայցվորի սեփականության իրավունքի խախտմանը, հետևաբար պատասխանող կողմը պարտավոր է հայցվորին վերադարձնել ոչ միայն նրան պատկանող գույքը՝ դրամը, այլև պարտավորության խախտման հետևանքով հայցվորի իրավունքի խախտման համար կատարված դատական ծախսերը, տոկոսագումարը, սույժի գումարը:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր

ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված տրմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին, ուստի սույն որոշմամբ այդ հարցին կրկին չի անդրադառնում (*տե՛ս, Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեհան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նույաբական գրասենյակի թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշման շրջանակներում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի մեկնաբանությանը, նաև արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տե՛ս, Շողիկ Ղարիբջանն ընդդեմ Թամարա Վարդանյանի թիվ 3-558(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները վիճելի փաստի, այն է՝ երաշխավորների պատասխանատվության բնույթի մասին եզրահանգման են եկել՝ լրիվ և բազմակողմանի չհետազոտելով գործում առկա ապացույցները և որևէ կերպ չհիմնավորելով նշված փաստի հաստատումը:

Մինչդեռ գործում առկա ապացույցների՝ 10.02.2010 թվականի թիվ 324900 և 10.02.2010 թվականի թիվ 324901 երաշխավորության պայմանագրերի համաձայն՝ Մարինե Նազարյանը և Սամվել Ավետիսյանը պարտավորվել են իրենց բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներով, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող ամբողջ գույքով (շարժական և անշարժ) պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Վահան Ավետիսյանի կողմից 10.02.2010 թվականին կնքված թիվ 229436 պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Երաշխավորության թիվ 324900 և թիվ 324901 պայմանագրերի 2.1 կետի համաձայն՝ պարտատերը՝ Բանկը, պարտավորվել է պարտապանի՝ Վահան Ավետիսյանի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու մասին հայտնել երաշխավորներին:

Երաշխավորության թիվ 324900 և թիվ 324901 պայմանագրերի 2.2 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավորվել է կատարել հիմնական պարտավորությամբ պարտապանի ստանձնած պարտավորությունները՝ պարտապանի կողմից այդ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու մասին պարտատիրոջ գրավոր կամ բանավոր հաղորդումը ստանալու պահից 5 բանկային օրվա ընթացքում:

Երաշխավորության թիվ 324900 և թիվ 324901 պայմանագրերի 2.5 կետի համաձայն՝ եթե երաշխավորը թույլ է տալիս պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման կետանց, ապա նշված պարտավորությունները կարող են կատարվել երաշխավորի՝ Բանկում առկա բանկային հաշիվների մնացորդների հաշվին, իսկ 2.6 կետի համաձայն՝ պարտատերն իրավունք է ձեռք բերում դատական կարգով բռնագանձում տարածել երաշխավորին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա, եթե երաշխավորը հրաժարվում է կամավոր կատարել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

Վերը շարադրված պայմանագրային դրույթների վերլուծությունից հետևում է, որ կողմերը փոխադարձ կամաարտահայտությամբ սահմանել են երաշխավորներին պահանջների ներկայացման, դրանց բավարարման որոշակի ընթացակարգ: Ընդ որում, նշված ընթացակարգից միանշանակ պարզ չէ՝ կողմերի կամքն ուղղված է եղել երաշխավորների համապարտ, թե սուբսիդիար պատասխանատվություն սահմանելուն:

Մինչդեռ ստորադաս դատարանները, առանց հետազոտելու և գնահատելու նշված պայմանագրային դրույթները, դրանք պայմանագրերի մեկնաբանման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով սահմանված կանոններով չգնահատելով նույն օրենսգրքի 377-րդ և 415-րդ հոդվածների իրավակարգավորումների համատեքստում, հետևության են հանգել երաշխավորների համապարտ պատասխանատվության բնույթի վերաբերյալ, որպիսի եզրահանգումը վերը նշված պատճառաբանություններով հիմնավոր համարվել չի կարող:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում նաև ստորադաս դատարանների հետևությունները երաշխավորների պատասխանատվության ծավալի մասին: Մասնավորապես, 10.02.2010 թվականի թիվ 324900 և 10.02.2010 թվականի թիվ 324901 երաշխավորության պայմանագրերի համաձայն՝ երաշխավորները պարտավորվել են իրենց բանկային հաշիվներին առկա դրամական միջոցներով, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող ամբողջ գույքով (շարժական և անշարժ) պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Վահան Ավետիսյանի կողմից 10.02.2010 թվականին կնքված թիվ 229436 պայմանագրով ստանձնած պարտավորությունները (այն է՝ պարտավորության (վարկի) գումարը, հաշվեգրված տոկոսները և տուժանքը վճարելու պարտավորությունը) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Վերը նշված պայմանագրային դրույթով ըստ էության սահմանվել է երաշխավորների պատասխանատվության ծավալը՝ այն սահմանափակելով վարկի գումարը, հաշվեգրված տոկոսները և տուժանքը վճարելու պարտականությամբ, մինչդեռ ստորադաս դատարանները, հաստատված համարելով երաշխավորների լրիվ ծավալով պատասխանատվության փաստը, վերջիններիս վրա դրել են նաև դատական ծախսերը կրելու պարտականություն, ինչը չի բխում նշված պայմանագրային դրույթի կարգավորումից:

Մասն պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը ճիշտ չի որոշել, դրանք չի պարզել պայմանագրային իրավակարգավորումների շրջանակներում և չի գնահատել գործում եղած ապացույցների բազմակողմանի և լրիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչն ազդել է գործի ելքի վրա, հետևաբար Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջների համաձայն, գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ և պատշաճ գնահատմամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, կայացրել է պատճառաբանված, հիմնավորված և օրինական վճիռ, որը բեկանելու հիմքեր վերաքննիչ բողոքում առկա

չեն», Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն և ոչ իրավաչափ:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դրամական միջոցները գանձելու վերաբերյալ հայցը բավարարելու դեպքում դատարանը վճռի եզրափակիչ մասում սահմանում է բռնագանձվող գումարի ընդհանուր չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին, ամիսը և ամսաթիվը:

Վկայակոչված հոդվածից հետևում է, որ դատավարական նորմով իմպերատիվ կերպով ամրագրված է, որ դատարանը դրամական միջոցները գանձելու վերաբերյալ հայցը բավարարելու դեպքում վճռի եզրափակիչ մասում սահմանում է նախ բռնագանձվող գումարի ընդհանուր չափը, ապա առանձին նշում է հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին, ամիսը և ամսաթիվը:

Սույն գործով Դատարանը, հայցը բավարարելով, վճռի եզրափակիչ մասում սահմանել է. «Պատասխանողներ Վահան, Մամվել Ավետիսյաններից, Մարինե Նազարյանից համապարտությամբ հօգուտ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 27.921,41 ԱՄՆ դոլար և նաև վճարված 233.434,20 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը...»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի թիվս այլ հիմքերի՝ վերաքննիչ բողոքում որպես Դատարանի վճիռը բեկանելու հիմք՝ նշված է նաև այն հանգամանքը, որ Դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոնշյալ իրավանորմից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է և վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը որոշում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն գուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ակտում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ:

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ բողոք բերած անձանց վերաքննիչ բողոքում ներկայացված հիմքին, անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը դրամական միջոցները գանձելու վերաբերյալ հայցը

քավարարելու պարագայում վճռի եզրափակիչ մասում, սահմանելով բռնագանձվող գումարի ընդհանուր չափը, առանձին չի նշել հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը, որպիսի պարագայում վճռաբեկ բողոքը հիմնավոր է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի և 219-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հիմքով:

3) Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատարության օրենսգրքը, ամրագրելով քաղաքացիական դատավարության փուլերը (գործի հարուցման, գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության և այլն), պարտավորեցում է դատարանին դատավարության մի փուլից անցումը մյուսին ձևակերպել առանձին դատավարական փաստաթղթով: Նշված իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և կոչված է երաշխավորելու գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրականացումը: Մասնավորապես, քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր փուլ ունի քաղաքացիական դատավարության ընդհանուր նպատակից բխող իր նպատակը, խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունների շրջանակը: Վերը նշվածով պայմանավորված՝ յուրաքանչյուր փուլում գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների շրջանակը ևս տարբեր է, հետևաբար վերջիններիս կողմից դատավարության համապատասխան փուլին անցնելու վերաբերյալ իրագեկումն ուղղակի անհրաժեշտություն է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁹-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավորը, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, որոշում է կայացնում գործը դատաքննության նշանակելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործը դատաքննության նշանակելու մասին որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, որում նշվում է գործի դատաքննության ժամանակի և վայրի մասին:

Կայացնելով գործը դատաքննության նշանակելու մասին որոշումը՝ դատարանը մի կողմից արձանագրում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ավարտը, մյուս կողմից՝ անցումը դատաքննության փուլին, որի շրջանակներում էլ իրականացվում է գործի ըստ էության քննությունը և լուծումը: Մասնավորապես, դատավարության այս փուլում դատարանը պարզում է հայցվորի պահանջները, պատասխանողի առարկությունները, անմիջականորեն հետազոտում է ապացույցները, պարզում է գործի փաստական հանգամանքները, կոնկրետ իրավահարաբերության սահմաններում կողմերի իրական իրավունքները և պարտականությունները: Վերը շարադրվածով պայմանավորված դատավարության այս փուլում գործին մասնակցող անձանց հիմնական իրավունքները հանգում են իրենց դիրքորոշումը ներկայացնելուն և ապացույցների հետազոտմանը մասնակցելուն: Հետևաբար օրենսդրի պահանջը՝ դատաքննության նշանակելու մասին որոշումն առանձին ակտի ձևով կայացնելու և այն գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ, կոչված է ապահովելու վերջիններիս կողմից դատավարության այս փուլին նախապատրաստվելու և դատարան ներկայանալու իրական հնարավորությունը:

Սույն գործով Դատարանը 04.03.2013 թվականին կայացած նախնական դատական նիստում, որին մասնակցել է միայն հայցվորի ներկայացուցիչը, որոշում է կայացրել դատաքննության անցնելու վերաբերյալ՝ դատաքննության օր նշանակելով 18.03.2013 թվականը: Գործում առկա չէ դատարանի որոշում՝ գործը դատաքննության նշանակելու մասին, և այն գործին մասնակցող անձանց (մասնավորապես՝ պատասխանողին և երրորդ անձանց) ուղարկելու մասին ապացույց:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ սույն գործով դատաքննությունն իրականացվել է 18.03.2013 թվականին, անտեսել և գնահատման չի արժանացրել վերաքննիչ բողոքի այն հիմքը, որ Դատարանն առանձին դատական ակտի ձևով գործը դատաքննության նշանակելու մասին որոշում չի կայացրել և չի ուղարկել գործին մասնակցող անձանց, որպիսի պայմաններում վերջիններս իրագրված չեն եղել, որ դատաքննությունը տեղի է ունենալու նշված օրը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁹-րդ հոդվածի խախտում, որն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

4) Վճռաբեկ բողոքը չորրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմերի միջև կայացված հաշտության համաձայնությունը ձևակերպվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Վկայակոչված իրավադրույթների փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ կողմերի իրավունքն է դատավարության ցանկացած, այդ թվում նաև՝ դատական ակտերի վերանայման փուլերում գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, սակայն իրենց վերապահված այս իրավունքից կողմերը պետք է օգտվեն բարեխղճորեն՝ հաշվի առնելով նաև դատավարության այն փուլի առանձնահատկությունները, որի շրջանակներում իրացվելու է նշված իրավունքը: Մասնավորապես՝ կողմերի հաշտության համաձայնություն կնքելու իրավունքը դատական ակտերի վերանայման փուլերում օբյեկտիվորեն կարող է իրացվել մինչև բողոքի ըստ էության քննության ավարտը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հետևյալ իրավանդությունների կարգավորումից.

ՀՀ քաղաքացիական դատավարության 217-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, եթե նույն օրենսգրքի 4-րդ բաժնով այլ կանոններ նախատեսված չեն:

Վճռաբեկ դատարանում գործի քննությունը կանոնակարգող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավադրույթների (238-րդ և 241-րդ հոդվածներ) վերլուծությունից հետևում է, որ բողոքի ըստ էության քննության ավարտից հետո որևէ հիմքով բողոքի քննությունը վերսկսելու դատավարական կարգ նախատեսված չէ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը բողոքի ըստ էության քննությունն ավարտել է 24.07.2013 թվականին, և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 02.08.2013 թվականը: Բողոքի ըստ էության քննության ավարտից հետո՝ 01.08.2013 թվականին, Մարինե Նազարյանի ներկայացուցիչը գործի քննությունը վերսկսելու մասին դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ պատճառաբանելով, որ Բանկը պատրաստակամություն է հայտնել քննարկել հաշտության համաձայնության առաջարկը: Վերաքննիչ դատարանը նշված դիմումը քննության չի առել:

Վերոնշյալ վերլուծությունների համատեքստում անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության 33-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքում ներկայացված փաստարկն անհիմն է, քանի որ կողմերն իրենց վերապահված այդ իրավունքից կարող էին օգտվել մինչև բողոքի ըստ էության քննության ավարտը, մինչդեռ կողմի ներկա-

յացուցիչն իրենց մտադրության մասին հայտնել է դատական ակտի կայացման փուլում, բացի այդ, Մարինե Նազարյանի կողմից հաշտության համաձայնության վերաբերյալ Բանկի կողմից ցանկություն հայտնելու մասին ընդամենը դիմում ներկայացնելը հիմք չէ այն որպես օրենքով սահմանված կարգով կողմերի միջև գրավոր ձևակերպված հաշտության համաձայնություն համարելու և քննարկման առարկա դարձնելու համար:

5) Վճռաբեկ բողոքը հինգերորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով վճռաբեկ բողոքի հաջորդ հիմքը վերաբերում է Դատարանի կողմից հակընդդեմ հայցի առարկայի շրջանակներից դուրս գալուն:

Նշված հարցադրմանը պատասխանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ նախկինում ձևավորած հետևյալ դիրքորոշումը.

Հայցի առարկան այն նյութափրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա: Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (յրե՛ս, *Վիզեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի (յրե՛ս, *Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանը և Կարինե Բաղջյանն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ դատարանի կողմից հայցի առարկայի անհիմն ընդլայնումը վերը շարադրված պատճառաբանությունների հիմքով ոչ միայն տնօրինչականության, մրցակցության սկզբունքների խախտում է, այլև հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ անձի դատական պաշտպանության

և արդար դատաքննության իրավունքների իրացման համար: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի (դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ) և 109-րդ հոդվածի 2-րդ կետի (դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի) իրավակարգավորումից:

ՀՀ քաղաքացիական դատավարության 96-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով, հետևաբար վերը շարադրված իրավական վերլուծությունները հավասարապես կիրառելի են նաև հակընդդեմ հայցի պարագայում:

Սույն գործով սկզբնական հայցով պատասխանող Մարինե Նազարյանը հակընդդեմ հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Բանկի, երրորդ անձինք Վահան Ավետիսյանի, Սամվել Ավետիսյանի՝ 10.02.2010 թվականին կնքված թիվ 229436 անշարժ գույքի վարկավորման և 05.02.2010 թվականին կնքված թիվ NIC146665 անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հակընդդեմ հայցով հայցվորը գործի քննության ընթացքում հակընդդեմ հայցի առարկան չի փոխել, հետևաբար հակընդդեմ հայցով ներկայացված է եղել միայն պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջ: Մինչդեռ Դատարանը քննության է առել և մերժել է Մարինե Նազարյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Բանկի, երրորդ անձինք Վահան, Սամվել Ավետիսյանների՝ պատճառված վնասը հատուցելու և պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հետևաբար, սույն գործով հակընդդեմ հայցի առարկան կամ հայցապահանջի չափը հակընդդեմ հայցով հայցվորի կողմից չփոխելու պայմաններում Դատարանի կողմից հակընդդեմ հայցի առարկայից շեղումը խախտում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 32-րդ հոդվածի 1-ին կետը, 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա, իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսինքն՝ վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր է՝

- քաղաքացիական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա,

- քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում (*տե՛ս, օրինակ Լուսինե Բարսեղյանն ընդդեմ Կարեն Խաչատրյանի և մյուսների թիվ ԵԿԴ/3430/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով վերը նշված դատավարական նորմերի խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքին, անհիմն կերպով արձանագրել է, որ Դատարանի եզրահանգումը՝ հակընդդեմ հայցը մերժելու մասին օրինական է և իրավաչափ:

6) Վճռաբեկ բողոքը վեցերորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբա-

նությունը.

Վճռաբեկ դատարանը, սույն գործով արձանագրելով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված նյութական և դատավարական նորմերի մի շարք խախտումներ, այդուհանդերձ գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի հիմքով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերում, ինչպես նաև դատական նիստերից դուրս առանձին դատավարական գործողություններ կատարելիս վարվում է արձանագրություն:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով: Համառոտագրումը դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է միաժամանակ՝ համակարգչային եղանակով: Ձայնային արձանագրությունը գործի նյութերին կցվում է լազերային կրիչի վրա: Համառոտագրումը գործի նյութերին կցվում է թղթային կրիչի վրա՝ հավաստված դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ:

Վերը շարադրված իրավանորմերի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում դատական նիստի արձանագրումը ենթադրում է ձայնային արձանագրում՝ ամրագրված լազերային կրիչի վրա, և համակարգչային համառոտագրում՝ արտատպված թղթի վրա: Վերջիններիս միաժամանակյա առկայությունը պարտադիր է յուրաքանչյուր դատական նիստով, և դրանցից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է արձանագրության բացակայություն, ինչն էլ դատական ակտի պարտադիր բեկանման հիմք է հանդիսանում:

Սույն գործով Դատարանը 22.11.2013 թվականի դատական նիստն արձանագրել է ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով համառոտագրման միջոցով (հատոր 1-ին, գ.թ. 96), սակայն նշված դատական նիստի ձայնային արձանագրությունն ամրագրված չէ գործում առկա լազերային կրիչի վրա (հատոր 1-ին, գ.թ. 160), որպիսի պարագայում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 22.11.2013 թվականի դատական նիստի արձանագրությունը բացակայում է գործից:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերաքննիչ բողոքի նշված հիմքը, Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ այն դեպքում, երբ սույն գործով առկա է եղել Դատարանի վճիռի պարտադիր բեկանման հիմք:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի

ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.10.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԼԳ/0248/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԼԳ/0248/02/13**

Նախագահող դատավոր՝ **Լ. Գրիգորյան**

Դատավորներ՝ **Գ. Մատինյան**

Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճարելի դատարան**)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ժիրարմ» ՍՊԸ-ի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.11.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ժիրարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ **Ընկերություն**) ընդդեմ «Վառմաշ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ **Կազմակերպություն**) գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ **Ընկերությունը** պահանջել է **Կազմակերպությունից** բռնագանձել 13.580.685 ՀՀ դրամ՝ հաշվարկելով այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսները՝ սկսած 18.05.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, տույժ, որը հաշվարկվում է վճարման ենթակա, բայց չվճարված ամբողջ գումարի նկատմամբ օրական 0,15 տոկոսի չափով սկսած 18.05.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

ՀՀ **Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի** (դատավոր՝ **Վ. Հովսեփյան**) (այսուհետ՝ **Դատարան**) 02.08.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**) 08.11.2013 թվականի որոշմամբ **Կազմակերպության** վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ մասնակիորեն բեկանվել է **Դատարանի** 02.08.2013 թվականի վճիռը և

փոփոխվել՝ պարտքի գումարի նկատմամբ օրական 0,15 տոկոսի չափով տույժի գումարը բռնագանձելու պահանջի մասով հայցը մերժվել է, իսկ մնացած մասով վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ և 411-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պայմանագրով սահմանված պատասխանատվության չափ (տուժանք) նախատեսված լինելու դեպքում պետք է գործի պայմանագրով սահմանված պատասխանատվության չափը, այլ ոչ թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ չի պատճառաբանել, թե ինչու պետք է կիրառվի օրենքով սահմանված տոկոսադրույքը, այլ ոչ թե՛ կողմերի միջև գրավոր համաձայնեցված տուժանքի չափը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.11.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ պարտքի գումարի նկատմամբ հաշվարկել պայմանագրով նախատեսված օրական 0,15 տոկոսի չափով տույժ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված տոկոսները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Ընկերության և Կազմակերպության միջև 15.04.2012 թվականին կնքված պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2012 թվականի ընթացքում Կազմակերպությանը հանձնել 3-րդ համարի 60-70 և 85-100 մակնիշի նավթային բիտում՝ քանակությունն ըստ գնորդի պահանջի, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել և վճարել 1 ամսվա ընթացքում իր պահանջած ապրանքների համար: Պայմանագրի 2.7 կետի համաձայն՝ գնորդի կողմից ապրանքը ստանալուց հետո պայմանագրով սահմանված կարգով վճարումը չկատարելու կամ ոչ լրիվ կատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկում է տույժ՝ չփոխանցված կամ պակաս փոխանցված գումարի 0,15 տոկոսի չափով: Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մինչև 30.12.2012 թվականը (գ.թ. 32-33).

17.04.2012 թվականին կազմված թիվ Ա4120564682 ապրանքների մատակարարման հարկային հաշվի համաձայն՝ Ընկերությունը Կազմակերպությանը մատակարարել է 45,24 տոննա նավթային բիտում, որի համար վճարման ենթակա գումարը կազմում է 13.580.685 ՀՀ դրամ (գ.թ. 6-8).

Կազմակերպությունը չի կատարել 15.04.2012 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը

վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների և պայմանագրով նախատեսված տույժի միաժամանակյա կիրառման հարցին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի համաձայն՝ տուժանք է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում:

Վերոնշյալից հետևում է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել -ույթային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Սույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա սույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությանը: Վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածից հետևում է, որ վնասի հատուցման կամ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կետանցի համար սահմանված պատասխանատվության այլ կարգի առկայության դեպքում կամ եթե տոկոսի (տուժանքի) այլ չափ նախատեսված է պայմանագրով, ապա սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգը չի գործում: Օրենսդրության նման ձևակերպումը կոչված է ապահովելու կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքը (*տե՛ս*, «Թաման» արտադրական կոոպերատիվն ընդդեմ «ԱՄ-ԿԱ» ՍՊԸ-ի՝ թիվ 3-27(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումը, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում և

եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայ-

մանագրով կամ օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման ոչ միայն այն պարագայում, երբ կողմերի համաձայնությամբ նախատեսված չեն պատասխանատվության միջոցներ պարտավորությունների խախտման համար, այլ նաև այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված է պատասխանատվություն պարտավորությունների խախտման համար, սակայն այդ պատասխանատվությունը որոշակի ժամանակահատվածով է նախատեսված: Վերջինիս պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման այդ ժամանակահատվածի ավարտից սկսած մինչև գումարը վերադարձնելու օրը: Այսինքն՝ օրենքով նախատեսված տվյալ պատասխանատվության միջոցը լրացուցիչ միջոց է, որը առաջ է գալիս այն դեպքում, երբ պարտավորությունների խախտումը շարունակվում է:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով և Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելով, արձանագրել է, որ Դատարանը, պարզելով, որ հայցվորի առջև պատասխանողն ունի դրամական պարտավորություններ, եկել է այն անհիմն եզրահանգման, որ նույն ժամանակահատվածի համար, այն է՝ նշված պարտավորության ծագման պահից մինչև դրա դադարման պահը պատասխանողից հոգուտ հայցվորի պետք է հաշվարկել և բռնագանձել դրամական միջոցների նկատմամբ հաշվեգրված և՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները, և՛ կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված տուժանքի գումարը, ինչը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ և 411-րդ հոդվածների պահանջներին: Վերը շարադրվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը պատասխանողից հոգուտ հայցվորի պետք է բռնագանձեր միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվեգրված տոկոսները:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Կազմակերպության միջև 15.04.2012 թվականին կնքված պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է 2012 թվականի ընթացքում Կազմակերպությանը հանձնել 3-րդ համարի 60-70 և 85-100 մակնիշի նավթային բիտում՝ քանակությունն ըստ գնորդի պահանջի, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել և վճարել 1 ամսվա ընթացքում իր պահանջած ապրանքների համար: Նշված պայմանագրով նախատեսվել է, որ գնորդի կողմից պայմանագրով սահմանված կարգով վճարումը չկատարելու կամ ոչ լրիվ կատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկում է տույժ՝ չփոխանցված կամ պակաս փոխանցված գումարի 0,15 տոկոսի չափով: 17.04.2012 թվականին կազմված թիվ Ա4120564682 ապրանքների մատակարարման հարկային հաշվի համաձայն՝ Ընկերությունը Կազմակերպությանը մատակարարել է 45,24 տոննա նավթային բիտում, որի համար վճարման ենթակա գումարը կազմել է 13.580.685 ՀՀ դրամ, որը Կազմակերպության կողմից չի վճարվել:

Վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերն իրենց միջև կնքված պայմանագրով պատասխանատվություն են նախատեսել մատակարարված ապրանքների դիմաց գնորդի կողմից վճարելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ պայմանագրի 2.7 կետում սահմանելով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չփոխանցված կամ պակաս փոխանցված գումարի 0,15 տոկոսի չափով տույժ վճարելու պարտականություն: Միաժամանակ, նկատի ունենալով, որ նշված պայմանագրի

գործողության ժամկետը սահմանվել է մինչև 30.12.2012 թվականը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրով նախատեսված պատասխանատվությունը ենթադրել է ժամկետային որոշակի սահմանափակում:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերոնշյալ փաստերը, գործով սխալ հետության է հանգել և կողմերի միջև կետանցի որոշակի ժամանակահատվածի համար պատասխանատվության այլ կարգ նախատեսված լինելու պարագայում նշված ժամանակահատվածի համար բռնագանձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տուկոսներն այն դեպքում, երբ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տուկոսները կարող են հաշվարկվել 30.12.2012 թվականից հետո միայն, իսկ 18.05.2012 թվականից մինչև 30.12.2012 թվականը վճարումներ չկատարելու ժամանակահատվածի նկատմամբ ենթակա է հաշվարկման և բռնագանձման 15.04.2012 թվականին կնքված ապրանքի մատակարարման պայմանագրի 2.7 կետով նախատեսված օրական 0,15 տոկոսի չափով տույժի գումարը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նշված հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.11.2013 թվականի որոշումը և այն փոփոխել. «Վառմաշ» ՍՊԸ-ից հօգուտ «Ժիրարմ» ՍՊԸ-ի բռնագանձել 4.603.852,22 ՀՀ դրամ՝ որպես 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ սկսած 18.05.2012 թվականից մինչև 30.12.2012 թվականն օրական 0,15 տոկոսի չափով հաշվարկված տույժի գումար, իսկ 30.12.2012 թվականից մինչև պարտավորության դադարման օրը 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ հաշվարկել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-

րդ հողվածով նախատեսված տոկոսներն՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

«Վառմաշ» ՍՊԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 92.077,04 ՀՀ դրամ՝ որպես 18.05.2012 թվականից մինչև 30.12.2012 թվականը 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ օրական 0,15 տոկոսի չափով հաշվարկված տույժի գումարի երկու տոկոսը, ինչպես նաև 30.12.2012 թվականից մինչև պարտավորության դադարման օրը 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի երկու տոկոսի չափով գումար՝ որպես հայցադիմումի համար սահմանված պետական տուրք:

«Վառմաշ» ՍՊԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 138.115,56 ՀՀ դրամ՝ որպես 18.05.2012 թվականից մինչև 30.12.2012 թվականը 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ օրական 0,15 տոկոսի չափով հաշվարկված տույժի գումարի երեք տոկոսը, ինչպես նաև 30.12.2012 թվականից մինչև պարտավորության դադարման օրը 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի երեք տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

«Վառմաշ» ՍՊԸ-ից հոգուտ «Ժիրարմ» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Վառմաշ» ՍՊԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 138.115,56 ՀՀ դրամ՝ որպես 18.05.2012 թվականից մինչև 30.12.2012 թվականը 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ օրական 0,15 տոկոսի չափով հաշվարկված տույժի գումարի երեք տոկոսը, ինչպես նաև 30.12.2012 թվականից մինչև պարտավորության դադարման օրը 13.580.685 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասննապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից գումար՝ որպես վճարելի բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.03.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, որից հաշվանցել «Վառմաշ» ՍՊԸ-ից հոգուտ «Ժիրարմ» ՍՊԸ-ի բռնագանձման ենթակա վճարելի բողոքի համար նախապես վճարված 20.000 ՀՀ դրամ պետական տուրքը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0930/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0930/02/13

Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

Դատավորներ՝ Դ. Խաչատրյան

Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի «Երևանի
էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դա-
տարանի 27.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի
«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «ԱՐՄԻՆԿՈ»
ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ հենապյունների օգտագործման թիվ 73 պայմանա-
գրով առաջացած տույժերի գումարը բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնա-
գանձել իր և Կազմակերպության միջև թիվ 73 պայմանագրով նախատեսված 4.263.100 ՀՀ
դրամ տույժի գումարը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-
տության դատարանի (դատավոր Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 18.10.2013
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դա-
տարան) 27.02.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 18.10.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 369-րդ հոդվածները, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը խախտել է պարտավորության կատարման ապահովման միջոցների կիրառման քաղաքացիաիրավական հիմքերը, քանի որ դրանց կիրառման համար էական հանգամանք է հանդիսանում պարտավորության խախտման փաստը, իսկ սույն գործով ապացուցված է, որ պատասխանողը թույլ է տվել պարտավորության խախտում, մինչդեռ հաստատված համարելով սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, դրանք հաշվի չի առել վեճը լուծելիս:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ընկերությունը պատշաճ ձևով ծանուցել է Կազմակերպությանը գումարը վերադարձնելու անհրաժեշտության մասին, հետևաբար մեղավորություն չունի Կազմակերպության կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

Ընկերության և Կազմակերպության միջև 13.03.2008 թվականին կնքվել է հենասայունների օգտագործման թիվ 05 պայմանագիրը:

Պայմանագրի 2.4 կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավոր է մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսի 01-ին վճարել ծառայությունների գումարը: Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ վճարման ժամկետները խախտելու դեպքում Կազմակերպությունը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 1%-ի չափով: 07.08.2009 թվականի համաձայնագրով 13.03.2008 թվականի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է անորոշ ժամկետով (հատոր 1-ին, գ.թ. 17-19):

Ընկերության և Կազմակերպության միջև 01.09.2011 թվականին կնքել է հենասայունների օգտագործման թիվ 73 պայմանագիրը:

Պայմանագրի 2.4. կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավոր է մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսի 3-ը վճարել 3.1 կետում նշված ծառայությունների (մեկ հենասայան վրայով մեկ օպտիկա-մանրաթելային լարանցման համար 720 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ) գումարը, որը ենթակա է համապատասխան փոփոխման, եթե տեղի է ունեցել դրամի արժեզրկում կամ արժևորում առնվազն 10%-ի չափով: Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ վճարման ժամկետները խախտելու դեպքում Կազմակերպությունը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0,5%-ի չափով (հատոր 1-ին, գ.թ. 15-16):

Ընկերության կողմից 01.01.2013 թվականին կազմված «Հաշվարկի» համաձայն՝ Կազմակերպության հետ կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարները պարբերաբար ուշացնելու համար 2010-2012 թվականների ընթացքում հաշվարկվել է

4.263.100 ՀՀ դրամ տույժ (հատոր 1-ին, գ.թ. 13):

Ընկերության կողմից 11.04.2013 թվականի թիվ 116 գրությամբ Կազմակերպությանն առաջարկվել է վճարել վարձավճարները պարբերաբար ուշացնելու պատճառով հաշվարկված 4.263.100 ՀՀ դրամ տույժի գումարը (հատոր 1-ին, գ.թ. 14):

Ընկերության կողմից 01.01.2013 թվականին կազմված «Հաշվարկի» համաձայն՝ Կազմակերպության կողմից 2010-2012 թվականների ժամանակաշրջանների համար վարձավճարները վճարվել են հաջորդող ամսվա 06-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում (հատոր 1-ին, գ.թ. 13):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք դատարանը կարող է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածների կիրառմամբ պարտապանին ամբողջությամբ ազատել տույժի վճարումից կամ պատասխանատվությունից, եթե այդ հոդվածներում նախատեսված է միայն պարտապանի պատասխանատվության չափը նվազեցնելու հնարավորություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպատակ է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Նույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վկայակոչված հոդվածներից հետևում է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն:

Ընդ որում, չսահմանափակելով պայմանագրերով նախատեսվող տուժանքի գումարի չափը, օրենսդիրը մինևույն ժամանակ իրավունք է վերապահել դատարաններին որոշելու հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները՝ ապա-

հովելով սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Դատարաններին վերապահված նման իրավունքն իրավական այն միջոցներից մեկն է, որոնք ուղղված են անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը կանխելուն, ինչն իր հերթին համահունչ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքի որևէ ձևով չարաշահելու արգելքին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն, ըստ էության, նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին:

Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանն առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ տուժանքի չափի նվազեցումը չի կարող նշանակել տուժանքի վճարումից ընդհանրապես ազատում: Հակառակ դեպքում տուժանքի ինստիտուտը կիմաստագրկվի, և հանդիսանալով պարտավորությունների կատարման երաշխիք, չի ծառայի իր նպատակին:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նաև հետևյալ իրավադրությունների վերլուծությունից.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Տվյալ պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատարանին վերապահել է բացառապես տուժանքը նվազեցնելու լիազորություն, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ դատարանը պարտապանին ազատում է տուժանքի վճարումից, թույլ է տալիս վերոնշյալ հոդվածների խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.03.2008 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է հենապայուների օգտագործման թիվ 05 պայմանագիրը, որի 2.4. կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավոր է մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսի 01-ը վճարել 3.1 կետում նշված ծառայությունների գումարը, իսկ 5.1 կետի համաձայն՝ վճարման ժամկետները խախտելու դեպքում Կազմակերպությունը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 1%-ի չափով: 01.09.2011 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է հենապայուների օգտագործման թիվ 73 պայմանագիրը, որի 2.4. կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավոր է

մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսի 03-ը վճարել 3.1 կետում նշված ծառայությունների գումարը՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ վճարման ժամկետները խախտելու դեպքում Կազմակերպությունը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0,5 %-ի չափով: Կազմակերպության կողմից 2010-2012 թվականների ժամանակաշրջանների համար վարձավճարները վճարվել են հաջորդող ամսի 06-ից մինչև 31-ը ընկած ժամանակահատվածում: Ընկերության 01.04.2013 թվականի թիվ 116 գրությամբ Կազմակերպությանն առաջարկվել է վճարել վարձավճարները պարբերաբար ուշացնելու պատճառով հաշվարկված տույժերը՝ 4.263.100 ՀՀ դրամ:

Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ 2010 թվականից մինչև 01.04.2013 թվականը Կազմակերպությունը վճարել է ամսավճարները, այդ ընթացքում երբևիցե չի ստացել գրություն, նախազգուշացում կամ պայմանագրով նախատեսված տույժերի հաշվարկ, պարտահանաչ վճարել է Ընկերության կողմից ներկայացվող հաշիվ-ապրանքագրում նշված գումարը հաշվետու ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 20-25-ը: Ներկայումս պարտավորության գումար առկա չէ, քանի որ Կազմակերպության կողմից այն վճարվել է, իսկ տույժը հաշվարկվել է 2010 թվականի հունվար ամսից մինչև 2012 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի համար, այսինքն՝ պարտավորության մայր գումարի բացակայության պայմաններում ներկայացվել է տուժանքի գումարի բռնագանձման պահանջ, ուստի կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածները, գտել է, որ Ընկերությունը պարտավոր էր Կազմակերպության կողմից ամսավճարը սահմանված ժամկետում չվճարելու փաստը պարզել անմիջապես, մինչդեռ դրսևորելով անգործություն՝ դիտավորությամբ չի զբաղվել անգամ ամսավճարը ժամանակին չվճարելու համար Կազմակերպությանը նախազգուշացնելու հարցով, և ըստ էության, նպաստել է պարտավորությունը չկատարելու հետևանքով Ընկերության վնասների չափի ավելացմանը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս և Դատարանի 18.10.2013 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելիս պատճառաբանել է, որ սույն գործով հիմնական պարտավորություն հանդիսացող ներկայացված պայմանագրերով մատուցված ծառայության դիմաց ամսական վճարումները պատասխանողի կողմից ամբողջությամբ կատարվել են, և պատասխանողը չունի հիմնական պարտավորությունից բխող որևէ պարտք: Հետևաբար, հիմք ընդունելով Կազմակերպության կողմից հիմնական պարտավորությունն ամբողջությամբ կատարած լինելու փաստը և պայմանագրով սահմանված ամսական վճարման համար նախատեսված և փաստացի վճարման կատարման միջև ընկած օրերի քանակը, ինչպես նաև պայմանագրերով սահմանված ամսավճարների չափը, և համադրելով դրանք այդ պարտավորությունների խախտման արդյունքում գոյացած տույժի չափի հետ՝ գտել է, որ սույն գործով պահանջվող տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, որպիսի պայմաններում սույն գործի նկատմամբ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառումն իրավաչափ է:

Անդրադառնալով սույն գործով ծագած իրավահարաբերության նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածի կիրառելիությանը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ կողմերը պայմանագրային իրավահարաբերությունների մեջ են գտնվել դեռևս 13.03.2008 թվականից սկսած, և այդ ամբողջ ժամանակահատվածում պատասխանողը պայմանագրով սահմանված ամսական վճարը կատարել է հիմնականում մինչև հաջորդող ամսվա 20-ը, սակայն հայցվորի (բողոք բերած անձ) կողմից որևէ նախազգուշացում կամ պահանջ՝ վճարումը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու մասին չի եղել՝ բացառությամբ սույն գործով հայցադիմումը Դատարան ներկայացնելուց առաջ պատասխանողին ուղղված թիվ 116 գրության: Նման պայմաններում Վերաքննիչ դա-

տարանը, համադրելով հիշատակված հողվածի մեջբերված դիսպոզիցիան և նշված հանգամանքները, գտել է, որ Ընկերությունը (բողոք բերած անձ), Կազմակերպության կողմից պարտավորության կատարման ամբողջ ժամանակահատվածում պայմանագրով սահմանված ամսական վճարները ստանալով պայմանագրով սահմանված ժամկետից օրեր անց, որևէ ողջամիտ միջոց չի ձեռնարկել դրանց նվազեցման համար՝ նպաստելով պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը, ինչի արդյունքում գտել է, որ սույն գործով ծագած իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածը և բացակայում են հայցապահանջի բավարարման հիմքերը:

Փաստորեն, Դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածները, Կազմակերպությանն ամբողջությամբ ազատել է վարձավճարները պարբերաբար ուշացնելու պատճառով պայմանագրով նախատեսված տույժերը վճարելու պարտավորությունից, իսկ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածների նման իրավակիրառումը դիտել է իրավաչափ:

Մինչդեռ վերոնշյալ վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածները, անտեսել են այն հանգամանքը, որ նյութական իրավունքի նշված նորմերը դատարանին հնարավորություն են տալիս միայն նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, այլ ոչ թե պարտապանին ամբողջությամբ ազատել պատասխանատվությունից:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում ինչպես Դատարանը, այնպես էլ՝ Վերաքննիչ դատարանը սխալ են կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ և 420-րդ հոդվածները, հետևաբար անհրաժեշտ է գործն ուղարկել նոր քննության՝ վկայակոչված հոդվածների վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունների համատեքստում գործի հանգամանքները պարզելու և գնահատելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.06.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/0474/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0474/02/13

Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան

Դատավորներ՝ Ա. Թումանյան

Լ. Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննարկելով Մանիկ Խաչատրյանի ներկայացուցիչ
Գոռ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
26.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մանիկ Խաչատրյանի ընդդեմ Ռ-ադմիլյա
Մակարյանի, երրորդ անձ Լիաննա Մակարյանի՝ բնակարանի վերաբերյալ կատարված
նվիրատվության խոստումը նվիրատվության պայմանագիր համարելու, սեփականության
իրավունքը ճանաչելու և կրած վնասը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մանիկ Խաչատրյանը պահանջել է Ռ-ադմիլյա Մակարյանի
կողմից Մանիկ Խաչատրյանին Երևան քաղաքի Քոչարյան 6-րդ շենքի թիվ 50 բնա-
կարանի վերաբերյալ կատարված նվիրատվության խոստումը համարել նվիրատվության
պայմանագիր և ճանաչել Մանիկ Խաչատրյանի սեփականության իրավունքը նշված
բնակարանի նկատմամբ, ինչպես նաև Ռ-ադմիլյա Մակարյանից հօգուտ իրեն բռնագանձել
1.200.000 ՀՀ դրամ՝ որպես կրած վնաս:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավա-
տության դատարանի (դատավոր՝ Ն. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 10.09.2013
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

26.12.2013 թվականի որոշմամբ Մանիկ Խաչատրյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.09.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանիկ Խաչատրյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, մասնավորապես՝ տրված խոստումը չի համարել պատշաճ ձևով տրված, դրան ուղղված գործողությունները չի համարել բավարար, ինչի արդյուքում մերժել է պահանջը:

Ռադմիլա Մակարյանի գործողություններն ավելի քան կոնկրետ են, քանի որ պահպանվել են նվիրատվության խոստումի բոլոր նախադրյալները, ինչը հիմնավորվում է նոտարական վավերացմամբ Գոռ Մաթևոսյանին տրված լիազորագրով և «Իրավաբանական ծառայություն մատուցելու կողմերի փոխադարձ իրավունքների և պարտականությունների եռակողմ պայմանագրով»:

Վերաքննիչ դատարանը, ամբողջական վերլուծության չենթարկելով պայմանագրի պայմանները և կողմերի իրական կամարտահայտությունը, չի պարզել պայմանագրի իրական նպատակը, որի արդյունքում բողոք բերած անձը գրկվել է իրեն հասանելիք սեփականության իրավունքից:

Ռադմիլա Մակարյանն ունեցել է քրոջ՝ Լիաննա Մակարյանի կողմից տրված լիազորագիր՝ ժառանգությունն ընդունելու, ժառանգությունից հետո գույքն ըստ հայեցողության տնօրինելու նպատակով, սակայն չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և Լիաննա Մակարյանի բաժնեմասը ևս չի նվիրել Մանիկ Խաչատրյանին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բնակարանի վերաբերյալ կատարված նվիրատվության խոստումը նվիրատվության պայմանագիր ճանաչելու, սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը և հայցն այդ մասով բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 14.08.2008 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Նորքի 3-րդ մ/շ 17-րդ շենքի (Քոչարյան 6-րդ շենքի) թիվ 50 հասցեի բնակարանը որպես սեփականություն գրանցվել է Սարգիս Մակարյանի անվամբ (հատոր 1-ին, գ.թ. 17-18):

2) Սարգիս Մակարյանը մահացել է 11.10.2010 թվականին և Երևան քաղաքի «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից 19.04.2011 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Սարգիս Մակարյանի գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են համարվում դուստրերը՝ Լիաննա և Ռադմիլա Սարգսի Մակարյանները: Ժառանգական գույքը

քաղկացած է Երևանի Նոր Նորքի 3-րդ մ/շ 17-րդ շենքի (Քոչարյան 6-րդ շենքի) թիվ 50 հասցեի բնակարանից և ավանդի գումարներից (հատոր 1-ին, գ.թ. 16, 32):

3) Ուկրաինայի Դոնեցկի մարզի Դոնեցկ քաղաքի մասնավոր նոտար Վ. Ի. Մորոզովի կողմից 10.03.2011 թվականին հաստատված լիազորագրի համաձայն՝ Լիաննա Սարգսի Մակարյանը լիազորել է Ռադմիլա Մակարյանին՝ վարելու իր գործը կապված գույքի նկատմամբ ժառանգական իրավունքների ձևակերպման հետ, որը մնացել է իր հոր՝ Սարգիս Մակարյանի մահից հետո և կազմված է ՀՀ Երևանի Նոր Նորքի 3-րդ մ/շ 17-րդ (Քոչարյան 6-րդ) շենքում թիվ 50 հասցեի բնակարանից, կատարել ներդրումներ ցանկացած բանկային հիմնարկություններում, ստանալ իր անվամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայական: Նշված գործողությունները կատարելու համար Ռադմիլա Մակարյանին իրավունք է տվել օգտվել փաստաբանների ծառայություններից, ներկայացնել իր անունից դիմումներ, այդ թվում՝ դիմում ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, ստորագրել իր փոխարեն, ստանալ իրեն պատկանող դրամը, անհրաժեշտ տեղեկանքներ և փաստաթղթեր: Նշված լիազորագրով տրված լիազորությունները չեն կարող փոխանցվել այլ անձանց (հատոր 1-ին, գ.թ. 23-24):

4) 10.03.2011 թվականին Լիաննա Մակարյանը դիմում է ուղղել նոտարական գրասենյակ 11.10.2010 թվականին մահացած հոր՝ Սարգիս Մակարյանի ժառանգությունն ընդունելու մասին, հայտնելով նաև, որ բացի իրենից ժառանգ է համարվում Ռադմիլա Մակարյանը, իսկ ժառանգական գույքը բաղկացած է ՀՀ Երևանի Նոր Նորքի 3-րդ մ/շ 17-րդ շենքի (Քոչարյան 6-րդ շենքի) թիվ 50 հասցեի բնակարանից և բանկում գտնվող դրամական ավանդից (հատոր 1-ին, գ.թ. 28):

5) 16.03.2011 թվականին ՀՀ «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից վավերացված թիվ 1396 լիազորագրով Ռադմիլա Մակարյանը լիազորել է Գոռ Մաթևոսյանին՝ լինելու իր ներկայացուցիչը համապատասխան մարմիններում, զբաղվելու 11.10.2010 թվականին մահացած իր հոր՝ Սարգիս Մակարյանի ժառանգության ընդունման և ձևակերպման հարցերով, հետագայում ժառանգական գույքի՝ Երևանի Նոր Նորքի 3-րդ մ/շ 17-րդ շենքի (Քոչարյան 6-րդ շենքի) թիվ 50 հասցեի բնակարանը, բազմաբնակարան շենքի զբաղեցրած հողամասի համապատասխան բաժնետնարը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված շենքի բնակարանների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքում իր բաժնետնարը նվիրելու Մանիկ Խաչատրյանին (հատոր 1-ին, գ.թ. 31):

6) 17.03.2011 թվականին Մանիկ Խաչատրյանի, Ռադմիլա Մակարյանի և Գոռ Մաթևոսյանի միջև կնքվել է «Իրավաբանական ծառայություն մատուցելու կողմերի փոխադարձ իրավունքների և պարտականությունների եռակողմ պայմանագիրը»: Նշված պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ Ռադմիլա Մակարյանը, միաժամանակ հանդես գալով քրոջ՝ Լիաննա Սարգսի Մակարյանի կողմից լիազորված անձ, պարտավորվել է 10-օրյա ժամկետում ներկայացնել քրոջ կողմից նոտարական կարգով տրված հայտարարությունը՝ ժառանգությունից իր օգտին հրաժարվելու մասին: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ Ռադմիլա Մակարյանը պարտավորվել է Սարգիս Մակարյանի ժառանգական զանգվածն ընդունելուց հետո ժառանգական զանգվածում ներառված Երևանի Նոր Նորքի 3-րդ մ/շ 17-րդ շենքի (Քոչարյան 6-րդ շենքի) թիվ 50 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Մանիկ Խաչատրյանին (հատոր 1-ին, գ.թ. 30):

7) Երևանի Նոր Նորքի 3-րդ մ/շ 17-րդ շենքի (Քոչարյան 6-րդ շենքի) թիվ 50 բնակարանի վերաբերյալ 30.04.2011 թվականին տրված թիվ 2463585 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ տվյալ բնակարանը,

որպես ընդհանուր բաժնային սեփականություն՝ յուրաքանչյուրին 1/2 բաժնով, գրանցվել է Լիաննա և Ռադմիրա Մակարյանների անվամբ (հատոր 1-ին, գ.թ. 33-34):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Բողոքի քննության շրջանակում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ անշարժ գույքի նվիրատվության խոստման իրավական կարգավորման առանձնահատկություններին:

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որևէ մեկին գույք կամ գույքային իրավունքներ անհատույց հանձնելու կամ որևէ մեկին գույքային պարտականությունից ազատելու խոստումը (նվիրատվության խոստումը) համարվում է նվիրատվության պայմանագիր և պարտավորեցնում է խոստացողին, եթե խոստումը տրվել է պատշաճ ձևով ու պարունակում է կոնկրետ անձին գույք կամ իրավունք ապագայում անհատույց հանձնելու կամ նրան գույքային պարտականությունից ազատելու մասին պարզ արտահայտված ցանկություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված իրավադրույթների մեկնաբանությանը՝ մասնավորապես նշելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է նվիրատվության պայմանագրի երկու տեսակ՝ ռեալ, երբ պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը (պահանջը) հանձնելու կամ գույքային պարտավորությունից ազատելու պահից, և կոնսենսուալ, երբ մեկ կողմը (նվիրատուն) պարտավորվում է մյուս կողմին (նվիրառուին) հանձնել նվերն ապագայում: Այսինքն՝ նվիրատվության պայմանագրի կնքման պահը կարող է չհամընկնել այդ պայմանագրով տրամադրվող գույքի նկատմամբ իրավունքի փոխանցման հետ (*տե՛ս, Արարապ Արշակյանն ընդդեմ Կարինե Տոնոյանի թիվ ԵՄԴ/0250/0212 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը հարկ է համարում հավելել, որ նվիրատվության խոստումը միակողմանի պայմանագիր է, որի դեպքում առաջանում է պարտավորական իրավահարաբերություն, և որի բովանդակությունն են կազմում՝ մի կողմից նվիրատուի պարտականությունը՝ ապագայում ավելացնել նվիրառուի գույքն իր գույքի նվազման հաշվին, և մյուս կողմից՝ գույքը նվիրատուից պահանջելու՝ նվիրառուի իրավունքը: Նվիրատվության կոնսենսուալ պայմանագիրը՝ նվիրատվության խոստումը, պահանջում է ոչ միայն դրա պարտադիր գրավոր ձևի պահպանում, այլ նաև դրանում պետք է ձևակերպված լինի ապագայում

Նվիրատվությունն իրականացնելու պարզ արտահայտված ցանկությունը, այսինքն՝ նվիրատվության խոստումը պետք է ձևակերպված լինի այնպես, որ դրանից հստակ երևա անձի՝ գույքը նվիրատվության եղանակով օտարելու մտադրությունը: Ի թիվս վերոգրյալի՝ նվիրատվության խոստումը պետք է նշում պարունակի նվիրատուի, ինչպես նաև նվիրատվության կոնկրետ առարկայի վերաբերյալ: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նվիրատվություն իրականացնելու պարզ արտահայտված ցանկությունը, նվիրատվության կոնկրետ առարկան և նվիրատուն՝ նվիրատվության կոնսենսուսով պայմանագրի՝ նվիրատվության խոստումի էական պայմաններն են:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 16.03.2011 թվականին ՀՀ «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից վավերացված թիվ 1396 լիազորագրով Ռադմիլա Մակարյանը լիազորել է Գոռ Կորյունի Մաթևոսյանին՝ լինելու իր ներկայացուցիչը համապատասխան մարմիններում, զբաղվելու 11.10.2010 թվականին մահացած իր հոր՝ Սարգիս Մակարյանի ժառանգության ընդունման ձևակերպման հարցերով, հետագայում ժառանգական գույքի՝ Երևան, Նորքի 3-րդ մ/շ, Քոչարյան փողոցի 6-րդ շենքի թիվ 50 բնակարանը, բազմանակարան շենքի զբաղեցրած հողամասի համապատասխան բաժնեմասը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված շենքի բնակարանների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքում իր բաժնեմասը նվիրելու Մանիկ Խաչատրյանին: Բացի այդ, Մանիկ Խաչատրյանի, Ռադմիլա Մակարյանի և Գոռ Մաթևոսյանի միջև 17.03.2011 թվականին կնքվել է «Իրավաբանական ծառայություն մատուցելու կողմերի փոխադարձ իրավունքների և պարտականությունների եռակողմ պայմանագիրը»: Նշված պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ Ռադմիլա Մակարյանը, միաժամանակ հանդես գալով քրոջ՝ Լիանա Սարգսի Մակարյանի կողմից լիազորված անձ, պարտավորվել է 10-օրյա ժամկետում ներկայացնել քրոջ կողմից նոտարական կարգով տրված հայտարարությունը՝ ժառանգությունից իր օգտին հրաժարվելու մասին: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ Ռադմիլա Մակարյանը պարտավորվել է Սարգիս Մակարյանի ժառանգական զանգվածն ընդունելուց հետո ժառանգական զանգվածում ներառված Երևանի Նոր Նորք համայնքի 3-րդ զանգված, Քոչարյան 6-րդ շենքի թիվ 50 բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Մանիկ Խաչատրյանին:

Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ հայցվորը, որպես անշարժ գույքի նվիրատվության խոստման ծագման հիմքեր, վկայակոչել է Ռադմիլա Մակարյանի՝ Գոռ Մաթևոսյանին տված լիազորագրերը, Լիանա Մակարյանի՝ Ռադմիլա Մակարյանին տված լիազորագրերը, նոտարական վավերացում և պետական գրանցում չստացած պայմանագիրը, որոնք, թեև իրենց բովանդակությամբ հաստատում են, որ պատասխանող Ռադմիլա Մակարյանը վիճելի անշարժ գույքը նվիրելու խոստում է տվել, այնուամենայնիվ, չեն կարող հանդիսանալ անշարժ գույքի նվիրատվության խոստում պարունակող պայմանագիր, քանի որ անշարժ գույքի նվիրատվության խոստման պարտավորությունը կարող է ծագել բացառապես նոտարական վավերացում ստացած նվիրատվության պայմանագրով, որը կնքված է համարվում դրանից բխող իրավունքի պետական գրանցման պահից:

Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի վերը նշված դիրքորոշման հետ, գտել է, որ Դատարանը սույն վեճին վերաբերելի և թույլատրելի բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ և պատշաճ գնահատմամբ, իրավահարաբերությանը վերաբերելի օրենքների կիրառմամբ կայացրել է օրինական և հիմնավորված վճիռ:

Մինչդեռ նվիրատվության խոստման վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով 16.03.2011 թվականին ՀՀ «Նոր Նորք» նոտարական

տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից վավերացված թիվ 1396 լիազորագրին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն իր մեջ պարունակում է նվիրատվության խոստման բոլոր էական պայմանները: Այսպես, լիազորագրում նշված է նվիրատվության կոնկրետ առարկան՝ Երևանի Նոր Նորք համայնքի 3-րդ գանգված, Քոչարյան 6-րդ շենքի թիվ 50 բնակարանը, բազմանակարան շենքի զբաղեցրած հողամասի համապատասխան բաժնեմասը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված շենքի բնակարանների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքում իր բաժնեմասը, նշված է նվիրատուն՝ Մանիկ Խաչատրյանը: Նվիրատվություն իրականացնելու պարզ ցանկությունը նույնպես արտահայտված է լիազորագրով, քանի որ դրանով նվիրատուն Գոռ Մաթևոսյանին լիազորել է ժառանգական գանգվածը ստանալուց և համապատասխան գրանցումը կատարելուց հետո գույքի իր բաժնեմասը նվիրատվության եղանակով օտարել Մանիկ Խաչատրյանին:

Մանս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 16.03.2011 թվականին ՀՀ «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից վավերացված թիվ 1396 լիազորագիրը պետք է դիտարկել որպես նվիրատվության խոստման միակողմանի պայմանագիր, քանի որ դրանում առերևույթ առկա են նվիրատվության խոստման էական պայմանները, տրված է պատշաճ ձևով, վավերացված է նոտարի կողմից:

2) Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն դիրքորոշմանը, որ նվիրատվության խոստման պարտավորությունը կարող է ծագել բացառապես նոտարական վավերացում ստացած նվիրատվության պայմանագրով, որը կնքված է համարվում դրանից բխող իրավունքի պետական գրանցման պահից, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ իրավունքի պետական գրանցման պահից տեղի է ունենում անշարժ գույքի նկատմամբ իրավունքի փոխանցում նվիրատուից նվիրատուին, իսկ նվիրատվության պայմանագրի (նվիրատվության խոստումի) կնքման պահը կարող է չհամընկնել այդ պայմանագրով տրամադրվող գույքի նկատմամբ իրավունքի փոխանցման հետ, քանի որ նվիրատվության խոստման էությունը կայանում է հենց նրանում, որ նվիրատվության բուն գործարքը կնքվում է ապագայում, ընդ որում, նվիրատվության խոստումը, որպես ապագայում կատարվելիք գործարքի խոստում, կարող է կնքվել նաև հետաձգվող պայմանով: Մասնավորապես՝ նվիրատվության պայմանագրի կնքումը կարող է կախվածության մեջ դրվել նվիրատուի կողմից որոշակի գործողություններ կատարելու հետ: Մինչդեռ նվիրատուի՝ գույքը նվիրատուից պահանջելու իրավունքը ծագում է նվիրատվության խոստումից և/կամ դրանում նշված պայմանների վրա հասնելուն պես՝ անկախ գույքի նկատմամբ նվիրատվության պայմանագրից բխող իրավունքի պետական գրանցում կատարելու հանգամանքից:

3) Անդրադառնալով բողոքի այն փաստարկին, որ Ռ-սոֆիլա Մակարյանն ունեցել է քրոջ՝ Լիաննա Մակարյանի կողմից տրված լիազորագիր՝ ժառանգությունն ընդունելու, ժառանգությունից հետո գույքն ըստ հայեցողության տնօրինելու նպատակով, սակայն չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և Լիաննա Մակարյանի բաժնեմասը ևս չի նվիրել Մանիկ Խաչատրյանին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի այս փաստարկը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ)

օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտավորությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքով նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

Վճարել դատարանն անդրադարձել է վերը նշված հոդվածների մեկնաբանությանը՝ եզրակացնելով, որ լիազորագիրն ըստ էության լինելով միակողմանի գործարք՝ լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը): Ընդ որում, միայն լիազորագրով ստանձնած հանձնարարությունը կատարված լինելու դեպքում է պարտավորությունը դիտվում պատշաճ կատարված, իսկ պարտավորությունը՝ դադարած (*դե՛ս, Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ ԼԴ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Վերոնշյալի յուսի ներքո անդրադառնալով բողոք բերած անձի փաստարկին՝ Վճարել դատարանն արձանագրում է, որ Ռադմիլա Մակարյանին ընձեռված լիազորությունների շրջանակում վերջինս իրավունք չի ունեցել քրոջ՝ Լիանա Մակարյանի անունից ժառանգությունն ընդունելու հետ կապված գործողություններից բացի այլ գործողություններ կատարել, քանի որ առկա է եղել Լիանա Մակարյանի կամքը՝ ընդունել ժառանգությունը, իսկ իր բաժնեմասն օտարելու համար Լիանա Մակարյանը Ռադմիլա Մակարյանին չի լիազորել, հետևաբար Ռադմիլա Մակարյանը նման իրավասությամբ օժտված չի եղել և չէր կարող իրեն չպատկանող գույքի մասով պարտավորություններ ստանձնել:

Այսպիսով, սույն վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճարել դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2013 թվականի որոշումը՝ Ռադմիլա Մակարյանի կողմից Մանիկ Խաչատրյանին Երևան քաղաքի Քոչարյան 6-րդ շենքի թիվ 50 բնակարանի վերաբերյալ կատարված նվիրատվության խոստումը նվիրատվության պայմանագիր համարելու և Մանիկ Խաչատրյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Քոչարյան 6-րդ շենքի թիվ 50 բնակարանի նկատմամբ ճանաչելու պահանջների մասով և այդ մասով այն փոփոխել՝ հայցը բավարարել մասնակիորեն՝ Ռադմիլա Մակարյանի կողմից Մանիկ Խաչատրյանին Երևան քաղաքի Քոչարյան 6-րդ շենքի թիվ 50 բնակարանի 1/2 մասի վերաբերյալ կատարված նվիրատվության խոստումը համարել նվիրատվության պայմանագիր և ճանաչել Մանիկ Խաչատրյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Քոչարյան 6-րդ շենքի թիվ 50 բնակարանի 1/2 մասի նկատմամբ:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Ռադմիլա Մակարյանից հօգուտ Մանիկ Խաչատրյանի բռնագանձել 8.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ-1/1159/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ-1/1159/02/13
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Կ. Հակոբյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Էջմիածնի քաղաքապետարանի վճռաբեկ
բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.07.2014 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Էջմիածնի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ
Վյաչեսլավ Ավետյանի՝ հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է լուծել իր և Վյաչեսլավ
Ավետյանի միջև 02.03.2005 թվականին կնքված հողամասի վարձակալության
պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ.
Մելքոնյան) (այսուհետ՝ Դատարան) 14.05.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
17.07.2014 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 14.05.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վյաչեսլավ Ավետյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 408-րդ, 417-րդ, 423-րդ և 424-րդ հոդվածները, 466-րդ հոդվածի 2-րդ կետը և 468-րդ հոդվածի 2-րդ կետը, 612-րդ հոդվածը, 616-րդ հոդվածի 1-ին կետը, 622-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետը, նույն հոդվածի 2-րդ պարբերությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վյաչեսլավ Ավետյանի կողմից թույլ են տրվել վարձավճարի վճարման ժամկետի էական և բազմակի խախտումներ:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Պայմանագրի 20.1-րդ կետը, որի համաձայն՝ վարձատրի կողմից պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը երեք ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը:

Վյաչեսլավ Ավետյանը խախտել է Պայմանագրի 11-րդ կետի պահանջները և սկսած 2006 թվականից չի կատարել վարձավճարները վճարելու իր պարտավորությունը, որի պայմաններում Պայմանագրի 20.1-րդ կետով վարձատրին իրավունք է վերապահվել պահանջելու պայմանագրի վաղաժամկետ լուծում:

Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել նաև Պայմանագրի 5.1-րդ և 11-րդ կետերը, ինչպես նաև անտեսել է, որ պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով կամ պայմանագրով նախատեսված սանկցիան կիրառելը չի ազատում պարտավորությունը բնեղենով կատարելուց:

Վերաքննիչ դատարանի 17.07.2014 թվականի որոշումը հակասում է ՀՀ Արարտի մարզի Պարույր Սևակի գյուղական համայնքն ընդդեմ «Մաքս ֆրոյթ» ՍՊԸ-ի թիվ 3-1785(ՏԴ)/2006 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի որոշմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.07.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Ինչպես Դատարանի 14.05.2014 թվականի վճիռը, այնպես էլ Վերաքննիչ դատարանի 17.07.2014 թվականի որոշումն օրինական են և հիմնավորված, քանի որ թույլ չի տրվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Քաղաքապետարանն անտեսել է, որ իր կողմից վարձավճարները վճարվել են ամբողջությամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Էջմիածնի քաղաքային համայնքի ղեկավարի, և Վյաչեսլավ Ավետյանի միջև 02.03.2005 թվականին կնքվել է Պայմանագիրը, որի համաձայն՝ համապատասխան վարձավճարի դիմաց Վյաչեսլավ Ավետյանի տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնվել ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Չարենցի փողոցի թիվ 8ա/1 տանը կից 48քմ մակերեսով հողամասը: Պայմանագրից բխող

իրավունքը գրանցվել է, որի հիման վրա Վլաչեսլավ Ավետյանին 05.03.2005 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1728091 վկայականը (հատոր 1-ին, գ.թ. 7, 8, 46-50)։

2) Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ հողամասի տարեկան վարձավճարը կազմել է տվյալ հողամասի կադաստրային արժեքի 10 տոկոսը՝ 3.341 ՀՀ դրամ, իսկ 11-րդ կետի համաձայն՝ վարձակալական ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով՝ տարվա օրացուցային եռամսյակների համաձայն՝ ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը։ Պայմանագրի 20.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձատուի կողմից, եթե վարձակալը երեք ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը (հատոր 1-ին, գ.թ. 7, 8)։

3) Վլաչեսլավ Ավետյանը 2006 թվականի դեկտեմբեր ամսից հետո վարձավճար չի մուծել (հատոր 1-ին, գ.թ. 14)։

4) Քաղաքապետարանը 16.12.2013 թվականի թիվ 1593 գրությամբ Վլաչեսլավ Ավետյանին առաջարկել է 7-օրյա ժամկետում ներկայանալ Քաղաքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժին 36.393 ՀՀ դրամի չափով առաջացած վարձավճարի պարտքը մարելու և Պայմանագիրը լուծելու համար։ Նշված գրությունն ստանալով 18.12.2013 թվականին՝ Վլաչեսլավ Ավետյանը 20.12.2013 թվականին 36.400 ՀՀ դրամ է մուտքագրել Էջմիածնի տեղական գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին, իսկ Պայմանագիրը լուծելու Քաղաքապետարանի առաջարկի վերաբերյալ ինչպես չի ուղարկել մերժում, այնպես էլ չի ներկայացրել պատասխան (հատոր 1-ին, գ.թ. 12, 13, 51)։

5) Քաղաքապետարանը 27.12.2013 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Վլաչեսլավ Ավետյանի՝ Պայմանագիրը լուծելու պահանջի մասին (հատոր 1-ին, գ.թ. 4, 5)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետի և 622-րդ հոդվածի 2-րդ պարբերության միատեսակ կիրառության համար։

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետը սխալ կիրառելու, նույն հոդվածի 2-րդ պարբերությունը չկիրառելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով։

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք վարձակալության պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո վարձավճարի վճարումն ուշացնելու պարագայում պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջը կարող է դատարանով մերժվել այն պատճառաբանությամբ, որ հետագայում վարձակալը մուծել է չվճարված վարձավճարը։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան

նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսուրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ վարձակալության պայմանագրով կարող են սահմանվել վարձատուի պահանջով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու այլ հիմքեր:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պայմանագրի լուծումը հնարավոր է ոչ միայն կողմերի համաձայնությամբ, այլ նաև օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերից մեկի պահանջով դատարանի վճռի հիման վրա: Օրենսդրական նման իրավակարգավորումն իրավունք է վերապահում կողմերին վարձակալության պայմանագրում նախատեսել վարձատուի պահանջով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու այլ հիմքեր: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պայմանագրի կողմը կարող է պայմանագրի լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն այն դեպքում, երբ պայմանագրի լուծման առաջարկ է ներկայացրել պայմանագրի մյուս կողմին և դրա վերաբերյալ ստացել է մերժում կամ առաջարկում նշված ժամկետում, իսկ այդ ժամկետի բացակայության դեպքում՝ երեսուրյա ժամկետում պատասխան չի ստացել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Էջմիածնի քաղաքային համայնքի ղեկավարի, և Վյաչեսլավ Ավետյանի միջև 02.03.2005 թվականին կնքվել է Պայմանագիրը, որով համապատասխան վարձավճարի դիմաց Վյաչեսլավ Ավետյանի տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնվել ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքի Չարենցի փողոցի թիվ 8ա/1 տանը կից 48քմ մակերեսով հողամասը: Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ հողամասի տարեկան վարձավճարը կազմել է տվյալ հողամասի կադաստրային արժեքի 10 տոկոսը՝ 3.341 ՀՀ դրամ, իսկ 11-րդ կետի համաձայն՝ վարձակալական ընթացիկ վճարումները վարձակալի կողմից պետք է մուծվեն հավասար չափերով՝ տարվա օրացուցային եռամսյակների համաձայն՝ ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Միաժամանակ Պայմանագրի կողմերը Պայմանագրի 20.1-րդ կետով նախատեսել են վարձատուի նախաձեռնությամբ վարձակալության հարաբերությունները վաղաժամկետ դադարեցնելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված հիմքերից տարբերվող այլ հիմք, այն է՝ Պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձատուի կողմից, եթե վարձակալը երեք ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ վարձակալը պարտավորվել է վարձակալական ընթացիկ վճարումները կատարել հավասար չափերով՝ տարվա օրացուցային եռամսյակների համաձայն՝ ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը, մինչդեռ գործում առկա վճարների, հաշվարկների և գոյացած պարտքերի վերաբերյալ 16.12.2013 թվականի դրությամբ առկա տեղեկանքի ուսումնասիրությունից հետևում է, որ Վյաչեսլավ Ավետյանը 2006 թվականի դեկտեմբեր ամսից հետո

վարձավճար չի մուծել: Քաղաքապետարանը 16.12.2013 թվականի թիվ 1593 գրությամբ Վյաչեսլավ Ավետյանին առաջարկել է 7-օրյա ժամկետում ներկայանալ Քաղաքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժին 36.393 ՀՀ դրամի չափով առաջացած վարձավճարի պարտքը մարելու և Պայմանագիրը լուծելու համար: Նշված գրությունն ստանալով 18.12.2013 թվականին՝ Վյաչեսլավ Ավետյանը 20.12.2013 թվականին 36.400 ՀՀ դրամ է մուտքագրել Էջմիածնի տեղական գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին, որպիսի փաստը հաստատվում է 20.12.2013 թվականի թիվ 131220064215017 անդորրագրով, իսկ Պայմանագիրը լուծելու Քաղաքապետարանի առաջարկի վերաբերյալ ինչպես չի ուղարկել մերժում, այնպես էլ չի ներկայացրել պատասխան: Առաջարկում նշված ժամկետը լրանալուց հետո՝ 27.12.2013 թվականին, Քաղաքապետարանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Վյաչեսլավ Ավետյանի՝ Պայմանագիրը լուծելու պահանջի մասին:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունները, որ «Վյաչեսլավ Ավետյանը պատշաճ կերպով կատարել է Պայմանագրով ստանձնած՝ վարձավճարները վճարելու իր պարտավորությունը, որը հաստատվում է նրա կողմից Դատարան ներկայացված 20.12.2013 թվականի թիվ 131220064215017 անդորրագրով, որով վերջինս Քաղաքապետարանի հաշվեհամարին վճարել է 36.400 ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրով վարձավճարների գումար» և «նման պայմաններում, երբ Վյաչեսլավ Ավետյանը կատարել է վարձակալության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը, իսկ Քաղաքապետարանը դատարանին որևէ ապացույց չի ներկայացրել Վյաչեսլավ Ավետյանի կողմից վարձակալության պայմանագրի էական խախտումների վերաբերյալ, դատարանը գտնում է, որ Վյաչեսլավ Ավետյանի միջև 02.03.2005 թվականին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու հիմքեր չկան և հայցը ենթակա է մերժման»:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 14.05.2014 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «20.12.2013 թվականին, այն է՝ մինչև Քաղաքապետարանի կողմից Դատարան դիմելը, Վյաչեսլավ Ավետյանը պատշաճ կերպով կատարել է Պայմանագրով ստանձնած՝ վարձավճարները վճարելու իր պարտավորությունը»:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունը և հիմք ընդունելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Քաղաքապետարանը որպես Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի իրավական հիմնավորում վկայակոչել է Պայմանագրի 20.1-րդ կետը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետը, իսկ որպես փաստական հիմք՝ վարձավճարի մուծումը վարձակալի կողմից բազմակի ուշացնելու փաստը: Հետևաբար, ստորադաս դատարանները պետք է քննության առարկա դարձնեին Պայմանագիրը լուծելու՝ վերը նշված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու հարցը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Պայմանագրի 20.1-րդ կետի մեկնաբանությունից հետևում է, որ Պայմանագրի լուծման համար բավարար է վարձակալի կողմից վարձավճարը երեք ամիս ուշացնելու խախտման փաստի արձանագրումը՝ անկախ այդ պարտավորությունը հետագայում կատարվելու հանգամանքից: Նմանատիպ իրավական դիրքորոշում Վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև նույնանման փաստական հանգամանքներ ունեցող ՀՀ Արարատի մարզի Պարույր Սևակի գյուղական համայնքն ընդդեմ «Մաքս ֆրոյթ» ՍՊԸ-ի թիվ 3-1785(ՏԴ)/2006 քաղաքացիական գործով 26.10.2006 թվականին կայացված որոշմամբ: Մինչդեռ Վերաքննիչ

դատարանը, անտեսելով կողմերի միջև առկա պայմանագրային կարգավորումը, և կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետը, սխալ եզրահանգման է եկել Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հիմքի բացակայության վերաբերյալ այն դեպքում, երբ գործով հիմնավորվում է վարձակալի կողմից վարձավճարի վճարումը երեք ամսից ավել ուշացնելու փաստը, ինչը բավարար է Պայմանագիրը վարձատուի պահանջով դատարանի վճռով լուծելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետը, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետը, չի կիրառել նույն հոդվածի 2-րդ պարբերությունը:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.07.2014 թվականի որոշումը և փոփոխել այն. Էջմիածնի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Վլաչեսլավ Ավետյանի՝ հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու պահանջի մասին, բավարարել՝ լուծել Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Էջմիածնի քաղաքային համայնքի ղեկավարի, և Վլաչեսլավ Ավետյանի միջև 02.03.2005

թվականին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը:

2. Վյաչեսլավ Ավետյանից հոգուտ Էջմիածնի քաղաքապետարանի բնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրք, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրք, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0976/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Մատինյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/0976/02/13**
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությանը
մասնակցությանը դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄԱՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Սամվել Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Սամվել
Մարտիրոսյանի հայցի ընդդեմ Գեղամ Մելիքսեթյանի՝ գումարի բռնագանձման պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Մարտիրոսյանը պահանջել է Գեղամ Մելիք-
սեթյանից բռնագանձել 1.662.000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված
փաստաբանական գործունեության վճար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ
հոդվածով հաշվարկված բանկային տոկոսի գումարն առ 01.07.2013 թվականը՝ 115.400 ՀՀ
դրամ բռնագանձումը շարունակելով մինչև պարտավորության լրիվ կատարումը, ինչպես
նաև պետական տուրքի գումարը՝ 35.500 ՀՀ դրամ, ընդամենը՝ 1.813.000 ՀՀ դրամ:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավա-
տության դատարանի (դատավոր՝ Ն. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 14.11.2013
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
12.02.2014 թվականի որոշմամբ Սամվել Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 14.11.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Մարտիրոսյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գեղամ Մելիքսեթյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ, 779-րդ և 780-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պատասխանողի՝ գումար վճարելու պարտավորությունը բխում է ոչ թե 31.01.2012 թվականին կնքված «Փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր), այլ թիվ ԵԱՆԴ/1132/02/10 և թիվ ԵԱՆԴ/1506/02/10 քաղաքացիական գործերով վերջինիս իրավաբանական օգնություն ցույց տալու հանգամանքից: Ընդ որում, իր և պատասխանողի միջև որևէ համաձայնություն չի կայացվել՝ անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը պատշաճ չի հետազոտել 31.01.2012 թվականին կնքված Պայմանագիրը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Պայմանագրի 1-ին կետով կողմերը մատուցվելիք ծառայությունների շրջանակը նախատեսել են «ըստ անհրաժեշտության»:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Պայմանագրի 2-րդ կետը, մասնավորապես՝ հաշվի չի առել այն հանգամանքը, որ Պայմանագրի վկայակոչված կետը շարադրելիս կողմերը նկատի են ունեցել, որ նախորդ օրը կատարողական թերթն արդեն իսկ ներկայացված է եղել հարկադիր կատարման, և համոզված են եղել, որ Տիգրան Հարությունյանի գումարը ստանալու այլ եղանակ, քան Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով, առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Ինչպես Դատարանը այնպես էլ Վերաքննիչ դատարանը գործում առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատելով, դրանք համադրելով մյուս ապացույցների հետ՝ ճիշտ եզրակացության են հանգել, մասնավորապես՝ պայմանագրի կողմերն ունեցել են իրավաբանական կրթություն և պարզ ցանկությամբ արտահայտել են իրենց կամքը պայմանագրով նախատեսված պայմաններով: Բացի այդ, պետք է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանն օբյեկտիվորեն հանգել է եզրակացության առ այն, որ փաստաբանի գործողությունների կատարումից հետո Գեղամ Մելիքսեթյանի համար սահմանվել են պարտավորություններ՝ վճարել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից (այսուհետ՝ Ծառայություն) Տիգրան Հարությունյանի անվամբ ստացված գումարի 3 տոկոսը, իսկ նման փաստ սույն գործով առկա չէ:

Նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 2-րդ կետը սույն գործով կիրառելի չէ, քանի որ սույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն են տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, այն է՝ մատուցել ծառայություն և վճարել կատարված աշխատանքի համար:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի ուսումնասիրել է պայմանագիրը, որպիսի պայմաններում վճարել բողոքին պատասխան ներկայացրած անձը խնդրել է մերժել վճարել բողոքը՝ ստորադաս դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սամվել Մարտիրոսյանի (այսուհետ՝ ներկայացուցիչ) և Գեղամ Մելիքսեթյանի (այսուհետ՝ վստահորդ) միջև 31.01.2012 թվականին կնքվել է «Փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին» պայմանագիր, համաձայն որի՝ ներկայացուցիչը պարտավորվում է հօգուտ վստահորդի իրականացնել փաստաբանական գործունեություն, այն է՝ հանդես գալ դատարանում Տիգրան Հարությունյանի շահերի պաշտպանությամբ և ավարտել գործի հետ կապված գործողությունները, այդ թվում՝ Ծառայությունում և կադաստրում, իսկ վստահորդը պարտավորվել է կատարված փաստաբանական ծառայության դիմաց վճարել Ծառայությունից Տիգրան Հարությունյանի անվամբ ստացված գումարի 3 տոկոսը (հատոր 1-ին, գ.թ. 27):

2) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.01.2012 թվականին տրվել է թիվ ԵԱՆԳ/1132/02/10 կատարողական թերթը, համաձայն որի՝ Արտակ Կոստանդյանը պարտավորվել է պայմանագրով ստացած 100.000.000 ՀՀ դրամը և 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը վերադարձնել Տիգրան Հարությունյանին: Կատարողական թերթում որպես պահանջատեր նշված է Տիգրան Հարությունյանը, որպես վերջինիս ներկայացուցիչ՝ Սամվել Մարտիրոսյանը, իսկ որպես պարտապան՝ Արտակ Կոստանդյանը (հատոր 1-ին, գ.թ. 74):

3) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.01.2012 թվականին տրված թիվ ԵԱՆԳ/1132/02/10 կատարողական թերթը 30.01.2012 թվականին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ հարկադիր կատարման (հատոր 1-ին, գ.թ. 75):

4) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՆԳ/1506/02/10 վճռով հաստատվել է կողմերի միջև 03.10.2012 թվականին կնքված հաշտության համաձայնությունը, որով Տիգրան Հարությունյանն Արտակ Կոստանդյանին ներել է թիվ ԵԱՆԳ/1132/02/10 քաղաքացիական գործով կայացրած վերջնական դատական ակտով սահմանված 100 միլիոն ՀՀ դրամ և 10.000 ԱՄՆ դոլար պարտքը, պարտավորվել է հայցվորին վերադարձնել Երևան քաղաքի Ավանի Ծարվար փողոցի թիվ 141 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ բնակելի տունը և տնամերձ հողամասն իր ներքին հարդարանքով և կահավորմամբ (ինչ վիճակով, որ ստացել է հայցվորից) և համաձայնվել է կրել թիվ ԵԱՆԳ/1132/02/10 և թիվ ԵԱՆԳ/1506/02/10 գործերով իր շահերը ներկայացնող փաստաբանի վարձատրության ծախսը և թիվ ԵԱՆԳ/1132/02/10 գործով պետական տուրքի ծախսերը: Հաշտության համաձայնագիրը ստորագրել է հայցվոր Արտակ Կոստանդյանը, պատասխանողի համար և նրա անունից՝ Գեղամ Մելիքսեթյանը, նաև ներկայացուցիչ Սամվել Մարտիրոսյանը:

Վճիռն օրինական ուժի մեջ մտած է հայտարարվել հրապարակման պահից: Նշված վճիռն հիման վրա 09.10.2012 թվականին տրամադրվել է թիվ ԵԱՆԳ-1506/02/10 կատարողական թերթը (հատոր 1-ին, գ.թ. 7-10):

5) Գեղամ Մելիքսեթյանի 22.11.2012 թվականի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հետ է վերադարձվել թիվ ԵԱՆԳ-1132/02/10 գործով կատարողական թերթը, և հարուցված կատարողական վարույթն ավարտվել է (հատոր 1-ին, գ.թ. 97):

6) Գեղամ Մելիքսեթյանը որևէ առարկություն չի ներկայացրել Սամվել Մարտիրոսյանի կողմից պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ:

7) Սույն գործով կողմերը չեն վիճարկել փաստն առ այն, որ Գեղամ Մելիքսեթյանը Տիգրան Հարությունյանի անունից փաստաբան Սամվել Մարտիրոսյանին մատուցված ծառայությունների համար վճարել է 300 ԱՄՆ դոլար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ փաստաբանի և վստահորդի միջև պայմանագրային հարաբերությունների կարգավորման այն դեպքերին, երբ վստահորդի՝ փաստաբանին վարձատրելու պարտականությունը ծագում է որոշակի պայմանի իրականացման արդյունքում՝ *միաժամանակ վերահասարակելով պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ նախկինում արդարադատության կողմից դիրքորոշումը*:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի և վստահորդի միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս ...: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ ...:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (հանձնարարողի) անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ...: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագիրը կնքվում է այն ժամկետի նշումով, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից կամ առանց դրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 783-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանձնարարողը պարտավոր է հանձնակատարին վարձատրել, եթե դա նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով կամ հանձնարարության պայմանագրով ...:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հանձնարարության պայմանագրի ուժով հանձնակատարը հանձնարարողի անունից և նրա հաշվին պարտավոր

է կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, պայմանագրում կարող է նշվել նաև այն ժամկետը, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից: Միաժամանակ, ինչպես ցանկացած պայմանագիր, այնպես էլ հանձնարարության պայմանագիր կնքելիս կողմերը՝ հանձնակատարը և հանձնարարողը, չփոխելով օրենսգրքի իմպերատիվ դրույթներով ամրագրված պայմանները, ազատ են որոշելու պայմանագրի պայմաններն իրենց հայեցողությամբ, այդ թվում նաև՝ հանձնարարողի կողմից հանձնակատարին վարձատրելու չափը և վճարման ժամկետը (տե՛ս, «Բրենդ Լիդեր» ՀԶ ՍՊԸ-ն ընդդեմ «Օլիմպուրդը» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2043/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճարբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճարբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ փաստաբանը և վստահորդը սեփական հայեցողությամբ ոչ միայն կարող են սահմանել փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը, այլև վճարման պարտավորության ծագման պահը կարող են պայմանավորել որոշակի պայմանի իրականացման փաստով (օրինակ՝ գործի բարենպաստ ելքով, գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքով կամ այդ դատական ակտի կատարմամբ): Վճարբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանի և վստահորդի հարաբերությունների պայմանագրային կարգավորումը կրում է համանման բնույթ, և կողմերի միջև ծագել է վեճ փաստաբանական գործունեության վճարի չվճարման կապակցությամբ, դատարանները պարտավոր են նախ և առաջ պարզել.

պայմանագրով նախատեսված համապատասխան պայմանն իրականում ինչ է ենթադրում.

1) արդո՞ք այդ պայմանի իրականացումը որևէ կերպ պայմանավորված է պայմանագրի կողմի կամ կողմերի վարքագծով.

2) պայմանը փաստացի իրականացել է, թե՛ ոչ.

3) եթե ոչ, արդո՞ք կողմերից որևէ մեկն իր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) նպաստել է պայմանի չիրականացմանը:

Վճարբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերը նշված հարցադրումներին անդրադառնալիս դատարանները պետք է ղեկավարվեն պայմանագրերի մեկնաբանման կանոններով:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները, ներառյալ՝ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Վճարբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին: Վճարբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի

մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը՝ կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (յո՛ւն, «Կարապ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էզնա Շին» ՍՊԸ-ի թիվ ԾԴ-1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանձին դեպքերում, գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններով պայմանավորված, պայմանագրի որևէ պայմանի մեկնաբանությունն իրականացնելիս չի բացառվում նաև վերը նշված կանոնների միաժամանակյա կիրառումը: Մասնավորապես՝ իրավակիրառ պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ պայմանագրի համապատասխան պայմանը թեև դրանում շարադրված բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ հստակ է, սակայն կողմերի կամ կողմի իրական կամքին չի համապատասխանում: Նման իրավիճակում միայն պայմանագրի մեկնաբանման տառացի կանոնը կիրառելով ոչ միայն կարող է սահմանափակվել շահագրգիռ անձի՝ գործի լրիվ և բազմակողմանի քննության իրավունքը, այլև պայմանագրի մեկնաբանման նպատակը կարող է ընդհանրապես չիրականացվել: Մինչդեռ, պայմանագրի մեկնաբանումն ինքնանպատակ գործընթաց չէ և նպատակաուղղված է կողմերի իրական կամքի բացահայտմանը՝ որպես հիմք ունենալով քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ բարեխղճության սկզբունքը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ առաջանում է կամքի և կամահայտության համապատասխանությունը պարզելու անհրաժեշտություն, պայմանագրի համապատասխան պայմանի մեկնաբանումը պետք է իրականացնել՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները. այն դեպքերում, երբ պայմանագիրը կնքած կողմի կամքը չի համապատասխանում կամահայտությանը, և պայմանագրի մյուս կողմը գիտեր կամ կարող էր իմանալ այդ մասին, պայմանագրի համապատասխան պայմանի մեկնաբանումը պետք է իրականացվի նաև կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Մինչդեռ այն դեպքում, երբ պայմանագիրը կնքած կողմի կամքը չի համապատասխանում կամահայտությանը, և պայմանագրի մյուս կողմը չգիտեր կամ չէր էլ կարող իմանալ այդ մասին (բարեխիղճ կողմ), պայմանագրի մեկնաբանումը պետք է իրականացվի վերը շարադրված ընդհանուր կանոններին համապատասխան: Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ ինչպես թիվ ԵԱԼԴ-1132/02/10, այնպես էլ թիվ ԵԱԼԴ-1506/02/10 քաղաքացիական գործերով դատական ակտի կատարումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով չի կատարվել և հոգուտ Տիգրան Հարությունյանի գումարի բռնագանձում չի իրականացվել, այսինքն՝ 31.01.2012 թվականի փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի էական պայմանը չի առաջացել, ինչն էլ պետք է հիմք հանդիսանար տվյալ գումարի երեք տոկոսը Գեղամ Մելիքսեթյանի կողմից Սամվել Մարտիրոսյանին վճարելու համար:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, հիմնավոր է համարել Դատարանի վերը շարադրված պատճառաբանությունները: Վերաքննիչ դատարանը միաժամանակ հավելել է, որ կիրառելի չէ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 709-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ ներկայացուցիչն աշխատանքը չի կատարել ողջ ծավալով (հանդես չի ելել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում և կադաստրում), հետևաբար Գեղամ Մելիքսեթյանի մոտ չի ծագել չկատարած աշխատանքի համար գումար վճարելու պարտավորությունը:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում վերլուծելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սամվել Մարտիրոսյանի և Գեղամ Մելիքսեթյանի միջև 31.01.2012 թվականին կնքվել է «Փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին» պայմանագիր, որով ներկայացուցիչը պարտավորվել է հոգուտ վստահորդի իրականացնել փաստաբանական գործունեություն, այն է՝ հանդես գալ դատարանում Տիգրան Հարությունյանի շահերի պաշտպանությամբ և ավարտել գործի հետ կապված գործողությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում և կադաստրում, իսկ վստահորդը պարտավորվել է կատարված փաստաբանական ծառայության դիմաց վճարել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից Տիգրան Հարությունյանի անվամբ ստացված գումարի 3 տոկոսը:

Վերը նշված պայմանագրային դրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերը, ըստ էության, փաստաբանական գործունեության վճարի վճարման պարտավորության ծագման պահը պայմանավորել են որոշակի պայմանի իրականացման, այն է՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն Տիգրան Հարությունյանի անվամբ գումար մուտքագրվելու փաստով: Սույն գործի փաստերի համաձայն՝ նշված պայմանն այդպես էլ չի իրականացվել, ինչը հիմք է տվել ստորադաս դատարաններին մերժել հայցվորի պահանջը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է գործի բազմակողմանի հետազոտության հարցին (*Կոնս, Շողիկ Հարիբյանն ընդդեմ Թամարա Վարդանյանի թիվ 3-558(ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը*) և քանի որ չի տեսնում որևէ հիմք փոխելու այդ դիրքորոշումը, ուստի սույն որոշմամբ այդ հարցին կրկին չի անդրադառնում, այլ հիմք ընդունելով իր դիրքորոշումը՝ արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները բազմակողմանի չեն հետազոտել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստաբանական գործունեության համար վճարելու՝ պայմանագրով նախատեսված պայմանը մեկնաբանելիս ստորադաս դատարանները չպետք է սահմանափակվելին այդ պայմանի տառացի մեկնաբանությամբ և պետք է պարզեին կողմերի իրական կամքը՝ հաշվի առնելով նաև մինչ «Փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին» պայմանագրի կնքումը և դրանից հետո կողմերի դրսևորած վարքագիծը: Ման անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ բխում է սույն գործի փաստերի առանձնահատկություններից:

Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվել են թիվ ԵԱԵԴ/1132/02/10 և թիվ ԵԱԵԴ/1506/02/10 քաղաքացիական գործերը: Երկու գործերով էլ որպես դատավարության կողմ մասնակցել է Տիգրան Հարությունյանը, իսկ վերջինիս շահերը դատարանում 14.09.2010 թվականին տրված լիազորագրի հիման վրա ներկայացրել է փաստաբան Սամվել Մարտիրոսյանը: Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.01.2012 թվականին տրվել է թիվ ԵԱԵԴ/1132/02/10 կատարողական թերթը, համաձայն

որի՝ Արտակ Կոստանդյանը պարտավորվել է պայմանագրով ստացած 100.000.000 ՀՀ դրամ և 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարները վերադարձնել Տիգրան Հարությունյանին: Կատարողական թերթում որպես պահանջատեր նշվել է Տիգրան Հարությունյանը, որպես վերջինիս ներկայացուցիչ՝ Սամվել Մարտիրոսյանը, իսկ որպես պարտապան՝ Արտակ Կոստանդյանը: Սույն գործով վիճելի պայմանը բովանդակող «Փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին» պայմանագիրը կնքվել է կատարողական թերթի տրամադրումից անմիջապես հետո՝ 31.01.2012 թվականին: Նշված կատարողական թերթը 30.01.2012 թվականին ներկայացվել է Ծառայություն՝ հարկադիր կատարման: Հարուցված կատարողական վարույթը, սակայն, ավարտվել է, քանի որ թիվ ԵԱՆԴ-1506/02/10 քաղաքացիական գործով կնքված հաշտության համաձայնությամբ Տիգրան Հարությունյանն Արտակ Կոստանդյանին ներել է թիվ ԵԱՆԴ-1132/02/10 քաղաքացիական գործով կայացրած վերջնական դատական ակտով սահմանված 100 միլիոն ՀՀ դրամ և 10.000 ԱՄՆ դոլար պարտքը և դիմում է ներկայացրել Ծառայություն՝ կատարողական թերթը վերադարձնելու համար:

Վերլուծելով սույն գործում առկա փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԱՆԴ-1506/02/10 քաղաքացիական գործով վեճը լուծվել է հաշտության համաձայնության կնքմամբ, հետևաբար անհրաժեշտ էր գնահատել, թե արդյոք այդ հաշտության համաձայնությունը հաստատող դատական ակտը գործին մասնակցող անձանց համար բարենպաստ դատական ակտ էր: Նշված դատական ակտը կատարվել է կամովին, ուստի դատական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտությունը բացակայել է: Ընդ որում, թիվ ԵԱՆԴ-1506/02/10 քաղաքացիական գործով կնքված հաշտության համաձայնությունը վերացրել է նաև թիվ ԵԱՆԴ-1132/02/10 կատարողական թերթի պահանջների կատարման անհրաժեշտությունը:

Վերը նշված փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն գումար մուտքագրվելու վերաբերյալ պայմանը ենթակա էր գնահատման կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Միաժամանակ պետք է պարզվեր նաև սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստն այն մասին, թե արդյոք պայմանագրի կողմերից որևէ մեկն իր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) օժանդակել է նշված պայմանի չիրականացմանը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը սոր քննության ուղարկելու համար՝ ապացույցները և գործի փաստերը վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո պարզելու և գնահատելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.04.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0426/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0426/02/13**

Նախագահող դատավոր՝ **Դ. Խաչատրյան**

Դատավորներ՝ **Ն. Տավարացյան**

Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ինեկորանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արա Խաչատրյանի ընդդեմ «Ինեկորանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Բանկ**)՝ վնասը հատուցելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արա Խաչատրյանը պահանջել է Բանկից հոգուտ իրեն բռնագանձել 805.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում, և 300.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ **Դատարան**) 03.07.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ վճռվել է Բանկից հոգուտ Արա Խաչատրյանի բռնագանձել 805.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում, և 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**) 30.10.2013 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.07.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արա Խաչատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 447-րդ, 912-րդ, 915-րդ և 916-րդ հոդվածները, կիրառել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 47-րդ, 48-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործի նյութերը, որի արդյունքում անտեսել է, որ քարտային գործարքների դեպքում հաշվում եղած դրամական միջոցները տնօրինվում են ոչ թե բանկին տրվող հաճախորդի կարգադրությամբ, այլ էլեկտրոնային միջոցներով, սարքերով կարգադրելիս դրանց համար ընդունելի գաղտնաբառով, որը հասու է միայն հաճախորդին: Էլեկտրոնային միջոցները և դրանք սպասարկող պրոցեսինգային համակարգը, ստուգելով գործարքում կիրառվող քարտի տվյալները, համարում է գործարքը պատշաճ և բանկին տալիս է անվիճարկելի, պարտադիր կատարման հրահանգ՝ հաստատված գործարքի գումարի փոխանցման մասին: Քննարկվող բողոք գործարքների կատարման պահին բանկը որևէ կասկած չի ունեցել այլ անձի կողմից Արա Խաչատրյանի քարտի տվյալներով և գաղտնաբառով գործարք կատարելու մասին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արա Խաչատրյանը, ստորագրելով 16.04.2012 թվականին կնքված թիվ MC11/01587 վճարային քարտի տրամադրման և սպասարկման պայմանագիրը, իրազեկվել է և տվել է իր համաձայնությունը պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող «Վճարային քարտերով ծառայությունների մատուցման պայմաններ և կանոններ»-ին (այսուհետ՝ Կանոններ), որի 3.2.2. կետի համաձայն՝ քարտապանը պարտավոր է չտրամադրել իր քարտը և/կամ PIN կոդը որևէ այլ անձի օգտագործման նպատակով, PIN կոդը որևէ այլ անձի հայտնի դառնալու կասկածի դեպքում անմիջապես այդ մասին տեղյակ պահել բանկին, իսկ քարտով այլ անձի կողմից գործարք կատարելը կամ կատարման փորձը համարվում է քարտի անօրինական օգտագործում: Նույն Կանոնների 5.6. կետի համաձայն՝ բանկը պատասխանատվություն չի կրում այն վնասի համար, որը հասցվել է քարտապանին քարտը կորցնելու, հափշտակության կամ մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման և քարտապանի կողմից քարտի գործողությունը կասեցնելու միջև ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև քարտապանի՝ նշված Կանոնների պահանջները չկատարելու հետևանքով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գործարքները ճիշտ ծածկագրով կատարված լինելու մասին Դատարանին ներկայացված ապացույցները և Արա Խաչատրյանի պնդումը, որ այդ գործարքները չեն կատարվել իր կողմից, արդեն իսկ բավարար և պատշաճ ապացույց են քարտը երրորդ անձանց կողմից անօրինական օգտագործված լինելու մասին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անօրինական գործարքների մասին Արա Խաչատրյանը Բանկին տեղեկացրել է ոչ թե անմիջապես, այլ բողոք գործարքների ավարտից հետո՝ 13.07.2012 թվականին՝ ժամը 11:35-ին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ քարտապանի կողմից քարտի վերաբերյալ իրեն հայտնի գաղտնի տեղեկատվությունը կամ քարտն այլ անձանց վստահելը

գործնականում անվերահսկելի է Բանկի կողմից: Դրանով էլ պայմանավորված՝ վերը նշված Կանոնների 5.6. կետում սահմանվել է Բանկի պատասխանատվությունը բացառող պայման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.10.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ սույն գործով հաստատվել է, որ քարտը չի կորել, չի հափշտակվել և այլ անձի կողմից անօրինական կերպով չի օգտագործվել: Քարտը գտնվել է քարտապանի մոտ, քարտապանը գտնվել է Երևանում, և այն չէր կարող օգտագործվել Թաիլանդում:

Քարտապանը կատարել է իր պարտականությունը՝ կասկածելի գործարքները կատարվելուց անմիջապես հետո այդ մասին տեղեկացրել է Բանկին:

Բանկի ենթադրությունն այն մասին, որ քարտն օգտագործվել է Թաիլանդում երրորդ անձի կողմից, անհիմն է:

Անտրամաբանական է նաև Բանկի դիրքորոշումը՝ կապված «քարտի օգտագործում» և «քարտային տվյալների օգտագործում» հասկացությունները նույնացնելու հետ:

Բացի այդ, Բանկի կողմից սահմանված հաճախորդի նույնականացման միջոցները բավարար հուսալի չեն և հնարավորություն են ընձեռում հաճախորդի կամքից անկախ նրա միջոցների օգտագործումն այլ անձանց կողմից, ապա նման գործողությունների հետևանքով հաճախորդին պատճառված վնասի հատուցման ռիսկը պետք է կրի Բանկը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և Արա Խաչատրյանի միջև 16.04.2012 թվականին կնքվել է վճարային քարտի տրամադրման և սպասարկման թիվ MC11/01587 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Բանկն Արա Խաչատրյանին տրամադրել է MC GOLD վճարային քարտը, որը վերջինս պարտավորվել է օգտագործել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Կանոններով սահմանված կանոններին համապատասխան (հատոր 1-ին, գ.թ. 12, 13):

2) Բանկի և Արա Խաչատրյանի միջև 17.04.2012 թվականին կնքվել է վարկային գծի տրամադրման թիվ AC12/03738 պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկը պարտավորվել է Արա Խաչատրյանի քարտային հաշիվը վարկավորելու միջոցով վերջինիս տրամադրել առավելագույնը 1.000.000 ՀՀ դրամ սահմանաչափով վարկային գիծ (հատոր 1-ին, գ.թ. 17,18):

3) Արա Խաչատրյանին 27.08.2012 թվականին տրամադրված թիվ 3384 գրությամբ Բանկը հայտնել է, որ Թաիլանդի թագավորության Բանգկոկ քաղաքում 13.07.2012 թվականին՝ ժամը 11:14-ին, 11:15-ին, 11:32-ին, 11:33-ին և 11:34-ին բանկոմատներից կատարվել են 10.150-ական թաիլանդական բատի՝ ընդհանուր 50.750 թաիլանդական բատի չափով գործարքներ (կանխիկացումներ) (հատոր 1-ին, գ.թ. 23):

4) Բանկի կողմից 31.07.2012 թվականին տրամադրված քարտային հաշվի թիվ 0712 քաղվածքի համաձայն՝ այդ գործարքներից յուրաքանչյուրի դիմաց ելքագրվել է 133.006,65 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 34):

5) Արա Խաչատրյանը նշված գործարքների մասին Բանկին ծանուցել է 13.07.2012 թվականին՝ ժամը 11:35-ին:

6) Արա Խաչատրյանի դիրքորոշման համաձայն՝ վերը նշված գործարքների կատարման ժամանակ վճարային քարտը գտնվել է իր մոտ, որևէ մեկին չի հայտնել դրա գաղտնի կոդը (PIN կոդ), կասկածելի կայքերում չի գրանցվել (հատոր 1-ին, գ.թ. 97-111):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բանկի և հաճախորդի միջև համապատասխան պայմանագրի առկայության դեպքում հաճախորդի հաշվից գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները բանկի կողմից կատարելու պարտականության հարցին ընդհանրապես, ինչպես նաև անդրադառնալ և գնահատման առարկա դարձնել այն դեպքերը, երբ այդ կարգադրությունները տրվել են էլեկտրոնային միջոցներով և հավաստվել ծածկագրի օգտագործմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 912-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի (հաշվի տիրոջ) բացած հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 915-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հաճախորդի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու՝ անձանց իրավունքները հաճախորդը հավաստում է օրենքով, դրան համապատասխան բանկային կանոններով ու բանկային հաշվի պայմանագրով նախատեսված փաստաթղթերը բանկին ներկայացնելու միջոցով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով կարող է նախատեսվել հաշվում եղած դրամական միջոցներն էլեկտրոնային միջոցներով և այլ փաստաթղթերով տնօրինելու իրավունքների հավաստում՝ դրանցում օգտագործելով հաճախորդի ստորագրության, ծածկագրերի, նշանաբանների և այլ միջոցների նմանօրինակները, որոնք հավաստում են, որ կարգադրությունն արել է դրա համար լիազորված անձը:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ բանկի և հաճախորդի միջև համապատասխան պայմանագրի առկայության դեպքում բանկը պարտավոր է կատարել էլեկտրոնային միջոցներով (բանկոմատներ, POS-տերմինալներ և այլն), ծածկագրի օգտագործմամբ հավաստված հաճախորդի կարգադրությունները՝ կապված հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու հետ: Ընդ որում, բանկը պարտավոր է կատարել ոչ միայն հաճախորդի, այլ նաև նման կարգադրություններ տալու համար լիազորված անձի կարգադրությունները՝ որպես դրանք տալու համար լիազորության առկայության հավաստիք ընդունելով նաև էլեկտրոնային միջոցներում օգտագործված հաճախորդի

ծածկագիրը:

Բացի այդ, այդ կարգադրությունները կատարելիս բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չսախատեսված այլ սահմանափակումներ:

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «Ժա» մասի համաձայն՝ նույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով վճարային քարտը դերետային, վարկային, էլեկտրոնային քսակի կամ միջազգային պրակտիկայում ընդունված այլ տեսակի քարտի ձևով վճարային գործիք է, որն օգտագործվում է կանխիկ դրամ ստանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու, ինչպես նաև վճարային քարտ թողարկողի սահմանած այլ գործառնություններ կատարելու համար:

Նույն հոդվածի «ե» կետի համաձայն՝ նշված օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով վճարային գործիքը թղթային, էլեկտրոնային, ձայնային (կամ այլ եղանակով ներկայացված) հաղորդագրություն է, փաստաթուղթ կամ համաձայնություն, որը, անկախ օգտագործման, կիրառման կամ իրականացման ձևից ու եղանակից, հնարավորություն է ընձեռում դրա տիրապետողին և (կամ) օգտագործողին կատարելու վճարումներ:

Նշված հոդվածի վերլուծությունից նաև հետևում է, որ վճարային քարտը որոշակի էլեկտրոնային հաղորդագրություն պարունակող վճարային գործիք է. այդ քարտի օգտագործում է համարվում դրա միջոցով կանխիկ դրամ ստանալը, անկանխիկ եղանակով վճարումներ կատարելը կամ վճարային քարտ թողարկողի սահմանած այլ գործառնությունները կատարելը: Ընդ որում, վճարային քարտի (դրա վրա առկա հաղորդագրության) օգտագործման հնարավորությունը՝ անկախ այն օգտագործելու ձևից և եղանակից, ընձեռվում է ոչ միայն բանկի հաճախորդին, այլ նաև տվյալ վճարային քարտը տիրապետողին և (կամ) օգտագործողին:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործով Արա Խաչատրյանը, իր հայցի հիմքում դնելով նաև այն հանգամանքները, որ Բանկը, Պայմանագրի 2.2.1. կետի հիմքով ունենալով իրեն տրամադրված MC GOLD վճարային քարտի և քարտային հաշվի ՀՀ օրենսդրության ու վճարային համակարգերի և նույն պայմանագրի պահանջներին համապատասխան պատշաճ սպասարկումն ապահովելու պարտավորություն, իր հաշվից 665.033,25 ՀՀ դրամի դուրս գրումն իրականացրել է առանց վերը նշված վճարային քարտի (քարտը եղել է իր մոտ) և բանկին անհայտ անձի տված կարգադրության հիման վրա՝ խախտելով օրենքի պահանջը և իր սեփականության իրավունքը՝ պահանջել է Բանկից բռնագանձել դրա հետևանքով իրեն պատճառված վնասը:

Դատարանը, պատճառաբանելով, որ Արա Խաչատրյանի հաշվում առկա 665.033,25 ՀՀ դրամն այլ անձի է փոխանցվել առանց նրա կարգադրության՝ վերջինիս զրկելով հաշվում առկա դրամական միջոցներն անարգել տնօրինելու իրավունքից, մինչդեռ Պայմանագրի 2.2.1 կետի համաձայն՝ Բանկը պարտավորվել է ապահովել քարտի և քարտային հաշվի պատշաճ սպասարկումը ՀՀ օրենսդրության, վճարային համակարգերի և պայմանագրի պահանջներին համապատասխան, Արա Խաչատրյանը քարտը չի կորցրել, այն գտնվել է նրա մոտ, և այլ անձ չէր կարող դրանով գործարք կատարել, իսկ Բանկը որևէ կերպ չի պարզաբանել, թե ինչ հիմքեր ունի պնդելու, որ տեղի է ունեցել քարտի օգտագործում մեկ այլ անձի կողմից, և ինչպես դա կարող էր տեղի ունենալ այն

դեպքում, երբ գործարքները կատարվել են Թ-ախիանդում, իսկ Արա Խաչատրյանն այդ պահին գտնվել է Հայաստանում, և քարտը գտնվել է նրա մոտ, գտել է, որ հայցը ենթակա է բավարարման:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ Բանկը որևէ ապացույց չի ներկայացրել Դատարան՝ հիմնավորելու մեկ այլ անձի կողմից քարտի անօրինական օգտագործման փաստը, որպիսի փաստի ապացուցման պարտականությունը և դրա վերաբերյալ ապացույցի բացակայության հետևանքով ծագած բացասական հետևանքները կրում է վերջինս, Արա Խաչատրյանը կասկածելի գործարքների կատարման մասին Բանկին տեղեկացրել է դրանց կատարումից անմիջապես հետո՝ 11:35-ին, գտել է, որ Բանկի կողմից սահմանված հաճախորդի նույնականացման միջոցների բավարար հուսալի չլինելու և հաճախորդի կամքից անկախ նրա միջոցներն այլ անձանց կողմից օգտագործելու հնարավորություն ընձեռված լինելու դեպքերում նման գործողությունների հետևանքով հաճախորդին պատճառված վնասի հատուցման ռիսկը պետք է կրի Բանկը:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Կողմերի միջև կնքված Պայմանագրի 2.2.1 կետի համաձայն՝ Բանկը պարտավորվել է ապահովել քարտի և քարտային հաշվի պատշաճ սպասարկումը ՀՀ օրենսդրության, վճարային համակարգերի և Պայմանագրի պահանջներին համապատասխան: Նույն Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Կանոններով:

Կանոնների 3.1.1 կետի համաձայն՝ քարտապանն իրավունք ունի իր քարտային հաշվի վճարային լիմիտի սահմաններում քարտի կիրառմամբ բանկոմատներից և կանխիկի տրամադրման կետերից ստանալ կանխիկ միջոցներ կամ քարտեր սպասարկող առևտրի և սպասարկման կետերում կատարել անկանխիկ վճարումներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արա Խաչատրյանին տրամադրված MC GOLD վճարային քարտի տվյալներով Թ-ախիանդի թագավորության Բանգկոկ քաղաքում 13.07.2012 թվականին՝ ժամը 11:14-ին, 11:15-ին, 11:32-ին, 11:33-ին և 11:34-ին բանկոմատներից կատարվել են 10.150-ական՝ ընդհանուր 50.750 թախիանդական բառի չափով գործարքներ (կանխիկացումներ), որոնցից յուրաքանչյուրի դիմաց ելքագրվել է 133.006,65 ՀՀ դրամ:

Կանոնների համաձայն՝ գաղտնի կոդը (PIN կոդ) թվային կոդ է, որը տրվում է քարտապանին հատուկ փակ ծրարով և օգտագործվում է նրա կողմից բանկոմատներից ու սահմանված դեպքերում POS-տերմինալներից կանխիկ միջոցներ ստանալու և առևտրի սպասարկման կետերում անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով:

Գաղտնի կոդի նշված հասկացությունը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ բանկոմատներից կանխիկ միջոցներ ստանալու համար անհրաժեշտ պայման է PIN կոդի օգտագործումը:

Հիմք ընդունելով այն, որ վերը նշված գործարքները կատարվել են բանկոմատներից, ուստի սույն վեճի նկատմամբ կիրառելով նշված մեկնաբանությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ գործարքներն իրականացվել են PIN կոդի օգտագործմամբ:

Բանկը, ունենալով Արա Խաչատրյանին տրամադրված վճարային քարտի նաև Կանոնների պահանջներին համապատասխան պատշաճ սպասարկում ապահովելու պարտավորություն, կատարել է էլեկտրոնային միջոցով (բանկոմատներով) իրակա-

նացված, ծածկագրի (PIN կոդի) օգտագործմամբ հավաստված կարգադրությունը՝ կապված քարտային հաշվի վճարային լիմիտի սահմաններում վճարային քարտի կիրառմամբ բանկոմատներից կանխիկ գումարներ տալու հետ: Ընդ որում, Բանկն իր այդ պարտավորությունը կատարել է՝ հավաստիանալով, որ այդ կարգադրությունն արել է հաճախորդը կամ դրա համար լիազորված անձը՝ առանց հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները որոշելու և վերահսկելու, այլ սահմանափակումներ սահմանելու, քանի որ առաջին դեպքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 915-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն, դա եղել է Բանկի պարտավորությունը, իսկ երկրորդ դեպքում վերջինս դրա իրավունքը չի ունեցել:

Կանոնների 3.2.2 կետի համաձայն՝ քարտապանը պարտավոր է չտրամադրել իր քարտը և (կամ) PIN կոդը կամ գաղտնաբառը որևէ այլ անձի օգտագործման նպատակով, PIN կոդը որևէ այլ անձի հայտնի դատնալու կասկածի դեպքում անմիջապես այդ մասին տեղյակ պահել Բանկին: Քարտով այլ անձի կողմից գործարք կատարելը կամ կատարման փորձը համարվում է քարտի անօրինական օգտագործում:

Մնան պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեղի է ունեցել Արա Խաչատրյանին տրամադրված վճարային քարտի օգտագործում: Ընդ որում, այդ քարտն օգտագործվել է անօրինական, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ չի հաստատվել, որ Պայմանագրի իմաստով քարտապան Արա Խաչատրյանը Թաիլանդի թագավորության Բանգկոկ քաղաքում 13.07.2012 թվականին Բանկին տվել է բանկոմատներից համապատասխան գումարներ տալու կարգադրություններ կամ նման կարգադրություններ է տվել դրա համար Արա Խաչատրյանի լիազորած անձը: Այսինքն՝ գործարքները կատարվել են այլ անձի կողմից:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Բանկը որևէ ապացույց չի ներկայացրել Դատարան՝ հիմնավորելու մեկ այլ անձի կողմից քարտի անօրինական օգտագործման փաստը, որպիսի փաստի ապացուցման պարտականությունը և դրա վերաբերյալ ապացույցի բացակայության հետևանքով ծագած բացասական հետևանքները կրում է վերջինս, անհիմն է:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Արա Խաչատրյանը կասկածելի գործարքների կատարման մասին Բանկին տեղեկացրել է դրանք կատարելուց անմիջապես հետո՝ 11:35-ին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն Բանկի վերաքննիչ բողոքը մերժելու հիմք հանդիսանալ չէր կարող հետևյալ պատճառաբանությամբ:

Կանոնների 3.1.7 կետի համաձայն՝ քարտապանն իրավունք ունի պահանջել ժամանակավորապես դադարեցնել (բլոկավորել) քարտային հաշվով իրականացվող գործառնությունները՝ քարտի դարձերեսին զետեղված հեռախոսահամարով Բանկին (համակարգին) նման հրահանգ տալու միջոցով՝ ճիշտ պատասխանելով անձի հաստատման համար անհրաժեշտ բանկի աշխատակցի կողմից տրվող հարցերին:

Մույն Կանոնների 5.1 կետի համաձայն՝ քարտի կորստի, հափշտակության կամ մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման դեպքում քարտապանը պարտավոր է քարտի դարձերեսին զետեղված հեռախոսահամարով կամ բանկի համար ընդունելի կապի այլ միջոցով անմիջապես ծանուցել բանկին (համակարգին) այդ մասին՝ հայտնելով իր նշանաբառը, որի արդյունքում քարտի գործողությունը կասեցվում է:

Մույն գործի փաստերի համաձայն՝ բանկոմատներից գործարքները կատարվել են ժամը 11:14-ին, 11:15-ին, 11:32-ին, 11:33-ին և 11:34-ին, իսկ Արա Խաչատրյանն այդ գործարքների մասին Բանկին ծանուցել է 13.07.2012 թվականին՝ ժամը 11:35-ին:

Մույն Կանոնների 5.6 կետի համաձայն՝ Բանկը պատասխանատվություն չի կրում

այն վնասի համար, որը հասցվել է քարտապանին քարտը կորցնելու, հափշտակության կամ մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման և քարտապանի կողմից քարտի գործողությունը կասեցնելու միջև ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև քարտապանի կողմից Կանոնների պահանջները չկատարելու հետևանքով:

Սույն Կանոնների 6.2 կետի համաձայն՝ Բանկը պատասխանատվություն չի կրում Կանոններով սահմանված իր իրավունքներն իրականացնելու հետևանքով քարտապանի կրած վնասների համար:

Եկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղի է ունեցել այլ անձի կողմից քարտի անօրինական օգտագործում, քարտն անօրինական օգտագործվել է մինչև քարտի գործողության կասեցումը, Արա Խաչատրյանը կատարված գործարքներից միայն վերջինը կատարվելուց հետո է ծանուցել Բանկին՝ մինչ այդ կատարված գործարքների մասին Բանկին չծանուցելու հետևանքով խախտելով Կանոնների 5.1 կետի պահանջը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում Բանկը պատասխանատու չէ Արա Խաչատրյանին պատճառված վնասի համար:

Վերոգրյալ պատճառաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների՝ Արա Խաչատրյանի հայցի բավարարման վերաբերյալ եզրահանգումները գործում առկա ապացույցների սխալ գնահատման արդյունք են, որն էլ ազդել է սույն գործի ելքի վրա:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2013 թվականի որոշումը և այն փոփոխել: Արա Խաչատրյանի հայցն ընդդեմ «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի՝ վնասը հատուցելու պահանջի մասին, մերժել:

2. Արա Խաչատրյանից հոգուտ «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 24.150 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար, և 24.150 ՀՀ դրամ՝ որպես վճռարեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական **ԵԿԴ/1447/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1447/02/12

Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՏՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Քարոլին Բաղումյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Քարոլին Բաղումյանի ընդդեմ Նունուֆար Հովհաննիսյանի՝ վնասի հատուցման
պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քարոլին Բաղումյանը պահանջել է Նունուֆար
Հովհաննիսյանից հոգուտ իրեն բռնազանձել 338.912 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝
որպես պատճառված վնասի հատուցում:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրա-
վատության դատարանի (դատավոր՝ Գ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 06.06.2013
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
05.12.2013 թվականի որոշմամբ Քարոլին Բաղումյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 06.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քարոլին Բաղումյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նունուֆար Հովհաննիսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 53-րդ և 220-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն և գնահատում, որի հետևանքով սխալ է գնահատել և մեկնաբանել վնասի ինստիտուտը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևանի քաղաքապետարանի 13.12.2010 թվականի թիվ 19/Բ-1705 գրությամբ փաստվում է Նունուֆար Հովհաննիսյանի կառուցած շինության՝ նախագծի համեմատ շեղումներ ունենալու հանգամանքը, հետևաբար նաև այդ շինության համար ավարտական ակտ ստանալու, շինության նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման անհնարինությունը, ինչն իր ամբողջության մեջ նշանակում է, որ Քարոլին Բաղումյանի՝ Նունուֆար Հովհաննիսյանին շենքի շինարարության համար տրամադրված գումարները ծախսվել են անտեղի: Այսինքն՝ Նունուֆար Հովհաննիսյանի ոչ օրինաչափ գործողությունները հանգեցրել են Քարոլին Բաղումյանի միջոցներն աննպատակ վատնելուն:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործի համար նախադատելի են թիվ ԵԿԴ/1340/02/09, ԵԿԴ/1123/02/11, ԵԿԴ/3019/02/09, ԵԿԴ/1767/02/11 քաղաքացիական գործերով հաստատված հանգամանքները, սակայն չի նշել, թե հատկապես որ փաստական հանգամանքներն են նախադատելի, ինչ փաստեր են հաստատում կամ հերքում սույն գործով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ «վճռաբեկ բողոքում անգամ առկա չէ որևէ նշում, թե հատկապես ինչով է արտահայտվել Քարոլին Բաղումյանի խախտված իրավունքները, որի արդյունքում վերջինս կրել է, կամ կարող էր կրել վնաս»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Քարոլին Բաղումյանը 27.08.2004 թվականին նոտարական կարգով վավերացված լիազորագրով Նունուֆար Հովհաննիսյանին լիազորել է իր համար Երևան քաղաքում ցանկացած տեղ գնել բնակարան և հանդես գալ բոլոր անհրաժեշտ հաստատություններում՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրում, թաղապետարանում, քաղաքապետարանում, ԲՇՏ-ում, նոտարական գրասենյակում, կնքել բնակարանի առուվաճառքի պայմանագիր (հատոր 2-րդ, գ.թ. 60):

2) Քարոլին Բաղումյանը նոտարական կարգով վավերացված 25.09.2008 թվականի լիազորագրով Նունուֆար Հովհաննիսյանին լիազորել է իր անունից հանդես գալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, ՀՀ ոստիկանության համապատաս-

խան բաժնում, քաղաքապետարանում, թաղապետարանում, համատիրությունում, քաղաքաշինության վարչությունում, սեյսմիկ վարչությունում, «Երևան Ջուր» ՓԲԸ-ում, «ՀայՌ-ուսգագարդ» ՓԲԸ-ում, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում, «Արմեն-Տել» Հ/Ձ ՓԲԸ-ում, պետական և ոչ պետական այլ մարմիններում՝ կապված Երևանի Նորքի 13-րդ փողոցի թիվ 80/1 հասցեում գտնվող անշարժ գույքի հետ: Իր փոխարեն կատարել ցանկացած տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքներ, ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, որոշումներ, ստանալ հասցե, շինթույլտվություն, ավարտական ակտ, տալ հայտարարություններ և դիմումներ, ինչպես նաև զբաղվել բոլոր կոմունալ և այլ տեսակի վարձավճարների մուծման հարցով, կնքել պայմանագրեր, ստորագրել և կատարել բոլոր գործողությունները կապված նշված հանձնարարության հետ (հատոր 1-ին, գ.թ. 9):

3) Երևանի քաղաքապետարանի 13.12.2010 թվականի թիվ 19/Բ-1705 գրությամբ Քարոլին Բաղումյանին հայտնվել է, որ Նորքի 13-րդ փողոցի թիվ 80/1 առանձնատան կառուցման համար հաստատված նախագծով նախատեսված բոլոր աշխատանքները փաստացի ավարտված չեն, և առկա են նախագծային շեղումներ, մասնավորապես՝ երկրորդ հարկի հատակագծում նշված ծածկոցները կառուցված չեն, իսկ գլխավոր ճակատային մասում ծածկոցի փոխարեն կառուցվել է բետոնե հարթակ, որը ծառայում է որպես բաց պատշգամբ (հատոր 1-ին, գ.թ.10):

4) Հայցվորը պատճառված վնասի չափը գնահատել է շինարարության համար Նունուֆար Հովհաննիսյանին տրված և շինարարության համար ծախսված ամբողջ գումարի չափով, այն է՝ 338.912 ԱՄՆ դոլար (հատոր 1-ին, գ.թ. 8):

5) Ըստ հայցի Նունուֆար Հովհաննիսյանի ընդդեմ Քարոլին Բաղումյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԿԴ/1340/02/09 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած 05.11.2010 թվականի վճռով հաստատվել է այն փաստը, որ 25.09.2008 թվականին պատասխանող Քարոլին Բաղումյանը լիազորագիր է տվել հայցվորին, որտեղ հայցվորի կողմից մատուցված ծառայությունները և կատարված աշխատանքներն են եղել՝ Քարոլին Բաղումյանի անունից հանդես գալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնում, քաղաքապետարանում, թաղապետարանում, համատիրությունում, քաղաքաշինության վարչությունում, սեյսմիկ վարչությունում, «Երևան Ջուր» ՓԲԸ-ում, «ՀայՌ-ուսգագարդ» ՓԲԸ-ում, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում, «Արմենտել» Հ/Ձ ՓԲԸ-ում, պետական և ոչ պետական այլ մարմիններում՝ կապված Երևանի Նորքի 13-րդ փողոցի թիվ 80/1 հասցեում գտնվող անշարժ գույքի հետ, կատարել ցանկացած տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքներ, ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, որոշումներ, ստանալ հասցե, շինթույլտվություն, ավարտական ակտ, տալ հայտարարություններ և դիմումներ, ինչպես նաև զբաղվել բոլոր կոմունալ և այլ տեսակի վարձավճարների մուծման հարցով, կնքել պայմանագրեր, ստորագրել և կատարել բոլոր գործողությունները: Ծառայությունների մատուցումը կատարվել է տևական ժամանակ՝ սկսած 27.08.2004 թվականից մինչև 06.08.2009 թվականը (հատոր 1-ին, գ. 59-61):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական

պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռարեկ բողոքի քննության շրջանակներում Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե՞ արդյոք ներկայացուցչի կողմից իր ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում ներկայացվողին պատճառված վնասը ենթակա է հատուցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագում են նաև այլ անձին վնաս պատճառելու հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Վճռարեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գույքի փոխանցման, աշխատանքաների կատարման, ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները հանդիսանում են պարտավորական իրավահարաբերություններ: Ընդ որում, ձևավորված պարտավորաիրավական հարաբերությունների շրջանակում կողմերից մեկը հանդես է գալիս իրավագոր անձ՝ «պարտատեր», իսկ մյուս կողմը՝ պարտավոր անձ՝ «պարտապան»: Ուստի իրավագոր անձի՝ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը: Այսպիսով, պարտավորական իրավահարաբերության մեջ պարտատիրոջ սուբյեկտիվ իրավունքը պահանջի իրավունքն է, որը կարող է իրացվել միայն այն ժամանակ, երբ պարտապանը պատշաճ կատարի իր վրա դրված պարտավորությունը:

Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող են լինել ինչպես գործարքները, այդ թվում՝ նաև միակողմ (պայմանագրային պարտավորություններ), այնպես էլ ոչ իրավաչափ գործողությունները (դելիկտներ), այն է՝ վնաս պատճառելու հետևանքով առաջացած իրավաբանական փաստերը:

Վճռարեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող է հանդիսանալ նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ ներկայացուցչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի ուժով ներկայացուցչը պարտավոր է պատշաճ իրականացնել լիազորագրով ստանձնած լիազորությունները՝ պարտավորությունները, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պարագայում վերջինս իր վրա կրում է դրա արդյունքում առաջացած անբարենպաստ հետևանքների, այդ թվում՝ նաև պատճառված վնասի ռիսկը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 25.09.2008 թվականին Քարոլին Բաղումյանը լիազորագիր է տվել պատասխանողին, որի համաձայն՝ վերջինս պետք է Քարոլին Բաղումյանի անունից հանդես գար ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնում, քաղաքապետարանում, թաղապետարանում, համատիրությունում, քաղաքաշինության վարչությունում, սեյսմիկ վարչությունում, «Երևան Ջուր» ՓԲԸ-ում, «ՀայՌ-ուսգագարդ» ՓԲԸ-ում, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում, «Արմենտել» Հ/Ձ ՓԲԸ-ում, պետական և ոչ պետական այլ մարմիններում՝ կապված Երևանի Նորքի 13-րդ փողոցի թիվ 80/1 հասցեում գտնվող անշարժ գույքի հետ, կատարել ցանկացած տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքներ, ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, որոշումներ, ստանալ հասցե, շինթույլվություն, ավարտական ակտ, տալ հայտարարություններ և դիմումներ, ինչպես նաև զբաղվել բոլոր կոմունալ և այլ տեսակի վարձավճարների մուծման հարցով, կնքել պայմանագրեր, ստորագրել և կատարել բոլոր գործողությունները:

Թիվ ԵԿԴ/1340/02/09 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած 05.11.2010 թվականի վճռով հաստատվել է այն հանգամանքը, որ 25.09.2008 թվականին տրված լիազորագրի հիման վրա մատուցվել են ծառայություններ: Ծառայությունների մատուցումը կատարվել է տևական ժամանակ՝ սկսած 27.08.2004 թվականից մինչև 06.08.2009 թվականը: Մասնավորապես՝ Քարոլին Բաղումյանը սույն գործով պատասխանող Նունուֆար Հովհաննիսյանին է փոխանցել դրամական միջոցներ, իսկ Նունուֆար Հովհաննիսյանը Քարոլին Բաղումյանին է հանձնել գույք և մատուցել ծառայություններ, սակայն Քարոլին Բաղումյանին ուղղված Երևանի քաղաքապետարանի 13.12.2010 թվականի թիվ 19/Բ-1705 գրությամբ հայտնվել է, որ Նորքի 13-րդ փողոցի թիվ 80/1 առանձնատան կառուցման համար հաստատված նախագծով նախատեսված բոլոր աշխատանքները փաստացի ավարտված չեն, իսկ փաստացի կատարվածի մեջ առկա են նախագծային շեղումներ, որի հետևանքով Քարոլին Բաղումյանին ավարտական ակտ չի տրվել, ինչի հետևանքով էլ վերջինս չի դարձել կառույցի սեփականատեր:

Դատարանը, հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը կրող պատասխանողը սույն գործով ներկայացրած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ապացուցել է նշված փաստի բացակայությունը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «... օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է, որ «Քարոլին Բաղումյանն իր կամքի ազատ արտահայտությամբ, իր կողմից տրված լիազորագրերով որոշված իրավասությունների շրջանակներում Նունուֆար Հովհաննիսյանին լիազորել է կատարել որոշակի գործողություններ՝ կապված Երևանի Նորքի 13-րդ փողոցի թիվ 80/1 հասցեում գտնվող անշարժ գույքի հետ, կատարել ցանկացած տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքներ, ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, որոշումներ, ստանալ հասցե, շինթույլվություն, ավարտական ակտ, տալ հայտարարություններ և դիմումներ, ինչպես նաև զբաղվել բոլոր կոմունալ և այլ տեսակի վարձավճարների մուծման հարցով, կնքել պայմանագրեր, ստորագրել և կատարել բոլոր գործողությունները՝ կապված վերը թվարկված լիազորությունների հետ», ինչպես նաև այն, որ «...Կողմերի կամքն ուղղված է եղել լիազորություններ տրամադրելուն և դրա հիման վրա ներկայացուցչի իրավասությունների շրջանակներում որոշված գործողություններ կատարելուն», և եզրակացրել է, որ հայցվորը չի ապացուցել վնասի ինստիտուտին առաջադրվող պահանջների առկայությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործում առկա ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ հետևյալ պատճառաբանությամբ. Վերաքննիչ դատարանն անտեսել է օրինական ուժի մեջ դատական ակտով հաստատված այն փաստական հանգամանքը, որ Նունուֆար Հովհաննիսյանը ստանձնել է Քարոլին Բաղումյանի անունից լիազորագրի հիման վրա որոշակի ծառայությունների մատուցման պարտավորություն, այսինքն՝ կողմերի միջև առաջացել են պարտավորական իրավա-հարաբերություններ, որի հիման վրա Քարոլին Բաղումյանի պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանել է Նունուֆար Հովհաննիսյանի պարտականու-թյունը՝ պատշաճ կատարելու իր վրա դրված պարտավորությունները, որոնց շարքում նախատեսված է եղել նաև այնպիսի պարտավորություն, ինչպիսին է՝ «...կատարել ցանկացած տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքներ, ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, որոշումներ, ստանալ հասցե, շինթույլություն, ավարտական ակտ...», սակայն Նունուֆար Հովհաննիսյանը ոչ պատշաճ է կատարել իր ստանձնած պարտականությունները, որի արդյունքում Երևանի Նորքի 13-րդ փողոցի թիվ 80/1 առանձնատան կառուցման համար հաստատված նախագծով նախատեսված բոլոր աշխատանքները փաստացի չեն ավարտվել, իսկ փաստացի կատարվածի մեջ առկա են եղել նախագծային շեղումներ, որի հետևանքով Քարոլին Բաղումյանին ավարտական ակտ չի տրվել, ինչը խոչընդոտ է հանդիսացել վերջինիս կառույցի սեփականատեր դառնալուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կատանար քաղաքացիա-կան շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*տե՛ս, Նաիրայա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին թիվ ՀՔԳՅ/0016/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Ընդ որում, քննարկվող պարագայում օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դա-

տարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից չի իրականացվել գործի բազմակողմանի քննություն, ինչն ազդել է գործի ելքի վրա, ուստի առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործի նոր քննության ժամանակ գործում առկա՝ 25.09.2008 թվականի լիազորագիրը, Երևանի քաղաքապետարանի 13.12.2010 թվականի թիվ 19/Բ-1705 գրությունը ենթակա են հետազոտման և գնահատման քաղաքացիադատավարական կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.04.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՇԳ/0743/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ՇԳ/0743/02/12

Նախագահող դատավոր՝ **Տ. Նազարյան**

Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**

Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.10.2013 թվականի
որոշման դեմ՝ ըստ ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ **Դատախազություն**) հայցի
ընդդեմ Արտյոմ Գևորգյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի՝ վնասը հատուցելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է Արտյոմ Գևորգյանից
բռնագանձել 3.479.665 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնաս:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ **Լ. Խաչատրյան**) (այսուհետ՝ **Դատարան**) 12.06.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**)
09.10.2013 թվականի որոշմամբ Դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 12.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ

հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-145-Ն ՀՀ օրենքը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2012 թվականի վճռով «Ար Ար Մեդիա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), որի տնօրենն է հանդիսացել Արտյոմ Գևորգյանը, ճանաչվել է սնանկ, ինչը վկայում է, որ այդ Ընկերությունից գումար բռնագանձելու վերաբերյալ դատական ակտը չի կատարվել, իսկ քաղաքացիական գործում բացակայում է որևէ թույլատրելի կամ վերաբերելի ապացույց այն մասին, որ որևէ իրավաչափ եղանակով նշված գումարը մուծվել է:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի՝ Արտյոմ Գևորգյանը պետք է ապացուցեր, որ վնասն իր մեղքով չի պատճառվել, մինչդեռ իր մեղքի բացակայությունը հիմնավորելու համար որևէ ապացույց Դատարան չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև Արտյոմ Գևորգյանի ոչ օրինաչափ վարքագծի և պետությանը պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը հաստատելու նպատակով իր կողմից Դատարան ներկայացված վերաբերելի ապացույցները՝ փորձագետի եզրակացությունը, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն Արտյոմ Գևորգյանի կողմից չբողոքարկելու փաստը: Ընդ որում, դրանցից առաջինը Դատարան է ներկայացվել ոչ թե հանցագործության կատարման մեջ Արտյոմ Գևորգյանի մեղքն ապացուցելու համար, այլ պատճառված վնասի գումարային չափը հիմնավորելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.10.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի 10.05.2012 թվականի թիվ 11-2951 եզրակացության համաձայն՝ փորձագետը եկել է հետևության, որ փորձաքննությամբ կատարված վերլուծությունից և հաշվարկներից երևում է, որ Ընկերությունը հետազոտվող ժամանակաշրջանի դրությամբ՝ տույժերով հանդերձ, ինչպես ըստ առանձին հարկատեսակների գծով վարվող անձնական հաշվի քարտերի՝ 3.479.665 ՀՀ դրամի, այնպես էլ փորձաքննությամբ կատարված ճշգրտումներով հաշվարկված 1.175.158 ՀՀ դրամ պետական բյուջեի նկատմամբ իր պարտավորությունները կարող էր մարել ամբողջությամբ, քանի որ հետազոտվող ժամանակաշրջանի դրությամբ Ընկերության գուտ ակտիվների մնացորդը կազմում է 9.051.658 ՀՀ դրամ, որը գերազանցում է պետական բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունները (հատոր 1-ին, գ.թ. 5-16).

2) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետա-

քննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչ Վ. Ավետիսյանը, պարզելով նաև, որ Արտյոմ Գևորգյանը զուտ հաշվապահական և տնտեսագիտական տեսանկյունից հնարավորություն է ունեցել կատարելու 3.479.665 ՀՀ դրամի չափով պետական բյուջեի հանդեպ ունեցած հարկային պարտավորությունները, վերջինիս արարքն իր մեջ պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով (Կանխամտածված սնանկությունը) նախատեսված հանցագործության հատկանիշներ, արարքը կատարվել է 2005-2008 թվականների ընթացքում, նրա նկատմամբ կիրառել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը և 18.07.2012 թվականին որոշում է կայացրել Ընկերության տնօրեն Արտյոմ Գևորգյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու, համաներման ակտի ընդունման կապակցությամբ նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 17,18)։

3) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԱԶԴ/0014/04/11 սնանկության գործով 04.06.2012 թվականին վճիռ է կայացրել Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին։ Նշված վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (հատոր 1-ին, գ.թ. 131,132)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար։

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու միջոցով պետության գույքային շահերի պաշտպանության և կանխամտածված սնանկության հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների առանձնահատկություններին։

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտապանին սնանկ ճանաչելու նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դիմել դատարան հետևյալ դեպքերում և ժամկետներում՝

ա) լիազորված պետական համապատասխան մարմինը՝ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում։

բ) համայնքի ղեկավարը՝ տեղական տուրքերի կամ պարտադիր վճարումների, ինչպես նաև համայնքի այլ դրամային պահանջներով պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում՝ պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում։

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված պետական մարմինների սահմանված ժամկետում սնանկության դիմում չներկայացնելու դեպքում դրանք ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով, բացառությամբ այն

դեպքերի, երբ առկա է տվյալ անձին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելուց ձեռնպահ մնալու մասին կառավարության որոշումը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձինք նույն հոդվածում նախատեսված դեպքերում և ժամկետում պարտապանին սնանկ ճանաչելու դիմում չներկայացնելու դեպքում անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց թույլ տալու, և նշված կետանցը շարունակվելու դեպքում («Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում) որպես Հայաստանի Հանրապետության կամ համայնքի գույքային շահերի պաշտպանության առաջնային միջոց օրենսդիրը նախատեսել է տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը:

Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու՝ որպես պետության գույքային շահերի պաշտպանության միջոցի առաջնայնությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը, իրավասու պետական համապատասխան մարմնի կամ համայնքի ղեկավարի պարտականությունն է, որը չկատարելու դեպքում այդ պարտականությունը պետք է կատարի դատախազությունը, և որը չկատարելու համար նշված մարմինների իրավասու պաշտոնատար անձինք անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի համար:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի համաձայն՝ կանխամտածված

սնանկությունը պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումն է կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս:

Քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության հետ կապված իրավահարաբերությունների հիմնական կարգավորումը տրված է «Մասնկության մասին» ՀՀ օրենքում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտապանը սնանկ է ճանաչվել պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող կամ նրան կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի մեղքով (ուղղակի կամ անուղղակի գործողություններով պարտապանի գործունեությունն ուղղորդելը և այլն (կանխամտածված սնանկություն), ապա պարտապան իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ այդ անձինք կրում են համապարտ պատասխանատվություն պարտապանի պարտավորություններով՝ վերջինիս գույքի անբավարարության դեպքում:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ կանխամտածված սնանկության դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում նշված սուբյեկտները, այդ թվում՝ պարտապան իրավաբանական անձի ղեկավարը կարող են պարտապանի պարտավորություններով համապարտ պատասխանատվություն կրել միայն այն դեպքում, երբ պարտապանի գույքն անբավարար է պարտավորությունները կատարելու համար, ինչը, բնականաբար, կարող է բացահայտվել միայն սնանկության վարույթում սնանկության գործով կառավարչի՝ օրենքով նախատեսված գործողությունների իրականացման արդյունքում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ կանխամտածված սնանկության դեպքում պահանջատերերի պահանջների բավարարման և օրինական շահերի պաշտպանության հետ կապված սուբյեկտիվ իրավունքների իրացումն օրենսդիրը նախատեսել է միայն սնանկության վարույթի շրջանակներում, քանի որ միայն սնանկության վարույթի շրջանակներում հնարավոր կլինի պարտապանի գույքի անբավարարության դեպքում բոլոր պահանջատերերին համամասնորեն բավարարում տալը:

Հենց այդ նպատակին է ուղղված կանխամտածված սնանկության գործերով սնանկ ճանաչված պարտապանի գույքի անբավարարության դեպքում օրենքով նախատեսված որոշակի անձանց համար համապարտ պատասխանատվության նախատեսումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտները պարտապանի նկատմամբ պահանջի առկայության դեպքում ինքնին չեն դառնում պարտապան, հետևաբար նաև՝ պարտավորության կողմ՝ սնանկության վարույթում գրանցված պահանջներով, այլ վերջիններիս՝ պարտապանի պարտավորությունների համար համապարտ պատասխանատվությունը ծագում է միայն այն դեպքում, երբ սնանկության վարույթում արձանագրվում է պարտավորությունը կատարելու համար պարտապանի գույքի անբավարարությունը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի վերլուծության՝ վերը նշված եզրահանգումների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև օրենսդիրը հստակ չի սահմանել, թե ով կարող է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքում ներկայացնել համապարտ պատասխանատվության պահանջը,

այնուամենայնիվ, այդպիսի պահանջ սնանկության գործի շրջանակներում կարող է ներկայացնել միայն սնանկության գործով կառավարիչը:

Այսպես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտների համապարտ պատասխանատվությունն օրենսդիրը կապել է բացառապես սնանկության գործով կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացակարգերով սահմանված կարգով կատարված պարտապանի գույքի անբավարարության փաստի արձանագրման հետ, որից հետո պահանջատերերից յուրաքանչյուրի կողմից քաղաքացիական հայցի հարուցումը, հաշվի առնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, անվիճելիորեն կվատթարացնի մյուս պահանջատերերի վիճակը և անհավասար պայմաններ կստեղծի նրանց համար, իսկ բոլոր պահանջատերերի կողմից նման հայցի հարուցումը կխաթարի սնանկության վարույթի իրականացումը՝ անհնարին դարձնելով օրենքով սնանկության գործով կառավարչի վրա դրված պահանջատերերի պահանջների համաչափ բավարարման առաքելությունը:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքում նույն հոդվածով նշված սուբյեկտների նկատմամբ համապարտ պատասխանատվության հիմքով գումարի բռնագանձման պահանջ կարող է ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում և միայն սնանկության գործով կառավարչի կողմից: Այլ է հարցը, որ նման պահանջի ներկայացման նախաձեռնողը կարող են լինել ինչպես կառավարիչը, այնպես էլ պահանջատերերը (պարտատերերի խորհուրդը, որը ներկայացնում է պարտատերերի շահերը և նույն օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում կառավարչի գործունեության նկատմամբ):

Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի, 17-րդ հոդվածի 1-ին կետի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*լուե՛ս, օրինակ՝ Նարայյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԳ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ մեկ այլ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող գործերով դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապացուցման առարկայի ճիշտ որոշմանը: Մասնավորապես, դատարանները նախ և առաջ պետք է որոշեն այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական գործի լուծման համար և ենթակա են պարզման գործի ընթացքում: Իրավաբանական նշանակության ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի ապացուցման առարկան: Ապացուցման առարկան որոշելուց հետո միայն դատարանները, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, որոշում են ապացուցման առարկան կազմող իրավաբանական փաստերի հաստատվելը կամ ժխտվելը և դրանից հետո միայն որոշում հայցը բավարարելու կամ մերժելու հարցը: Վնասի հատուցման գործերով փաստերի իրավաբանական նշանակություն ունենալու հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական, ինչպես նաև դատավարական իրավունքի նորմերով, որոնցում նշված են տվյալ իրավահարաբերությունը և կողմերի իրավունքներն ու պարտականու-

թյունները պայմանավորող իրավաբանական փաստերը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի կանոնակարգումներից հետևում է, որ նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավաբանական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- վնաս պատճառող անձի առկայությունը,
- պատճառված վնասի առկայությունը,
- վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը,

-պատճառահետևանքային կապը ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև (յո՛ւն, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ

Վալենտինա Մկրտչյանի թիվ ԵԿԳ/3058/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ բոլոր այն դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտի տնօրենի դեմ ներկայացվել է վնասի հատուցման պահանջ և որպես վնասի պարտավորության ծագման իրավական հիմք վկայակոչվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, դատարանները նմանատիպ փաստական և իրավական հանգամանքներ ունեցող գործերով պետք է առաջնահերթ պարզեն հետևյալ փաստերը՝

– պարտապան իրավաբանական անձի վերաբերյալ սնանկության գործ հարուցված է, թե ոչ.

– եթե այո՝ տվյալ սնանկության գործով նա ներկայացված է համապատասխան պահանջը.

– արդյո՞ք պատասխանողները հանդիսանում են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իմաստով սուբյեկտ.

– արդյո՞ք սնանկության վարույթի շրջանակներում արձանագրվել է պարտապան իրավաբանական անձի գույքի անբավարարությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ փաստերի ապացուցման բեռը և դրանից բխող բացասական հետևանքները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի համաձայն, կրում է հայցվոր կողմը:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործով Դատարանը հայցը մերժել է նաև գործի քննության համար էական նշանակություն ունեցող այն փաստը նշելով, որ Ընկերությունը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2012 թվականի թիվ ԵԱԲԴ/0014/04/11 վճռով ճանաչվել է սնանկ, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Դատարանը, վկայակոչելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, արձանագրել է, որ հայցվորը որևէ հիմնավոր ապացույց չի ներկայացրել այն մասին, որ սպառվել են նշված գումարը պարտապան Ընկերությունից բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկված բոլոր միջոցները:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ հայցվորի ներկայացրած ապացույցներով չի հիմնավորվել պատասխանողի ոչ օրինաչափ գործողությունները, որպիսի ապացուցման բեռը, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերի, կրում է հայցվոր կողմը:

Վերը շարադրված վերլուծությունների համատեքստում անդրադառնալով ստորա-

դաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Դատախազությունը, իր հայցապահանջի հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ընկերության ունեցած հարկային պարտավորությունները կանխամտածված չկատարելու հետևանքով Ընկերության տնօրեն Արտյոմ Գևորգյանը պետությանը պատճառել է 3.479.665 ՀՀ դրամի չափով վնաս, պահանջել է նրանից բռնագանձել այդ գումարը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արտյոմ Գևորգյանն Ընկերության տնօրենն է. Ընկերության՝ պետական բյուջեի նկատմամբ չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 3.479.665 ՀՀ դրամ: Արտյոմ Գևորգյանը գուտ հաշվապահական և տնտեսագիտական տեսանկյունից հնարավորություն է ունեցել կատարելու 3.479.665 ՀՀ դրամի չափով պետական բյուջեի հանդեպ ունեցած հարկային պարտավորությունները, սակայն չի կատարել, և վերջինիս արարքն իր մեջ պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով (Կանխամտածված սնանկությունը) նախատեսված հանցագործության հատկանիշներ: Ընկերությունը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2012 թվականի թիվ ԵԱՔԴ/0014/04/11 օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:

Վերը շարադրված փաստերը գնահատելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իրավակարգավորման համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թեև հիմնավորվում են սնանկության վարույթի առկայության և Ընկերության՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իմաստով սուբյեկտ հանդիսանալու փաստերը, սակայն գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ թիվ ԵԱՔԴ/0014/04/11 սնանկության գործով վարույթն ավարտվել է, և այդ վարույթի շրջանակներում արձանագրվել է պարտավորությունները կատարելու համար Ընկերության գույքի անբավարար լինելու փաստը, մինչդեռ սնանկության վարույթում կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության պայմաններում միայն գույքի անբավարար լինելու դեպքում կարող է Ընկերության տնօրենի՝ որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտի դեմ ներկայացվել Ընկերության պարտավորությունները համապարտության կարգով կատարելու պահանջ:

Նման պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քանի դեռ սպառված չեն Ընկերության գույքից բավարարում ստանալու հնարավորությունները, չի կարող ծագել վերջինիս ղեկավարի՝ Ընկերության պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն կրելու պարտականությունը, հետևաբար Դատարանն իրավացիորեն է մերժել հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը՝ վճիռը թողել անփոփոխ:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտը օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.10.2013 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ/0179/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0179/02/13

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան

Դատավորներ՝ Ս. Միքայելյան

Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անիկ Դավթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անիկ Դավթյանի ընդդեմ Տիգրան Վիրաբյանի՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման, դատական ծախսերի՝ ներառյալ մատուցված փաստաբանական ծառայությունների վճարի բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անիկ Դավթյանը պահանջել է պարտավորեցնել Տիգրան Վիրաբյանին հրապարակայնորեն ներողություն խնդրել իրենից, «տեսաձայնագրել այդ գործողությունը և տեղադրել տեսաձայնագրությունը «www.youtube.com» կայքում: Տեսաձայնագրելու և կայքում տեղադրելու հմտությունների բացակայության պարագայում, հայցվորը պատրաստ է աջակցելու պատասխանողին», ինչպես նաև Տիգրան Վիրաբյանից բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում: Միաժամանակ Անիկ Դավթյանը պահանջել է «պատասխանողի վրա դնել դատական ծախսերը, ներառյալ՝ փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ Անիկ Դավթյանի և «Եգոր Սիստեմ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով նախատեսված գինը»:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Լ. Արազյան) (այսուհետ՝ Դատարան) 25.06.2013 թվականի վճռով հայցը

մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.10.2013 թվականի որոշմամբ Անիկ Դավթյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անիկ Դավթյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 23-րդ, 47-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին, 12-րդ հոդվածները, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 17-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, 219-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ 18.02.2013 թվականին՝ ՀՀ նախագահի ընտրությունների օրը, Տիգրան Վիրաբյանի կողմից Անիկ Դավթյանի նկատմամբ կատարած արտահայտությունները՝ «լսի քո նման լկտի չեն ստեղծ աշխատողները», «սաղ կյանքդ լկտի ծնվել ես, լկտի սատկելու ես», «ամեն ընտրություններին գալիս ես, լկտի ես քեզ պահում», «դեռասան մեյմուն», «տականքի մեկը», «ձենդ կտրի ստոր», «սրան դուս հանեք տեղամասից», «էս խելառը», «հոգեկան հիվանդը», «գիրբիլը», «մի արի ստե կապիկություններ արա», նպատակ են հետապնդել արատավորելու Անիկ Դավթյանի պատիվն ու արժանապատվությունը:

Վերաքննիչ դատարանն իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Տիգրան Վիրաբյանի կողմից Անիկ Դավթյանին վիրավորելու միջադեպը տեսաձայնագրվել և տեղադրվել է «www.youtube.com» կայքում, իսկ Դատարանի կողմից չի ուսումնասիրվել և գնահատվել Անիկ Դավթյանի կողմից ներկայացված նշված տեսագրությունը:

Վերաքննիչ դատարանը վկաներ Տաթևիկ Բարսեղյանի և Ծովինար Նազարյանի ցուցմունքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցների համակցության մեջ, որոնցով հիմնավորվում է, որ Տիգրան Վիրաբյանն Անիկ Դավթյանի պատիվը և արժանապատվությունն արատավորող արտահայտությունները կատարել է հրապարակայնորեն:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Դատարանը սխալ է մեկնաբանել «գերակա հանրային շահ» եզրույթը, և Տիգրան Վիրաբյանի կողմից կատարած արտահայտությունները պայմանավորել է «գերակա հանրային շահով», ինչպես նաև Դատարանը գտել է, որ Տիգրան Վիրաբյանի կողմից կատարած արտահայտությունները նպատակ են հետապնդել սոսկ ապահովելու ընտրությունների պատշաճ կարգուկանոնը՝ անտեսելով, որ տեղամասային հանձնաժողովի նախագահի համար սահմանված է պարտավորություններ քվեարկության ընթացքում ապահովելու՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ պատշաճ կարգուկանոն: Հետևաբար, տեղամասային կենտրոնում անպարկեշտ արտահայտություններով ընտրողի պատիվը և արժանապատվությունը նսեմացնելու պայմաններում հնարավոր չէ ապահովել ընտրությունների համար անհրաժեշտ պատշաճ կարգուկանոն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը, դատական ակտը չի վերանայել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ անտեսելով վերաքննիչ բողոքում ներկայացված Դատարանի կողմից թույլ տրված վերը նշված խախտումները:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ Տիգրան Վիրաբյանը Դատարան պատասխան չի ներկայացրել, այլ ներկայացրել է ընդամենը միջնորդություն, դատական ակտում արձանագրել է, որ Տիգրան Վիրաբյանը Դատարան է ներկայացրել պատասխան:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.10.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 18.02.2013 թվականին ՀՀ Արարատի մարզի թիվ 17/4 տեղամասում տեղի է ունեցել ՀՀ նախագահի ընտրություն, որին որպես ընտրող մասնակցել է նաև ՀՀ քաղաքացի Անիկ Դավթյանը:

2) Ընտրության ընթացքում տեղի է ունեցել միջադեպ, որի ընթացքում թիվ 17/4 տեղամասի հանձնաժողովի նախագահ Տիգրան Վիրաբյանն Անիկ Դավթյանի նկատմամբ կատարել է հետևյալ արտահայտությունները. ««լսի ջո նման լկտի չեն ստեղի աշխատողները», «սաղ կյանքդ լկտի ծնվել ես, լկտի էլ սատկելու ե ս», «ամեն ընտրություններին գալիս ես, լկտի ես քեզ պահում», «դեռասան մեյմուն», «տականքի մեկը», «ձենդ կտրի ստոր», «սրան դուս հանեք տեղամասից», «էս խելառը», «հոգեկան հիվանդը», «զիբիլը», «մի արի ստե կապիկություններ արա»»: Նշված միջադեպը տեսաձայնագրվել է և տեղադրվել «www.youtube.com» կայքում (հատոր 1-ին, գ.թ. 9):

3) Տաթևիկ Բարսեղյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 18.02.2013 թվականին, որպես «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ-ի դիտորդ, գտնվել է Արտաշատ քաղաքի թիվ 17/4 ընտրական տեղամասում: Օրվա երկրորդ կեսին ընտրական տեղամաս է եկել Անիկ Դավթյանը, ով ընտրացուցակում ստորագրելու ժամանակ ցանկացել է ճշտել՝ արդյոք իր հարազատների անուններն առկա են, թե ոչ, ովքեր բացակայում են Հայաստանի Հանրապետությունից և նկատելով, որ իր որդիների անունները նույնպես նշված են ցուցակում՝ ցանկացել է ջնջել նրանց անունները: Այդ ժամանակ վեճ է առաջացել Անիկ Դավթյանի և Հրաչիկ Վիրաբյանի միջև, ում մոտ գտնվել է ցուցակը: Նրանց է մոտեցել ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահ Տիգրան Վիրաբյանը և փորձել է արգելել ջնջումներ կատարել: Տիգրան Վիրաբյանի կողմից հնչել են հայհոյանքներ Անիկ Դավթյանի հասցեին: Այդ ընթացքում հրավիրել են ոստիկանին և առաջարկել արձանագրություն կազմել կատարված միջադեպի հետ կապված, սակայն արձանագրություն չի կազմվել, և Անիկ Դավթյանն իրականացրել է իր ընտրական իրավունքը: Միջադեպի ողջ ընթացքում Տիգրան Վիրաբյանը գոռգոռացել է և վիրավորական խոսքեր ասել Անիկ Դավթյանի հասցեին: Միջադեպին ներկա է եղել նաև Ծովինար Նազարյանը: Տիգրան Վիրաբյանի կանչով տեղամաս է եկել նաև ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ Արմեն Մարգարյանը: Տիգրան Վիրաբյանը և Արմեն Մարգարյանը փորձել են միջադեպի ամբողջ մեղքը բարդել իրենց վրա՝ որպես միջադեպի հրահրողներ: Տիգրան Վիրաբյանի կողմից արված «անբարոյական բառերը» և վիրավորանքները հասցեագրված էին ուղիղ Անիկ Դավթյանին (հիմք՝ դատական նիստի արձանագրության կրիչը, հատոր 1-ին, գ.թ. 74-76, 79):

4) Ծովինար Նազարյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 18.02.2013 թվականին, որպես «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ-ի կողմից հրավիրված լրագրող, վաղ առավոտից մինչև ընտրությունների ավարտը գտնվել է Արտաշատ քաղաքի թիվ 17/4 տեղամասում և դիտարկել է հանձնաժողովի աշխատանքը, կատարել է նկարահանում և տեսաձայնագրում: Ընտրության ամբողջ ընթացքում հանձնաժողովի նախագահ Տիգրան Վիրաբյանը փորձել է խոչընդոտել լրագրողների և դիտորդների աշխատանքը՝ դիմելով կոպիտ միջոցների: Երեկոյան ընտրատեղամաս է եկել հայցվոր Անիկ Դավթյանը, ում Տիգրան Վիրաբյանը տեսնելով՝ սկսել է ագրեսիվ տրամադրվել և իր համար լսելի էր, թե ինչպես է արտահայտվում վերջինս Անիկ Դավթյանի հասցեին, որ «հետա սկսվելու է, սա էլի եկավ, ամեն ընտրության սա սենց է անում»: Անիկ Դավթյանն ընտրացուցակում տեսել է իր որդիների անունները, ովքեր բացակայում են Հայաստանի Հանրապետությունից և փորձել է գիծ քաշել նրանց անունների վրա: Այդ ընթացքում Տիգրան Վիրաբյանի եղբորորդին՝ Հրաչիկ Վիրաբյանը, քաշել է մատյանը և չի թողել Անիկ Դավթյանին ջնջում կատարել ընտրացուցակում: Այդ ընթացքում վիճաբանություն է առաջացել Անիկ Դավթյանի և Տիգրան Վիրաբյանի միջև, և վերջինս վիրավորական արտահայտություններ է արել Անիկ Դավթյանի հասցեին: Տիգրան Վիրաբյանը հրավիրել է ոստիկանին և պահանջել կազմել արձանագրություն, որպեսզի Անիկ Դավթյանը դուրս հրավիրվի և չմասնակցի ընտրությանը, սակայն արձանագրություն չի կազմվել և համաձայնվել են, որ մատյանը դրվի սեղանին, և Անիկ Դավթյանը ստորագրի ու իրականացնի իր ընտրական իրավունքը: Ինքը միջադեպի ժամանակ գտնվել է Անիկ Դավթյանի և Հրաչիկ Վիրաբյանի մեջտեղում, և իր համար լսելի են եղել Տիգրան Վիրաբյանի կողմից Անիկ Դավթյանի հասցեին արված վիրավորական արտահայտությունները: Տիգրան Վիրաբյանն անգամ Անիկ Դավթյանին անվանել է «պոռնիկ» և այդ արտահայտությունն Անիկ Դավթյանին լսելի չի եղել, բայց քանի որ ինքը մոտ է կանգնած եղել, այն իր համար լսելի է եղել: Տեսաձայնագրության մեջ Տիգրան Վիրաբյանի կողմից արված արտահայտություններն իր համար եղել են լսելի և դրանք հասցեագրված էին կոնկրետ Անիկ Դավթյանին, ում նկատմամբ Տիգրան Վիրաբյանը տրամադրված էր շատ ագրեսիվ և որպես հանձնաժողովի նախագահ պատշաճ կարգով չէր իրականացնում ընտրական աշխատանքները, խախտում էր կարգուկանոնը (հիմք՝ դատական նիստի արձանագրության կրիչը, հատոր 1-ին, գ.թ. 74-76, 79):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ անձի պատիվը, արժանապատվությունն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը որպես վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ հաշվի առնելով այս հարցի կապակցությամբ նախկինում ձևավորած դիրքորոշումը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և

պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան)՝ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության հիմքում, այն ժողովրդավարական հասարակության, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկն է: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է ոչ միայն այն տեղեկությունները և գաղափարները, որոնք ընդունվում են բարյացակամությամբ կամ անտարբերությամբ, այլ նաև այն տեղեկությունները և գաղափարները, որոնք ցնցում կամ անհանգստություն են պատճառում պետությանը կամ հասարակության տարբեր խմբերին, այդպիսին են բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը, առանց որոնց չկա ժողովրդավարական հասարակություն (*Կենս, Լինգենան ընդդեմ Ավստրիայի թիվ 9815/82 դիմումով ՄԻԵԴ 08.07.1986 թվականի որոշում պարբ. 41*): Միաժամանակ, Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքը բացարձակ իրավունք չէ: Ազատ արտահայտվելու իրավունքը չի կարող գոյություն ունենալ մեկուսացման պայմաններում, այն պետք է հավասարակշռվի հասարակության և պետության կենսական շահերի, ինչպես նաև մարդու այլ հիմնարար իրավունքների հետ: Այդ իսկ պատճառով էլ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացումը կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ և կարող է պայմանավորվել ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնական աղբյուրն է, պետության գոյության հիմնական պատճառներից մեկը: Մարդու արժանապատվության մասին նշված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում,

որոնց համաձայն՝ մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ է արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությունը հռչակել է, որ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվությունը ճանաչվում է որպես բարձրագույն արժեք, որպես մարդու իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, ինչից հետևում է, որ յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը ենթակա է պաշտպանության պետության կողմից: Միաժամանակ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության և իրավական պետության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը և ՀՀ Սահմանադրության 27-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածներն անվերապահորեն հետապնդում են վերը նշված նպատակը: Սակայն ինչպես նշված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասում, այս ազատության իրականացումը կապված է պարտականությունների և պատասխանատվության հետ: Չպետք է անտեսել նաև այլ իրավունքները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային՝ մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող փաստաթղթերում նշված արժանապատվության և մասնավոր կյանքի իրավունքը, որոնք պակաս կարևոր չեն ժողովրդավարական հասարակության և իրավական պետության համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 15.11.2011 թվականի թիվ ՍԴՌ-997 որոշման մեջ նշել է, որ մամուլի դեմ անձի պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով հարուցված հայցերի դեպքում առկա է արտահայտվելու ազատության իրավունքի և անձի արժանապատվության բախում, և լուծումները պետք է գտնվեն դրանց հավասարակշռման տիրույթում: ՀՀ Սահմանադրության անձի արժանապատվությանը և արտահայտվելու ազատության իրավունքին վերաբերող հոդվածների, ինչպես նաև 43-րդ և 47-րդ (1-ին մաս) հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ մարդու արժանապատվությունից, ներառյալ՝ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել արտահայտվելու ազատության սահմանափակումը միայն իրավաչափ շրջանակներում: Այդ մոտեցումն է դրված նաև Կոնվենցիայի 10-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 17-րդ և 19.3-րդ, Մարդու իրավունքների հանրնդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածների հիմքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ մարդու արժանապատվության և արտահայտվելու ազատության իրավունքի բախում է տեղի ունենում, անհրաժեշտ է գտնել պարզ հավասարակշռություն սրանց միջև: Մրանցից յուրաքանչյուրն էլ ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ բաղադրամասեր են, և երկուսն էլ պետք է ներդաշնակորեն առկա լինեն ժողովրդավարական հասարակությունում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված անձի արժանապատվության գործնականում ապահովման իրավական երաշխիք է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ, իսկ 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Նույն հոդվածի իմաստով հրապարակային արտահայտությունը տվյալ իրավի-

ճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Նշված իրավադրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ իր դիրքորոշումն է արտահայտել Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ վերոնշյալ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ վիրավորանքը (պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը) կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլյացիաներ, սիմվոլներ): Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակել միջոցների շարքը, որոնք կարող են կիրառվել վիրավորանքն արտահայտելիս՝ հնարավորություն տալով իրավակիրառողին, կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, որոշել՝ արդյոք տվյալ միջոցի օգտագործմամբ կատարված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք: Հետևաբար վիրավորանքը կարող է արտահայտվել ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, որը ներառված չէ վերոնշյալ թվարկման մեջ:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ՝

1) Արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստն ապացուցելու դատավարական բեռը ողջամտության սահմաններում կրում է հայցվորը:

2) Արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրածանակի, ունակ է անձին վերածել ատելության կամ արհամարանքի առարկայի կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից:

3) Արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը:

4) Արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, որպիսի փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը): Նման դեպքերում առկա է վնասի համատեղ պատճառում:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության

միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ՝ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց:

Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային (անձը վիրավորել է տուժողին առանց երրորդ անձանց ներկայության):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրն ամրագրել է որոշակի դեպքեր, երբ արտահայտությունը թեև բավարարում է վերոնշյալ պայմաններին, սակայն կոնկրետ իրավիճակում և իր բովանդակությամբ օրենքի ուժով կարող է չհամարվել վիրավորանք: Այդպիսիք են այն դեպքերը, երբ տեղեկատվությունը հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով: Օրենսդրական նման ձևակերպումը հիմք է արձանագրելու, որ այդ դեպքերը յուրաքանչյուր կոնկրետ գործով ենթակա են առանձին գնահատման՝ պարզելու, թե արդյոք տվյալ բովանդակությամբ և տվյալ իրավիճակում ներկայացված արտահայտությունը պարունակում է վիրավորանք, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ յուրաքանչյուր դատական գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք ներկայացված փաստացի տվյալները տվյալ իրավիճակում և իրենց բովանդակությամբ բխել են «Գերակա հանրային շահից», որն անմիջականորեն պայմանավորված է հասարակության տեղեկացված լինելու իրավունքի շահով, արդյո՞ք հանրության համար այդ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է եղել, արդյո՞ք հասարակությունը հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել է դրանց հետագա հրապարակմանը: «Գերակա հանրային շահը» գնահատելիս վերոնշյալ հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ գանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում՝ գաղափարների տարածման պարտականություն: Զանգվածային լրատվության միջոցների այդ գործառնություն (պարտականությանը) գուցե դրվում (համապատասխանում) է հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:

Հետևաբար, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որպեսզի վիրավորանքի և զրպարտության գործերով հստակ տարանջատում կատարվի գնահատողական դատողության և փաստերի միջև՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումներ թույլ տալը բացառելու նպատակով (տե՛ս, Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի թիվ 17/0749/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այդ տեղեկությունները հաստատվում են՝ գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով: Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են այլ առարկաները, որոնք իրենց արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման միջոց դառնալ: Իրեղեն ապացույցներ են նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները:

Վերոգրյալ դատավարական նորմերից հետևում է, որ գործով ապացույցներ են օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնք հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով: Ավելին, դատարանը, ելնելով գործի առանձնահատկություններից, ինչպես նաև գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից, առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, դրանց շրջանակը: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից: Շեղանաբար, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Հատկանշական է, որ դատարանի կողմից վերը նշված դատավարական նորմերով իրականացվող գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմների կիրառմանը:

Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելիս վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ կետը, պատճառաբանել է, որ սույն գործով բողոք բերած անձը որևէ ապացույցով չի հիմնավորել, որ Տիգրան Վիրաբյանի կողմից կատարած արտահայտություններն անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն են ունեցել, որպիսի պարտականությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի ուժով դրված է վերջինիս վրա: Տվյալ դեպքում Տիգրան Վիրաբյանը հայցադիմումի պատասխանում նշել է, որ դիտավորություն չի ունեցել վիրավորելու հայցվորներին, որպիսի հանգամանքը ևս բացառում է արված արտահայտությունները վիրավորանք գնահատելու համար: Տիգրան Վիրաբյանի կողմից արված արտահայտությունները չեն համարվում վիրավորանք, քանի որ բացակայում է վիրավորանքի բնութագրման չափանիշների միաժամանակյա առկայությունը, որպիսի պայմաններում բողոքն այս հիմքով հիմնավոր չէ, իսկ Դատարանի եզրահանգումն իրավաչափ է: Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերոգրյալ պատճառաբանությունները, վերաքննիչ բողոքի մյուս հիմքերը և հիմնավորումները սույն գործով ծագած վեճի լուծման տեսանկյունից էական չի համարում և հետևաբար դրանց չի անդրադառնում: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, անհիմն համարելով վերաքննիչ բողոքի հիմքերը, դրանց վերաբերյալ վերոգրյալ պատճառաբանությամբ արտահայտած իրավական դիրքորոշմամբ գտել է, որ Դատարանը, կատարելով սույն քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, կայացրել է վեճն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ 18.02.2013 թվականին ՀՀ Արարատի մարզի թիվ 17/4 տեղամասում տեղի է ունեցել ՀՀ նախագահի ընտրություն, որին որպես ընտրող մասնակցել է նաև ՀՀ քաղաքացի Անիկ Դավթյանը, ընտրության ընթացքում տեղի է ունեցել միջադեպ և թիվ 17/4 տեղամասի հանձնաժողովի նախագահ Տիգրան Վիրաբյանն Անիկ Դավթյանի նկատմամբ կատարել է հետևյալ արտահայտությունները ««լսի քո նման լկտի չեն ստեղի աշխատողները», «սաղ կյանքդ լկտի ծնվել ես, լկտի էլ սատկելու ես», «ամեն ընտրություններին գալիս ես, լկտի ես քեզ պահում», «դեռասան մեյմուն», «տականքի մեկը», «ձեռդ կտրի ստոր», «սրան դուս հանեք տեղամասից», «էս խելաղը», «հոգեկան հիվանդը», «գիբիլը», «մի արի ստե կապիկություններ արա»»: Նշված միջադեպը տեսաձայնագրվել է և տեղադրվել «www.youtube.com» կայքում: Ընտրությանը ներկա են գտնվել «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ-ի դիտորդ Տաթևիկ Բարսեղյանը և «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ-ի կողմից հրավիրված լրագրող Ծովինար Նազարյանը, ովքեր Դատարան են հրավիրվել որպես վկաներ և ցուցմունքներ տվել այն մասին, որ թիվ 17/4 ընտրական տեղամասում Անիկ Դավթյանի և Տիգրան Վիրաբյանի միջև տեղի է ունեցել միջադեպ, և վերջինիս կողմից հնչել են հայտյանքներ Անիկ Դավթյանի հասցեին: Տիգրան Վիրաբյանի կողմից արված վիրավորանքները հասցեագրված էին Անիկ Դավթյանին, և տեսաձայնագրության մեջ Տիգրան Վիրաբյանի կողմից արված արտահայտությունները լսելի են եղել իրենց համար և դրանք հասցեագրված էին կոնկրետ Անիկ Դավթյանին, ում նկատմամբ Տիգրան Վիրաբյանը տրամադրված էր շատ ազդեցիվ և որպես հանձնաժողովի նախագահ պատշաճ կարգով չէր իրականացնում ընտրական աշխատանքները, խախտում էր կարգուկանոնը:

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Տիգրան Վիրաբյանի

կողմից Անիկ Դավթյանի հասցեին կատարած արտահայտությունները վիրավորանք չհամարելու վերաբերյալ ստորադաս դատարանների պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ն՝ Դատարանը, ն՝ Վերաքննիչ դատարանը սույն գործով չեն իրականացրել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված քաղաքացիական գործում առկա ապացույցների պատշաճ գնահատում, մասնավորապես՝ նշված միջադեպի տեսագրությունը չեն գնահատել վկաների ցուցմունքների և գործին մասնակցող անձանց ցուցմունքների համակցության մեջ՝ անտեսելով այն հանգամանքը, որ Տիգրան Վիրաբյանի կողմից Անիկ Դավթյանի հասցեին կատարած արտահայտությունները կատարվել են երրորդ անձանց ներկայությամբ, այսինքն՝ հրապարակային ձևով և ըստ վկաների ցուցմունքների՝ Տիգրան Վիրաբյանի կողմից արտահայտած վիրավորանքը, դրսևորվելով խոսքի միջոցով, կատարվել է ուղիղ Անիկ Դավթյանի հասցեին՝ նպատակ հետապնդելով վիրավորելու Անիկ Դավթյանի անձը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Տիգրան Վիրաբյանը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, իր իսկ դատական ակտում արձանագրելով, որ Տիգրան Վիրաբյանը ներկայացրել է հայցադիմումի պատասխան, անտեսել է դրա բացակայությունը գործի նյութերում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը խախտել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով նախատեսված անձի պատիվը, արժանապատվությունն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը վիրավորանք համարելու վերաբերյալ առանձնահատկությունները պարզելու, ինչպես նաև գործում առկա ապացույցները վերաբերելիության և թույլատրելիության համակցության մեջ գնահատելու ընթացակարգը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/0906/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0906/02/13

Նախագահող դատավոր՝

Ա. Մկրտչյան

Դատավորներ՝

Ի. Վարդանյան

Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորները

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Երևանի քաղաքապետարանի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Դպրոց) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սեյրան Ստեփանյանի ընդդեմ Դպրոցի՝ 05.06.2013 թվականի թիվ 07-Ա ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի, վերջնահաշվարկի, տուժանքի և օվերդրաֆտի տույժի գումար բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սեյրան Ստեփանյանը պահանջել է անվավեր ճանաչել Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի թիվ 07-Ա հրամանը, իրեն վերականգնել նախկինում զբաղեցրած աշխատանքում և Դպրոցից բռնագանձել 208.408 ՀՀ դրամ՝ որպես աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման պարտականությունը նախապես չկատարելու համար սահմանված տուժանք, 104.204 ՀՀ դրամ՝ որպես մեկ ամսվա չափով հարկադիր պարապուրդի գումար, 125.000 ՀՀ դրամ՝ որպես վերջնահաշվարկի գումար և 33.000 ՀՀ դրամ՝ որպես օվերդրաֆտի տույժի գումար:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Բարսեղյան) (այսուհետ՝ Դատարան) 11.10.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2014 թվականի որոշմամբ Սեյրան

Ստեփանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 11.10.2013 թվականի վճիռը և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դպրոցը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սեյրան Ստեփանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 219-րդ և 220-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 335-րդ, 337-րդ և 340-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ սույն գործով հայցվորն իր իրավունքի պաշտպանության համար դատարան դիմելու օրենքով սահմանված ժամկետի ընթացքում փորձել է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել արտադատարանական, մասնավորապես վարչական կարգով՝ դիմելով պետական մարմիններին, որոնց կողմից իրականացված գործողությունների արդյունքները ստանալուց (Երևանի քաղաքապետարանի գրությունը ստացվել է 18.07.2013 թվականին) անմիջապես հետո՝ 19.07.2013 թվականին (հրամանը ստանալու պահից մեկ ամիս 12 օր հետո) հայց է ներկայացրել Դատարան: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հայցվորը, դիմելով տարբեր պետական մարմինների, փորձել է իրականացնել իր իրավունքների պաշտպանությունն արտադատարանական կարգով, սակայն անտեսել է այն հանգամանքը, որ Սեյրան Ստեփանյանը 12 օր ուշացումով է դիմել դատարան:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքից ազատման հրամանը վերացնելու և նախկին աշխատանքում վերականգնելու իրավասությունը վերապահված է միայն դատարանին, հետևաբար ՀՀ օրենսդրությամբ այլ պետական մարմինները լիազորված չեն անձի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով աշխատանքից ազատման հրամանն անվավեր ճանաչել կամ նախկին աշխատանքում վերականգնել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Սեյրան Ստեփանյանը Դատարանին միջնորդություն չի ներկայացրել՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ Դատարանը հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով հայցը մերժելու դեպքում չպետք է անդրադառնար հայցի այլ հիմքերին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.01.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 11.10.2013 թվականի վճիռն:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ սույն գործով վիճելի իրա-

վահարաբերության նկատմամբ Դատարանը հայցային վաղեմություն չպետք է կիրառեր: Մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչություն, Երևանի քաղաքապետարան դիմելն ընդհատում և կասեցնում է դատարան դիմելու իրավունքի մեկամսյա ժամկետը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

6) Դպրոցի տնօրենի՝ տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն Սեյրան Ստեփանյանին աշխատանքից ազատելու մասին թիվ 07-Ա հրամանից 05.06.2013 թվականին արված քաղվածքի համաձայն՝ 05.06.2013 թվականից Սեյրան Ստեփանյանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ազատվել է աշխատանքից, լուծվել է 01.09.2006 թվականին վերջինիս հետ կնքված թիվ 47 պայմանագիրը (հատոր 1-ին, գ.թ. 73):

7) Դպրոցի տնօրենի՝ տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն Սեյրան Ստեփանյանին աշխատանքից ազատելու մասին թիվ 07-Ա հրամանը փոստային առաքման եղանակով 06.06.2013 թվականին հանձնվել է Սեյրան Ստեփանյանին (հատոր 1-ին, գ.թ. 74):

8) ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության 03.07.2013 թվականի թիվ 04/24.2/7257-13 գրության համաձայն՝ Սեյրան Ստեփանյանը ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչություն է դիմել 13.06.2013 թվականին և խնդրել է ձեռնարկել միջոցներ՝ իր աշխատանքային իրավունքները պաշտպանելու համար (հատոր 1-ին, գ.թ. 13):

9) Սեյրան Ստեփանյանի կողմից 05.06.2013 թվականի թիվ 07-Ա ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապյորդի, վերջնահաշվարկի, տուժանքի և օվերդրաֆտի տույժի գումար բռնագանձելու պահանջների մասին հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 19.07.2013 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 2):

10) Դպրոցի ներկայացուցիչ Արմեն Գրիգորյանը դիմում է ներկայացրել Դատարան՝ խնդրելով հայցը մերժել հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով (հատոր 1-ին, գ.թ. 105-106):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ աշխատանքային վեճերով հայցային վաղեմության կիրառման առանձնահատկություններին և այն իրավական խնդրին, թե արդյոք արտադատարանական կարգով աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով պետական մարմիններին դիմելն ընդհատում կամ կասեցնում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների ընթացքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝

ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմությունն իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պահանջների որոշ տեսակների համար օրենքներով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն չի տարածվում աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջներով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի հայցային վաղեմության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել աշխատանքային հարաբերությունների նկատմամբ՝ աշխատանքային օրենսդրությամբ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթների բացակայության դեպքում:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար սահմանելով հայցային վաղեմության ընդհանուր՝ երեք տարվա ժամկետ, նախատեսել է նաև որոշակի բացառություններ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դեպքերի համար: Այսպես, աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների վրա հայցային վաղեմություն ընդհանրապես չի տարածվում, իսկ որոշ պահանջների համար հնարավոր է համարել օրենքով հայցային վաղեմության ընդհանուր ժամկետների համեմատ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետների նախատեսումը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, սպա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ դատարան դիմելու մեկամսյա ժամկետին, նախկինում կայացրած իր որոշմամբ նշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը չի կարգավորում մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում հայցվորի իրավունքների պաշտպանության հարցը, սակայն հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դրանով սահմանված ժամկետն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար, այդ ժամկետն իր բնույթով համապատասխանում է հայցային վաղեմության ժամկետին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ վեճերի համար վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է եղել ընդհանուր վաղեմության ժամկետի համեմատությամբ կրճատ՝ մեկամսյա վաղեմության ժամկետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաղեմության մեկամսյա ժամկետը՝ որպես հայցային վաղեմության հատուկ ժամկետ, տարածվում է միայն նույն հոդվածով նախատեսված՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ վեճերով դատարան ներկայացրած հայցերի նկատմամբ, և որպես օրինական հիմքերի բացակայությամբ կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխվելու կամ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետևանք՝ հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման պահանջի վրա:

Անդրադառնալով աշխատանքային վեճերով հայցային վաղեմության կիրառման խնդրին՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ նշել է նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի պարունակում հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ որևէ դրույթ, ուստի աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները (*տե՛ս, Ադիկ Արդարյանն ընդդեմ Մարգարյուրոցի թիվ ԼԴ/1071/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տե՛ս, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի թիվ ԵԼԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի թիվ 07-Ա հրամանը փոստային առաքման եղանակով 06.06.2013 թվականին հանձնվել է Սեյրան

Ստեփանյանին, իսկ վերջինիս կողմից վերը նշված հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի, վերջնահաշվարկի, տուժանքի և օվերդրաֆտի տույժի գումար բռնագանձելու պահանջների մասին հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 19.07.2013 թվականին, այն է՝ հրամանը ստանալու պահից մեկ ամիս տասներկու օր հետո:

Դատարանը, նկատի ունենալով, որ Սեյրան Ստեփանյանն իր իրավունքների պաշտպանության հայցով դատարան է դիմել 19.07.2013 թվականին, այսինքն՝ բաց է թողել դատարան դիմելու՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետը, իսկ վեճի կողմ հանդիսացող Դպրոցի ներկայացուցիչ Արմեն Գրիգորյանը մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը դիմում է ներկայացրել՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի լրանալը և պատասխանողի կողմից հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի ուժով հիմք են ըստ Սեյրան Ստեփանյանի ընդդեմ Դպրոցի՝ աշխատանքից ազատելու հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և դրանցով պայմանավորված՝ տուժանք և հարկադիր պարապորդի գումար բռնագանձելու պահանջներով հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ սույն գործով հայցվորն իր իրավունքի պաշտպանության համար դատարան դիմելու՝ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում փորձել է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել արտադատարանական, մասնավորապես՝ վարչական կարգով՝ դիմելով պետական մարմիններին, որոնց կողմից իրականացված գործողությունների արդյունքները ստանալուց (Երևանի քաղաքապետարանի գրությունը ստացվել է 18.07.2013 թվականին)՝ վարչական կարգով իրավունքների պաշտպանության եղանակները սպառելուց անմիջապես հետո՝ 19.07.2013 թվականին (հրամանը ստանալու պահից մեկ ամիս 12 օր հետո), հայց է ներկայացրել Դատարան: Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ պայմաններում անձի աշխատանքային իրավունքների և դատարան դիմելու իրավունքի հաշվին տվյալ գործատուի մոտ աշխատանքային իրավահարաբերությունների կայունությունն ու որոշակիությունն ապահովվել (որպես հայցային վաղեմության ժամկետի նպատակի իրագործում), չի ապահովի հայցային վաղեմության՝ որպես սահմանափակման միջոցի և հետապնդված նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը, և եզրակացրել է, որ Դատարանը, կիրառելով հայցային վաղեմություն և չիրականացնելով գործի ըստ էության քննություն, թույլ է տվել *Սեյրան Ստեփանյանի* արդար դատաքննության իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

Վերոնշյալ իրավանորմի բովանդակությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է աշխատանքային հարաբերություններում ծագած՝ անձի իրավունքների պաշտպանության միայն մեկ՝ դատական պաշտպանության եղանակը, մինչդեռ սույն գործով հայցվոր Սեյրան Ստեփանյանը Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի՝ իրեն աշխատանքից ազատելու մասին թիվ 07-Ա հրամանն օրենքով սահմանված կարգով և ժամկետում դատարանում վիճարկելու փոխարեն իր

իրավունքների պաշտպանությունը փորձել է իրականացնել արտադատարանական կարգով, ինչի արդյունքում դատարան է դիմել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն առ այն, որ հայցվորը դատարան դիմել է իր իրավունքների պաշտպանության մյուս եղանակները սպառելուց հետո, քանի որ այն աշխատանքային վեճերով դատական պաշտպանությունից բացի որևէ այլ եղանակ աշխատանքային իրավունքների պաշտպանության համար օրենսդիրը չի նախատեսել:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ մի կողմից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված վեճերի համար հատուկ կրճատ հայցային վաղեմության ժամկետի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել գործատուի մոտ աշխատանքային իրավահարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը՝ կապված թափուր հաստիքը հնարավորինս արագ համալրելու, աշխատանքային բնականոն ընթացքն արագ վերականգնելու հետ, և այս առումով, հայցային վաղեմությունն իսկապես ուղղված է գործատուի շահերի պաշտպանությանը, սակայն մյուս կողմից, հաշվի առնելով, որ աշխատողն ունի ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունք, որպես սոցիալական ազատության երաշխիք՝ օրենսդրի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված վեճերի համար հատուկ կրճատ հայցային վաղեմության ժամկետի սահմանումը պայմանավորված է նաև աշխատողի շահերի պաշտպանությամբ և ուղղված է աշխատողի իրավունքների, այդ թվում՝ աշխատանքի դիմաց ժամանակին վարձատրություն ստանալու իրավունքի արագ և արդյունավետ պաշտպանությանը:

Հետևաբար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված կրճատ ժամկետը պայմանավորված է թե՛ գործատուի և թե՛ աշխատողի իրավունքներով և օրինական շահերով:

Այս առումով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված ժամկետն ապահովում է գործատուի և աշխատողի իրավունքների և օրինական շահերի միջև արդարացի հավասարակշռություն, հետևաբար Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում հայցային վաղեմության ժամկետի՝ որպես սահմանափակման միջոցի և հետապնդված նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ վեճերի դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված ժամկետի կիրառման մասով վճռաբեկ բողոքը հիմնավոր է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Սույն գործով հայցվորը Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի թիվ 07-Ա հրամանն անվավեր ճանաչելու, իրեն նախկինում զբաղեցրած աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարտապորտի գումարը բռնագանձելու պահանջներից բացի ներկայացրել է նաև այլ գումարների՝ վերջնահաշվարկի, աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման պարտականությունը նախապես չկատարելու համար սահմանված տուժանքի, օվերդրաֆտի տույժի բռնագանձման պահանջներ, որոնց համար ոչ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ոչ այլ օրենքներով հատուկ վաղեմության ժամկետներ նախատեսված չեն, հետևաբար այդ պահանջների նկատմամբ կիրառելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված ընդհանուր՝ 3 տարվա հայցային վաղեմության ժամկետը:

Դատարանը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի լրանալը և պատասխանողի կողմից հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը հիմք ընդունելով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի ուժով մերժել է ոչ միայն Դպրոցի տնօրենի 05.06.2013 թվականի թիվ 07-Ա հրամանն անվավեր ճանաչելու, իրեն նախկինում զբաղեցրած աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի գումարը բռնագանձելու պահանջները, այլ նաև վերջնահաշվարկի, աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման պարտականությունը նախապես չկատարելու համար սահմանված տուժանքի, օվերդրաֆտի տույժի բռնագանձման պահանջները:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (*յրե՛ս, օրինակ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության թիվ 3-2504/ՏԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ կյուրական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

Մինչդեռ սույն գործով Դատարանի վճռում նշված չէ որևէ իրավական նորմ, որով ղեկավարվել է Դատարանը՝ վերջնահաշվարկի, աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման պարտականությունը նախապես չկատարելու համար սահմանված տուժանքի, օվերդրաֆտի տույժի բռնագանձման մասով հայցը մերժելիս:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոք բերած հայցվորի՝ գումարների բռնագանձման վերաբերյալ փաստարկներին չի անդրադարձել՝ նշելով, որ դրանք չեն վերաբերում հայցային վաղեմություն կիրառելուն (որպիսի հիմքով մերժվել է հայցը), դատարանի կողմից չի իրականացվել գործի ըստ էության քննություն, ուստի այդ փաստարկները կարող են քննության առարկա դառնալ միայն գործի ըստ էության քննության ընթացքում:

Նման պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջնահաշվարկի, աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման պարտականությունը նախապես չկատարելու համար սահմանված տուժանքի, օվերդրաֆտի տույժի բռնագանձման մասով գործը պետք է ուղարկվել նոր քննության՝ հայցապահանջի հիմնավորվածությունը պարզելու համար:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, Դպրոցի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակի բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2014 թվականի որոշումը՝ Սեյրան Ստեփանյանի հայցն ընդդեմ «Երևանի քաղաքապետարանի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 05.06.2013 թվականի թիվ 07-Ա ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասով և այդ մասով այն փոփոխել՝ հայցն այդ մասով մերժել:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Բեկանված մասով դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.04.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/1879/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1879/02/11
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը
մասնակցությանը դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Քրիստինա Ներիշի ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և գումար բռնագանձելու
պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քրիստինա Ներիշը պահանջել է անվավեր ճանաչել
աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության 22.08.2011 թվականի թիվ
3828-Կ հրամանը, վերականգնել աշխատանքում, Ընկերությանը պարտավորեցնել վճարել
հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավա-
տության դատարանի 12.06.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2012 թվականի որոշմամբ
Քրիստինա Ներիշի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Արաբկիր
և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի
12.06.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.11.2012
թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2012 թվականի

որոշման դեմ Ընկերության վճարել բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Հունանյան) (այսուհետ՝ Դատարան) 19.09.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության 22.08.2011 թվականի թիվ 3828-Կ հրամանը, Քրիստինա Ներիշին վերականգնել Ընկերությունում՝ մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան աշխատանքում, Ընկերությանը պարտավորեցնել Քրիստինա Ներիշին վճարել նրա միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.12.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.09.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը, 15-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը և 86-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ 16.08.2011 թվականից հետո Ընկերությունում գործել է նոր կազմակերպչական կառուցվածք, որում գոյություն չի ունեցել այն կառուցվածքային միավորը, որտեղ նախկինում աշխատել է Քրիստինա Ներիշը, նշել է, որ իբր Ընկերության կողմից չեն ներկայացվել ապացույցներ՝ կապված աշխատանքային պայմանները փոփոխելու հետևանքով աշխատատեղերի թվաքանակի կրճատման և Ընկերության մոտ Քրիստինա Ներիշի որակավորմանը, մասնագիտական պատրաստվածությանը և առողջական վիճակին համապատասխան աշխատանքի բացակայության հետ: Չնայած դրան՝ հաստիքը կրճատված լինելու վերաբերյալ փաստը հաստատելու նպատակով Ընկերությունը Դատարան է ներկայացրել նոր հաստիքացուցակը:

Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն հաստատված են համարել այն փաստը, որ Քրիստինա Ներիշի զբաղեցրած հաստիքն այլևս գոյություն չունի. դա է պատճառ հանդիսացել, որպեսզի Դատարանն Ընկերությանը պարտավորեցնի Քրիստինա Ներիշին վերականգնել նրա նախկին աշխատանքի փոխարեն Ընկերությունում այլ աշխատանքում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանն իր կայացրած վճռով, ըստ էության, Ընկերությունից պահանջում է կատարել վարչակառուցվածքային փոփոխություններ՝ ստեղծելով լրացուցիչ հաստիք:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը գործատուին իրավունք է վերապահել իր մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծել առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

Վերաքննիչ դատարանի որոշումը չի բխում նաև ՀՀ սահմանադրական դատարանի 07.07.2010 թվականի ՍԴՌ-902 որոշումից, որով ՀՀ սահմանադրական դատարանն

ինքնին իրավաչափ է համարել տնտեսական, տեխնոլոգիական և կազմակերպչական պատճառներով աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքերում աշխատողին աշխատանքում չվերականգնելը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2013 թվականի որոշումն ու «հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածով նախատեսված կարգը՝ կայացնել համապատասխան որոշում»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Քրիստինա Ներիշի միջև 17.04.2008 թվականին կնքված թիվ 3070/1 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Քրիստինա Ներիշը նշանակվել է Ընկերությունում «Գործառնությունների տնօրինության ֆիքսված կապի բիզնեսի տեխնիկական տնօրինության ցանցի շինարարության ծառայության բաժանորդային ցանցի շինարարության բաժնի ավագ ճարտարագետի պաշտոնում» (հատոր 1-ին, գ.թ. 14-21).

2) Ընկերության և Քրիստինա Ներիշի միջև 15.10.2008 թվականին կնքված թիվ 1 լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ Քրիստինա Ներիշը նշանակվել է Ընկերությունում «Տեխնիկական բոլի պլանավորման, օպտիմիզացման և շինարարության տնօրինության շինարարության և ֆիքսված կապի ցանցերի նախագծերի իրականացման ծառայության մուտքային ցանցերի շինարարության բաժնի ավագ ճարտարագետի պաշտոնում» (հատոր 1-ին, գ.թ. 21).

3) Ընկերության Տնօրենների Խորհրդի 16.08.2011 թվականի թիվ 9/1 որոշմամբ հաստատվել է Ընկերության նոր կազմակերպական կառուցվածքը և նոր հաստիքացուցակը: Միաժամանակ ուժը կորցրած է ճանաչվել նույն Խորհրդի 06.07.2011 թվականի թիվ 08/11 որոշմամբ հաստատված կազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը (հատոր 1-ին, գ.թ. 53, 54).

4) աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության ՄՌ կառավարման և կազմակերպական զարգացման տնօրենի 22.08.2011 թվականի հրամանի համաձայն՝ Ընկերության և Քրիստինա Ներիշի միջև կնքված վերը նշված պայմանագիրը, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված (աշխատողների քանակի և հաստիքների կրճատում), 29.08.2011 թվականից լուծվել է (հատոր 1-ին, գ.թ. 26).

5) Ընկերության կադրային վարչարարության և ՄՌ կառավարման ծառայության ղեկավար Վ. Բաղդասարյանի 06.03.2013 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ընկերության Տնօրենների Խորհրդի 06.07.2011 թվականի թիվ 08/11 որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն՝ Տեխնիկական Բոլկում առկա էր ավագ ճարտարագետի 102 հաստիք: Ընկերության Տնօրենների Խորհրդի 15.08.2011 թվականի թիվ 09/11 որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն՝ Տեխնիկական Բոլկում առկա էր ավագ ճարտարագետի 96 հաստիք: Ընկերության Տնօրենների Խորհրդի 23.01.2013 թվականի թիվ 01/13 որոշմամբ հաստատված և ներկայումս գործող հաստիքացուցակի համաձայն՝ Տեխնիկական Բոլկում առկա է ավագ ճարտարագետի 26 հաստիք (հատոր 3-րդ, գ.թ. 16):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը

վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու և այդ դեպքերում աշխատանքում վերականգնելու առանձնահատկություններին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է գործատուի նախաձեռնությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները, արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես՝

1. պայմանագիրը պետք է կնքված լինի անորոշ կամ որոշակի ժամկետով.

2. պայմանագրի լուծումը պետք է պայմանավորված լինի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ.

3. պետք է կրճատված լինեն աշխատողների քանակը և (կամ) հաստիքները.

4. գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պետք

է աշխատողին առաջարկած լինի նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը պետք է հրաժարված լինի առաջարկված աշխատանքից, կամ

5. գործատուի մոտ պետք է բացակայեն աշխատողին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորությունները:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գործատուի մոտ միայն արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությունն ինքնին բավարար չէ աշխատողի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը (*Կոնս, Արդրակ Մորադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը, Սուրեն Թադևոսյանը և Եվգենիա Մանուկյանն ընդդեմ «Գաֆեւճեան Ժանգարան» հիմնադրամի թիվ ԵԿԴ/3613/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին անդրադառնալիս նշել է, որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք, այլ պարտադիր պայման է համարվում, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին: Միայն աշխատողի կողմից մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան առաջարկված աշխատանքից հրաժարումը կարող է հանգեցնել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն, որ օրենքի վերոնշյալ հոդվածը նպատակ է հետապնդում պաշտպանության տակ առնելու աշխատողներին այն բոլոր դեպքերում, երբ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) նախկինում կատարած աշխատանքին համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք (*Կոնս, Գայանե Դանիլովան ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵՆԲԴ/2378/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դա-

տարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու հարցին այն դեպքերում, երբ գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է աշխատողը, և առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք: Մասնավորապես, Անաստաս Գիշյանը, Նորայր Եղիկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքում աշխատողներ Անաստաս Գիշյանի և Նորայր Եղիկյանի նախկին հաստիքային միավորը գոյություն չունի, իսկ գործող գյուղական մոդեռնիզացված անալոգային կորորդիատային կայանների սպասարկման համար նախկին աշխատակիցների անհրաժեշտությունը չլինելու, ինչպես նաև չսպասարկվող կայանները կարիքն առաջանալու դեպքում կայանային խմբի ղեկավարի և ճարտարագետի կողմից սպասարկվելու պայմաններում, գործատուի մոտ բացակայում են նաև նրանց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանքներ, իսկ հայցվորները չեն ապացուցել, որ Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքում իրենց նախկին հաստիքային միավորի գոյություն ունենալու, ինչպես նաև ընկերությունում իրենց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք լինելու փաստերը, գտել է, որ հայցվորների հետ աշխատանքային պայմանագրերը լուծվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ներկայիս գործող խմբագրությամբ նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետի) և 3-րդ մասի պահանջների պահպանմամբ (*յրե՛ս, Անաստաս Գիշյանը, Նորայր Եղիկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԳ/0605/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով այն հարցին, թե արդյոք դատարանը պետք է վերականգնի աշխատողին իր նախկին պաշտոնում այն դեպքում, երբ ընկերության գործող վարչակազմակերպ-

չական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է հայցվորը, ըստ էության, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու հիմքի առկայության պայմաններում դատարանի կողմից ընկերության վրա չի կարող դրվել այնպիսի պարտավորություն, որի փաստացի կատարումն օբյեկտիվորեն անհնար է, և նման դեպքերում դատարանի կողմից վերը նշված հոդվածը չկիրառելը կհանգեցնի գործատուի համար լրացուցիչ պարտավորության՝ ստեղծելու կառուցվածքային նոր միավոր, նոր հաստիք, իսկ նման պարտավորության սահմանումը կհանգեցնի գործատուի՝ ՀՀ Սահմանադրության՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի երաշխիքային նորմերի և օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակմանը: Նշվել է նաև, որ այդ իսկ նպատակով օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորությունը՝ վերապահելով դատարանին այդ վարքագծի իրավաչափության գնահատման իրավասություն՝ որոշելու տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինությունը կոնկրետ գործի փաստերից ելնելով (*յու, Հոյս Ծափուրյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ 3-496(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծված լինելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով աշխատանքում վերականգնելու առանձնահատկություններին՝ արձանագրելով, որ՝

1. ոչ բոլոր դեպքերում է, որ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխելը, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելը կարող է հիմք հանդիսանալ աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու համար.

2. այդ կանոնից բացառություն է այն դեպքը, երբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում անգամ վերը նշված խախտումների փաստը հաստատված համարելու պայմաններում աշխատողին չվերականգնել նախկին աշխատանքում, եթե դա անհնարին է նաև տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով: Այս դեպքում նախկին աշխատանքում վերականգնելու փոխարեն դատարանը գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ նրա միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով.

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը գնում է միայն նախկին աշխատանքում վերականգնվելու մասին, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ:

Սույն գործով Դատարանը, հաստատված համարելով, որ հայցվորն աշխատել է Տեխնիկական Բլոկի պլանավորման, օպտիմիզացման և շինարարության տնօրինության

շինարարության և ֆիքսված կապի ցանցերի նախագծերի իրականացման ծառայության մուտքային ցանցերի շինարարության բաժնի ավագ ճարտարագետ, և ըստ նոր կառուցվածքի՝ Տեխնիկական Բյուրոյում պահպանվել են և պլանավորման օպտիմիզացիայի, և ցանցերի շինարարության ծառայությունները, և ցանցերի շահագործման տնօրինությունը, արձանագրել է, որ կազմակերպական նոր կառուցվածքով ընդամենը վերը նշված տնօրինություններն առանձնացվել են և կոչվել են ծառայություններ:

Բացի այդ, հայքը բավարարելիս Դատարանը պատճառաբանել է, որ պատասխանող ընկերությունը որևէ ապացույց չի ներկայացրել, որով կհաստատվեր, որ հայցվորին աշխատանքից ազատելու պահին աշխատանքային պայմանների փոփոխումը հանգեցրել է աշխատողների քանակի կրճատմանը, ինչպես նաև ապացույց այն մասին, որ գործատուի մոտ բացակայել է հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

Ավելին, Դատարանը, նշելով, որ «պատասխանող ընկերությունում կատարվել են կազմակերպական պայմանների կառուցվածքային փոփոխություններ, հայցվորին հնարավոր չի լինի վերականգնել Տեխնիկական Բյուրոյի պլանավորման, օպտիմիզացման և շինարարության տնօրինության շինարարության և ֆիքսված կապի ցանցերի նախագծերի իրականացման ծառայության մուտքային ցանցերի շինարարության բաժնում», այնուամենայնիվ, գտել է, որ «նրան պետք է վերականգնել նրա որակավորմանը, մասնագիտական պատրաստվածությանը և առողջական վիճակին համապատասխան աշխատանքի»:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով ուժի մեջ և հաստատված համարելով այն հանգամանքը, որ գործատուի կազմակերպական նոր կառուցվածքով ընդամենը նախկին տնօրինություններն առանձնացվել են և կոչվել են ծառայություններ, ինչպես նաև այն, որ հայցվորին աշխատանքից ազատելու պահին Ընկերության Տնօրենների Խորհրդի 15.08.2011 թվականի թիվ 09/11 որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն՝ Տեխնիկական Բյուրոյում առկա է եղել ավագ ճարտարագետի 96 հաստիք, հանգել է այն հետևության, որ պատասխանողն ունեցել է հայցվորին նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Քրիստինա Ներիշը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում կարող էր վերականգնվել միայն իր նախկին աշխատանքում՝ որպես Ընկերությունում Տեխնիկական Բյուրոյի պլանավորման, օպտիմիզացման և շինարարության տնօրինության շինարարության և ֆիքսված կապի ցանցերի նախագծերի իրականացման ծառայության մուտքային ցանցերի շինարարության բաժնի ավագ ճարտարագետ, այլ ոչ թե, ընդհանրապես, «վերականգնվեր» Ընկերությունում՝ իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան աշխատանքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերաքննիչ ատյանում գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է

վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*լրեւս, Ռազմիկ Մարտությանն ընդդեմ Սյրեւիան և Մնահիր Մարտությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով ուժի մեջ, անտեսել է նաև այն հանգամանքը, որ Դատարանը, անվավեր ճանաչելով աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության 22.08.2011 թվականի թիվ 3828-Կ հրամանը և Քրիստինա Ներիշին վերականգնելով Ընկերությունում նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան աշխատանքում, չի նշել այն ապացույցը, որը կհաստատեր Ընկերության Տեխնիկական Բյուրոյում առկա համապատասխան ծառայություններում նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան հաստիքի առկայությունը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածում նշված պահանջի պահպանման անհրաժեշտությամբ, քանի որ սույն գործով Դատարանի 19.09.2013 թվականի վճիռը բավականաչափ հստակ ձևակերպված չլինելով (իրավական հիմնավորում չունենալով) պայմաններում այն կկրի վերացական բնույթ, այսինքն՝ կլինի ձևական և կմնա անկատար:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիր կատարումն արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը

թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (*յունս*, «Գլուր» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության և մյուսների թիվ ԳԴ/0171/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 27.12.2013 թվականի որոշումը հիմնավորված չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0023/04/13
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Ս. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/0023/04/13**
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «ԴՎին Հոլդինգ» ՓԲԸ-ի սնանկության
գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի (այսուհետ՝ Կառավարիչ) վճռաբեկ
բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.10.2013 թվականի որոշման դեմ՝
ըստ դիմումի «ԴՎին Հոլդինգ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր
Ղահրամանյանի ընդդեմ «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝
Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կառավարիչը պահանջել է Ընկերությանը սնանկ ճանաչել:
Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի
(դատավոր՝ Ա. Կուրանյան) (այսուհետ՝ Դատարան) 12.07.2013 թվականի վճռով դիմումը
մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դա-
տարան) 31.10.2013 թվականի որոշմամբ Կառավարչի վերաքննիչ բողոքը բավարարվել
է մասնակիորեն՝ Դատարանի 12.07.2013 թվականի վճիռը բեկանվել, և գործի վարույթը
կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը, որը չպետք է կիրառեր, խախտել է նույն օրենսգրքի 14-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածները և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Թե՛ դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի դատական ակտերը կայացվել են ՀՀ օրենքների խախտմամբ: Սույն գործով պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը ենթակա է բավարարման, քանի որ վճարային պարտավորությունն անվիճելի է՝ ճանաչված է ՀՀ տնտեսական դատարանի՝ 27.12.2006 թվականի թիվ S-3181 օրինական ուժի մեջ մտած վճռով և գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, հետևաբար առկա են Ընկերությանը սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները: Վճարային պարտավորության անվիճելիության պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը սույն գործի լուծման համար կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 31.10.2013 թվականի որոշումը՝ «գործը կարճելու մասով», և այն փոփոխել՝ դիմումը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2012 թվականի թիվ ԵՇԴ/0027/04/12 վճռով «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ, նույն դատարանի 21.02.2013 թվականի որոշմամբ Խաչատուր Ղահրամանյանը նշանակվել է «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ (գ.թ. 5-7).

2) ՀՀ տնտեսական դատարանի 27.12.2006 թվականի թիվ S-3181 վճռով Ընկերությունից հօգուտ «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի բռնագանձվել է 101.584.382 ՀՀ դրամ և 4.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար (գ.թ. 8-11).

3) Ընկերության՝ ՀՀ տնտեսական դատարանի վերը նշված վճռով ճանաչված վճարային պարտավորության վկայակոչմամբ այդ ընկերությանը սնանկ ճանաչելու մասին «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի դիմումը Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2009 թվականի վճռով մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունն ի վիճակի է կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները, քանի որ Ընկերության ակտիվների չափը գերազանցում է «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած պարտքի չափը (գ.թ. 54-63).

4) ՀՀ տնտեսական դատարանի կողմից 01.06.2007 թվականին տրվել է թիվ ՏԿԹ-S-3181 կատարողական թերթը (գ.թ. 12).

5) ՀՀ տնտեսական դատարանի 01.06.2007 թվականին տրված թիվ ՏԿԹ-S-3181 կատարողական թերթի հիման վրա 18.06.2007 թվականին հարուցված թիվ 01/05-2185/07 կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի կողմից 02.10.2012 թվականին որոշում է կայացվել Ընկերությանը պատկանող՝ Երևանի Մանսնդյան թիվ 41/4 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացնել հարկադիր աճուրդի (գ.թ. 13).

6) Գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ պարտապան Ընկերության պարտավորությունները «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի նկատմամբ կատարվել են, կամ վերջինիս օգտին

Ընկերությունից գումար է բռնագանձվել:

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելիության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միապետակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միանական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք պարտապանին սնանկ ճանաչելու գործի վարույթը ենթակա է կարճման, եթե նախկինում նույն պարտապանի դեմ սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը մերժվել է:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սնանկության հիմքերի ակնհայտ չլինելու պատճառաբանությամբ դիմումի մերժումը չի արգելում նույն անձին նույն դիմումով նույն պարտապանի դեմ դիմել դատարան՝ սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում:

Վերը նշված դրույթի վերլուծությունից հետևում է, որ սնանկության դիմումը մերժելու դեպքում սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում անձը հնարավորություն ունի նույն պարտապանի դեմ դիմելու դատարան՝ նույն դիմումով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը դատարան է ներկայացվում քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ձևով և բովանդակությամբ, հետևաբար դիմումի ձևի և բովանդակության նկատմամբ ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված պահանջները: Մասնավորապես, վկայակոչված հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը պետք է պարունակի հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, ինչպես նաև հայցվորի պահանջները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի

109-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է «հայցի հիմք» օրենսդրական եզրույթին՝ նշելով, որ այն ներառում է հայցի փաստական և իրավական հիմքերը, ընդ որում, հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար, իսկ հայցի իրավական հիմքը այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը (*յրե՛ս, Վիգեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված «նույն դիմում» եզրույթը նշանակում է նույն ձևի և բովանդակության, այսինքն՝ միևնույն փաստական և իրավական հիմքեր պարունակող, նույն առարկայի մասին դիմում, որը ներկայացվել է նախկինում, և որի վերաբերյալ առկա է դիմումը մերժելու մասին վճիռ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը կիրառելի չէ, քանի որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով դիմում կրկին ներկայացնելու հնարավորություն:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը կայացրել է սնանկության գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշում և պատճառաբանել է, որ «սնանկության վերաբերյալ գործի վարույթը կարճելու առնչությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված չեն այլ կանոններ, քան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որպիսի պարագայում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի ուժով հարկ է դեկլարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով, որը պահանջում է կարճել գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ: Տվյալ պարագայում Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին դիմումը ներկայացվել է «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի անունից՝ ՀՀ տնտեսական դատարանի կողմից թիվ Տ-3181 գործով 27.12.2006 թվականին կայացված վճռով ճանաչված վճարային պարտավորության վկայակոչմամբ, և առկա է Ընկերության՝ ՀՀ տնտեսական դատարանի 27.12.2006 թվականի վճռով ճանաչված վճարային պարտավորության վկայակոչմամբ այդ Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի դիմումը մերժելու մասին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.12.2009 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճիռը, ուստի սույն գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքով»:

Վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքը կիրառելի չէ, քանի որ.

1) «Մասնկության մասին» ՀՀ օրենքը չի արգելում նույն անձին նույն դիմումով նույն պարտապանի դեմ դիմել դատարան, հետևաբար Ընկերությանը սնանկ ճանաչելու

մասին «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի դիմումը մերժելու մասին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.12.2009 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ն գրկված չէ նույն պարտապանի դեմ նույն դիմումով դատարան դիմելու հնարավորությունից, բացի այդ՝

2) սույն գործով դիմումը ներկայացված է այլ իրավական հիմքով:

Մասնավորապես, «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի դիմումը, որի վերաբերյալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.12.2009 թվականին կայացվել է դիմումը մերժելու մասին վճիռ, ներկայացված է եղել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության պահին գործող 3-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, այն է՝ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է, նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:

Իսկ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2009 թվականին կայացրած օրինական ուժի մեջ մտած վճռով դիմումը մերժվել է իրավահարաբերության ժամանակ գործող «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների հիմքով, այն է՝ պարտապանն անվճարունակ է, եթե պարտապանի պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն): Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա օրենքի համաձայն բռնագանձում չի կարող տարածվել:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2009 թվականի վճռի պատճառաբանական մասում նշվել է, որ «չնայած պարտապան Ընկերությունը թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա և ավելի ժամկետով կետանց, ինչը ճանաչված է նաև օրինական ուժի մեջ մտած վճռով, այնուհանդերձ դատարանը գտնում է, որ բավարար փաստարկներ չկան նշված իրավական հիմքով Ընկերությանը սնանկ ճանաչելու համար, քանզի օրենսդիրը տվյալ դեպքում դատարանին ոչ թե պարտավորեցնում է պարտապանին սնանկ ճանաչել, այլ սնանկ ճանաչելու հարցի լուծումը թողնում է դատարանի հայեցողությանը՝ գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա ներքին համոզմամբ: Եթե օրենսդիրը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի հիմքերի առկայության պայմաններում հայեցողական մոտեցում է ցուցաբերում պարտապանին սնանկ ճանաչելու հարցում, ապա նույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում արդեն պարտավորեցնում է պարտապանին ճանաչել սնանկ, մինչդեռ վիճելի դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի իրավական հիմնավորմամբ Ընկերությանը սնանկ ճանաչելու որևէ հիմք չկա, քանզի Ընկերության պարտավորությունները չեն գերազանցում հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ նույն

Ընկերության ակտիվների արժեքը, ընդհակառակը՝ պարտապանի ակտիվների արժեքը մի քանի անգամ գերազանցում է Ընկերության՝ ոչ միայն «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի, այլև մյուս բոլոր պարտատերերի հանդեպ ունեցած պարտավորությունները»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի սնանկության գործով կատարվելից դիմումը ներկայացրել է գործող «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով, այն է՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը որպես փաստացի անվճարունակության հիմք՝ նախատեսում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կետանցը, ինչը թույլ է տալիս պարտատիրոջը նախաձեռնելու սնանկության վարույթ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 22.12.2010 թվականին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում կատարված փոփոխության պայմաններում, ըստ էության, փոխվել է ներկայացված դիմումի հիմքը, քանի որ մինչև 2010 թվականին «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելը նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված էր, որ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է, նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ: Սակայն օրենսդրական փոփոխություններ ու լրացումներ կատարվելուց հետո վերը նշված օրենքի 3-րդ հոդվածի պահանջը սահմանվել է հետևյալ կերպ՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն):

Բացի այդ, 22.12.2010 թվականին «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով վերացել է նաև Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2009 թվականի վճռի մերժման հիմքում դրված «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասն ամբողջությամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն են նաև Վերաքննիչ դատարանի դատողություններն առ այն, որ դիմումը ներկայացվել է մինևնույն հիմքով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.10.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0137/04/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0137/04/13**

Նախագահող դատավոր՝

Ա. Մկրտչյան

Դատավորներ՝

Ի. Վարդանյան

Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետա-
կան եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչության)
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.03.2014 թվականի
որոշման դեմ՝ ըստ Տեսչության դիմումի ընդդեմ «Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն)՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-
սության դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 18.10.2013
թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
14.03.2014 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի
18.10.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ

հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությանը սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիությունն արտացոլված է վերջինիս կողմից հաշվարկված և հարկային մարմին ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ գնահատում՝ անտեսելով այն հանգամանքը, որ Դատարանի կողմից քննության առարկա չի դարձվել որպես հիմնական ապացույց ներկայացված հաշվարկը, որում հստակ երևում է, որ 87.887.806 ՀՀ դրամը հանդիսանում է Ընկերության կողմից հաշվարկված և Տեսչություն ներկայացված հաշվարկներով առաջացած պարտավորությունը:

Բացի այդ, Դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վարչական դատարանը 20.08.2013 թվականի թիվ ՎԴ/1809/05/13 վճռով բավարարել է Տեսչության հայցը և Ընկերությունից բռնագանձել 30.044.648 ՀՀ դրամ: Նշված վճիռը ստացել է օրինական ուժ և գտնվում է հարկադիր կատարման փուլում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.03.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ դիմումը բավարարել:

2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճարել բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ դիմումատուի դիմումի հիմքում դրված է վիճարկման փուլում գտնվող վարչական ակտ, որն անվիճելի կարգով չի ապացուցում Ընկերության պարտավորության առկայությունը: Հարկ է նշել, որ սնանկության դիմումի հիմք հանդիսացող ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների տեսչության 18.08.2012 թվականի թիվ 1002281 ակտը թիվ ՎԴ/5624/05/12 վարչական գործի շրջանակներում վիճարկվում է ՀՀ վարչական դատարանում, և դեռ պարզ չէ տվյալ ակտի օրինականության ու ճշտության աստիճանը: Ավելին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 04.10.2013 թվականի թիվ 1002281/1 հանձնարարագրով անցկացվել է վերստուգում, որի արդյունքում թիվ 1002281 ակտի գումարը 145.825.940 ՀՀ դրամից դարձել է 56.608.978 ՀՀ դրամ, որից 42.596.444 ՀՀ դրամն արդեն իսկ փոխանցվել է պետական բյուջե: Միաժամանակ ուշադրության է արժանի այն փաստը, որ ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԴ/1809/05/13 թվականի վճռով բավարարվել է Տեսչության հայցը՝ Ընկերությունից 30.044.648 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և Ընկերությունը կատարել է օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջները:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության կողմից կազմված մնացորդների վերաբերյալ տեղեկանքի և Ընկերության ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի, եկամտային հարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարի անձնական հաշվի քարտերի համաձայն՝ Ընկերության պարտավորությունները պետական բյուջեի նկատմամբ 12.08.2013 թվականի

դրությամբ կազմում են 233.713.746 ՀՀ դրամ, որից 145.825.940 ՀՀ դրամը հանդիսանում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների տեսչության 18.08.2012 թվականի թիվ 1002281 ակտի գումարը (հատոր 1-ին, գ.թ. 6-17):

2) Ընկերությանը սնանկ ճանաչելու դիմումին կից Տեսչությունը ներկայացրել է Ընկերության 2012 թվականի շահութահարկի հաշվարկը, որը կնքված և ստորագրված չէ Ընկերության կողմից (հատոր 1-ին, գ.թ. 21-24):

3) Տեսչությունը թե՛ վերաքննիչ բողոքում և թե՛ վճարել բողոքում փաստարկում է, որ ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԳ/1809/05/13 վճռով բավարարվել է Տեսչության հայցն ընդդեմ Ընկերության՝ 30.044.648 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և վճիռը գտնվում է կատարման փուլում:

4) Ընկերությունը, առարկելով ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԳ/1809/05/13 վճռի վերաբերյալ Տեսչության բողոքներում բերված փաստարկների դեմ, վճարել բողոքի պատասխանում նշել է, որ վճիռն ամբողջությամբ կատարվել է՝ վճարել բողոքի պատասխանին կից ներկայացնելով ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի քաղաքի պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Ավդալյանի որոշումները, որոնցով վերացվել է Ընկերությանը պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը, և կատարողական վարույթը կարճվել է:

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճարել բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը՝ վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը, ինչպես նաև այդ պայմանների առկայության ապացուցման առանձնահատկություններին:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն (...) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Վճարել դատարանն անդրադարձել է վերոգրյալ նորմերի վերլուծությանը և արձանագրել է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորու-

թյան անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու համար: Վճարային պարտավորության անվիճելիությունն առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ: Այդուհանդերձ, օրենքի վերոնշյալ դրույթը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Նման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «դ» ենթակետի համատեքստում: Մասնավորապես՝ այն պարտավորությունը, որը վիճարկվում է պարտապանի կողմից կամ որի դեմ պարտապանը ներկայացրել է առարկություն, անվիճելի է, եթե այդպիսի առարկությունն ուղղված է պահանջի մի մասի դեմ, իսկ մնացած մասը չի վիճարկվում: Այլ կերպ՝ չվիճարկվող մասը, եթե այն գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, անվիճելի է դարձնում պարտավորությունն առնվազն այդ մասով (յո՛ւն, «Յունիքսնիկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՃԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինակնությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (յո՛ւն, Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն Խաչատրյանի և այլոց թիվ ԿԴՅ/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ»

ենթակետի համաձայն՝ պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրողը:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (յրեն, *Էդգար Մարկոսյանը և Ջարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱԵԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության պարտավորությունները պետական բյուջեի նկատմամբ 12.08.2013 թվականի դրությամբ կազմել են 233.713.746 ՀՀ դրամ, որից 145.825.940 ՀՀ դրամը, ըստ Տեսչության կողմից կազմված մնացորդների վերաբերյալ տեղեկանքին կից ներկայացված անձնական հաշվի քարտերի, հանդիսացել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտուների կոմիտեի խոշոր հարկ վճարողների տեսչության 18.08.2012 թվականի թիվ 1002281 ակտով առաջադրված պարտավորությունը, իսկ վճռաբեկ բողոքի հիմքում ընկած 87.887.806 ՀՀ դրամի չափով առաջացած պարտավորության անվիճելի լինելու վերաբերյալ Տեսչությունը ներկայացրել է մնացորդների վերաբերյալ տեղեկանք՝ առ 12.08.2013 թվականի դրությամբ և Ընկերության 2012 թվականի շահութահարկի հաշվարկը, ինչպես նաև նշել է, որ ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԴ-1809/05/13 թվականի վճռով բավարարվել է Տեսչության հայցը՝ Ընկերությունից 30.044.648 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և նշված վճիռը գտնվում է հարկադիր կատարման փուլում:

Դատարանը, Տեսչության դիմումի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերությունը դատաքննությամբ ապացուցել է, որ առկա են պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր՝ դատարան ներկայացնելով սնանկության դիմումի համար հիմք հանդիսացող պարտավորությունների, այդ թվում՝ ստուգման ակտի՝ վարչական դատավարության կարգով քննվող թիվ ՎԴ-5624/05/12 վարչական գործի շրջանակներում վիճարկելու փաստը հաստատող ապացույց:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ եզրահանգումը, մերժել է վերաքննիչ բողոքը:

Վճռաբեկ դատարանը, լրացուցիչ պատճառաբանելով դատական ակտը, գտնում

է, որ ստորագրաւ դատարանի եզրահանգումները հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճարել բողոքի հիմքում ընկած պետական բյուջեի հանդեպ պարտավորության անվիճելի լինելու հանգամանքը դիմող կողմը հիմնավորում է այն փաստարկով, որ դրանք առաջացել են Ընկերության կողմից ներկայացված հաշվետվություններով: Մինչդեռ որպէս ապացույց Տեսչության կողմից ներկայացված է իր իսկ կողմից կազմված տեղեկանքը և Ընկերության ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի, եկամտային հարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարի անձնական հաշվի քարտերը՝ որպէս պարտավորությունների ծագման հիմք ներկայացնելով միայն Ընկերության 2012 թվականի շահութահարկի հաշվարկը, որը ստորագրված և կնքված չէ Ընկերության կողմից:

Բացի այդ, Տեսչությունը նշում է, որ վճարել բողոքի հիմքում նշված պարտավորություններում ներառված են նաև ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԴ-1809/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռի գումարները, իսկ Ընկերությունը, առարկելով Տեսչության փաստարկների դեմ, նշում է, որ ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԴ-1809/05/13 օրինական ուժի մեջ մտած վճիռն ամբողջությամբ կատարված է:

Վերոնշյալ փաստարկի կապակցությամբ Վճարել դատարանը հարկ է համարում նշել, որ այն ղեկարգում, երբ պարտատերն է հիմնավորում վճարային պարտավորության անվիճելիության վկայակոչում է օրինական ուժի մեջ մտած վճիռ և նշում, որ այն գտնվում է հարկադիր կատարման փուլում, միաժամանակ պետք է հիմնավորի հարուցված կատարողական վարույթի՝ իր համար բացասական ելքը, այն է՝ կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ կասեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով:

Այսպէս, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել և հարկադիր կատարողի՝ նույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով իրականացված հետախուզումը և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը:

Վկայակոչված հոդվածներով ամրագրված՝ կատարողական վարույթն ավարտելու կամ կասեցնելու հիմքերը ևս իրենց բնույթով փաստում են պարտապանի անվճարու-

նակության վերաբերյալ:

Ավելին, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի իրավակարգավորումն իր շարունակական զարգացումն է ստացել «Մասնկության մասին» ՀՀ օրենքում: Այսպես, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Տեսչությունն ի հիմնավորումն Ընկերության պարտավորությունների մի մասի անվիճելիության՝ վկայակոչել է ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԴ/1809/05/13 օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով Տեսչության հայցը՝ 30.044.648 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է: Սույն գործով հիմնավորվել է, որ նշված վճիռը գտնվել է հարկադիր կատարման փուլում, սակայն Տեսչությունը չի ներկայացրել որևէ ապացույց՝ կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով համապատասխանաբար ավարտված կամ կասեցված լինելու վերաբերյալ: Ավելին, սույն գործով հիմնավորվում է այն փաստը, որ վերոնշյալ վճռի պահանջն ամբողջությամբ կատարվել է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության կողմից չի հիմնավորվել ՀՀ վարչական դատարանի 20.08.2013 թվականի թիվ ՎԴ/1809/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռից հետո պետական բյուջեի նկատմամբ Ընկերության անվիճելի պարտավորության առկայությունը, որն էական է սնանկության դիմումի քննության համար, իսկ միակողմանի կազմված տեղեկանքն ու անձնական հաշվի քարտերը, ինչպես նաև Ընկերության շահութահարկի հաշվարկը, որում բացակայում են Ընկերության կնիքն ու ստորագրությունը, չեն կարող հաստատել հարկադրված սնանկության՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի առկայությունը: Վերոգրյալը թույլ է տալիս եզրահանգելու, որ պարտապանը բավարար հիմքեր ունի պահանջի դեմ առարկելու համար, որպիսի պայմաններում պարտապանի կողմից ներկայացվել են այնպիսի փաստարկներ և հանգամանքներ, որոնց գնահատման արդյունքում սնանկ ճանաչելու դիմումի հիմքում ընկած պահանջը պետք է լրացուցիչ հիմնավորվի թույլատրելի այլ ապացույցներով կամ հաստատվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված կարգով: Հակառակ դեպքում կվտանգվի սնանկության ճանաչման կարևոր սկզբունքը՝ պահանջի անվիճելիությունը, քանի որ պահանջի հիմնավորվածության վիճելի լինելու՝ պարտապանի կողմից առարկելու բավարար հիմքերի առկայության պայմաններում

պարտատիրոջ օրինական շահերը կարող են պաշտպանվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հայց հարուցելու եղանակով:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, մերժելով Տեսչության դիմումը՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, իսկ Վերաքննիչ դատարանը, մերժելով այդ վճռի դեմ Տեսչության բերած վերաքննիչ բողոքը, ճիշտ են մեկնաբանել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը՝ հանգելով հիմնավոր եզրակացության առ այն, որ դիմումատուի դիմումի հիմքում դրված վճարային պարտավորությունը և դրա հիմքերն անվիճելի չեն, իսկ պարտապանը դրանց դեմ առարկելու բավարար հիմքեր ունի:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտը օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.03.2014 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0060/04/12
դատարանի որոշում 2014թ.
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0060/04/12
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «Գրեյի Նատուր» ՍՊԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) տնօրեն Արտակ Պողոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-
կան դատարանի 08.11.2013 թվականի որոշման դեմ՝ Ընկերության սնանկության գործով
պահանջների վերջնական ցուցակը հաստատելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ)
պահանջել է Ընկերությանը սնանկ ճանաչել:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի
17.12.2012 թվականի վճռով դիմումը բավարարվել է, և Ընկերությունը սնանկ է ճանաչվել:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի
08.01.2013 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Վահագն
Ավագյանը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի

(դատավոր՝ Լ. Արագյան) (այսուհետ՝ Դատարան) 16.08.2013 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.11.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.08.2013 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության տնօրենը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ, 20-րդ հոդվածների, 39-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը դատական ակտերը կայացրել են օրենքի խախտումներով, քանի որ սույն գործով Բանկը պարտավոր էր Դատարանին պահանջ ներկայացնել 17.12.2012 թվականի դրությամբ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը: Մինչդեռ վերջինս Դատարանին պահանջ է ներկայացրել 15.05.2013 թվականի դրությամբ, որի հետևանքով էլ խախտվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի պահանջը, քանի որ նշված օրենքը սահմանում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը:

Բացի այդ, օրենսդիրը դատավարության կողմերին ամեն դեպքում վերադաս առյանի դատարան բողոք ներկայացնելու հնարավորություն է ընձեռել, ինչը չի կարող կասեցնել օրենքով սահմանված կարգով հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Հակառակ դեպքում՝ օրենսդրի կողմից սահմանված՝ դատական ակտերը հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած համարելու մասին դրույթները կկորցնեն իրենց իմաստն ու նշանակությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.11.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2012 թվականի վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել (հատոր 2-րդ, գ.թ. 12-17).

2) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.03.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ (հատոր 2-րդ, գ.թ. 93-96).

3) ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 15.05.2013 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.03.2013 թվականի որոշման դեմ Ընկերության վճարելի բողոքը վերադարձվել է (հատոր 2-րդ, գ.թ. 119-122).

4) 26.06.2013 թվականին Բանկը դիմում է ներկայացրել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ թիվ ԱՎԴ/0060/04/12 սնանկության գործով պարտատերերի ցուցակում ընդգրկվելու համար որպես ապահովված պահանջատեր 1.424.333 ԱՄՆ դոլարի և 26.062.528 ՀՀ դրամի, ինչպես նաև (չապահովված պահանջ) 500.000 ՀՀ դրամի չափով (հատոր 3-րդ, գ.թ. 47-49).

5) Բանկի 25.06.2013 թվականի թիվ 001-2104 տեղեկանքի համաձայն՝ 1.424.333 ԱՄՆ դոլարի պահանջն իր մեջ ներառում է 273.070 ԱՄՆ դոլարը՝ որպես վարկային պայմանագրով նախատեսված տուժանք, որի հաշվարկը կատարվել է 15.05.2013 թվականի դրությամբ (հատոր 3-րդ, գ.թ. 95).

6) Բանկի 25.06.2013 թվականի թիվ 001-2103 տեղեկանքի համաձայն՝ 26.062.528 ՀՀ դրամի պահանջն իր մեջ ներառում է 4.469.908 ՀՀ դրամը՝ որպես վարկային պայմանագրով նախատեսված տուժանք, որի հաշվարկը կատարվել է 15.05.2013 թվականի դրությամբ (հատոր 3-րդ, գ.թ. 94).

7) Դատարանի 16.08.2013 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որում ներառվել են Բանկի՝ 1.424.333 ԱՄՆ դոլարի և 26.062.528 ՀՀ դրամի, ինչպես նաև 500.000 ՀՀ դրամի պահանջներն ամբողջությամբ (հատոր 5-րդ, գ.թ. 25-28, 35-39):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելիության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միարեսակ կիրառության ապահովման գործառնությից և գտնում, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. դրամական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տոկոսների և տուժանքների հաշվարկումն ու գանձումը կասեցվում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, թե այդ վճիռը Վերաքննիչ դատարանի կողմից անփոփոխ թողնելու և վճարելի բողոքը Վճարելի դատարանի կողմից վերադարձնելու կամ այդ վճարելի բողոքը մերժելու պահից:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքն ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանությանը, որը դրսևորվում է նախ և առաջ անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող ընկերության առողջացմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարմամբ:

Այսինքն՝ սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել նրա կենսունակությունը և մինևույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը (որոշումները, վճիռները) օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռ բողոքարկումը չի կասեցնում սնանկության վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև դատարանի նշանակած ժամանակավոր կառավարչի կամ կառավարչի գործողությունները:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր տրամաբանության լույսի ներքո անդրադառնալով օրենքի 17.1-րդ հոդվածին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ օրինական ուժի մեջ մտնելու դրույթ նախատեսելն ինքնանպատակ չէ և ժամանակի գործոնի ազդեցությամբ պայմանավորված՝ ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանության ապահովմանը:

Մինչույն ժամանակ հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած վճիռը բողոքարկելու օրենսդրի ընձեռած հնարավորությունը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ուղղված է սնանկության վարույթում ներգրավված մասնակիցների, այդ թվում՝ պարտապանի դատավարական երաշխիքների ապահովմանը, սնանկության վարույթում ներգրավված մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը բողոքարկելու դեպքում, ըստ էության, բողոքարկվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, այսինքն՝ օրենսդիրը հնարավորություն է ընձեռում դատավարության կողմերին վերադաս ատյանի դատարանին բողոք ներկայացնելու, ինչը, սակայն, չի կարող կասեցնել օրենքով սահմանված կարգով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը և դրանով պայմանավորված՝ սնանկության գործի վարույթը: Հակառակ դեպքում՝ օրենսդրի կողմից սահմանված՝ դատական ակտերը հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած համարելու մասին դրույթները կիմաստազրկվեն:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռ կայունության և ռեալ կերպով իրացվելու ընդունակություններն արտահայտվում են որոշակի իրավական հետևանքներում: Վճիռ օրինական ուժի իրավական հետևանքներն են դրա անհերքելիությունը (անփոփոխելիությունը), բացառիկությունը, պարտադիրությունը, նախադատելիությունը, կատարելիությունը: Վճիռ անհերքելիության (անփոփոխելիության) էությունը կայանում է նրանում, որ վճիռ օրինական ուժի մեջ մտնելուց պահից, որպես կանոն, ավարտվում է տվյալ քաղաքացիական գործի քննության և լուծման վարույթը: Հետևաբար այն պարագայում, երբ օրինական ուժի մեջ մտած վճիռը բողոքարկվում է վերաքննության կամ վճռաբեկության կարգով, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերոգրյալ իրավական հետևանքների մասին խոսելն անհիմն է: Մասնավորապես, բողոքարկված դատական ակտը չի կարող այլևս համարվել անհերքելի (անփոփոխ), վերջնական և անվերապահ կատարման ենթակա: Իսկ նշված իրավական հետևանքների բացակայության պայմաններում դատական ակտն այլևս չի կարող համարվել օրինական ուժ ունեցող:

Սույն պարագայում 17.12.2012 թվականի վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել, ու թեև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սնանկ ճանաչելու մասին վճիռը՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ, օրինական ուժի մեջ է մտնում

հրապարակման պահից, սակայն տվյալ դեպքում դատարանի վճիռը բողոքարկվել է վերաքննության և վճռաբեկության կարգով, որպիսի պայմաններում նշված վճռի վերջնական, անփոփոխելիության, որպես վճռի օրինական ուժ ունենալու իրավական հետևանքների մասին խոսելն անհիմն է: Ուստի մինչև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով 15.05.2013 թվականին որոշում կայացնելը սնանկ ճանաչելու մասին վճռի իրավական հետևանքները, ըստ էության, առկա չեն եղել, որպիսի պայմաններում Բանկն իրավունք է ունեցել պարտավորության վերաբերյալ հաշվարկը ներկայացնել 15.05.2013 թվականի դրությամբ, երբ սնանկ ճանաչելու մասին վճիռը դարձել է վերջնական, անփոփոխելի և անհերքելի»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ հանգել է սխալ եզրակացության հետևյալ պատճառաբանությամբ.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված պարտապանների պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է, որն սկսում է կիրառվել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից, հետևաբար վճռի բողոքարկումը չի կարող իրենից կախվածության մեջ դնել ոչ պարտապանի շահերի պաշտպանությունը, ոչ էլ պարտապանի վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցների գործադրումը ճիշտ այնպես, ինչպես որ վճռի բողոքարկումը չի կարող իրենից կախվածության մեջ դնել պահանջատերերի շահերի ապահովումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված մորատորիումը սկսում է գործել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ անկախ այդ վճռի բողոքարկված լինելու հանգամանքից:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրակացությունը բխում է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունից, ըստ որի՝ Դատարանի վճռի բողոքարկումը չի կասեցնում սնանկության վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև Դատարանի նշանակած ժամանակավոր կառավարչի կամ կառավարչի գործողությունները:

Վերոնշյալ վերլուծությունների և գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն իրավաչափ չէ, քանի որ Բանկն իր պահանջի մեջ ներառված տուժանքի գումարի հաշվարկը կատարել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 15.05.2013 թվականի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման կայացման օրվա դրությամբ, ինչը չի բխում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջներից, մասնավորապես՝ Բանկն իր հաշվարկները ներկայացնելիս պետք է առաջնորդվեր «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի պահանջով պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ կասեցնելով դրամական պարտավորությունների սկստմամբ տուժանքի հաշվարկումը, վճարումը կամ գանձումը: Հետևաբար Բանկն իր պահանջի մեջ ներառված տուժանքի գումարի հաշվարկը Դատարանին պետք

է ներկայացնել 17.12.2012 թվականի դրությամբ, քանի որ Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 17.12.2012 թվականին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հանգամանքն անտեսվել է թե՛ Դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածին, ապա բողոքն այդ մասով անհիմն է հետևյալ պատճառարանությամբ.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով:

Մասնկության գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի ուժի մեջ մտնելը սահմանված է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածով, այն է՝ «Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը (որոշումները, վճիռները) օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից», հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածը սնանկության գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի նկատմամբ կիրառելի չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 08.11.2013 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.11.2013 թվականի որոշման՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի՝ որպես վարկային պայմանագրով նախատեսված տուժանք 273.070 ԱՄՆ դոլարի և 4.469.908 ՀՀ դրամի չափով պահանջը հաստատելու մասը և գործն այդ մասով

ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝
նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և
ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/1459/02/10**
2014թ.
Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/1459/02/10**
Նախագահող դատավոր՝ **Ա. Թումանյան**
Դատավորներ՝ **Լ. Գրիգորյան**
Գ. Մատինյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Նարինե Նալբանդյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ
Նարինե Նալբանդյանի հայցի ընդդեմ «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն), երրորդ անձինք Հրաչ-Ներսես Կապրիելյանի, Վարդան Սիրմաքեսսի՝
04.08.2010 թվականի ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նարինե Նալբանդյանը պահանջել է անվավեր ճանաչել
Ընկերության ընդհանուր ժողովի 04.08.2010 թվականի՝ Ընկերության կողմից փոխարկվող
պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման, ինչպես նաև ընկերության կողմից
թողարկվող պարտատոմսերն Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի
փոխարկման նպատակով լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման
մասին որոշումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրա-
վասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ **Դատարան**) 29.11.2012
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.05.2013 թվականի որոշմամբ Նարինե Նալբանդյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.11.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նարինե Նալբանդյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ընկերությունը, երրորդ անձ Վարդան Սիրմաքետսը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետը, 42-րդ հոդվածի 1-ին կետը, 47-րդ հոդվածի 1-ին կետը, 61-րդ հոդվածի 2-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին կետը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետը, 46-րդ հոդվածի 1-ին կետը, 47-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունն ու 2-րդ կետը, 48-րդ հոդվածը, 62-րդ հոդվածը, 64-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը և 64-րդ հոդվածի 6-րդ կետը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 58-րդ հոդվածի 2-րդ կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 47-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով Դատարանի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չիրականացնելու հանգամանքը, չի անդրադարձել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 47-րդ և 48-րդ հոդվածների փոխադարձ կապին և վիճելի հարաբերությունների նկատմամբ դրանց համակցված կիրառմանը: Ավելին, Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ սահմանված դրույթը, այն առանձնացնելով բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում բաժնետերերի շահերի ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավա-նորմերից, ձևափոխել է դրա իմաստն ու բովանդակությունը: Նշված նորմը, ըստ որի՝ բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, որևէ կերպ չի բացառում բաժնետիրոջ՝ կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համամասնորեն նոր բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունքը: Տվյալ պարագայում Ընկերության բաժնետերերի 04.08.2010 թվականին կայացած արտահերթ ընդհանուր ժողովի վիճարկվող որոշումը վերաբերում է այն արժեթղթերի (տվյալ դեպքում՝ պարտատոմսերի) թողարկմանը և տեղաբաշխմանը, որոնք բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք էին վերապահում միայն Ընկերության մյուս բաժնետերերին: Այսինքն՝ Նարինե Նալբանդյանի կողմից վիճարկվել է այն հանգամանքը, որ միայն այդ բաժնետերերն ունեին բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող պարտատոմսեր ձեռք բերելու իրավունք: Վերաքննիչ դատարանի կողմից կատարված եզրահանգումն ինքնին հակասում է գործի փաստական հանգամանքներին և վկայակոչված իրավանորմը որևէ կերպ կիրառելի չի կարող լինել, քանի որ բացակայել է դրա կիրառման օբյեկտիվ պայմանը՝ բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատիրոջ գոյությունը, քանզի այդպիսիք լինելու համար այդ արժեթղթերը

պետք է առնվազն թողարկված և տեղաբաշխված լինեն, որպիսի փաստական հանգամանք սույն գործով հաստատված չէ և չէր էլ կարող հաստատված լինել այն պարզ տրամաբանությամբ, որ վիճարկվում է Ընկերության բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի թողարկում և տեղաբաշխում կատարելու մասին որոշման իրավաչափությունը, այսինքն՝ այդ պահի դրությամբ փոխարկելի պարտատոմսեր չեն եղել, ինչն իր հերթին բացառում է գոյություն չունեցող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի, այսինքն՝ նաև այդ իրավունքի սեփականատիրոջ գոյությունը:

Բացի այդ, բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատելն արգելելու վերաբերյալ իրավանորմը չկիրառելը պայմանավորելով պարտավորության դիմաց թողարկված պարտատոմսերով բաժնետոմսերի համար վճարելու հանգամանքով, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջը չի նախատեսում որևէ բացառություն՝ բաժնետիրական ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցների առումով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Ընկերության բաժնետերերի 04.08.2010 թվականին կայացած ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման ընթացքում թույլ են տրվել մի շարք խախտումներ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերության բաժնետերերի 04.08.2010 թվականին կայացած արտահերթ ընդհանուր ժողովում ընդունված որոշումը հանդիսացել է նաև շահագրգիռ գործարք, և որ նման պարագայում պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման, Ընկերության պարտատոմսերը բաժնետոմսերով փոխարկելու վերաբերյալ վերը նշված որոշումը կարող էր ընդունվել բացառապես Նարինե Նալբանդյանի՝ որպես գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետիրոջ կողմից: Ընկերության բաժնետերերի 04.08.2010 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ, ըստ էության, սույն քաղաքացիական գործով որպես երրորդ անձինք հանդես եկող բաժնետերերի հանդեպ Ընկերության սկզբնական պարտավորությունը (Ընկերությանը տրամադրված փոխառությունների հիմքով) փոխարինվել է մեկ այլ պարտավորությամբ, որը նախատեսել է կատարման այլ եղանակ, կամ որ նույնն է՝ տեղի է ունեցել պարտավորությունների նորացում, կայացվել է որոշում՝ գործարք կնքելու մասին, որի կողմ են հանդիսանում երրորդ անձինք (մյուս երկու բաժնետերերը), իսկ նման պարագայում, հիմք ընդունելով Ընկերության բաժնետերերի 04.08.2010 թվականի ընդհանուր ժողովի որոշումն ընդունելու պահին գործող խմբագրությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածը և 64-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով սահմանված պահանջները, այդ որոշումը կարող էր ընդունվել տվյալ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, որպիսին տվյալ պարագայում հանդիսացել է բացառապես Նարինե Նալբանդյանը:

Փաստացի ընդունելով Ընկերության կողմից հայցվորին չճանուցելու հանգամանքը՝ վերջինիս մոտ Ընկերությունից բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացման և հետգնման կարգի մասին, Վերաքննիչ դատարանն այն հիմք չի համարել ժողովի որոշումն անվավեր ճանաչելու համար՝ պատճառաբանելով, թե հայցվորը գրկված չի եղել իր այդ իրավունքը ժողովի որոշումից հետո իրականացնելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.05.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.1. Վճարել բողոքի պատասխանի փաստարկները

Նարինե Նալբանդյանի կողմից բերված վճարել բողոքն անհիմն է հետևյալ

պատճառաբանությամբ. սույն պարագայում խոսել նախապատվության իրավունքի կիրառման մասին անիմաստ է, քանի որ խոսքը գնում է փոխարկելի պարտատոմսերի մասին, որոնք տրամադրվում են բաժնետերերին իրենց հանդեպ Ընկերությունում արդեն իսկ ձևավորված պարտավորությունների դիմաց, որոնց Նարինե Նալբանդյանը որևէ մասնակցություն չի ունեցել: Եթե նույնիսկ մի պահ դիտարկենք, թե իբր խախտվել է վերջինիս նախապատվության իրավունքը, ապա մինչև 04.08.2010 թվականի արտահերթ ժողովը, 16.06.2010 թվականի ընդհանուր ժողովում փոխառության ձևով ներդրումներ կատարելուց հրաժարվելն արդեն իսկ հիմնավորում է վերջինիս իրավունքների խախտման բացակայությունը: Ավելին, հրաժարվելով փոխառությունների տրամադրման ձևով ներդրումներ կատարելուց և չունենալով ներդրում, Նարինե Նալբանդյանը չէր կարող մասնակից լինել փոխարկելի պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացին: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, համապատասխան իրավական նորմերի կիրառմամբ կայացրել է փաստարկված և իրավական առումով հիմնավոր և օրինական որոշում, հետևաբար բերված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության՝ ի դեմս նախարար Դավիթ Վարդանյանի, և Ընկերության՝ ի դեմս տնօրեն Արագած Ախոյանի միջև 07.04.2003 թվականին կնքվել է պետական գույքի մասնավորեցման թիվ 173-Մ պայմանագիրը, որի համաձայն՝ վաճառողը 27.800.000 ՀՀ դրամ արժեքով վաճառել և գնորդի սեփականությանն է փոխանցել «Ավտոտեյանանախագիծ» ՓԲԸ-ի ինժեներալաբորատոր մասնաշենքի համար նախատեսված անավարտ շինարարության օբյեկտը: Նշված պայմանագրի 5.3.5 ենթակետով նշվել է, որ գնորդը պարտավորվում է կատարել 1.200.000 ԱՄՆ դոլարի ներդրումներ, ընդ որում, ներդրվող գումարից 200.000 ԱՄՆ դոլարը ծախսել ապամոնտաժման աշխատանքների վրա, մնացած 1.000.000 ԱՄՆ դոլարը՝ միայն շինարարական աշխատանքների, արտաքին և ներքին ձևավորման վրա (հատոր 1-ին, գ.թ. 37-40).

2) Հայաստանի Հանրապետության, որի անունից հանդես է եկել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը՝ ի դեմս վարչության պետ Կարինե Կիրակոսյանի, և Ընկերության՝ ի դեմս լիազորված անձ՝ Վարուժան Էմբեսիզյանի միջև 18.02.2008 թվականին կնքվել է պետական գույքի մասնավորեցման թիվ 173-Մ պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիր, որի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի 5.3.5 կետը պետք է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5.3.5 Օբյեկտի շինարարության ընթացքում ապահովել ոչ պակաս 3.000.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրման փաստացի ներգրավում (ներգրավված միջոցների գնորդին փաստացի հանձնելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով)՝ Գնորդ ընկերության փաստացի համալրված կանոնադրական կապիտալի ավելացման կամ Գնորդ ընկերությանը բաժնետերերի կողմից երկարաժամկետ (ոչ պակաս քան մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը) ստորադաս նպատակային փոխառության տրամադրման տեսքով և նման կերպով ներգրավված ներդրումների փաստացի իրացում ողջ ծավալով և շինարարական աշխատանքների ավարտում մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը (ի լրումն 2006 թվականի հունիսի 06-ը փաստացի իրացված ներդրումների) ուղղությամբ կապիտալ ծախսերի տեսքով՝ չներառելով Գնորդի վարչական, գործառնական և

այլ կապիտալ ծախսերը, ինչը պետք է հաստատվի նաև Օբյեկտի շինարարությունը հավաստող ավարտական ակտով» (հատոր 1-ին, գ.թ. 48-50)։

3) Հայաստանի Հանրապետության Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված 25.05.2010 թվականի դրությամբ գրանցված սեփականատերերի (անվանատերերի) տոկոսային բաշխման ցուցակի համաձայն՝ Ընկերության (պետական ռեզիստորի գրանցման վկայական թիվ 03Ա 055624) կանոնադրական կապիտալը 100.000 ՀՀ դրամ է, ԱԹ տեսակը՝ հասարակ անվանական բաժնետոմս, ԱԹ քանակը՝ 100 հատ, գրանցված սեփականատերեր (անվանատերեր)՝ Վարդան Նազարեթի Սիրմաքեսս՝ ԱԹ քանակը՝ 45, տոկոսը՝ 45.0000000, Հրաչ-Ներսես Կապրիելյան՝ ԱԹ քանակը՝ 35, տոկոսը՝ 35.0000000, Նարինե Նալբանդյան՝ ԱԹ քանակը՝ 20, տոկոսը՝ 20.0000000 (հատոր 1-ին, գ.թ. 12)։

4) Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի 16.06.2010 թվականի թիվ 1/2010 արձանագրության համաձայն՝ օրակարգում քննարկվել է երեք հարց՝ 1) Ընկերության տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի հաստատումը, շահույթների և վնասների հաշվի հաստատումը, 2) 07.04.2003 թվականին Ընկերության և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության միջև կնքված թիվ 173-Մ պետական գույքի մասնավորեցման պայմանագրով բաժնետերերի կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունների կատարման ընթացքի հարցի քննարկումը, 3) Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման հարցը։

Ժողովում ներկայացվել է օրակարգի երկրորդ հարցը և նշվել է, որ Ընկերությունը պայմանագրային պարտավորություն ունի ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ, որի կատարման համար Ընկերության մասնակիցները պարտավոր են Ընկերության կանոնադրական կապիտալում մինչև 30.11.2010 թվականը կատարել ներդրումներ հետևյալ համամասնությամբ՝ Հրաչ-Ներսես Կապրիելյան՝ 1.050.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, Վարդան Սիրմաքեսս՝ 1.350.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, Նարինե Նալբանդյան՝ 600.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ։ 20% բաժնեմաս ունեցող բաժնետեր Նարինե Նալբանդյանի ներկայացուցիչ Վահե Մովսիսյանին առաջարկվել է անհապաղ համամասնորեն մասնակցել վերոնշյալ ներդրումային ծրագրին՝ կատարելով 100.000 ԱՄՆ դոլարի վճարում՝ որպես ծրագրով նախատեսված բանկային երաշխիքի մասնակցություն, և 500.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ծրագրի իրականացման ներդրում։ Առաջարկը մերժվել է Վահե Մովսիսյանի կողմից՝ պատճառաբանելով, որ պարտավորությունը ստանձնել է Ընկերությունը, և ոչ թե բաժնետերը։

Երկրորդ հարցի քննարկման ընթացքում պարզաբանվել է, որ ներդրումներ իրականացնելը բաժնետերերի իրավունքն է, և եթե բաժնետերերից մեկը չի ցանկանում կատարել ներդրում, դա նրա իրավունքն է։ Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ընթերցվել է որոշման նախագիծը, և հարցը դրվել է քվեարկության։ Նարինե Նալբանդյանի ներկայացուցիչ Վահե Մովսիսյանն իր վստահորդի անունից հրաժարվել է ներդրումներ կատարելուց՝ հիմնավորելով, որ վերը նշված պայմանագրի շրջանակներում պետության դեմ պարտավորությունը ստանձնել է Ընկերությունը, և ոչ թե բաժնետերերը։ Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ժողովը որոշել է «07.04.2003 թվականին Ընկերության և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության միջև կնքված թիվ 173-Մ պետական գույքի մասնավորեցման պայմանագրի և համաձայնագրերի համաձայն իրականացնել բաժնետերերի կողմից ներդրումներ, ք.Երևան, Պարույր Սևակի թիվ 9 հասցեի անավարտ շինարարությունն ավարտին հասցնելու նպատակով՝ մինչև 30.11.2010 թվականը հետևյալ համամասնությամբ՝ Հրաչ-Ներսես Կապրիելյան՝ 1.050.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, Վարդան Սիրմաքեսս՝ 1.350 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, Նարինե Նալբանդյան՝ 600.000 ԱՄՆ դոլարին համար-

ծեք ՀՀ դրամ: Ներդրումների իրականացման ժամանակացույցը լրացուցիչ համաձայնեցնել Ընկերության բաժնետերերի հետ: Առաջարկել Նարինե Նալբանդյանին կատարել Ընկերության բաժնետեր լինելու հետ կապված իր պարտականությունը՝ 07.04.2003 թվականին Ընկերության և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության միջև կնքված թիվ 173-Մ պետական գույքի մասնավորեցման պայմանագրի և համաձայնագրերի շրջանակներում տրված բանկային երաշխիքի հետ կապված՝ երկշաբաթյա ժամկետում Ընկերությանը 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով վճարում կատարելով»: Զվեարկության արդյունքներն են՝ կողմ՝ 80 ձայն, դեմ՝ 20 ձայն (հատոր 1-ին, գ.թ. 57-60)։

5) Ընկերության կնիքով և Ընկերության տնօրեն Հրաչ-Ներսես Կապրիելյանի ստորագրությամբ հաստատված բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին 20.07.2010 թվականի ծանուցման համաձայն՝ բաժնետերերին հայտնվել է, որ 04.08.2010 թվականին՝ ժամը 12:00-ին, գումարվելու է Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով ՀՀ, քաղաք Երևան, Ազաթանգեղոսի թիվ 2 հասցեում: Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է առ 19.07.2010 թվականի դրությամբ: Նշվել է նաև ժողովի օրակարգը, այն է՝ Ընկերության կողմից փոխարկվող պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման, ինչպես նաև Ընկերության կողմից փոխարկվող պարտատոմսերն Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի փոխարկման նպատակով լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման հարցի քննարկում (հատոր 1-ին, գ.թ. 15)։

6) Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 04.08.2010 թվականի թիվ 2/2010 արձանագրության համաձայն՝ «04.08.2010 թվականին՝ ժամը 12:00-ին, Ընկերության բաժնետերերի տարեկան արտահերթ ընդհանուր ժողովին ներկա են Ընկերության 100 ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերեր՝ Վարդան Սիրմաքեսսի լիազոր ներկայացուցիչ Բուրակ Կիրկորյանը՝ 45 ձայնի իրավունքով, Հրաչ-Ներսես Կապրիելյանի լիազոր ներկայացուցիչ Պարույր Ղարիբյանը՝ 35 ձայնի իրավունքով, Նարինե Նալբանդյանի լիազոր ներկայացուցիչ Վահե Մովսիսյանը՝ 20 ձայնի իրավունքով: Օրակարգի հարցերի վերաբերյալ ժողովը որոշել է՝ «Հաստատել Ընկերության և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության հետ 07.04.2003 թվականին կնքված պետական գույքի մասնավորեցման թիվ 173-Մ պայմանագրի և 18.02.2008 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և Ընկերության միջև կնքված «Պետական գույքի մասնավորեցման N 173-Մ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» համաձայնագրի շրջանակներում, ինչպես նաև Ընկերության ինվեստիցիոն գործունեության նպատակով փոխառությունների ձևով Ընկերության բաժնետերեր՝ Վարդան Նազարեթի Սիրմաքեսսի և Հրաչ-Ներսես Կապրիելյանի կողմից կատարված ներդրումների չափերը հետևյալ համամասնությամբ՝ Սիրմաքեսս Վարդան Նազարեթ՝ 383.889.467 ՀՀ դրամ, Հրաչ-Ներսես Կապրիելյան՝ 698.713.875 ՀՀ դրամ:

Թողարկել Ընկերության կողմից սահմանափակ շրջանառության իրավունքով, թողարկման և տեղաբաշխման ենթակա 1.082.603.342 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 12.736.509,91 ՀՀ դրամ անվանական արժեքով 85 հատ անվանական փոխարկվող պարտատոմսեր և դրանք տեղաբաշխել ներդրումներ կատարած բաժնետերերի միջև հետևյալ համամասնությամբ՝ Սիրմաքեսս Վարդան Նազարեթ՝ 30 հատ, Հրաչ-Ներսես Կապրիելյան՝ 55 հատ:

Ընկերության փոխարկման ենթակա 1.000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական անվանական բաժնետոմսերի շուկայական արժեքը, համաձայն անկախ

գնահատող «Արմենբրոկ» ՓԲԸ-ի, կկազմի 1.260.040 ՀՀ դրամ: Թողարկել Ընկերության 850.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 1.000 ՀՀ դրամ անվանական արժեքով 850 հատ սովորական անվանական լրացուցիչ բաժնետոմսեր: Սահմանել, որ Ընկերության լրացուցիչ թողարկվող և տեղաբաշխվող 1.000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական անվանական բաժնետոմսերի քանակը 850 հատ ընդհանուր ծավալով 850.000 ՀՀ դրամ, կանոնադրությամբ հայտարարված 10.000 հատ սովորական անվանական բաժնետոմսերից 850 հատի սահմաններում:

Անվանական փոխարկվող պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է փակ տեղաբաշխմամբ՝ սույն որոշման սահմանված ներդրումներ կատարված բաժնետերերին համապատասխան:

Անվանական փոխարկվող պարտատոմսերի թողարկման օր համարել ժողովի օրը՝ 04.08.2010 թվականը:

Փոխարկվող անվանական պարտատոմսերի փոխարկումն իրականացնել Ընկերության ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսերով՝ փոխարկվող անվանական պարտատոմսերի թողարկման օրվանից 15 օրյա ժամկետը լրանալու հաջորդ օրը՝ 19.08.2010 թվականին: Փոխարկվող անվանական պարտատոմսի սեփականատիրոջ 1 հատ 12.736.509,91 ՀՀ դրամ անվանական արժեքով անվանական պարտատոմսի փոխարկման ժամկետը լրանալու հաջորդ օրը՝ 20.08.2010 թվականին, փոխարկվում է Ընկերության 10 հատ 1.000 ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսի:

Լրացուցիչ տեղաբաշխվող սովորական անվանական բաժնետոմսերը տեղաբաշխվում են անվանական փոխարկվող պարտատոմսերի փոխարկման միջոցով և ամբողջությամբ սեփականության իրավունքով անցնում են բաժնետիրոջը և համարվում են ամբողջությամբ տեղաբաշխված:

Ընկերության 85 հատ փոխարկվող անվանական պարտատոմսը 12.736.509,91 ՀՀ դրամ անվանական արժեքով սույն որոշմամբ սահմանված ժամկետում և կարգով փոխարկվում է ընկերության 850 հատ 1.000 ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսի:

Ընկերության անվանական փոխարկվող պարտատոմսերի փոխարկման միջոցով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների ամփոփումն իրականացնել սույն ժողովի որոշման ընդունման պահից ոչ պակաս քան՝ 18 օրվա ընթացքում»:

Քվեարկության արդյունքը նշվել է՝ կողմ՝ 80 ձայն, դեմ՝ 20 ձայն (հատոր 1-ին, գ.թ. 61-65):

7) Ընկերության 04.08.2010 թվականի ժամը 12:00-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեաթերթիկների վրա որպես օրակարգի հարց նշվել է Ընկերության կողմից փոխարկվող պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման, ինչպես նաև Ընկերության կողմից փոխարկվող պարտատոմսերն Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի փոխարկման նպատակով լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման հարցի քննարկում, որպես բաժնետեր Հրաչ-Ներսես Կապրիելյան նշված քվեաթերթիկում վերջինիս լիազորված անձ Պարույր Արիբյանը քվեարկել է կողմ, որպես բաժնետեր Նարինե Նալբանդյան նշված քվեաթերթիկում վերջինիս ներկայացուցիչ Վահե Մովսիսյանը նշել է դեմ, իսկ որպես բաժնետեր Վարդան Սիրմաքեսս նշված քվեաթերթիկում վերջինիս լիազոր ներկայացուցիչ Բուրակ Կիրկորյանը նշել է կողմ (հատոր 1-ին, գ.թ. 16):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը

վճարել վերանայման ենթարկելը բխում է Վճարել դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից, իսկ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումն էական նշանակություն ունի նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճարել բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին.

- այն դեպքերում, երբ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերը հրաժարվել է փոխառություն տրամադրել ընկերությանը, իսկ բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ դեմ քվեարկել բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանը, արդյո՞ք վերջինս զրկվում է որպես ընկերության բաժնետեր այդ պարտատոմսերի գնման նախապատվության իրավունքից.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտատոմսը և բաժնետոմսն ինվեստիցիոն (ներդրումային) արժեթղթեր են:

Նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ պարտատոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հետապնդվող նպատակի առումով ինչպես փոխառությունը, այնպես էլ պարտատոմսը փոխառու միջոցների ներգրավման ձևեր են: Մասնավորապես, թե՛ փոխառության պայմանագրի, և թե՛ պարտատոմսի պարագայում խոսքը գնում է ապրանքային շրջանառության մի մասնակցի կողմից մյուսին հատուցմամբ և վերադարձնելու պայմանով դրամ կամ այլ գույք տալու մասին: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ ապրանքային շրջանառության մասնակիցների միջև փոխառության տնտեսական ընդհանրության առկայության պայմաններում տարբեր են փոխառության պայմանագրի և պարտատոմսի իրավական ձևակերպումները և կարգավորումները:

Այսպես, օրինակ, եթե փոխառության պայմանագիրը կնքվում է իրավահարաբերության կողմերի միջև, ապա պարտատոմսը թողարկում է էմիտենտը, ընդ որում, եթե փոխառության պայմանագրի կողմերը՝ փոխատուն և փոխառուն, հայտնի են ի սկզբանե, ապա պարտատոմսի դեպքում երբեմն հայտնի չէ, թե ով է լինելու դրա տիրապետողը, եթե փոխառության պայմանագիրը կնքվում է հասարակ գրավոր ձևով, ապա օրենքով սահմանված են պարտատոմսի՝ որոշակի պարտադիր վավերապայմաններ և այլն: Հետևաբար, փոխառության պայմանագիրը և պարտատոմսը չեն կարող նույնացվել քաղաքացիաիրավական կարգավորման էական տարբերությունների պատճառով:

Վերոգրյալ մեկնաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերությունն իրավունք ունի համաձայն իր կանոնադրության թողարկել պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է խորհրդի որոշմամբ, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտատոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած ընկերությունից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունքներ՝ ընկերության սահմանած ժամկետներում:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք:

Վերը նշված հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ ինվեստիցիոն (ներդրումային) արժեթուղթ հանդիսացող պարտատոմսը, ունենալով անվանական արժեք և գին, դրա տեղաբաշխումից հետո այն ձեռք բերողին (ներդրողին) հատուցում ստանալու իրավունք է վերապահում՝ դրանով կամ այլ գույքային համարժեքով: Ընդ որում, օրենսդիրը նախատեսել է պարտատոմսի մարումն ընկերության բաժնետոմսի փոխարկելու ձևով իրականացնելու հնարավորություն:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերությունը համարվում է փակ, եթե ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա բաժնետերերի (այդ թվում՝ հիմնադիրների) կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Փակ ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որն իրականացվում է Ընկերության արժեթղթերի փոխարկումը բաժնետոմսերի ապահովելու համար, կատարվում է միայն այդ փոխարկման միջոցով: Փոխարկման կարգը սահմանվում է փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ փակ ընկերությունն իրավունք չունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով կամ այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք անսահմանափակ թվով անձանց:

Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը՝ բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերն ընկերության բաժնետոմսերի փոխարկման միջոցով, իրականացվում է ընկերության բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխ-

ման մասին որոշմամբ սահմանված կարգով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ կետով և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:

Վերը նշված իրավական դրույթների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արժեթղթի փոխարկումը, ըստ էության, բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է: Ընկերությունն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնել բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերն ընկերության բաժնետոմսերի փոխարկելու միջոցով:

Հաշվի առնելով, որ արժեթղթի փոխարկումը, ըստ էության, բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է, ապա պետք է հանգել այն եզրակացության, որ Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նաև բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Հակառակ պարագայում, բաժնետոմսի փոխարկվող ընկերության արժեթղթերը ձեռք բերելու՝ բաժնետիրոջ նախապատվության իրավունքի բացակայությունը կամ սահմանափակումը կհանգեցնի վերջինիս՝ նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի խախտման:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշում է, որ օրենսդիրը բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման ընթացքում բաժնետերերի կողմից դրանց ձեռքբերման նախապատվության իրավունքի համար չի սահմանել որևէ նախապայման, այդ թվում՝ մինչև արժեթղթի թողարկումն ու տեղաբաշխումը փոխառության կամ օրենքով չարգելված այլ ձևով ներդրում անելու կամ գույք և դրան համարժեք իրավունքներ փոխանցելու պայման:

Ավելին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընկերության բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել, ներառյալ՝ Ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով, չի թույլատրվում:

Հետևաբար, վերոգրյալ վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերը վճարելու պարտականությունից ևս բաժնետիրոջն ազատել չի թույլատրվում: Այսինքն՝ բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսի տեղաբաշխման ընթացքում էական է դրա դիմաց իրական վճարումը դրամով կամ գույքային այլ համարժեքով, քանի որ բաժնետոմսերի թողարկումը և տեղաբաշխումը, հետևաբար նաև՝ բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսի թողարկումը և տեղաբաշխումը հանգեցնում է ընկերության կանոնադրական կապիտալի մեծացմանը: Առկա պարտքերի դիմաց բաժնետոմսի փոխարկվող պարտատոմսի տրամադրումը հակասում է ինվեստիցիոն (ներդրումային) արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման սկզբունքներին, քանի որ ներդրումային արժեթղթի թողարկումն ու տեղաբաշխումը նպատակ է հետապնդում նույն տեսակի և դասի արժեթղթերի համար որոշված ընդհանուր պայմաններով դրամական միջոցներ կամ այլ համարժեք գույքային իրավունքներ ներգրավել:

Սույն գործով քննարկվող դեպքում, եթե սույնիսկ Ընկերության բաժնետերերի կողմից

արվել են ներդրումներ մասնավորեցման պայմանագրի հետ կապված Ընկերության պարտավորությունները պատշաճ կատարելու համար, ապա դրանք պետք է դիտվեն որպես առանձին գործարքներ, որոնցից ծագող իրավունքներն ու պարտականությունները պետք է ամրագրված լինեն համապատասխան պայմանագրերում:

Ման պայմաններում Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ կողմից ընկերությանը տրամադրված փոխառության դիմաց չեն կարող թողարկվել ընկերության բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսեր, իսկ ընկերության բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերը չեն կարող տեղաբաշխվել բացառապես փոխառուների միջև:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ: Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը նույն օրենքի և կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե նույն օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ե) ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.

ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը.

ժա) ունենալ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ընկերության կառավարմանը մասնակցելու իր իրավունքը հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը կարող է իրականացնել՝ մասնակցելով ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, և ժողովներում քվեարկել

իրեն պատկանող բաժնետոմսերի քանակի չափով:

Հետևաբար, ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքը չի կարող պայմանավորվել ժողովների ընթացքում քվեարկելու իրավունքով, քանի որ քվեարկելու իրավունքը բաժնետիրոջ մեկ այլ՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի իրականացման միջոց է, իսկ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը և ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքը գուցա հեռ իրավունքներ են, որոնք ուղղված են բաժնետիրոջ հիմնական իրավունքի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու և շահույթից շահաբաժին ստանալու իրավունքի իրականացմանը:

Այսինքն՝ առանց որևէ նախապայմանի բաժնետերն ունի կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք:

Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը հիմնվում է նաև սուբյեկտների քաղաքացիաիրավական հավասարության սկզբունքի վրա, որը, չնայած բաժնետիրական իրավունքում որոշակի ձևափոխման է ենթարկվում, մասնավորապես՝ միևնույն դասի, միևնույն տեսակի բաժնետոմսերի բաժնետերերն ունեն միևնույն իրավունքները, սակայն իրավունքների ամբողջ ծավալը որոշվում է վերջիններիս պատկանող բաժնետոմսերի քանակով, այդուհանդերձ հանգում է այն եզրակացության, որ փակ բաժնետիրական ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերն ունեն նոր բաժնետոմսեր ձեռքբերելու նախապատվության իրավունք, և այդ իրավունքը բաժնետերերից որևէ մեկի համար որևէ նախապայմանով չի կարող պայմանավորված լինել:

Վերը նշված վերլուծության լույսի ներքո, հաշվի առնելով, որ արժեթղթի փոխարկումը, ըստ էության բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ՝ բաժնետոմսի փոխարկվող պարտատոմս գնելու նախապատվության իրավունքը չի կարող պայմանավորված լինել այն հանգամանքով, որ վերջինս հրաժարվել է փոխառություն տրամադրել ընկերությանը կամ բաժնետերերի ընդհանուր ժողովում դեմ է քվեարկել բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև «արժեթղթի թողարկում» և «արժեթղթի տեղաբաշխում» հասկացությունների տարանջատմանը, քանի որ օրենսդիրը բաժնետիրոջ կողմից փակ տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքից լրիվ կամ մասնակի օգտվելու իրավունքի իրականացման ժամկետները կապել է արժեթղթի տեղաբաշխման օրվա հետ:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է արժեթղթերի թողարկում և տեղաբաշխում հասկացությունները:

Այսպես՝ արժեթուղթ թողարկելն անձի գործողությունների ամբողջությունն է՝ ուղղված նույն դասի արժեթղթերի համախմբի առաջացմանը, իսկ տեղաբաշխումն արժեթղթերի առաջին վաճառքն է ներդրողին:

Այսպիսով՝ տեղաբաշխումն արժեթղթի (սովյալ դեպքում՝ պարտատոմսի) վաճառքը կամ այլ կերպ հատուցելի օտարումն է առաջին ձեռք բերողին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է նույն օրենքով ժողովի գումարման մասին սահմանված կարգով Ընկերության դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ ծանուցվեն նույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված նախա-

պատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկող արժեթղթերի ձեռքբերման մասին Ընկերությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով (...) Ծանուցումը պետք է ներկայացվի Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախապատվության իրավունքից լրիվ կամ մասնակի օգտվելու մասին բաժնետերը պետք է պատշաճ կարգով տեղեկացված լինի դրանց տեղաբաշխման օրվանից առնվազն երեսուն օր առաջ, իսկ նախապատվության իրավունքից օգտվելու համար բաժնետերը ընկերությանը պետք է ծանուցի արժեթղթերի տեղաբաշխումից առնվազն մեկ օր առաջ:

Սույն գործով Դատարանը, մերժելով հայցը, իր վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «Նարինե Նալբանդյանին, հանձինս իր ներկայացուցիչ Վահե Մովսիսյանի, մինչև 04.08.2010 թվականի ժողովի գումարումը՝ 16.06.2010 թվականին կայացած Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում, 07.04.2003 թվականին Ընկերության և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության միջև կնքված թիվ 173-Մ պետական գույքի մասնավորեցման պայմանագրով բաժնետերերի կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունների կատարման ընթացքի հարցի քննարկման շրջանակներում առաջարկվել է կատարել ներդրումներ, սակայն վերջինս քվեարկել է դեմ: Հետևաբար Նարինե Նալբանդյանը, մինչև 04.08.2010 թվականի արտահերթ ժողովի որոշումը, հրաժարվել է կատարել ներդրումներ Ընկերությունում փոխառությունների տրամադրման ձևով, և վերջինս, չունենալով ներդրում, չէր կարող մասնակից լինել փոխարկելի պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացին: Ման պայմաններում, դատարանն արձանագրում է, որ Ընկերության ընդհանուր ժողովի 04.08.2010 թվականի՝ Ընկերության կողմից փոխարկվող պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման, ինչպես նաև Ընկերության կողմից փոխարկվող պարտատոմսերն Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի փոխարկման նպատակով լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն անվավեր ճանաչելու հիմքեր չկան, հետևաբար և հայցը ենթակա է մերժման: Ինչ վերաբերում է հայցվորի ներկայացուցչի այն պատճառաբանությանը, որ Նարինե Նալբանդյանը գրկվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից, քանի որ ժողովը որոշել է փոխարկելի պարտատոմսերը տեղաբաշխել Ընկերության միայն 2 բաժնետերերին՝ շրջանցելով Նարինե Նալբանդյանին, որի արդյունքում էլ օտարվել են լրացուցիչ տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերը, անհիմն է և հայցը բավարարելու հիմք հանդիսանալ չի կարող ինչպես վերը նշված պատճառաբանությամբ, այնպես էլ այն պատճառաբանությամբ, որ հարցը վերաբերել է փոխարկելի պարտատոմսերին, որոնք տրամադրվել են բաժնետերերին նրանց հանդեպ Ընկերությունում արդեն իսկ ձևավորված փոխառությունների դիմաց, որին հայցվորը չի ցանկացել մասնակցել: Բացի այդ, փոխարկելի պարտատոմսերով պայմանավորված իրավահարաբերությունները չեն կարգավորվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, քանի որ սույն պարագայում բաժնետոմսերի դիմաց վճարում չի կատարվել, այլ վերաբերում է սահմանափակ շրջանառության իրավունքով փոխարկելի պարտատոմսերի թողարկմանը և տեղաբաշխմանը, որը կարգավորվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածով»:

Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի վերոգրյալ եզրահանգմանը, մերժել է վերաքննիչ բողոքը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերության ժողովում ոչ միայն քննարկվել է բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկման, այլև Ընկերության կոնկրետ բաժնետերերի միջև դրանց տեղաբաշխման հարցը՝ անտեսելով այն հանգամանքը, որ Ընկերության քսան տոկոսի բաժնետեր հանդիսացող Նարինե Նալբանդյանն օրենքով սահմանված ժամկետում լրիվ կամ մասնակի չի հրաժարվել իր նախապատվության իրավունքի իրականացումից: Ավելին, փոխարկելի պարտատոմսերի փոխարկումը բաժնետոմսերի նախատեսվել է արժեթղթերի թողարկումից 15 օր հետո, որը պակաս է օրենքով սահմանված ժամկետից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Ընկերության կողմից պարտատոմսերի թողարկման հարցի որոշման ժամանակ չէր կարող որոշվել բաժնետիրոջ կողմից արժեթղթերի ձեռքբերման նախապատվության հարցը, քանի որ այդ իրավունքը իրացվում է ոչ թե արժեթղթերի թողարկման փուլում, այլ բաժնետիրոջ կողմից Ընկերությանն արժեթղթերի տեղաբաշխման փուլում՝ տեղաբաշխման օրվանից առնվազն մեկ օր առաջ բաժնետիրոջ կողմից Ընկերությանը գրավոր ծանուցմամբ:

Վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները նյութական իրավունքի մյուս խախտումների մասին սույն գործի լուծման համար էական չեն հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքում մասնավորապես պատճառաբանվել է, որ Դատարանն առանց թույլատրելի ապացույցի հաստատված է համարել բաժնետերեր Հրաչ-Ներսես Կապրիելյանի և Վարդան Սիրմաքեսսի կողմից Ընկերությունում ներդրումներ անելու, ինչպես նաև շահագրգիռ անձանց կողմից քվեարկելու և որոշում կայացնելու հանգամանքները:

Սույն քաղաքացիական գործով վիճարկվող՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը բովանդակային առումով բաժնետիրոջ օրենքով ամրագրված իրավունքները խախտում է փոխարկելի պարտատոմսերի փակ տեղաբաշխմանը մասնակցելու նախապատվության իրավունքի սահմանափակման առումով, քանի որ Ընկերության բաժնետերերի կողմից ընկերությունում օրենքով չարգելված այլ ձևերով ու եղանակներով կատարված ներդրումները չեն կարող պայմանավորել Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման ու փակ տեղաբաշխման ժամանակ որևէ ներդրողի օրենքով երաշխավորված իրավունքի իրականացման սահմանափակմանը, եթե նման սահմանափակումը նախատեսված չէ օրենքով:

Դրա հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է ընկերության բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում ձեռքբերման նախապատվության իրավունքի սահմանափակում, սակայն այդ սահմանափակումը տարածվում է ընկերության բոլոր բաժնետերերի վրա և այս դեպքում ընկերության բաժնետիրոջ մոտ կարող է առաջանալ բաժնետոմսերի հետզման իրավունք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի հիմքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փակ բաժնետիրական ընկերության դեպքում վերը նշված իրավիճակը բացակայում է այն պատճառաբանությամբ, որ բացակայում է բաց բաժանորդագրության հնարավորությունը, բաժնետոմսի հետզման դեպքեր հնարավոր են միայն նույն հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից արժեթղթերի թողարկմանն ու տեղաբաշխմանը վերաբերող հարցի քննարկումն Ընկերության կանոնադրությամբ որոշված կառավարման մարմնում, այդ թվում՝ բաժնետերերի ընդհանուր ժողովում չի կարող դիտվել որպես գործարք, որի կապակցությամբ կիրառելի լինեն «գործարքի շահագրգիռ անձի» ինստիտուտը կարգավորող նորմերը: Այս իրավահարաբերությունների շրջանակը սահմանափակվում է զուտ Ընկերության արժեթղթերի թողարկմանն ու տեղաբաշխման պայմանների ու կարգի սահմանումով:

Այդ իսկ պատճառով Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում բողոքի պատճառաբանությունը՝ Ընկերության բաժնետիրոջ բաժնետոմսերի հետզնման իրավունքի խախտման մասին:

Տվյալ դեպքում մինչև պարտատոմսի թողարկումը և տեղաբաշխումն առկա պարտքերի դիմաց պարտատոմսի տրամադրումը հակասում է ինվեստիցիոն (ներդրումային) արժեթղթերի թողարկմանն ու տեղաբաշխման սկզբունքներին, անկախ փոխառության ձևով Ընկերությունում ներդրում կատարած շահագրգիռ անձանց քվեարկությանը մասնակցելուց, քանի որ ներդրումային արժեթղթի թողարկումն ու տեղաբաշխումը նպատակ է հետապնդում նույն տեսակի և դասի արժեթղթերի համար որոշված ընդհանուր պայմաններով դրամական միջոցներ կամ այլ համարժեք գույքային իրավունքներ ներգրավել: Նույնիսկ եթե ժողովի որոշումը կայացվեր գործարքում շահագրգռություն չունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից, որոշումը չէր կարող դիտվել օրենքին համապատասխանող վերը նշված պատճառաբանություններով:

Հիմնավոր է նաև բողոքի պատճառաբանությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների խախտման մասով, քանի որ ստորադաս դատարանները ներկայացված ապացույցները գնահատել և հետազոտել են հիշատակված հոդվածներով սահմանված կանոնների խախտմամբ, ինչն էլ էական ազդեցություն է թողել գործի լուծման վրա:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՏԴ/0074/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ՏԴ/0074/02/13
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին
դռնբաց դատական նիստում, քննելով «Իջևանի շուկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2014
թվականի որոշման դեմ՝ ըստ Իջևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքա-
պետարան) հայցի ընդդեմ Ընկերության, երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Տավուշի մարզային ստորաբաժանման
(այսուհետ՝ Կադաստր), «Իջևան» նոտարական տարածքի նոտար Ս. Հովսեփյանի, ՀՀ
կապի և տրանսպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործարքն
անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է անվավեր ճանաչել իր
և Ընկերության միջև 09.03.2005 թվականին կնքված հողամասի վարձակալության
պայմանագիրը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 448քմ մակերեսով հողամասի
նկատմամբ Ընկերության անվամբ 14.03.2005 թվականին իրականացված վարձակալու-
թյան իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա.
Կուրելյան) (այսուհետ՝ Դատարան) 04.10.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դա-

տարան) 06.02.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.10.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ և 305-րդ հոդվածները, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 48-րդ, 53-րդ, 130-132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը Քաղաքապետարանի հայցը բավարարելիս հիմք է ընդունել այն փաստը, որ հողամասի նպատակային նշանակությունը փոխվել է:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերը նշված փաստը հայցվորը չի վկայակոչել, հետևաբար դրա ապացուցման մասին խոսք լինել չի կարող: Այսինքն՝ ստորադաս դատարանները հայցվորի փոխարեն վկայակոչել են հողամասի նպատակային նշանակության փոփոխության փաստը և փորձել ապացուցել, հիմնավորել դրա առկայությունը՝ դրանով իսկ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց հողամասի նպատակային նշանակության ինքնակամ փոփոխության փաստը հաստատված համարելու համար: Այսպես, որպեսզի հիմնավորվեր հողամասի նպատակային նշանակության ինքնակամ փոփոխության հանգամանքն առաջին հերթին սույն գործով պետք է հիմնավորվեր, որ վիճելի հողամասի նկատմամբ գործարք կնքելու ժամանակ այն եղել է որևէ կոնկրետ նշանակության և փոփոխվել է մեկ այլ նշանակության:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես՝ հաշվի չի առել, որ սույն գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում այն փաստը, որ հողամասն ունեցել է թիվ 706-001 ծածկագիրը: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ հողամասի նկատմամբ Ընկերության իրավունքը հաստատող վկայականում, որպես հողամասի ծածկագիր նշվել է այլ՝ թիվ 11-001 ծածկագիրն, ինչպես նաև այն, որ Իջևան համայնքի հողերը, ըստ նպատակային նշանակության, հաստատվել են ՀՀ կառավարության 06.10.2005 թվականի թիվ 2417-Ն որոշմամբ, մինչդեռ վիճելի հողամասի վերաբերյալ պայմանագիրը կնքվել է ավելի վաղ՝ 09.03.2005 թվականին:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով չի հաստատվել այն հանգամանքը, որ հողամասը 09.03.2005 թվականին՝ վարձակալության պայմանագիրը կնքելու ժամանակ ունեցել է էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակություն, այսինքն՝ սույն գործով վճիռի առարկա հողամասի նպատակային նշանակության փոփոխության հանգամանքը չի հիմնավորվել:

Սույն գործի պարագայում Քաղաքապետարանը չի հիմնավորել վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու իր պահանջը, որպիսի պայմաններում ստորադաս դատարաններն արձանագրել են, որ պահանջի հիմքում դրված փաստական

և իրավական հիմնավորումներն անհիմն են: Մինչդեռ պահանջի անհիմն լինելու պայմաններում հայցը բավարարվել է, իսկ փաստերը չապացուցելու բացասական հետևանքները կրել է Ընկերությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Իջևանի քաղաքապետի 24.02.2005 թվականի թիվ 30 որոշման համաձայն՝ Ընկերությանն Իջևան քաղաքի Երևանյան թիվ 1 հասցեում գտնվող, վերջինիս սեփականության իրավունքով պատկանող շուկայի ընդլայնման նպատակով 90 տարի ժամկետով վարձակալության է հանձնվել է 448քմ մակերեսով տարածք (հատոր 1-ին, գ.թ. 8):

2) Հայաստանի Հանրապետության, որի անունից հանդես է եկել Իջևանի համայնքը և Ընկերության միջև 09.03.2005 թվականին կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր, որով վերջինիս Իջևան քաղաքի Երևանյան թիվ 1 հասցեում գտնվող շուկայի ընդլայնման նպատակով 90 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացվել է 448քմ մակերեսով տարածք (հատոր 1-ին, գ.թ. 9):

3) 14.03.2005 թվականին Կադաստրի կողմից Ընկերության վարձակալության իրավունքը ստացել է պետական գրանցում և տրամադրվել է թիվ 1150636 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, որում հողամասի նպատակային նշանակությունը նշվել է՝ «բնակավայրերի», իսկ օգտագործման նպատակը՝ «հասարակական կառուցապատման»: Միաժամանակ հողամասի կադաստրային համարը նշվել է 11-001 (հատոր 1-ին, գ.թ. 13-16):

4) ՀՀ կառավարության 06.10.2005 թվականի թիվ 2417-Ն որոշման համաձայն՝ հաստատվել է ՀՀ Տավուշի մարզի Իջևանի քաղաքային վարչական սահմանների նկարագիրը և որոշվել է Իջևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով փոխանցել համայնքին: Համաձայն նշված որոշման 7-րդ հավելվածի «ՀՀ Տավուշի մարզի Իջևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի» (ըստ նպատակային նշանակության) ցանկի՝ սույն գործով վիճելի հողամասին տրվել է թիվ 706-001 ծածկագիրը և նպատակային նշանակությունը նշվել՝ միջպետական ճանապարհ (հատոր 1-ին, գ.թ. 44):

5) Իջևանի քաղաքապետի 25.09.2012 թվականի թիվ 316 որոշման համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել ««Իջևանի շուկա» ՍՊԸ-ին ընդլայնման նպատակով վարձակալությամբ տարածք հատկացնելու մասին» Իջևանի քաղաքապետի 24.02.2005 թվականի թիվ 30 որոշումը (հատոր 1-ին, գ.թ. 17):

6) Քաղաքապետարանի «Քաղաքացիական գործով նախնական դատական նիստում հայցի առարկայի, հայցի հիմքի և կիրառման ենթակա օրենսդրության ճշգրտված տարբերակ» վերտառությամբ փաստաթղթի համաձայն՝ հայցի առարկան նշվել է՝ անվավեր ճանաչել Քաղաքապետարանի և Ընկերության միջև 09.03.2005 թվականին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը, և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 448քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ընկերության անվամբ 14.03.2005 թվականին իրականացված վարձակալության իրավունքի պետական գրանցումը, իսկ որպես հայցի հիմք նշվել են հետևյալ փաստարկները՝

1. Քաղաքապետի 24.02.2005 թվականի թիվ 30 որոշումը չի քննարկվել և չի

համաձայնեցվել Իջևան համայնքի ավագանու հետ: 2. Իջևանի քաղաքապետի 25.09.2012 թվականի թիվ 316 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Իջևանի նախկին քաղաքապետի 24.02.2005 թվականի թիվ 30 որոշումը: 3. ՀՀ Կառավարության 06.10.2005 թվականի թիվ 2417-Ն որոշմամբ վիճելի հողատարածքը համարվել է պետական սեփականություն, իսկ նպատակային նշանակությունը, որպես միջպետական նշանակության ճանապարհ՝ կրելով թիվ 706-001 ծածկագիրը: Սրանից հետևում է, որ վիճելի տարածքն ընդհանրապես չպետք է վարձակալությամբ տրամադրվեր Ընկերությանը, քանի որ միջպետական նշանակության ճանապարհը համարվում է Նախարարության սեփականությունը, հետևաբար այն պետք է համաձայնեցվեր նաև իրավասու մարմինների հետ (հատոր 1-ին, գ.թ. 61):

7) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի 28.06.2013 թվականի տեղեկանքի համաձայն՝ ք. Իջևան, Երևանյան թիվ 1 հասցեում գտնվող Ընկերության անվամբ վարձակալության իրավունքով գրանցված 0,0448 հա մակերեսով հողամասը համաձայն էլեկտրոնային կադաստրային քարտեզի տվյալների՝ ունեցել է թիվ 706-001 ծածկագիրը և հանդիսացել է պետական սեփականություն՝ «էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր» նպատակային նշանակությամբ (հատոր 2-րդ, գ.թ. 27):

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից, իսկ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումն էական նշանակություն ունի նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հողամասի նպատակային նշանակության փոփոխման փաստի ապացուցման հարցին, ինչպես նաև դրա փոփոխման հետևանքով արդեն իսկ կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հարցին:

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հողերի նպատակային նշանակությունը, հողատեսքերն ու գործարանական նշանակությունը և հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումները նշվում են՝

1) հողամասեր տրամադրելու (փոխանցելու) կամ հատուկ պահպանվող տարածքների և այլ նշանակության հողերի օգտագործման համար հատուկ իրավական ռեժիմներ սահմանելու մասին պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներում.

2) հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականներում, պայմանագրերում և այլ փաստաթղթերում.

3) անշարժ գույքի պետական միասնական կադաստրի փաստաթղթերում.

4) պետական գրանցման փաստաթղթերում.

5) համայնքների հողերի օգտագործման սխեմաներում, գլխավոր հատակագծերում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով, այլ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հողերի նպատակային և գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելը հիմք է՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը, ինչպես նաև դրանց հիման վրա հողամասերի առնչությամբ կնքված գործարքները դատական կարգով անվավեր ճանաչելու համար.

2) հողի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու համար:

Նույն հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը սեփականատիրոջ նախաձեռնությամբ սահմանված կարգով փոփոխելու դեպքում, բացառությամբ՝ ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղբանջարեղենի ստանարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող (նախատեսվող) հողամասերի, հողամասի սեփականատերը, ըստ գույքի գտնվելու վայրի, եռամսյա ժամկետում համայնքային բյուջե է մուծում հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հողամասի նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկատվությունն ի թիվս այլ փաստաթղթերի արտացոլվում է իրավունք հաստատող վկայականներում և պայմանագրերում: Նշված փաստաթղթերում կոնկրետ հողամասի նպատակային նշանակության վերաբերյալ կատարված նշումն իրավաչափ է, քանի դեռ վերջինս չի վիճարկվել կամ փոփոխվել: Կախված այն հանգամանքից, թե նպատակային նշանակությունն ում կողմից է փոփոխվել՝ առաջանում են իրավական տարբեր հետևանքներ:

Այսպես, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումն իրականացվել է ինքնակամ, ապա հողամասի առևտրությամբ կայացված ակտերը և կնքված գործարքները դատական կարգով կարող են ճանաչվել անվավեր: Եթե հողամասի նպատակային նշանակությունը փոփոխվել է հողամասի սեփականատիրոջ կողմից, ապա հնարավոր միակ իրավական հետևանքը նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը վճարելու պարտականությունն է, եթե նոր նպատակային նշանակության փոփոխումը հանգեցրել է հողամասի կադաստրային արժեքի ավելացման: Այսպիսով, հողամասի սեփականատիրոջ նախաձեռնությամբ հողամասի նպատակային նշանակության փոփոխումը չի հանգեցնում պայմանագիրը կամ վերջինիս կնքման համար հիմք հանդիսացող իրավական ակտն անվավեր ճանաչելուն:

Սույն գործով Դատարանը պատճառաբանել է, որ հիմնավորված չի համարում հայցադիմումի այն հիմքը, որ հողամասը կարող էր վարձակալության տրամադրվել միայն ավագանու որոշմամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով: Նշված հոդվածով, ինչպես իր հայցադիմումի պատասխանում նշել է նաև պատասխանողը, կարգավորվում են համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի տնօրինման կարգը, մինչդեռ գործի քննության ընթացքում հաստատվել է, որ պատասխանողին վարձակալության հատկացված հողամասը հանդիսացել է պետական սեփականություն և հաշվառված է եղել թիվ 706-001 կադաստրային ծածկագրի տակ՝ որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակությամբ և տրանսպորտի գործառնական նշանակության հողամաս (ՀՀ կառավարության 06.10.2005 թվականի թիվ 2417-Ն որոշման 7-րդ հավելվածի համաձայն՝ թիվ 706-001 կադաստրային ծածկագրի տակ հաշվառված է միջպետական ճանապարհ):

Միաժամանակ, Դատարանը հայցը բավարարելիս հիմք է ընդունել Կադաստրի 28.06.2013 թվականի տեղեկանքը և հանգել է այն հետևության, որ տվյալ դեպքում հաստատվել է, որ հողամասի նպատակային նշանակությունը եղել է էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հող, մինչդեռ պետական գրանցման մատյանում և անշարժ գույքի սեփականության (օգտագործման)

իրավունքի վկայականում հողամասի նպատակային նշանակությունը նշվել է բնակավայրերի և առկա չէ որևէ ապացույց լիազոր մարմնի կողմից հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը վերահաստատել է Դատարանի պատճառաբանությունները:

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Իջևան համայնքի հողերն ըստ նպատակային նշանակության ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 06.10.2005 թվականի թիվ 2417-Ն որոշմամբ, մինչդեռ վիճելի հողամասի վերաբերյալ վարձակալության պայմանագիրը կնքվել է 09.03.2005 թվականին: Այսինքն՝ վիճելի հողամասին թիվ 706-001 ծածկագիրը և նպատակային նշանակությունը՝ միջպետական ճանապարհ, տրվել է 06.10.2005 թվականի թիվ 2417-Ն որոշման թիվ 7-րդ հավելվածով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ պայմաններում չէր կարող հաստատվել այն փաստը, որ կողմերի միջև վարձակալության պայմանագիրը կնքելիս Իջևան քաղաքի Երևանյան թիվ 1 հասցեում գտնվող 448քմ մակերեսով ունեցել է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների և տրանսպորտի նպատակային նշանակություն:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն հետազոտել և գնահատել այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որով կհաստատվեր, որ տեղի է ունեցել վիճելի հողամասի նպատակային նշանակության փոփոխություն, ինչպես նաև հաշվի չեն առել, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհիմնավորվեր այն փաստը, որ վիճելի հողամասը գործարքի կնքման պահին ունեցել է թիվ 706-001 ծածկագիրը:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների կողմից վկայակոչած ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի 28.06.2013 թվականի տեղեկանքին, ըստ որի՝ ք. Իջևան, Երևանյան թիվ 1 հասցեում գտնվող Ընկերության անվամբ վարձակալության իրավունքով գրանցված 0,0448հա մակերեսով հողամասը համաձայն էլեկտրոնային կադաստրային քարտեզի տվյալների՝ ունեցել է թիվ 706-001 ծածկագիրը և հանդիսացել է պետական սեփականության հողամաս՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակությամբ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ տեղեկանքում նշված չէ այն ժամանակահատվածը, թե երբ է վիճելի հողամասն ունեցել թիվ 706-001 ծածկագիրը և ըստ նպատակային նշանակության հանդիսացել միջպետական ճանապարհ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի 28.06.2013 թվականի տեղեկանքով չի հաստատվում կողմերի միջև 09.03.2005 թվականին կնքված վարձակալության պայմանագրի կնքման ժամանակ սույն գործով վեճի առարկա 448քմ մակերեսով հողամասի՝ թիվ 706-001 ծածկագիր ունենալու և էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության լինելու հանգամանքները:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոք բերած անձի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հողամասի նպատակային նշանակության փոփոխման փաստը հայցվորը չի վկայակոչել և դատարանները հայցվորի փոխարեն վկայակոչել են հողամասի նպատակային նշանակության փոփոխության փաստը՝ փորձելով այն ապացուցել և հիմնավորել դրա առկայությունը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ գործում առկա է Քաղաքապետարանի «Քաղաքացիական գործով նախնական դատական նիստում հայցի առարկայի, հայցի հիմքի և կիրառման

ենթակա օրենսդրության ճշգրտված տարբերակ» անվամբ փաստաթուղթ, ըստ որի՝ որպես հայցի հիմք նշվել է սան, որ ՀՀ կառավարության 06.10.2005 թվականի թիվ 2417-Ն որոշմամբ վիճելի հողատարածքը համարվել է պետական սեփականություն, իսկ նպատակային նշանակությունը, որպես միջպետական նշանակության ճանապարհ՝ կրելով թիվ 706-001 ծածկագիրը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի մասնակիորեն հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՊԵՏԻ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ/0487/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0487/02/12

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

Դատավորներ՝ Ա. Խառատյան

Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՍԻՄՈՆԱ ԱԿՎԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Արարատի մարզի Դաշտաքար համայնքի ղեկավարի, ՀՀ Արարատի մարզպետարանի և «ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ վարձակալության պայմանագիրը մասնակիորեն և դրա հիման վրա կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, վարձակալության պայմանագիր կնքելուն պարտադրելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է մասնակիորեն՝ 220քմ մակերեսի չափով, անվավեր ճանաչել ՀՀ Արարատի մարզպետի և Կազմակերպության միջև 13.07.2007 թվականին կնքված թիվ 2144 վարձակալության պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումը, որպես անվավերության հետևանք՝ ՀՀ Արարատի մարզի Դաշտաքար համայնքի ղեկավարին պարտադրել այդ մասի վերաբերյալ Ընկերության հետ կնքել վարձակալության պայմանագիր:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Արազյան) (այսուհետ՝ Դատարան) 12.06.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.12.2013 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ և 278-րդ հոդվածները, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 80-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ և 7-րդ մասերը, ՀՀ կառավարության 21.04.2011 թվականի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի փոփոխելու մասին» թիվ 558-Ն որոշումը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 51-րդ, 53-րդ և 54-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 1-ին կետը, մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ և 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որի արդյունքում հանգել է սխալ եզրահանգման այն մասին, որ Ընկերությունն ունի հանքարդյունահանման և դրանից ածանցվող այլ իրավունքներ, և որ վարձակալության պայմանագիրն Ընկերության կողմից կնքվել է հանքարդյունահանման իրավունքով արդեն իսկ ծանրաբեռնված հողամասի նկատմամբ: Հողամասը վարձակալության իրավունքով Կազմակերպությանը տրամադրվել է 13.07.2007 թվականին, և այդ ժամանակ տվյալ տարածքում առկա բոլոր երեք հորատանցքերը 24.10.2006 թվականին տրված թիվ 20 լիցենզիայով տրված են եղել Կազմակերպությանը, իսկ Ընկերությանը լիցենզիան տրամադրվել է միայն 11.01.2011 թվականին, ուստի Կազմակերպության հետ վերը նշված վարձակալության պայմանագիրը կնքելու պահին հողամասը չէր կարող ծանրաբեռնված լինել Ընկերության իրավունքներով: Այսինքն՝ նշված պայմանագիրը կնքելիս Ընկերության որևէ իրավունք չի խախտվել, և վերջինս չի հանդիսանում շահագրգիռ անձ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի վերաձևակերպել ինչպես լիցենզիան, այնպես էլ պայմանագիրը, որի պայմաններում դրանք կորցրել են իրենց իրավական ուժը, իսկ ընդերքօգտագործողի գործունեությունն էլ համարվում է առանց թույլտվության իրականացված գործունեություն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ վարձակալության պայմանագիրը և դրանից բխող իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելով հենց 220քմ մակերեսի չափով՝ Դատարանը որևէ կերպ դա չի հիմնավորել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

Ընկերությունը, ունենալով հանքահորի հանքարդյունահանման համապատասխան լիցենզիա և ստորերկրյա հանքային ջրի տրամադրման ու օգտագործման պայմանագիր, փաստացի գրկված է այդ լիցենզիաներից բխող իրավագործություններն իրականացնելու հնարավորությունից, քանի որ դրան խոչընդոտում է Կազմակերպությունը, որին վարձակալությամբ հանձնված է այն հողամասը, որում գտնվում է թիվ 19 հանքահորը:

Ընկերությունը սույն գործով հանդիսանում է շահագրգիռ անձ, քանի որ ունի վավեր հանքարդյունահանման իրավունք, իսկ վիճարկվող պայմանագրով ուղղակիորեն ոտնահարվում են Ընկերության շահերը:

Պետության կողմից Կազմակերպությանը վարձակալությամբ տրամադրվել է մի հողամաս, որում առկա երեք հանքահորերից մեկը հանքարդյունահանման իրավունքով արդեն իսկ ծանրաբեռնված է եղել Ընկերության իրավունքներով, որի արդյունքում շրջանցվել են գործող օրենսդրության պահանջները:

ՀՀ Արարատի մարզպետի և Կազմակերպության միջև 13.07.2007 թվականին կնքված վարձակալության պայմանագրի և Ընկերությանը լիցենզիա տրամադրելու միջև հակասություն չկա, քանի որ 13.07.2007 թվականին Կազմակերպությանը թույլատրվել է օգտագործել բացառապես թիվ 11 հորատանցքը: Այսինքն՝ վերջինս որևէ իրավունք չի ունեցել թիվ 12 և հատկապես թիվ 19 հորատանցքի նկատմամբ, որի նկատմամբ իրավունքներն իրավաչափորեն փոխանցվել են Ընկերությանը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ բնապահպանության նախարարությունը 24.10.2006 թվականին Կազմակերպությանը տրամադրել է ՀՀ Արարատի մարզի Վեդու «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի (թիվ 11, 12 և 19 հորատանցքեր) հանքարդյունահանման թիվ 20 լիցենզիան (հատոր 2-րդ, գ.թ. 73):

2) ՀՀ Արարատի մարզպետի և Կազմակերպության միջև 13.07.2007 թվականին կնքվել է հողամասերն օգտագործման հանձնելու մասին պայմանագիր, որի համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի վարչական սահմաններում գտնվող հողերից Կազմակերպությանը տրամադրվել է 7հա մակերեսով հողամաս: Շշված պայմանագրից բխող իրավունքը գրանցվել է, որի հիման վրա Կազմակերպությանը 18.07.2007 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական (հատոր 2-րդ, գ.թ. 66-71):

3) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը 11.01.2011 թվականին Ընկերությանը տրամադրել է ՀՀ Արարատի մարզի «Արարատ ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրի (թիվ 19 հորատանցք) հանքարդյունահանման թիվ 39 լիցենզիան (հատոր 1-ին, գ.թ. 9):

4) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը 28.06.2011 թվականին Կազմակերպությանը տրամադրել է ՀՀ Արարատի մարզի Վեդու «Արարատ» ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի (թիվ 11 հորատանցք) հանքարդյունահանման թիվ ՀԱ-Լ-14/664 հատուկ լիցենզիան (հատոր 2-րդ, գ.թ. 74):

5) ՀՀ Արարատի մարզի Դաշտաքարի գյուղապետարանի և Ընկերության միջև 29.11.2011 թվականին ստորագրվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիր, որի համաձայն՝ ընդերքօգտագործման նպատակով Ընկերությանը տրամադրվել է 220քմ մակերեսով հողամաս: Շշված պայմանագիրը նոտարական կարգով չի վավերացվել, դրանից բխող իրավունքը չի գրանցվել (հատոր 2-րդ, գ.թ. 47, 48):

6) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի

աշխատակազմի «Վեդու» ստորաբաժանման կողմից 13.12.2011 թվականին տեղեկանք է կազմվել այն մասին, որ ՀՀ Արարատի մարզի Դաշտաքար համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող 220քմ մակերեսով հողամասում առկա է գրանցված իրավունք. տարածքը համադրվում է Կազմակերպության անվամբ գրանցված հողամասի, ինչպես նաև շինության և պարսպի հետ (հատոր 2-րդ, գ.թ. 31).

7) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը 20.10.2012 թվականին Կազմակերպությանը տրամադրել է ՀՀ Արարատի մարզի Վեդու «Արարատ» ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի (թիվ 11 հորատանցք) արդյունահանման թիվ ՇԱԹՎ.-29/125(նախկին 14/664) թույլտվությունը (հատոր 2-րդ, գ.թ. 72).

8) Ընկերությունը ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում չի դիմել լիազոր մարմնին՝ իրեն տրամադրված լիցենզիան վերաձևակերպելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի մեկնաբանությանը, ինչը պետք է ապահովի դատարանների կողմից վերոնշյալ նորմի միատեսակ կիրառությունը և նպաստի դրա վերաբերյալ նախադեպային իրավունքի զարգացմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շահագրգռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է, ուստի դատարանը պետք է պարզի բոլոր քննվող գործերով հայցվորի շահագրգռվածության հարցը: Դատարան դիմելով՝ հայցվորը պետք է հիմնավորի, իսկ դատարանը՝ պարզի, թե հայցվորի ճիշտ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները, ու ներկայացված հայցի նպատակն արդյո՞ք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է արդյո՞ք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները (կամ, համապատասխան դեպքերում, նրան պատճառված վնասը փոխհատուցել): Հայցվորն իրավունք ունի դատարան դիմելու իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վերականգման համար (*լրենս, Մրիխյարինգ Ադմինիստրատիվնիստր Ֆայնենշլ Փերֆորմանս Հոլդինգս հիմնադրամը, «Լուքսոնսա Լիմիթեդ» ընկերությունը, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը և Արմեն Միքայելյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պեբական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժնի և «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ»» ԲԲԸ-ի թիվ ԵԱԶԳ/1494/02/10 քաղաքացիական*

գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը):

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը (ուժի մեջ է մտել 01.01.2012 թվականին) տրամադրված ընդերքօգտագործման իրավունքները պահպանում են իրենց ուժը նաև նույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո: Նշված օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքն է:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց ուժը մինչև նոր օրենսգրքին համապատասխան թույլտվությունների ստացումը: Ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպման դեպքում նույն օրենսգրքով սահմանված թույլտվությունների տրման և գործողության ժամկետներ են համարվում մինչև նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելն ընդերքօգտագործման ոլորտում տրված լիցենզիաների տրման և գործողության ժամկետները:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, ընդերքօգտագործողները պարտավոր են դիմել լիազոր մարմին՝ իրենց ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) վերաձևակերպելու համար:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) չվերաձևակերպելու դեպքում ընդերքօգտագործողի գործունեությունը համարվելու է առանց թույլտվության իրականացրած գործունեություն, և կիրառվելու են պատասխանատվության միջոցներ:

Վկայակոչված հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման այն բացառիկ իրավունքները, որոնք հավաստված են մինչև 01.01.2012 թվականը տրամադրված համապատասխան փաստաթղթերով, 01.01.2012 թվականից հետո իրենց ուժը պահպանելու են մինչև նշված օրենսգրքին համապատասխան 12 ամսվա ընթացքում թույլտվությունների ստացումը (ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպումը), որպիսի ժամկետում ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) չվերաձևակերպելու դեպքում ընդերքօգտագործողի գործունեությունը համարվելու է առանց թույլտվության իրականացրած գործունեություն, և կիրառվելու են պատասխանատվության միջոցներ: Ելնելով նման իրավակարգավորումից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաձևակերպման նպատակով իրավատիրոջ կողմից անգործություն դրսևորելու արդյունքում ընդերքօգտագործման իրավունքն օրենքի ուժով դադարում է: Ընդ որում, նշված վերլուծությունը բխում է նաև նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից, որն ընդերքօգտագործող է ճանաչում այն իրավաբանական անձին (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությանը), որն ընդերքօգտագործումն իրականացնում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան, այսինքն՝ պահպանելով նաև նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի պահանջները:

Սույն վճեհի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների

նախարարությունը մինչև ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 11.01.2011 թվականին, Ընկերությանը տրամադրել է ՀՀ Արարատի մարզի «Արարատ ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրի (թիվ 19 հորատանցք) հանքարդյունահանման թիվ 39 լիցենզիան: Ընկերությունը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո (01.01.2012թ.) 12 ամսվա ընթացքում չի դիմել լիազոր մարմնին՝ իրեն տրամադրված լիցենզիան վերաձևակերպելու համար, հետևաբար վերջինիս ընդերքօգտագործման իրավունքը նշված ժամկետի ավարտով, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով դադարել է:

Սույն գործով Դատարանը 12.06.2013 թվականին կայացրած վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով նաև, որ «օրենսդրությանը համապատասխան ունենալով հանքահորի հանքարդյունահանման համապատասխան լիցենզիա և ստորերկրյա հանքային ջրի տրամադրման ու օգտագործման մասին պայմանագիր՝ Ընկերությունը փաստացի չի կարողանում իրացնել այդ լիցենզիայից բխող իրավագործությունները...»:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ «անհիմն են բողոքաբերի այն պնդումները, թե իբր սույն գործով հայցվորն ի սկզբանե չի ունեցել հանքարդյունահանման իրավունք, քանի որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի ուժով այն պետք է վերաձևակերպված լիներ: Սույն պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասը, որը նախատեսում է, որ մինչև նույն օրենսգրքին ուժի մեջ մտնելը տրամադրված ընդերքօգտագործման իրավունքները պահպանում են իրենց ուժը նաև նույն օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո: Վկայակոչված հոդվածի ուժով ընդերքօգտագործման իրավունքի վավերության ու օրինականության ապահովման համար ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա որևէ պարտականություն նախատեսված չէ օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո վերաձևակերպելու ընդերքօգտագործման իրավունքը: Հետևաբար դրանք պահպանում են իրենց ուժը նաև օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո», «նման պայմաններում անհրաժեշտ է եզրահանգել, որ «ՄԻՄՈՆԵԱ ԱԿՎԱ» ՍՊԸ-ին պատկանող ստորերկրյա ջրերի հանքարդյունահանման լիցենզիան վավեր է ամբողջապես», «հայցվորն ունի վավեր հանքարդյունահանման իրավունք, հետևաբար անհիմն է նաև բողոքում մատնանշված երկրորդ հիմքն առ այն, թե իբր հայցվորն իրավունք չունի վիճարկելու 13.07.2007 թվականի Արարատի մարզպետի և «ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 2144 վարձակալության պայմանագիրը: Նա սույն գործով համարվում է շահագրգիռ անձ, և նշված պայմանագրով ուղղակիորեն ոտնահարվել են իր շահերը նույնպես: Հետևապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթն առ այն, որ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, ամբողջապես կիրառելի է սույն գործով հայցվոր «ՄԻՄՈՆԵԱ ԱԿՎԱ» ՍՊԸ-ի նկատմամբ»:

Վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ իրավական նորմի սխալ մեկնաբանությունն առկա է նաև այն դեպքում, երբ դատարանը, ճիշտ որակելով կողմերի միջև առկա իրավահարաբերությունը, սխալ է պարզաբանել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմի բովանդակությունը, վերջինիս վերլուծության արդյունքում, ըստ էության, սխալ հետևություններ է արել կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ իրավունքը համակարգային երևույթ է, որի առանձին տարրերը՝ իրավական նորմերը, սերտորեն փոխկապված են միմյանց հետ, ուստի որևէ նորմի իմաստն ամբողջությամբ բացահայտելու համար բավարար չէ նրա ներքին բովանդակության վերլուծությունը, այլ անհրաժեշտ է բացահայտել տվյալ նորմի համակարգային կապն այլ նորմերի հետ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասը մեկնաբանել է՝ անտեսելով նույն հոդվածի մյուս մասերում ամրագրված իրավական նորմերը, ինչն էլ հանգեցրել է տվյալ իրավանորմի սխալ մեկնաբանությանը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ օրենսդիրը, սահմանելով, որ մինչև ՀՀ ընդերքի մասին գործող օրենսգիրքն ուժի մեջ մտնելը տրամադրված ընդերքօգտագործման իրավունքները պահպանում են իրենց ուժը նաև նույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, այդուհանդերձ, նույն հոդվածի այլ մասերում նախատեսել է այդ իրավունքի հետագա պահպանման համար որոշակի նախապայմաններ, որոնք չիրականացնելը հանգեցնում է համապատասխան իրավունքի դադարմանը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, վերլուծության չենթարկելով վկայակոչված հոդվածի հետագա իրավակարգավորումը, սխալ եզրահանգման է եկել առ այն, որ ընդերքօգտագործման իրավունքի վավերության և օրինականության ապահովման համար ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար որևէ պարտականություն նախատեսված չէ օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո վերաձևակերպելու նշված իրավունքը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավական նորմի սխալ մեկնաբանությունը հանգեցրել է նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների սխալ գնահատման: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության ընդերքօգտագործման իրավունքը գործի ըստ էության լուծման պահին արդեն իսկ դադարած է եղել՝ նկատի ունենալով, որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Ընկերությունը ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում դիմել է լիազոր մարմնին՝ տրամադրված լիցենզիան վերաձևակերպելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության ընդերքօգտագործման իրավունքը դադարած լինելու պարագայում Կազմակերպության հետ կնքված հողամասի վարձակալության պայմանագրի առկայությունը, ինչպես նաև Կազմակերպության անվամբ գրանցված՝ հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքի գոյությունն Ընկերության որևէ իրավունք չէին կարող խախտել, հետևաբար վերջինս նշված պայմանագիրը վիճարկելու պահանջով շահագրգիռ անձ չէ և վերջինիս պահանջը՝ վարձակալության պայմանագիրը մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին, ենթակա էր մերժման: Վճռաբեկ դատարանը, միաժամանակ նկատի ունենալով, որ Ընկերությունը նաև ներկայացրել է վարձակալության պայմանագրի հիման վրա կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և վարձակալության պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջներ, որոնք իրենց բնույթով ածանցվում են վարձակալության պայմանագիրը մասնակիորեն անվավեր ճանաչելու հիմնական պահանջից, գտնում է, որ հիմնական պահանջի մերժման պայմաններում մերժման էին ենթակա նաև ածանցյալ պահանջները:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «ՄԻՄՈՆԵԱ ԱԿՎԱ» ՍՊԸ-ի հայցը մերժել:
2. «ՄԻՄՈՆԵԱ ԱԿՎԱ» ՍՊԸ-ից հօգուտ «ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒԴ» ՍՊԸ-ի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար, 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ-1/0019/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ-1/0019/02/13

Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

Դատավորներ՝ Ս. Միքայելյան

Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հուսիկ Թադևոսյանի ներկայացուցիչ Քրիստինա Գևորկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հուսիկ Թադևոսյանի ընդդեմ Արմեն Արիստակեսյանի, ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտար Անժելա Յականյանի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հուսիկ Թադևոսյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտար Անժելա Յականյանի կողմից 07.10.2008 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված սեղանամատյանում 5241 համարով):

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Մելքոնյան) (այսուհետ՝ Դատարան) 14.02.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշմամբ Հուսիկ Թադևոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 14.02.2014 թվականի վճիռը և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հուսիկ Թադևոսյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ, 220-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 23-րդ, 52-րդ, 53-րդ և 123-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 22.04.2014 թվականին Հուսիկ Թադևոսյանի կողմից Վերաքննիչ դատարան է ներկայացվել դատավորի ինքնաբացարկի միջնորդություն, որը դատարանի կողմից չի քննարկվել: Ինքնաբացարկի միջնորդության հիմքում դրվել է նախկինում՝ 28.03.2013 թվականին, Վերաքննիչ դատարանի նույն կազմի կողմից նույն անձանց միջև նույն գույքի վերաբերյալ քաղաքացիական գործ քննելու հանգամանքը: Ավելին, ինքնաբացարկի միջնորդության ներկայացման մասին Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման մեջ չկա նույնիսկ որևէ նշում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Արմեն Արիստակեսյանը տիրապետել է վիճելի գույքի միայն մի մասը, ընդ որում՝ Արմեն Արիստակեսյանի ներկայացրած ապացույցներն առ այն, որ ինքը կատարել է գույքահարկի և այլ վճարումներ, նույնպես վերաբերում են վիճելի գույքի միայն մի մասին: Ավելին, գործում առկա՝ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքի գրառումների համաձայն՝ 149 համարի տակ որպես տնտեսության գլխավոր նշված է Ռուբիկ Հուսիկի Թադևոսյանը, իսկ 148 համարի տակ՝ Կոլյա Հայկի Արիստակեսյանը, ինչը նույնպես վկայում է այն մասին, որ տնտեսությունները վարվել են առանձին-առանձին՝ 148 և 149 համարների տակ, սակայն գրանցված են մեկ հասցեում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը հաշվի չի առել Հուսիկ Թադևոսյանի ներկայացրած և գործում առկա՝ 15.11.2010 թվականին Այգեշատի գյուղապետի կողմից տրված տեղեկանքն առ այն, որ Հուսիկ Թադևոսյանի հայրը տիրապետել է վիճելի գույքը՝ մինչև մահը, այսինքն՝ եղել է մոր՝ Միլյա Թադևոսյանի գույքը փաստացի տիրապետող ժառանգ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ սույն գործով հիմնական պահանջն Արմեն Արիստակեսյանի գործողությունների վիճարկումն է, քանի որ վերջինս նոտարին է ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տվյալներ, ինչի արդյունքում տրամադրվել է ժառանգության իրավունքի վկայագիր, իսկ նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը վիճարկելն ածանցյալ պահանջ է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.06.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

12) Հուսիկ Թադևոսյանի կողմից 22.04.2014 թվականին Վերաքննիչ դատարան է ներկայացվել «Դատավորի ինքնաբացարկի մասին» միջնորդություն (հատոր 3-րդ, գ.թ. 34):

13) Գործում առկա չէ Հուսիկ Թադևոսյանի կողմից 22.04.2014 թվականին ներկա-

յացված «Դատավորի ինքնաբացարկի մասին» միջնորդությունը Վերաքննիչ դատարանի կողմից քննարկելու և դրա վերաբերյալ եզրահանգման գալու ապացույց:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու անհրաժեշտության հարցին:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, իսկ նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի բովանդակության բացահայտմանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի լիարժեք իրականացումը, սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել:

Այդ հիմքերն են՝

- 1) երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, կամ
- 2) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության

19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքն արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ օրինական կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը սուբյեկտիվ մոտեցումն է, որը փորձում է պարզել տվյալ դատավորի անձնական համոզմունքները քննվող գործի կապակցությամբ, և երկրորդը՝ օբյեկտիվ մոտեցումը, որը սահմանում է, թե արդյոք դատավորի կողմից առաջարկվող երաշխիքները բավարար են այդ կապակցությամբ առաջացած ցանկացած օրինաչափ կասկած բացառելու համար (*յրենս, ըստ դիմումի Կարինե Հարությունյանի՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատարանի ակտիվ վերանայելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵԱԶԴ/1137/02/08 որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունը ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Շիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան երեք օրով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հայտնված ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին:

Վերը նշված վերլուծության լույսի ներքո անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի իրավակարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինքնաբացարկի ինստիտուտն արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխիքներից է, որն արտահայտվում է դատավորի անաչառության վերաբերյալ կասկած առաջանալու դեպքում վերջինիս ինքնաբացարկ հայտնելու իրավական հնարավորությամբ: Ինքնաբացարկի ինստիտուտը նպատակ ունի կողմերի և գործին մասնակցող այլ անձանց մոտ ամրապնդել համոզմունք առ այն, որ գործը քննվել և լուծվել է անկողմնակալ և օբյեկտիվ, ինչն իր հերթին նախադրյալներ է ստեղծում տվյալ գործով օրինական դատական ակտ կայացնելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ օրենսդիրը, ամրագրելով դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը, միաժամանակ իմպերատիվ կերպով սահմանել է, որ ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունն ընդհատվում է՝ մինչև ինքնաբացարկի հարցի լուծումը, քանի որ առանց դատավորի անաչառության վերաբերյալ կասկածները փարատելու գործի քննությունը շարունակելու դեպքում չի կարող խոսք լինել գործի անկողմնակալ և օբյեկտիվ քննության մասին: Ընդ որում, դատավորի անաչառության վերաբերյալ կասկածները փարատվում են կամ դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելով, կամ ինքնաբացարկի միջնորդությունը պատճառաբանված որոշմամբ մերժելով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հուսիկ Թադևոսյանի կողմից 22.04.2014 թվականին Վերաքննիչ դատարան է ներկայացվել «Դատավորի ինքնաբացարկի մասին» միջնորդություն, որով վերջինս հայտնել է, որ 28.03.2013 թվականին Վերաքննիչ դատարանը նույն դատական կազմով՝ նախագահությամբ Ս. Միքայելյանի, Ն. Տավարացյանի և Դ. Իսախանյանի, նույն անձանց միջև մինևսույն գույքի վերաբերյալ թիվ ԱԲԴ-1/0049/02/11 քաղաքացիական գործով քննության է առել վերաքննիչ բողոք, ինչը վերջինիս մոտ կասկած է հարուցել սույն գործով վերաքննիչ բողոքը քննող դատական կազմի անկողմնակալության վերաբերյալ:

Սույն գործում, սակայն, առկա չէ որևէ ապացույց վերը նշված միջնորդությունը Վերաքննիչ դատարանի դատավորների կողմից քննարկելու և դրա վերաբերյալ եզրահանգման գալու վերաբերյալ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ շահագրգիռ անձն իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենքով նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի՝ միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: Հետևաբար, հաշվի առնելով նաև ինքնաբացարկի ինստիտուտի կարևորությունը՝ անձի արդար դատաքննության իրավունքի իրացման հարցում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է Հուսիկ Թադևոսյանի՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը (արդար դատաքննության իրավունք):

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի հիմքում նշված դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ մյուս փաստարկներին, ապա կողմի դատավարական իրավունքի վերը նշված տեսքով սահմանափակման արդյունքում Վճռաբեկ դատարանը դրանց հնարավոր չի համարում անդրադառնալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.10.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2593/02/10
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2593/02/10

Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՋԻ ԷՅՋ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅԶՍ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՋԻ ԷՅՋ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅԶՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Սևակ Արզարունու, Արտյոմ Մարտիրոսյանի՝ Ընկերության հաշիվներից դուրս գրված գումարների հիմքում ընկած փաստաթղթերը և պարտավորագիր (որտեղ կամրագրվի 2008 թվականից մինչև 2010 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածներում պատասխանողների կողմից Ընկերության առջև իրենց գործողությունների արդյունքում, իրենց ստորագրությամբ և թողտվությամբ կնքված պայմանագրերով Ընկերության հաշիվներից դուրս գրված գումարներով ձեռք բերված գույքով՝ ներառյալ «Միցուբիշի ջիպ» մակնիշի ավտոմեքենայով, դրանց ձեռքբերման և մնացորդ գումարների ծախսերով ընկերությանը հասցված վնասներով գույքային պատասխանատվությունը և պարտավորությունների մարման ժամանակացույցը) Ընկերությանը տրամադրելուն, Ընկերության հաշիվներից դուրս գրված գումարների օգտագործման հիմքում ընկած փաստաթղթերը տրամադրելուն պարտավորեցնելու և պատասխանողներից համապարտության կարգով Ընկերության օգտին «Միցուբիշի ջիպ» մակնիշի ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով վերցված 4.954.000 ՀՀ դրամը բռնագանձելու, Ընկերության հաշիվներից ելքագրված գումարների վերաբերյալ պատասխանողների տիրապետության տակ գտնվող Ընկերության դրամարկղի ելքի օրդերները տրամադրելուն պարտավորեցնելու, ինչպես նաև պատաս-

խանողներ Սևակ Արզարունուց և Արտյոմ Մարտիրոսյանից համապարտության կարգով հոգուտ Ընկերության Սևակ Արզարունուն որպես շահույթի գումարի ավանս վճարված 600.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը, որպես աշխատավարձ վճարված 6.480.000 ՀՀ դրամը, որպես գործուղման գումար վճարված 859.400 ՀՀ դրամը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել պատասխանողներին Ընկերությանը տրամադրելու ընկերության հաշիվներից դուրս գրված գումարների հիմքում ընկած փաստաթղթերը և պարտավորագիր, որտեղ կամրագրվի 2008 թվականից մինչև 2010 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածներում պատասխանողների կողմից Ընկերության առջև իրենց գործողությունների արդյունքում, իրենց ստորագրությամբ և թողտվությամբ կնքված պայմանագրերով Ընկերության հաշիվներից դուրս գրված գումարներով ձեռքբերված գույքով՝ ներառյալ «Միցուբիշի ջիպ» մակնիշի ավտոմեքենայով, դրանց ձեռքբերման և մնացորդ գումարների ծախսերով Ընկերությանը հասցված վնասներով գույքային պատասխանատվությունը և պարտավորությունների մարման ժամանակացույցը:

Լրացուցիչ հայցադիմումով պահանջել է պարտավորեցնել պատասխանողներին Ընկերությանը տրամադրելու Ընկերության հաշիվներից դուրս գրված գումարների օգտագործման հիմքում ընկած փաստաթղթերը և պատասխանողներից համապարտության կարգով հայցվորի օգտին բռնագանձել «Միցուբիշի ջիպ» ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով վերցված 4.954.000 ՀՀ դրամը, ինչպես նաև Սևակ Արզարունուն և Արտյոմ Մարտիրոսյանին պարտավորեցնել Ընկերությանը տրամադրել Ընկերության հաշիվներից ելքագրված գումարների վերաբերյալ պատասխանողների տիրապետության տակ գտնվող Ընկերության դրամարկղի ելքի օրդերներ, ինչպես նաև՝ Սևակ Արզարունուց և Արտյոմ Մարտիրոսյանից համապարտության կարգով հոգուտ Ընկերության բռնագանձել Սևակ Արզարունուն որպես շահույթի գումարի ավանս վճարված 600.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը, որպես աշխատավարձ վճարված 6.480.000 ՀՀ դրամը, որպես գործուղման գումար վճարված 859.400 ՀՀ դրամը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 12.12.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.07.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ հոդվածները, 64-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ հայցի սկզբնական

ձևակերպմամբ հստակ նշվում է, որ Ընկերությունը պահանջում է իրեն տրամադրել Ընկերության հաշիվներից ելքագրված գումարների վերաբերյալ պատասխանողների տիրապետման ներքո գտնվող Ընկերության դրամարկղի ելքի օրդերները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ եթե որևէ մեկն աշխատանք է կատարում, ապա դրա դիմաց վարձատրություն ստանալու իրավունք է ձեռք բերում, և այդ գումարը սահմանված կարգով վճարվում է, այլ ոչ թե գաղտնի կամ բացահայտ հափշտակվում:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ քրեական գործով Սևակ Արզարունու ցուցմունքի տեսագրության 2-րդ մասի 30:10 րոպե և 3-րդ մասի 25:09 րոպե հատվածները, ըստ որոնց՝ վերջինս ընդունել է, որ Ընկերությունից որպես շահաբաժին վերցրել է ավելի քան 600.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև «Լեգալ-Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից իրականացված մասնագիտական ուսումնասիրության արդյունքում տրված «Աուդիտորական հաշվետվության» մեջ արձանագրված այն փաստը, որ իրացված ապրանքների դիմաց կանխիկ դրամով մուտքագրված հատույթի չափն արժանահավատ չէ՝ իրականում ավելի մեծ է:

Այսինքն՝ պատասխանողները, որոնք տնօրինել են Ընկերության ֆինանսական միջոցները, Ընկերությանը պատկանող ապրանքների իրացումից ստացված կանխիկ գումարների մի մասը կարգի խախտմամբ են հանձնել Ընկերության դրամարկղ, իսկ գումարներն Ընկերությունից ստանալու փաստն ամրագրվել է դրամարկղի ելքի անդորրագրերով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ գումարների մուտքագրման և ելքագրման կարգի որևէ կետի խախտում չի կարող փաստել այն հանգամանքը, որ Ընկերության դրամարկղում եղած գումարներն Ընկերությանը չեն պատկանում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.07.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արտյոմ Մարտիրոսյանը հանդիսացել է Ընկերության տնօրեն 10.01.2008 թվականից մինչև 11.09.2010 թվականը (1-ին հատոր, գ.թ. 15, 17)։

2) 01.07.2009 թվականին Սարո, Եսայի Կարթունյանների և 02.07.2009 թվականին Գարաբեդ Հարությունյանի կողմից նույնպիսի վավերացմամբ ստորագրված պարտավորագրերի համաձայն՝ վերջիններս պարտավորվել են ՀՀ-ում ստացած ձեռնարկատիրական գործունեության մաքուր շահույթի 25 տոկոսը որպես շահաբաժին տալ Սևակ Արզարունուն, երբ շահերն իրականանան և ձեռք բերվեն իր աշխատանքի ժամանակահատվածում: Պարտավորագրի իմաստով շահույթ են համարվել կատարված ներդրումներից ստացված շահերը՝ հանած ծախսերը, վնասները և նախօրոք ստացված գումարները (1-ին հատոր, գ.թ. 154-156)։

3) 06.11.2009 թվականին Գարաբեդ Հարությունյանը Սևակ Արզարունուն լիազորել է գործել հոգուտ իրեն և իր անունից՝ ներկայացնելով իր իրավունքները և շահերը երրորդ անձանց առջև (ներառյալ՝ տեղական, հանրային և մասնավոր մարմինների ու հաստատությունների և ֆիզիկական անձանց), իր փոխարեն իրականացնել Ընկերության, «Ջի Էյչ Ինվեսթմենթս» ԲԲԸ-ի կառավարումը, այդ թվում՝ ցանկացած բանկում բացել բանկային հաշիվներ, կատարել մուծումներ, ստորագրել և ստանալ ցանկացած

փաստաթուղթ, ներկայացնել հաշվետվություններ, մասնակցել ընկերության ընդհանուր ժողովներին, քվեարկել իր անունից, ընդունել որոշումներ, ստանալ փաստաթղթեր, նշանակել, աշխատանքից ազատել ընկերության տնօրենին, կնքել պայմանագրեր, այդ թվում՝ ընկերության տնօրենի հետ, ստորագրել համաձայնագրեր, ստորագրած պայմանագրերում (համաձայնագրերում) կատարել փոփոխություններ, լուծել պայմանագրերը, կնքել համաձայնագրեր, հարկ եղած դեպքում լուծել ստորագրված համապատասխան պայմանագիրը, համաձայնագիրը և կատարել ցանկացած գործողություն՝ կապված սույն լիազորության հետ: Լիազորագիրը տրվել է 6 ամիս ժամկետով (2-րդ հատոր, գ.թ. 103):

4) Ընկերության կողմից, ի հիմնավորումն հայցապահանջների, ներկայացվել են 01.12.2009 թվականին ՀՀ ոստիկանության պետական պահպանության վարչության անձի անվտանգության և գույքի պահպանության բաժնի և Ընկերության հիմնադիր-տնօրեն Սևակ Արզարունու միջև կնքված անձի անվտանգության և նրա ունեցվածքի պահպանության իրականացման վերաբերյալ պայմանագիրը և պայմանագրից բխող վճարումների փաստը հավաստող դրամարկղային ելքի օրդերների հաստատված պատճեններ, 19.10.2010 թվականին կազմված անողիտորական հաշվետվությունը, ինչպես նաև դրամարկղային ելքի օրդերների հաստատված պատճեններ՝ տրված տարբեր նպատակներով (1-ին հատոր, գ.թ. 20-102):

5) 19.10.2010 թվականի անողիտորական հաշվետվությամբ ստուգվող ժամանակաշրջանն ընդգրկում է 01.08.2009 թվականից 09.09.2010 թվականն ընկած ժամանակահատվածը: Հաշվետվության ամփոփման համաձայն՝ ստուգման ժամանակահատվածում Ընկերության դրամական միջոցների փաստաթղթավորումը կատարվել է «Հաշվապահական հաշվառման մասին» և «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքների պահանջների խախտմամբ, ինչպես նաև իրացված ապրանքների դիմաց կանխիկ դրամով մուտքագրված հասույթի չափը արժանահավատ չէ՝ իրականում ավելի մեծ է: Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ 09.09.2010 թվականի դրությամբ Ընկերության դրամարկղից ընդհանուր առմամբ բացակայում է առնվազն 89 մլն դրամ (16 մլն+73 մլն=89 մլն) (1-ին հատոր, գ.թ. 31-35):

6) 30.01.2012 թվականի քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերության ղեկավար անձանց կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչության ներկայացված օրենքով սահմանված հաշվետվություններում, հաշվարկներում և հարկման համար հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խոշոր չափի՝ 2.556.000 ՀՀ դրամ հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում 20.06.2011 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83102411 քրեական գործը:

Արտյոմ Մարտիրոսյանը, Սևակ Արզարունին հարկային պարտավորություններից չարամտորեն խուսափելու նպատակով Արթուր Գալստյանի, Եսայի Կարթունյանի ու Անի Մնացականյանի հետ նախնական հանցավոր համաձայնություն չեն ունեցել, նրանց հանցավոր մտադրություններն իրականացնելու նպատակով դիտավորյալ որևէ գործողություն չեն կատարել, Ընկերությունից որևէ գումար չեն հափշտակել: Ելնելով վերոգրյալից՝ որոշվել է թիվ 83102411 քրեական գործով Արտյոմ Մարտիրոսյանի, Սևակ Արզարունու նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ վերջիններիս արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (2-րդ հատոր, գ.թ. 114-117):

7) Հայցադիմումի պատասխանով պատասխանողներն ընդունել են, որ որոշակի

գումարներ իսկապես վերցրել են, «դրանք դուրս են գրվել Սևակի կարգադրությամբ և տնօրեն Արտյոմ Մարտիրոսյանի կատարմամբ՝ համապատասխան անդորրագրերով և հիմնադրի գիտությանը, դրանց վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվել հիմնադիր Գարաբեդ Հարությունյանին էլեկտրոնային փոստով, որին վերջինս կամ իր որդիները որևէ անհամաձայնություն, դիտողություն չեն հայտնել, արգելք չեն դրել՝ հաստատելով իրենց համաձայնությունը» (1-ին հատոր, գ.թ. 152)։

8) Սևակ Արգարունին 23.09.2010 թվականին Գարաբեդ Հարությունյանին, Սարո և Նարեգ Հարությունյաններին ներկայացրել է գրավոր հրաժարական, որով նշել է, որ 2004 թվականի սեպտեմբերից վեց տարի շարունակ որպես գլխավոր տնօրեն և վերջիններիս լիազոր ներկայացուցիչ ՀՀ-ում հանդիսացել է Գարաբեդ Հարությունյանի, Սարո և Նարեգ Հարությունյանների իրավունքների պաշտպանը, բիզնեսի կազմակերպողը և անձնական բոլոր խնդիրների անմիջական պատասխանատուն (1-ին հատոր, գ.թ. 157)։

9) 11.09.2010 թվականին գրանցվել է Ընկերության տնօրենի փոփոխությունը, և որպես տնօրեն գրանցվել է Նարեգ Հարությունյանը (1-ին հատոր, գ.թ. 17)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար։

Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ապացույցների թույլատրելիության ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններին։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ։

Վերոնշյալ հոդվածների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (որն է, *Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԳ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*)։

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով։

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որով սպառնիչ սահմանված է ապացուցման միջոցների շրջանակը։ Մասնավորապես՝ գործին

մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել միայն գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների և գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

2) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված թույլատրելիության նշված կանոնը ենթադրում է ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոնշյալ կանոնի համատեքստում ապացույցի թույլատրելիությունը պետք է դիտարկվի ոչ միայն դատավարական, այլ նաև նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու առումով:

3) գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած ապացույցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով, այլ ապացույցների կիրառումը բացառվում է, կամ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել օրենքով նախատեսված ապացույցներով (անհրաժեշտ ապացույց), սակայն այլ ապացույցների վարույթ ներգրավելու հնարավորությունը սահմանափակված չէ:

Ապացույցների թույլատրելիության նշված կանոնի մասնավոր դրսևորումներից է նաև այս կամ այն ապացույցի օգտագործման արգելքը, որը նշանակում է, որ ի հավաստում գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի չի կարող ներկայացվել որևէ կոնկրետ ապացույց, եթե նյութական օրենսդրությունն արգելում է դրա օգտագործումը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն Ընկերության վերաքննիչ բողոքը գումարի բռնագանձման պահանջի մասով մերժելիս վկայակոչել է «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1408-Ն որոշումը և եզրահանգել, որ օրենսդրի կողմից որպես կազմակերպության դրամարկղից դրամական միջոցների ստացման վերաբերյալ թույլատրելի ապացույց սահմանվել է Ընկերության ղեկավար մարմինների, ինչպես նաև հաշվապահի, գանձապահի և դրամ ստացողի կողմից պատշաճ ստորագրված դրամարկղի ելքի օրդերը:

Վերոգրյալ պատճառաբանությունների ուժով Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումն այն մասին, որ պատասխանողների

կողմից Ընկերությունից գումարներ ստանալու փաստի հաստատման նպատակով հայցվորի կողմից ներկայացված դրամարկղային ելքի օրդերները դրանց վրա գանձապահի ստորագրության բացակայության պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի ուժով չեն հանդիսանում թույլատրելի ապացույցներ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով քրեական գործի շրջանակներում Սևակ Արզարունու տված ցուցմունքին, գտել է, որ այն նույնպես թույլատրելի ապացույց չէ:

Վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրամարկղ՝ կանխիկ դրամի ընդունման, պահպանման և բացթողման համար նախատեսված պահոց (պահեստարան), դրամարկղային գիրք՝ գրանցամատյան, որում գրանցվում է դրամարկղում կանխիկ դրամի մնացորդը ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ, ինչպես նաև կանխիկ դրամի մուտքը դրամարկղ և ելքը դրամարկղից:

«Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2003 թվականի թիվ 1408-Շ որոշման 5-րդ կետի համաձայն՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղից կանխիկ դրամի ելքագրման (վճարման) փաստաթղթավորումը կատարվում է դրամարկղային ելքի օրդերով (այսուհետև՝ ելքի օրդեր): Որոշման 7-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերը, կազմակերպության ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը, հաշվապահը, գանձապահը և դրամ ստացողն ստորագրում են ելքի օրդերը: Ընդ որում, եթե ելքի օրդերին կցվող փաստաթղթերում (դիմում, հաշիվ, տեղեկագիր, հաշվետվություն և այլն) առկա են դրամ վճարելու վերաբերյալ անհատ ձեռնարկատիրոջ կամ կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի և հաշվապահի թույլատրող մակագրությունները, ապա նրանց ստորագրությունները ելքի օրդերի վրա կարող են չդրվել:

Նշված իրավադրույթների փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ դրամարկղային ելքի օրդերը դրամարկղից դրամական միջոցների ելքագրումը հաստատող միակ թույլատրելի ապացույցը չէ: Նշված փաստի հաստատումն օրենսդիրը հնարավոր է համարել նաև այլ ապացույցներով, մասնավորապես՝ որպես այդպիսին կարող է հետազոտվել և գնահատվել դրամարկղային գիրքը: Օրենսդիրը միևնույն ժամանակ չի բացառել ապացուցման այլ միջոցների վարույթ ներգրավման և հետազոտման հնարավորությունը: Նման պարագայում Վերաքննիչ դատարանի դատողությունը, ըստ որի՝ դրամարկղից դրամական միջոցների ստացման վերաբերյալ թույլատրելի ապացույցն Ընկերության ղեկավար մարմինների, ինչպես նաև հաշվապահի, գանձապահի և դրամ ստացողի կողմից պատշաճ ստորագրված դրամարկղի ելքի օրդերն է, Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գրավոր ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին (կազմման, բովանդակության առումով) կանխորոշում է այդ ապացույցի արժանահավատությունը, հետևաբար դրամարկղի ելքի օրդերի ստորագրված լինելու փաստը հանդիսանում է նշված ապացույցի ոչ թե թույլատրելիության, այլ արժանահավատության գնահատման միջոց: Ուստի այս հարցի կապակցությամբ ևս Վերաքննիչ դատարանը ճիշտ հետևության չի հանգել:

Նշված վերլուծությունների համատեքստում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև ստորադաս դատարանների կողմից քրեական դատավարության կարգով

պատասխանող Սևակ Արզարունու կողմից տրված ցուցմունքն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ փաստարկը:

Մինևույն ժամանակ անդրադառնալով նշված ցուցմունքի մասով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիության վերաբերյալ բողոքաբերի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության 64-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձի կողմից այն փաստն ընդունելը, որի միջոցով մյուս անձը հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, պարտադիր չէ դատարանի համար:

Նշված դրույթից հետևում է, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստը կարող է ընդունվել միայն տվյալ քաղաքացիական գործի շրջանակներում, մինչդեռ բողոքաբերի կողմից վկայակոչված՝ Սևակ Արզարունու ցուցմունքը տրվել է սույն քաղաքացիական գործի քննության շրջանակներից դուրս, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով չի կարող գնահատվել որպես գործին մասնակցող անձի կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի ընդունում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից ներկայացված դրամարկղային ելքի օրդերները և Սևակ Արզարունու՝ քրեական գործի շրջանակներում տված ցուցմունքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի ուժով պետք է դիտարկվեն որպես թույլատրելի ապացույցներ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ գնահատվեն մյուս ապացույցների հետ համակցության մեջ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին առ այն, որ «ընկերությունից գումարներ դուրս գրելու փաստը հաստատված գնահատելու պարագայում նույնիսկ չի կարող հաստատված համարվել պատասխանողների կողմից հայցվոր ընկերությանը պատճառված վնասները հատուցելու համար հինք հանդիսացող ոչ իրավաչափ վարքագծի փաստը, քանի որ Սևակ Արզարունին կատարած աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունք ուներ», ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել այդ փաստը հավաստող՝ գործում առկա ապացույցները:

Այսպես, Գարաբեդ Հարությունյանն իր կողմից տրված լիազորագրով Սևակ Արզարունուն լիազորել է գործել հօգուտ իրեն և իր անունից՝ ներկայացնելով իր իրավունքները և շահերը երրորդ անձանց առջև (ներառյալ՝ տեղական, հանրային և մասնավոր մարմինների ու հաստատությունների և ֆիզիկական անձանց), իր փոխարեն իրականացնել Ընկերության, «Ջի Էյչ Ինվեսթմենթս» ԲԲԸ-ի կառավարումը, այդ թվում՝ ցանկացած բանկում բացել բանկային հաշիվներ, կատարել մուծումներ, ստորագրել և ստանալ ցանկացած փաստաթուղթ, ներկայացնել հաշվետվություններ, մասնակցել ընկերության ընդհանուր ժողովներին, քվեարկել իր անունից, ընդունել որոշումներ, ստանալ փաստաթղթեր, նշանակել, աշխատանքից ազատել ընկերության տնօրենին, կնքել պայմանագրեր, այդ թվում՝ ընկերության տնօրենի հետ, ստորագրել համաձայնագրեր, ստորագրած պայմանագրերում (համաձայնագրերում) կատարել փոփոխություններ, լուծել պայմանագրերը, կնքել համաձայնագրեր, հարկ եղած դեպքում լուծել ստորագրված համապատասխան պայմանագիրը, համաձայնագիրը և կատարել ցանկացած գործողություն՝ կապված սույն լիազորության հետ:

Լիազորագիրը տրվել է 06.11.2009 թվականին՝ վեց ամիս ժամկետով:

Գործում առկա՝ 02.07.2009 թվականին Գարաբեդ Հարությունյանի կողմից

նոտարական վավերացմամբ ստորագրված պարտավորագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել է ՀՀ-ում ստացած ձեռնարկատիրական գործունեության մաքուր շահույթի 25 տոկոսը որպես շահութաբաժին տալ Սևակ Արզարունուն, երբ շահերն իրականանան և ձեռք բերվեն իր աշխատանքի ժամանակահատվածում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

ա) նույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը.

բ) ստանալ տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ.

գ) ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը.

դ) օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց.

ե) անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից.

զ) ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից:

Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով, ընկերության կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ստեղծվում է գործադիր մարմին (կոլեգիալ և (կամ) միանձնյա), որն ընթացիկ ղեկավարություն է իրականացնում նրա գործունեության նկատմամբ և հաշվետու է նրա մասնակիցների ընդհանուր ժողովին: Ընկերության կառավարման միանձնյա մարմնի կազմում կարող են ընտրվել նաև ընկերությանը չմասնակցող անձինք:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի «Ընկերության կառավարումը» վերտառությամբ 5-րդ գլուխը սահմանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման մարմիններն ու վերջիններիս իրավասությունները, ընդ որում, օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերության բարձրագույն մարմին է հանդիսանում ընդհանուր ժողովը, որի իրավասությունները սահմանված են օրենքի 36-րդ հոդվածով, իսկ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից: Ընկերության գործադիր մարմինը հաշվետու է ընդհանուր ժողովին և ընկերության խորհրդին, եթե ընկերության խորհրդի ստեղծումը նախատեսված է ընկերության կանոնադրությամբ: Գործադիր մարմնի իրավասությունների շրջանակը սահմանված է օրենքի 43-րդ հոդվածով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գարաբեդ Հարությունյանը հանդիսանում է Ընկերության մասնակից, հետևաբար վերջինս Սևակ Արզարունուն կարող էր լիազորել միայն Ընկերության կառավարմանը մասնակցել այնքանով, որքանով ինքը կարող էր մասնակցել ընկերության կառավարմանը՝ որպես ընկերության մասնակից: Ուստի, Սևակ Արզարունուն տրված՝ սույն գործում առկա լիազորագրով վերջինիս վրա չի դրվել Ընկերության գործադիր մարմնի իրավասություններն իրականացնելու

լիազորություն՝ հաշվի առնելով, որ Ընկերությունն ունեցել է գործադիր մարմին՝ ի դեմս տնօրեն Արտյոմ Մարտիրոսյանի:

Վերոգրյալը հաստատվում է նաև լիազորագրի բովանդակությամբ, համաձայն որի՝ Սևակ Արզարունին լիազորված է «նշանակել, աշխատանքից ազատել ընկերության տնօրենին, կնքել պայմանագրեր, այդ թվում՝ ընկերության տնօրենի հետ»:

Մինչդեռ գործում առկա դրամարկղային ելքի օրդերները, հայցվորի պնդմամբ, որպես Ընկերության ղեկավար, ստորագրել է Սևակ Արզարունին այն դեպքում, երբ նման գործառույթը վերապահված է Ընկերության գործադիր մարմնին: Ավելին, դրամարկղային ելքի օրդերների մի մասը թվագրված է 2010 թվականի մայիսի 06-ից հետո, այսինքն՝ Սևակ Արզարունու լիազորությունները դադարելուց հետո, ուստի նույնիսկ Ընկերության գործադիր մարմնի գործառույթներն իրականացնելու լիազորություններով օժտված լինելու պարագայում այդ լիազորությունները 2010 թվականի մայիսի 06-ին դադարելուց հետո դրամարկղային ելքի օրդերները Սևակ Արզարունու կողմից ստորագրելը չէր կարող դիտվել իրավաչափ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված դրամարկղային ելքի օրդերները, Սևակ Արզարունու՝ քրեական գործի շրջանակներում տրված ցուցմունքները, Գարաբեդ Հարությունյանի կողմից տրված լիազորագիրը և պարտավորագիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հետազոտելու և համակցության մեջ գնահատելու պայմաններում միայն հնարավոր կլիներ պարզել սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները՝

- արդյո՞ք Սևակ Արզարունին դուրս է եկել իրեն վերապահված լիազորությունների շրջանակներից,

- արդյո՞ք ընկերության գործադիր մարմինը՝ ի դեմս տնօրեն Արտյոմ Մարտիրոսյանի, պատասխանատու լինելով ընկերության բնականոն գործունեության համար, ինչն իր մեջ ներառում է նաև ընկերության ֆինանսատնտեսական գործունեության իրականացումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով է իրականացրել Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպումն ու դրամարկղային գործառնությունների իրականացումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն վերոնշյալ հանգամանքները պարզելուց հետո հնարավոր է հաստատված համարել ընկերությանը պատճառված վնասները հատուցելու համար հիմք հանդիսացող պատասխանողների ոչ իրավաչափ վարքագծի առկայությունը կամ բացակայությունը:

Մինչդեռ ստորադաս դատարաններն առանց գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման, հետևության են հանգել պատասխանողների՝ ոչ իրավաչափ վարքագծի բացակայության վերաբերյալ, որպիսի եզրահանգումը Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Սևակ Արզարունին չի հանդիսանում Ընկերության մասնակից և Ընկերության շահույթի բաշխմանը չի կարող մասնակցություն ունենալ: Չհանդիսանալով ընկերության աշխատակից և գործելով ընկերության մասնակցի կողմից տրված լիազորագրով և պարտավորագրերով՝ Սևակ Արզարունին պարտավորության հիմքով կարող էր պահանջ ներկայացնել պարտավորագրի կողմ հանդիսացող Ընկերության մասնակիցներին: Այսինքն՝ վերջինիս կողմից Ընկերությունից որպես վարձատրություն գումարի ստացումը չի բխում Ընկերության մասնակիցների կողմից տրված պարտավորագրի բովանդակությունից, քանի որ Սևակ Արզարունուն Ընկերության մասնակցի կողմից

տրված լիազորագրի ուսումնասիրությունից հետևում է, որ վերջինս լիազորված էր և կարող էր իրականացնել Ընկերության մասնակիցներին՝ օրենքով և ընկերության կանոնադրությամբ վերապահված իրավունքները, և այդ հիմքով հանձնարարության կատարման համար վարձատրությունը և ծախսերի փոխհատուցումը պետք է կատարեր լիազորագիր տված անձը: Այս տեսանկյունից Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՄԴՌ-1038 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները սույն գործով կիրառելի չեն, քանի որ Սևակ Արզարունու կողմից կատարված գործողությունները չեն կարող դիտվել որպես աշխատանքային իրավահարաբերությունների հիմքով ծագած գործողություններ, որովհետև տվյալ դեպքում բացակայում են աշխատանքային հարաբերությունները, որոնց մի կողմը՝ գործատուն, հանդիսանում է Ընկերությունը, իսկ մյուս կողմը՝ աշխատողը, հանդիսանում է Սևակ Արզարունին, հետևաբար կատարված աշխատանքի դիմաց Ընկերությունից վարձատրության պահանջի իրավունք, ավելին, Ընկերության միջոցների հաշվին այդպիսի վարձատրության իրավունք Սևակ Արզարունին չէր կարող ունենալ, հետևաբար լիազորագրից բխող և Սևակ Արզարունու կողմից կատարված գործողությունները պետք է գնահատվեն լիազորած անձի օգտին հանձնարարված աշխատանքների կատարման համատեքստում:

Անդրադառնալով 30.01.2012 թվականի քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմանը, որով արձանագրված է, որ քրեական գործով հիմնավոր ապացույցներ ձեռք չեն բերվել Արտյոմ Մարտիրոսյանի և Սևակ Արզարունու կողմից 120 մլն ՀՀ դրամը յուրացնելու, վատնելու կամ Ընկերության որևէ գումար հափշտակելու ու այլ անօրինական գործողություններ կատարելու վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեադատավարական կարգով ընդունված և ուժի մեջ մտած որոշումը հաստատում է այն հանգամանքը, որ պատասխանողները քրեական օրենքով արգելված արարք չեն կատարել, և նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում, չկա նաև հանցագործությամբ պատճառված վնաս: Սակայն դրա հետ մեկտեղ նշված որոշումը չի կարող հանդիսանալ ընդհանրապես քաղաքացիաիրավական պատասխանատվությունը բացառող հանգամանք, եթե առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը և պայմանները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով գումարների բռնագանձման պահանջի մասով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն չի իրականացվել, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ոչ բոլոր հանգամանքներն են բացահայտվել, որպիսի պարագայում առկա է գործը նշված պահանջի մասով նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն:

Անդրադառնալով Ընկերության փաստաթղթերը տրամադրելուն պարտավորեցնելու, ինչպես նաև պարտավորագրի գրելու և ժամանակացույց սահմանելու մասով հայցապահանջների մերժմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն իրավաչափ է և հիմնավոր, իսկ ներկայացված վճռաբեկ բողոքը այդ մասով անհիմն՝ հետևյալ պատճառարանությամբ.

Ընկերությանը պատկանող փաստաթղթերը տրամադրելուն պարտավորեցնելու հայցապահանջի փաստական և իրավական հիմքերի վերլուծությունից հետևում է, որ այն գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայց է: Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է նշված հայցով ապացուցման առարկան կազմող փաստերի շրջանակին և ապացուցման պարտականությունը բաշխելու առանձնահատկություններին՝ նշելով, որ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի

առարկա գույքն ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են, հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը (տե՛ս, Միասկ-Նուբար Թեթելեյանն ընդդեմ Ռուբեն Զոչարի թիվ ԵԿԴ/0805/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Դատարանը, Ընկերությանը պատկանող փաստաթղթերը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջը մերժելով, պատճառաբանել է, որ հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց Ընկերությանը պատկանող փաստաթղթերը պատասխանողների մոտ գտնվելու փաստի ապացուցման վերաբերյալ, հետևաբար այդ փաստի չապացուցման բացասական հետևանքները կրում է փաստի ապացուցման պարտականությունը կրողը, տվյալ դեպքում՝ հայցվորը:

Վերաքննիչ դատարանը, դատարանի վճիռն այդ մասով անփոփոխ թողնելով, արձանագրել է, որ հայցվոր ընկերության կողմից ոչ միայն չեն ներկայացվել Ընկերությանը պատկանող փաստաթղթերը պատասխանողների տիրապետման ներքո գտնվելու փաստը հաստատող ապացույցներ, այլև չեն նշվել, թե հատկապես ինչպիսի փաստաթղթեր վերադարձնելու պահանջ է ներկայացվել, այսինքն՝ չեն մատնանշվել այն փաստաթղթերը, որոնք, ըստ հայցվոր կողմի, ենթակա են հետ վերադարձման, որպիսի պայմաններում ներկայացված պահանջն ինքնին դառնում է առարկայագուրկ:

Վճռաբեկ դատարանը ստորադաս դատարանների վերոնշյալ եզրահանգումները գտնում է հիմնավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով այդպես էլ չի հիմնավորվել Ընկերությանը պատկանող փաստաթղթերը պատասխանողների մոտ գտնվելու փաստը, ինչը հայցի մերժման հիմք է:

Ինչ վերաբերում է պարտավորագիր տալուն պարտավորեցնելու և ժամանակացույց սահմանելու պահանջներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցապահանջով ներկայացված չեն այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք թույլ կտային դատարանին բավարարել այս հայցապահանջները:

Այսպիսով, Վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակի բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2013 թվականի որոշման՝ «ԶԻ ԷՅՁ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅԶՍ» ՍՊԸ-ի հայցը գումարների բռնագանձման պահանջի մասով մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2012 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը և այդ մասով գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Սևակ Արզարունուց և Արտյոմ Մարտիրոսյանից համապարտության կարգով հօգուտ «ԶԻ ԷՅՁ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅԶՍ» ՍՊԸ-ի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրքի գումար:

Սևակ Արզարունուց և Արտյոմ Մարտիրոսյանից համապարտության կարգով հօգուտ

Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ գույքային պահանջի համար ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ գույքային պահանջի համար ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.10.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Բեկանված մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՍԴ/0111/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0111/02/13

Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան

Դատավորներ՝ Ա. Պետրոսյան

Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Դինո Գոլդ Մայնինգ Քամփին» ՓԲԸ-ի (անվանափոխվել է «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲԸ-ի) (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Նարինե Բեգլարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Խորշոդյանի ընդդեմ Ընկերության՝ Ընկերության 13.03.2013 թվականի թիվ 627-Ա հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Խորշոդյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության 13.03.2013 թվականի թիվ 627-Ա հրամանը, վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 15.11.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.02.2014 թվականի որոշմամբ Արմեն Խորշոդյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 15.11.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ, 53-րդ, 219-րդ, 221-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ մի շարք ապացույցներով՝ Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանի 13.03.2013 թվականի գեկուցագրով, Ընկերության մարդկային ռեսուրսների աշխղեկ Մարիաննա Հովհաննիսյանի 12.03.2013 թվականի գրավոր հայտարարությամբ և վերջիններիս՝ դատարանում տրված ցուցմունքներով ապացուցվել է այն փաստը, որ 13.03.2013 թվականի հրամանն արձակելուց մեկ օր առաջ Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանն Արմեն Խուրշուդյանից պահանջել է մինչև հաջորդ օրը գրավոր բացատրագիր ներկայացնել, սակայն վերջինս այն չի ներկայացրել: Կարգապահական տույժի կիրառման կարգը սահմանող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է պահանջի գրավոր բացատրություն, ինչը սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը վերոհիշյալ ապացույցները համարել է անթույլատրելի, սակայն չի պատճառաբանել, թե ինչու:

Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջն առ այն, որ տեղեկությունը հաստատելու համար բավարար է նշված հոդվածով թվարկված ապացույցներից որևէ մեկի առկայությունը, և տվյալ դեպքում ցուցմունքով կամ միայն վկայի ցուցմունքով փաստական հանգամանքներ հաստատելու արգելքներ չկան:

Վերաքննիչ դատարանը խախտել է վերաքննության սահմանները՝ արձանագրելով, որ Դատարանը քննության առարկա չի դարձրել, թե արդյոք հրամանն արձակելուց մեկ օր առաջ բացատրություն պահանջելը կարող է գնահատվել բացատրություն ներկայացնելու համար ողջամիտ ժամկետի տրամադրում: Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումն արդյունք է գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չհետազոտելու: Այսպես, վկաների ցուցմունքներով հաստատվում է, որ Ընկերությունն Արմեն Խուրշուդյանից պահանջել է գրավոր բացատրագիր և այն ներկայացնելու համար տրամադրել է ողջամիտ ժամկետ: Ժամկետի ողջամտության առումով առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի թիվ ԵԿԴ-0313/02/09 գործով կայացված որոշումը, ըստ որի՝ անգամ աշխատանքից ազատման հրամանն արձակելու միևնույն օրը բացատրագիր պահանջելը բացատրագիր ներկայացնելու համար ողջամիտ ժամկետի տրամադրում է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.02.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.11.2013 թվականի վճռին:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արմեն Խուրշուդյանը 01.06.2010 թվականից աշխատել է Ընկերության Շահումյանի անվան հանքում՝ որպես վերապատրաստվող ապարաբարձիչի մեքենավար, իսկ 01.06.2011 թվականից՝ որպես ապարաբարձիչի մեքենավար (հատոր 1-ին, գ.թ. 6-7):

2) Թիվ 31 ամբարձիչ մեքենայի չափման-ստուգման գործընթացի արձանագրության համաձայն՝ 12.03.2013 թվականին հանձնաժողովի կողմից կատարվել է թիվ 31 ապարաբարձիչ մեքենայի վառելիքի ծախսի չափագրում (հատոր 1-ին, գ.թ. 37):

3) Ընկերության պահակային ծառայության ղեկավարի 13.03.2013 թվականի գեկուցագրի համաձայն՝ Արմեն Խուրշուդյանի կողմից երեք ամիսների ընթացքում ցույց է տրվել 239,18 լիտր ավել դիզվառելիքի ծախս (հատոր 1-ին, գ.թ. 34):

4) Ընկերության 13.03.2013 թվականի թիվ 627-Ա հրամանի համաձայն՝ Արմեն Խուրշուդյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծվել է՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով (հատոր 1-ին, գ.թ. 5):

5) Ընկերության մարդկային ռեսուրսների աշխույժ Մարիաննա Հովհաննիսյանի 12.03.2013 թվականի հայտարարության համաձայն՝ Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանն Արմեն Խուրշուդյանից պահանջել է մինչև 13.03.2013 թվականի ժամը 10:00-ը ներկայացնել գրավոր բացատրագիր՝ վերջինիս կարգապահական խախտման վերաբերյալ (հատոր 1-ին, գ.թ. 63):

6) Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանի 13.03.2013 թվականի գեկուցագրի համաձայն՝ Արմեն Խուրշուդյանի կողմից մինչև 13.03.2013 թվականի ժամը 10:00-ն ընկած ժամանակահատվածը չի ներկայացվել գրավոր բացատրագիր (հատոր 1-ին, գ.թ. 64):

7) Վկաներ Ընկերության մարդկային ռեսուրսների աշխույժ Մարիաննա Հովհաննիսյանը և Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանը դատաքննության ընթացքում ցուցմունք են տվել առ այն, որ Արմեն Խուրշուդյանին 12.03.2013 թվականին առաջարկվել է մինչև 13.03.2013 թվականը բացատրություն ներկայացնել իր կողմից թույլ տրված կարգապահական խախտման վերաբերյալ, սակայն վերջինս սահմանված ժամկետում բացատրություն չի ներկայացրել (հիմք՝ դատական նիստի արձանագրությունը, հատոր 2-րդ, գ.թ. 87-90):

8) Արմեն Խուրշուդյանի վերաքննիչ բողոքում Դատարանի վճիռը բողոքարկվել է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

ա) Դատարանը սխալ է մեկնաբանել և սխալ կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ վիճարկվող որոշման համաձայն՝ հայցվորն Ընկերությունից շարունակաբար կատարել է գողություն, որի արդյունքում պատասխանողին հասցվել է նյութական վնաս: Հայցվորին աշխատանքից ազատելիս Ընկերությունը ղեկավարվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով: Հայցվորն Ընկերությունից գողություն չի կատարել, հետևաբար իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 13.03.2013 թվականի թիվ 627-Ա հրամանն ակնհայտ ապօրինի է, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի:

բ) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ հոդվածները, այն է՝ գործի նյութերով չի հաստատվում խախտման մասին հայցվորից գրավոր բացատրություն պահանջելու հանգամանքը:

գ) Դատարանի վճիռը չի հրապարակվել, բողոքարկվող վճիռը հայցվորի ներկայացուցիչը ստացել է 15.11.2013 թվականի աշխատանքային օրվա վերջում՝ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Կապանի նստավայրում:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերաքննության սահմանների և ապացույցների թույլատրելիության կանոնների պարզաբանմանը՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի մեկնաբանությանը, նշել է, որ Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի հաստատած փաստերը կարող է որպես հիմք չընդունել միայն այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վիճարկվում է այդ փաստը, իսկ վերաքննիչ դատարանն էլ հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել (*տե՛ս, Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ 1Դ/0423/02/08/370/ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի հաստատած փաստը կարող է հիմք չընդունել միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

երբ վերաքննիչ բողոքում վիճարկվում է այդ փաստը.

երբ վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել.

2. վերաքննիչ բողոքում առաջին ատյանի դատարանի հաստատած փաստերը չվիճարկվելու պարագայում վերաքննիչ դատարանը դրանք պետք է ընդունի որպես հիմք և իր նախաձեռնությամբ չի կարող քննարկել, առավել ևս՝ կասկածի տակ դնել այդ փաստերի հավաստիությունը:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, Ընկերության մարդկային ռեսուրսների աշխղեկ Մարիաննա Հովհաննիսյանի 12.03.2013 թվականի հայտարարությամբ, Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանի կողմից Ընկերության տնօրենին հասցեագրված 13.03.2013 թվականի գեկուցագրով և նշված անձանց տված ցուցմունքներով հաստատված է համարել, որ 12.03.2013 թվականին՝ աշխատանքից ազատելու հրամանն արձակելուց մեկ օր առաջ, Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանն Արմեն Խուրշուդյանից պահանջել է մինչև հաջորդ օրն իր կատարած կարգապահական խախտման վերաբերյալ գրավոր բացատրագիր ներկայացնել, սակայն սահմանված ժամկետում վերջինս այն չի ներկայացրել: Անդրադառնալով նշված փաստի հաստատման նպատակով Ընկերության վկայակոչած ապացույցներին, մասնավորապես՝ վկաների ցուցմունքների գնահատմանը, Դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում բացակայում են վկաների ցուցմունքներն անթույլատրելի կամ ոչ վերաբերելի ճանաչելու մասին օրենսդրի կողմից սահմանված հիմքերը:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը բեկանելով, պատճառաբանել է, որ Դատարանը քննության առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք հրամանն արձակելուց մեկ օր առաջ բացատրություն պահանջելը կարող է գնահատվել բացատրություն ներկայացնելու համար ողջամիտ ժամկետի տրամադրում և, բացի այդ, «իրավաչափ չէ բացատրություն պահանջելու փաստը հաստատված համարել միայն նույն Ընկերության աշխատակցի բանավոր ցուցմունքով»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը չի քննարկել գրավոր բացատրություն ներկայացնելու համար գործատուի սահմանած ժամկետի ողջամիտ լինելու հարցը, քանի որ հայցվորը վիճարկել է ոչ թե ժամկետի ողջամտությունը, այլ իրենից բացատրություն պահանջված լինելու փաստը: Վերոհիշյալ ժամկետի ողջամտության հարցի վերաբերյալ որևէ փաստարկ չի ներկայացվել նաև վերաքննիչ բողոքով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի պահանջները, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ անհիմն կերպով քննարկման առարկա դարձնելով բացատրություն ներկայացրելու համար սահմանված ժամկետի ողջամտության հարցը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը բացատրություն պահանջելու փաստի հաստատմանն ուղղված ապացույցների թույլատրելիության վերաբերյալ հանգել է անհիմն հետևության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
- 2) փորձագետների եզրակացություններով.

3) վկաների ցուցմունքներով.

4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս, Սվերլյանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիդ Խաչատրյանի թիվ ԵՄԳ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով նշված դիրքորոշումը, մեկ այլ որոշման շրջանակներում արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով.

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որով սպառնիչ սահմանված է ապացուցման միջոցների շրջանակը: Մասնավորապես՝ գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել միայն գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների և գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

2) Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված թույլատրելիության նշված կանոնը ենթադրում է ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վերոնշյալ կանոնի համատեքստում ապացույցի թույլատրելիությունը պետք է դիտարկվի ոչ միայն դատավարական, այլ նաև նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու առումով:

3) Գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնի բովանդակությունից հետևում է,

որ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած ապացույցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով, այլ ապացույցների կիրառումը բացառվում է, կամ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել օրենքով նախատեսված ապացույցներով (անհրաժեշտ ապացույց), սակայն այլ ապացույցների վարույթ ներգրավելու հնարավորությունը սահմանափակված չէ:

Ապացույցների թույլատրելիության նշված կանոնի մասնավոր դրսևորումներից է նաև այս կամ այն ապացույցի օգտագործման արգելքը, որը նշանակում է, որ ի հավաստում գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի չի կարող ներկայացվել որևէ կոնկրետ ապացույց, եթե նյութական օրենսդրությունն արգելում է դրա օգտագործումը (*յրենս*, «ՋԻ ԷՅՋ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅՋՍ» ՍՊԸ-ն ընդդեմ Սևակ Արզարունու, Արդյուն Մարտիրոսյանի թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը): Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նաև նշել է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը կիրառելիս պետք է ցույց տա, թե որ հոդվածով է արգելված ապացույցի նման տեսակով նման փաստի հաստատումը (*յրենս*, Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արարաշարի քաղաքապետարանի և մյուսների թիվ ԱՎԴ/0235/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):

Վերը նշված իրավական դիրքորոշումներից բխում է, որ նման արգելք սահմանված չլինելու դեպքում գործի հանգամանքները կարող են հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բոլոր տեսակներով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածին՝ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածում նշված նորմը կրում է իմպերատիվ (պարտադիր) բնույթ, որի համաձայն՝ գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է մինչև կարգապահական տույժի կիրառումը (*յրենս*, Ալբերտ Ջանիբեկյանն ընդդեմ «ՅԻՆԶՍ» ՈւՎԿ ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2998/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը):

Վերը նշված վերլուծության լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության աշխատակիցներ Ընկերության մարդկային ռեսուրսների աշխղեկ Մարիաննա Հովհաննիսյանի և Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանի՝ գործի քննության ընթացքում որպես վկա տված ցուցմունքները սույն գործով թույլատրելի ապացույցներ են, և Ընկերության մարդկային ռեսուրսների աշխղեկ Մարիաննա Հովհաննիսյանի 12.03.2013

թվականի հայտարարության, Ընկերության մարդկային ռեսուրսների մենեջեր Լիաննա Հայրապետյանի 13.03.2013 թվականի զեկուցագրի հետ համակցության մեջ բավարար են հաստատված համարելու մինչև կարգապահական տույժի կիրառումն Արմեն Խորշոդյանից կարգապահական խախտման վերաբերյալ բացատրություն պահանջելու փաստը՝ նկատի ունենալով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը չի պարտավորեցնում գործատուին աշխատողից խախտման մասին բացատրություն պահանջել բացառապես գրավոր ձևով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, բացատրություն ներկայացնելու համար տրամադրված ժամկետի ողջամիտ լինելու և բացատրություն պահանջելու փաստի հաստատմանն ուղղված ապացույցների թույլատրելիության հարցերի քննարկման արդյունքում գալով այն եզրահանգման, որ Դատարանի վճիռը ենթակա է բեկանման, այլևս չի անդրադարձել վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված Վճռաբեկ դատարանի լիազորությունը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վերաքննիչ բողոքի մյուս հիմքերը քննության առնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.07.2014 թվականի որոշմամբ հետաձգված և վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գանձման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

վճարված գումար, 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես շինարարության կատարման համար նախապես վճարված գումար, 2.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես շինարարական նախագծի համար նախապես վճարված գումար, 17.860 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվարկված բանկային տոկոսներ, իսկ հայցապահանջը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2010 թվականի որոշմամբ Առլեն Պետրոսյանսի վերաքննիչ բողոքը վերադարձվել է և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով սահմանվել է երկշաբաթյա ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2013 թվականի որոշմամբ մերժվել է Առլեն Պետրոսյանսի վերաքննիչ բողոքը՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայման վարույթ հարուցելու, Դատարանի 05.11.2010 թվականի վճիռը բեկանելու մասին և նշված վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Առլեն Պետրոսյանսի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.31-րդ, 204.32-րդ և 204.34-րդ հոդվածները, որն ազդել է գործի ելքի վրա և կայացվել է չպատճառաբանված դատական ակտ:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով բողոքում ներկայացված փաստարկները և դրանք հիմնավորող ապացույցները, առանց որևէ հիմնավոր պատճառաբանության մերժել է Առլեն Պետրոսյանսի վերաքննիչ բողոքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Առլեն Պետրոսյանսը հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, պարբերաբար բացակայել է ՀՀ-ից և տեղյակ չի եղել թիվ ՀՅ-ԲԴ-4/0136/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի որոշման մասին:

Այն հանգամանքի մասին, որ Վանա Սաֆաիեին հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղի Չարենցի փողոցի թիվ 15 հասցեի անշարժ գույքի միակ սեփականատերը, Առլեն Պետրոսյանսն իմացել է միայն 30.05.2013 թվականին՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված գրությամբ:

Ման պայմաններում ակնհայտ է, որ նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկը պետք է սկսել 30.05.2013 թվականից, երբ Առլեն Պետրոսյանսն իմացել է, որ վիճելի հասցեի անշարժ գույքի սեփականատերը հաստատապես Վանա Սաֆաիեին է և տեղեկացել է թիվ ՀՅ-ԲԴ-4/0136/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի որոշման մասին:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Առլեն Պետրոսյանսը, չտիրապետելով ՀՀ օրենսդրությանը, չի կարողացել իրացնել իր

դատական պաշտպանության իրավունքը, մասնավորապես՝ թիվ ԿԴ-3/0085/02/09 քաղաքացիական գործով կայացված վճռով վերջինիս վրա դրված ոչ իրավաչափ գումարային պարտավորությունների մասով, և մինևույն ժամանակ գրկվել է նաև ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղի Չարենցի փողոցի թիվ 15 հասցեի անշարժ գույքի նկատմամբ իր ունեցած սեփականության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանի 05.11.2010 թվականի թիվ ԿԴ-3/0085/02/09 վճռի հիմքում դրվել է նաև ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2009 թվականի թիվ ՀՅՔԴ-4/0136/02/08 վճիռը (հատոր 4-րդ, գ.թ. 132-139):

2) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2009 թվականի թիվ ՀՅՔԴ-4/0136/02/08 վճռով Կարինե Հահագազի Գաբրիի հայցն ընդդեմ Վանա Վարուջի Սաֆաիեի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման և երրորդ անձ Առլեն Պետրոսյանսի բավարարվել է: Վճռվել է մասնակի անվավեր ճանաչել Առլեն Պետրոսյանսի և Վանա Վարուջի Սաֆաիեի միջև 13.10.2008 թվականին կնքված ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղի Չարենցի թիվ 15 հասցեում գտնվող հողամասի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և ճանաչվել է Կարինե Գաբրիի սեփականության իրավունքը նշված հասցեում գտնվող հողամասի 1/2 մասի նկատմամբ (հատոր 4-րդ, գ.թ. 1-6):

3) Առլեն Պետրոսյանսի կողմից 18.07.2013 թվականին բերված վերաքննիչ բողոքին կից ներկայացված ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի որոշմամբ Վանա Սաֆաիեի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2009 թվականի թիվ ՀՅՔԴ-4/0136/02/08 վճիռը բեկանվել և փոփոխվել է. որոշվել է Կարինե Հահագազի Գաբրիի հայցն ընդդեմ Վանա Վարուջի Սաֆաիեի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման և երրորդ անձ Առլեն Պետրոսյանսի՝ հողամասի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և հայցվորի սեփականության իրավունքը ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղի Չարենցի թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 մասի նկատմամբ ճանաչելու պահանջի մասին, մերժել (հատոր 5-րդ, գ.թ. 36-40):

4) Առլեն Պետրոսյանսի կողմից 18.07.2013 թվականին բերված վերաքննիչ բողոքին կից ներկայացված ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) 30.05.2013 թվականի տեղեկանքի համաձայն՝ Կոտայքի մարզ, գ. Քասախ, Չարենցի փողոց թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքը միանձնյա սեփականության իրավունքով գրանցված է Վանա Սաֆաիե Վարուջի անվամբ (հատոր 5-րդ, գ.թ. 41):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահով-

ման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նոր երևան եկած հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված ժամկետը պահպանված լինելու հարցին, ինչպես նաև օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները դատական ակտի հիմնավորման հիմքում դնելու իրավաչափության խնդրին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե վերացվել է այն դատական ակտը, դատավճիռը, վարչական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը, որը հիմք է ծառայել տվյալ վճռի կայացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

Վկայակոչված իրավադրույթի վերլուծությունից հետևում է, որ բողոք բերած անձն է կրում դատական ակտը նոր երևան եկած հանգամանքի հիմքով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու փաստի ապացուցման պարտականությունը: Այսինքն՝ բողոք բերած անձը ոչ միայն պետք է ապացուցի, որ առկա է նոր երևան եկած հանգամանք, այլև պետք է համապատասխան թույլատրելի և վերաբերելի ապացույցների ներկայացմամբ հիմնավորի, որ այդ հանգամանքի ի հայտ գալու մասին իմացել կամ կարող էր իմանալ բողոքը ներկայացնելուն նախորդող եռամսյա ժամկետի ընթացքում:

Սույն գործով բողոք բերած անձը որպես նոր երևան եկած հանգամանք ներկայացրել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի թիվ ՀՅՔԴ-4/0136/02/08 որոշումը, և որպես այդ հանգամանքի մասին իր կողմից իմանալու փաստը հիմնավորող ապացույց վերաքննիչ բողոքին կցել է Կադաստրի 30.05.2013 թվականի տեղեկանքը, ըստ որի՝ Կոտայքի մարզ, գ. Քասախ, Չարենցի փողոց, թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքը միանձնյա սեփականության իրավունքով պատկանում է Վանա Սաֆախին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, արձանագրել է, որ բողոք բերած անձի կողմից նոր երևան եկած հանգամանքի վերաբերյալ տեղյակ լինելու փաստը գնահատելու համար անհրաժեշտաբար պահանջվել է թիվ ՀՅՔԴ-4/0136/02/08 քաղաքացիական գործը և նշված հանգամանքը բացահայտվել է հիշյալ քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությամբ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել թիվ ՀՅՔԴ-4/0136/02/08 քաղաքացիական գործում առկա հետևյալ ապացույցները.

ա) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.10.2010 թվականի որոշմամբ Վանա Սաֆախի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, և գործի քննությունը նշանակվել է 03.11.2010 թվականին (գործ թիվ ՀՅՔԴ-4/0136/02/08, հատոր 3-րդ, գ.թ. 16-17):

բ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.10.2010 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու, այն վերականգնելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու» մասին որոշումը 13.10.2010 թվականի թիվ ԴԴ7-23682 գրությամբ՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, Կենտրոն 3-րդ փողոց, թիվ 15 տուն հասցեով

պատվիրված նամակով հետադարձ ծանուցմամբ ուղարկվել է Առլեն Պետրոսյանսին, հետադարձ ծանուցման թերթիկը ստորագրվել և փոստային բաժանմունքի կողմից հետ է վերադարձվել դատարան 21.10.2010 թվականին (գործ թիվ ՀՅ-ԲԴ-4/0136/02/08, հատոր 3-րդ, գ.թ. 31-33):

զ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի որոշմամբ Վանա Սաֆաիեի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2009 թվականի թիվ ՀՅ-ԲԴ-4/0136/02/08 վճիռը և հայցը մերժվել է (գործ թիվ ՀՅ-ԲԴ-4/0136/02/08, հատոր 3-րդ, գ.թ. 76-80):

դ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի որոշումը նույն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Քասախ, Կենտրոն 3-րդ փողոց, թիվ 15 տուն հասցեով պատվիրված նամակով հետադարձ ծանուցմամբ 08.12.2010 թվականի թիվ ԴԴ-7-28860 գրությամբ ուղարկվել է Առլեն Պետրոսյանսին, որը ստորագրությամբ վերջինիս հանձնվել է 13.12.2010 թվականին, իսկ հետադարձ ծանուցման թերթիկը նույն ստորագրությամբ փոստային բաժանմունքի կողմից հետ է վերադարձվել դատարան (գործ թիվ ՀՅ-ԲԴ-4/0136/02/08, հատոր 3-րդ, գ.թ. 93):

Վերաքննիչ դատարանը, միաժամանակ նշելով, որ Առլեն Պետրոսյանսը մասնակցել է թիվ ՀՅ-ԲԴ-4/0136/02/08 քաղաքացիական գործին, ստացել է ինչպես վերաքննիչ բողոքի, այնպես էլ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և գործը վերաքննիչ դատարանում դատական նիստ նշանակելու մասին որոշումները, հանգել է այն հետևության, որ Առլեն Պետրոսյանսի կողմից չի հիմնավորվել նոր երևան եկած հանգամանքով դատական ակտի վերանայման համար հիմք հանդիսացող հանգամանքի ի հայտ գալու վերաբերյալ բողոք բերած անձի իրազեկման պահից բողոք ներկայացնելու օրենքով սահմանված 3 ամսվա ժամկետի պահպանման փաստը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան: Միջնորդությունում պետք է նշվեն ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաև ապացույցի գտնվելու վայրը, եթե այն հայտնի է, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն

և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության սկզբունքի հիման վրա: Մրցակցության սկզբունքը, որպես քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունք, կոչված է խթանել գործին մասնակցող անձանց դատավարական ակտիվությունը, ինչն առաջնահերթ դրսևորվում է ապացուցման գործընթացում: Մրցակցային դատավարության պայմաններում ապացուցման պարտականությունը կրում են գործին մասնակցող անձինք: Դատարանը պատասխանատու է ապացուցման գործընթացի կազմակերպման համար, կարող է իրականացնել մրցակցությանն օժանդակող, այն երաշխավորող որոշակի գործառույթներ, սակայն իր նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու իրավունք չունի:

Դատարանը սեփական նախաձեռնությամբ ապացույց կարող է ձեռք բերել բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետով և 60-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում, այլ դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով միայն կարող է օժանդակել գործին մասնակցող անձանց՝ համապատասխան ապացույցը ձեռք բերելու հարցում:

Հետևաբար, վերոնշյալ կանոնների խախտմամբ ձեռք բերված ապացույցները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ են, իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմնավորման հիմքում:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրվել են այնպիսի ապացույցներ, որոնք Վերաքննիչ դատարանի կողմից թիվ ՀՅԲԴ-4/0136/02/08 քաղաքացիական գործից ձեռք են բերվել սեփական նախաձեռնությամբ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը բողոք բերած անձի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը պահպանված չլինելու փաստը հաստատված է համարել՝ բացառապես հիմնվելով իր նախաձեռնությամբ ձեռք բերված ապացույցների վրա, որոնք վերը նշված վերլուծությունների և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի իրավանորմի հիմքով իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոնշյալ իրավանորմից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է և վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը որոշում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և

չանդրադատնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ *(տե՛ս, Համայակ Ոսկանյանն ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի թիվ ԵԷԴ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ բոլոր այն դեպքերում, երբ Վերաքննիչ դատարանը քննության է առնում նաև բողոք բերած անձի կողմից բողոքարկման իրավունքի իրացման ժամկետների պահպանվածության հարցը, Վերաքննիչ դատարանը պարտավոր է նաև գնահատել բողոք բերած անձի կողմից ներկայացված ապացույցները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը պարտավոր էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը պահպանված լինելու փաստի վերաբերյալ եզրահանգումներ անել՝ հետազոտելով և գնահատելով բողոք բերած անձի փաստարկները և դրանք հիմնավորող ապացույցները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է ի հիմնավորումն բողոք բերելու համար սահմանված ժամկետը պահպանված լինելու փաստի ներկայացված ապացույցը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0209/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0209/02/13

Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան

Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աշտարակի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մանյա Մանուկյանի ընդդեմ Աշտարակի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մանյա Մանուկյանը պահանջել է 05.06.1996 թվականին տրված թիվ Ա 050308 հողի սեփականության իրավունքի պետական ակտի հիման վրա ճանաչել իր սեփականության իրավունքն Աշտարակ համայնքի Հողագործների փողոցի թիվ 742-002 ծածկագրի 600քմ մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 15.05.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.09.2013 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.05.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 07.09.2006 թվականի թիվ 1398-Ն որոշումը, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 7-րդ կետը, 22-րդ և 60-րդ հոդվածները, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածները, 130-րդ հոդվածի 3-րդ կետը, 131-րդ, 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 1976 թվականին Արայի սովխոզի դիրեկտորը չէր կարող տնամերձ հողամասի հատկացում անել վիճելի տարածքում, քանի որ այդ տարածքը դեռևս 1964 թվականից հանդիսացել է Աշտարակ քաղաքի զբոսայգու տարածք (հիմք՝ Ազգային արխիվի Արագածոտնի մարզային մասնաճյուղի կողմից տրված տեղեկանքը), այսինքն՝ վիճելի տարածքը դեռևս 1964 թվականից համարվել է զբոսայգի, ընդգրկված է եղել քաղաքի կանաչ գոտու մեջ և ոչ մի կերպ չէր կարող տրվել որպես սեփականություն, ուստի ներկայացված հողի սեփականության ակտը որպես ապացույց հիմք ընդունելն անիմաստ է:

Մանյա Մանուկյանը ներկայացրել է կատարված վճարումների մի շարք անդորրագրեր, որոնք կապ չունեն վիճելի հողատարածքի հետ. մի մասը վերաբերում են գյուղատնտեսական նշանակության հողամասերի հողի հարկին, մի մասն էլ՝ իր բնակարանի գույքահարկին:

Մանյա Մանուկյանը ներկայացրել է նաև քաղվածք Աշտարակ քաղաքի տնտեսության թիվ 5 գրքից այն մասին, որ 228 գրանցման համարի տակ առկա է Ասատուր Մանուկյանի անվամբ 1.200քմ մակերեսով տնամերձ հողամաս, որը, ինչպես և պետական ակտը, ապացույց չի կարող դիտվել, քանի որ դրանց ծագումն անհայտ է և ենթակա է համապատասխան մարմինների կողմից քննության:

Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ վարչական դատարանի 20.07.2011 թվականի թիվ ՎԴ/0993/05/10 վճիռը, որով ապացուցված է համարվել այն փաստը, որ Ասատուր Մանուկյանը 1984 թվականին փոխհատուցում է ստացել ոչ թե 0,06հա մակերեսով հողամասի, այլ 0,12հա մակերեսով հողամասի համար:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.03.2013 թվականի թիվ ԱԲԱԴ/0037/02/13 վճիռը, որով մերժել է Մանյա Մանուկյանի պահանջը՝ հաստատված համարելով այն հանգամանքը, որ վիճելի հողակտորը համարվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում գտնվող հողամաս և սեփականության իրավունքով փոխանցվել չի կարող:

Վերաքննիչ դատարանը հիմնվել է 19.09.2008 թվականին Աշտարակ քաղաքի տնտեսության գրքից տրված քաղվածքի վրա, որում, սակայն, նշված չէ, թե տվյալ 1.200քմ մակերեսով հողամասը որտեղ է գտնվում և արդյոք վերաբերում է վիճելի տարածքին, թե ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.09.2013 թվականի որոշումը և հայցը մերժել:

3. Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- 1) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Աբովյանի տարածքային

բաժնի կողմից 13.05.2010 թվականին տրված ամուսնության ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Մանյա Մանուկյանի և Ասատուր Մանուկյանի ամուսնությունը գրանցվել է 1962 թվականին (հատոր 1-ին, գ.թ 26):

2) Հայաստանի Ազգային արխիվի Արագածոտնի մարզային մասնաճյուղի 23.09.2008 թվականի թիվ 231 արխիվային տեղեկանքի համաձայն՝ նախկին ՀՍՍՀ Աշտարակի շրջանի Արայի սովխոզի դիրեկտորի 05.05.1976 թվականի թիվ 180 հրամանով հաստատվել են հողային հանձնաժողովի կողմից ներկայացված տնամերձ հողամասերի չափումների և ստուգումների վերաբերյալ տվյալները: Ասատուր Արսենի Մանուկյանին Աշտարակ քաղաքում հանձնվել է 0,12հա մակերեսով տնամերձ հողամաս՝ հերթական համարը 228 (հատոր 1-ին, գ.թ 16):

3) Աշտարակի քաղսովետի գործկոմի նախագահի կողմից 06.09.1984 թվականին հաստատված գնահատման ակտի համաձայն՝ 37-րդ սովխոզի ճանապարհի բացման նպատակով տեղում չափման և գնահատման են ենթարկել հայցվորի ամուսնուն պատկանող իրացման ենթակա շինությունը, կառույցը, տնկարքը և պարզել են, որ փոխհատուցման գումարը կազմել է 1.892 ռուբլի 83 կոպեկ, ընդ որում փոխհատուցվել են ծառեր՝ 131 հատ, խաղողի վազեր՝ 87 հատ, թփեր և այլ դեկոր՝ 113 հատ, բետոնե հենասյառ՝ 9,0լսմ, ցանկապատերի մետաղյա ցանց՝ 136քմ մակերեսով (հատոր 1-ին, գ.թ 49):

4) Հողի սեփականության իրավունքի 05.06.1996 թվականին տրված թիվ Ա 050308 պետական ակտի համաձայն՝ Ասատուր Մանուկյանի անվամբ սեփականաշնորհվել է Աշտարակի շրջանի Արայի պետական ձեռնարկության հողերից 0,64հա մակերեսով հողամաս, որից 0,06հա մակերեսով տնամերձ հողամաս (հատոր 1-ին, գ.թ 11-12):

5) Աշտարակի քաղաքապետի 30.07.1999 թվականի թիվ 89 որոշման համաձայն՝ Ասատուր Մանուկյանի ստացած 600քմ հողամասը՝ նախկին Արայի տնտեսության կողմից 9-րդ թաղամասի թիվ 56 հողակտորը, փոխանակվել է Ալիխանյան եղբայրների փողոցի թիվ 69 հողակտորի հետ՝ նախկինը թողնելով Քաղաքապետարանի տրամադրության տակ (հատոր 1-ին, գ.թ 43):

6) Աշտարակի քաղաքապետի 03.08.1999 թվականի թիվ 92 որոշման համաձայն՝ քաղաքապետի տեղակալի 30.07.1999 թվականի թիվ 89 որոշման 1-ին կետում փոխանակման կարգով Ասատուր Մանուկյանին Ալիխանյան եղբայրների փողոցից հատկացվող հողակտորի թիվ 69-ը կարդալ 65 (հատոր 1-ին, գ.թ 48):

7) Թիվ ԱԱ N 168571 մահվան վկայականի համաձայն՝ Ասատուր Մանուկյանը մահացել է 14.12.2009 թվականին (հատոր 1-ին, գ.թ 9):

8) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արագածոտնի մարզային ստորաբաժանման 29.04.2013 թվականի թիվ 204 գրության համաձայն՝ ըստ Աշտարակ քաղաքի տնտեսության հմ 6 գրքի (գրանցում հմ 225) Ասատուր և Մանյա Մանուկյաններին հատկացվել է 0,06հա մակերեսով հողամաս, որն Ասատուր Մանուկյանի մահից հետո, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայականի հիման վրա, բաժնային սեփականության իրավունքով գրանցվել է Մանյա, Սևակ Մանուկյանների և Էլմիրա Մաղաքյանի անվամբ (հատոր 1-ին, գ.թ 44):

9) Ըստ հայցի Մանյա Մանուկյանի ընդդեմ Քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աշտարակի տարածքային ստորաբաժանման՝ Աշտարակ համայնքի 1.200քմ մակերեսով տնամերձ հողամասն Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական հողերի քարտեզում հաստատելու գործողություններն ապօրինի ճանաչելու և նախկին դրությունը վերականգնելու, այն է՝ վիճելի հողամասը համայնքի հողերից սահմանազատելուն, դրա վերաբերյալ նախկին գրառումները վերականգնելուն և ՀՀ

կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աշտարակի տարածքային ստորաբաժանմանը համապատասխան պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/0993/05/10 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած 20.07.2011 թվականի վճռով հայցը մերժվել է: ՀՀ վարչական դատարանը նշված վճռով հաստատված է համարել հետևյալ հանգամանքները՝ 1. Նախկին ՀՍՍՀ Աշտարակի շրջանի Արայի սովխոզի դիրեկտորի 05.05.1976 թվականի թիվ 180 հրամանով հաստատվել են հողային հանձնաժողովի կողմից ներկայացված տնամերձ հողամասերի չափումների և ստուգումների վերաբերյալ տվյալները, և Մանյա Մանուկյանի ամուսնուն՝ Ասատուր Արսենի Մանուկյանին, Աշտարակ քաղաքում հանձնվել է 0,12 հա տնամերձ հողամաս: 2. Մանյա Մանուկյանի ընտանիքին ՀՍՍՀ Աշտարակի շրջանի Արայի սովխոզի դիրեկտորի 05.05.1976 թվականի թիվ 180 հրամանով հատկացված 1.200քմ մակերեսով հողամասը 1984 թվականին 37-րդ սովխոզի ճանապարհի բացման պատճառով ետ է վերցվել, և քաղաքացու ընտանիքին տրվել է փոխհատուցում: 3. 1991 թվականին Աշտարակ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովը Մանյա Մանուկյանին և իր հանգուցյալ ամուսնուն՝ Ասատուր Մանուկյանին, հատկացրել է մեկ բաժին՝ 0,064հա մակերեսով հողատարածք, և 05.06.1996 թվականին տրվել է հողի սեփականության իրավունքի պետական ակտ: 4. Ակտում նշված 0,06հա մակերեսով տնամերձ հողամասն Աշտարակի քաղաքապետի տեղակալի 30.07.1999 թվականի թիվ 89 որոշմամբ փոխանակվել է այլ տեղ, ըստ Աշտարակ համայնքի կադաստրային քարտեզագրման՝ 251-րդ թաղամաս (հատոր 1-ին, գ.թ. 50-62):

10) Ըստ հայցի Մանյա Մանուկյանի ընդդեմ Քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արագածոտնի մարզային ստորաբաժանման՝ ձեռքբերման վաղեմության ուժով Աշտարակ համայնքի 1.200քմ մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԱԴ/0037/02/13 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած 27.03.2013 թվականի վճռով հայցը մերժվել է: Դատարանը նշված վճռով հաստատված է համարել այն հանգամանքը, որ վիճելի հողամասը ՀՀ կառավարության 07.09.2006 թվականի թիվ 1398-Ե որոշմամբ հանձնվել է Աշտարակ համայնքին և հաշվառվել որպես գրոսայգու տարածք (հատոր 2րդ, գ.թ 15-22):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ նախկինում քննված վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև քննվող քաղաքացիական գործի համար նախադատելի նշանակություն ունեն, թե ոչ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով

վերոնշյալ հոդվածի վերլուծությանը, նշել է, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետ): Հետևաբար, նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս (*յրե՛ս*, «Սաթնէ» ՄՊԸ-ն ընդդեմ Աշուր և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ համաձայն ընդհանուր կանոնի՝ նախադատելիությունն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմաններ: Նախադատելիության օբյեկտիվ սահմանները կազմում են այն փաստական հանգամանքները, որոնք հաստատվել են ավելի վաղ քննված գործով օրինական ուժի մեջ մտած վճռով: Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի հետևյալ երկու դատավարական կանոնների պահպանումը՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը):

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդված) (*յրե՛ս*, «Սաթնէ» ՄՊԸ-ն ընդդեմ Աշուր և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

Նախադատելիության սուբյեկտիվ սահմաններն այն անձինք են, որոնց համար դատական ակտով հաստատված հանգամանքներն ունեն նախադատելի նշանակություն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իրավակարգավորումից

հետևում է, որ փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ այն անձանց համար, որոնք մասնակցել են գործի քննությանը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման:

Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի նախադատելիության վերոշարադրյալ կանոնները և դրանց վերաբերյալ մեկնաբանությունները քաղաքացիական դատավարությունում հավասարապես կիրառելի են վարչական գործերով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքների սկստմամբ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ընդունվել է 17.06.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականից) ընդունման պահին ընդգրկված են եղել «Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 26-րդ գլուխը, ինչպես նաև վարչական այլ իրավահարաբերությունների վերաբերյալ վեճերի վարույթը կարգավորող 24-րդ և 25-րդ գլուխները, որոնք իրենց ուժը կորցրել են 20.12.2007 թվականի թիվ ՀՕ-277-Ն, 26.12.2007 թվականի թիվ ՀՕ-269-Ն ՀՀ օրենքներով՝ կապված ՀՀ վարչական դատարանի ստեղծման և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) ընդունման հետ: Հետևաբար 01.01.1999 թվականից մինչև 01.01.2008 թվականը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով է կարգավորվել վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ վեճերով գործերի քննության կարգը, այդ թվում՝ վճիռների նախադատելիության հարցը: 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ կետը և 05.12.2013 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում են, որ նախկինում քննված քաղաքացիական և վարչական գործերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ նույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:

Վերոհիշյալ իրավակարգավորումների համալիր վերլուծությունից հետևում է, որ վճիռների նախադատելիության կանոնները միևնույն են ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունում, հետևաբար քաղաքացիական գործեր քննելիս վարչական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերով հաստատված հանգամանքները, ինչպես այլ քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները, ևս ունեն նախադատելի նշանակություն: Հակառակ դեպքում կստացվի, որ տարբեր դատարաններ միևնույն փաստական հանգամանքներին կարող են տալ տարբեր իրավական գնահատականներ՝ հանիրավի ընդլայնելով դատական հայեցողության սահմանները: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նորմի նպատակն է պարզեցնել ապացուցման գործընթացը, այն է՝ միևնույն փաստը մեկ անգամ

մեկ այլ դատարանի կողմից հաստատված լինելու դեպքում կողմերին և դատարանին ազատել այդ փաստերը հաստատելու գործընթացը կրկին կատարելու բեռից, ընդ որում, նախադատելիության կիրառման համար օրենսդիրը կարևորել է այն հանգամանքը, որ նոր քննվող գործը վերաբերի միևնույն անձանց միջև վեճին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ գործով հաստատվել է այն փաստը, որ վիճելի հողամասը որպես սեփականություն հատկացվել է Մանյա Մանուկյանի ընտանիքին, և նրա պահանջը՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին, հիմնավոր է: Բացի այդ, Մանյա Մանուկյանին 1.200քմ մակերեսով հողամաս հատկացված լինելու հանգամանքն ընդունվել է Քաղաքապետարանի կողմից, որի մասին վկայում է վերջինիս կողմից Աշտարակ քաղաքի տնտեսության գրքից 19.09.2008 թվականին տրված քաղվածքն այն մասին, որ Ասատուր Մանուկյանի անվամբ գրանցվել է 1.200քմ մակերեսով տնամերձ հողամաս: Այս առումով Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ասատուր Մանուկյանին 1984 թվականի դրությամբ նոր տնամերձ հողամաս չի հատկացվել, ինչն էլ հիմնավորում է այն փաստը, որ ճանապարհի կառուցման նպատակով վերջինիցս վերցվել է միայն դրա մի մասը, իսկ գործում առկա ակտի համաձայն՝ Ասատուր Մանուկյանին փոխհատուցվել է միայն ծառերի, վազերի, թփերի, բետոնե հենապատի և մետաղյա ցանցի արժեքը, հողատարածքում առկա որևէ կառույցի համար փոխհատուցում չի տրվել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ չի վիճարկվել այն հանգամանքը, որ տասնյակ տարիներ շարունակ վիճելի հողամասը տիրապետել է և տիրապետում է Մանյա Մանուկյանի ընտանիքը և երբևէ Քաղաքապետարանի կողմից այդ տիրապետումը դադարեցնելու փորձ չի արվել, ինչպես նաև գործում առկա հողամասի սեփականության թիվ Ա 050308 պետական ակտը չի վիճարկվել, որպիսի պայմաններում դրա կեղծ լինելու մասին Քաղաքապետարանի պատճառաբանությունները գուրկ են հիմքերից: Ինչ վերաբերում է բողոքի այն պատճառաբանությանը, որ Դատարանը հաշվի չի առել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/0993/05/10 վարչական գործով 20.07.2011 թվականի վճռով հաստատված հանգամանքները, ապա Վերաքննիչ դատարանը գտել է, որ բողոքն այդ մասով անհիմն է, քանի որ վկայակոչած վարչական գործով կայացված վճռով հաստատված հանգամանքները սույն գործով նախադատելի չեն:

Վերը նշված վերլուծությունների յույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախկինում քննված ըստ հայցի Մանյա Մանուկյանի ընդդեմ Քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աշտարակի տարածքային ստորաբաժանման՝ Աշտարակ համայնքի 1.200քմ մակերեսով տնամերձ հողամասն Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական հողերի քարտեզում հաստատելու գործողություններն ապօրինի ճանաչելու և նախկին դրությունը վերականգնելու, այն է՝ վիճելի հողամասը համայնքի հողերից սահմանազատելուն, դրա վերաբերյալ նախկին գրառումները վերականգնելուն և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աշտարակի տարածքային ստորաբաժանմանը համապատասխան պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/0993/05/10 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած 20.07.2011 թվականի վճռով արդեն իսկ հաստատվել է այն հանգամանքը, որ ՀՍՍՀ Աշտարակի շրջանի Արայի սովխոզի դիրեկտորի 05.05.1976 թվականի թիվ 180 հրամանով Մանյա Մանուկյանի ամուսնուն՝ Ասատուր Մանուկյանին, Աշտարակ քաղաքում հանձնվել է 0,12հա մակերեսով տնամերձ հողամաս, որը 1984 թվականին 37-րդ սովխոզի ճանապարհի

բացման պատճառով հետ է վերցվել, որի դիմաց տրվել է փոխհատուցում: Բացի այդ, նախկինում քննված ըստ հայցի Մանյա Մանուկյանի ընդդեմ Քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արագածոտնի մարզային ստորաբաժանման՝ ձեռքբերման վաղեմության ուժով Աշտարակ համայնքի 1.200քմ մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ ԱՐԱԴ/0037/02/13 քաղաքացիական գործով 29.04.2013 թվականին օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատվել է այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006 թվականի թիվ 1398 որոշման համաձայն՝ պետական սեփականություն հանդիսացող հողերից Աշտարակի քաղաքային համայնքին անհատույց փոխանցվող հողերի ցուցակի վիճելի հողամասը համարվել է զբոսայգու տարածք, այսինքն՝ ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված սահմանափակումներին համապատասխանող հողամաս, որը ենթակա չէ քաղաքացիներին սեփականության իրավունքով փոխանցման:

Վերը շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախկինում քննված քաղաքացիական և վարչական գործերով օրինական ուժի մեջ մտած դատարանի՝ նշված վճիռներով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով սույն քաղաքացիական գործի համար ունեն նախադատելի նշանակություն, մինչդեռ ստորադաս դատարանները, խախտելով վերոնշյալ իրավանորմի պահանջը, սխալ եզրահանգման են եկել ապացուցման առարկան կազմող փաստերի շրջանակի հարցում, որպիսի դատավարական նորմի խախտումը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/1342/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1342/02/11
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Կուրդիյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.10.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Արմեն
Կուրդիյանի հայցի ընդդեմ Սեդա Խուրշուդյանի՝ գումար բռնագանձելու պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Կուրդիյանը պահանջել է Սեդա Խուրշուդյանից հոգուտ
իրեն բռնագանձել փոխառությամբ տրամադրված 4.800.000 ՀՀ դրամ:

Արմեն Կուրդիյանը, ավելացնելով հայցային պահանջների չափը, պահանջել
է Սեդա Խուրշուդյանից բռնագանձել «նաև 417.000 (չորս հարյուր տասնյոթ հազար)
ՀՀ դրամ թիվ 065081, թիվ 079433, թիվ 068668, թիվ 000044, թիվ 029807, թիվ 000177
անդորրագրերի համաձայն որպես փաստաբանին խելամիտ վարձատրության և գործի
քննության հետ կապված այլ գործողությունների, ինչպես նաև տրանսպորտային և
փոստային առաքումներին ուղղված ծախսերի համար վճարման ենթակա դատական
ծախս կազմող գումարի՝ (վնասի) հետևանք և 4.398.500 ՀՀ դրամի նկատմամբ կիրառել
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսները մինչև պար-
տավորության լրիվ մարումը», ընդամենը՝ 5.660.365 ՀՀ դրամ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դա-
տարանի 21.06.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է

Սեդա Խուրշուդյանից հօգուտ Արմեն Կուրդիյանի բռնագանձել 4.398.500 ՀՀ դրամ որպես փոխառության գումար, ինչպես նաև Սեդա Խուրշուդյանից հօգուտ Արմեն Կուրդիյանի բռնագանձել չկատարված պարտավորությունների գումարի՝ 4.398.500 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ հաշվարկը սկսելով 10.12.2011թ.-ից մինչև պարտավորությունների փաստացի կատարումը՝ համապատասխան ժամանակահատվածի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.11.2012 թվականի որոշմամբ Սեդա Խուրշուդյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 21.06.2012 թվականի վճիռը և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Կուբանյան) (այսուհետ՝ Դատարան) 21.06.2013 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.10.2013 թվականի որոշմամբ Արմեն Կուրդիյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Կուրդիյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ, 880-րդ հոդվածները, ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ, 132-րդ, 220-րդ հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 86-րդ, 206-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել Արմեն Կուրդիյանի, Սեդա և Սուսաննա Խուրշուդյանների կողմից նախաքննության ընթացքում քրեական օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության վերաբերյալ նախագգույացված լինելու պարագայում տրված ցուցմունքներին, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չգնահատելով գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 30.06.2011 թվականի «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 11110711 որոշումը, հետաքննության ընթացքում տրված բացատրությունները համարել է արժանահավատ և առավել ապացուցողական նշանակություն ունեցող, քան նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները:

Մինչդեռ Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 30.06.2011 թվականի «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 11110711 որոշումը չի բողոքարկվել և վերադատության կարգով չի վերացվել, հետևաբար դրանում արձանագրված ցուցմունքները գերակա ուժ ունեն հետաքննության ընթացքում տրված բացատրությունների հանդեպ, որպիսի պարագայում ցուցմունքները և դրանցում պարունակվող տեղեկությունները սույն գործով թույլատրելի և վերաբերելի ապացույցներ են:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Արմեն Կուրդիյանսի և Սեդա Խուրշուդյանի մոտ առկա չէ որևէ փաստաթուղթ փոխառության գումարը վերադարձնելու և փոխառության պարտավորությունները դադարած լինելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 31.10.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «բավարարել հայցապահանջն ըստ էության»:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Նոտարական կարգով վավերացված 28.08.2010 թվականին Արմեն Կուրդիյանսի և Սեդա Խուրշուդյանի միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագրով Սեդա Խուրշուդյանին փոխառությամբ տրամադրվել է 4.800.000 ՀՀ դրամ ցպահանջ ժամկետով, իսկ վերջինս, ի ապահովումն ստանձնած պարտավորության կատարման, գրավադրել է Երևանի Շարուրի 8-րդ շենքի թիվ 17 հասցեում գտնվող 30,8քմ մակերեսով բնակարանը, որի նկատմամբ գրավի իրավունքը 24.09.2010 թվականին ստացել է պետական գրանցում (հատոր 1-ին, գ.թ. 9, 13):

2) ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի հետաքննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա. Դազարյանի կողմից 03.02.2011 թվականին «Բացատրություն վերցնելու մասին» արձանագրությամբ Արմեն Կուրդիյանսը հայտնել է, որ «երբ ես դիմեցի ոստիկանություն, մինչև ինձ կկանչեն՝ իմ դիմումի հետ կապված, այդ ընթացքում Սեդան հանդիպել է ինձ, մենք միասին ընդհանուր հայտարարի ենք եկել, նա վերադարձրել է իմ գումարը, և մեր միջև պարտք ու պահանջի որևէ խնդիր այլևս չկա, և դրա հետ կապված որևէ բողոք չունեմ և հրաժարվում եմ հաղորդում տալուց» (հատոր 1-ին, գ.թ. 61-62):

3) ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի հետաքննիչ ոստիկանության ավագ լեյտենանտ Ա. Դազարյանի կողմից 03.03.2011 թվականին «Լրացուցիչ բացատրություն վերցնելու մասին» արձանագրությամբ Սեդա Խուրշուդյանը հայտնել է, որ «ես հավատացած եմ, որ Սուսանը մարել է ողջ գումարը, սակայն Արմենը հերքում է այդ փաստը» (հատոր 1-ին, գ.թ. 65-69):

4) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 21.06.2011 թվականի «Վկայի լրացուցիչ հարցաքննության» արձանագրությամբ Արմեն Կուրդիյանսը որպես վկա նախազգուշացվել է սուտ ցուցմունք տալու, ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին, և հայտնել է, որ «նշված տասնմեկ հազար դոլարը Սուսանային եմ հանձնել շահույթ ստանալու նպատակով, այդ գումարի դիմաց ամսական հինգ տոկոս տոկոսադրույքով և 2 անգամ՝ օգոստոս ամսին ստացել եմ սեպտեմբեր ամսվա 550 դոլար տոկոսը, իսկ հոկտեմբեր ամսվա վերջում ստացել եմ հոկտեմբեր ամսվա տոկոսը: Բացի այդ երկու գումարից, որը կազմում է հազար հարյուր դոլար, ուրիշ որևէ եկամուտ և մայր գումարս չեմ ստացել՝ ինչպես գումարային, այնպես էլ այլ տեսքով: Սուսանն ստում է, նա ինձ որևէ ոսկեղեն չի տվել, և իր կողմից նշված օրը ես 3-րդ մասի տարածք չեմ եկել և իրեն ու իր մորը չեմ հանդիպել: Ես մեծ ծավալի գումար եմ հանձնել ու այն կստանամ դատական կարգով» (հատոր 1-ին, գ.թ. 70):

5) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 30.06.2011 թվականի «Տուժողի լրացուցիչ հարցաքննության» ար-

ձանագրությամբ Մուսանսա Խուրշուդյանը որպես տուժող նախագգուշացվել է սուտ ցուցմունք տալու, ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին, և հայտնել է, որ «ինչ վերաբերում է գումարային վիճելի հարցերին, ապա դրանք կլուծեն քաղաքացիաիրավական հարցերով դատարանի միջոցով» (հատոր 1-ին, գ.թ. 158):

6) ՀՀ ռստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչ Կ. Շառոյանի 30.06.2011 թվականի «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 11110711 որոշմամբ Արմեն Կուրդիյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել, և քրեական գործի վարույթը կարճվել է՝ Ս. Խուրշուդյանի հետ հաշտվելու հիմքով (հատոր 1-ին, գ.թ. 117-118):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետաքննության ընթացքում տրված բացատրության և նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի՝ քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցների թույլատրելիության հարցին և դրանց արժանահավատության գնահատման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և կոլեկտիվ, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

Վճարել դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների

առկայությունը կամ բացակայությունը (յո՛ւն, Վարթկես Հագոփյանն ընդդեմ Անահիթ Հակոբջանյանի և մյուսների թիվ ԱՐԱԳ/0093/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հետաքննության և նախաքննության ընթացքում տրված բացատրությունները և ցուցմունքները, քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, թույլատրելի են: Նշված ապացույցները, սակայն, Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ արժանահավատության գնահատման առումով ունեն որոշակի առանձնահատկություններ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նախ նշել, որ ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացուցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով: Մասնավորապես՝ եթե վկայի ցուցմունքը գնահատելիս դատարանը նախ և առաջ պետք է հաշվի առնի վկայի անձնական հատկանիշները (ունակ է արդյոք նա ընկալել և վերարտադրել համապատասխան փաստը, ինչ փոխհարաբերությունների մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց հետ և այլն), ապա գրավոր ապացույցների պարագայում դատարանը նախ և առաջ պետք է պարզի այդ ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին և ներկայացվող պահանջներին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը գրավոր ապացույցների տեսակների բավականին լայն շրջանակ է նախատեսել, ընդ որում՝ ոչ սպառիչ, գտնում է, որ վերջիններիս գնահատման, այդ թվում՝ նաև արժանահավատության առումով, չափորոշիչները ևս բազմազան են: Այսպես, օրինակ, եթե որպես գրավոր ապացույց ներկայացվել է պաշտոնական փաստաթուղթ, դատարանը նախ պետք է պարզի՝ արդյոք տվյալ փաստաթուղթը տրվել է իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, և արդյոք պահպանված են նմանատիպ փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները: Որոշակի առանձնահատկություններ ունեն նաև հետաքննության և նախաքննության ընթացքում տրված բացատրությունները և ցուցմունքները, որոնց արժանահատավության ստուգումն իրականացնելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև դրանց ձեռքբերման՝ քրեադատավարական իրավանորմերով սահմանված ընթացակարգը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ *քացաբրությունը* բանավոր կամ գրավոր փաստարկումներն են, որոնք բերում են դատավարության մասնակիցները և դիմողները՝ հիմնավորելու համար իրենց կամ ներկայացվող անձի պահանջները, ինչպես նաև այլ անձանց բանավոր կամ գրավոր հաղորդումները, որոնք տրվում են մինչև քրեական գործ հարուցելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, նույն օրենսգիրքը և մյուս օրենքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ տուժողը, նույն օրենսգրքով սահմանված կարգով, ի թիվս այլ իրավունքների, իրավունք ունի նաև տալ ցուցմունքներ, տալ բացատրություններ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝

վկան, օրենքով նախատեսված ի թիվս այլ իրավունքների և պարտականությունների, պարտավոր է նաև ցուցմունքներ տալու, քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, տալ ճշմարտացի ցուցմունքներ՝ հայտնել գործով իրեն ամբողջ հայտնի դարձածը և պատասխանել առաջադրված հարցերին, ստորագրությամբ հաստատել քննչական կամ այլ դատավարական գործողության, արձանագրության մեջ իր տված ցուցմունքների գրառումների ճշտությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են՝ կասկածյալի ցուցմունքները, մեղադրյալի ցուցմունքները, տուժողի ցուցմունքները, վկայի ցուցմունքները, տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթերը: Քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել նույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով նախաքննություն կատարում են հատուկ քննչական ծառայության, ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հարցաքննությունից առաջ քննիչը հավաստիանում է վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ գործով է նա կանչվել և նախագգուշացնում է գործով նրան հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Վկային հաղորդվում է, որ նա պարտավոր չէ տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ: Դրանից հետո քննիչը պարզում է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցաքննությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի համաձայն՝ տուժողի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար՝ նույն օրենսգրքով սահմանված կանոններով:

Վկայակոչված իրավադրոյթների վերլուծությունից հետևում է, որ բացատրությունը և ցուցմունքը քրեադատավարական տարբեր հասկացություններ են: Մասնավորապես՝ ցուցմունքը քրեադատավարական վարույթում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի հիմքով ապացույց է, իսկ բացատրությունը՝ ոչ: Վերը նշվածով պայմանավորված՝ ցուցմունքի ձեռքբերման համար օրենսդիրն ամրագրել է այնպիսի ընթացակարգ, որը գործուն երաշխիքներ է բովանդակում վերջինիս արժանահավատության ապահովման առումով: Այսպես, թե՛ վկան և թե՛ տուժողը նախքան հարցաքննությունը տեղեկացվում են, թե՛ որ դեպքի (փաստի) առթիվ է հարուցված քրեական գործը և պարզաբանման ենթակա որ հանգամանքների շուրջ են

հարցաքննվում, ինչպես նաև նախագգուշացվում են տվյալ գործով իրենց հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության և սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Քրեական պատասխանատվության վերաբերյալ նախագգուշացման նպատակը դատավարության մասնակիցներից գործի հանգամանքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ ստանալն է: Մասնավորապես՝ ցուցմունք տալ պատրաստվող դատավարության մասնակիցը, նախագգուշացվելով սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ըստ էության պետք է գիտակցի ճիշտ ցուցմունք տալու կարևորությունը և այն չպահպանելու իրավական հետևանքները:

Մինչդեռ բացատրության պարագայում, պայմանավորված քրեադատավարական վարույթում վերջինիս առանձնահատկություններով (տրվում է հետաքննության փուլում, դատավարության մասնակիցների և դիմողների՝ պահանջի հիմնավորմանն ուղղված բանավոր կամ գրավոր փաստարկումներն են), քրեական պատասխանատվության վերաբերյալ նախագգուշացման մասով վերը նշված ընթացակարգը կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բացատրությունը և ցուցմունքը քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ գնահատելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել դրանց ձեռքբերման՝ քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգը, մասնավորապես՝ այն, որ ցուցմունքի պարագայում դրա ձեռքբերման ընթացակարգն առավել հիմնավոր երաշխիքներ է բովանդակում այդ ապացույցի արժանահավատությունն ապահովելու առումով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածը, 877-րդ հոդվածի 1-ին կետը, 880-րդ հոդվածը, արձանագրել է, որ կողմերի միջև 28.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագրի համաձայն՝ պատասխանողը հայցվորից ստացել է 4.800.000 ՀՀ դրամ, որը պարտավորվել է վերադարձնել՝ հայցվորի կողմից պահանջ ներկայացնելու օրվանից երեսօրյա ժամկետում՝ սկսած 28.08.2010 թվականից: Որպես փոխառության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ գրավադրվել է պատասխանողի՝ Երևանի Շարուրի փողոցի 8-րդ շենքի թիվ 17 բնակարանը: Հայցվորը 03.02.2011 թվականին բացատրություն է տվել ոստիկանությունում, որում նշել է, որ վերը նշված փոխառության գումարն ամբողջությամբ ստացել է և դրա հետ կապված որևէ պահանջ չունի: Պատասխանողը խնդրել է դատարանին նշված գրավոր փաստաթուղթն ընդունել որպես փոխառության գումարը վերադարձնելու մասին հայցվորի կողմից տրված փաստաթուղթ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ Սեդա Խուրշուդյանն ամբողջությամբ վերադարձրել է Արմեն Կուրդիկյանից փոխառությամբ վերցված վերը նշված գումարը, ինչն ապացուցվում է Արմեն Կուրդիկյանի կողմից կանոնի նստիկանությունում տրված բացատրությամբ այն մասին, որ փոխառության գումարն ամբողջությամբ ստացել է և այլևս որևէ պահանջ դրա վերաբերյալ չունի, հիմնավոր են:

Վերը շարադրված վերլուծությունների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի հետաքննիչ ոստիկանության ավագ լեյտենանտի կողմից 03.02.2011 թվականին «Բացատրություն վերցնելու մասին» արձանագրությամբ Արմեն Կուրդիկյանը հայտնել է, որ «երբ ես դիմեցի ոստիկանություն, մինչև ինձ կկանչեին» իմ դիմումի հետ կապված, այդ

ընթացքում Սեդան հանդիպել է ինձ, մենք միասին ընդհանուր հայտարարի ենք եկել, նա վերադարձրել է իմ գումարը, և մեր միջև պարտք ու պահանջի որևէ խնդիր այլևս չկա, և դրա հետ կապված որևէ բողոք չունեմ և հրաժարվում եմ հաղորդում տալուց»:

Գործում առկա՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 21.06.2011 թվականի «Վկայի լրացուցիչ հարցաքննության» արձանագրությամբ Արմեն Կուրդիյանը, նախագրուշացվելով որպես վկա սուտ ցուցմունք տալու, ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին, հայտնել է, որ «նշված տասնմեկ հազար դոլարը Մուսաննային եմ հանձնել շահույթ ստանալու նպատակով, այդ գումարի դիմաց ամսական հինգ տոկոս տոկոսադրույքով և 2 անգամ՝ օգոստոս ամսին ստացել եմ սեպտեմբեր ամսվա 550 դոլար տոկոսը, իսկ հոկտեմբեր ամսվա վերջում ստացել եմ հոկտեմբեր ամսվա տոկոսը: Բացի այդ երկու գումարից, որը կազմում է հազար հարյուր դոլար, ուրիշ որևէ եկամուտ և մայր գումարս չեմ ստացել՝ ինչպես գումարային, այնպես էլ այլ տեսքով: Մուսաննան ստում է, նա ինձ որևէ ոսկեղեն չի տվել, և իր կողմից նշված օրը ես 3-րդ մասի տարածք չեմ եկել և իրեն ու իր մորը չեմ հանդիպել: Ես մեծ ծավալի գումար եմ հանձնել ու այն կստանամ դատական կարգով»:

Գործում առկա մեկ այլ՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 30.06.2011 թվականի «Տուժողի լրացուցիչ հարցաքննության» արձանագրությամբ Մուսաննա Խուրշուդյանը, նախագրուշացվելով որպես տուժող սուտ ցուցմունք տալու, ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին, հայտնել է, որ «ինչ վերաբերում է գումարային վիճելի հարցերին, ապա դրանք կլուծեմ քաղաքացիաիրավական հարցերով դատարանի միջոցով»:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչ Կ. Շառոյանի 30.06.2011 թվականի «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 11110711 որոշմամբ Արմեն Կուրդիյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել և քրեական գործի վարույթը կարճվել է Ս. Խուրշուդյանի հետ հաշտվելու հիմքով: Նշված որոշմամբ արձանագրվել է, որ քրեական գործի նախաքննության ընթացքում միջնորդություն է հարուցվել Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ թյուլատրելու «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից ստանալու 26.08.2010 թվականից մինչև 15.12.2010 թվականն ընկած ժամանակահատվածում Մուսաննա Խուրշուդյանի բջջային 093-57-50-18 հեռախոսահամարի, Արմեն Կուրդիյանի բջջային 098-90-02-04 հեռախոսահամարի և Սեդա Խուրշուդյանի բջջային 093-36-26-46 հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերծանումները, զանգ կատարած բաժանողների տվյալները և տեղակայման հասցեները: Նշված միջնորդությունը բավարարվել է և ուղարկվել բջջային հեռախոսների օպերատորներին կատարման: Ստացված վերծանումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ս. Խուրշուդյանը 30.11.2010 թվականին Շենգավիթի վարչական շրջանի տարածք չի եկել և Ա. Կուրդիյանի հետ չի հանդիպել, իսկ Ա. Կուրդիյանը Ս. Խուրշուդյանի կողմից նշված ժամանակահատվածում գտնվել է Երևանի Արաբկիր վարչական շրջանի տարածքում: Հետևաբար, հերքվել է այն հանգամանքը, որ իբր Ս. Խուրշուդյանն Ա. Կուրդիյանին հանձնել է շուրջ 14.000 ԱՄՆ դոլար արժողությամբ ոսկեղեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերաքննիչ ատյանում գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու պահին գործող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*Կո՛նս, Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի և մյուսների թիվ 3-1843 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները, հիմք ընդունելով միայն Արմեն Կուրդիյանի կողմից ՀՀ ոստիկանության Շենգավիթ բաժնի հետաքննիչ Ա. Ղազարյանին 03.02.2011 թվականին տրված բացատրությունը, ոչ միայն չեն անդրադարձել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 21.06.2011 թվականի «Վկայի լրացուցիչ հարցաքննության» արձանագրությամբ Արմեն Կուրդիյանի՝ որպես վկա տված ցուցմունքին, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչի 30.06.2011 թվականի «տուժողի լրացուցիչ հարցաքննության» արձանագրությամբ Սուսաննա Խուրշուդյանի տված ցուցմունքին, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչ Կ. Շառոյանի 30.06.2011 թվականի «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 11110711 որոշմանը, այլ նաև չեն հիմնավորել, թե ինչու են նշված ապացույցները մերժվում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմեն Խուրշուդյանի՝ 21.06.2011 թվականին որպես վկա տված ցուցմունքը, Սուսաննա Խուրշուդյանի՝ 30.06.2011 թվականին տված ցուցմունքը, «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 11110711 որոշումը սույն գործով վերաբերելի և թույլատրելի ապացույցներ են և ենթակա են հետազոտման ու գնահատման գործում առկա

այլ ապացույցների համակցության մեջ:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից չի իրականացվել սույն գործում առկա ապացույցների բազմակողմանի հետազոտություն, ինչն ազդել է գործի ելքի վրա, ուստի առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործի նոր քննության ժամանակ գործում առկա՝ ՀՀ ոստիկանությունում կողմերի տված բացատրությունները և ցուցմունքները՝ որպես թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, ենթակա են հետազոտման և գնահատման քաղաքացիադատավարական կանոններով՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.10.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.02.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0111/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0111/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Մատինյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅԻԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մանե Մուրադյանի ներկայացուցիչ Սարգիս Ասլանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.05.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մանե Մուրադյանի ընդդեմ «Արտաշատի գինուկոնյակի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ Գոհար Սարգսյանի՝ Գևորգ Մուրադյանին պատկանող 66 հատ բաժնետոմսերը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ին պետական գրանցման ներկայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մանե Մուրադյանը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը Գևորգ Մուրադյանին պատկանող 66 հատ անվանական բաժնետոմսերը ներկայացնել «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ին պետական գրանցման և վերացնել իր սեփականության իրավունքի խոչընդոտները:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ե. Քոչարյան) (այսուհետ՝ Դատարան) 18.02.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.05.2014 թվականի որոշմամբ Մանե Մուրադյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և

Դատարանի 18.02.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:
Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանե Մուրադյանի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել ինչպես Ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման, այնպես էլ՝ տպագրական եղանակով պատրաստված բաժնետոմսերի տեսքով: Դատարանը, հաշվի չառնելով այս հանգամանքը, Մանե Մուրադյանի վրա է դրել այն ապացույցների ձեռքբերումը, որոնք ի սկզբանե չէին կարող լինել վերջինիս տրամադրության տակ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.05.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Մանե Մուրադյանի այն պնդումը, որ Ընկերությունը Գևորգ Մուրադյանին պատկանող թվով 66 հատ բաժնետոմսերը չի ներկայացրել դեպոզիտարիա՝ գրանցման, *անհիմն է*, քանի որ համաձայն «Արմսվիսթանկ» ՓԲԸ-ի կողմից 07.05.2013 թվականին կազմված 06.05.2013 թվականին գրանցված սեփականատերերի ցուցակի՝ Ընկերության թվով 15.648 հատ բաժնետոմսերի 100 տոկոսի գրանցված սեփականատերն է Միխայի Գեորգիի Սամոդելկինը: Հետևաբար, թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատել են գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ և եկել են ճիշտ եզրահանգման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Սովորական անվանական բաժնետոմսերի առաջին թողարկման հավաստագրի համաձայն՝ Գևորգ Մուրադյանը հանդիսանում է Ընկերության բաժնետեր, և 19.09.1995 թվականի դրությամբ ունի 66 հատ սովորական անվանական բաժնետոմս (հատոր 1-ին, գ.թ. 20):

2. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժնի կողմից 30.09.2004 թվականին տրված թիվ 001459 մահվան վկայականի համաձայն՝ Գևորգ Մուրադյանը մահացել է 29.09.2004 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 19):

3. 24.01.2006 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ հանգուցյալ Գևորգ Մուրադյանի գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են հանդիսանում կինը՝ Գոհար Սարգսյանը, և դուստրը՝ Մանե Մուրադյանը (հատոր 1-ին, գ.թ. 18):

4. «Արտաշատի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ն 31.01.2000 թվականից

հանդիսանում է Ընկերության իրավահաջորդը (հատոր 1-ին, գ.թ. 13, հատոր 2-րդ, գ.թ. 20):

5. «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի տնօրեն Վ. Ստեփանյանի 29.11.2012 թվականի թիվ ՀԿԴ-4-1470 գրության համաձայն՝ 28.11.2012 թվականի դրությամբ «Արտաշատի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում Գևորգ Մուրադյան անվամբ բաժնետեր գրանցված չէ (հատոր 1-ին, գ.թ. 17):

6. 19.07.2013 թվականի դատական նիստի ժամանակ Մանե Մուրադյանի ներկայացուցիչ Սարգիս Ասլանյանը Դատարանին միջնորդել է Ընկերությունից պահանջել Դատարան ներկայացնելու Ընկերության բաժնետերերի՝ բաժնեմասերի քանակով գրանցված մատյանները, սակայն Դատարանի որոշմամբ Մանե Մուրադյանի ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է (դատական նիստի արձանագրման համառոտագրություն, հատոր 2-րդ, գ.թ. 61-62):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ քաղաքացիական դատավարությունում ապացուցման պարտականության բաշխման և ապացույց պահանջելու ընթացակարգերի իրավակարգավորման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները:

Վերլուծելով վկայակոչված իրավադրույթները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի կողմից ապացուցման առարկան որոշելու և ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունների իրականացումն ինքնանպատակ չէ: Նշված դատավարական գործողությունները մի կողմից կոչված են ապահովել գործի ըստ էության ճիշտ լուծումը, մյուս կողմից երաշխավորել գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների իրականացումը: Մասնավորապես՝ մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքների ապահովման նկատառումով գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է հստակ պատկերացում ունենա գործի լուծման համար նշանակություն ունեցող այն հանգամանքների մասին, որոնք ապացուցելու պարտականությունը կրելու է: Հետևաբար, դատարանը, գործը դատաքննություն նախապատրաստելու փուլում որոշելով ապացուցման առարկան, պետք է ձեռնամուխ լինի ապացուցման պարտականության բաշխմանը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ընդհանուր կանոնի

համաձայն, որն ամրագրված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Ընդհանուր կանոնը, սակայն, կիրառելի է բոլոր այն դեպքերում, քանի դեռ դատավարական կամ նյութական իրավունքի նորմերով որոշակի փաստի հաստատման վերաբերյալ հատուկ կանոն սահմանված չէ: Մասնավորապես՝ առանձին դեպքերում, պայմանավորված վիճելի իրավահարաբերության փաստակազմի առանձնահատկությամբ, որոշակի փաստերի առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունն արդեն իսկ օրենքով կարող է դրված լինել դատավարության կոնկրետ մասնակցի վրա: Ման դեպքերում դատարանն ապացուցման պարտականության բաշխումը պետք է իրականացնի համապատասխան իրավակարգավորման հաշվառմամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացուցման պարտականությունը բաշխելիս դատարանները չպետք է սահմանափակվեն միայն ընդհանուր կանոնով և յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնեն վիճելի նյութաիրավական հարաբերության իրավակարգավորումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում (...) սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները: Վերը նշված իրավանորմից հետևում է, որ ապացուցման պարտականության բաշխմանը հաջորդում է ապացույցների ներկայացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում (...) կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան: Միջնորդությունում պետք է նշվեն ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաև ապացույցի գտնվելու վայրը, եթե այն հայտնի է:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վկայակոչված հոդվածների վերլուծությանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցներ հավաքելու և դատարան ներկայացնելու պարտականությունը կրում են կողմերը՝ ապացուցման բեռի բաշխմանը համամասնորեն: Դատավարական օրենքը դատարանին պարտավորեցնում է միայն կողմերի միջնորդությամբ օժանդակել ապացույցների ձեռքբերման հարցում: Ման միջնորդության ներկայացման համար նախապայման է հանդիսանում այն, որ միջնորդող կողմը պետք է հիմնավորի (ապացուցի), որ չունի հնարավորություն ինքնուրույն ձեռք բերելու ապացույցները: Միջնորդությունը պետք է պարունակի կոնկրետ տեղեկություն հայցվող ապացույցի, ապացուցման ենթակա փաստի, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև ապացույցի գտնվելու վայրի վերաբերյալ: Միջնորդությունը ոչ հստակ լինելու դեպքում դատարանը, ելնելով գործի քննության արդյունավետությունից, կարող է պահանջել միջնորդություն ներկայացրած կողմին հստակեցնել այն (*տե՛ս, Հենրիկ Երիցյանն ընդդեմ Մերուժան Դզրոյանի և մյուսների թիվ ԾՂ3/0325/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Սույն գործում առկա ապացույցի, այն է՝ սովորական անվանական բաժնետոմսերի առաջին թողարկման հավաստագրի համաձայն՝ Գևորգ Մուրադյանը հանդիսանում է Ընկերության բաժնետեր, և 19.09.1995 թվականի դրությամբ ունի 66 հատ սովորական անվանական բաժնետոմս: ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժնի կողմից 30.09.2004 թվականին տրված թիվ 001459 մահվան վկայականի համաձայն՝ Գևորգ Մուրադյանը մահացել է 29.09.2004 թվականին, իսկ 24.01.2006 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ հանգուցյալ Գևորգ Մուրադյանի գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են հանդիսանում կինը՝ Գոհար Սարգսյանը, և դուստրը՝ Մանե Մուրադյանը: «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի տնօրեն Վ. Ստեփանյանի 29.11.2012 թվականի թիվ ՀԿԴ-4-1470 գրության համաձայն՝ 28.11.2012 թվականի դրությամբ «Արտաշատի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում Գևորգ Մուրադյան անվամբ բաժնետեր գրանցված չէ: 19.07.2013 թվականի դատական նիստի ժամանակ Մանե Մուրադյանի ներկայացուցիչը Դատարանին միջնորդել է Ընկերությունից պահանջել Դատարան ներկայացնելու Ընկերության բաժնետերերի՝ բաժնետնասերի քանակով գրանցված մատյանները, սակայն Դատարանի որոշմամբ Մանե Մուրադյանի ներկայացուցիչ միջնորդությունը մերժվել է:

Դատարանը, հայրը մերժելով, պատճառաբանել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհաստատեր, որ Ընկերության սովորական անվանական բաժնետոմսերի առաջին թողարկման հավաստագրով սահմանված թվով 66 անվանական բաժնետոմսերի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ծագել է հանգուցյալ Գևորգ Մուրադյանի սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ պահանջը հիմնավորելու համար հայցվորը պարտավոր էր դատարանում համապատասխան թույլատրելի և վերաբերելի ապացույցներով հիմնավորել, որ Գևորգ Մուրադյանը 29.09.2004 թվականի դրությամբ հանդիսացել է Ընկերության 66 անվանական հասարակ բաժնետոմսերի սեփականատեր և այդ իսկ հիմքով դրանք մտել են ժառանգական զանգվածի մեջ, ինչպես նաև այն, որ Գևորգ Մուրադյանն ունեցել է բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունք, որը խախտվել է Ընկերության կողմից այդ իրավունքը «Հայաստանի կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում կամ այլ պահառուի մոտ չգրանցելու արդյունքում, մինչդեռ քաղաքացիական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նշված հանգամանքները հայցվորի կողմից չեն հիմնավորվել: Ավելին, 31.01.2000 թվականին կատարվել է Ընկերության մասնակիցների փոփոխություն և այդ փոփոխության արդյունքում Գևորգ Մուրադյանի «Արտաշատի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ի սեփականատեր մնալու հանգամանքի ապացուցման բեռը ևս կրում է հայցվորը, որն այդ իր պարտականությունը չի կատարել և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով կրում է դրա բացասական հետևանքները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված վերլուծությունների համատեքստում, անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Ընկերության վերակազմավորման պահին գործող՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 17.05.1996 թվականին, ուժը կորցրել է 06.12.2001 թվականին) 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնետոմսերի հավաստագիրը (սերտիֆիկատը)՝ անվանական արժեթուղթ է, որը վկայում է նրա սեփականատիրոջ կողմից տվյալ ընկերության որոշակի քանակի բաժնետոմսերի տնօրինման

մասին: Նույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով ընկերությունը վարում է բաժնետերերի և իր այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը, որում նշվում են բաժնետիրոջ (այդ արժեթղթերի սեփականատիրոջ) մասին հետևյալ տվյալները՝ լրիվ անվանումը (ֆիզիկական անձանց համար՝ ազգանունը և անունը), իրավաբանական անձանց համար՝ գրանցման և փոստային հասցեն և հաշվարկային հաշիվը, ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային տվյալները և փոստային հասցեն, արժեթղթերի քանակը ըստ ձևերի և տեսակները, այդ թվում՝ լրիվ վճարված, բաժնետոմսերի (այլ արժեթղթերի) ձեռք բերման ամսաթիվը և հիմքերը, բաժնետոմսերի (այլ արժեթղթերի) օտարման ամսաթիվը և հիմքերը, ռեեստրի մեջ գրանցման ամսաթիվը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընկերությունը պարտավոր է ապահովել ընկերության բաժնետերերի ռեեստրի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով վարումը և պահպանումն ընկերության պետական գրանցման պահից մեկ ամսվա ընթացքում: Ընկերության ռեեստրը վարվում և պահպանվում է ընկերության և (կամ) նրա հանձնարարությամբ այլ, Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից: Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով ընկերությունը պարտավոր է հանձնարարել ռեեստրի վարման և պահպանման գործը համապատասխան մասնագիտացված կազմակերպության: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնարարած ընկերությունը չի ազատվում այն վարելու և պահպանելու համար Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից:

ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի «Բաժնետիրական ընկերությունների կողմից բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման և պահպանման գործը կանոնակարգելու մասին» թիվ 41 որոշման (ուժի մեջ է մտել 10.04.1997 թվականին, ուժը կորցրել է 10.05.1999 թվականին) 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բաժնետիրական ընկերությունները, որոնց բաժնետերերի կամ այլ արժեթղթերի սեփականատերերի թիվը 50 և ավելի է, պարտավոր են արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման և պահպանման գործն իրակացնել մասնագիտացված կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Ազգային կենտրոնացված ռեեստր» պետական ձեռնարկության միջոցով:

ՀՀ կառավարության 08.04.1999 թվականի «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման և պահպանման գործընթացը կանոնակարգելու մասին» թիվ 211 որոշման 2-րդ մասի «ա» ենթակետի համաձայն՝ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպություններն իրենց գործունեությունն իրականացնում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հետ կնքված գործակալության պայմանագրի համապատասխան:

Վերը նշված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ ընկերության բաժնետերերի ռեեստրը տեղեկատվական բազա է, որը տվյալներ է բովանդակում բաժնետիրոջ, վերջինիս կողմից ձեռք բերված արժեթղթերի քանակի, ձևի և տեսակի, այդ արժեթղթերի ձեռք բերման ամսաթվի և հիմքերի, դրանց օտարման և այլնի վերաբերյալ: Միաժամանակ հետևում է, որ ընկերության բաժնետերերի ռեեստրը վարելու և պահպանելու պարտականությունը մինչև 10.04.1997 թվականն ամբողջությամբ դրված է եղել ընկերության վրա՝ անկախ ընկերության մասնակիցների քանակից

կամ կառուցվածքային առանձնահատկություններից: Այդուհանդերձ նշված ժամանակահատվածի օրենսդրությունը բաժնետիրական ընկերություններին օժտել է որոշակի հայեցողությամբ և հնարավորություն է տվել ռեեստրի վարումը հանձնարարել մասնագիտացված կազմակերպություններին: Ըստ էության օրենսդրական նման կանոնակարգումը պայմանավորված է եղել անցումային ժամանակահատվածով, ինչպես նաև բացառապես մասնագիտացված կազմակերպությունների կողմից ռեեստրի վարում իրականացնելու ինստիտուտի աստիճանական ներդրմամբ: Նշվածը հիմնավորվում է այն կանոնակարգմամբ, որը սկսեց գործել 10.04.1997 թվականից, մասնավորապես՝ այն ընկերությունները, որոնք ունեին 50 և ավելի բաժնետեր կամ այլ արժեթղթերի սեփականատեր, պարտավոր էին բաժնետերերի ռեեստրի վարումը և պահպանումն իրականացնել մասնագիտացված կազմակերպության միջոցով: Սակայն նույնիսկ այդ պարագայում բաժնետիրական ընկերությունները, անկախ բաժնետերերի կամ արժեթղթերի սեփականատերերի քանակից, չեն ազատվել ռեեստրը վարելու և պահպանելու համար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականությունից:

Վերոնշյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ապացուցման պարտականության բաշխումը և ապացույցը պահանջելու վերաբերյալ միջնորդության քննարկումը պետք է իրականացվեր վերը նշված իրավակարգավորման հաշվառմամբ: Մինչդեռ թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանն անտեսել են, որ Ընկերության բաժնետերերի ռեեստրի վարման և պահպանման պարտականությունը կրել է Ընկերությունը, հետևաբար ինչպես Գևորգ Մուրադյանը, այնպես էլ՝ նրա իրավահաջորդն օբյեկտիվորեն չէին կարող տիրապետել այդ տեղակատվական համակարգի մեջ մտնող որևէ տվյալի և այն ներկայացնել դատարան:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել առ այն, որ Ընկերության մասնակիցների՝ 31.01.2000 թվականին կատարված փոփոխություն արդյունքում Գևորգ Մուրադյանի՝ «Արտաշատի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ի սեփականատեր մնալու հանգամանքի ապացուցման բեռը կրում է Մանե Մուրադյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.05.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի

10.07.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՇԴ/0613/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0613/02/13

Նախագահող դատավոր՝ Ա. Խատատյան

Դատավորներ՝ Ա. Պետրոսյան

Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ՝ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Տարոն Գասպարյանի ներկայացուցիչ Արա Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքի (այսուհետ՝ Համայնք) ընդդեմ Տարոն Գասպարյանի՝ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերը լուծելու և կառուցապատման իրավունքը վաղաժամկետ դադարեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է լուծել իր և Տարոն Գասպարյանի միջև կնքված «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» 28.04.2009 թվականի թիվ 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220 և 22.08.2011 թվականի թվով երեք չթվագրված պայմանագրերը և վաղաժամկետ դադարեցնել այդ պայմանագրերով Տարոն Գասպարյանին տրամադրված կառուցապատման իրավունքը:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 29.10.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է լուծել Համայնքի և Տարոն Գասպարյանի միջև 28.04.2009 թվականին կնքված «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի

կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» թիվ 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220 պայմանագրերը և դադարեցնել այդ պայմանագրերի հիման վրա Տարոն Գասպարյանի անվամբ պետական գրանցում ստացած իրավունքները: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.02.2014 թվականի որոշմամբ Համայնքի և Տարոն Գասպարյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 29.10.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տարոն Գասպարյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համայնքը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ, 6-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 56-րդ, 61.1-րդ, 68-րդ հոդվածները, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 29-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 29-րդ, 43-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 352-րդ, 408-րդ, 432-րդ, 447-րդ, 466-468-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ, 53-րդ, 105-րդ, 132-րդ և 219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը վիճարկվող պայմանագրերի պայմանները մեկնաբանելիս չի նշել, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի որ դրույթներն է կիրառել, «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» թվով 12 պայմանագրերը լուծելու պահանջը բավարարելու հիմքում Դատարանի կողմից դրվել են օրենքների և պայմանագրերի կետերի կամայական և սխալ մեկնաբանություններ, որոնց համաձայն՝ ավտոկայանատեղիներ կազմակերպելու համար կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերում Տարոն Գասպարյանը շենքեր և շինություններ էր պարտավոր կառուցել, որը մինչ օրս չի կառուցել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Համայնքն ավտոկայանատեղիներ կազմակերպելու նպատակով է Տարոն Գասպարյանին տրամադրել համայնքի տարածքում գտնվող ճանապարհներից հատվածներ, որոնց նպատակային և գործառնական նշանակությամբ թույլատրված օգտագործումը չի կարող շենքեր-շինություններ կառուցելու պահանջի իրավունք և պարտականություն բովանդակել, և պատշաճ չգնահատելով նշված հանգամանքը՝ սխալ եզրահանգում է արել տրամադրված հողամասերը Տարոն Գասպարյանի կողմից չօգտագործվելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը փաստացի չի քննարկել և գնահատման արժանացրել իր կողմից որպես ապացուցման ենթակա փաստ մատնանշված՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան փողոցներում շենք-շինություն կառուցելու հնարավորությունը:

Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 29-րդ, 43-րդ հոդվածների կիրառման պարագայում Վերաքննիչ դատարանը կեզրահանգեր,

որ Տարոն Գասպարյանին տրամադրված հողամասերը ոչ նպատակային օգտագործելու դեպքում անցած տարիների ընթացքում Համայնքը պարտավոր էր դրանց նկատմամբ կազմել արձանագրություններ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջները խախտելու հիմքով կիրառել տույժեր, որոնք էլ կարող էին վերաբերելի և թույլատրելի ապացույցներ հանդիսանալ Համայնքի պահանջը հիմնավորելու համար, մինչդեռ այդպիսի ապացույցները բացակայում են:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի խախտմանը՝ բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վիճելի պայմանագրերը կնքելիս Համայնքն ակնկալել է տրամադրված հողամասերում ավտոկայանատեղերի կազմակերպում և հողամասի օգտագործման վարձավճարների վճարում համայնքի բյուջե, որոնց կատարման հիմքով էլ պետք է ապացուցված համարել, որ Համայնքն իր ակնկալիքներից չի զրկվել և առկա չէ պայմանագրերի էական խախտում, հետևաբար նաև պայմանագրերի լուծման հիմք: Այսինքն՝ Համայնքի որևէ իրավունք Տարոն Գասպարյանը չի խախտել, Համայնքը վնասներ չի կրել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն, որ Դատարանը գործը դատարանության նախապատրաստելու փուլում բավարարել է Տարոն Գասպարյանի միջնորդությունը՝ Համայնքից պահանջելու ներկայացնել վեճի առարկա հողամասերի՝ իր մոտ գտնվող օգտագործման սխեմաները, մինչդեռ վերջինս դատարան ներկայացրել է Գյումրու ավագանու և քաղաքապետի՝ նշված հողամասերը մրցույթով տրամադրելու վերաբերյալ որոշումները: Այսինքն՝ Համայնքը, չկատարելով դատարանի պահանջը, թաքցրել է պահանջվող ապացույցները՝ անհնարին դարձնելով դրանց հետազոտումն ու գնահատումը: Դատարանը ոչ միայն հետամուտ չի եղել այդ ապացույցներն ապահովելու միջոցների ձեռնարկմանը, այլև վիճելի հողամասերի օգտագործման սխեմաների բացակայության պայմաններում, չպարզելով այդ հողամասերի նպատակային, գործառնական նշանակությունը, ապացուցված է համարել, որ հողամասերը նպատակային նշանակությամբ չեն օգտագործվել, նշված հողամասերում թույլատրելի է կառուցապատումը, և Տարոն Գասպարյանը պարտավոր էր կառուցել շենք-շինություններ:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ վարչական դատավարության կարգով քննվող թիվ ՎԴ-5/0057/05/13 վարչական գործով մի շարք փաստեր սույն քաղաքացիական գործի լուծման համար ունեն էական նշանակություն, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը և չի կատարել գործի վարույթը՝ զրկելով Տարոն Գասպարյանին գործի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույց ներկայացնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել նաև ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասը՝ գտնելով, որ Համայնքի կողմից կառուցապատման համար տրամադրված հողամասը 3 տարիների ընթացքում Տարոն Գասպարյանը չի օգտագործել:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.02.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

Ինչպես Դատարանը հայցի բավարարված մասով, այնպես էլ՝ Վերաքննիչ դատարանը՝ վերաքննիչ բողոքի մերժման մասով, թույլ չեն տվել ոչ նյութական, և ոչ

էլ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Վճռաբեկ բողոքի հիմքերը և հիմնավորումներն անհիմն են, հիմնված են փաստական հանգամանքների խեղաթյուրման, այլափոխման, ինչպես նաև իրավական ակտերի անիրատեսական մեկնաբանությունների վրա: Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը ճիշտ են գնահատել այն փաստը, որ Համայնքի կողմից պատշաճ պահպանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 15.04.2009 թվականի թիվ 691-Ա, թիվ 692-Ա, թիվ 693-Ա, թիվ 694-Ա, թիվ 695-Ա, թիվ 696-Ա, թիվ 697-Ա, թիվ 698-Ա, թիվ 699-Ա, թիվ 700-Ա, թիվ 701-Ա, թիվ 702-Ա որոշումների համաձայն՝ համապատասխանաբար Գյումրի քաղաքի կենտրոնական հրապարակի հարավային կողմում գտնվող 195,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի հարևանությամբ գտնվող 573,5քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի հարևանությամբ գտնվող 46,4քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի հարևանությամբ գտնվող 46,4քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի հարևանությամբ գտնվող 180,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 118,44քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 299,57քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 108,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 30,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 56,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 162,9քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 259,8քմ մակերեսով հողամասն ավտոկայանատեղի կազմակերպելու նպատակով՝ 99 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրվել են Տարոն Գասպարյանին (հատոր 3-րդ, գ.թ. 37, 40, 43, 46, 49, 52, 55, 58, 61, 64, 67, 70):

2) «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» 28.04.2009 թվականին կնքված 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220 պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագրեր) համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանը Տարոն Գասպարյանին է տրամադրել համապատասխանաբար Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 259,8քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 162,9քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 56,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 30,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 108,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 299,57քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 118,44քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Կենտրոնական հրապարակի հարավային կողմում գտնվող 195,0քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի կենտրոնական հրապարակի հարավային կողմում գտնվող 573,5քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի հարևանությամբ գտնվող 46,4քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի հարևանությամբ գտնվող 46,4քմ մակերեսով հողամասը, Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի հարևանությամբ գտնվող 180,0քմ

մակերեսով հողամասը: Պայմանագրերի 1.2-րդ կետով սահմանվել է, որ նույն պայմանագրերի գործողության ընթացքում կառուցապատված հողամասի օգտագործման արդյունքում կառուցապատման իրավունք ունեցող անձի ստացած եկամուտները նրա սեփականությունն է: Պայմանագրերի 2-րդ կետով կառուցապատման իրավունքի ժամկետ սահմանվել է 15.04.2009 թվականից մինչև 15.04.2018 թվականը: Պայմանագրերի 4.1.3-րդ կետով նախատեսվել է, որ եթե կառուցապատման իրավունք ունեցող անձը հողամասից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, ապա սեփականատերն իրավունք ունի պահանջելու լուծել պայմանագիրը և հատուցել վնասները: Պայմանագրերի 4.4.3-րդ կետով սահմանվել է, որ կառուցապատման իրավունք ունեցող անձը պարտավոր է կառուցապատման իրավունքն իրականացնել քաղաքաշինական նորմերի, կանոնների, ինչպես նաև՝ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ սահմանված կարգով կառուցելու շենքեր և շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել, կառուցապատման ժամկետի ընթացքում տիրապետել և օգտագործել այդ գույքը: Պայմանագրերի 8.1.1-րդ կետի համաձայն՝ սեփականատիրոջ պահանջով կառուցապատման իրավունքի պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե կառուցապատման իրավունք ունեցող անձը հողամասն օգտագործել է նույն պայմանագրի պայմանների և հողամասի նշանակության էական կամ բազմակի խախտումներով: Պայմանագրերի 8.2.2-րդ կետով սահմանվել է, որ կառուցապատման իրավունք ունեցող անձի պահանջով պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե կառուցապատման իրավունք ունեցող անձին տրամադրված հողամասն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին սեփականատերը չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել կառուցապատման իրավունք ունեցող անձին և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս: Պայմանագրերի 12.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենքով սահմանված կարգով. (հատոր 3-րդ, գ.թ. 38-39, 41-42, 44-45, 47-48, 50-51, 53-54, 56-57, 59-60, 62-63, 65-66, 68-69, 71-72):

3) Ըստ կառուցապատման իրավունքով պատասխանողին տրամադրված հողամասերի հատակագծերի և լուսանկարների՝ Հաղթանակի պողոտա թիվ 48/1, Սպանդարյան փողոց թիվ 22/11, Մայակովսկու փողոց թիվ 49/1, Մայակովսկու փողոց թիվ 61/5, Մայակովսկու փողոց թիվ 86/4, Մայակովսկու փողոց թիվ 123/3, Շահումյան փողոց թիվ 135/10, Շահումյան փողոց թիվ 137/8, Շահումյան փողոց թիվ 137/9, Շահումյան փողոց թիվ 188/10, Շահումյան փողոց թիվ 188/11, Շահումյան փողոց թիվ 190/5 հասցեներում գտնվող հողամասերում առկա են ճանապարհային գծանշումներ և տեղադրված են «կալանում» ճանապարհային երթևեկության նշանները (հատոր 3-րդ, գ.թ. 1-7, 9-11, 20, 21):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից, և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի հիմքով հայցապահանջ ներկայացվելու դեպքում ապացուցման առարկայի, ապացուցման բեռի բաշխման և պայմանագրի մեկնաբանման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝

պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է պայմանագիրը կողմերից մեկի պահանջով լուծելիս ապացուցման բեռի բաշխման հարցին:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն հետևյալ երեք դեպքերում՝

1. մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման առկայության դեպքում կամ

2. օրենքով նախատեսված դեպքում կամ

3. պայմանագրով նախատեսված դեպքում:

Վերոնշյալ երեք հիմքերից որևէ մեկով պահանջ ներկայացված լինելու դեպքում պայմանագրի փոփոխման կամ լուծման պահանջ ներկայացրած կողմը պետք է ապացուցի իր համար այնպիսի բացասական հետևանքի (վնասի) առաջացումը, որը զգալիորեն զրկում է վնաս կրած կողմին (պայմանագրի լուծման պահանջ ներկայացրած կողմին) ստանալ այն, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս: Հետևաբար պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած հանգամանքի ապացուցման բեռը կրում է այդպիսի պահանջ ներկայացնող կողմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածում «վնաս» եզրույթը ենթադրում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում ամրագրված իրական վնաս, բաց թողնված օգուտ կամ խախտված իրավունքների համար կատարված ծախսեր: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի հիմքով հայցապահանջ ներկայացվելու դեպքում ապացուցման առարկան են կազմում պայմանագրի խախտման փաստը (կամ օրենքով նախատեսված դեպքը կամ պայմանագրով նախատեսված դեպքը), այդ խախտումը պայմանադիր կողմի կողմից կատարելը, խախտման արդյունքում վնասի առաջացումը: Նշված փաստերի հաստատումից բացի դատարանի կողմից ինքնուրույն գնահատման են ենթակա խախտման էական լինելը և վնասի այնպիսին լինելը, որը պահանջ ներկայացրած կողմին զրկել է պայմանագրով ստացվող ակնկալիքից (*տե՛ս, Միսակ-Նուբար Թեբեղեկյանն ընդդեմ Ռուբեն Քոչարի թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քննարկվող դրույթում օգտագործված «զգալիորեն» հասկացությունը գնահատողական կատեգորիա է, և յուրաքանչյուր դեպքում այն գնահատելու համար պետք է ելնել պայմանագրից ստացվող այն ակնկալիքի բնույթից և ծավալից, որից զրկվել է պայմանագիրը լուծելու պահանջ ներկայացնող կողմը: Պայմանագրի պայմանների էական խախտումը բացահայտելու նպատակով պայմանագրից ստացվող ակնկալիքի բնույթն ու ծավալը գնահատելու համար պայմանագիրը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոնների պահպանմամբ: Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին՝ նշելով, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանա-

գրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*տե՛ս, «Կարար» ՄՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՄՊԸ-ի թիվ ԾԴ1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Սույն գործում առկա Պայմանագրերի 4.4.3-րդ կետով սահմանվել է, որ կառուցապատման իրավունք ունեցող անձը պարտավոր է կառուցապատման իրավունքն իրականացնել քաղաքաշինական նորմերի, կանոնների, ինչպես նաև հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ սահմանված կարգով կառուցելու շենքեր և շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել, կառուցապատման ժամկետի ընթացքում տիրապետել և օգտագործել այդ գույքը:

Ըստ կառուցապատման իրավունքով պատասխանողին տրամադրված հողամասերի հատակագծերի և լուսանկարների՝ կառուցապատման իրավունքով Տարոն Գասպարյանին տրամադրված հողամասերում առկա են ճանապարհային գծանշումներ և տեղադրված է «կայանում» ճանապարհային երթևեկության նշանը:

Սույն գործով Դատարանը Քաղաքապետարանի և Տարոն Գասպարյանի միջև կնքված Պայմանագրերը լուծելու և դրանցով Տարոն Գասպարյանին տրամադրված կառուցապատման իրավունքը դադարեցնելու մասով հայցը մասնակիորեն բավարարելիս պատճառաբանել է, որ հայցադիմումում նշված պայմանագրերը կնքելիս Քաղաքապետարանն ակնկալել է, որ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերը կօգտագործվեն ըստ նպատակային և գործառնական նշանակության ու հաստատված համարելով, որ պատասխանողի կողմից վերջինիս տրամադրված հողամասերում կառուցապատում չի իրականացվել, շենքեր-շինություններ չեն կառուցվել, գտել է, որ Տարոն Գասպարյանը խախտել է 28.04.2009 թվականին կնքված «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» թիվ 209-220 պայմանագրերով սահմանված պայմանները:

Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի դիրքորոշման հետ, արձանագրել է, որ Պայմանագրերով շինարարության ավարտի ժամկետներ սահմանված չլինելու պայմաններում կիրառման ենթակա էր ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթը, հետևաբար Դատարանն իրավացիորեն գտել է, որ Համայնքի պահանջը՝ Քաղաքապետարանի և Տարոն Գասպարյանի միջև 28.04.2009 թվականին կնքված «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» թիվ 209-220 թվով տասներկու պայմանագրերը լուծելու և դրանցով Տարոն Գասպարյանին տրամադրված կառուցապատման իրավունքը դադարեցնելու մասով, ենթակա էր բավարարման:

Համադրելով վերը նշված իրավական վերլուծությունները և սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածը և չեն բացահայտել կողմերի իրական կամքը, այն է՝ թե արդյոք կողմերը Պայմանագրերը կնքելիս նկատի են ունեցել այն հանգամանքը, որ Տարոն Գասպարյանն իրեն հատկացված հողամասերում պետք է իրականացնէր շինարարություն՝ կառուցեր շենքեր և շինություններ, ինչպես նաև չեն պարզել, թե արդյոք տվյալ տարածքներում շենքեր-շինություններ չկառուցվել կարող է համարվել պայմանագրերի էական խախտում, այսինքն՝ ճանապարհային գծանշումների և «կայանում» ճանապարհային երթևեկության նշանների առկայության, հետևաբար նաև ավտոկայանատեղիների կազմակերպման փաստի առկայության պայմաններում արդյոք

շենքեր և շինություններ չկառուցելու հետևանքով պայմանագիրը լուծելու պահանջ ներկայացրած Համայնքը զգալիորեն զրկվել է պայմանագրից ստացվող իր ակնկալիքներից:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները սխալ են որոշել գործով ապացուցման առարկան և սխալ են բաշխել ապացուցման բեռը կողմերի միջև, որպիսի պարագայում անհրաժեշտ է իրականացնել գործի նոր քննություն:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2014 թվականի որոշման՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքի և Տարոն Գասպարյանի միջև 28.04.2009 թվականին կնքված «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» թիվ 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220 պայմանագրերը լուծելու և այդ պայմանագրերի հիման վրա Տարոն Գասպարյանի անվամբ պետական գրանցում ստացած իրավունքները դադարեցնելու պահանջների մասով բավարարելու մասին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.10.2013 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասը և այդ մասով գործն ուղարկել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0139/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0139/02/13

Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան

Դատավորներ՝ Տ. Նազարյան

Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լևիկ և Սարգիս Աղաբեկյանների ներկա-
յացուցիչ Արմեն Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի 27.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Լևիկ և Սարգիս Աղաբեկյանների
(այսուհետ՝ Համահայցվորներ) հայցի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի
(այսուհետ՝ Բանկ), ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ «ՅՈՐ ՉՈՅՍ» ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն)՝ որոշակի գործողություն կատարելուն պարտադրելու պահանջի
մասին, և ըստ Ընկերության հայցի ընդդեմ Բանկի՝ որոշակի գործողություն կատարելուն
պարտադրելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Համահայցվորները պահանջել են Բանկին պարտադրել
ընդհանուր 192.467,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը մուտքագրել Ընկերության
բանկային հաշվին և այդ գումարն ուղղել գլխավոր վարկային պայմանագրի թիվ Ե45Ի134
ենթավարկային և թիվ Ե45Ի165 վարկային գծի պայմանագրերով ծագած պարտքի ու դրա
վրա ավելացած տոկոսների և տույժերի մարմանը:

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Բանկին պարտադրել ընդհանուր
177.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը մուտքագրել Ընկերության բանկային

հաշվին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2013 թվականի վճռով Համահայցվորների և Ընկերության հայցերը մերժվել են, ու վճռվել է Ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.11.2013 թվականի «Վճռում թույլ տված վրիպակն ուղղելու մասին» որոշմամբ Դատարանը որոշել է ուղղել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2013 թվականի վճռում «տեղ գտած» վրիպակը, այն է՝ ««Ընկերությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար» փոխարենը կարդալ «Լևիկ Աղաբեկյանից և Սարգիս Աղաբեկյանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.849 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, Ընկերությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.540 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.02.2014 թվականի որոշմամբ Համահայցվորների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.11.2013 թվականի «Վճռում թույլ տված վրիպակն ուղղելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համահայցվորների ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ և 70-րդ հոդվածները, 88-րդ հոդվածի 1-ին կետը, 90-րդ հոդվածի 2-րդ կետը, 92-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը, 132-րդ հոդվածի 3-րդ կետը և 143-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարվել է 8.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, իսկ պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն դատարան չի ներկայացվել, և նշված հայցադիմումը դատարանն ընդունել է վարույթ, որով հաստատվում է, որ հայցադիմումը դատարան ներկայացնելիս պահպանվել են նաև պետական տուրքի չափին առնչվող պահանջները: Մինչդեռ, Դատարանը վճռում թույլ տրված վրիպակն ուղղելու մասին որոշմամբ նախատեսել է, որ իրենցից ենթակա է բռնագանձման 3.849 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ վճիռ կայացնելիս հայցվորից կարող է պետական տուրք բռնագանձվել այն դեպքերում, երբ պետական տուրքի վճարումը հետաձգվել է կամ տարաժամկետվել, կամ գործի քննության ընթացքում մեծացվել է հայցագինը. տվյալ դեպքում այդ հիմքերը բացակայել են:

Դատարանի վճռի եզրափակիչ մասը որևէ եզրահանգում չի պարունակել իրենցից պետական տուրքի գումար բռնագանձելու մասին, որի պարագայում դատարանը, ուղղելով թույլ

տրված վրիպակը, ըստ էության փոխել է վճռի բովանդակությունը և իրենց վրա դրել է վճռի եզրափակիչ մասով չնախատեսված պետական տուրք վճարելու պարտավորություն:

Գործի քննության ընթացքում հայցի առարկան չի փոփոխվել, չի փոփոխվել նաև հայցապահանջը, և դատարանը զրկված չէր ներկայացված պահանջի բնույթի վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելիս հետևություններ անելու հնարավորությունից: Դրա հետևանքով իրենք զրկվել են դատական պաշտպանության իրավունքից օգտվելու արդյունքում վրա հասնող հնարավոր հետևանքները կանխատեսելու հնարավորությունից: Եթե դատարանը նշված հիմքով որոշում կայացներ հայցադիմումը վերադարձնելու մասին, ապա իրենք կորոշեին՝ հայցադիմումը կրկին ներկայացնել դատարան, թե չօգտվել դատական պաշտպանության իրենց իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 27.02.2014 թվականի որոշումը՝ վերացնելով Դատարանի 20.11.2013 թվականի «Վճռում թույլ տված վրիպակն ուղղելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Համահայցվորները հայցադիմում են ներկայացրել Դատարան ընդդեմ Բանկի՝ ընդհանուր 192.467,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամն Ընկերության հաշվին մուտքագրելուն և այդ գումարը թիվ Ե45Ի134 ենթավարկային ու թիվ Ե45Ի165 վարկային գծի պայմանագրերով ծագած պարտքի և դրա վրա ավելացած տոկոսների ու տույժերի մարմանն ուղղելուն պարտադրելու պահանջի մասին՝ հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարելով 8.000 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 4-11).

2) Համահայցվորները հայցադիմումը դատարան ներկայացնելու համար պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն չեն ներկայացրել.

3) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, պարզելով, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ և 88-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, 22.01.2013 թվականին կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում (հատոր 1-ին, գ.թ. 1).

4) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, 20.11.2013 թվականին վճիռ կայացնելիս նաև լուծելով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը, հայցադիմումը դատարան ներկայացնելու համար Համահայցվորներից պետական տուրք բռնագանձելու մասին վճիռ չի կայացրել (հատոր 2-րդ, գ.թ. 119-140).

5) Դատարանը, պարզելով, որ վերը նշված վճռում թույլ է տրվել վրիպակ, վճռի եզրափակիչ մասի 3-րդ պարբերությունում «Լևիկ Ադաբեկյանից և Սարգիս Ադաբեկյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.849 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: «ՅՈՐ-ՉՈՅՍ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.540 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար» փոխարեն նշվել է ««ՅՈՐ-ՉՈՅՍ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար», 20.11.2013 թվականին որոշում է կայացրել վճռում թույլ տրված վրիպակն ուղղելու մասին՝ որոշելով ««ՅՈՐ-ՉՈՅՍ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար» փոխարենը կարդալ «Լևիկ Ադաբեկյանից և Սարգիս Ադաբեկյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.849 ԱՄՆ դոլարին

համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: «ՅՈՐ-ՉՈՅՍ» ՍՊԸ-ից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.540 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար» (հատոր 2-րդ, գ.թ. 141, 142):

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) արդյո՞ք վճռի եզրափակիչ մասում հայցադիմումը դատարան ներկայացնելու համար պետական տուրքի գումարը գործին մասնակցող անձից բռնագանձելու հարցին չանդրադառնալու պարագայում այդ հարցը կարող է լուծվել վճռում վրիպակ ուղղելու միջոցով.

2) հայցադիմումը դատարան ներկայացնելիս սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը կամ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդությունը հայցադիմումին կցված չլինելու պայմաններում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում կարող է արդյո՞ք հետագայում այդ գումարը բռնագանձել հայցվորից, եթե նշված հարցին չի անդրադարձել հայցադիմումը վարույթ ընդունելիս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը վճեղը և այլ գործերը լուծում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա:

Մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասում լուծվում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ լրացուցիչ վճիռ կայացնել, եթե՝

1) վճիռ չի կայացրել որևէ պահանջով, որով գործին մասնակցող անձինք ապացույցներ են ներկայացրել.

2) լուծելով իրավունքի մասին հարցը, չի նշել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պատասխանողը.

3) չի լուծել դատական ծախսերի հարցը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին դիմումը

կարող է ներկայացվել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը..., իսկ 3-րդ կետի համաձայն՝ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին հարցը լուծվում է դատական նիստում, և գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով տեղեկացվում են նիստի ժամանակի և վայրի մասին...:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել վճիռը, ուղղել թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները՝ չփոփոխելով վճռի բովանդակությունը և էությունը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին պահանջը կարող է ներկայացվել մինչև վճռի կատարումը:

Վերը նշված իրավադրույթների վերլուծությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարության կարգի համաձայն՝ դատարանը լիազորված է վճիռ կայացնելուց հետո մի դեպքում լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով լուծել դատական ծախսերի, այդ թվում՝ հայցադիմումի համար պետական տուրքի հարցը, եթե այդ հարցը չի լուծվել վճիռ կայացնելիս, իսկ մյուս դեպքում՝ ուղղել այդ վճռում թույլ տրված վրիպակները: Օրենսդիրը չլուծված դատական ծախսերի հարցը տարանջատել է վճռում թույլ տրված վրիպակի բովանդակության կազմից և դրա համար նախատեսել է լուծման այլ ընթացակարգ, այն է՝ դատական ծախսերի հարցը լուծված չլինելու դեպքում այդ հարցը բացառապես կարող է լուծվել լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը Համահայցվորների կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ է ընդունել հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարված 8.000 ՀՀ դրամի չափով անդորրագիրը կցված լինելու պարագայում: Նույն դատարանը, 20.11.2013 թվականին կայացրած վճռի պատճառաբանական մասում նշելով, որ Համահայցվորները Բանկի դեմ, ըստ էության, ներկայացրել են գույքային պահանջ, գտել է, որ Համահայցվորներից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 3.849 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք: Մինչդեռ, վճռի եզրափակիչ մասում դատարանը չի լուծել Համահայցվորների միջև դատական ծախսերի բաշխման հարցը՝ վճիռ չի կայացրել նրանցից ՀՀ պետական բյուջե 3.849 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք բռնագանձելու մասին: Դատարանը, պարզելով, որ վերը նշված վճռում «թույլ է տրվել վրիպակ», որոշում է կայացրել վճռում «թույլ տրված վրիպակն ուղղելու մասին»՝ սան որոշելով Համահայցվորներից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 3.849 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ հայցվորների կողմից ներկայացված պահանջները գույքային պահանջներ են, Դատարանի 20.11.2013 թվականի վճռի «Դատական ծախսերը» մասում Դատարանը նշել է, որ Բանկի դեմ ներկայացվել է

գույքային պահանջ, որի հիմքով հայցվորներից հոգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 3.849 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, Դատարանի նշված եզրակացությունը վճռի «Վճռեց» մասում տեղ չի գտել վրիպակի արդյունքում, Համահայցվորների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է՝ նշելով նաև, որ Դատարանը, կայացնելով վճռում թույլ տված վրիպակն ուղղելու մասին որոշում, չի խախտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, այն է՝ ուղղել է թույլ տրված վրիպակը՝ չփոփոխելով 20.11.2013 թվականի վճռի բովանդակությունը և էությունը:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, չի բխում վերը նշված իրավակարգավորումներից, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարության կարգի համաձայն՝ վճիռ կայացնելիս դատական ծախսերի հարցը լուծված չլինելու դեպքում այդ հարցը կարող էր լուծվել լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ոչ բոլոր դեպքերում է, որ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի լրացուցիչ վճիռ կայացնել չլուծված դատական ծախսերի հարցի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և դատական ծախսերի հարցը լուծված չլինելու դեպքում յուրաքանչյուր գործով լրացուցիչ վճիռ կայացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները՝

1. հայցադիմումը դատարան ներկայացնելիս կցվել է սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

2. այդպիսին կցված չլինելու դեպքում դատարանին ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու մասին միջնորդություն:

3. հայցադիմումը վարույթ ընդունելիս դատարանն անդրադարձել է այդ միջնորդությանը:

4. ինչ որոշում է կայացվել նշված միջնորդության վերաբերյալ:

5. գործի քննության ընթացքում փոփոխվել է հայցի հիմքը կամ առարկան, ավելացվել է հայցապահանջի չափը:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է ստորև նշված հիմնավորումներից:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցադիմումին կցվում է սահմանված կարգով և չափով պետական տուրքի

վճարած լինելը հավաստող փաստաթուղթ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է վարույթ ընդունել նույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում հայցադիմումի ընդունումը չմերժելու կամ դիմումը չվերադարձնելու դեպքում կայացնում է դա ընդունելու մասին որոշում, որում նշվում են նաև գործի քննության ժամանակը և վայրը:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ինպերատիվ ձևով սահմանել է պարտականություն՝ վարույթ ընդունելու միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ դատարանի կողմից կայացվել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում, ապա հայցվորի մոտ արդեն իսկ ձևավորվում է այն համոզմունքը, որ հայցը ներկայացվել է օրենքի պահանջների պահպանմամբ, այդ թվում՝ պահպանված է նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելու պահանջը: Դատավարության յուրաքանչյուր փուլը, այդ թվում նաև քաղաքացիական գործի հարուցման փուլն ուղղված է յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի իրացման ապահովմանը, տվյալ պարագայում՝ դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորմանը:

Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում նաև այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, և կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի (*յո՛ւ ս, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների թիվ ԱՐԳ/0062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի յույսի ներքո, որն ի թիվս այլոց, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որը *inter alia* պահանջում է, որպեսզի դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (*յո՛ւ ս, Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանգադ թիվ 28342/95, կետ 61*):

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Համահայցվորները, ստանալով Դատարանի «Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու մասին» 22.01.2013 թվականի որոշումը, որով իրենց հայցադիմումը (որին կցվել է միայն 8.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարված լինելը հավաստող անդորրագիրը) ընդունվել է վարույթ և գործը նախապատրաստվել դատաքննության, ըստ էության, ստացել են որոշակի, հաստատուն և կասկած չհարուցող որոշում՝ կապված իրենց իրավունքների ու պարտականությունների հետ, և համոզված են եղել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի: Մինչդեռ,

Դատարանի «Վճռում թույլ տված վրիպակն ուղղելու մասին» 20.11.2013 թվականի որոշմամբ, ըստ էության, Համահայցվորներից գանձվել է հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարն այն դեպքում, երբ Համահայցվորների կողմից չի հարուցվել հայցադիմումը դատարան ներկայացնելու համար պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջևորդություն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից թույլ է տրվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ կետի, 143-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որն անտեսվել և պատշաճ գնահատման չի արժանացել Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2014 թվականի որոշումը և այն փոփոխել հետևյալ կերպ. «Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2013 թվականի «Վճռում թույլ տրված վրիպակն ուղղելու մասին» որոշումը՝ «Լևիկ Աղաբեկյանից և Սարգիս Աղաբեկյանից հոգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 3.849 (երեք հազար ութ հարյուր քառասունինը) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար» մասով, բեկանել և այդ մասով պետական տուրքի հարցը համարել լուծված»:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0666/02/08**
դատարանի որոշում 2014թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0666/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Խատառյան
Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Հակոբ Զիլինյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Հակոբ Զիլինյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 581.175 ՀՀ դրամ՝ որպես վարչական տուգանքի գումար, և Հակոբ Զիլինյանին պարտադրել կատարելու ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Հունանյան) (այսուհետ՝ Դատարան) 19.11.2013 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը՝ վարչական տուգանքի գումարը բռնագանձելու պահանջի մասով, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.05.2014 թվականի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.11.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասը և 86-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը և 22-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 8-րդ և 162-րդ հոդվածները, մինչև 01.01.2008 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին կետը, նույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, 109-րդ, 110-րդ, 219-րդ հոդվածները, նույն օրենսգրքի մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 131-րդ և 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մինչև 01.01.2008 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական գործեր քննող դատարանը քննել է պետաիրավական, վարչաիրավական, հարկային և այլ իշխանական ենթակայության վրա հիմնված իրավահարաբերություններից ծագող գործերը, եթե մի կողմը քաղաքացի է: Դրանից ելնելով՝ Կոմիտեն 14.04.2005 թվականին սույն գործով հայցադիմումը ներկայացրել է Դատարան:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը հայցը վարույթ է ընդունել ընդդատության կանոնների պահպանմամբ, որի պայմաններում Դատարանն այն պետք է քններ ըստ էության, թեկուզև այն հետագայում ընդդատոյա է դարձել այլ դատարանի: Բացի այդ, Դատարանը պարտավոր էր գործի դատաքննությունը շարունակել նաև հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի պահանջը: Այսինքն՝ բացակայել է գործի վարույթը կարճելու հիմքը:

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված այն հիմքին, որ հայցադիմումում նշվել է նաև երկրորդ պահանջը, որի վերաբերյալ Դատարանն անդրադարձ չի կատարել իր կողմից կայացված վճռում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.05.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր Ա. Առաքելյան) 14.04.2005 թվականին որոշում է կայացրել Կոմիտեի հայցն ընդդեմ Հակոբ Զիլիկյանի՝ նշանակված վարչական տուգանքի գումարը հօգուտ

ՀՀ պետական բյուջեի բռնագանձելու և որոշակի գործողություն կատարել պարտադրելու պահանջների մասին, վարույթ ընդունելու և գործի քննությունը 05.05.2005 թվականին ժամը 15:00-ին նշանակելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 1).

2) Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր Ա. Առաքելյան) 05.05.2005 թվականին որոշում է կայացրել Հակոբ Զիլիկյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու և գործի վարույթը կասեցնելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 27).

3) Դատարանը 23.09.2013 թվականին որոշում է կայացրել նշված քաղաքացիական գործը վարույթ ընդունելու, գործի վարույթը վերսկսելու և 19.11.2013 թվականին ժամը 10:00-ին դատական նիստ նշանակելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 32).

4) 19.11.2013 թվականին նշանակված դատական նիստում Դատարանը գործի դատաքննությունը համարել է ավարտված և հայտարարել է վճռի հրապարակման վայրն ու ժամանակը (հատոր 1-ին, գ.թ. 38).

5) Դատարանի 19.11.2013 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը՝ վարչական տուգանքի գումարը բռնագանձելու պահանջի մասով, կարճվել է՝ վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով (հատոր 1-ին, գ.թ. 40):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք 01.01.2008 թվականի դրությամբ ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող և դատաքննության փուլում կասեցված գործի վարույթը վերսկսելու պայմաններում այն ենթակա է կարճման՝ ենթակայության փոփոխության հիմքով:

28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ընդհանուր իրավասության դատարաններում նշված օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված գործերի հետագա դատաքննությունը շարունակվում է նույն օրենսգրքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատաքննության փուլում չգտնվող գործերը հնգօրյա ժամկետում փոխանցվում են վարչական դատարանին՝ այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնելով դատավարության մասնակիցներին:

Նշված իրավադրույթներով օրենսդիրը, ըստ էության, կարգավորել է 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին) հետո ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող հանրային իրավահարաբերություններից ծագող գործերի հետագա քննության կարգը:

28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման

վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:

Վերոհիշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքն ուժի մեջ մտնելուց հետո նույն օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան այդ օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված գործերի հետագա դատաքննությունն ընդհանուր իրավասության դատարաններում շարունակելու համար անհրաժեշտ է հետևյալ երեք պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1) գործը պետք է նախատեսված լինի 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով.

2) այդ գործը 01.01.2008 թվականի դրությամբ պետք է գտնվի ընդհանուր իրավասության դատարանի վարությամբ.

3) այդ գործի քննությունը պետք է գտնվի դատաքննության փուլում:

Երրորդ պայմանի վերլուծությունից բխում է, որ 01.01.2008 թվականի դրությամբ ընդհանուր իրավասության դատարանների վարությամբ գտնվող՝ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված գործերի հետագա քննությունը չի կարող շարունակվել նույն դատարաններում, եթե այդ գործերը չեն գտնվում 28.11.2007 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի իմաստով դատաքննության փուլում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է քննարկվող նորմի տառացի մեկնաբանությամբ, ինչից ուղղակիորեն բխում է, որ այդ նորմը վերաբերում է «դատաքննության փուլում չգտնվող» գործերին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդրական նման իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և բխում է արդարադատության արդյունավետության սկզբունքից, անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի բովանդակությունից: Այսպես, ընդհանուր իրավասության դատարանների վարությամբ 01.01.2008 թվականի դրությամբ գտնվող հանրային իրավահարաբերություններից ծագող այն գործերով, որոնցով դատարանը ձեռնամուխ է եղել գործի ըստ էության քննությանն ուղղված որոշակի դատավարական գործողություններ իրականացնելուն, նույն դատավարական գործողությունների կրկին իրականացումը բացառելու, գործի քննության անհարկի ձգձգումը կանխելու, դատավարական ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործումն ապահովելու նկատառումով օրենսդիրն առավել նպատակահարմար է համարել այդպիսի գործերի հետագա քննությունն ընդհանուր իրավասության դատարանում շարունակելու դատավարական կարգը: Մինչդեռ, այն գործերը, որոնցով գործի ըստ էության քննություն չի իրականացվել, պետք է հանձնվեն վարչական դատարանին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածը վերը քննարկված գործերով, ըստ էության, բացառել է ենթակայության փոփոխության հիմքով վարույթի կարճման հնարավորությունը: Նման իրավակարգավորումը կոչված է երաշխավորելու անձի արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացումը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԳ) նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԳ-ը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեուզն, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԳ-ի 19.06.2001 թվականի վճիռը, կետք 52*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի հայցն ընդդեմ Հակոբ Զիլիկյանի՝ նշանակված վարչական տուգանքի գումարը ՀՀ պետական բյուջե բռնագանձելու և որոշակի գործողություն կատարել պարտադրելու պահանջների մասին, վարույթ է ընդունվել 14.04.2005 թվականին, նշված հայցի հիման վրա հարուցված գործի քննությունը նշանակվել է 05.05.2005 թվականին, 05.05.2005 թվականին որոշում է կայացվել Հակոբ Զիլիկյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու և գործի վարույթը կասեցնելու մասին, 23.09.2013 թվականին որոշում է կայացվել քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու և 19.11.2013 թվականին ժամը 10:00-ին դատական նիստ նշանակելու մասին, նույն օրը դատավորն ավարտված է համարել գործի դատաքննությունը և հայտարարել է վճռի հրապարակման վայրն ու ժամանակը:

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետով, 19.11.2013 թվականին վճիռ է կայացրել քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին՝ պատճառաբանելով, որ սույն գործը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճ է, որը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ սույն վեճը քաղաքացիաիրավական իրավահարաբերությունների շրջանակից դուրս է, քանի որ, նախևառաջ, այն հանրային բնույթի է (վարչական տուգանքի բռնագանձման հայց), երկրորդ՝ Կոմիտեն հանդիսանում է պետական մարմին: Հետևաբար Դատարանն իրավացիորեն կարճել է գործի վարույթը, քանի որ այն ենթակա չէ քաղաքացիական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Վերը շարադրված դիրքորոշման համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո սույն գործով միաժամանակ առկա են եղել ընդհանուր իրավասության դատարանում գործի հետագա դատաքննությունը շարունակելու՝ սույն օրենսգրքի 162-րդ հոդվածից բխող անհրաժեշտ պայմանները, դրանք են՝

1) սույն գործը 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված գործ է.

2) այն 01.01.2008 թվականի դրությամբ գտնվել է ընդհանուր իրավասության դա-

տարանի վարույթում.

3) 01.01.2008 թվականի դրությամբ և դրանից հետո մինչև 19.11.2013 թվականը գործը գտնվել է դատաքննության փուլում:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է նրանով, որ 05.05.2005 թվականից մինչև 23.09.2013 թվականը սույն գործը ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ գլխի վերնագրի («ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ») իմաստով գտնվել է դատաքննության փուլում, իսկ Դատարանը (դատավոր Ա. Հունանյան), 23.09.2013 թվականին նաև որոշում կայացնելով քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին, ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.11.2007 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացված 149⁸-րդ հոդվածով սահմանափակված նախնական դատական նիստ չի հրավիրել, ինչպես նաև 19.11.2013 թվականին նշանակված դատական նիստում որոշում չի կայացրել գործը դատաքննության նշանակելու մասին, որպիսի դատավարական գործողություններից հետևում է, որ գործի քննությունն իրականացվել է առանց նախապատրաստական փուլի:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոնշյալ իրավանդումից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է և վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը որոշում է վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կլրի հռչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն գուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ:

Վերոնշյալ դիրքորոշման հաշվառմամբ անդրադառնալով վճռաբեկ բողոքի մյուս հիմքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի թիվս այլ հիմքերի՝ վերաքննիչ բողոքում որպես Դատարանի ակտը բեկանելու հիմք նշված է նաև այն հանգամանքը, որ Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 132-րդ հոդվածի պահանջները, վճիռ չի կայացրել գործով ներկայացված՝ պատասխանողին մաքսային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի վերաբերյալ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բացակայում են բողոքի նշված հիմքի վերաբերյալ պատճառաբանությունները:

Նման պարագայում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, չանդրադատնալով վերաքննիչ բողոքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 132-րդ հոդվածի խախտման վերաբերյալ հիմքին, ըստ էության քննության առարկա չդարձնելով Հակոբ Չիլիկյանին մաքսային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով բողոք բերած անձի հիմնավորումներն ու պահանջը, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործով արձանագրված դատավարական նորմերի խախտումները կարող են վերացվել միայն առաջին ատյանի դատարանում քննության ընթացքում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահերից և ուղղված է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԳ/2279/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/2279/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Կ. Հակոբյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Ջուլետտա Սմբատյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Կարեն Ստեփանյանի ընդդեմ Ջուլետտա Սմբատյանի՝ սեփականատիրոջ իրավունքի
խախտումները վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կարեն Ստեփանյանը պահանջել է վերացնել սեփականատիրոջ
իրավունքի խախտումները, այն է՝ տան տանիքը տեղափոխել և տեղադրել իր տան
պատի սահմաններում՝ ըստ փորձագիտական եզրակացության մեջ նշված չափերի,
այնպես, որ վերականգնվի իր տան 12,2մ ճակատային հատվածը, որից՝ 7,3մ տան
հիմնական կառույցի ճակատային մասն է, 4,9մ տան մուտքի ու ավտոտնակի ճակատային
հատվածը և չխոչընդոտել իր տան ճակատային մասում կատարվող վերանորոգման
աշխատանքներին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրա-
վասության դատարանի (դատավոր՝ Ա. Հունանյան) (այսուհետ՝ Դատարան) 01.10.2013
թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
19.12.2013 թվականի որոշմամբ Ջուլետտա Սմբատյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 01.10.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ջուլետտա Սմբատյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 28-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 53-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 274-րդ հոդվածները, «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վիճելի հասցեի երկու առանձին գույքային միավոր համարվող տներն ինչպես առաջ, այնպես էլ հիմա ունեն մեկ ընդհանուր բաժանարար պատ:

Տան նախկին և ներկայիս սեփականատերերի կողմից տան կառուցման օրվանից մինչև օրս որևէ կոնստրուկտիվ փոփոխություն չի կատարվել, ուստի պարզ չէ, թե ինչպես ի հայտ եկավ տան ճակատային հատվածում արտաքին լայնության 0,5 մետրի կրճատում: Նշվածը կարևոր և էական նշանակություն ունեցող հանգամանք է, որի վերաբերյալ փորձագետի կողմից որևէ պարզաբանում չի տրվել՝ չնայած այն հանգամանքին, որ այդ հարցի պարզաբանումից է կախված եղել՝ արդյոք հայցվորի հողամասից պատասխանողը կատարել է զավթում, թե ոչ:

Եթե Վերաքննիչ դատարանը լսեր Դատարանի 04.07.2013 թվականի և 26.07.2013 թվականի դատական նիստերի արձանագրությունները, ապա չէր նշի, թե փորձագետը մանրամասնորեն բացատրություն է տվել և պատասխանել է պատասխանողի ներկայացուցչի բոլոր հարցերին, քանի որ փորձագետը խեղաթյուրել է իրական փաստերը: Փորձագետի կողմից չի պարզվել հայցվորին պատկանող Երևանի Ուշակովի փողոցի թիվ 36 հասցեի տան առանձնացված հատվածի լայնության ներքին և արտաքին պատերի գումարը: Մասնավորապես՝ արդյոք տան ներքին և արտաքին պատերը կազմում են 7,5մ, թե 7,3մ: Չի պարզվել նաև, թե որ հատվածում է գտնվում հայցվորի և Երվանդ Ղումաշյանի տներն իրարից առանձնացնող ընդհանուր բաժանարար պատը, որքան է կազմում հայցվորի և Երվանդ Ղումաշյանի տներն իրարից առանձնացնող ընդհանուր բաժանարար պատից մինչև պատասխանողի տան արտաքին պատն ընկած հատվածի լայնությունը:

Փորձագետի կողմից արձանագրվել է, որ վիճելի հասցեի հողամասի լայնությունը մինչև երկու մասի բաժանելը կազմել է 18մ, սակայն նա չի չափագրել և պարզել, թե առկա է արդյոք նշված հասցեի հողամասի մինչև հայցվորի իրավանախորդի և Երվանդ Ղումաշյանի միջև կնքված հողամասի բաժանման պայմանագրում եղած լայնության չափը՝ 18մ, թե ոչ: Նշված փաստերն ընդունել է նաև փորձագետը դատական նիստի ժամանակ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 23.04.2013 թվականին դատաշինարարատեխնիկական թիվ 12-1879 փորձաքննության եզրակացությունը թերի է, չի կարող արժանահավատ համարվել, քանի որ փորձագետը սույն գործի օբյեկտիվ և արդյունավետ լուծումն ապահովող էական նշանակություն ունեցող հանգամանքներին չի անդրադարձել և չի դրսևորել փորձագետին վայել գործելակերպ:

Փորձագետն առանց չափագրման՝ հիմք ընդունելով հայցվորի անվամբ արված սե-

փականության իրավունքի վկայականում նշված նրան պատկանող տան առանձնացված հատվածի լայնության 7,3մ չափը, պարզապես հայցվորի տան ճակատային հատվածից արտաքին պատի ձախ հատվածից չափագրել է մինչև պատասխանողի տան արտաքին պատն ընկած հատվածի լայնությունը և ըստ փորձագետի՝ դրանով պարզել է զավթում թույլ տալու հանգամանքը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ վիճելի տունը կառուցված է իր և հայցվորի հողամասերի բաժանարար սահմանագծում, հետևաբար փորձագետն ուղղակի պարտավոր էր չափել և պարզել, թե արդյոք փաստացի վիճակով առկա է պատասխանողի տան առանձնացված հատվածի 15,92մ լայնությունը, թե ոչ: Եզրակացության մեջ առկա են նաև մի շարք ակնառու անհամապատասխանություններ, իսկ Ջուլետտա Սմբատյանի միջնորդությունը՝ կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին, Դատարանի կողմից անհիմն պատճառաբանությամբ մերժվել է:

Ավելին, Երևանի Ուշակովի թիվ 36 հասցեի կադաստրային գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց, որը կհաստատեր, որ նշված հասցեի տան և ավտոտնակի միջնահատվածի լայնությունը կազմել է 1,7քմ, իսկ նույն փողոցի թիվ 36 և թիվ 38 տների սահմանագծի միջև հեռավորությունը կազմում է 4,9մ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանի 25.04.2013 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից թիվ 12-1879 փորձագիտական եզրակացությունը ստացվելու հիմքով, և գործի քննությունը նշանակվել է 19.06.2013 թվականին (հատոր 2-րդ, գ.թ. 1):

2) Դատարանի 19.06.2013 թվականի դատական նիստի համառոտագրության և թվային ստորագրության համաձայն՝ դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Կարինե Քաջազունին միջնորդել է փորձագետին հրավիրել դատարան՝ բացատրություն տալու: Դատարանի կողմից միջնորդությունը բավարարվել է. որոշվել է հրավիրել փորձագետին, և հաջորդ դատական նիստը նշանակվել է 04.07.2013 թվականին՝ ժամը 11:00-ին (հատոր 2-րդ, գ.թ. 30):

3) Դատարանի 04.07.2013 թվականի դատական նիստի համառոտագրության և թվային ստորագրության համաձայն՝ դատական նիստին հրավիրված փորձագետ Հրանտ Ավետիսյանը նախագուշացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որից հետո դատական նիստին մասնակցող կողմերի և դատարանի կողմից փորձագետին ուղղվել են հարցեր, և փորձագետի կողմից տրվել են բացատրություններ (հատոր 2-րդ, գ.թ. 71-72):

4) Դատարանի 26.07.2013 թվականի դատական նիստի համառոտագրության և թվային ստորագրության համաձայն՝ պատասխանողի ներկայացուցիչ Սուրեն Բաղդամյանը միջնորդել է ներգրավել փորձագետ՝ չափագրումներ կատարելու համար: Դատարանի կողմից միջնորդությունը մերժվել է (հատոր 2-րդ, գ.թ. 79):

6) Սույն գործում առկա դատական նիստերի ձայնագրությունների էլեկտրոնային կրիչի վրա ամրագրված են միայն 30.08.2013, 17.09.2013 և 01.10.2013 թվականների դատական նիստերի ձայնային արձանագրումները: Էլեկտրոնային կրիչի վրա բացակայում

են 19.06.2013, 04.07.2013, 26.07.2013 և 27.08.2013 թվականների դատական նիստերի ձայնային արձանագրումները (հատոր 2-րդ, գ.թ. 110):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. արդո՞ք քաղաքացիական գործում էլեկտրոնային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրումների բացակայությունը կարող է համարվել դատական նիստի արձանագրության բացակայություն, եթե քաղաքացիական գործում առկա են այդ նիստերի համակարգչային համառոտագրումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ հարկ է համարում անդրադառնալ դատավարության ընթացքում դատական նիստի արձանագրության ունեցած դերին և նշանակությանը՝ ընդգծելով, որ դատական նիստի արձանագրությունը՝ որպես դատավարական գործողությունների կատարման բոլոր էական հանգամանքները հաստատող փաստաթուղթ, ունի կարևոր ապացուցողական նշանակություն:

Մասնավորապես՝ դատավարության կողմերը կարող են հիմնավորել իրենց վերաքննիչ և վճռաբեկ բողոքները՝ հղում կատարելով դատական նիստերի արձանագրությանը, իսկ վերադաս ատյանի դատարանները դատական նիստերի արձանագրությունների միջոցով կարող են ստուգել ստորադաս դատարաններում գործի քննության օրինականությունը, մասնավորապես, արդյո՞ք ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը համապատասխանում է այն փաստերին, որոնք հաստատվել են դատաքննության ընթացքում կամ որևէ դատավարական գործողություն իրականացնելիս դատարանը պահպանել է սահմանված դատավարական կարգը:

Այսպիսով, դատական նիստի արձանագրությունն անձի դատական պաշտպանության իրավունքի և հատկապես՝ բողոքարկման իրավունքի իրացումն ապահովող կարևորագույն միջոցներից է, ինչով էլ պայմանավորված է դատական նիստի արձանագրության բացակայության դեպքում օրենսդրի կողմից դատական ակտի բեկանման պարտադիր պահանջի սահմանումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերում, ինչպես նաև դատական նիստերից դուրս առանձին դատավարական գործողություններ կատարելիս վարվում է արձանագրություն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի դադարում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով: Համառոտագրումը դատական նիստերի դադարում կատարվող գործողությունների մասին նշումներն են:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է միաժամանակ՝ համակարգչային

եղանակով: Չայնային արձանագրությունը գործի նյութերին կցվում է լազերային կրիչի վրա: Համառոտագրումը գործի նյութերին կցվում է թղթային կրիչի վրա՝ հավաստված դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ:

Վերը նշված իրավանդումների փոխկապակցված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում դատական նիստի արձանագրումը ենթադրում է ձայնային արձանագրում՝ ամրագրված լազերային կրիչի վրա և համառոտագրում՝ արտատպված թղթի վրա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ձայնային արձանագրումը ներկայումս հանդիսանում է դատական նիստի բոլոր տվյալների անընդմեջ արձանագրման հիմնական միջոցը, հետևաբար նաև դատավարության հրապարակայնության ապահովման միջոցը:

Ինչ վերաբերում է թղթային համառոտագրմանը, ապա վերջինս ուղղակի դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են, որն ունի ուղղորդիչ բնույթ, հետևաբար առանց ձայնային արձանագրման այն չի կարող բավարար պատկեր ստեղծել դատական նիստի ընթացքի վերաբերյալ, չի կարող բավարար չափով ապահովել դատավարության հրապարակայնությունը և ծառայել որպես անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման երաշխիք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում լազերային կրիչի վրա ամրագրված ձայնային արձանագրման և համակարգչային համառոտագրման միաժամանակյա առկայությունը պարտադիր է յուրաքանչյուր դատական նիստով, և դրանցից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է դատական նիստի արձանագրության բացակայություն:

Վերը նշված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով լազերային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրությունների բացակայությունը դատական ակտի պարտադիր բեկանման հիմք է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով բողոք բերած անձը, վկայակոչելով Դատարանի 04.07.2013 և 26.07.2013 թվականների արձանագրությունները, պնդում է, որ նշված արձանագրությունները պետք է պարտադիր հետազոտման առարկա դարձվեն, քանի որ դրանցով հստակ հիմնավորվում են իր կողմից ներկայացված այն փաստարկները, որ փորձագետը ոչ թե մանրամասնորեն պատասխանել է Ջուլետտա Սմբատյանի բոլոր հարցերին և մանրամասն բացատրություն է տվել կատարված փորձաքննության մասին, այլ ընդամենը խեղաթյուրել է իրական փաստերը: Բացի այդ, պատասխանողը, հիմնավոր կասկածներ ունենալով փորձագետի եզրակացության արժանահավատության վերաբերյալ, միջնորդել է նշանակել կրկնակի փորձաքննություն, որը նույնպես Դատարանի կողմից մերժվել է:

Վերը նշվածը հիմք ընդունելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը 19.06.2013, 04.07.2013, 26.07.2013 և 28.08.2013 թվականների դատական նիստերն արձանագրել է ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով համառոտագրման միջոցով, սակայն նշված դատական նիստերի ձայնային արձանագրություններն ամրագրված չեն գործում առկա լազերային կրիչի վրա, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ սույն գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Դատական նիստի արձանագրության բացակայության պայմաններում Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ ինչպես փորձագետի բացատրությունների վերաբերյալ վճռաբեկ բողոք բերած անձի վերը նշված փաստարկին, այնպես էլ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ

բողոքի մյուս հիմնավորումներին:

Այսպիսով, սույն որոշման պատճառաբանական մասում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0826/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0826/02/12
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Սուսաննա Հարությունյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի «Արտադրա-Տպագրական» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Սուսաննա
Հարությունյանի՝ սեփականության իրավունքի խախտումները վերացնելու պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Սուսաննա
Հարությունյանին վերացնելու ապօրինի շինարարությունը, իր արտադրական տարածքի
մուտքի և ելքի սահմանափակումը:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դա-
տարանի 12.04.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2013 թվականի որոշմամբ
Սուսաննա Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Մալաթիա-
Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2013
թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դա-
տարանի (դատավոր՝ Ն. Կարապետյան) (այսուհետ՝ Դատարան) 13.11.2013 թվականի
վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.01.2014 թվականի որոշմամբ Սուսաննա Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.11.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Սուսաննա Հարությունյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 28-րդ, 112-րդ, 149.5-րդ և 149.9-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը, 04.11.2013 թվականին նշանակելով նախնական դատական նիստ, նույն օրն ավարտել է գործի քննությունն ու նշանակել է վճռի հրապարակման օրն ու ժամը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործում առկա չէ գործը դատաքննության նշանակելու որոշումն իրեն ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց, քանի որ Դատարանը չի իրականացրել գործով ըստ էության քննություն՝ իրեն գրկելով իր դատական պաշտպանության իրավունքը լիարժեք իրականացնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն, որ գործի քննության ընթացքում որևէ ապացույց ձեռք չի բերվել այն մասին, որ ինքը վիճելի պարիսպը կառուցել է Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասում, մինչդեռ Դատարանը որպես հայցի հիմնավորում՝ հիմք է ընդունել կողմերի սեփականության իրավունքի գրանցման վկայականները և ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության գրությունը, որտեղ որևէ հիշատակում չկա հողազավթման կամ պարիսպն Ընկերությանը պատկանող հողամասում կառուցված լինելու վերաբերյալ, մինչդեռ Դատարանը հիմք է ընդունել Ընկերության ներկայացուցիչների հողազավթում կատարելու մասին բանավոր հայտարարությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն, որ ՀՀ ոստիկանության Մալաթիայի քննչական բաժնում հարուցվել է թիվ 16129013 քրեական գործը, և այն գտնվում է նախաքննության փուլում, սակայն Դատարանը, հիմք ընդունելով Ընկերության ներկայացուցիչների բանավոր հայտարարությունն այն մասին, թե իբր իրենք հաշտվել են քրեական գործի շրջանակներում, մերժել է իր միջնորդությունը՝ քաղաքացիական գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով կասեցնելու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.01.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 04.11.2013 թվականին կայացած դատական նիստի արձանագրության համառոտագրման համաձայն՝ Դատարանը նույն օրը նախնական դատական նիստում, որին ներկա է գտնվել միայն հայցվորի ներկայացուցիչը, արձանագրային որոշում է կայացրել

դատաքննության անցնելու մասին և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի հիմքով գործի քննությունը հայտարարել է ավարտված՝ նշանակելով դատական ակտի հրապարակման օրն ու ժամը (հատոր 2, գ.թ. 83-85):

2. Գործում առկա չէ առանձին դատական ակտի ձևով կայացված գործը դատաքննության նշանակելու մասին որոշում և այն պատասխանողին ուղարկելու վերաբերյալ ապացույց:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է այն իրավական խնդրին, թե արդյոք դատարանը նախնական դատական նիստի ավարտից անմիջապես հետո կարող է անցնել գործի դատաքննությանը այն պարագայում, երբ կողմերից մեկը ներկա չէ և չի իրագեկվել գործը դատաքննության նշանակելու մասին որոշման մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ամրագրելով քաղաքացիական դատավարության փուլերը (գործի հարուցման, գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության և այլն), պարտավորեցում է դատարանին դատավարության մի փուլից անցումը մյուսին ձևակերպել առանձին դատավարական փաստաթղթով: Նշված իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և կոչված է երաշխավորելու գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրականացումը: Մասնավորապես՝ քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր փուլ ունի քաղաքացիական դատավարության ընդհանուր նպատակից բխող իր նպատակը, խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունների շրջանակը: Վերը նշվածով պայմանավորված՝ յուրաքանչյուր փուլում գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների շրջանակը ևս տարբեր է, հետևաբար վերջիններիս կողմից դատավարության համապատասխան փուլին անցնելու վերաբերյալ իրագեկումն ուղղակի անհրաժեշտություն է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149^o-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավորը, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, որոշում է կայացնում գործը դատաքննության նշանակելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործը դատաքննության նշանակելու մասին որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, որում նշվում է գործի դատաքննության ժամանակի և վայրի մասին:

Կայացնելով գործը դատաքննության նշանակելու մասին որոշումը՝ դատարանը մի կողմից արձանագրում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ավարտը, մյուս կողմից՝ անցումը դատաքննության փուլին, որի շրջանակներում էլ իրականացվում է գործի ըստ էության քննությունը և լուծումը: Մասնավորապես՝ դատավարության այս փուլում դատարանը պարզում է հայցվորի պահանջները, պատասխանողի առարկությունները, անմիջականորեն հետազոտում է ապացույցները, պարզում է գործի փաստական հանգամանքները, կոնկրետ իրավահարաբերության սահմաններում կողմերի իրական իրավունքները և պարտականությունները: Վերը շարադրվածով պայմանավորված՝ դատավարության այս փուլում գործին մասնակցող անձանց հիմնական իրավունքները հանգում են իրենց դիրքորոշումը ներկայացնելուն և ապացույցների հետազոտմանը մասնակցելուն: Հետևաբար օրենսդրի պահանջը՝ դատաքննության

նշանակելու մասին որոշումն առանձին ակտի ձևով կայացնելու և այն գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ, կոչված է ապահովելու վերջիններիս կողմից դատավարության այս փուլին նախապատրաստվելու և դատարան ներկայանալու իրական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգումը բխում է նաև Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուրի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումներից: Մասնավորապես, Անկերլ ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով (*Կրենս, Լիլիթ Գևորգյան ընդդեմ Սվեյարյանա Միքայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Հետևաբար այն դեպքում, երբ անձը չի տեղեկացվում դատաքննության փուլին անցնելու վերաբերյալ, որպես հետևանք գրկվում է դատավարության այդ փուլում օրենսդրորեն իրեն վերապահված դատավարական իրավունքներն իրացնելու հնարավորությունից՝ հայտնվելով դատավարության մյուս կողմի հետ համեմատ էականորեն նվազ բարենպաստ վիճակում, ինչն իրավահավասարության սկզբունքի խախտում է:

Վճռաբեկ դատարանը, միաժամանակ ելնելով գործի արդյունավետ քննության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից, հարկ է համարում հավելել, որ դատարանը նախնական դատական նիստի ավարտից անմիջապես հետո կարող է որոշում կայացնել դատաքննությունը սկսելու մասին բացառապես այն դեպքում, երբ նախնական դատական նիստին ներկայացել են գործին մասնակցող բոլոր անձինք և նրանց հնարավոր է իրազեկել գործը դատաքննության նշանակելու մասին որոշման վերաբերյալ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 04.11.2013 թվականին կայացած նախնական դատական նիստում Դատարանն արձանագրային որոշում է կայացրել դատաքննության անցնելու մասին և նույն օրն իրականացնելով գործի դատաքննությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի հիմքով գործի քննությունը հայտարարել է ավարտված՝ նշանակելով դատական ակտի հրապարակման օրն ու ժամը: Պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը չեն ներկայացել 04.11.2013 թվականին կայացած նախնական դատական նիստին: Գործում առկա չէ առանձին դատական ակտի ձևով կայացված գործը դատաքննության նշանակելու մասին որոշում և այն պատասխանողին ուղարկելու վերաբերյալ ապացույց:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Դատարանի կողմից սույն գործով նախնական դատական նիստեր են հրավիրվել 23.11.2012, 15.01.2013 և 21.02.2013 թվականներին, որից հետո Դատարանի 21.02.2013 թվականի որոշմամբ գործը համարվել է դատաքննությանը նախապատ-

րաստված, և դատաքննության օր է նշանակվել 14.03.2013 թվականը, որի վերաբերյալ Մուսաննա Հարությունյանի ներկայացուցիչ Արման Ապիտոնյանը պատշաճ կերպով ծանուցվել է, որպիսի հանգամանքը հաստատվում է սույն գործին կցված՝ վերջինիս կողմից ստացված և ստորագրված ծանուցագրերով (հատոր 1-ին, գ.թ. 81-82, 79-84), ուստի սույն քաղաքացիական գործի շրջանակներում տեղի են ունեցել երեք նախնական դատական նիստեր, որից հետո գործը նշանակվել է դատաքննության, և Մուսաննա Հարությունյանը գրկված չի եղել դատարանում իր իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով, սակայն ոչ Մուսաննա Հարությունյանը, ոչ վերջինիս ներկայացուցիչը չեն ներկայացել դատական նիստերին, որպիսի հանգամանքը հիմնավորվում է նաև գործի նյութերում առկա դատական նիստերի արձանագրություններով: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի կողմից Մուսաննա Հարությունյանին բավարար հնարավորություն է ընձեռվել սույն գործով իր դատավարական իրավունքներն իրականացնելու, այդ թվում նաև՝ փոփոխված հայցապահանջի վերաբերյալ իր առարկություններն ու դիրքորոշումը հայտնելու հնարավորություն:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ գործը դատաքննության նշանակելու մասին Մուսաննա Հարությունյանին չձանուցելը, ինչպես նաև հիշյալ որոշումը չողարկելը որևէ կերպ չի խախտում Մուսաննա Հարությունյանի դատավարական իրավունքը, առավել ևս, որ գործը դատաքննության նշանակելու մասին որոշման օրինակն այդուհանդերձ օրենքով սահմանված կարգով հանձնվել է Մուսաննա Հարությունյանի ներկայացուցչի Արման Ապիտոնյանին, և վերջինս պատշաճ կերպով ծանուցվել է դատաքննության օրվա և ժամանակի մասին:

Վերոնշյալ վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վերոնշյալ իրավանորմերից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է և վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը որոշում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը ճիշտ եզրահանգման չի եկել վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ հետևյալ պատճառաբանությամբ.

Ի թիվս այլ հիմքերի՝ վերաքննիչ բողոքում որպես Դատարանի վճիռը բեկանելու հիմք նշված է նաև այն հանգամանքը, որ Դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149^օ-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, քանի որ 04.11.2013 թվականին նշանակվելով նախնական դատական նիստ՝ նույն օրն անցել է դատաքննության և ավարտել է գործի քննությունը այն պարագայում, երբ պատասխանողը ներկա չի գտնվել դատական նիստին, հետևաբար Վերաքննիչ դատարանը պետք է ստուգեր Դատարանի վերոնշյալ գործողության իրավաչափությունը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ սույն գործով կայացված գործն ըստ

էության լուծող դատական ակտը մեկ անգամ արդեն իսկ բողոքարկվել է վերաքննության կարգով և բեկանվել է վերադաս դատական ատյանի կողմից, իսկ տվյալ պարագայում բողոքարկվել է բեկանված մասով գործի նոր քննության ընթացքում կայացած դատական ակտը, ընդ որում, բեկանված մասով գործը Դատարանում վարույթ է ընդունվել 23.09.2013 թվականին «Քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ» (հատոր 2-րդ, գ.թ. 48), անդրադարձել և գնահատական է տվել սույն գործի նախորդ քննության ընթացքում դատարանի գործողություններին՝ 23.11.2012, 15.01.2013, 21.02.2013 և 21.02.2013 թվականներին կայացած դատական նիստերի կապակցությամբ այն դեպքում, երբ դրանց վերաբերյալ որևէ փաստարկ առկա չի եղել վերաքննիչ բողոքում, բացի այդ, նշված գործողությունները վերոնշյալ հիմնավորումներով որևէ կերպ չէին կարող հանդիսանալ վերաքննության առարկա և պայմանավորել բողոքարկվող դատական ակտի իրավաչափությունը:

Միաժամանակ սույն գործով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը 04.11.2013 թվականին կայացած դատական նիստին արձանագրային որոշմամբ անցել է դատաքննության փուլ և ավարտել է այն՝ անտեսելով այն հանգամանքը, որ պատասխանողը ներկա չի գտնվել տվյալ դատական նիստին և չի ծանուցվել դատաքննության փուլին անցնելու վերաբերյալ, մասնավորապես՝ գործում առկա չէ գործը դատաքննության նշանակելու մասին առանձին դատական ակտի ձևով կայացված որոշում և այն պատասխանողին ուղարկելու վերաբերյալ ապացույց:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁹-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, սահմանափակել է կողմի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, որպիսի դատավարական խախտումն ազդել է գործի ելքի վրա: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված դատավարական խախտումը, Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին, ապա կողմի դատավարական իրավունքի սահմանափակման պարագայում Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում դրանց անդրադառնալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

սության դատարանի (դատավոր՝ Մ. Հարթենյան) (այսուհետ՝ Դատարան) 14.02.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է Կազմակերպությունից հոգուտ Ընկերության բռնագանձել 63.322.540 ՀՀ դրամ՝ որպես ի պահ հանձնված ապրանքի արժեքը: Հայցը՝ 18.07.2008 թվականից մինչև 18.01.2010 թվականը հաշվեգրված 11.427.895,8 ՀՀ դրամ տոկոսի գումարի և 18.01.2010 թվականից մինչև պարտավորության կատարման օրը 63.322.540 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսի հետագա հաշվեգրման մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.06.2014 թվականի որոշմամբ Վարչամ Ղարիբյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.02.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարչամ Ղարիբյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 109-րդ և 219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցի առարկան ի պահ հանձնված ապրանքների, այսինքն՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով վերադարձման ենթակա ապրանքների արժեքի բռնագանձման պահանջն է, որը նույն դատարանի կողմից բավարարվել է, հետևաբար նույն գործողության համար ներկայացվել է կրկնակի պատասխանատվության պահանջ՝ մի դեպքում գույքի, մյուս դեպքում՝ գումարի տեսքով, մինչդեռ կրկնակի պատասխանատվությունն օրենքով արգելվում է:

Վերաքննիչ դատարանը, հակասելով ինքն իրեն, մի պարագայում նշել է, որ բողոք բերող կողմը խնդրել է կարճել գործի վարույթը կամ մերժել հայցը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ, մյուս պարագայում նշել է, որ բողոք բերողի պահանջը տարանջատված չի եղել «կամ» շաղկապով, որպիսի պարագայում բանավոր կարգով ճշտել է արդեն իսկ վարույթ ընդունված բողոքի պահանջը և եզրահանգումներ է արել միայն գործի վարույթի կարճման վերաբերյալ պահանջի մասով, արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի դրույթները, արհեստականորեն նեղացրել է բողոքի պահանջները, ինչը ազդել է գործի ելքի վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սույն գործի շրջանակներում Դատարանին բացի թիվ ԵԱԴԴ/1000/02/08 քաղաքացիական գործում առկա ապացույցներից՝ հաշիվ-ապրանքագրերից, որևէ այլ ապացույց չի ներկայացվել: Գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե որքան է կազմում ի պահ հանձնված ապրանքների արժեքը՝ հայցապահանջը բավարարելու օրվա դրությամբ. ինչպես թիվ ԵԱԴԴ/1000/02/08, այնպես էլ թիվ ԵԱԴԴ/1617/02/09 քաղաքացիական գործերի քննության ընթացքում ի պահ հանձնված ապրանքների արժեքները չեն որոշվել: Դատարանը որպես հիմք՝ ընդունել է 2004-2008 թվականների արժեքները և հաստատված է համարել, որ Ընկերությունը 63 միլիոն ՀՀ դրամի չափով կրել է վնաս, որը ենթակա է հատուցման Կազմակերպության կողմից: Դատարանին չեն ներկայացվել նաև նշված ապրանքների ձեռքբերման փաստաթղթերը և որակի հավաստագրերը, որտեղ արտացոլված կլինեին ապրանքների պիտանիության ժամկետները, ինչը հնարավորություն կընձեռներ որոշել տվյալ ապրանքների՝ պահանջը ներկայացնելու օրվա՝ 19.11.2009 թվականի դրությամբ

շուկայական արժեքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվոր և պատասխանող ընկերությունները կառավարվում են մեկ անձի կողմից. թե՛ Ընկերության սեփականատերը, և թե՛ Կազմակերպության 70 տոկոս բաժնեմասի սեփականատերը հանդիսանում է նույն անձը՝ Մանվել Ղարիբյանը: Նման պայմաններում սույն վեճն արհեստական բնույթ է կրում, քանի որ Ընկերության նպատակը Կազմակերպության 30 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակցին՝ սույն գործով երրորդ անձին վնաս պատճառելն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.06.2014 թվականի որոշումը և քաղաքացիական գործի վարույթը կարճել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Թիվ ԵԱԴԴ-1000/02/08 քաղաքացիական գործով հայցի հիմքերն ու առարկան տարբերվում են թիվ ԵԱԴԴ-1617/02/09 քաղաքացիական գործի հայցի հիմքերից ու առարկայից ինչպես ներկայացված պահանջներով, այնպես էլ հայցի հիմքում դրված փաստերով, ուստի առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիական գործի վարույթը կարճելու հիմքը:

Վերաքննիչ դատարանը գործը քննել է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ հաշվի առնելով բողոքաբերի դիրքորոշումը բողոքում ներկայացված պահանջների վերաբերյալ, ուստի դատարանը թույլ չի տվել բողոքաբերի իրավունքների խախտում, քանի որ այն դեպքում, երբ բողոքաբերը դատարանին հայտնում է, որ չի պնդում վերաքննիչ բողոքում բերված պահանջները և ցանկանում է որպեսզի բողոքը քննվի միայն մեկ պահանջով, ապա վերանում է վերաքննիչ բողոքը չպնդած պահանջի հիմքով քննելու անհրաժեշտությունը:

Վարչամ Ղարիբյանը դիմում է ներկայացրել Կազմակերպության տնօրենին՝ Կազմակերպությունից դուրս գալու մասին, ուստի տվյալ դեպքում սույն քաղաքացիական գործով կայացվող դատական ակտը չի կարող անդրադառնալ նրա իրավունքներին և պարտականություններին, քանի որ վերջինս այլևս չի հանդիսանում Կազմակերպության մասնակից:

3. Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վարչամ Ղարիբյանի անունից 19.03.2014 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքում Դատարանի վճիռը բողոքարկվել է հետևյալ հիմքերի սահմաններում.

ա) Դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, այն է՝ Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ նույն անձանց միջև նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ.

բ) Դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի խախտում, այն է՝ վնասի չափը որոշվում է տվյալ պահին առկա շուկայական գներով, մինչդեռ Դատարանը վեճը լուծելիս հիմք է ընդունել պահատվության պայմանագրի կնքման ժամանակ ի պահ հանձնված ապրանքների արժեքը՝ 2004-2007 թվականների գներով.

գ) Դատարանի կողմից թույլ է տրվել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի խախտում, մասնավորապես՝ Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերության կողմից չի ներկայացվել որևէ ապացույց՝

ապրանքների պիտանիության ժամկետների, ինչպես նաև դրանց՝ պահանջի ներկայացման օրվա դրությամբ շուկայական գների վերաբերյալ:

Վարչամ Ղարիբյանի բողոքի խնդրամատու նշվել է հետևյալը. «Սույն վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ: Բեկանել Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.02.2014 թվականի թիվ ԵԱԴԴ/1617/02/09 քաղաքացիական գործով կայացված վճիռը և այն փոփոխել:

ա) բողոքի առաջին հիմքում ընկած հիմնավորումների պարագայում՝ կարճել քաղաքացիական գործի վարույթը:

բ) հայցը մերժել բողոքի երկրորդ հիմքում նշված հիմնավորմամբ՝ անհիմն լինելու կապակցությամբ:

գ) գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության» (հատոր 5-րդ, գ.թ. 3-8):

2) 12.06.2014 թվականին կայացած դատական նիստի ընթացքում Վերաքննիչ դատարանի դատական կազմի նախագահողը փորձել է հստակեցնել բողոք բերած անձի դիրքորոշումը վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջների վերաբերյալ: Բողոք բերած անձի ներկայացուցիչը հայտնել է, որ գտնում է, որ գործի վարույթը կամ պետք է կարճվի կամ հայցը պետք է մերժվի: Ի պատասխան նախագահողի այն հարցադրմանը, թե որն է բողոք բերած անձի վերջնական պահանջը՝ ներկայացուցիչը նշել է «կարճել» (հիմք՝ դատական նիստերի արձանագրությունների կրիչը, հատոր 5-րդ, գ.թ. 84):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք վերաքննիչ բողոք բերող անձի կողմից վերաքննիչ բողոքում մի քանի հիմքեր և մի քանի պահանջներ ներկայացնելու պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից այդ հիմքերից ու պահանջներից միայն մեկին իր որոշմամբ անդրադառնալը չի հանդիսանում արդարադատության մատչելիության սկզբունքի խախտում և չի սահմանափակում անձի՝ օրենսդրությամբ երաշխավորված բողոքարկման իրավունքի իրացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությանը՝ արձանագրելով, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ

բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ (յո՛ւն, Համայնակ Ոսկանյանն ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի թիվ ԵԷԴ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը, հարկ է համարում հավելել, որ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու պահանջը ոչ միայն կոչված է ապահովել վերաքննիչ բողոքի արդյունավետ քննությունը, այլև՝ երաշխավորել անձի վերաքննիչ բողոքարկման իրավունքի լիարժեք իրականացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

4) մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Վկայակոչված հոդվածով ամրագրված են գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում Վերաքննիչ դատարանի կիրառման ենթակա լիազորությունները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ թվարկված լիազորությունների կիրառումը պետք է պայմանավորված լինի բացառապես վերաքննիչ բողոքում շարադրված հիմքերի և հիմնավորումների քննարկման և դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կայացված եզրահանգումներով: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր լիազորություններից օգտվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատավարական նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է նաև վերաքննության փուլում տնօրինչականության սկզբունքի դրսևորման առանձնահատկություններին՝ նշելով, որ վերաքննիչ բողոքի հիմքերը կարող են փոփոխվել և/կամ

լրացվել բացառապես վերաքննության հարուցման փուլում՝ մինչև բողոքարկման իրավունքի իրացման ժամկետը լրանալը (տե՛ս, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ալպակի» ՍՊԸ-ի թիվ ՍԳՅ/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճարբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ նման սահմանափակումը վերաբերում է նաև վերաքննիչ բողոքի պահանջին: Վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջը ևս կարող է փոփոխվել բացառապես վերաքննության հարուցման փուլում, սակայն նման փոփոխությունն անթույլատրելի է վերաքննիչ վարույթի հարուցումից՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ բողոք բերող անձի՝ վերաքննիչ բողոքում ներկայացված երեք պահանջներն առանց «կամ» շաղկապի օբյեկտիվորեն անհամատեղելի են, իսկ յիստի ընթացքում բողոք բերող անձի դիրքորոշումը պարզելու նպատակով վերջինիս ներկայացուցչին ուղղված հարցերի արդյունքում ներկայացուցիչը պնդել է միայն վճիռը բեկանելու և գործի վարույթը կարճելու մասին դատական ակտ կայացնելու պահանջը, հետևաբար վերաքննիչ բողոքը քննության է առել միայն այդ պահանջին վերաբերող հիմքի շրջանակներում և հանգել է այն եզրակացության, որ թիվ ԵԱԴԴ/1000/02/08 և թիվ ԵԱԴԴ/1617/02/09 քաղաքացիական գործերով տարբեր են ինչպես հայցի առարկան, այնպես էլ հայցի հիմքը, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմաններն առկա չեն:

Մինչդեռ, Վճարբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, որը կաշկանդված է հայցապահանջով և պարտավոր է գործը քննել ու լուծել ներկայացված պահանջի շրջանակներում, Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով բողոքի հիմքերով, քննության է առնում դրանից յուրաքանչյուրի հիմնավորվածության հարցը՝ համապատասխանաբար կիրառելով օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորություններից որևէ մեկը: Հետևաբար բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում մի քանի պահանջների միաժամանակյա ներկայացումը որևէ կերպ չի կարող խոչընդոտել վերաքննության բնականոն ընթացքը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական ակտի վերանայումը կոնկրետ պահանջի շրջանակներում իրականացնելու սահմանափակում գործող օրենսդրությամբ նախատեսված չէ: Նման պայմաններում սույն գործով Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «բողոք բերող անձի՝ վերաքննիչ բողոքում ներկայացված երեք պահանջներն առանց «կամ» շաղկապի օբյեկտիվորեն անհամատեղելի են», անհիմն է: Միաժամանակ Վճարբեկ դատարանը ոչ իրավաչափ է համարում նաև արդեն իսկ հարուցված վերաքննության վարույթում Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի հստակեցմանն ուղղված դատավարական գործողությունների իրականացումը՝ հաշվի առնելով այն, որ նման դատավարական կարգ գործող օրենսդրությամբ նախատեսված չէ, ինչպես նաև այն, որ վերաքննիչ բողոք բերող անձը համապատասխան գործողությունն իրականացնելու հնարավորություն ունի միայն վերաքննության հարուցման փուլում:

Նման պայմաններում Վճարբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննության առնել վերաքննիչ բողոքում ներկայացված բոլոր հիմքերը և եզրահանգումներ անել դրանցից յուրաքանչյուրի հիմնավորվածության վերաբերյալ՝ չսահմանափակվելով միայն գործի վարույթը կարճելու մասին դատական ակտ կայացնելու պահանջով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի հիմքում նշված մյուս փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ կողմի դատավարական իրավունքի վերը նշված տեսքով սահմանափակման արդյունքում այդ փաստարկները Վերաքննիչ դատարանում ներկայացված լինելով հանդերձ քննության առարկա չեն դարձվել, դրանց հնարավոր չի համարում անդրադառնալ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

4. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

5. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.11.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական **ԵԿԴ/1118/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1118/02/12**
Նախագահող դատավոր՝ **Կ. Զիլինգարյան**
Դատավորներ՝ **Ա. Պետրոսյան**
Ա. Խատատյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Բանկ**) ներկայացուցիչ Վահագն Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տաթևիկ Գալստյանի ընդդեմ **Բանկի**՝ կողմերի միջև 16.04.2010 թվականին կնքված թիվ 42 աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) 6.1 կետով սահմանված դրույթն անվավեր ճանաչելու և **Պայմանագիրն** անորոշ ժամկետով կնքված համարելու, **Բանկի** խորհրդի 10.04.2012 թվականին ընդունած որոշումը (այսուհետ՝ **Որոշում**) և **Բանկի** գործադիր տնօրեն Ն. Բակրբերգենովի 10.05.2012 թվականի թիվ 177-Ա հրամանը (այսուհետ՝ **Հրաման**) անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տաթևիկ Գալստյանը պահանջել է անվավեր ճանաչել **Պայմանագրի** 6.1 կետի դրույթը՝ **Պայմանագրի** գործողության ժամկետը մինչև 11.05.2012 թվականը սահմանելուն վերաբերող մատվ, և **Պայմանագիրը** համարել կնքված անորոշ ժամկետով, անվավեր ճանաչել **Պայմանագրի** ժամկետը չերկարաձգելու վերաբերյալ **Բանկի** խորհրդի որոշումը, անվավեր ճանաչել **Հրամանը** և վերականգնել նախկին

աշխատանքում՝ Բանկի գլխավոր հաշվապահի պաշտոնում, բռնագանձել միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 11.05.2012 թվականից:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավատույթյան դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 17.04.2013 թվականի վճռով հայցը մերժվել է, Տաթևիկ Գալստյանից բռնագանձվել է 500.000 ՀՀ դրամ՝ որպես Բանկին մատուցված իրավաբանական ծառայությունների դիմաց կրած ծախս:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.01.2014 թվականի որոշմամբ Տաթևիկ Գալստյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Որոշումը և Հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը բռնագանձելու պահանջների մերժմանը և դատական ծախսերի բաշխմանը վերաբերող մատվ Դատարանի 17.04.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ Տաթևիկ Գալստյանին վերաբերող մատվ անվավեր է ճանաչվել Որոշումը, անվավեր է ճանաչվել Պայմանագիրը 11.05.2012 թվականին լուծելու վերաբերյալ Հրամանը, Տաթևիկ Գալստյանը վերականգնվել է Բանկի գլխավոր հաշվապահի պաշտոնում և բռնագանձվել է միջին աշխատավարձ՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 11.05.2012 թվականից: Դատարանի 17.04.2013 թվականի վճիռը՝ Պայմանագրի 6.1 կետով սահմանված դրույթն անվավեր ճանաչելու և Պայմանագրին անորոշ ժամկետով կնքված համարելու պահանջները մերժելու մատվ, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Տաթևիկ Գալստյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21⁶-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, չի կիրառել սույն օրենքի 21¹⁰-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն փաստը, որ Բանկի խորհրդին են պատկանում գլխավոր հաշվապահի նշանակման և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման լիազորությունները: Մինչդեռ գլխավոր հաշվապահի լիազորությունների ոչ վաղաժամկետ դադարեցման լիազորությունը պատկանում է Բանկի գործադիր տնօրենին, այլ ոչ թե խորհրդին: Տվյալ դեպքում Տաթևիկ Գալստյանի հետ կնքված Պայմանագիրը եղել է ժամկետային, ժամկետի ավարտը հանդիսացել է 11.05.2012 թվականը, իսկ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ Հրամանը կայացվել է հենց այդ օրը՝ 11.05.2012 թվականին, երբ լրացել է աշխատանքային պայմանագրի ժամկետը, ուստի խորհրդի Որոշման անվավերությունը չի կարող հանգեցնել գործադիր տնօրենի հրամանի անվավերության, քանի որ Տաթևիկ Գալստյանի հետ կնքված Պայմանագիրը վաղաժամկետ չի լուծվել:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում

առկա ապացույցները, մասնավորապես՝ Բանկի խորհրդի կանոնակարգը՝ հաստատված Բանկի բաժնետերերի 22.04.2008 թվականի ընդհանուր ժողովի կողմից, որին պատշաճ իրավական գնահատական տալու դեպքում կեզրահանգեր, որ Բանկի խորհրդի առկա նիստերի քվորումը և քվեարկության արդյունքները որոշելիս հաշվի են առնվում նաև նիստից բացակայող խորհրդի անդամների գրավոր կարծիքները, որոնք պետք է ներկայացված լինեն մինչև խորհրդի նիստի սկիզբը:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման՝ Բանկի կանոնակարգի անտեսման արդյունքում Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման առ այն, որ Բանկի խորհրդի որևէ անդամ, որը ներկա չի գտնվում նիստին և չի օգտվում ինտերնետ կապի միջոցով հաղորդակցվելու հնարավորությունից, չի կարող համարվել այդ նիստի մասնակից:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաստատել է այն փաստը, որ գործում բացակայում է 17.04.2013 թվականի դատական նիստի արձանագրությունը և բեկանել է Դատարանի վճիռն ու փոփոխել, մինչդեռ Վճարել կատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքի առկայության պայմաններում դատական ակտը բեկանելը և այն փոփոխելը չի բխում արդարադատության արդյունավետության շահերից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 30.01.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 17.04.2013 թվականի վճիռն կամ մասնակիորեն՝ Հրամանն անվավեր ճանաչելու, հայցվորին նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու, Որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի 30.01.2014 թվականի որոշումը և այդ մասերով հայցը մերժել, մնացած մասով Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ, կամ մասնակի՝ Հրամանն անվավեր ճանաչելու, հայցվորին նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվարկված միջին աշխատավարձը հօգուտ հայցվորի բռնագանձելու և Որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և այդ մասով գործն ուղարկել Դատարան՝ նոր քննության՝ մնացած մասով Վերաքննիչ դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոք բերած անձի այն պնդումը, թե Վերաքննիչ դատարանը հաստատել է Բանկի խորհրդի նիստն առկա եղանակով հեռախոսակապի միջոցով անցկացված լինելու փաստը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Վերաքննիչ դատարանը որոշման պատճառաբանական մասում ոչ միայն ժխտել է Բանկի խորհրդի 10.04.2012 թվականի նիստի թիվ 2 արձանագրությունում նշված փաստի համապատասխանությունն իրականությանը, այլև նշել է, որ արձանագրությունը պարունակում է գրառում նիստը հեռախոսակապի միջոցով անցկացրած լինելու մասին, սակայն արձանագրության բովանդակությունից պարզ է, որ հեռախոսակապ չի կիրառվել: Ավելին, եթե անգամ հեռախոսակապ կիրառվել է, ապա դա հիմք չի տալիս Կուրմանովայի մասնակցության փաստն արձանագրելու համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Տաթևիկ Գալստյանի

վերաքննիչ բողոքը 17.04.2013 թվականին նշանակված դատական նիստի արձանագրության բացակայության հիմքով և բեկանել է Դատարանի 17.04.2013 թվականի վճիռը և մասնակիորեն բավարարել հայցը, քանի որ Դատարանի կողմից հետազոտված ապացույցները հնարավորություն են տվել կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գործում առկա են Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 03.07.2012, 24.07.2012, 12.10.2012, 01.11.2012, 21.11.2012, 03.12.2012, 13.12.2012, 18.01.2013, 31.01.2013, 12.02.2013, 28.02.2013, 02.04.2013 և 17.04.2013 թվականներին կայացած դատական նիստերի արձանագրությունների համակարգչային համառոտագրումները (հատոր 1-ին, գ.թ. 44, 53, 63, 65, 104, 106, 109, 113, 181, 197, 201, 203, 205):

2) Ըստ գործում առկա 17.04.2013 թվականի դատական նիստի արձանագրային համառոտագրման՝ բողոքարկված վճիռը հրապարակվել է այդ նիստում, ժամը 17:10-ին, սակայն նիստի ձայնային արձանագրությունը գործում առկա չէ: Գործի նյութերին կցված երեք լազերային կրիչներից ոչ մեկը չի պարունակում 17.04.2013 թվականի դատական նիստի ձայնային արձանագրությունը (հատոր 1-ին, գ.թ. 46):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

արդյո՞ք Վերաքննիչ դատարանը կարող է կիրառել դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը, եթե առկա է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, մասնավորապես՝ գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել է դատավարության ընթացքում դատական նիստի արձանագրության ունեցած դերին և նշանակությանը՝ ընդգծելով, որ դատական նիստի արձանագրությունը՝ որպես դատավարական գործողությունների կատարման բոլոր էական հանգամանքները հաստատող փաստաթուղթ, ունի կարևոր ապացուցողական նշանակություն: Մասնավորապես՝ դատավարության կողմերը կարող են հիմնավորել իրենց վերաքննիչ և վճռաբեկ բողոքները՝ հղում կատարելով դատական նիստերի արձանագրությանը, իսկ վերադաս ատյանի դատարանները դատական նիստերի արձանագրությունների միջոցով կարող են ստուգել ստորադաս դատարաններում գործի քննության օրինակակառուցությունը. արդյո՞ք ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը համապատասխանում է այն փաստերին, որոնք հաստատվել են դատաքննության ընթացքում կամ որևէ դատավարական գործողություն իրականացնելիս դատարանն արդյո՞ք պահպանել է սահմանված դատավարական կարգը:

Այսպիսով, դատական նիստի արձանագրությունն անձի դատական պաշտպանության իրավունքի և հատկապես՝ բողոքարկման իրավունքի իրացումն ապահովող կարևորագույն միջոցներից է, ինչով էլ պայմանավորված է դատական նիստի արձանագրության բացակայության դեպքում օրենսդրի կողմից դատական ակտի բեկանման պարտադիր պահանջի սահմանումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերում, ինչպես նաև դատական նիստերից դուրս առանձին դատավարական գործողություններ կատարելիս վարվում է արձանագրություն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով: Համառոտագրումը դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է միաժամանակ՝ համակարգչային եղանակով: Ձայնային արձանագրությունը գործի նյութերին կցվում է լազերային կրիչի վրա: Համառոտագրումը գործի նյութերին կցվում է թղթային կրիչի վրա՝ հավաստված դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ:

Վերը նշված իրավանքների փոխկապակցված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում դատական նիստի արձանագրումը ենթադրում է ձայնային արձանագրում՝ ամրագրված լազերային կրիչի վրա և համառոտագրում՝ արտատպված թղթի վրա: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ձայնային արձանագրումը ներկայումս հանդիսանում է դատական նիստի բոլոր տվյալների անընդմեջ արձանագրման հիմնական միջոցը, հետևաբար նաև դատավարության հրապարակայնության ապահովման միջոցը:

Ինչ վերաբերում է թղթային համառոտագրմանը, ապա վերջինս դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումների ամբողջություն է, որն ունի ուղղորդիչ բնույթ, հետևաբար առանց ձայնային արձանագրման այն չի կարող բավարար պատկեր ստեղծել դատական նիստի ընթացքի վերաբերյալ, չի կարող բավարար չափով ապահովել դատավարության հրապարակայնությունը և ծառայել որպես անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման երաշխիք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում լազերային կրիչի վրա ամրագրված ձայնային արձանագրման և համակարգչային համառոտագրման միաժամանակյա առկայությունը պարտադիր է յուրաքանչյուր դատական նիստով, և դրանցից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է դատական նիստի արձանագրության բացակայություն (*տե՛ս, Կարեն Սյրեխանյանն ընդդեմ Ջուլետյուս Սմբարյանի թիվ ԵՆՔԳ/2279/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վերահաստատելով իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

- 1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով.

2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին.

3) վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն.

4) վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

5) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Վճռի անվերապահ բեկանման հիմքերի վերոհիշյալ ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը քննարկվող հոդվածում առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատարանի վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և վճիռը բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Մեծան խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և պետք է գնահատվի որպես թույլ տրված խախտման հետևանք: Գործից դատական նիստի արձանագրության բացակայությունը սերտորեն կապված է գործերի քննության հրապարակայնության և կողմերի իրավահավասարության սկզբունքների խախտման հետ, իսկ նման խախտմամբ գործի քննության իրականացման արդյունքում կայացված դատական ակտն էլ չի կարող լինել օրինական և հիմնավորված: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված մյուս խախտումները ևս վերաբերում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված արդարադատության սկզբունքներին (օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարան, դատարանի օրինական կազմ, լաված լինելու իրավունք, դատավարության լեզու և այլն), ուստի դրանց առկայությունը կասկածի տակ է դնում ընդհանրապես արդարադատություն իրականացված լինելու կամ արդարադատությունը դատարանի կողմից իրականացված լինելու իրողությունը: Վերադաս առյանի կողմից նման խախտումների արձանագրումը *ipso facto* հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը՝ անկախ բողոքում բարձրացված նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ չկիրառման վերաբերյալ հիմքերի հիմնավոր լինելուց: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացվելու դեպքում: Շշված պատճառաբանությամբ էլ Վերաքննիչ դատարանի կողմից վճռի բեկանման անվերապահ որևէ հիմքի առկայությունը հաստատված լինելու դեպքում կիրառման է ենթակա դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործում առկա 17.04.2013 թվականի դատական նիստի արձանագրային համառոտագրումը վկայում է այն մասին, որ տվյալ դատական նիստի արձանագրությունը վարվել է ոչ թե պարզ թղթային եղանակով, այլ՝ համակարգչային ձայնագրման եղանակով, որպիսի պարագայում ձայնային արձանագրությունը պետք է գետնովեր էլեկտրոնային կրիչի վրա և կցվեր գործի

կյութերին, սակայն գործում այդպիսին առկա չէ (գործի կյութերին կցված երեք լազերային կրիչներից ոչ մեկը չի պարունակում 17.04.2013 թվականի դատական նիստի ձայնային արձանագրությունը), ինչը վճիռը բոլոր դեպքերում բեկանման ենթակա լինելու հիմք է: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ դատական ակտի բեկանման արդյունքում ենթակա է կիրառման դատական ակտը փոփոխելու Վերաքննիչ դատարանի լիազորությունը, և բեկանելով Դատարանի վճիռը՝ փոփոխել է այն:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանի կարծիքով գործում դատական նիստի արձանագրության բացակայության փաստը հաստատելու պարագայում Վերաքննիչ դատարանի կողմից ենթակա էր կիրառման դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված լիազորությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի երրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ինչ վերաբերում է կյութական և դատավարական իրավունքի այլ նորմերի խախտումների հետ կապված վճռաբեկ բողոք բերած անձի փաստարկներին, ապա բողոքի երրորդ հիմքի հիմնավոր լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը դրանց հնարավոր չի համարում անդրադառնալ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառարանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0976/02/08
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատիկյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0976/02/08
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|----------------------------------|-----------------|
| <i>նախագահությամբ</i> | Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ |
| <i>մասնակցությամբ դատավորներ</i> | Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ |
| | Վ. ԱԲԵԼՅԱՆԻ |
| | Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ |
| | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ |
| | Մ. ԴԻՄԵՅԱՆԻ |
| | Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ |
| | Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ |
| | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |

2014 թվականի դեկտեմբերի 26-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Գևորգ Ալեքյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Գևորգ Ալեքյանի ընդդեմ Վերգուշ, Արայիկ Բոզանյանների, Ջուլիետա Հովհաննիսյանի՝
գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու
պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գևորգ Ալեքյանը պահանջել է Վերգուշ, Արայիկ
Բոզանյաններից, Ջուլիետա Հովհաննիսյանից բռնագանձել 4.314.356 ՀՀ դրամ և
բռնագանձումը տարածել գրավադրված գույքի վրա:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի (դատավոր՝ Մ. Հարթեկյան) (այսուհետ՝ Դատարան) 07.06.2013 թվականի
վճռով Գևորգ Ալեքյանի հայցն ընդդեմ Ջուլիետա Հովհաննիսյանի՝ գրավադրված գույքի
վրա բռնագանձում տարածելու պահանջի մասով, մերժվել է, իսկ գործի վարույթը՝ ըստ
Գևորգ Ալեքյանի հայցի ընդդեմ Վերգուշ և Արայիկ Բոզանյանների՝ գրավադրված գույքի
վրա բռնագանձում տարածելու պահանջի մասով՝ կարճվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
07.02.2014 թվականի որոշմամբ Գևորգ Ալեքյանի՝ Դատարանի վճռի հայցը մերժելու մասի

դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Ալեքյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ կետը, 132-րդ հոդվածի 1-ին կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել և չի անդրադարձել այն հանգամանքին, որ Դատարանը, քննության առարկա չդարձնելով Գևորգ Ալեքյանի կողմից ներկայացված գումարի բռնագանձման վերաբերյալ հայցապահանջը, եզրահանգել է, որ առկա չէ փոխառության գումարի և դրան հաշվեգրված տոկոսագումարի բռնագանձման պահանջով բավարարված հայցապահանջ, ինչպես նաև նշված գումարների բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած չկատարված դատական ակտ՝ ի կատարումն որի՝ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջը կլիներ իրավաչափ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը չի գնահատել գործում առկա այն ապացույցները, որոնցից հետևում է, որ Ջուլիետա Հովհաննիսյանն ընդունել է պարտապան Վերգուշ Բոզանյանի ժառանգությունը՝ իր հաշվին վճարելով ժառանգատուի պարտքերը, և հետևաբար պարտավոր է միանձնյա կատարել պայմանագրով նախատեսված՝ գրավով ապահովված պարտավորությունը: Ավելին, Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում անհիմն կերպով դրել է այն հանգամանքը, որ Ջուլիետա Հովհաննիսյանը փոխառության պայմանագրի կողմ չէ և չի ընդունել ժառանգությունը, և եզրահանգել է, որ վերջինս հիմնական պարտավորությունից բխող իրավահարաբերության սուբյեկտ չէ, հետևաբար և չի կարող լինել պատշաճ պատասխանող:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սույն քաղաքացիական գործը հարուցվել է Գևորգ Ալեքյանի հայցադիմումի հիման վրա, որով վերջինս պահանջել է. «... գրավ դրված առարկա հանդիսացող Երևանի Մարգարյան փողոցի 2-րդ նրբանցքի 4-րդ շենքի թիվ 47 բնակարանի նկատմամբ բռնագանձում տարածել՝ բռնագանձելով 9.470 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, միաժամանակ 01.02.2007 թվականից բռնագանձել նշված գումարի չստացված տոկոսները՝ մինչև վճռի կատարումը» (հատոր 1-ին, գ.թ. 3):

2) Գործի քննության ընթացքում Գևորգ Ալեքյանը Դատարան է ներկայացրել

հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ դիմում, որով խնդրել է. «... փոփոխել հայցի առարկան՝ գրավ դրված առարկա հանդիսացող բնակարանի վրա բռնագանձում տարածելով և բռնագանձելով 4.314.356 ՀՀ դրամ» (հատոր 1-ին, գ.թ. 115-116), ինչն ընդունվել է Դատարանի կողմից (հատոր 2-րդ, գ.թ. 7):

3) Դատարանի 07.06.2013 թվականի վճռի եզրափակիչ մասում նշվել է. «Գևորգ Ալեքյանի հայցն ընդդեմ Ջուլիետա Հովհաննիսյանի՝ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, մերժել: Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Գևորգ Ալեքյանի ընդդեմ Վերգուշ Բոզակյանի և Արայիկ Բոզակյանի՝ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասով, կարճել» (հատոր 2-րդ, գ.թ. 102):

4) Դատարանի վճռի՝ հայցը մերժելու մասի դեմ Գևորգ Ալեքյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքում նշվել է. «դատարանի կողմից նշված «... առկա է փոխառության գումարի և դրան հաշվեգրված տոկոսագումարի բռնագանձման պահանջով բավարարված հայցապահանջ, նշված գումարների բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մտած չկատարված դատական ակտ՝ ի կատարումն որի՝ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջը կլիներ իրավաչափ» փաստարկն այն բանի արդյունք է, որ Դատարանն առհասարակ քննության առարկա չի դարձրել սույն գործով ներկայացված գումարի բռնագանձման վերաբերյալ հայցապահանջը» (հատոր 3-րդ, գ.թ. 9):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության, և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե մի քանի հայցապահանջների հիման վրա հարուցված քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իրավասու է արդյո՞ք որոշել հայցապահանջի բավարարման կամ մերժման ենթակա լինելու հարցն այն պայմաններում, երբ առաջին ատյանի դատարանն ընդհանրապես քննության առարկա չի դարձրել այդ հայցապահանջը և գործի քննության արդյունքում կայացված վճռով չի անդրադարձել դրան:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցադիմումը ներկայացվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները:

Մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ պարբերության համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ յուրաքանչյուր հայցապահանջը բավարարելու կամ մերժելու, ինչպես նաև նշում՝ վճիռը բողոքարկելու ժամկետի և կարգի մասին:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարաններում քաղաքացիական գործը հարուցվում է միմիայն ներկայացված հայցի (դիմումի) հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Այսինքն՝ մի քանի հայցապահանջների հիման վրա հարուցված գործի քննության արդյունքում դատարանը պարտավոր է անդրադառնալ բոլոր հայցապահանջներին և վճիռ կայացնել միայն այդ պահանջների շրջանակներում: Այդ իսկ պատճառով օրենսդրի կողմից ամրագրվել է, որ հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործով դատարանի վճիռը պետք է պարունակի եզրահանգումներ յուրաքանչյուր հայցապահանջի բավարարման կամ մերժման մասին: Ընդ որում, հայց ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր հայցապահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով (*տե՛ս*, ՀՀ *Էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՄԳ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր գործով ներկայացված հայցապահանջի շրջանակը ոչ միայն էական նշանակություն ունի առաջին ատյանի դատարանում գործի ըստ էության քննության և լուծման համար, այլև՝ կարևորվում է դատական ակտերի վերանայման փուլերում: Մասնավորապես՝ վերաքննիչ դատարանի գործունեությունն ուղղված է վերաքննիչ բողոքի քննության արդյունքում առաջին ատյանի դատական ակտը վերանայելուն, որը ներառում է ստորադաս դատարանի գործողությունները (անգործությունը) ստուգելը: Հետևաբար այն դեպքում,

երբ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում առաջին ատյանի դատական ակտը վերանայելիս հայտնաբերում է, որ գործով ներկայացված որևէ հայցապահանջ ըստ էության չի քննվել և լուծվել առաջին ատյանի դատարանի կողմից, պարտավոր է արձանագրել համապատասխան խախտումը և գործն ուղարկել նոր քննության: Վերաքննիչ դատարանը, սակայն, առաջին ատյանի դատարանի կողմից չքննված հայցապահանջը քննելու իրավունք չունի: Մնան սահմանափակումը պայմանավորված է ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի առանձնահատկություններով: Մասնավորապես՝ ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննության օբյեկտը ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտն է, այլ ոչ թե՛ գործն ընդհանրապես, հետևաբար, եթե ստորադաս դատարանը որևէ պահանջով վերջնական եզրահանգում չի կատարել, վերաքննության օբյեկտը բացակայում է: Մնան սահմանափակումը պայմանավորված է նաև վերաքննության սահմաններով: Գործող իրավակարգավորման պայմաններում Վերաքննիչ դատարանը կաշկանդված է առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերով ու հետազոտված ապացույցներով և նոր փաստ հաստատելու կամ նոր ապացույց ընդունելու լիազորություն ունի միայն բացառիկ դեպքերում:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Շույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Մնան դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Շույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, վճռի եզրափակիչ մասում նշել է. «Գևորգ Ալեքյանի հայցն ընդդեմ Ջուլիետա Հովհաննիսյանի՝ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, մերժել»: Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվորը դատարանին չի ներկայացրել, որևէ ապացույց այն մասին, որ պարտատեր Գառնիկ Ալեքյանի գրավով ապահովված պարտավորությունները կատարված չեն կամ կատարված են ոչ պատշաճ, ինչպես նաև առկա չէ փոխառության գումարի և դրան հաշվեգրված տոկոսագումարի բռնագանձման պահանջով բավարարված հայցապահանջ, նշված գումարների բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած, չկատարված դատական ակտ՝ ի կատարումն որի՝

գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջը կլիներ իրավաչափ:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ հայցվորը խնդրել է Ջուլիետա Հովհաննիսյանից բռնագանձել Վերգուշ Բոզանյանին փոխառությամբ տրված և դրան հաշվեգրված տոկոսների գումարը՝ 4.314.356 ՀՀ դրամի չափով, և բռնագանձումը տարածել 25.10.2005 թվականին կնքված փոխառության և անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով գրավադրված գույքի նրա բաժնետնասի վրա, Գևորգ Ալեքյանի վերաքննիչ բողոքը մերժել է և դատական ակտը թողել օրինական ուժի մեջ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ փոխառության գումարը վերադարձնելու հիմնական պարտավորություն կրող անձը Վերգուշ Բոզանյանն է, որը մահացել է, իսկ Ջուլիետա Հովհաննիսյանին՝ նրա ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին հայցապահանջ հայցվորը սույն գործով չի ներկայացրել, հանգել է այն հետևության, որ Դատարանն իրավաչափ է մերժել հայցը, քանի որ հայցվորը խնդրել է գումարն ամբողջությամբ բռնագանձել Ջուլիետա Հովհաննիսյանից:

Վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով հայցի առարկան 4.314.356 ՀՀ դրամի բռնագանձման և բռնագանձումը գրավադրված առարկայի՝ բնակարանի վրա տարածելու պահանջներն են: Մինչդեռ Դատարանը քննության է առել և հայցը մերժել է միայն գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասով:

Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացրած Գևորգ Ալեքյանը բողոքում՝ որպես դատավարական իրավունքի նորմի խախտում, վկայակոչել է այն փաստարկը, որ Դատարանը քննության առարկա չի դարձրել սույն գործով ներկայացրած գումարի բռնագանձման վերաբերյալ հայցապահանջը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Գևորգ Ալեքյանի վերաքննիչ բողոքը, իր որոշմամբ նշել է հետևյալը. «(...) Հայցվորը խնդրել է Ջուլիետա Հովհաննիսյանից բռնագանձել Վերգուշ Բոզանյանին փոխառությամբ տրված և դրան հաշվեգրված տոկոսների գումարը՝ 4.314.356 ՀՀ դրամի չափով, և բռնագանձումը տարածել 25.10.2005 թվականին կնքված փոխառության և անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով գրավադրված գույքի նրա բաժնետնասի վրա (...)»:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ սույն գործով Գևորգ Ալեքյանը ներկայացրել է երկու, այն է՝ գումարի բռնագանձման և այդ բռնագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու հայցապահանջներ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ ներկայացված հայցապահանջներից մեկը՝ գումարի բռնագանձման պահանջը, Դատարանի կողմից քննության առարկա չի դարձվել, ըստ էության քննել է նշված հայցապահանջը և իր որոշմամբ եզրահանգել դրա՝ մերժման ենթակա լինելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ պարագայում Վերաքննիչ դատարանը վերը նշված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ եզրահանգումներ անելու այն հայցապահանջի մերժման կամ բավարարման ենթակա լինելու վերաբերյալ, որը Դատարանի կողմից քննության առարկա չէր դարձվել: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն առարկայագուրկ են՝ նկատի ունենալով վերաքննության օբյեկտի բացակայությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ և ենթակա է բեկանման, իսկ գործը՝ գումարի բռնագանձման պահանջի մասով, անհրաժեշտ է ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վճռաբեկ դատարանը, միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով ներկայացված՝

գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջն անմիջականորեն բխում է գումարի բռնագանձման պահանջից, գտնում է, որ գումարի բռնագանձման պահանջի նոր քննության պայմաններում այդ պահանջը ևս ենթակա է նոր քննության:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոք բերած անձի՝ նյութական իրավունքի նորմի խախտման վերաբերյալ փաստարկներին, ապա, հաշվի առնելով, որ նշված փաստարկները կապված են Դատարանի կողմից չքննված հայցապահանջի հետ, Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում դրանց անդրադառնալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.02.2014 թվականի որոշումը և գործը՝ ըստ հայցի Գևորգ Ալեքյանի ընդդեմ Ջուլիետա Հովհաննիսյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու պահանջների մասով, ուղարկել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԱՐԱԴ-2/0169/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ-2/0169/02/11

Նախագահող դատավոր՝

Ա. Խառատյան

Դատավորներ՝

Ա. Պետրոսյան

Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նիկալ Շահվերդյանի ներկայացուցիչ Սեյրան Ազիզյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Անժելա Գևորգյանի դիմումի ընդդեմ Նիկալ Շահվերդյանի՝ վճռի կատարման շրջադարձի պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անժելա Գևորգյանը հայտնել է, որ ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 22.06.2007 թվականի թիվ 2-77-2007 օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա գրանցվել է Նիկալ Շահվերդյանի՝ Աշտարակի Նարեկ 2 թաղամասի թիվ 17բ հասցեում գտնվող բնակարանի (քոթեջի) նկատմամբ սեփականության իրավունքը: 22.11.2010 թվականին վերոհիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել երրորդ անձինք՝ Աշոտ, Արմեն և Անժելա Գևորգյանները: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.01.2011 թվականի որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 22.06.2007 թվականի թիվ 2-77-2007 վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության: Գործի նոր քննության արդյունքում ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 09.11.2011 թվականի թիվ ԱՐԱԴ-2/0169/02/11 վճռով Նիկալ Շահվերդյանի հայցն ընդդեմ Սերգեյ, Ռայա, Աշոտ, Արմեն և Անժելա Գևորգյանների՝ բնակարանի առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու և անշարժ

գույքի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, մերժվել է, և վճիռը ստացել է օրինական ուժ. ելնելով վերոգրյալից պահանջել է բավարարել դիմումը և կատարել վճռի կատարման շրջադարձ, այն է՝ վերացնել Նիկալ Շահվերդյանի և նրա ընտանիքի անդամների անվամբ կատարված Աշտարակի Նարեկ 2-րդ թաղամասի թիվ 17բ հասցեում գտնվող բնակարանի (քոթեջի) սեփականության իրավունքի գրանցումը և վերոհիշյալ բնակարանը սեփականության իրավունքով վերադարձնել Սերգեյ, Ռայա, Աշոտ, Արմեն և Անժելա Գևորգյաններին:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 19.12.2013 թվականի որոշմամբ դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.04.2014 թվականի որոշմամբ Անժելա Գևորգյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 19.12.2013 թվականի որոշումը բեկանվել է և փոփոխվել՝ Անժելա Գևորգյանի դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նիկալ Շահվերդյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 53-րդ, 130-132-րդ, 140-րդ, 207-րդ, 213-րդ հոդվածները և կիրառել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ և 27-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ կետի ենթակետով, 04.02.2014 թվականին իրավացիորեն վերադարձրել է Անժելա Գևորգյանի վերաքննիչ բողոքը: Այնուհետև, առանց որևէ իրավական հիմքի, Անժելա Գևորգյանի կողմից ներկայացված «դիմումն» ընդունվում է վարույթ՝ հաշվի չառնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, ինչպես նաև հաշվի չի առել, որ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.04.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.12.2013 թվականի որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 04.02.2014 որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Դատարանի որոշումը իրապարակվել է 19.12.2013 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված մեկամսյա

ժամկետը լրանալուց հետո և չի պարունակում ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն (հատոր 7-րդ, գ.թ. 17):

2) Անժելա Գևորգյանը 12.02.2014 թվականի դիմումով և դրան կից ներկայացված միջնորդությամբ Վերաքննիչ դատարանին միջնորդել է դատական ակտի բողոքարկման ժամկետի բաց թողումը հարգելի համարել, վերականգնել այն և վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ (հատոր 7-րդ, գ.թ. 44, 47-48):

3) Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այն վերականգնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» 12.02.2014 թվականի որոշմամբ Անժելա Գևորգյանի միջնորդությունը բավարարվել է և Դատարանի «Վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննության առնելու մասին» 19.12.2013 թվականի որոշման դեմ Անժելա Գևորգյանի կողմից բերված վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ (հատոր 7-րդ, գ.թ. 31-32):

4) Սույն գործում առկա չէ 12.02.2014 թվականի դիմումին և դրան կից միջնորդությանը Անժելա Գևորգյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությանից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի հետաձգված բողոքարկման հարցին, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու պարագայում այն կրկին ներկայացնելու համար անհրաժեշտ հիմքերի հարցին, ինչպես նաև բողոքը ներկայացնելու ձևին, կարգին և բովանդակությանը:

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Միջանկյալ դատական ակտը կարող է բողոքարկվել այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմաններում վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաքննիչ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացրած որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ վարույթը կարճելու և կասեցնելու, ինչպես նաև դատական տուգանք կիրառելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը:

Գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

Վերոհիշյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական և հետաձգված կարգեր: Անմիջական բողոքարկման են ենթակա այն միջանկյալ դատական ակտերը, որոնց չբողոքարկման արդյունքում օբյեկտիվ արգելքներ են առաջանում գործի հետագա քննության համար, իսկ դրանց բողոքարկման անհնարինությունը դատական ակտի կայացման չարդարացված ձգձգումների և քաղաքացու իրավունքների խախտման է հանգեցնում, որոնց հետագա դատական պաշտպանությունն ապագայում չի կարող ապահովվել կամ չի կարող հանգեցնել արդյունավետ վերականգնման: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտերի համար սահմանել է անմիջական բողոքարկման կարգ: Իսկ նշված դրույթներով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերի համար օրենսդիրը սահմանել է «հետաձգված բողոքարկման» կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցանկացած դատավարական գործողություն, այդ թվում՝ նաև՝ տվյալ միջանկյալ դատական ակտի բողոքարկումը, կարող է կատարվել միայն այն կարգով, որը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Հետևաբար, հաշվի առնելով, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար սահմանել է անմիջական բողոքարկման կարգ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ դրույթով նախատեսված միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն անմիջական բողոքարկման կարգով: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքն իրացնող սուբյեկտներն իրավական պաշտպանության միջոցներից, այդ թվում՝ ընդդեմ միջանկյալ դատական ակտերի, պետք է օգտվեն բարեխղճորեն: Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցից չօգտվելու դեպքում դատավարության մասնակիցը չի կարող դիմել այնպիսի պաշտպանության միջոցի, որն օրենսդիրը տվյալ դեպքի համար չի նախատեսել:

Վերոհիշյալ իրավական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը չի իրացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտն անմիջական բողոքարկման կարգով բողոքարկելու իր իրավունքը, երբ նա ողջամտորեն կարող էր դա անել, ապա չի կարող այլևս տվյալ միջանկյալ դատական ակտը բողոքարկել «հետաձգված բողոքարկման կարգով», այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում բողոք բերող անձը «հետաձգված բողոքարկման» կարգով վիճարկում է Վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու որոշման օրինականությունը, ինչը գործող իրավակարգավորման շրջանակներում է:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը, բողոք բերող անձի և գործին մասնակցող

անձանց անունները (անվանումները), դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որն ազդել է գործի ելքի վրա, վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը, բողոք բերող անձի պահանջը, բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում: Այդ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան վերջնաժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միմիայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում և այն պարագայում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը երկշաբաթյա ժամկետ է տրամադրում դրանք վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ մնացած բոլոր դեպքերում թերությունները շտկելու և բողոք ներկայացնելու ժամկետ չի տրամադրվում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերը նշված լիազորությունների իրականացումը (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, վերադարձնելու մասին որոշումներ կայացնելը) անմիջականորեն կապված է վերաքննիչ բողոքի առկայության հետ: Ընդ որում, օրենսդիրը Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու հանգամանքը

պայմանավորել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության հետ:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանում դատական ակտի վերանայում կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով ներկայացված վերաքննիչ բողոքի առկայության դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Անժելա Գևորգյանի կողմից 23.01.2014 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 04.02.2014 թվականի որոշմամբ վերադարձվել է՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալու և ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չպարունակելու պատճառաբանությամբ: Այնուհետև Վերաքննիչ դատարանը «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այն վերականգնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» 12.02.2014 թվականի որոշմամբ Անժելա Գևորգյանի կողմից 12.02.2014 թվականին ներկայացված դիմումի և կից ներկայացված միջնորդության քննարկման արդյունքում որոշել է միջնորդությունը բավարարել և վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ: Ընդ որում, սույն գործում առկա չէ 12.02.2014 թվականի դիմումին և դրան կից միջնորդությանը Անժելա Գևորգյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք:

Հիմք ընդունելով վերը նշվածը և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անժելա Գևորգյանի 23.01.2014 թվականին ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշումից հետո, 12.02.2014 թվականին ներկայացված դիմումը և դրան կից միջնորդությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի հիմքով վերաքննիչ բողոք դիտվել չեն կարող: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ վարույթ է հարուցվել և վերաքննիչ բողոքի քննություն է իրականացվել առանց դրա համար օրենքով նախատեսված հիմքի, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքի առկայության:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր հարուցել գործի վերաքննիչ վարույթ և վերաքննիչ բողոքի բացակայության պայմաններում վերանայել Դատարանի 19.12.2013 թվականի որոշումը:

Ինչ վերաբերում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նշված դատավարական իրավունքի նորմի խախտման պայմաններում դրանք չեն կարող լինել քննության առարկա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի մասնակիորեն հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը, քանի որ վերաքննիչ վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանը իրավասու չէր հարուցել վերանայման վարույթ և վերանայել Դատարանի՝ «Վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննության առնելու մասին» 19.12.2013 թվականի որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ «Վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննության առնելու մասին» 19.12.2013 թվականի որոշմանը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2017/02/11
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2017/02/11
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Կովկասյանի և Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.11.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տիգրան Կովկասյանի և Կարինե Հարությունյանի ընդդեմ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո), «Ռ-ԱՍԿՈ» ԱՍՊԸ-ի (ներկայումս՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի) (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), Արթուր Դանիելյանի և Արայիկ Զաքարյանի՝ Բյուրոյի գրությունը և գործողությունները, այդ գրության հիման վրա տրված եզրակացությունը, ինչպես նաև Ընկերության որոշումն ու գրությունն անվավեր ճանաչելու և վնասը հատուցելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Կովկասյանը և Կարինե Հարությունյանը պահանջել են անվավեր ճանաչել Բյուրոյի՝ Կազմակերպությանը հասցեագրած 27.05.2011 թվականի թիվ Բ/SU-167 գրությունը և գործողությունները, այդ գրության հիման վրա 03.06.2011 թվականին Կազմակերպության փորձագետի տված թիվ 11-0101Պ եզրակացությունը, Ընկերության որոշումը և 07.06.2011 թվականի թիվ Ռ/ԲԱ-387 գրությունը, ինչպես նաև Ընկերությունից հոգուտ իրենց բռնագանձել 1.326.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ

հողվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ մինչև պարտավորության կատարման օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 22.11.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Ընկերության 07.06.2011 թվականի որոշումը (եզրակացությունը), Ընկերությունից հօգուտ Կարինե Հարությունյանի բռնագանձել 1.326.000 ՀՀ դրամ՝ որպես ավտովթարի հետևանքով պատճառված վնասի հատուցում, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 07.09.2011 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը. մնացած պահանջների մատով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ Տիգրան Կովկասյանի և Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշումը բեկանվել է և օրինական ուժ է տրվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.11.2011 թվականի վճռին:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.11.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Տիգրան Կովկասյանը և Կարինե Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 48-րդ, 52-րդ, 53-րդ, 86-րդ, 204.30-204.38-րդ հոդվածները, 219-րդ և 220-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա է քննության ոչ թե Վերաքննիչ դատարանի, այլ Վճռաբեկ դատարանի կողմից, քանի որ Ընկերության կողմից բողոքարկված դատական ակտի վերաբերյալ նույն իրավական և փաստական հիմքով արդեն իսկ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշումը, հետևաբար, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ հոդվածի 2-րդ կետի՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքով դատական ակտը ենթակա է վերանայման միայն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ վարչական մարմնի ակտը վերացնելու հիմքում դրվել է այն նույն հանգամանքը, ինչը վկայակոչվել է նախկին բողոքով, և այդ

հանգամանքը Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ արդեն իսկ համարել է նոր երևան եկած չհանդիսացող:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 21.11.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.11.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանի 22.11.2011 թվականի վճռով Տիգրան Կովկասյանի և Կարինե Հարությունյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Ընկերության 07.06.2011 թվականի որոշումը (եզրակացությունը), Ընկերությունից հօգուտ Կարինե Հարությունյանի բռնագանձել 1.326.000 ՀՀ դրամ՝ որպես ավտովթարի հետևանքով պատճառված վնասի հատուցում, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 07.09.2011 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը. մնացած պահանջների մասով հայցը մերժվել է:

Նշված վճռով հաստատվել է, որ 24.03.2011 թվականին Արթուր Դանիելյանն իրեն պատկանող «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենան վարելիս թույլ է տվել ՃԵԿ-ի 39-րդ և 40-րդ կետերի պահանջների խախտում, որի հետևանքով բախվել է Կարինե Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող և Տիգրան Կովկասյանի վարած «Նիսաս» մակնիշի ավտոմեքենային, որի հետևանքով նշված ավտոմեքենան հարկադրաբար դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս և ընդհարվել «Միցուբիշի» մակնիշի ու կայանված վիճակում գտնվող «Ֆոլկսվագեն» մակնիշի ավտոմեքենաներին և դրանց սեփականատերերին պատճառել նյութական վնաս (հատոր 1-ին, գ.թ. 138-150).

2) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության (հատոր 4-րդ, գ.թ. 107-112).

3) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ Տիգրան Կովկասյանի և Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշումը բեկանվել է, և օրինական ուժ է տրվել Դատարանի 22.11.2011 թվականի վճռին (հատոր 5-րդ, գ.թ. 123-130).

4) Ընկերությունը 24.08.2013 թվականին փոստային առաքման եղանակով նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 22.11.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի դեմ (հատոր 6-րդ, գ.թ. 10-16).

5) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.09.2013 թվականի որոշմամբ հարուցվել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու վարույթ (հատոր 6-րդ, գ.թ. 80).

6) Վերաքննիչ դատարանի 21.11.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը՝ Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու մասին բավարարվել է մասնակիորեն՝ նշված վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության (հատոր 6-րդ, գ.թ. 137-144):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը

վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավական կարգավորմանը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած հարցի՝ դատարանի իրավասությանը ենթակա լինելը որոշում է դատարանը՝ օրենքի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարել դատարանների դատական ակտերը՝ վճարել դատարանը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարաններն իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այսպես, ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերով կայացված դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու համար օրենսդրի կողմից սահմանվել է հետևյալ կարգը՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարել դատարանների դատական ակտերը՝ վճարել դատարանը:

Վճարել դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և յուրաքանչյուր գործով նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելիս դատարանները պետք է հաշվի առնեն, թե տվյալ գործով կայացված վերջնական դատական ակտը դատական որ ատյանի կողմից է կայացվել: Այսինքն՝ այն դեպքում, երբ վերանայման ենթակա գործով վերջնական դատական ակտը կայացրել է առաջին ատյանի դատարանը, ապա համապատասխան բողոքի առկայության դեպքում նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթը հարուցում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, իսկ եթե վերջնական դատական ակտը կայացրել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կամ ՀՀ վճարել դատարանը, ապա՝ ՀՀ վճարել դատարանը:

Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, 19.09.2013 թվականի որոշմամբ հարուցելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը վերանայելու վարույթ, քննության առնելով Ընկերության վերաքննիչ բողոքը և այն բավարարելով, դուրս է եկել իր իրավասությունների շրջանակից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, իսկ վերջինիս կողմից 05.09.2012 թվականին կայացված որոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 05.09.2012 թվականի որոշումը բեկանվել է, և օրինական ուժ է տրվել Դատարանի 22.11.2011 թվականի վճռին, այսինքն՝ Դատարանի 22.11.2011 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով վերը նշված իրավական վերլուծությունների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշումն է, որպիսի պայմաններում նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու հարցը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ենթակա է լուծման միայն Վճռաբեկ դատարանի կողմից:

Բացի այդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան/«տրիբունալ» հասկացությունը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ներառում է դատարանների ամբողջ կազմակերպչական համակարգը՝ ներառյալ համապատասխան դատարանների իրավասության մեջ մտնող հարցերը: Այսինքն՝ «օրենքի հիման վրա ստեղծված» սահմանումը ներառում է ոչ միայն դատարանի/«տրիբունալի» գործելու իրավական հիմքը, այլ նաև դատարանի/«տրիբունալի» կողմից կոնկրետ այն իրավական տրմերին հետևելը, որոնք կարգավորում են նրա գործունեությունը (*տե՛ս, Սկոյորենկոն և Սյորիգունն ընդդեմ Ուկրաինայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.07.2006 թվականի վճիռը (դիմումներ թիվ 29458/04 և թիվ 29465/04, կետ 24)*:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը վերանայելու վարույթ հարուցելով, Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարելով և Դատարանի 22.11.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը բեկանելով, անտեսել է, որ Դատարանի 22.11.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը Վերաքննիչ դատարանի կողմից վերանայման ենթակա չէ, քանի որ սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշումն է եղել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Դատարանի 22.11.2011 թվականի

վճիռը, օրինական ուժի մեջ մտնելով, որպես հետևանք ձեռք է բերել դատական ակտերի կայունությունը երաշխավորող այնպիսի հատկանիշ, ինչպիսին անհերքելիությունն է: Նշված հատկանիշը բացառում է օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատական ակտի վերանայման և բեկանման հնարավորությունը, բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի: Որպես այդպիսի բացառիկ դեպք օրենսդիրը նախատեսել է նոր երևան եկած հանգամանքների հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բողոքարկումը և վերանայումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով բողոքարկման ենթակա է գործով կայացված վերջնական դատական ակտը, իսկ պայմանավորված այն հանգամանքով, թե դատական որ ատյանի կողմից է այդ ակտը կայացվել՝ նման վարույթ հարուցելու, դատական ակտը վերանայելու և բեկանելու լիազորություն ունի կամ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, կամ ՀՀ վճռաբեկ դատարանը:

Նման պարագայում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո սույն գործով վերջնական դատական ակտը վերանայելու և բեկանելու Վերաքննիչ դատարանի լիազորությունների բացակայության պայմաններում դատական ակտը շարունակում է պահպանել իր անհերքելիության հատկանիշը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.11.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.11.2011 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/3135/05/13

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ա. Բաբայան

Ա. Սարգսյան

Ք. Մկոյան

Վարչական գործ թիվ ՎԴ/3135/05/13
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորները

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վալերի Յականյանի ներկայացուցիչ Կիմա Սարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ Վալերի Յականյանի՝ 250.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է Վալերի Յականյանից 250.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ արձակել վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը 07.11.2011 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վալերի Յականյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 02.11.2010 թվականի թիվ ԱԲ 977572 որոշումը:

ՀՀ վարչական դատարանը 04.03.2013 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարել հայցային վարույթի և հակընդդեմ հայցը վերադարձրել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 16.07.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.01.2014 թվականի որոշմամբ Վալերի Ցականյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.07.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վալերի Ցականյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 301-րդ հոդվածը, չի կիրառել նույն օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունը, որը պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասում 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունից հետո վերացել է Ծառայության 02.11.2010 թվականի թիվ ԱԲ 977572 որոշման հիմք հանդիսացած վարչական պատասխանատվություն սահմանող նորմատիվ իրավական ակտը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.01.2014 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Համաձայն Ծառայության 02.11.2010 թվականի թիվ ԱԲ 977572 որոշման և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության՝ Վալերի Ցականյանը 02.11.2010 թվականին վարել է օրենքով սահմանված տարեկան տեխնիկական գննությունը չանցած տրանսպորտային միջոց, ինչի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով (գ.թ. 2):

2) Ծառայությունը 10.03.2011 թվականի թիվ Մ-04297 ելքի համարով Վալերի Ցականյանից 250.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ վճարման կարգադրություն արձակելու մասին հայցադիմում է ներկայացրել Դատարան, որը Դատարանում մուտքագրվել է 24.10.2011 թվականին թիվ 33629/11 մուտքի համարով (գ.թ. 1):

3) Համաձայն գործում առկա փոստային առաքանու ստացման ծանուցագրի՝ Վալերի Ցականյանը Դատարանի կողմից 07.11.2011 թվականի արձակված թիվ ՎԴ/33629/03/11 վճարման կարգադրությունը ստացել է 09.02.2013 թվականին (գ.թ. 6):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքարկվող դատական ակտում կիրառված նորմերի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշմամբ տրված մեկնաբանությանը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին՝ վերահասարակելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Շույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժի հանգամանքը պայմանավորված է Սահմանադրությամբ օժտված իրավունքի ուժով, ինչպես նաև ՀՀ միջազգային պարտավորություններով և օրենսդրի որևէ հայեցողություն չի ենթադրում (*տե՛ս*, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 3-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի 29.11.2011 թվականի թիվ ՄԴՌ-1000 որոշումը):

Սույն խնդրի վերաբերյալ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում նաև Վճռաբեկ դատարանը և չի տեսնում որևէ հիմք փոխելու նշված դիրքորոշումը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն նույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա:

Վերոհիշյալ իրավանորմերի համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

- եթե վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքը նախատեսում է ավելի խիստ պատասխանատվություն (պատասխանատվությունը խստացնող օրենք), քան նախատեսված էր իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքով, ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը մեղմացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքին համապատասխան, եթե այդ օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի

վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա անձը ենթակա է պատասխանատվության վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ (*տե՛ս*, «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի *լիստեն Ալեքսանդր Աբրահամյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 04.07.2013 թվականի որոշումը*):

Զարգացնելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը հարկ է համարում բացահայտել, թե որոնք են համարվում պատասխանատվությունը վերացնող, պատասխանատվությունը մեղմացնող ակտեր:

Վճարելի դատարանի գնահատմամբ իրավական ակտը համարվում է պատասխանատվությունը վերացնող, եթե դրանով իրավախախտում չի համարվում այն արարքը, որը նախկին իրավական ակտով համարվում էր իրավախախտում:

Իրավական ակտը համարվում է պատասխանատվությունը մեղմացնող, եթե սանկցիայում նախատեսված պատասխանատվության տեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատասխանատվության տեսակով: Ընդ որում, տուգանքների դեպքում պատասխանատվությունը մեղմացնող է դիտվում այն դրույթը, որով նախկինում գործող տուգանքը փոխարինվել է նվազ չափի տուգանքով: Ինչ վերաբերում է պատասխանատվության այլ միջոցների մեղմացմանը, օրինակ՝ տուգանքը որոշակի իրավունքից զրկելով փոխարինելուն, ապա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքի պարզումը յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հանգամանք է:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով, ի թիվս այլոց, փոփոխություն է կատարվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածում, որի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Ուժի մեջ գտնվող տեխնիկական գննության կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում չփակցված վիճակով տրանսպորտային միջոց վարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քանակատիկի չափով»:

Մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունը ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր. «Սահմանված ժամկետում տեխնիկական գննություն չանցած տրանսպորտային միջոց վարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով»:

Այսինքն՝ մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված իրավախախտումը (զանցանքը) դրսևորվում էր սահմանված ժամկետում տեխնիկական գննություն չանցած տրանսպորտային միջոց վարելով, որի համար որպես վարչական պատասխանատվության միջոց սահմանված էր 50.000 ՀՀ դրամ վարչական տու-

գանք, իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունից հետո դրանում նկարագրված իրավախախտումը (գանցանքը) դրսևորվում է ուժի մեջ գտնվող տեխնիկական գնույթյան կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում չփակցված վիճակով տրանսպորտային միջոց վարելով, որի համար որպես վարչական պատասխանատվության միջոց սահմանված է 20.000 ՀՀ դրամ վարչական տուգանք:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տեխնիկական գնույթյանն առնչվող փոփոխված օրինադրությամբ սահմանված «ուժի մեջ գտնվող տեխնիկական գնույթյան կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում չփակցված վիճակով տրանսպորտային միջոց վարելու» արարքն էապես տարբերվում է «սահմանված ժամկետում տեխնիկական գնույթյուն չանցած տրանսպորտային միջոց վարելու» արարքից, քանի որ մի դեպքում խտաբը գնում է տեխնիկական գնույթյան կտրոնն առկա լինելու (հետևաբար նաև տեխնիկական գնույթյուն անցած լինելու), սակայն սահմանված տեղում փակցված չլինելու մասին, իսկ մյուս դեպքում՝ տեխնիկական գնույթյան կտրոնի (հետևաբար նաև տեխնիկական գնույթյուն անցած չլինելու) ընդհանրապես բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով վերացվել է «սահմանված ժամկետում տեխնիկական գնույթյուն չանցած տրանսպորտային միջոց վարելու» համար պատասխանատվությունը, ինչը վերը նշված պատճառաբանությունների լույսի ներքո պետք է գնահատվի որպես պատասխանատվությունը վերացնող և հետագայում ուժ ունեցող իրավական ակտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշում կայացրած մարմինը (պաշտոնատար անձը) որոշման կատարումը դադարեցնում է՝ **վարչական պատասխանատվություն սահմանող ակտի վերացման դեպքում:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 02.11.2010 թվականի թիվ ԱԲ 977572 որոշմամբ Վալերի Ցականյանն օրենքով սահմանված տարեկան տեխնիկական գնույթյունը չանցած ավտոմեքենան վարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով, որը չվճարելու փաստի ուժով հնգապատկվել է:

Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ծառայությունը Վալերի Ցականյանից 250.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ հայցադիմումը դատարան է ներկայացրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 302-րդ հոդվածի պահանջի պահպանմամբ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ 02.11.2010 թվականի թիվ ԱԲ 977572 որոշման հիմքով Ծառայությունը դատարան է դիմել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 302-րդ հոդվածով սահմանված՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարման վաղեմության մեկ տարվա ժամկետի պահպանմամբ, որպիսի ժամկետի ընթացքն ընդհատվել է դատարանի դիմելու փաստով:

Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ Ծառայության թիվ ԱԲ 977572 որոշման կա-

յացման օրվա՝ 02.11.2010 թվականի դրությամբ, Վալերի Ցականյանին վերագրված իրավախախտումը սահմանված է եղել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասով, որով և պատասխանատվության է ենթարկվել Վալերի Ցականյանը, իսկ հետագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասում կատարված փոփոխությունները որևէ կերպ չեն կարող անդրադառնալ ուժի մեջ գտնվող, չվերացված վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ ԱԲ 977572 որոշման կատարման նկատմամբ:

Սույն գործի փաստերը համադրելով վերը նշված վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարչական մարմինը, տվյալ դեպքում Ծառայությունը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պարտավոր էր դադարեցնել թիվ ԱԲ 977572 որոշման կատարումը, իսկ չդադարեցնելու պարագայում նրա ներկայացրած հայցը ենթակա էր մերժման, քանի որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2012 թվականի թիվ ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով վերացել է Վալերի Ցականյանի արարքը վարչական պատասխանատվություն համարող դրույթը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.01.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հայցը՝ Վալերի Ցականյանից 250.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, մերժել:

2. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից հոգուտ Վալերի Ցականյանի բռնագանձել 7.500 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4842/05/12
2014թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/4842/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Դարիբյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սուրեն Միմոնյանի ներկայացուցիչ Վահե Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սուրեն Միմոնյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 27.06.2012 թվականի թիվ Վ-20/20 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սուրեն Միմոնյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 27.06.2012 թվականի թիվ Վ-20/20 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 15.08.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.01.2014 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 15.08.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուրեն Միմոնյանի ներկայացուցիչ Վահե Մնացականյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարել քողորքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել քողորքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 63-րդ հոդվածը, «Պե-րական փորքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետը, ՀՀ վարչական դատավարու-թյան օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 27-րդ հոդվածը, 28-րդ հոդվածի 1-ին մասը, 113-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:

Վերաքննիչ դատարանի որոշումը ոչ միայն հիմնավորված չէ գործում առկա ապա-ցույցներով և պատճառաբանված չէ գործի հանգամանքների ուսումնասիրության արդյուն-քում արված հետևություններով, այլև ամբողջությամբ հակասում է գործով հետազոտված ապացույցներին, ինչպես նաև չի համապատասխանում իրականությանը:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ հիմնավորված է համարել Վերաքննիչ բողո-քի հիմքում ընկած Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը: Ինչպես նաև որոշմամբ ամրագրել է, որ «վճռի հիմքում դրված միակ փաստը՝ պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի նպատակով դրանք տեսանելի վայրում ցուցադրված լինելը չհիմ-նավորված լինելու մասին, հիմնավորված չէ: Այսինքն՝ հիմնավորված չէ վճիռը: Ուստի այն ենթակա է բեկանման»:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ հայցվոր կողմը որևէ միջնորդություն չի ներկա-յացրել հայցի հիմքերը լրացնելու մասին, անգամ որևէ հղում չի կատարել պիտանիության ժամկետն անցած ապրանքները վաճառքի նպատակով տեսանելի վայրում ցուցադրված չլինելուն առնչվող որևէ փաստի՝ որպես հայցի հիմքի: Մինչդեռ թե՛ հայցադիմումում, թե՛ Դատարանում և թե՛ Վերաքննիչ դատարանում դատական քննության ժամանակ բազմիցս շեշտադրվել է, որ հայտնաբերված ապրանքները պարզապես առանձնացված են եղել մատակարարին հետ վերադարձնելու նպատակով և վաճառքի ենթակա չեն եղել: Առկա գործարար շրջանառության սովորույթների համաձայն՝ առևտրի վաճառքով զբաղվող խանութներն իրավունք ունեն մատակարարած կազմակերպությանը հետ վերադարձնել չվաճառվելու հետևանքով պիտանիության ժամկետներն անցած ապրանքները, իսկ վեր-ջիններս պարտավոր են դրանք հետ ընդունել: Այսինքն՝ ընկերությունը ժամկետանց ապ-րանքներ վաճառելու ոչ մի միտում չէր կարող հետապնդել:

Վերաքննիչ դատարանը, նշելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը՝ արձանագրել է, որ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը հա-մարում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է: Ասինքն՝ Վերաքննիչ դատարանը սխալ մեկնաբանության արդյունքում է կիրառել վերը նշված հոդվածը, քանի որ հայցվորը վի-ճարկել է գործում առկա նկարների իսկությունն ու իրավական կապը վարչական իրավա-խախտման վերաբերյալ թիվ 002546 արձանագրության հետ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դա-տարանի 14.01.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.08.2013 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետի 14.06.2012 թվականի թիվ 72 հանձնարարագրով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության աշխատակիցներ Ա. Չոհրաբյանին և Հ. Իսաչատրյանին հանձնարարվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի պահանջների կատարման նկատմամբ իրականացնել հսկողություն «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ում (գ.թ. 64):

2) 14.06.2012 թվականին կազմվել է թիվ 002546 արձանագրությունը, համաձայն որի՝ հսկողություն է իրականացվել «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի Մամիկոնյանց թիվ 35 շենքին կից գտնվող առևտրի օբյեկտում և արձանագրվել է. «... «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Սիմոնյանի կողմից Երևանի Մամիկոնյանց փողոցի թիվ 35 շենքին կից գտնվող առևտրի օբյեկտում իրականացվում էր պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառք (Grand Candy տորթ, հալած պանիր, վիոլա հալած պանիր, հոլանդական հալած շերտավոր պանիր, ազնվական երկնագույն բորբոսով)» (գ.թ. 8):

3) Երևանի քաղաքապետարանի վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի կողմից 27.06.2012 թվականին կազմվել է թիվ Վ-20/20 արձանագրությունը, համաձայն որի՝ «... Սուրեն Սիմոնյանի կողմից՝ Երևանի Մամիկոնյանց փողոցի թիվ 35 շենքին կից գտնվող սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտում իրականացվել է պիտանիության ժամկետն անցած ապրանքների (պանիր, հալած պանրի տեսականի) իրացում (գ.թ. 61):

4) Հաշվի առնելով 14.06.2012 թվականին կազմված թիվ 002546 արձանագրությունը՝ 27.06.2012 թվականին Երևանի քաղաքապետի թիվ Վ-20/20 որոշմամբ «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Սիմոնյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 170.000 ՀՀ դրամի չափով (գ.թ. 7, 8):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված գանցակազմի վերաբերյալ՝ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրման պարզաբանումը. արդյո՞ք խանութում պիտանիության ժամկետն անցած ապրանքների գլխավորում փաստը ինքնին բավարար է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված գանցանքը կատարված համարելու և անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն

անցած, ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով, հայերեն մակնշումն արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ իրացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը...:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ 1) տվյալ գործի քննությունը վերաբերում է արդյոք իր իրավասությանը, 2) ճիշտ են կազմվել արդյոք վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը, 3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են արդյոք դրա քննության ժամանակի և տեղի մասին, 4) պահանջվել են արդյոք անհրաժեշտ լրացուցիչ նյութեր, 5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում, արդյոք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության, կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ, պատճառվել է արդյոք գույքային վնաս, հիմքեր կան արդյոք վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու համար, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ

հողվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) **վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:**

Օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում ապացույցներ են համարվում այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատում են գործի հանգամանքները, վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Սակայն ցանկացած փաստական տվյալ չէ, որ կարող է համարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ապացույց: Փաստական տվյալները կարող են համարվել ապացույց, եթե առաջին՝ բովանդակում են տվյալներ վարչական իրավախախտման կամ դրա բացակայության մասին, տվյալ անձի մեղավորության կամ անմեղության մասին, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների մասին, և երկրորդ՝ այդ փաստական տվյալների բացահայտման, հավաքագրման և ձևակերպման գործընթացները պետք է համապատասխանեն օրենսդրության պահանջներին: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզելու գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Վճռաբեկ դատարանը վերը նշված իրավանորմների և դրանց վերլուծության հիման վրա գտնում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները: Վերը նշվածն իրականացնելու համար համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս պետք է պատշաճ ձևով լուծի նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք օրենքին համապատասխան են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վե-

րաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման առկայության համար անհրաժեշտ է ապրանքների վաճառքի փաստի առկայություն, այսինքն՝ վաճառք իրականացնող սուբյեկտի (վաճառողի) կողմից ապրանքների վաճառքին ուղղված գործողությունները, մասնավորապես՝ ապրանքի ուղղակի վաճառքի փաստի առկայությունը՝ վաճառողի կողմից գնորդին ապրանք հանձնելու և գնորդի կողմից այդ ապրանքն ընդունելու և դրա համար ապրանքի գինը վաճառողին վճարելու փաստը կամ գնորդների համար տեսանելի (հասանելի) վայրում ապրանքները տեղադրված (ցուցադրված) լինելու՝ ապրանքի վաճառքի հրապարակային օֆերտայի փաստի առկայությունը, ինչպես նաև վաճառվող և/կամ վաճառված ապրանքների պիտանիության ժամկետի անցած լինելու, առանց պիտանիության ժամկետի, ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով կամ հայերեն մակնշումն արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված փաստի միաժամանակյա առկայությունը: Այսպիսով, յուրաքանչյուր կոնկրետ գործով Վարչական իրավախախտման վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է պարզի վերը նշված փաստերի միաժամանակյա առկայությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ իրավասու վարչական մարմինը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման առկայության համար պետք է պարզեր՝ արդյո՞ք համապատասխան սուբյեկտն իրականացրել է ապրանքների վաճառքին ուղղված գործողությունները, մասնավորապես՝ առկա է արդյո՞ք ապրանքի ուղղակի վաճառքի փաստի առկայությունը՝ վաճառողի կողմից գնորդին ապրանք հանձնելու և գնորդի կողմից այդ ապրանքն ընդունելու և դրա համար ապրանքի գինը վաճառողին վճարելու փաստի առկայություն կամ գնորդների համար տեսանելի վայրում ապրանքները տեղադրված (ցուցադրված) լինելու՝ ապրանքի վաճառքի հրապարակային օֆերտայի փաստի առկայություն, ինչպես նաև վաճառվող և/կամ վաճառված ապրանքների պիտանիության ժամկետի անցած լինելու փաստի առկայություն և միայն այս փաստերի միաժամանակյա առկայության պայմաններում վարչական մարմինն իրավասու է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված զանցանքի առկայությունը համարել հաստատված:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանն ըստ էության գործի քննության ընթացքում պարտավոր էր մատնանշել այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար և անհրաժեշտության դեպքում կողմերից պետք է պահանջեր ներկայացնել այդ փաստերի ապացույցները, ինչպես նաև պետք է անմիջականորեն գնահատեր և հետագոտեր գործում եղած բոլոր ապացույցները և որոշեր փաստի հաստատված լինելու հարցը, այնուհետև վճռի մեջ պետք է պատճառաբաներ իր համոզմունքի ձևավորումը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «հայցվոր կողմը որևէ միջնորդություն չի ներկայացրել հայցի հիմքերը լրացնելու մասին, որևէ անգամ հղում չի կատարել պիտանիության ժամկետն անցած ապրանքները վաճառքի նպատակով տեսանելի վայրում ցուցադրած չլինելուն առնչվող որևէ փաստի՝ որպես հայցի հիմքի մատնանշում, Դատարանը գործի ողջ քննության ընթացքում չի առաջադրել պիտանիության ժամկետն անցած ապրանքները վաճառքի նպատակով տեսանելի վայրում ցուցադրած լինելուն կամ չլինելուն առնչվող որևէ փաստ՝ որպես ապացուցման ենթակա փաստ, գործի ողջ քննության ընթացքում կողմերից չի պահանջվել ներկայացնելու պիտանիության ժամկետն անցած ապրանքները վաճառքի

նպատակով տեսանելի վայրում ցուցադրած լինելուն կամ չլինելուն վերաբերող ապացույցներ:

Վերը նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Դատարանի դիրքորոշումն այն հարցի վերաբերյալ, որ վարչական մարմինն չի հաջողվել հիմնավորվել պիտանիության ժամկետն անցած ապրանքները վաճառքի նպատակով տեսանելի վայրում ցուցադրած լինելը, անհիմն է, հետևաբար վճիռը հիմնավորված չէ: Վերաքննիչ դատարանը, գտել է նաև, որ «վարչական վարույթի ընթացքում կրելով որոշակի ապացուցման բեռ՝ հայցվորը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորեր իր կողմից վարչական իրավախախտումը կատարված չլինելու փաստը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ «տվյալ դեպքում առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված զանցանքի կազմը, այսինքն՝ հայցվորը ենթակա է եղել վարչական տույժի և վիճարկվող որոշմամբ այդ տույժը կիրառվել է: Ընդ որում, հայցով չեն ներկայացված և գործով էլ առկա չեն այնպիսի հիմքեր, որոնցից կհետևեր, թե այդ որոշման ընդունմանն ուղղված վարչարարությունն իրականացվել է ընթացակարգի այնպիսի խախտումներով, որոնց ուժով դրա արդյունք հանդիսացող վարչական ակտը կդառնար ոչ իրավաչափ»:

Վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում Սուրեն Մինոնյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական իրավախախտում թույլ տալու մասին որևէ ապացույց առկա չէ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության վերլուծությունից հետևում է, որ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական մարմինը պետք է հիմնավորի, որ տվյալ խանութում կատարվել է պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառք և միայն այս փաստերի միաժամանակյա առկայության պայմաններում է վարչական մարմինն իրավասու հաստատված համարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված զանցանքի կատարումը համապատասխան անձի կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական մարմինը պետք է հիմնավորի, որ տվյալ խանութում կատարվել է պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառք-իրացում, մինչդեռ տույն գործի փաստերի համաձայն վարչական մարմինը չի հիմնավորել այդ փաստերի առկայությունը: Ինչ վերաբերում է դատաքննության ընթացքում պատասխանողի ներկայացուցչի հայտարարությանը, որ «... նշված ապրանքները ստուգման պահին ոչ թե իրացվել են, այլ դրված են եղել հաճախորդների համար տեսանելի և հասանելի վայրում...», ապա թե վարչական վարույթի նյութերով, թե դատաքննության ընթացքում չի հաջողվել ապացուցել, որ պիտանիության ժամկետն անցած ապրանքները՝ պանիր, հալած պանրի տեսականի, վաճառքի համար դրված են եղել վաճառատարահի՝ հաճախորդների համար տեսանելի վայրում, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն իրավացիորեն է արժանափաստ համարել դատաքննության ընթացքում հայցվորի պնդումն այն մասին, որ նշված ապրանքները դրված են եղել հաճախորդների համար ոչ տեսանելի, վաճառատարահին կից առանձնացված վայրում՝ մատակարարող ընկերություններին հետ վերադարձնելու նպատակով:

Անդրադառնալով նաև վարչական մարմնի ակտին կից ներկայացված լուսանկարներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա թվով ութ լուսանկարների պատճենները «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից մթերային խանութում պիտանիության ժամկետն անցած ապրանքներ՝ պանիր, հալած պանրի տեսականի ունենալու և դրանք վաճառելու փաստը հիմնավորող վերաբերելի բավարար ապացույց չեն կարող հանդիսանալ, քանի որ առաջին՝ այդ լուսանկարներից հստակ պարզ չէ, թե այդ լուսանկարները երբ և որտեղ են կատարվել, մասնավորապես՝ արդյոք նշված լուսանկարները կատարվել են «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի մթերային խանութում իրականացված վերահսկողության ժամանակ, թե ոչ, թիվ 002546 արձանագրության մեջ որևէ նշում չկա այն մասին, որ հայտնաբերված խախտման փաստն արձանագրելիս այն ամրագրվել է նաև համապատասխան լուսանկարներով, և երկրորդ՝ այդ լուսանկարներից պարզ չէ, թե արդյոք այդ ապրանքները լուսանկարահանվել են դրանք փաստացի գնորդին վաճառվելու և/կամ գնորդների համար տեսանելի (հասանելի) վայրում տեղադրված (ցուցադրված) լինելու վիճակում և վերջապես՝ այս լուսանկարներից առհասարակ հնարավոր չէ պարզել դրանց կապը Սուրեն Սիմոնյանի կողմից 14.06.2012 թվականի իրավախախտման կատարման փաստը հաստատելու հետ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ լուսանկարները չեն կարող հայցվորի կողմից կատարված իրավախախտման փաստը հաստատող ապացույց հանդիսանալ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը վեճը լուծելիս իրավացիորեն եզրահանգել է, որ «ինչպես վարչական վարույթի նյութերով, այնպես էլ դատաքնության ընթացքում վարչական մարմնի կողմից չապացուցվեց, որ գործում առկա լուսանկարները կատարվել են հենց Երևանի Մամիկոնյանց թիվ 35 շենքին կից գտնվող Սուրեն Սիմոնյանին պատկանող առևտրի օբյեկտում և հենց 14.06.2012 թվականին: Դատարանը եզրակացնում է, որ լուսանկարները չեն կարող հանդիսանալ հայցվորի կողմից կատարված իրավախախտման փաստը հաստատող ապացույց, քանի որ դրանք չեն բովանդակում որևէ վավերապայման այն մասին, որ կատարվել են 14.06.2012 թվականին, հսկողության շրջանակներում, հսկողություն իրականացնող անձանց կողմից, տվյալ հասցեի վերաբերյալ»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սննդամթերքի վաճառքով զբաղվող խանութում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքը ոչ մի ձևով չի հիմնավորվել, իսկ դրանց խանութում ֆիզիկապես գտնվելու փաստն ինքնին չի կարող վարչական պատասխանատվության ենթարկելու համար բավարար հիմք հանդիսանալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Սիմոնյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ղեկավարվելով օրենքով՝ գնահատեր գործով ձեռք բերված ապացույցները և պարզեր ու հաստատված համարել «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի սննդամթերքի խանութում պիտանիության ժամկետն անցած ապրանքներ՝ պանիր, հալած պանրի տեսականի ունենալու և դրանք փաստացի վաճառելու և/կամ գնորդների համար տեսանելի (հասանելի) վայրում տեղադրած (ցուցադրած) լինելու՝ ապրանքների վաճառքի իրապարակային օֆերտա անելու, փաստերի միաժամանակյա առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ նշված փաստերի միաժամանակյա առկայության հանգամանքը հաստատելու և ըստ դրա «Լիլիթ և եղբայրներ» ՍՊԸ-ի

տնօրեն Սուրեն Միմոնյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված գան-
ցանքը կատարված լինելու հարցը պարզված համարելու ու վերջինիս նշված իրավա-
խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական
իրավախախտման վերաբերյալ կազմված թիվ 002546 արձանագրությունը բավարար
հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ ինչպես արդեն նշվել է, Վարչական իրավախախ-
տումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերության դիսպոզի-
ցիայով նախատեսված վարչական իրավախախտման դեպքի առկայության՝ պիտանիու-
թյան ժամկետն անցած ապրանքները վաճառելու փաստի բացահայտումը ենթադրում է
իրավասու վարչական մարմնի կողմից ստեղծված իրադրության կապակցությամբ Վար-
չական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված
կարգով որոշակի փաստական տվյալների, տեղեկությունների հավաքագրման և ամ-
րագրման միջոցով հանգամանակից հետազոտության և գնահատման արդյունքում արված
եզրահանգում, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ
պետք է նշվի վարչական իրավախախտման էությունը և գործի լուծման համար անհրա-
ժեշտ այլ տեղեկությունները, որպիսի նշումը տվյալ դեպքում չպետք է եզրափակվի միայն
պիտանիության ժամկետն անցած ապրանքները վաճառելու մասին նշագրումով, այլ
պետք է հստակ պարունակի պիտանիության ժամկետն անցած ապրանքների անվանա-
ցանկը (ապրանքի ֆիրմային անվանումը, տեսակային հատկանիշները), հայտնաբերված
իրավախախտման կատարման եղանակը՝ պիտանիության ժամկետն անցած ապրանք-
ների ուղղակի վաճառքի փաստը և/կամ դրանց վաճառքի վերաբերյալ հրապարակային
օֆերտայի փաստն ու դրանց հանգամանքերը՝ վաճառքի հրապարակային օֆերտայի
դեպքում պիտանիության ժամկետն անցած ապրանքների գնորդների համար տեսանելի
և/կամ հասանելի վայրում տեղադրված (ցուցադրված) լինելու մասին տեղեկությունները,
որպիսի տեղեկությունները 14.06.2012 թվականի թիվ 002546 արձանագրությունից բացա-
կայում են:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանին չեն ներկա-
յացվել բավարար ապացույցներ առ այն, որ «Լիլիթ և Էդբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն Մելյան
Միմոնյանի խանութում առկա պիտանիության ժամկետն անցած ապրանքները փաստացի
վաճառվել են գնորդին և/կամ տեղադրված (ցուցադրված) են եղել գնորդների համար տե-
սանելի վայրում՝ ապրանքների վաճառքի հրապարակային օֆերտա, և վարչական մարմ-
նի կողմից իրականացված վարչական վարույթով չի ապահովվել տվյալ գործով հանգա-
մանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, չի հաստատվել «Լիլիթ և
Էդբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Միմոնյանի կողմից իրավախախտման կատարման
փաստը, ինչի արդյունքում էլ վարչական մարմինն ընդունել է ոչ իրավաչափ, վարչական
ակտ, այսինքն՝ Դատարանի եզրահանգումն այս հարցի վերաբերյալ հիմնավոր է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-
րդ հոդվածի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչա-
կան ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ: Տվյալ դեպքում վիճարկվող վարչական
ակտն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ
հոդվածի հոդվածի 1-ին պարբերության սխալ կիրառմամբ և ենթակա է անվավեր ճանաչ-
ման, հետևաբար հայցի բավարարումը Դատարանի կողմից իրավաչափ է և հիմնավոր-
ված:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է
բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ, 163-րդ հոդվածների
ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.01.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 15.08.2013 թվականի վճիռ:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1876/05/13

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1876/05/13

2014թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.01.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Արտաշես Մելիքյանի հայցի ընդդեմ Քաղաքապետարանի՝ 06.02.2013 թվականի թիվ Վ-3/2 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արտաշես Մելիքյանը պահանջել է անվավեր ճանաչել Քաղաքապետարանի 06.02.2013 թվականի թիվ Վ-3/2 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 27.09.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.01.2014 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 27.09.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում նշել է այն հանգամանքը, որ Արտաշես Մելիքյանը 30.01.2013 թվականին դիմել է Քաղաքապետարան շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար, ուստի Քաղաքապետարանը պարտավոր էր նույն վարույթի շրջանակներում լուծել շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգման խնդիրը, այլ ոչ թե անդրադառնալ սահմանված ժամկետում շինարարությունը չավարտելու համար պատասխանատվության ենթարկելու մասին խնդրին, քանի որ շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգումը չի նշանակում նոր շինարարության թույլտվության տրամադրում: Հետևաբար շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգման պարագայում խոսք չի կարող գնալ օրենքով սահմանված ժամկետում շինարարությունն ավարտված չլինելու մասին: Մինչդեռ 17.01.2013 թվականի դրությամբ (երբ բացահայտվել է իրավախախտումը) Արտաշես Մելիքյանի կողմից արդեն իսկ կատարված է եղել վերը նշված իրավախախտումը, հետևաբար իրավախախտումը կատարելուց հետո շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգումը չի կարող վերջինիս ազատել պատասխանատվությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.01.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 14.07.2011 թվականին տրված թիվ 01/18-Մ-3496-533 շինարարության թույլտվության համաձայն՝ կառուցապատող Արտաշես Մելիքյանի կողմից Երևանի «Նորաշեն» թաղամասի թիվ 37 հասցեում բազմաբնակարան շենքի կառուցման շինարարական աշխատանքները պետք է ավարտվելին 18 ամսվա ընթացքում՝ մինչև 14.01.2013 թվականը (գ.թ. 19):

2) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից 23.01.2013 թվականին կազմված թիվ 009563 արձանագրության համաձայն՝ հայտնաբերվել է, որ Երևանի «Նորաշեն» թաղամասի թիվ 37 հասցեում բազմաբնակարան շենքի կառուցման շինարարական աշխատանքները չեն ավարտվել համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետում՝ տեղադրված չեն պատուհանները, իրականացված չեն ներքին և արտաքին երեսապատման աշխատանքները և օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ, այսինքն՝ Արտաշես Մելիքյանի կողմից թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտում (գ.թ. 11):

3) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունն Արտաշես Մելիքյանին 17.01.2013 թվականին ուղարկել է թիվ 19/Ծ-4 ծանուցումը, համաձայն որի՝ Արտաշես Մելիքյանը հրավիրվել է շինարարական աշխատանքները չավարտելու և այդ ժամկետում սահմանված կարգով ավարտված շինարար-

րական օբյեկտի ընդունող հանձնաժողովի աշխատանքները չկազմակերպելու ու դրա արդյունքում օբյեկտը շահագործման չընդունելու փաստի կապակցությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում բացատրություններ և/կամ միջնորդություններ ներկայացնելու համար (գ.թ. 8):

4) Արտաշես Մելիքյանը 22.01.2013 թվականին դիմում է ներկայացրել Քաղաքապետարան՝ Քաղաքապետարանի կողմից 14.07.2011 թվականին տրամադրված թիվ 01/18-Մ-3496-533 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար (գ.թ. 9):

5) Երևանի քաղաքապետի 06.02.2013 թվականի թիվ Վ-3/2 որոշմամբ Արտաշես Մելիքյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 9.917.160 ՀՀ դրամի չափով (գ.թ. 17):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության կիրառման վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սխալ մեկնաբանելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չսկսվելու դեպքում կառուցապարտող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի հիմքով կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե շինարարության թույլտվություն ցուցված մարմինը կառուցապարտողին նախազգուշացրել է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապարտումն ավարտելու վերաբերյալ, իսկ կառուցապարտողը մինչև վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման կայացումը դիմել է շինարարության թույլտվություն ցուցված մարմնին՝ շինարարության թույլտվության սահմանված ժամկետը երկարաձգելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային ար-

ժեքի մեկ տոկոսի չափով:

Նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասում իրավախախտումը (զանցանքը) դրսևորվում է՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը կատարված (սկսված և ավարտված) է համարվում կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետն ավարտվելու հաջորդ օրը: Նշված իրավախախտման տեսակյունից որևէ արժեք չի տրվում իրավախախտումից հետո անձի դրսևորած վարքագծին: Հետևաբար, եթե իրավախախտում թույլ տված անձը դիմել է շինարարության թույլտվությունը երկարացնելու խնդրանքով, ապա այդ գործողությունը չի վերացնում իրավախախտում թույլ տալու փաստը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետարանի կողմից 14.07.2011 թվականին Արտաշես Մելիքյանին տրվել է թիվ 01/18-Մ-3496-533 շինարարության թույլտվությունը, համաձայն որի՝ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն 18 ամսվա ընթացքում (մինչև 14.01.2013 թվականը):

Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից հայտնաբերվել է Արտաշես Մելիքյանի կողմից Երևանի «Նորաշեն» թաղամասի թիվ 37 բազմաբնակարան շենքի կառուցման շինարարական աշխատանքները համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետում չավարտվելը, այն է՝ չեն տեղադրվել պատուհանները, կատարված չեն ներքին և արտաքին երեսապատման աշխատանքները, ինչպես նաև ձևակերպված չէ օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը:

Վերը նշված փաստի կապակցությամբ Քաղաքապետարանում հարուցվել է վարչական վարույթ, որի մասին Արտաշես Մելիքյանը ծանուցվել է 17.01.2013 թվականին:

Արտաշես Մելիքյանը 2013 թվականի հունվարի 22-ի դիմումով խնդրել է երկարաձգել շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը:

Երևանի քաղաքապետի 06.02.2013 թվականի թիվ Վ-3/2 որոշմամբ Արտաշես Մելիքյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ:

Դատարանը, հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի կարգավորումները, գտել է, որ մի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված է պատասխանատվություն շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու համար, մյուս կողմից՝ օրենսդիրը վարչական մարմնի համար սահմանել է որոշակի գործողության կատարման պարտականություն մինչև վկայակոչված նորմով սահմանված պատասխանատվության կիրառումը, այն է՝ գրավոր նախագաղտացնել կառուցապատողին շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու պայմաններում շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին՝ տալով որոշակի ժամկետ: Այսինքն՝ պատասխանատվություն սահմանող նորմի կիրառման հնարավորությունն օրենսդիրը պայմանավորել է վարչական մարմնի կողմից կատարման ենթակա որոշակի պարտավորությամբ:

Վերը նշված վերլուծությունը համադրելով գործի փաստերի հետ՝ Դատարանը գտել

է, որ օրենքով սահմանված՝ կառուցապատողին գրավոր նախագգուշացման պարտականության ոչ պատշաճ կատարման, այսինքն՝ գրավոր նախագգուշացմամբ սահմանված ժամկետն ավարտված չլինելու պայմաններում հայցվորի նկատմամբ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու համար վարչական պատասխանատվության ենթարկելով՝ վարչական մարմինը դրսևորել է ոչ իրավաչափ վարքագիծ, որպիսի պայմաններում վիճարկվող որոշումը գնահատել է ոչ իրավաչափ:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, գտել է, որ շինարարության թույլտվության ժամկետի երկարացումը չի նշանակում նոր շինարարության թույլտվության տրամադրում, և շինարարության թույլտվության ժամկետի երկարացման խնդրանքի բավարարումը, ինքնաբերաբար, նշանակում է, որ այն համարվում է երկարացված, հետևաբար նման խնդրանքի բավարարման պարագայում խոսք չի կարող գնալ օրենքով սահմանված ժամկետում շինարարությունն ավարտված չլինելու, այն է՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի մասին: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ կառուցապատողի վրա դնելով որոշակի պարտավորություն (որի կատարման և դրա հիմքով դրված ելքի դեպքում կրացառվի վարչական պատասխանատվության ենթարկելը) վարչական մարմինը պարտավոր էր նույն վարույթի շրջանակներում լուծել շինարարության թույլտվության ժամկետի երկարացման խնդրի լուծումը, որից հետո միայն կարող էր խոսք գնալ սահմանված ժամկետում շինարարությունը չավարտելու համար պատասխանատվության ենթարկելու մասին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումները, քանի որ վարչական իրավախախտման գործով քննություն և համապատասխան որոշում կայացնող վարչական մարմինը պարտավոր է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում արձագանքելու վարչական իրավախախտման փաստին, և վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ վարչական տույժ կիրառելը չի կարող պայմանավորվել այլ հանգամանքներով, քան վարչական իրավախախտման կատարման փաստի առկայությամբ:

Սույն դեպքում 17.01.2013 թվականին Քաղաքապետարանն Արտաշես Մելիքյանին ծանուցել է սահմանված ժամկետում շինարարությունը չավարտելու կապակցությամբ հարուցված վարչական վարույթի մասին, որպիսի ծանուցման առկայությունը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես իրավախախտումը հայտնաբերելու վերաբերյալ ապացույց, և փաստում, որ ծանուցումն ուղարկելու օրվա՝ 17.01.2013թվականի դրությամբ Արտաշես Մելիքյանի կողմից արդեն իսկ կատարված է եղել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը, հետևաբար, *իրավախախտումը կատարելուց հետո շինարարության թույլտվության ժամկետը երկարանձգելու համար դիմելը չի կարող կառուցապատողին ազարել պարասխանատվությունից:*

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմնի կողմից գրավոր նախագգուշացումն արդեն իսկ ապացուցում է այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված զանցանքի կատարման փաստը, և Երևանի քաղաքապետը՝ որպես նշված իրավախախտման գործով քննություն և համապատասխան որոշում կայացնող պաշտոնատար անձ, պարտավոր էր իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում արձագանքելու նշված իրավախախտմանը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված չէ վարչական պատասխանատվության կիրառումը բացառող կամ հետաձգող այնպիսի հիմք, ինչպիսին Վերաքննիչ դատարանի նշած՝

կառուցապատողի վրա դրված որոշակի պարտականության կատարումն է:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն եզրահանգմանը, որ վարչական մարմինը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով կառուցապատողին վարչական պատասխանատվության կարող էր ենթարկել նախազգուշացմամբ սահմանված ժամկետն ավարտվելուց հետո, ապա այն չի բխում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթներից հետևյալ պատճառաբանությամբ.

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի չորրորդ մասի «ժ» կետով նախատեսված ժամկետներում կառուցապատումը (բացառությամբ գյուղական բնակավայրերում իրականացվող կառուցապատման և անհատական բնակելի տների) չավարտվելու դեպքում, շինարարության թույլտվություն տվող մարմինը գրավոր նախազգուշացնում է կառուցապատողին շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ: Ընդ որում, շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից շինարարության տնտեսությունը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան տվյալ օբյեկտի չիրականացված աշխատանքների համար շինարարության տնտեսության նորմերով հաշվարկված ժամկետի չափով:

Նշված պահանջը չկատարելու դեպքում կառուցապատողը շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ենթարկվում է վարչական պատասխանատվության:

Եթե նախազգուշացումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կառուցապատողը չի դիմում շինարարության թույլտվություն տվող մարմնին՝ շինարարության ժամկետը երկարաձգելու հայտով, կամ շինարարության թույլտվությամբ սահմանված նոր ժամկետում չի ավարտում կառուցապատումը, կամ չի օտարում սեփականության իրավունքով իրեն պատկանող օբյեկտը, ապա շինարարության թույլտվություն տվող մարմինը նրան կրկին անգամ ենթարկում է վարչական պատասխանատվության և դիմում է դատարան տվյալ օբյեկտը վաճառելու հայցով՝ դատարանի սահմանած կարգով և գնով, բայց ոչ պակաս, քան օբյեկտի կադաստրային արժեքի 75 տոկոսի չափով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դրանցով նախատեսված են կառուցապատողին օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու երկու դեպք.

1. Երբ կառուցապատողը, վարչական մարմնից ստանալով նախազգուշացումը, անհապաղ չի դիմում վերջինիս՝ շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար,

2. Երբ կառուցապատողը, վարչական մարմնից ստանալով նախազգուշացումը, մեկամսյա ժամկետում չի դիմում վարչական մարմնին՝ շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար:

Այսինքն՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումները դրսևորվում են՝ նույն հոդվածով նախատեսված նախազգուշացումը ստանալուց հետո շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար վարչական մարմնի չդիմելով, հետևաբար միայն նշված զանցանքի համար վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման դեպքում էական նշանակություն ունի վարչական մարմնի՝ վերը նշված նախազգուշացումն ուղարկելու պարտականության

պատշաճ կատարումը:

Մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը տեղ ունի համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետն ավարտվելու հաջորդ օրը, եթե այդ ժամկետում կառուցապատումը չի ավարտվել, հետևաբար վարչական մարմնի կողմից կառուցապատողին «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված նախագուշացում ուղարկելը չի կարող որևէ նշանակություն ունենալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար կառուցապատողին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար: Հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154¹-րդ հոդվածի հիմքով կառուցապատողը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե շինարարության թույլտվություն տվող մարմինը կառուցապատողին նախագուշացրել է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու վերաբերյալ, իսկ կառուցապատողը մինչև վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման կայացումը դիմել է շինարարության թույլտվություն տվող մարմնին՝ շինարարության թույլտվության սահմանված ժամկետը երկարաձգելու համար:

Ամփոփելով վերոնշյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ սույն գործով ստորադաս դատարանները սխալ են կիրառել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.01.2014 թվականի որոշումը և այն փոփոխել: Արտաշես Մելիքյանի հայցը մերժել:

2. Արտաշես Մելիքյանից հոգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Արտաշես Մելիքյանից հոգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/5666/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5666/05/11
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Արա և Մանուկ Մարգարյանների՝ վարչական տուգանքի գումարը բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետը պահանջել է Արա և Մանուկ Մարգարյաններից Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշմամբ նշանակված վարչական տուգանքը բռնագանձելու համար արձակել վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը 14.10.2011 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մանուկ Մարգարյանը պահանջել է մասնակիորեն՝ իր մասով, վերացնել Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշումը:

ՀՀ վարչական դատարանը 28.10.2011 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարել հայցային վարույթի և հակընդդեմ հայցը վերադարձրել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան)

17.06.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

14.02.2014 թվականի որոշմամբ Քաղաքապետի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.06.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքում չեն կարող դրվել տվյալ ակտի կայացման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերը, քանի որ վարչական ակտի առ ոչինչ լինելը պետք է հիմնավորվի հենց դրանում առկա ակնառու կոպիտ սխալներով, իսկ տվյալ դեպքում վարչական ակտն առ ոչինչ լինելու եզրահանգմանը Դատարանը հանգել է վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում՝ նշելով, որ պատասխանողների վերաբերյալ առանձին վարչական վարույթներ չեն իրականացվել: Ավելին, Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշումը երբևէ չի վիճարկվել և չի վերացվել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Դատարանը հայցը մերժելիս, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, դուրս է եկել հայցի շրջանակներից, քանի որ վարչական ակտի իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում անդրադարձել է վարչական ակտի իրավաչափության հարցին և բացառել դրա իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությունը:

Բացի այդ, բողոքարկվող որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-101 (ՎԴ) և 27.05.2009 թվականի ՎԴ/2068/05/08 որոշումներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.02.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի աշխատակից Ռուբեն Կիրակոսյանի կողմից 01.06.2011 թվականին կազմված թիվ 004313 արձանագրության համաձայն՝ հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված «հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու» իրավախախտում: Արձանագրության

համաձայն՝ իրավախախտումը դրսևորվել է հետևյալում. «Հանգուցյալ Հ. Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Փափագյան 2-րդ նրբանցքի թիվ 133 տան քնակիչներ Մանուկ և Արա Մարգարյանների կողմից իրենց տան հարևանությամբ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գոյություն ունեցող շինությունները կից երկաթբետոնե սյան կառուցման շինարարական աշխատանքներ են կատարվել՝ առանց քաղաքաշինական համապատասխան փաստաթղթերի» (1-ին հատոր, գ.թ. 7-8):

2) Քաղաքապետի 29.06.2011 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ Վ-22/5 որոշմամբ Մանուկ և Արա Մարգարյանները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ենթարկվել են վարչական պատասխանատվության. նշանակվել է տուգանք՝ 400.000 ՀՀ դրամի չափով (1-ին հատոր, գ.թ. 5): Որոշումը վարչական կամ դատական կարգով չի վիճարկվել:

4. Վճարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը սխալ մեկնաբանելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք կարող է առ ոչինչ համարվել պարասխառնարվություն առանձնող այն վարչական ակտը, որը հասցեագրված է մեկից ավելի անձանց:

Վճարեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է վարչական ակտի առ ոչինչ լինելու հարցին, մասնավորապես՝ Վճարեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը կամ անձին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առ ոչինչ դիտելու համար: Այսինքն՝ Վճարեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունն առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առ ոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր *(յրենս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսությունն ընդդեմ «Նովոսինվեստ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը):*

Վճարեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ այն դեպքում, երբ անձը համարում է, որ վարչական ակտով իր վրա պարտականություն է դրվել օրենքի խախտմամբ, այդ թվում օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման

հետևանքով, վերջինս վարչական-դատավարական կարգով կարող է պահանջել անվավեր ճանաչել այդպիսի ոչ իրավաչափ պարտականություն դնող վարչական ակտը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության պետի 11.09.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման չվիճարկման պայմաններում այն ենթակա է կատարման (տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Կարապետ Գևորգյանի թիվ ՎԴ/4608/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա է, մասնավորապես, հետևյալ ակնառու կոպիտ սխալը՝ ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում:

Շշված նորմի վերլուծությունը վկայում է այն մասին, որ վարչական ակտի առոչնչության հատկանիշն առկա է, երբ ակտի բովանդակությունից հնարավոր չէ ճշտել, թե կոնկրետ որ անձն է դրա հասցեատերը: Ակտում մեկից ավելի հասցեատեր նշված լինելու դեպքում, երբ պարզ է, թե կոնկրետ ովքեր են այդ հասցեատերերը, քննարկվող նորմի առումով ակտի առոչնչության հատկանիշն առկա չէ, քանի որ այդ դեպքում ակտից պարզ է, որ այն ունի մեկից ավելի հասցեատեր, այսինքն՝ ակտը հասցեագրված է մեկից ավելի անձանց: Ո՛չ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, ո՛չ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չեն պարունակում որևէ դրույթ այն մասին, որ եթե իրավախախտումը կատարվել է մեկից ավելի անձանց կողմից, ապա յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է հարուցվի և իրականացվի առանձին վարչական վարույթ: Դա նշանակում է, որ միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում հնարավոր է մեկ վարույթի շրջանակներում պատասխանատվության ենթարկել իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց: Այլ հարց է, որ պատասխանատվության ենթարկելիս վարչական մարմինը պարտավոր է յուրաքանչյուր իրավախախտի նկատմամբ ճիշտ կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, այդ թվում՝ ըստ մեղքի պատասխանատվության, անձնական պատասխանատվության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Վարչական մարմնի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վերոհիշյալ պահանջները չպահպանելու դեպքում առկա կլինի օրենքի խախտում, ինչը կարող է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն վարչական ակտի անվավերության հիմք հանդիսանալ: Վարչական ակտն օրենքի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքն իր հերթին կարող է քննարկվել և պարզվել այդ ակտի վիճարկման վարույթում, իսկ եթե ակտը չի վիճարկվել, ապա դրա առ ոչինչ լինելը հաստատված չլինելու դեպքում այն ենթակա է կատարման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի աշխատակից Ռուբեն Կիրակոսյանի կողմից 01.06.2011 թվականին կազմված թիվ 004313 արձանագրության համաձայն՝ հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված «հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու»

իրավախախտում: Արձանագրության համաձայն՝ իրավախախտումը դրսևորվել է հետևյալում. «Հանգուցյալ Հ. Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Փափագյան 2-րդ նրբանցքի թիվ 133 տան բնակիչներ Մանուկ և Արա Մարգարյանների կողմից իրենց տան հարևանությամբ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գոյություն ունեցող շինությունը կից երկաթբետոնե սյան կառուցման շինարարական աշխատանքներ են կատարվել՝ առանց քաղաքաշինական համապատասխան փաստաթղթերի»:

Քաղաքապետի 29.06.2011 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ Վ-22/5 որոշմամբ Մանուկ և Արա Մարգարյանները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ենթարկվել են վարչական պատասխանատվության. նշանակվել է տուգանք՝ 400.000 ՀՀ դրամի չափով: Որոշումը վարչական կամ դատական կարգով չի վիճարկվել:

Քաղաքապետարանը 11.10.2011 թվականին ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է Մանուկ և Արա Մարգարյաններից հօգուտ Երևան համայնքի վարչական տուգանքի գումարը բռնագանձելու նպատակով արձակել վճարման կարգադրություն՝ հիմքում դնելով Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշումը:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ պատասխանողների վերաբերյալ առանձին վարչական վարույթներ չեն իրականացվել և պարզ չէ, թե Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշմամբ պատասխանողներից ով է ենթարկվել վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության: Դատարանը, միաժամանակ փաստելով, որ պարզ չէ, թե պատասխանողներից յուրաքանչյուրին որքան պարտավորություն է առաջադրվել, եզրակացրել է, որ Քաղաքապետի որոշմամբ դրա հասցեատերերի վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշմամբ պարզ չէ, թե վարչական պատասխանատվության ենթարկելը որոշակիորեն ում է հասցեագրված՝ Մանուկ Մարգարյանին, թե Արա Մարգարյանին, այսինքն՝ նշված որոշման բովանդակությունից ակնհայտորեն պարզ չէ և կասկածի տեղիք է տալիս դրանով կարգավորվող հարցի հասցեավորվածությունը, պարզ չէ, թե վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ով է ենթարկվել վարչական պատասխանատվության. նշված հոդվածի սանկցիայով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը՝ 400.000 ՀՀ դրամ տուգանքը, որոշակիորեն ում նկատմամբ է կիրառվել՝ Մանուկ Մարգարյանի, թե Արա Մարգարյանի, ընդ որում, պարզ չէ նաև, թե ում վրա է դրված նշված որոշմամբ նշանակված տուգանքի գումարի վճարման պարտականությունը:

Նշված պատճառաբանություններով Վերաքննիչ դատարանը գտել է, որ Քաղաքապետի որոշման մեջ առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով ամրագրված վարչական ակտի առ ոչինչ լինելը պայմանավորող՝ ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, ակնառու կոպիտ սխալը:

Վճարելի դատարանը նախ և առաջ արձանագրում է, որ Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշմամբ Մանուկ և Արա Մարգարյանների վրա դրված պարտականությունն ակնհայտ ոչ իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրությամբ հռչակված է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է: Իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն իրավական որոշակիության սկզբունքն է: Իրավական որոշակիության սկզբունքը

տարածվում է բոլոր իրավական ակտերի վրա: Օրենսդիրը վարչական ակտերի համար իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը կոնկրետացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում: Օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, միաժամանակ, վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման գործը՝ մարմինը (պաշտոնատար անձը) գործի վերաբերյալ որոշում է ընդունում: (...) Որոշումը պետք է պարունակի այն ընդունած մարմնի (պաշտոնատար անձի) անվանումը, գործի քննության ժամանակաթիվը. տեղեկություններ այն անձի մասին, որի վերաբերյալ քննվում է գործը, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը, տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի նշումը, գործի վերաբերյալ ընդունված որոշումը:

Եթե նույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-4-րդ կետերում թվարկված մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու մասին հարցը լուծելիս միաժամանակ լուծվում է մեղավորի կողմից գույքային վնասը հատուցելու հարցը, ապա գործի որոշման մեջ նշվում է գանձման ենթակա վնասի չափը, դրա հատուցման ժամկետն ու կարգը:

Գործի որոշման մեջ պետք է լուծված լինի վերցված իրերի և փաստաթղթերի հարցը:

Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշումը ստորագրում է գործը քննող պաշտոնատար անձը, իսկ կոլեգիալ մարմնի որոշումը՝ նախագահողը և քարտուղարը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի:

Այսպիսով, վարչական իրավախախտման վերաբերյալ որոշմանը ներկայացվող պահանջները սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածում:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը վարչական ակտ է, քանի որ համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված վարչական ակտի հասկացության սահմանմանը, այն է՝ վերաբերում է որոշակի անձի, ունի արտաքին ներգործություն, ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում ամրագրված վարչական ակտի որոշակիության պահանջը տարածվում է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումների վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ

հողվածում ամրագրված վարչական ակտի որոշակիության պահանջն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի մասնավոր դրսևորում է: Հաշվի առնելով վարչական ակտի որոշակիության սկզբունքի կարևորությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որևէ վարչական ակտ չի կարող համարվել իրավաչափ, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ ոչ իրավաչափ վարչական ակտերը հանդես են գալիս երկու ձևով՝ որպես անվավեր և որպես առ ոչինչ վարչական ակտեր: Օրենսդիրը, հաշվի առնելով վարչական ակտի որոշակիությանը ներկայացվող պահանջի կարևորությունը, նախատեսել է, որ առանձին դեպքերում վարչական ակտի որոշակիության պահանջի չպահպանումը հանգեցնում է վարչական ակտի առ ոչինչ լինելուն: Այսպես՝ եթե վարչական ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում, ապա այդ վարչական ակտն ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի և «գ» կետի առ ոչինչ վարչական ակտ է: Սակայն, եթե վարչական ակտը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, և միաժամանակ, առկա չեն օրենսդրի կողմից սահմանված վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերը, իրավական որոշակիության պահանջին չհապատասխանող վարչական ակտը չի կարող դիտվել առ ոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշումը հստակ չի պարունակում հասցեատերերից յուրաքանչյուրի համար նշանակվող տուգանքի չափը, այսինքն՝ չի համապատասխանում վարչական ակտի որոշակիությանը ներկայացվող պահանջներին, այնուամենայնիվ, դա դեռևս չի նշանակում, որ վերը նշված վարչական ակտով դրված պարտականությունն ակնհայտ ոչ իրավաչափ է: Քաղաքապետն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթներին համապատասխան, Մանուկ և Արա Մարգարյաններին ենթարկել է պատասխանատվության՝ նշանակելով տուգանք՝ պատասխանատվություն սահմանող իրավական նորմի սանկցիայի սահմաններում: Այսինքն՝ Քաղաքապետը, օրենքով սահմանված պատասխանատվության միջոցը կիրառելով պատասխանողների նկատմամբ, նրանց վրա չի դրել ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քաղաքապետի 29.06.2011 թվականի թիվ Վ-22/5 որոշումից պարզ է, որ այն հասցեագրված է և՛ Արա Մարգարյանին, և՛ Մանուկ Մարգարյանին, դրանով նշանակված տուգանքը վճարելու պարտականությունը դրված է նշված երկու անձանց վրա, նշանակված տուգանքի չափը համապատասխանում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն սահմանող նորմի սանկցիային, ընդ որում, որոշումը որևէ նշում չի պարունակում համապարտ պատասխանատվության մասին, հետևաբար տվյալ դեպքում առկա չեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված ակնառու կոպիտ սխալները: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ տվյալ դեպքում պահպանված չէ պատասխանատվության անհատականացման սկզբունքը, ապա դա ևս անհիմն է, քանի որ նշված հարցը կարող էր քննարկվել վարչական ակտի վիճարկման (անվավերության) վարույթում, իսկ տվյալ դեպքում, քանի որ վարչական ակտը չի վիճարկվել, գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթում այդ հարցն այլևս քննարկման ենթակա չէ, իսկ վարչական ակտը ենթակա է կատարման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է

բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու՝ գործի փաստերը վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո պարզելու և գնահատելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.02.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/5539/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝

Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5539/05/11
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Աբաղյանի ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 31.10.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Տիգրան Աբաղյանի հայցի ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի (այսուհետ՝ Վարչական շրջանի ղեկավար), երրորդ անձ Անուշ Տարախչյանի՝ Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Աբաղյանը պահանջել է առ ոչինչ կամ անվավեր ճանաչել Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 16.04.2013 թվականի վճռով Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է, իսկ մնացած մասով հայցը բավարարվել է՝ Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումը ճանաչվել է անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.10.2013 թվականի որոշմամբ Անուշ Տարախյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.04.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Աբաղյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Անուշ Տարախյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ և 8-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 144-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածները, չի կիրառել նույն օրենքի 35-րդ, 38-րդ, 63-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Վարչական շրջանի ղեկավարը, հիմք ընդունելով միայն Անուշ Տարախյանի հայտարարությունն այն մասին, որ Տիգրան Աբաղյանը գտնվում է արտերկրում, և վերջինիս բնակության վայրի մասին շուրջ երկու տարի որևէ տեղեկություն հայտնի չէ, չի կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Այսինքն՝ Վարչական շրջանի ղեկավարի կողմից ցուցաբերվել է անգործություն, չի իրականացվել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, որի արդյունքում խախտվել է վարչական վարույթի ընթացքում Տիգրան Աբաղյանի լավամիտ լինելու իրավունքը, հետևաբար նշված վարչական վարույթի արդյունքում կայացված վարչական ակտը չի կարող իրավաչափ լինել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.10.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 16.04.2013 թվականի վճիռն:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վերաքննիչ դատարանի 31.10.2013 թվականի որոշումն ամբողջովին հիմնավոր է, բխում է արդարադատության շահերից, քանի որ Վերաքննիչ դատարանն ուսումնասիրության առարկա է դարձրել Դատարանի կողմից անտեսված մի շարք կարևոր հանգամանքներ:

Բացի այդ, շուրջ երկու տարի երեխան կրում է «Տարախյան» ազգանունը, այդ ազգանվամբ նա հաճախում է դպրոց և տարբեր խմբակներ, և ազգանվան փոփոխությունը կարող է լուրջ հոգեբանական հետք թողնել երեխայի վրա:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման ամուսնության պալատի տարածքային բաժնի կողմից 04.10.2005 թվականին տրված թիվ ԱԱ 066345 ծննդյան վկայականի համաձայն՝ Արեգ Տիգրանի Աբաղյանը ծնվել է 26.09.2005 թվականին՝ Երևան քաղաքում, հայրը՝ Տիգրան Աբաղյան, մայրը՝ Անուշ Տարախչյան (հատոր 1-ին, գ.թ. 62):

2) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԴ/0980/02/08 քաղաքացիական գործով 21.01.2009 թվականի վճռով Տիգրան Աբաղյանի և Անուշ Տարախչյանի ամուսնությունը լուծվել է, Տիգրան Աբաղյանից հոգուտ անչափահաս Արեգ Տիգրանի Աբաղյանի՝ որպես ապրուստի միջոց, բռնագանձվել է ալիմենտ աշխատավարձի և այլ եկամտի մեկ քառորդի չափով՝ մինչև երեխայի չափահաս դառնալը (հատոր 1-ին, գ.թ. 12-14):

3) Անուշ Տարախչյանը 24.03.2011 թվականին դիմել է Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի ղեկավարին իր անչափահաս որդու՝ Արեգ Տիգրանի Աբաղյանի ազգանունն իր ազգանվամբ փոփոխելու խնդրանքով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ երեխայի հայրը շուրջ երկու տարի գտնվում է արտերկրում, չի կատարում իր ծնողական պարտականությունները, այդ թվում՝ չի վճարում դատարանի վճռով սահմանված ալիմենտը (հատոր 1-ին, գ.թ. 63):

4) Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 551-Ա որոշման համաձայն՝ Վարչական շրջանի ղեկավարը, Անուշ Տարախչյանի դիմումի հիման վրա, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, հաշվի առնելով Վարչական շրջանի ղեկավարին առընթեր խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կարծիքը, որոշել է թույլատրել Անուշ Տարախչյանին փոխել իր անչափահաս որդու՝ Արեգ Տիգրանի Աբաղյանի ազգանունը «Արեգ Տիգրանի Տարախչյան» ազգանվամբ (հատոր 1-ին, գ.թ. 99):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը կարող է արդյո՞ք իրավաչափ հիմք հանդիսանալ վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի սահմանափակման համար:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմին-

ների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե ծնողները ապրում են առանձին, և ծնողը, որի մոտ ապրում է երեխան, ցանկանում է նրան տալ իր ազգանունը, այդ հարցը լուծվում է՝ հաշվի առնելով մյուս ծնողի կարծիքը:

Մյուս ծնողի կարծիքը հաշվի առնելը պարտադիր չէ, եթե՝

- 1) հնարավոր չէ պարզել նրա բնակության վայրը.
- 2) նա զրկված է ծնողական իրավունքներից.
- 3) նա դատարանի կողմից ճանաչված է անգործունակ.

4) նա, առանց հարգելի պատճառների, խուսափում է երեխային դաստիարակելուց ու պահելուց:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական վարույթի մասնակիցներ են՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

2. Նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված վարույթի մասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկային, փորձագետին, թարգմանչին և այլ մարմինների ներկայացուցիչներին, վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

2. Լուծումներ կարող են չանցկացվել, եթե՝

ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուծումներ անցկացվեն.

բ) դիմումն ակնհայտ անհիմն է.

գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ:

3. Լսումներ չեն անցկացվում, եթե՝

ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման.

բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ:

4. Լսումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (*Կոնս. Իվանովն և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, պարբ. 70*): Հետևաբար, վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին (*Կոնս. ըստ հայցի ՀՀ աշխարհային պետական տեսչության ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Կոնստանտին խորհրդի նախագահ, գլխավոր Կոնստանտին Վալերի Օվսյաննիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Սակայն օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքների պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է Անուշ Տարախչյանի 24.03.2011 թվականի դիմումի հիման վրա, որում վերջինս խնդրել է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին իր անչափահաս որդու՝ Արեգ Տիգրանի Աբաղյանի ազգանունը փոխել իր ազգանվամբ: Վարչական շրջանի ղեկավարն առանց անչափահաս Արեգ Տիգրանի Աբաղյանի հորը՝ Տիգրան Աբաղյանին, հարուցված վարչական վարույթի մասին ծանուցելու 08.04.2011 թվականին ընդունել է «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 551-Ա որոշումը, որի համաձայն՝ Անուշ Տարախչյանին թույլատրվել է փոխել իր անչափահաս որդու՝ Արեգ Տիգրանի Աբաղյանի ազգանունը («Արեգ Տիգրանի Տարախչյան» ազգանվամբ: Վարչական շրջանի ղեկավարն իր վերը նշված որոշման ընդունելիս ղեկավարվել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով:

Վարչական շրջանի ղեկավարը 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 551-Ա որոշումն ընդունել է առանց լսելու և հաշվի առնելու անչափահաս Արեգ Տիգրանի Աբաղյանից առանձին ապրող ծնողի՝ Տիգրան Աբաղյանի կարծիքը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերջինս առանց հարգելի պատճառների, խուսափում է իր երեխային դաստիարակելուց ու պահելուց:

Դատարանը բավարարել է Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 551-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին Տիգրան Աբաղյանի պահանջը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտն ընդունելուն ուղղված վարչական վարույթի ընթացքում ակնհայտ է եղել, որ ընդունվող վարչական ակտով շոշափվելու են նաև Տիգրան Աբաղյանի իրավունքները և օրինական շահերը, քանի որ վերջինս հանդիսանում է անչափահաս Արեգ Աբաղյանի հայրը, մինչդեռ Տիգրան Աբաղյանը չի ծանուցվել հարուցված վարչական վարույթի մասին և զրկված է եղել այդ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքի իրացման հնարավորությունից, այսինքն՝ վիճարկվող վարչական ակտն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ վարչական մարմինը չի խախտել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների պահանջները և իր գործողություններով որևէ կերպ չի խոչընդոտել Տիգրան Աբաղյանի արտահայտվելու իրավունքին: Վերաքննիչ դատարանը գտել է, որ վարչական մարմինն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ծանուցելու Տիգրան Աբաղյանին հարուցված վարչական վարույթի և դրա իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման մասին, քանի որ Տիգրան Աբաղյանը գտնվել է արտերկրում և նրա բնակության հասցեն անհայտ է եղել: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ նման պայմաններում վարչական մարմինը չէր կարող անորոշ ժամկետով հետաձգել դիմումի քննարկումը, քանի որ դրանով կխախտվեին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ մատնանշել է նաև հետևյալը. «(...) ՀՀ ընդունեցն օրենսգրքի 46-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի ազգանվան փոփոխման հարցն ամեն դեպքում լուծում է լիազոր մարմինը՝ հաշվի առնելով երկու կողմերի կարծիքը, որոնք նա պարզավոր է հաշվի առնել, սակայն դրանցից և ոչ մեկը նրա համար պարզապես չէ: Վերոշարադրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է ՀՀ ընդունեցն օրենսգրքի 46-րդ հոդվածի դրույթներին համապարասման (...):»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ փաստարկներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի բովանաղակությունից հետևում է, որ երեխայի ազգանվան փոփոխության հարցում լիազոր մարմինը կարող է հաշվի չառնել երեխայից առանձին ապրող ծնողի կարծիքը միայն այն դեպքում, եթե հարուցված վարչական վարույթի ընթացքում ապացուցվի, որ վերջինս առանց հարգելի պատճառների, խուսափում է իր երեխային դաստիարակելուց ու պահելուց: Այլ կերպ ասած՝ երեխայի ազգանվան փոփոխության հարցում երեխայից առանձին ապրող ծնողի կարծիքը հաշվի առնելու հարցը լուծելու համար լիազոր մարմինը նախ պետք է պարզի ՀՀ ընտանեկան օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված պայմանի առկայությունը կամ բացակայությունը: Այսինքն՝ լիազոր մարմինը, կատարելով վարչական վարույթի ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու օրենքով սահմանված իր պարտականությունը, պետք է նախ և առաջ պարզի, թե արդյոք երեխայից առանձին ապրող ծնողն առանց հարգելի պատճառների խուսափում է իր երեխային դաստիարակելուց ու պահելուց, թե՛ ոչ, և ըստ այդմ, որոշի երեխայի ազգանվան փոփոխության հարցում այդ ծնողի կարծիքը հաշվի առնելու հարցը: Երեխայից առանձին ապրող ծնողի՝ իր երեխային դաստիարա-

կելուց ու պահելուց առանց հարգելի պատճառների խուսափելու հանգամանքը պարզելու լիազոր մարմնի պարտականության պատշաճ կատարումն ապահովելու համար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կարևոր է այդ ծնողին երեխայի ազգանվան փոփոխությանն ուղղված վարչական վարույթին մասնակից դարձնելը և նրան այդ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու հնարավորություն ընձեռնելը:

Մինչդեռ սույն գործի փաստերից ակնհայտ է, որ վարչական մարմինը՝ Վարչական շրջանի ղեկավարը, որևէ փորձ չի ձեռնարկել Տիգրան Աբաղյանին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցելու համար՝ հիմնվելով միայն Անուշ Տարախյանի դիմումի վրա, որի համաձայն՝ Տիգրան Աբաղյանը գտնվում է արտերկրում և առանց հարգելի պատճառների խուսափում է իր երեխային դաստիարակելուց ու պահելուց:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին Տիգրան Աբաղյանին ծանուցելու և այդ վարչական վարույթի ընթացքում վերջինիս լսված լինելու իրավունքի երաշխավորված իրացումն ապահովելու դեպքում միայն վարչական մարմինը կարող էր կատարել վարչական վարույթի ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում ապահովելու օրենսդրական պահանջը: Այսպես, միայն որպես երրորդ անձ ներգրավված լինելու միջոցով խնդրո առարկա վարչական վարույթին մասնակցելու դեպքում Տիգրան Աբաղյանը կարող էր արտահայտել իր դիրքորոշումը՝ քննարկվող հարցերի կապակցությամբ, ինչպես նաև ներկայացնել անհրաժեշտ ապացույցներ և այլ կյուրթեր, որոնց միջոցով վարչական մարմինը կարող էր պարզել Տիգրան Աբաղյանի՝ իր երեխային՝ Արեգ Աբաղյանին, դաստիարակելուց ու պահելուց առանց հարգելի պատճառների խուսափելու հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը: Նշված հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը պարզելուց հետո միայն Վարչական շրջանի ղեկավարը կարող էր լուծել երեխայի ազգանվան փոփոխության հարցում Տիգրան Աբաղյանի կարծիքը հաշվի առնելու կամ հաշվի չառնելու հարցը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն իր վճռում իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում թվարկված լուումներ չանցկացնելու հիմքերը բացակայել են: Համաձայնելով Դատարանի նման դիրքորոշմանը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով ամրագրված վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու պահանջը որևէ կերպ չի կարող խաթարել վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս անձի իրավունքների գործնականում պատշաճ իրացման, մասնավորապես՝ վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի պատշաճ իրացման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վարչական շրջանի ղեկավարը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների ուժով պարտավոր էր ծանուցել Տիգրան Աբաղյանին 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 551-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին և ապահովել այդ վարչական վարույթի ընթացքում վերջինիս լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը, քանի որ նշված վարչական վարույթի ընթացքում քննարկվել է Տիգրան Աբաղյանի երեխայի ազգանվան փոփոխության հարցը, և ընդունվող վարչական ակտով կարող էին շոշափվել նրա իրավունքները և օրինական շահերը:

Բացի այդ, ինչպես նշվեց, սույն գործում առկա չէ որևէ ապացույց Տիգրան Աբաղյանին նշված վարչական վարույթին մասնակից դարձնելու և նրան վարույթի մասին ծանուցելու վերաբերյալ: Այսինքն՝ Վարչական շրջանի ղեկավարը չի կատարել Տիգրան Աբաղյանին վարչական վարույթին մասնակից դարձնելու և նրան ծանուցելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը, ինչի արդյունքում չի ապահովվել Տիգրան Աբաղյանի լաված լինելու իրավունքը՝ վերջինիս գրկելով իր իրավունքները լիարժեք պաշտպանելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 551-Ա որոշումն ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածների խախտմամբ: Հետևաբար, Դատարանն իր վճռում իրավացիորեն է եզրահանգել, որ Վարչական շրջանի ղեկավարի 08.04.2011 թվականի «Ազգանվան մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 551-Ա որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է և պետք է ճանաչվի անվավեր:

Նշված պատճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 31.10.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 16.04.2013 թվականի վճռին:

2. Երևան համայնքից հոգուտ Տիգրան Աբաղյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Երևան համայնքից հոգուտ Տիգրան Աբաղյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/0429/05/13**
2014թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/0429/05/13

Նախագահող դատավոր՝ Ա. Արուսյան

Դատավորներ՝ Ա. Բաբայան

Ա. Սարգսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.05.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 19.12.2012 թվականի թիվ Վ-44/21, Վ-44/22, Վ-44/23, Վ-44/24, Վ-44/25, Վ-44/26, Վ-44/28, Վ-44/29 որոշումներն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը պահանջել է ամբողջությամբ վերացնել Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/21, Վ-44/22, Վ-44/23, Վ-44/24, Վ-44/25, Վ-44/26, Վ-44/28, Վ-44/29 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.12.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.05.2014 թվականի որոշմամբ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 05.12.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է՝ վերացվել են Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/21, Վ-44/22, Վ-44/23, Վ-44/24, Վ-44/25, Վ-44/26, Վ-44/28, Վ-44/29 որոշումները:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 26-րդ հոդվածները, Երևան քաղաքի ավագանու 18.11.2009 թվականի թիվ 37-Ն որոշումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ թեև հայցվորի կողմից տարբեր հասցեներում տեղադրված բոլոր վահանակներն իրենց բովանդակությամբ հանդիսանում են արտաքին գովազդ, սակայն որևէ նորմատիվ իրավական ակտով, այդ թվում և Երևան քաղաքի ավագանու 18.11.2009 թվականի թիվ 37-Ն որոշմամբ սահմանված չէ, թե կոնկրետ որ դեպքերում է անհրաժեշտ ստանալ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն, իսկ որ դեպքերում՝ ոչ. օրինակ՝ տրանսպորտային միջոցների, շինությունների վրա պատկերված, գրված տարբեր չափերի տեղեկությունները, որոնք իրենց բովանդակությամբ հանդիսանում են գովազդ, ինչ չափերի պետք է լինեն, որպեսզի դրանց տեղադրման համար պահանջվի թույլտվություն, կամ նման թույլտվությունը պարտադիր չլինի: Այսինքն՝ գովազդ տեղադրելու համար համապատասխան թույլտվություն պահանջվելու կամ չպահանջվելու հարցը պետք է կապված լինի գովազդի չափերի հետ, որպիսիք որևէ իրավական ակտով կարգավորված չեն, հետևաբար, քանի դեռ հստակ չէ, թե ինչ չափերի արտաքին գովազդ տեղադրելու համար է պահանջվում թույլտվություն, իսկ ինչ չափերի դեպքում՝ ոչ, ապա այդպիսի թույլտվություն չունենալու համար վարչական պատասխանատվություն չի կարող կիրառվել:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գովազդի, այդ թվում՝ արտաքին գովազդի հասկացությունը սահմանված է «Գովազդի մասին» ՀՀ օրենքով, հետևաբար ցանկացած վահանակ՝ անկախ դրա մակերեսից, որում զետեղված տեղեկությունները համապատասխանում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված գովազդի հասկացությանը, հանդիսանում է արտաքին գովազդ, որի տեղադրման համար պահանջվում է համապատասխան թույլտվություն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի վերը նշված հիմնավորումը կրում է ընդհանուր բնույթ, և ըստ այդ հիմնավորման՝ Քաղաքապետը տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրության պայմաններում չի կարող «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված վարչական տույժը կիրառել որևէ անձի նկատմամբ, երբ տվյալ անձի կողմից արտաքին գովազդը տեղադրված է առանց համապատասխան թույլտվության:

Մինչդեռ, քանի դեռ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը շարունակում է գործել, Քաղաքապետը պարտավոր է դրանով նախատեսված դեպքերում անձանց ենթարկել վարչական պատասխանատվության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.05.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 05.12.2013 թվականի վճռին:

2.1.Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

«Alfa Pharm» ապրանքային նշանը «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ին պատկանող դեղատան ճակատային մասում «Դեղատուն» ցուցանակի վրա զետեղելը չի կարող դիտարկվել որպես արտաքին գովազդ, քանի որ այն ոչ թե նպատակ է հետապնդել անորոշ անձանց շր-

ջանում հետաքրքրություն ձևավորելու, այլ օգտագործվել է որպես ապրանքային նշան՝ Ընկերությանը պատկանող դեղատունն այլ անձանց պատկանող դեղատներից տարբերելու համար:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Լենինգրադյան փողոցի թիվ 42 հասցեում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/21 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 10):

2) Երևանի Շինարարների փողոցի թիվ 15 հասցեում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/22 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 8):

3) Երևանի Հալաբյան փողոցի թիվ 9/1 հասցեում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/23 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 12):

4) Երևանի Բաշինջաղյան փողոցի թիվ 188/5 հասցեում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/24 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 14):

5) Երևանի Բաշինջաղյան փողոցի թիվ 188 հասցեում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/25 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 16):

6) Երևանի Մարգարյան փողոցի թիվ 19/1 հասցեում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/26 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 18):

7) Երևանի Ֆուչիկի և Մարգարյան փողոցների խաչմերուկում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/28 որոշմամբ

ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 20):

8) Երևանի Արզումանյան փողոցի թիվ 10 հասցեում գործող դեղատան ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու համար «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/29 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով (հատոր 1-ին, գ.թ. 22):

9) ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանի 24.02.2010 թվականի գրանցման թիվ 15037 վկայագրի և ապրանքային նշանը գրանցելու մասին որոշման համաձայն՝ «Alfa Pharm» կանաչ և նարնջագույն գունային համակցությամբ ապրանքային նշանի սեփականատեր է հանդիսանում «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն (հատոր 1-ին, գ.թ. 130):

10) Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի թիվ 42, Շինարարների փողոցի թիվ 15, Հալաբյան փողոցի թիվ 9/1, Բաշինջաղյան փողոցի թիվ 188 և 188/5, Մարգարյան փողոցի թիվ 19/1 հասցեներում, ինչպես նաև Ֆուչիկի և Մարգարյան փողոցների խաչմերուկում գտնվող դեղատների ճակատային մասի լուսանկարների համաձայն՝ դրանցում առկա են «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ վահանակներ, իսկ Արզումանյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող դեղատան ճակատային մասում առկա է «Դեղատուն» բովանդակությամբ վահանակ (հատոր 1-ին, գ.թ. 39, 48, 57, 75, 66, 84, 102, 91):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված «գովազդ» և «արտաքին գովազդ» հասկացությունների, ինչպես նաև արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության վերաբերյալ Վճարելի դատարանի արտահայտած դիրքորոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված «գովազդ» և «արտաքին գովազդ» հասկացությունների բացահայտմանը, և պատասխանել այն հարցին, թե արդյոք արտաքին գովազդի տեղադրման համար թույլտվություն պետք է տրամադրվի կախված արտաքին գովազդի չափերից:

1) «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գովազդը տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

«Գովազդ» հասկացության վերը նշված սահմանումից հետևում է, որ գովազդը տեղեկություն է, որը պետք է տարածվի տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ, պետք է հասցեագրված լինի անորոշ թվով անձանց, պետք է վերաբերի կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքներին, գաղափարներին կամ նախաձեռնություններին, պետք է նպատակ հետապնդի հետաքրքրություն ձևավորել կամ պահպանել տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռ-

նությունների նկատմամբ: Գովազդը, լինելով տեղեկություն, ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս այդ տեղեկությունը բնորոշել որպես գովազդ:

Այսպես, նախ և առաջ գովազդն իր բովանդակությամբ տեղեկություն է, որը կարող է արտահայտվել բանավոր խոսքի, գրաֆիկական, ֆոտո, աուդիո և տեսապատկերների, երաժշտության, գույնի և այլ միջոցներով, ինչպես առանձին, այնպես էլ նշված միջոցների համակցությամբ: Որպես տեղեկություն այն կարող է տարածվել տարբեր տեղեկատվական միջոցների օգնությամբ, այսինքն՝ պետք է հրապարակվի և հասանելի դառնա սպառողին: Հետևաբար, տեղեկությունն առանց տարածելու չի կարող համարվել գովազդ: Գովազդը պետք է նախատեսված լինի անորոշ թվով անձանց շրջանում տարածելու համար, ինչը նշանակում է, որ թեև հնարավոր է կանխատեսել գովազդի համար թիրախային հանդիսացող խումբը, սակայն ի սկզբանե հնարավոր չէ պարզել տարածվող տեղեկության կոնկրետ հասցեատերերին, հետևաբար նաև գովազդվող օբյեկտի իրացումից ծագող իրավահարաբերության կողմին:

Գովազդը պետք է վերաբերի կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքներին, գաղափարներին կամ նախաձեռնություններին, որոնք էլ հանդիսանում են գովազդի օբյեկտը: Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ տարածվող տեղեկության մեջ ապրանքների կամ ծառայությունների որոշակի խմբի ընդհանրացնող անվանման ներառումը (օրինակ՝ «հագուստ», «մթերք», «հյութեր», «գեղեցկության սրահ» և այլն) չի կարող համարվել գովազդ, որովհետև այդպիսի անվանումները հնարավորություն չեն տալիս միաստե ապրանքների և ծառայությունների շրջանակից առանձնացնել կոնկրետ ապրանք կամ ծառայություն, և դրա նկատմամբ ձևավորել դրական վերաբերմունք: Այսինքն՝ ընդհանրացնող անվանում պարունակող տեղեկությունը չի կարող համարվել գովազդ, քանի որ դրանում բացակայում է գովազդի օբյեկտը:

Գովազդը պետք է գովազդվող օբյեկտի նկատմամբ ձևավորի կամ պահպանի հետաքրքրությունը: Այսինքն՝ տեղեկությունը պետք է նպատակաուղղված լինի գովազդի օբյեկտը սպառողի ուշադրությանը ներկայացնելուն, վերջինիս համոզելուն, հետևաբար գովազդի կարևոր առանձնահատկությունը օբյեկտի նկատմամբ հետաքրքրվածության խթանումն է, նրա նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն ու այդպիսի վերաբերմունքի պահպանումը:

Վերը նշված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տեղեկությունը գովազդ համարելու համար անհրաժեշտ է տեղեկության հետևյալ հատկանիշների միաժամանակյա առկայություն.

- տեղեկությունը պետք է հնարավորություն տա անհատականացնել կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձին, ապրանքը, գաղափարը կամ նախաձեռնությունը, այսինքն՝ պետք է առկա լինի գովազդի օբյեկտը,
- տեղեկությունը պետք է տարածվի տեղեկատվական առնվազն մեկ միջոցով,
- տեղեկությունը պետք է նախատեսված լինի անորոշ անձանց շրջանում տարածելու համար,
- տեղեկությունը պետք է նպատակ հետապնդի ձևավորել և պահպանել գովազդվող օբյեկտի նկատմամբ հետաքրքրությունը:

Նշված առանձնահատկություններից որևէ մեկի բացակայության պայմաններում տեղեկությունը գովազդ համարվել չի կարող:

2) «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով: Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տե-

ղական ինքնակառավարման մարմինները:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքով տրված «գովազդ» հասկացության վերը նշված մեկնաբանության լույսի ներքո մեկնաբանելով նույն օրենքի 11-րդ հոդվածում նշված «արտաքին գովազդ» հասկացությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արտաքին գովազդն այնպիսի տեղեկությունն է, որը, վերաբերելով կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, ապրանքի, գաղափարի կամ նախաձեռնության, գովազդվող օբյեկտի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու և պահպանելու նպատակով անորոշ անձանց շրջանում տարածվում է բնակավայրերում՝ պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով: Ընդհանրացնելով արտաքին գովազդի տարածման միջոցների առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արտաքին գովազդը գովազդի հատկանիշներ պարունակող այնպիսի տեղեկությունն է, որը ժամանակավոր կամ հիմնական, շարժական կամ ստացիոնար տեխնիկական միջոցների ձևով տարածվում է բնակավայրերում՝ տեղակայվելով բաց տեղանքում, շենքերի, շինությունների արտաքին մակերևույթին, փողոցային սարքավորումների տարրերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վրա: Նկատի ունենալով, որ տեխնիկական առաջընթացին զուգահեռ իբրև գովազդի տարածման միջոց կարող են օգտագործվել զանազան նոր տեխնիկական միջոցներ, օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակվել ներկայումս օգտագործվող տեխնիկական միջոցների թվարկմամբ՝ հնարավոր համարելով գովազդի տարածումը նաև այլ տեխնիկական միջոցներով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների, ինչպես նաև դրանց վրա գետեղված տեղեկության՝ նյութապես արտահայտված արդյունքի չափերը որևէ նշանակություն չունեն տեղեկությունը արտաքին գովազդ համարելու կամ չհամարելու համար, քանի որ, եթե բնակավայրում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով տեղակայված տեղեկությունն ունի գովազդին բնորոշ վերը նշված հատկանիշները, ապա վերջինս պետք է դիտարկվի որպես արտաքին գովազդ՝ անկախ դրա չափերից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը. «Գովազդի մասին» ՀՀ օրենքով տրված «գովազդ» հասկացության սահմանումից բխում է, որ գովազդի օբյեկտ են հանդիսանում իրավաբանական և ֆիզիկական անձինք, ապրանքները, գաղափարներն ու նախաձեռնությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, սպասարկման նշանն իրավաբանական անձի, արտադրանքի, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների անհատականացման միջոցներ են, հետևաբար դրանք «Գովազդի մասին» ՀՀ օրենքի իմաստով ևս կարող են գովազդ հանդիսանալ այնքանով, որքանով որպես անհատականացման միջոցներ՝ տեղեկություններ են պարունակում իրավաբանական անձի, ապրանքի կամ ծառայության մասին: Այսինքն՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, սպասարկման նշանը կարող են համարվել գովազդ, եթե օգտագործվում են գովազդի օբյեկտի նկատմամբ անորոշ թվով անձանց շրջանակում հետաքրքրություն առաջացնելու կամ պահպանելու համար: Սակայն Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կազմակերպության գտնվելու, գործունեություն իրականացնելու վայրերում դրա ֆիրմային անվանման, ապրանքային կամ սպասարկման նշանների տեղադրումը կարող է արտաքին գովազդ չհամարվել, եթե դրա նպատակը ոչ թե անորոշ անձանց շրջանում հետաքրքրության, դրական վերաբերմունքի ձևավորումն է, այլ կազմակերպության գտնվելու, գործունեություն իրականացնելու վայրի

և/կամ գործունեության տեսակի մասին տեղեկացնելը, ինչը համապատասխանում է գործարար շրջանառության սովորույթներին:

Հետևաբար բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով իրավաբանական անձի անհատականացման միջոցներ տեղադրելն արտաքին գովազդի տարածում դիտարկելու համար նախ և առաջ պետք է գնահատման առարկա դարձվի այդպիսի տեղեկության տեղադրման նպատակային նշանակությունը:

3) Անդրադառանալով արտաքին գովազդի համար թույլտվության անհրաժեշտությունը դրա չափերով պայմանավորելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով: **Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները: Երևան քաղաքի քաղաքային նշանակություն ունեցող փողոցներում, այգիներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալիս է Երևանի քաղաքապետը:**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես պարտադիր լիազորություն քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում քաղաքապետն օրենքով սահմանված կարգով տալիս է քաղաքային նշանակության գովազդային գոտում (քաղաքային նշանակության փողոցներում և դրանց անմիջապես հարող տարածքներում, ինչպես նաև քաղաքային նշանակության հրապարակներում և այգիներում) արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Նույն օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարն օրենքով սահմանված կարգով տալիս է քաղաքային նշանակության գովազդային գոտի չհամարվող տարածքներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արտաքին գովազդ տեղադրելու համար բոլոր դեպքերում անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն՝ անկախ արտաքին գովազդի մակերեսներից, իսկ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները տեղական ինքնակառավարման մարմնի կողմից որոշելու իրավասությունն օրենքով սահմանված քաղաքաշինության բնագավառում վերջինիս լիազորությունների բաղկացուցիչ մասն է:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Երևան քաղաքի ավագանու 18.11.2009 թվականի թիվ 37-Ն որոշմամբ, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով պայմանավորված, սահմանվել են Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները, որոնք իրենց մեջ ներառում են ընդհանուր դրույթներ, գովազդի թույլտվություն տալու կարգը և Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչները: Նման պայմաններում արտաքին գովազդի ծավալի և քանակության սահմանումը, դրա շրջանակներում արտաքին գովազդի համար որոշակի սահմանային չափերի ամրագրումը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի կարող մեկնաբանվել որպես արտաքին գովազդի թույլտվության անհրաժեշտության նախապայման:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի թիվ

42, Շինարարների փողոցի թիվ 15, Հալաբյան փողոցի թիվ 9/1, Բաշինջաղյան փողոցի թիվ 188 և 188/5, Մարգարյան փողոցի թիվ 19/1, Արզումանյան փողոցի թիվ 10 հասցեներում, ինչպես նաև Ֆուչիկի և Մարգարյան փողոցների խաչմերուկում գտնվող դեղատների ճակատային մասում, առանց համապատասխան թույլտվության, «Դեղատուն» և/կամ «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ վահանակներ տեղադրելու համար Երևանի քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/21, Վ-44/22, Վ-44/23, Վ-44/24, Վ-44/25, Վ-44/26, Վ-44/28 և Վ-44/29 որոշումներով «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000-ական ՀՀ դրամ տուգանքի չափով:

Այսինքն՝ Քաղաքապետը «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանին պատասխանատվության ենթարկելիս «Դեղատուն» և «Դեղատուն Alfa Pharm» բովանդակությամբ վահանակները դիտարկել է որպես արտաքին գովազդ, որոնք վերջինիս կողմից տեղադրվել են առանց թույլտվության:

Դատարանը «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանի հայցը մերժելիս պատճառաբանել է, որ Հայաստանի Հանրապետության բնակիչների շրջանում ներկայումս «Alfa Pharm» ապրանքանիշի նկատմամբ ձևավորված է որոշակի վերաբերմունք, այն սպառողների մոտ ասոցացվում է որոշակի որակի, տեսակի և հատկանիշների դեղորայքի և դեղագործական այլ ապրանքների վաճառքի, և ըստ այդմ՝ դրանց ձեռքբերման հնարավորության հետ, ինչը նշանակում է, որ «Alfa Pharm»-ը և «Դեղատուն» հրապարակային գրվածքները ոչ միայն պարզապես տեղեկատվություն են տվյալ կազմակերպության կողմից վաճառվող ապրանքի կամ այդ տնտեսվարողի նախաձեռնության մասին, այլև դրանք ուղղված են առևտրի իրականացման կոնկրետ վայրում վաճառքի դրված ապրանքի նկատմամբ անորոշ թվով անձանց շրջանում հետաքրքրության ձևավորմանը և պահպանմանը, քանի որ, ակնհայտ է, որ այս ապրանքանիշը նախընտրողների համար «Alfa Pharm» վերտառությամբ ցուցանակը և (կամ) դրա հետ միաժամանակ կամ առանձին՝ բայց և այնպես յուրօրինակ նույնական ձևավորմամբ «Դեղատուն» գրվածքը հանդես են գալիս որպես առևտրի իրականացման տվյալ վայր հրավերի յուրահատուկ ձև: Ի վերջո, գովազդի դրսևորման ձև է նաև սպառողների մոտ ապրանքանիշի հաճախակի տեսողական ընկալման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը: Նման պայմաններում պարզ է դառնում, որ խնդրո առարկա ցուցանակները «Գովազդի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրենցից ներկայացնում են նաև գովազդ:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վերը նշված պատճառաբանությունը հիմնավոր համարելով, ինչպես նաև փաստելով, որ խնդրո առարկա վահանակների (ցուցանակների) տեղադրումը, հնարավոր այլ նպատակներ ունենալու հետ մեկտեղ, իր մեծադիր չափերով ակնհայտորեն անորոշ թվով անձանց շրջանում տեղեկություն է տարածում դեղատնային ապրանքների վաճառքի վայրի՝ Ընկերության դեղատան մասին, նույնիսկ, եթե Ընկերությունն այդ ցուցանակների տեղադրումով նման նպատակ չի ունեցել, այնուամենայնիվ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանի բողոքը բավարարել է՝ պատճառաբանելով, որ Երևան քաղաքի ավագանու 18.11.2009 թվականի թիվ 37-Ե որոշմամբ, ինչպես նաև որևէ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ այն պայմանները, որոնց դեպքում արտաքին գովազդ տեղադրելու համար անհրաժեշտ է ստանալ տեղական ինքնակառավարման մարմնի թույլտվությունը, մինդեռ տեղական ինքնակառավարման մարմնի թույլտվություն դրանց համար պահանջվել-չպահանջվելու հարցը տրամաբանորեն պետք է կապված լիներ դրանց չափերի հետ: Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ օրենսդրությամբ սահմանված չէ որևէ հստակ չափանիշ, թե Երևան համայնքում որ դեպքում է անհրաժեշտ նշված թույլտվությունը, գտել է, որ բավարար չափով իրականացված չէ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով Երևան համայնքին վերապահված

իրավունքն այն մասին, որ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները, այսինքն՝ չեն սահմանազատված այն դեպքերը, երբ արտաքին գովազդ տեղադրելու համար պահանջվում է թույլտվություն, և այն դեպքերը, երբ նման թույլտվություն չի պահանջվում: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ քանի դեռ հստակ չէ, թե քննարկվող թույլտվությունը որ դեպքում է անհրաժեշտ, և որ դեպքում՝ ոչ, ապա այդպիսի թույլտվություն չունենալու համար վարչական պատասխանատվությունը չի կարող կիրառվել, քանի որ դրա կիրառման դեպքում կատարվի, որ վարչական մարմինն իր կամայական մեկնաբանությամբ է որոշում, թե որ դեպքում է թույլտվությունն անհրաժեշտ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումն անհիմն է և հերքվում է Վճռաբեկ դատարանի կողմից «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 11-րդ հոդվածների՝ վերը նշված վերլուծությամբ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը սխալ է պատճառաբանված հետևյալ հիմնավորմամբ.

Արտաքին գովազդի առանձնահատկությունների՝ վերը նշված վերլուծության լույսի ներքո անդրադառնալով «Դեղատուն» և «Դեղատուն Alfa Pharm» վահանակները որպես արտաքին գովազդ դիտելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է հետևյալը.

«Դեղատուն» վերտառությամբ գրվածքն իրենից ներկայացնում է ընդհանրացնող անվանում պարունակող տեղեկություն, հետևաբար վերջինս չի կարող համարվել արտաքին գովազդ: Ավելին, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.06.2002 թվականի թիվ 867 որոշմամբ սահմանված «Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգի» 3-րդ բաժնի 38-րդ կետի համաձայն՝ դեղատունը և դեղատնային կրպակն արտաքին հատվածից պետք է ձևավորված լինեն կանաչ գույնի «Դեղատուն» կամ «Դեղատնային կրպակ» վերտառությամբ և խաչի նշանով՝ տեսանելի վայրում փակցված ցուցանակով, այսինքն՝ «Դեղատուն» վերտառությամբ ցուցանակը դեղատան արտաքին հատվածում տեսանելի վայրում փակցված լինելը դեղատնային գործունեության լիցենզավորման պարտադիր պահանջ է:

Վահանակի վրա գետեղված «Alfa Pharm» գրվածքը հանդիսանում է «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի ապրանքային նշանը, այսինքն՝ իրավաբանական անձն իր գործունեության իրականացման վայրում տեղադրել է անհատականացման միջոց, մինչդեռ գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհիմնավորվեր, որ ապրանքային նշանի գետեղման նպատակը ոչ թե կազմակերպության գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրի մասին տեղեկացնելն է, այլ անորոշ անձանց շրջանում հետաքրքրության, դրական վերաբերմունքի ձևավորումն ու պահպանումը:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում ստորադաս դատարանների դիրքորոշումն առ այն, որ «Alfa Pharm» վերտառությամբ ցուցանակը և (կամ) դրա հետ միաժամանակ կամ առանձին «Դեղատուն» գրվածքն ուղղված են առևտրի իրականացման կոնկրետ վայրում վաճառքի դրված ապրանքի նկատմամբ անորոշ թվով անձանց շրջանում հետաքրքրության ձևավորմանը և պահպանմանը, քանի որ այս ապրանքանիշը՝ նախընտրողների համար «Alfa Pharm» վերտառությամբ ցուցանակը և (կամ) դրա հետ միաժամանակ կամ առանձին՝ «Դեղատուն» գրվածքը հանդես են գալիս որպես առևտրի իրականացման տվյալ վայր հրավերի յուրահատուկ ձև:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Alfa Pharm» ապրանքանիշը նախընտրողների մոտ արդեն իսկ ձևավորված է որոշակի վերաբերմունք դրա նկատմամբ, և գործունեության իրականացման վայրում ապրանքային նշանի տեղադրումն այնպիսի տեղեկության տրամադրում է, որը հնարավորություն է տալիս նշված ապրանքային նշանը նախընտրող

սպառողին բացահայտելու կազմակերպության գտնվելու, գործունեություն իրականացնելու վայրը, այլ ոչ թե դրա նկատմամբ պահպանելու իրենց վերաբերմունքը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ խնդրո առարկա վահանակների (ցուցանակների) տեղադրումը, հնարավոր այլ նպատակներ ունենալու հետ մեկտեղ, իր մեծադիր չափերով ակնհայտորեն անորոշ թվով անձանց շրջանում տեղեկություն է տարածում դեղատնային ապրանքների վաճառքի վայրի՝ Ընկերության դեղատան մասին, նույնիսկ, եթե Ընկերությունն այդ ցուցանակների տեղադրումով նման նպատակ չի ունեցել, ապա դա ևս չի կարող «Դեղատուն» կամ «Դեղատուն Alfa Pharm» գրվածքները որպես արտաքին գովազդ դիտարկելու հիմք հանդիսանալ, քանի որ տեղեկությունը գովազդ համարելու համար անհրաժեշտ է, որպեսզի այն նպատակ ունենա որոշակի հետաքրքրություն և/կամ դրական վերաբերմունք ձևավորելու կամ պահպանելու, մինչդեռ կազմակերպության գործունեություն իրականացնելու վայրի մասին այդ վայրում տեղադրված ցուցանակով տեղեկություն տարածելը համապատասխանում է գործարար շրջանառության սովորույթներին, և բավարար չէ «Դեղատուն» կամ «Դեղատուն Alfa Pharm» գրվածքները գովազդ համարելու համար:

«Դեղատուն» և «Դեղատուն Alfa Pharm» գրվածքներն արտաքին գովազդ չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետի 19.12.2012 թվականի թիվ Վ-44/21, Վ-44/22, Վ-44/23, Վ-44/24, Վ-44/25, Վ-44/26, Վ-44/28 և Վ-44/29 որոշումներն անվավեր ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հիմնավորվում են վերոնշյալ պատճառարանություններով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը, հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.05.2014 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան կոնվենցիայի (ստորագրվել է 20.03.1883 թվականին) 6-րդ BIS հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 20.03.2000 թվականին, ուժի մեջ է մտել 15.04.2000 թվականին, ուժը կորցրել է 01.07.2010 թվականին) 4-րդ հոդվածը, 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, սխալ է մեկնաբանել նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ առևտրի և փոխտնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգի 92-րդ, 98-րդ, 99-րդ, 100-րդ, 105.1-րդ կետերը, խախտել է գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 117.14-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 131-րդ, 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անվիճելի փաստ է, որ «Անի» ապրանքային նշանը ՀՀ արտոնագրային վարչության (այսուհետ՝ Վարչություն) բողոքարկման խորհրդի 12.03.2001 թվականի թիվ 1-128/5 որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում Ընկերության անունով ճանաչվել է հանրահայտ՝ Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի 33-րդ դասում հայկական կոնյակի համար՝ սկսած 1978 թվականից: Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ չի անդրադարձել նշված փաստին, փոխարենը հիշատակել է սույն գործին առնչություն չունեցող Ընկերության անունով «ԱՐԱՐԱՍ» ապրանքային նշանի հանրահայտ ճանաչման փաստը: Նույնքան անվիճելի է, որ Ընկերությանը և Կազմակերպությանը պատկանող ապրանքային նշանները գրանցվել են նույն արտադրանքի՝ կոնյակի համար: Այս պարագայում միանշանակ է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան կոնվենցիայի 6-րդ BIS հոդվածը ենթակա են կիրառման, և հենց այդ նորմերի շրջանակում պետք է որոշվի «Ami» ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ 02.12.2010 թվականի թիվ 16251 վարչական ակտի իրավաչափությունը՝ «Ami» ապրանքային նշանն Ընկերության հանրահայտ «Անի» ապրանքային նշանի հետ համեմատելու և դրանց միջև շփոթության աստիճանի նմանությունը պարզելու միջոցով, ինչը Վերաքննիչ դատարանը չի արել:

Վերաքննիչ դատարանը, չկիրառելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը և 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, ինչպես նաև «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան կոնվենցիայի 6-րդ BIS հոդվածը, անտեսել է այն առավել լայն պաշտպանությունը, որը սահմանված է հանրահայտ ապրանքային նշանների համար: Արդյունքում, Վերաքննիչ դատարանն ապօրինաբար և արհեստականորեն ստեղծել է հնարավորություն այնպիսի ապրանքային նշանի գրանցումն ուժի մեջ թողնելու համար, որը, բացի Ընկերության հանրահայտ նշանի հետ շփոթություն առաջացնելուց, վնասում է նաև Ընկերության օրինական շահերը՝ վերջինիս հանրահայտ «Անի» ապրանքային նշանի տարբերակիչ հատկության կամ բարի համբավի շնորհիվ անհիմն առավելություն տալու և դրանց վնաս հասցնելու միջոցով:

Վերաքննիչ դատարանն առանց որևէ հիմքի և ակնհայտորեն անօրինական կերպով անտեսել է այն փաստը, որ հայտարկված ապրանքային նշանի գրանցման մերժման հիմք է ոչ միայն դրա նույնականությունը, այլ նաև որպես այլընտրանք շփոթելու աստիճան նմանությունը գրանցված ապրանքային նշանին, և այդ նմանությունը գնահատելիս նախ և առաջ պետք է հաշվի առնվեն այդ նշանների տարբերակիչ տարրերի նմանությունները՝ անկախ լրացուցիչ և աննշան տարրերի և տարբերությունների առկայության:

Վերաքննիչ դատարանը հրաժարվել է Կազմակերպության անունով գրանցված «Ami» բառային ապրանքային նշանը համեմատել Ընկերության անունով գրանցված «ԱՄԻ» բառային ապրանքային նշանի հետ, իսկ Ընկերության անունով գրանցված համակցված նշանների մասով համեմատությունն իրականացրել է դրանց բոլոր բառային տարրերի հետ միաժամանակ՝ հրաժարվելով դրանց «ANI», «ԱՄԻ» և «AHH» տարրերը դիտարկել որպես տարբերակիչ հատկություն ունեցող տարրեր, և «Ami» բառային ապրանքային նշանի և Ընկերության գրանցված ապրանքային նշանների միջև շփոթության աստիճանի նմանությունը բացառել է վերջինիս համակցված նշաններում «ARARAT» տարրի առկայությամբ: Այս առումով Վերաքննիչ դատարանն առանց որևէ հիմքի և ակնհայտորեն անօրինական կերպով անտեսել է ինչպես Ընկերության անունով գրանցված «ԱՄԻ» բառային ապրանքային նշանի առկայությունը, այնպես էլ այն փաստը, որ հանրահայտ ապրանքային նշանի վերարտադրություն հանդիսացող «ANI», «ԱՄԻ» և «AHH» տարրերը հանդես են գալիս և սպառողի կողմից անխուսափելիորեն ընկալվում են որպես համապատասխան ապրանքի անվանում և ապրանքային նշանի հիմնական ընկալման տարր (անվիճելի փաստ է, որ Ընկերության կողմից արտադրվող արտադրանքն սպառողների շրջանակում հանրահայտ է որպես «ԱՄԻ» կոնյակ, որի անվանումը նրանց ծանոթ է ինչպես հայերեն, այնպես էլ կիրիլյան և լատինատառ այբուբեններով, որոնցով այն գրված է ապրանքի պիտակների վրա):

Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի ուսումնասիրել սույն գործի ճիշտ լուծման համար կարևորագույն նշանակություն ունեցող ապացույցները, այն է՝ Վարչության բողոքարկման խորհրդի 12.03.2001 թվականի թիվ 1-128/5 որոշումը և «ԱՄԻ» բառային ապրանքային նշանի թիվ 5318 գրանցման վկայականը, և չի ներկայացրել այդ ապացույցները մերժելու փաստարկներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.04.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 16.10.2012 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Ընկերությանը և Կազմակերպությանը պատկանող ապրանքային նշաններն օգտագործվում են նույն արտադրանքի՝ կոնյակի համար: Այսինքն՝ այն, որ արտադրվող ապրանքները նույնական են, անվիճելի է, հետևաբար անհրաժեշտ է, որ ապրանքային նշանների միջև նմանությունն էական լինի:

«Ապրանքային նշանի նմանություն» ասելով, ի թիվս այլ հատկանիշների, պետք է հասկանալ նաև ապրանքային նշանը մեկ այլ ապրանքային նշանի հետ շփոթելու հավանականությունը, ինչի գնահատումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, մասնավորապես՝ շուկայում ապրանքային նշանը ճանաչելով, օգտագործվող կամ գրանցված ապրանքային նշանի հետ հնարավոր զուգակցումներով, ապրանքային նշանի և այլ նշանի, նախատեսված ապրանքների նմանության աստիճանից:

Ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը գնահատելու համար անհրաժեշտ է գնահատման առարկա դարձնել ապրանքային նշանի յուրաքանչյուր տարր՝

առանձին վերցրած:

Անդրադատնապով վիճելի ապրանքային նշանների պատկերային ընկալմանը՝ հարկ է նշել, որ Ընկերության անվամբ գրանցված ապրանքային նշանների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր դեպքում «ANI» բառն օգտագործվում է «ARARAT» և «ԱՆԻ» բառերի հետ միասին՝ որպես միասնություն: Այսինքն՝ տվյալ դեպքում «ANI» տարրը չի հանդիսանում հիմնական ընկալման տարր, քանի որ պատկերային ողջ ընկալումն իրենց վրա են վերցնում մյուս՝ «ԱՆԻ» և հատկապես «ARARAT» տարրերը, մինչդեռ «Ami» տարրի դեպքում այն հանդիսանում է հիմնական ընկալման տարր, առաջնային տարր, և ողջ ընկալումն ընկած է հենց այդ տարրի վրա: Հետևաբար անիմաստ է խոսել տարբերակիչ հատկության բացակայության և (կամ) շփոթության աստիճան նմանության մասին:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի որոշումը համապատասխանում է դատական ակտերի հիմնավորվածության և օրինականության չափանիշներին, և առկա չէ որևէ հակասություն Վերաքննիչ դատարանի դատական ակտի և բողոք բերած անձի կողմից վկայակոչված թիվ 3-1763(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման միջև:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վարչության կողմից տրված «Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման» թիվ 5318 վկայականի համաձայն՝ Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի 33-րդ դասի համար Ընկերության անվամբ 15.09.2000 թվականին գրանցվել է «ԱՆԻ» ապրանքային նշանը, որպիսի գրանցման գործողության ժամկետը սահմանվել է մինչև 10.06.2009 թվականը, ապա այն երկարաձգվել է մինչև 10.06.2019 թվականը (հատոր 1-ին, գ.թ. 30-31):

2) Վարչության բողոքարկման խորհրդի 12.03.2001 թվականի թիվ 1-128/5 որոշմամբ բավարարվել է Ընկերության դիմումը, և «Անի» բառային ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվել Հայաստանի Հանրապետությունում 1978 թվականից՝ Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի 33-րդ դասի՝ «Հայկական կոնյակ» ապրանքների համար (հատոր 1-ին, գ.թ. 92-93):

3) Գործակալության տված «Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման» թիվ 10003 և թիվ 10004 վկայագրերի համաձայն՝ Ընկերության անվամբ 16.11.2005 թվականին գրանցվել են «APAPAT ԱՆԻ AHI» և «ARARAT ԱՆԻ ANI» համակցված ապրանքային նշանները (հատոր 1-ին, գ.թ. 32-33):

4) Գործակալության կողմից 02.12.2010 թվականին տրված թիվ 16251 վկայագրի համաձայն՝ Կազմակերպության անվամբ Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի 33-րդ դասի համար գրանցվել է «Ami» ապրանքային նշանը (հատոր 1-ին, գ.թ. 35):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ապրանքային նշան-

ների շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոնների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգի 92-րդ, 98-րդ, 99-րդ, 100-րդ, 105.1-րդ կետերը սխալ մեկնաբանելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ՝

1) ապրանքային նշանի իրավական պահպանության երաշխիքներին՝ ընդհանրապես.

2) ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոններին.

3) հանրահայտ ապրանքային նշանների իրավական պահպանության առանձնահատկություններին:

Մինչ վերը նշված հարցադրումներին անդրադառնալը Վճռաբեկ դատարանը նախ և առաջ հարկ է համարում որոշել կիրառելի օրենսդրության հարցը:

Սույն գործով վիճարկվում է 02.12.2010 թվականին թիվ 16251 համարով «Ami» ապրանքային նշանի գրանցումը:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 29.04.2010 թվականին, ուժի մեջ է մտել 01.07.2010 թվականին) 4-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական լիազոր մարմին ներկայացված հայտերի քննարկումը, որոնց նախնական փորձաքննությունն ավարտված չէ, իրականացվում է նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական լիազոր մարմին ներկայացված հայտերի քննարկումը, որոնց նախնական փորձաքննությունն ավարտված է, իրականացվում է նույն օրենքով սահմանված կարգով՝ առանց նույն օրենքի 44-րդ հոդվածով, 45-րդ հոդվածի 2-րդ մասով, 45-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 46-րդ հոդվածով նախատեսված դրույթների կիրառման:

Վկայակոչված հոդվածի 5-րդ մասով սահմանված են այն իրավանորմերը, որոնք կիրառելի չեն այն հայտերի քննարկման համար, որոնց նախնական փորձաքննությունն ավարտված է եղել օրենքի ուժի մեջ մտնելու պահին: Մասնավորապես, նշված նորմերով կարգավորվում են հայտի ըստ էության փորձաքննության, դիտողությունների և առարկությունների քննարկման հարցերը:

Տվյալ պարագայում, նկատի ունենալով, որ ըստ էության փորձաքննության ժամանակ ստուգվում է հայտարկված ապրանքային նշանի համապատասխանությունն օրենքով սահմանված պահպանության պայմաններին, իսկ Կազմակերպության կողմից ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացվել և հայտարարված ապրանքային նշանի ըստ էության փորձաքննությունն ավարտվել են մինչև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը՝ համապատասխանաբար 04.11.2009 թվականին և 19.04.2010 թվականին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող ապրանքային նշանի գրանցման իրավաչափության հարցի վերաբերյալ ստորադաս դատարանի եզրահանգումների օրինաչափությունը և հիմնավորվածությունը ենթակա են ստուգման իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների

ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգի դրույթների հիման վրա:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ առաջադրված հարցադրումներին անդրադառնում է նաև գործող «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 18.11.2010 թվականի թիվ 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգով» իրավակարգավորումների լույսի ներքո:

1) Ապրանքային նշանի իրավական պահպանության երաշխիքները.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով, իսկ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, բացի վերոգրյալ երաշխիքներից, իրականացվում է նաև օրենքի ուժով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածն ըստ էության կիրառելի է նաև մտավոր սեփականության նկատմամբ (*տե՛ս, օրինակ «ANHEUSER-BUSCH INC» ընկերությունն ընդդեմ Պորտուգալիայի թիվ 73049/01 գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 11.01.2007 թվականի վճիռը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մտավոր սեփականության իրավունքի, այդ թվում նաև ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի՝ որպես մտավոր սեփականության օբյեկտի իրավական պաշտպանությունն իրականացվում է վերոգրյալ նորմերի և դրանց կիրառումն ապահովելու նպատակով ընդունված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ուժով:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է՝

1) նույն օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման հիման վրա.

2) նույն օրենքով սահմանված կարգով ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա.

3) Մադրիդյան համաձայնագրի կամ Մադրիդյան համաձայնագրի արձանագրության համաձայն՝ միջազգային գրանցման հիման վրա:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ ապրանքային նշաններին իրավական պահպանություն է տրամադրվում ոչ միայն դրանց գրանցման, այլ նաև դրանց հանրահայտ ճանաչելու, ինչպես նաև որոշ դեպքերում (հայտատուի անբարեխիղճ գործելու դեպքում)՝ ապրանքային նշանի օգտագործման ուժով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ապրանքային նշանի իրավական պահպանությունը նպատակաուղղված է անարդար մրցակցությունը կանխելուն, ներդրումների պաշտպանվածությունը երաշխավորելուն, սպառողների շահերի պաշտպանությանն ընդդեմ կեղծ կամ ապակողմնորոշող գովազդի և անտրակ ապրանքների կամ ծառայությունների:

2) Ապրանքային նշանների շփոթելու աստիճանն նմանությունը որոշելու կանոնները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային և սպասարկման նշանը (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Վկայակոչված իրավադրույթից հետևում է, որ ապրանքային նշանին բնորոշ է տարբերակիչ բնույթը, ինչը հնարավորություն է տալիս սպառողին նույնականացնել ապրանքը և դրա ծագման աղբյուրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ ապրանքային նշանների տեսակները, որպես ապրանքային նշան չգրանցվող նշանները, ապրանքային նշանները գրանցելու, դրանց գրանցումը չեղյալ հայտարարելու և անվավեր ճանաչելու կարգը, ինչպես նաև չգրանցված ապրանքային նշաններին իրավական պահպանություն տրամադրելու դեպքերը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը, ինչպես նաև այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրանցված ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի արգելելու երրորդ անձանց, առանց իր թույլտվության, առևտրային գործունեության ընթացքում օգտագործել ցանկացած նիշ, որը՝

1) նույնական է գրանցված ապրանքային նշանին և օգտագործվում է այն ապրանքներին

րի և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը.

2) նույնական կամ նման է գրանցված ապրանքային նշանին և օգտագործվում է այնպիսի ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, եթե այդ նշանի օգտագործումն սպառողների մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ գրանցված ապրանքային նշանին զուգորդումը.

3) նույնական կամ նման է ապրանքային նշանին, որը գրանցված է այլ ապրանքների և (կամ) ծառայությունների համար, եթե վերջինս համբավ ունի (ճանաչված է) Հայաստանի Հանրապետությունում, և այդ նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կրերի կամ վնաս կհասցնի ապրանքային նշանի տարբերակիչ բնույթին կամ համբավին (ճանաչվածությունը):

Վկայակոչված իրավադրույթով օրենսդիրը, ըստ էության, նախատեսել է այն պայմանները և եղանակները, որոնցով կարող է դրսևորվել ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի խախտումը:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ դատական պրակտիկայում առավել խնդրահարույց է «շփոթելու սպրիճան նման ապրանքային նշանների» օգտագործման եղանակով ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների խախտման դրսևորումներին իրավական գնահատական տալը, և միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով վիճելի իրավահարաբերությունը ևս առնչվում է նշված խնդրին, հարկ է համարում հնարավորինս մանրամասն անդրադառնալ ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոններին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի կիրառումը մեկ այլ ապրանքային նշանի տարրերի նմանակումն է, որը թեև չի կարող գնահատվել որպես նույնական նշանի կիրառում, սակայն բավարար է սպառողի մոտ շփոթություն առաջացնելու համար: Շփոթությունը, մասնավորապես, կարող է արտահայտվել սպառողի մոտ՝ տպավորություն ստեղծելով, որ երկու տարբեր ապրանքներ կամ ծառայություններ համապատասխանաբար արտադրվում կամ մատուցվում են միևնույն անձի կողմից այն դեպքում, երբ իրականում այդպես չէ: Ընդ որում, սպառողը, ակնկալելով կոնկրետ անձի արտադրանքի որոշակի որակ, որին նախապես ծանոթ է եղել, կարող է միայն հիասթափություն ապրել մեկ ուրիշի արտադրանքում դրա բացակայության պատճառով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը յուրաքանչյուր կոնկրետ գործով գնահատման ելթակա փաստ է, որն իրականացնելու պարտականությունը կրում է դատարանը, և որը պետք է իրականացվի մի շարք պարտադիր չափորոշիչների (ապրանքային նշանների նմանությունը, ապրանքային նշանի պաշտպանվածության աստիճանը, ապրանքատեսակների նմանությունը, փաստացի շփոթության հնարավորությունը, օգտագործված մարքեթինգային ուղիները, ապրանքի տեսակը, գնորդի հավանական ուշադրությունը, արտադրանքի տեսականին ընդլայնելու հավանականությունը, ապրանքների մրցունակությունը և այլն) գնահատման արդյունքում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝

ա) նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի

անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված ավելի վաղ առաջնությանը ապրանքային նշանին.

բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման՝ պաշտպանվող այլ անձանց ապրանքային նշաններին.

գ) Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ապրանքային նշաններին, որոնք որոշվում են պետական լիազորված մարմնի կողմից.

դ) Հայաստանի Հանրապետության օրենքով պահպանվող ապրանքի ծագման տեղանվանը, բացառությամբ այն դեպքերի, երբ որպես չպահպանվող տարր այն ներառված է տեղանվան օգտագործման իրավունք ունեցող անձանց անունով գրանցված ապրանքային նշանի մեջ.

ե) սահմանված կարգով գրանցված հավաստագրային նշաններին:

Համանման իրավակարգավորում բովանդակում է նաև գործող «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը:

«Շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի» ամբողջական բնորոշումը և բնութագրիչ հատկանիշները սահմանված են համապատասխան ենթաօրենսդրական ակտերում, մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանով, ինչպես նաև գործող՝ ՀՀ կառավարության 18.11.2010 թվականի թիվ 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգով»:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանի 92-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ, այսինքն՝ մարդու մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն՝ չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարբերը կամ դրանց մասը համընկնում են կամ կատարված են այնպես, որ, տեսնելով դրանցից մեկը, սպառողի մոտ առաջանում է մտապատկերված մեկ այլ նշանի մասին պատկերացում, որին ինքն արդեն առնչվել է: Պետք է հաշվի առնել, որ առանձին տարբերությունների առկայությունը սովորաբար որոշվում է անմիջական համեմատության արդյունքում, այդ նշանների այնպիսի տարբերություններով, որոնք էական դեր չեն կատարում նշանի ընկալման համար:

Վերոնշյալ կարգի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ կետի, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ շփոթելու աստիճան նման նշանի կիրառում առկա է, եթե նույնական կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների անհատականացման համար օգտագործվում է այնպիսի ապրանքային նշան, որն սպառողի մոտ առաջացնում է շփոթելու հավանականություն արդեն իսկ գրանցված ապրանքային նշանի հետ: Ինչ վերաբերում է հանրահայտ ապրանքային նշաններին, ապա դրանց իրավական պաշտպանությունը տարածվում է նաև այն դեպքերի համար, երբ նույնական կամ նման ապրանքային նշանն օգտագործվում է նաև այլ (ոչ նույնական կամ նույնատիպ) ապրանքների և (կամ) ծառայու-

թյունների համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի կիրառման փաստն արձանագրելու համար հարկավոր է հետևյալ 3 տարրերի միաժամանակյա առկայությունը: Դրանք են՝

1. համապատասխան ապրանքների նույնական կամ նույնատիպ լինելը (բացառությամբ հանրահայտ ապրանքային նշանների).

2. նշանների նմանությունը.

3. սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգը:

Նմանական վերոնշյալ առաջին երկու տարրերը՝ ապրանքների նույն կամ նույնատիպ լինելը, ինչպես նաև նշանների նմանությունը, օբյեկտիվ տարրեր են, իսկ սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգը՝ սուբյեկտիվ տարր:

1. Ապրանքների նույն կամ նույնատիպ լինելը. վերոնշյալ օրենսդրական կարգավորումից հետևում է, որ առաջնային է ապրանքների մասնագիտացման սկզբունքը, համաձայն որի՝ ապրանքային նշանը սեփականատիրոջ կողմից գրանցվում է որոշակի տեսակի ապրանքների անհատականացման համար, որոնք վերջինիս կողմից նշվում են գրացման հայտում, իսկ համապատասխան նշանը մնում է ազատ այլ ապրանքների համար (բայց ոչ նույնատիպ):

Իրավակիրառ պրակտիկայում որոշակի բարդություն է ներկայացնում «նույնատիպ ապրանքներ» հասկացությունը, ուստի Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերջինիս բովանդակության բացահայտմանը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 106-րդ կետի համաձայն՝ նույնատիպ ապրանքներ համարվում են նույն սեռին, տեսակին վերաբերող այն ապրանքները, որոնք նման ապրանքային նշանով նշելու դեպքում սպառողի կողմից ընկալվում են որպես նույն ընկերության արտադրանք:

Ապրանքների նույնատիպ լինելը որոշելիս հաշվի է առնվում՝

- ապրանքի տեսակը,
- ապրանքի պատրաստման առանձնահատկությունները (տեխնոլոգիական),
- ապրանքի օգտագործման բնագավառը,
- ապրանքի իրացման պայմանները (իրացման ոլորտը և կարգը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ շփոթելու աստիճան նմանության փաստն արձանագրելու համար բավականին մեծ կարևորություն է տրվում մի այնպիսի հանգամանքի առկայությանը, ինչպիսին է ապրանքների նույն կամ նույնատիպ լինելը: Մասնավորապես, վերջինիս մանրակրկիտ և պատշաճ գնահատման դեպքում կարելի է եզրահանգումներ անել այն մասին, թե որքանով ապրանքների նույն կամ նույնատիպ լինելը կարող է ազդեցություն ունենալ սպառողների գիտակցության վրա՝ այս կամ այն ապրանքային նշանով անհատականացված ապրանքի ընտրության հարցում, և որն է ապրանքի նույն կամ նույնատիպ լինելու ազդեցությունը և դրա չափաբաժինը՝ սպառողների շրջանում համապատասխան ապրանքն արտադրողի հարցում շփոթության առաջացման համար:

Նույնատիպ են համարվում այն ապրանքները, որոնք իրականացնում են նույնանման գործառույթ, ծառայում են նույնանման նպատակի (օրինակ՝ թթվասերը և մածուկը), իսկ որպես նույն տեսակի ապրանք կարող է համարվել ավտոմեքենան և հեծանիվը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ բավականին մեծ է այն բանի հավանականությունը, որ թե՛ ավտոմեքենան և թե՛ հեծանիվը արտադրվում են միևնույն անձի կողմից:

2. Նշանների նմանություն. նշանների նմանությունը գնահատելիս հարկավոր է դրանք համեմատել այն տեսքով, որով դրանք գրանցվել են:

Ինչ վերաբերում է բառային (տառային) ապրանքային նշաններին, ապա այդ նշանները, որպես կանոն, դասվում են այն ապրանքային նշանների շարքին, որոնք ընկալվում են միաժամանակ տեսողական, իմաստային և ձայնային եղանակով: Այսինքն՝ բառային ապրանքային նշանն առկա է և իրականացնում է իր առջև դրված գործառնությունները՝ անկախ դրա հավելումներից, հետևաբար երկու նշանները պետք է գնահատվեն ինքնուրույնաբար՝ առանց հաշվի առնելու դրանց ներկայացման եղանակը, իսկ համեմատության առարկա պետք է դառնա միայն համապատասխան նշանը՝ առանց հաշվի առնելու այդ նշանի գեղագրությունը: Այսինքն՝ ապրանքային նշաններում պաշտպանության օբյեկտ է հանդիսանում միայն հիմնական տարբերակիչ տարրը, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան նշանին կատարված հավելումներն այնքանով են փոխում այդ նշանը, որ հիմնական տարրը կորցնում է իր անհատականությունը և տարբերակիչ նշանակությունը:

Իրավակիրառ պրակտիկայում առանձնակի կարևորվում է համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելու հարցը: Այդ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը «Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ն ընդդեմ «Արարատ» ՍՊԸ-ի գործով դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ համակցված ապրանքային նշանների նմանական հարցը որոշելիս վերջիններս համեմատվում են նաև այն նշանների հետ (բառային, պատկերային և այլն), որոնք որպես տարրեր ներառված են համապատասխան համակցված ապրանքային նշանի մեջ (*յուն. թիվ 3-1763(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ապրանքային նշանի համեմատության ընթացքում նախ և առաջ պետք է հաշվի առնվի տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը՝ անկախ լրացուցիչ և զուտ սիմվոլիկ տարրերի առկայությունից: Այսինքն՝ եթե ապրանքային նշանում կրկնվում է տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը, ապա կարելի է եզրակացնել, որ այն ունի շփոթելու աստիճան նմանություն:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ապրանքային նշանները պետք է համեմատության առարկա դարձվեն որպես ամբողջություն, որպեսզի ստեղծվի նույն իրադրությունը, որն առկա է սպառողի մոտ, քանի որ վերջինս իր տրամադրության տակ չունի երկու նշանները, որպեսզի կարողանա գտնել դրանց տարբերակիչ հատկանիշները:

Այսինքն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ապրանքային նշանի հիմնական նպատակն է անհատականացնել ապրանքը և ուղղորդել հնարավոր սպառողներին, ապրանքային նշանների նմանությունը գնահատելիս պետք է հաշվի առնել նաև սպառողների զարգացվածության և պատրաստվածության մակարդակը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև անդրադառանալ այն խնդրին, որ երկու ապրանքային նշանների համեմատության ընթացքում դատարանը պետք է հաշվի առնի ապրանքային նշանների թե՛ նմանությունները, թե՛ տարբերությունները:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ, հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանի 92-րդ կետի 2-րդ պարբերությունը, եկել է այն եզրահանգման, որ ապրանքային նշանները համեմատելիս նախ և առաջ պետք է հաշվի առնվեն այդ նշանների նմանությունները (որն ունի տարբերակիչ նշանակություն)՝ անկախ լրացուցիչ և աննշան տարրերի առկայության: Այսինքն՝ եթե ապրանքային նշանում կրկնվում է տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը, կարելի է եզրակացնել, որ այն ունի շփոթելու աստիճանի նմանություն (*յուն. թիվ 3-1763(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճ-*

նաբեկ դապարտանի 12.12.2007 թվականի որոշումը):

Ապրանքային նշանների շփոթության աստիճան նմանության հարցի նկատմամբ նման մոտեցումը բացատրվում է այն հանգամանքով, որ սպառողը այս կամ այն ապրանքն ընտրելիս առաջին հերթին ուշադրություն է դարձնում հենց ապրանքային նշանին և դրանում գտնելով իրեն արդեն իսկ հայտնի ապրանքային նշանի հիմնական բաղադրատարրերը՝ կարող է սխալ համոզմունք ձեռք բերել համապատասխան ապրանքն արտադրողի հարցում՝ առանց նկատելու այն չնչին տարբերությունները, որոնք սպառողը կարող էր նկատել միայն այդ երկու ապրանքային նշաններն իրար կողք կողքի համեմատելիս:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանի 103-րդ կետի համաձայն՝ պատկերային և ծավալային նշանների նմանությունը որոշվում է հետևյալ հատկանիշներով՝

- 1) արտաքին տեսքով.
- 2) սիմետրիայի առկայությամբ կամ բացակայությամբ.
- 3) իմաստային նշանակությամբ.
- 4) պատկերի տեսքով և բնույթով (նատուրալիստական, ոճավորված, ծաղրանկարային և այլն).
- 5) գույների և երանգների զուգադրմամբ.
- 6) համեմատվող նշաններում մոտ և համընկնող պատկերների (տարրերի) առկայությամբ և միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.
- 7) նշանների համընկնող մասերի բնույթով.
- 8) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով.
- 9) նշանների տարրերից (պատկերներից) որևէ համընկնող տարրով (պատկերով), որն առանձին իմաստ ունի, և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտը:

Վերոգրյալից հետևում է, որ սպառողի մոտ շփոթություն կարող են առաջացնել հետևյալ նմանությունները՝

ա) Տեսողական նմանություններ. տեսողական նմանությունները կարող են արտահայտվել հետևյալ եղանակներով.

- մեկ այլ բառի (բառերի) ավելացումով.
- մեկ տառը հանելով. սովորաբար այս եղանակն օգտագործվում է, երբ ապրանքային նշանը բաղկացած է մեկ բառից:
- մեկ տառ ավելացնելով.
- մեկ կամ մի քանի տառեր փոփոխելով. հարկ է նշել, որ վերոնշյալ մեթոդը ամենատարածվածն է ապրանքային նշանների նմանակման գործում:

Նման դեպքերում պետք է հաշվի առնել, որ տառերի փոփոխությունը կարող է հիմք հանդիսանալ ապրանքային նշանների շփոթելու աստիճանի նմանությունը հաստատված համարելու համար, եթե այդ երկու ապրանքային նշաններն ունեն նույն կառուցվածքը և նույնանում են տեսողական առումով: Բացի այդ, դատարանը կարող է հաշվի առնել նաև նշանների պարզ ֆոնետիկ նմանությունը:

բ) Սերավոր (իմաստային) նմանություններ. Ի տարբերություն տեսողական նմանությունների, որի դեպքում հաշվի է առնվում սպառողների շրջանում տեսողական եղանակով շփոթություն առաջանալու ռիսկը, սպա այս դեպքում պետք է հաշվի առնվի նաև իմաստային նմանությունը պաշտպանվող և նմանակվող ապրանքային նշանների միջև: Այսինքն՝ այս դեպքում նմանակման փաստը հաստատված համարելու համար անհրաժեշտ է գտնել իմաստային ընդհանրություն երկու նշանների միջև, որը կարող է իրականացվել հետևյալ եղանակներով.

- պաշտպանվող ապրանքային նշանի հոմանիշի օգտագործման եղանակով.
- պաշտպանվող ապրանքային նշանի թարգմանության օգտագործման եղանակով:

Այս դեպքում հատկանշական է և պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, թե արդյոք համապատասխան թարգմանության իմաստը հանրության մեծ շրջանակի համար հասկանալի է, թե ոչ: Այսինքն՝ նմանակումն առկա է այն բոլոր դեպքերում, երբ որպես ապրանքային նշան օգտագործվում է այն բառի թարգմանությունը, որը հանրության մեծ մասին ծանոթ է, կամ այն պարզ պատճառով, որ այն հասարակ առօրյայում օգտագործվող բառ է, կամ էլ այն բավականին թափանցիկ է հանրության համար:

գ) *Չայնային նմանություններ.* Չայնային նմանությունը, համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանի 98-րդ կետի, կարող է որոշվել հետևյալ հատկանիշներով՝

1) համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ.
 2) նշանը կազմող մոտ հնչյունների մոտիկությամբ.
 3) մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.

4) համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ.

5) նշանի մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակով.

6) նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղով.

7) ձայնավորների կազմի մոտիկությամբ.

8) բաղաձայնների կազմի մոտիկությամբ.

9) նշանների համընկնող մասերի բնությամբ.

10) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, հատկապես բառային արտահայտությունների, այդ թվում՝ ֆիրմային անվանումների մեջ: Այս դեպքում համընկնող վանկերի առկայության կամ մի նշանն այլ նշանի մեջ մտնելու դեպքում նմանության ծագման որոշիչ գործոն է համարվում համընկնող մասերի սկզբնական դիրքը: Շատ դեպքերում նշանների նման ճանաչման հիմք կարող է հանդիսանալ ինչպես սկզբնամասերի, այնպես էլ վերջնամասերի համընկնումը՝ տարբեր միջնամասերի դեպքում.

11) շեշտադրությամբ:

3. Սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգ. ապրանքային նշանի նմանակման փաստն արձանագրելու համար պարտադիր է նաև տույլեկտիվ տարրի առկայությունը, այն է՝ սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգի առկայությունը:

Շփոթության վտանգն առկա է այն դեպքում, երբ նմանակումը սպառողին մղում է այն մտքին, որ այդ նշանով անհատականացված ապրանքն իրեն նախկինում հայտնի արտադրողի ապրանքն է, ինչը նրան ստիպում է կամ կարող է ստիպել ընտրելու ոչ այն ապրանքը, որը նա փնտրում է: Ընդ որում, իրավախախտման փաստն արձանագրելու համար բավարար է «շփոթության իրական հավանականությունը», այլ ոչ «փաստացի շփոթությունը»:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ապրանքային նշանը կարող է որակվել որպես նմանակված, եթե ապացուցվի, որ այն շփոթություն է առաջացրել այն անձանց շրջանակներում, որոնք քաջատեղյակ էին համապատասխան ապրանքային նշանի մասին: Միաժամանակ, այն հանգամանքը, որ երկու ապրանքային նշաններ բավականին երկար ժամանակաշրջանի ընթացքում համատեղությամբ գործել են առանց սպառողների շրջանակում որևէ շփոթություն առաջացնելու, վկայում է շփոթության առաջացման հնարավորության բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ, որպես կանոն, շփոթության առաջացման վտանգն ուղղակիորեն կապված է ապրանքային նշանների նմանության հետ, և այն վերջինիս տրամաբանական հետևանքն է: Այսինքն՝ ոչ նման ապրանքային նշանների դեպքում շփոթության առաջացման վտանգը բացառվում է: Սակայն որոշ դեպքերում կարող է հանդիպել հակառակ իրավիճակը, երբ նույնիսկ արտաքնապես նման ապրանքային նշանները կարող են սպառողի համար շփոթության վտանգ չստեղծել, օրինակ՝ երբ ապրանքային նշանները պարունակում են ոչ թե որոշակի հորինված բառեր, այլ հանրորեն ճանաչված բառեր, որոնք ունեն տարբեր նշանակություններ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ շփոթության առաջացման վտանգը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև ապրանքային նշանի հանրահայտ լինելու հանգամանքը, քանի որ հանրահայտ ապրանքային նշանների նմանակման դեպքում սպառողի սխալվելու հավանականությունն ավելի է մեծանում: Այս պարագայում սպառողը, նմանակված ապրանքային նշանը նմանեցնելով հանրահայտ ապրանքային նշանին, այլևս կարող է ուշադրություն չդարձնել այն չնչին տարբերություններին, որոնք առկա են այդ ապրանքային նշանների միջև: Բացի այդ, նման դեպքերում էական չէ նաև հանրահայտ ապրանքային նշանով անհատականացված ապրանքի նույն կամ նույնատիպ լինելու հանգամանքը, քանի որ հանրահայտ ապրանքային նշաններին իրավական պահպանություն է տրվում նաև դրանք միանգամայն տարբեր ապրանքների անհատականացման համար օգտագործելու դեպքերում:

Վճռաբեկ դատարանը վերոշարադրյալի հիման վրա արձանագրում է, որ միայն վերը թվարկված երեք տարրերի մանրակրկիտ գնահատման արդյունքում դատարանները կարող են հետևություն անել ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանության փաստի վերաբերյալ:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ համանման իրավակարգավորում նախատեսված է նաև ՀՀ կառավարության 18.11.2010 թվականի թիվ 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգով», վերոնշյալ մեկնաբանությունները կիրառելի են նաև նշված կարգի իրավադրույթների մեկնաբանության դեպքում:

3) Հանրահայտ ապրանքային նշանի իրավական պահպանության առանձնահատկությունները.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է նույն օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման հիման վրա, ինչպես նաև՝ նույն օրենքով սահմանված կարգով ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա:

Հանրահայտ ապրանքային նշանների իրավական պաշտպանությունը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով, որոնց համաձայն՝ գրանցված ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի արգելելու երրորդ անձանց, առանց իր թույլտվության, առևտրային գործունեության ընթացքում օգտագործել ցանկացած նիշ, որը նույնական կամ նման է ապրանքային նշանին, որը գրանցված է այլ ապրանքների և (կամ) ծառայությունների համար, եթե վերջինս համբավ ունի (ճանաչված է) Հայաստանի Հանրապետությունում, և այդ նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կրերի կամ վնաս կհասցնի ապրանքային նշանի տարբերակիչ բնույթին կամ համբավին (ճանաչվածությանը):

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ապրան-

քային նշանը Հայաստանի Հանրապետությունում կարող է հանրահայտ ճանաչվել, եթե օգտագործման արդյունքում այն լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է ապրանքային նշանը: Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում կարող է հանրահայտ ճանաչվել և իրավական պահպանություն ստանալ՝ անկախ գրանցված լինելու հանգամանքից:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենքը որպես ապրանքային նշանի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմք՝ նախատեսում է նաև սպառողների շրջանում այդ նշանի հանրահայտ ճանաչվելը: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտը պարտավորված չէ գրանցելու ապրանքային նշանը: Ապրանքային նշանի իրավական պաշտպանությունը տրամադրվում է սպառողների շրջանում այդ նշանի ճանաչված լինելու ուժով:

Այսպիսով, վերոնշյալ ակտերով սահմանված իրավական կարգավորման վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրահայտ ճանաչված ապրանքային նշաններն օգտվում են պահպանության առանձնահատուկ մեխանիզմներից: Մասնավորապես՝ վերջիններիս իրավական պահպանությունը դուրս է գալիս գրանցամատյանում նշված ապրանքների շրջանակից և կառուցվում է այդ ապրանքային նշանների հանրահայտության հիման վրա: Այսինքն՝ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանը պաշտպանված է ոչ միայն այն ապրանքների համար (կամ դրանց նույնանման), որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, այլև մյուս բոլոր ապրանքների նկատմամբ, եթե նման օգտագործումն անհիմն առավելությունների կրեթի կամ վնաս կհասցնի հանրահայտ ապրանքային նշանի տարբերակիչ բնույթին կամ համբավին (ճանաչվածությանը): Վերոնշյալ պայմաններից որևէ մեկի առկայությունը բավարար է հանրահայտ ապրանքային նշանի իրավաստիքոջ իրավունքների խախտումն արձանագրելու համար:

Հանրահայտ ապրանքային նշանների իրավական պահպանությունն իր ամրագրումն է գտել նաև «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի Փարիզյան կոնվենցիայում, ինչպես նաև «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» 1994 թվականի համաձայնագրում: Վերջինս ոչ միայն հաստատում է հանրահայտ ապրանքային նշանների պահպանության անհրաժեշտությունը, այլ նաև հնարավորություն է ստեղծում կազմակերպելու դրանց առավել լայնածավալ պաշտպանությունը:

Մասնավորապես՝ Փարիզյան կոնվենցիայի 6-րդ BIS հոդվածի համաձայն՝ բոլոր անդամ պետությունները պարտավորվում են մերժել կամ անվավեր ճանաչել ապրանքային նշանի գրանցումը, ինչպես նաև արգելել այն ապրանքային նշանի օգտագործումը, որոնք այդ երկրում հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների վերարտադրությունը, նմանակումը կամ թարգմանությունն են և շփոթելու աստիճան նման են այդ նշանին, և որոնք օգտագործվում են նույն կամ նույնանման ապրանքների նկատմամբ:

«Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրի 16-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվում է «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզյան կոնվենցիայի 6-րդ BIS հոդվածը՝ հանրահայտ ապրանքային նշանների տրամադրելով լրացուցիչ պաշտպանություն: Մասնավորապես՝ վերոնշյալ համաձայնագրով պահպանության տակ է առնվել նաև հանրահայտ ճանաչված ապրանքային նշանն այն դեպքերի համար, երբ այն օգտագործվում է ոչ նույնատիպ ապրանքների նկատմամբ, ինչը մոլորեցնելով ստիպում է այդ ապրանքների և հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրել՝ պայմանով, որ այդպիսի օգտագործումը կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

Այսինքն՝ վերոնշյալից կարելի է ենթադրել, որ ի տարբերություն նույն կամ նույնա-

տիպ ապրանքների՝ պրակտիկայում տարբեր ապրանքների անհատականացման դեպքերում հանրահայտ ապրանքային նշանների պաշտպանությունն առավել խոցելի է դառնում, այդ է պատճառը, որ օրենսդիրը ոչ նույնանման ապրանքների համար օգտագործվող հանրահայտ ապրանքային նշանի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների խախտման փաստն արձանագրելու համար ավելի խիստ պայման է նախատեսել, որը հնարավորություն կտա վերջինիս սեփականատիրոջն արգելելու իր ապրանքային նշանի օգտագործումը նույնիսկ այն ապրանքների անհատականացման համար, որի արտադրությամբ նա չի զբաղվում:

Այսպիսով, օրենսդիրն իրավական լծակներ է ստեղծել ոչ միայն նույն կամ նույնատիպ ապրանքների համար այլ անձի կողմից ապրանքային նշանի օգտագործումն արգելելու, այլ որոշ դեպքերում նաև տարբեր ապրանքների անհատականացման համար դրանց օգտագործումն արգելելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ և գնահատման առարկա դարձնել նաև հանրահայտ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների խախտման առկայության մասին փաստող այնպիսի նախապայմանների առկայությունը, ինչպիսին է հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջը հասցված վնասի առկայությունը: Մասնավորապես՝ այդպիսին կարող է լինել՝

- ապրանքային նշանի բարի համբավին վնաս հասցնելը.

Մասնավորապես՝ երբ հանրահայտ ապրանքային նշանն օգտագործվում է անորակ ապրանքների նկատմամբ, որը վնասում է հանրահայտ ապրանքային նշանի բարի համբավին:

- հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ համար նոր շուկաներ զբաղեցնելուն խոչընդոտելը.

- մեծ տարածում ստանալու հետևանքով ապրանքային նշանի միասնականության և յուրահատկության կորուստը:

Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև ապրանքային նշանի հանրահայտության աշխարհագրության հարցը, մասնավորապես՝ արդյոք ապրանքային նշանը հանրահայտ ճանաչվելու համար պարտադիր է, որ այն հանրահայտ լինի համապատասխան երկրի ողջ բնակչության շրջանում: Նշված հարցի կապակցությամբ «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ն ընդդեմ «ԱՐՄԵԼ Գրուպ» ՓԲԸ-ի գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ գործով կիրառման ենթակա «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասը չի սահմանում ՀՀ ողջ տարածքում ապրանքային նշանի՝ որպես տվյալ անձի կողմից արտադրվող ապրանքների տարբերակման (անհատականացման) միջոցի հանրահայտության ճանաչում, այլ մատնանշում է միայն սպառողների համապատասխան շրջանակի մոտ հանրահայտ լինելու հանգամանքը: Սա նշանակում է, որ «սպառողների համապատասխան շրջանակը» կարող է որոշվել մի շարք տեսակային հատկանիշներով, այդ թվում նաև բնակչության տարածքի հատկանիշով: Իսկ «սպառողների համապատասխան շրջանակ» հասկացությունը չի կարող նույնացվել «բոլոր սպառողներ» հասկացության հետ (*յոէս, ՀՀ վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի թիվ 3-1760(ՏԴ) որոշումը*):

Նույն իրավակարգավորումն է ամրագրված նաև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում կարող է հանրահայտ ճանաչվել, եթե օգտագործման արդյունքում այն լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է ապրանքային նշանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ

ապրանքային նշանի հանրահայտությունը որոշելիս պետք է հաշվի առնվեն տվյալ նշանի օգտագործման տևողությունը և աստիճանը, նշանի գովազդման տևողությունը և աստիճանը, նշանի ճանաչված լինելու աստիճանը, արտադրանքի տարածման մեթոդները («առևտրի ուղիներ»), այն տարածաշրջանի սպառողների կարծիքը, որտեղ կատարվում է ապրանքների սպառումը:

Վճռարեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարչության կողմից տրված «Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման» թիվ 5318 վկայականով հաստատվում է այն փաստը, որ Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի 33-րդ դասի համար Ընկերության անվամբ 15.09.2000 թվականին գրանցվել է «ԱՆԻ» ապրանքային նշանը: Իսկ Վարչության բողոքարկման խորհրդի 12.03.2001 թվականի թիվ 1-128/5 որոշմամբ «Անի» բառային ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվել Հայաստանի Հանրապետությունում 1978 թվականից՝ Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի 33-րդ դասի՝ «Հայկական կոնյակ» ապրանքների համար: Միաժամանակ, Գործակալության տված «Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման» թիվ 10003 և թիվ 10004 վկայագրերով հաստատվում է այն փաստը, որ Ընկերության անվամբ 16.11.2005 թվականին գրանցվել են «APAPAT ԱՆԻ АНІ» և «ARARAT ԱՆԻ АНІ» համակցված ապրանքային նշանները: Գործակալության կողմից 02.12.2010 թվականին տրված թիվ 16251 վկայագրով էլ հաստատվում է այն փաստը, որ Կազմակերպության անվամբ Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի 33-րդ դասի համար գրանցվել է «Аmi» ապրանքային նշանը:

Սույն գործով Դատարանը հայրը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ բառային նշանների ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանք համընկնում են հնչյունների քանակով, համընկնող վանկերի ընդհանուր քանակով, ձայնավորների կազմի մոտիկությամբ, շեշտադրությամբ: Ինչ վերաբերում է «N» և «m» տառերի տարբերությանը, ապա հնչյունային առումով դրանք նման են և նշված բառերում դրանց հնչեղությունը կարող է շփոթություն առաջացնել սպառողների մոտ, քանի որ թե՛ արտասանության և թե՛ լսողության առումով այդ հնչյուններն իրար շատ մոտ և նման են, և դրանց շփոթելու հավանականությունը բարձր է: Միաժամանակ, Դատարանն արձանագրել է, որ ապրանքային նշանները շփոթության աստիճան նման գնահատելու հիմնական չափանիշ է հանդիսանում սպառողի մոտ դրանք շփոթելու հնարավորությունը, հետևաբար ապրանքային նշանների առանձին տարրերի նմանություններն այդ նշանների շփոթության հանգեցնելու առումով պետք է գնահատվի շփոթության հնարավորության համատեքստում, այսինքն՝ սպառողը, տեսնելով, ընթերցելով կամ լսելով ապրանքային նշանը, այն շփոթի իրեն արդեն իսկ հայտնի նշանի հետ: Այս համատեքստում շփոթության աստիճան նմանությունը կարող է առկա լինել, եթե ապրանքային նշաններն ընդհանուր առմամբ շփոթություն առաջացնեն: Այսպիսով, Դատարանը, համեմատելով վիճարկվող բառային ապրանքային նշանի Ընկերության ապրանքային նշանների բառային տարրի հետ, գտել է, որ թեև դրանց մեջ առկա են առանձին տարբերություններ, սակայն այդ տարբերությունների առկայության պայմաններում ևս վիճարկվող ապրանքային նշանը կարող է հանգեցնել շփոթության:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ ապրանքային նշաններում թեև վիճարկվող բառերը բաղկացած են երեք տառերից, որոնցից երկուսը ձայնավոր են, իսկ մեկը՝ բաղաձայն, սակայն ձայնային ընկալումն «ANI» և «Аmi» տարրերից բացի իր վրա է վերցնում մյուս՝ «ARARAT» տարրը,

հետևաբար հնչյունային ընկալմամբ ևս այն չի կարող շփոթություն առաջացնել, մասնավորապես՝ որևէ կերպ չի հիմնավորվում, որ միջին սպառողի կողմից, օրինակ՝ «Ami» ապրանքային նշանով կոնյակը ձայնային առումով կարող է ընկալվել ապրանքային նշանում գրված «ARARAT ԱՆԻ ANI» ապրանքային նշանի հնչյունային արտահայտությամբ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ երկու ապրանքային նշանների ոչ թե առանձին վերցրած «ANI» և «Ami» տարրերի, այլ դրանց բոլոր տարրերի ողջ համակցության համեմատությունից է ակնհայտ, որ դրանք էապես տարբերվում են իրարից ինչպես իմաստային, այնպես էլ ձայնային և պատկերային ընկալմամբ, քանի որ դրանք տարբեր են ինչպես գրաֆիկական պատկերման տեսանկյունից, այնպես էլ օգտագործված տառանմուշների (շրիֆտի) տեսակով և չափերով, առկա բառերով, տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևով՝ ռճավորմամբ, նշանների արտաքին տեսքերով, և սպառողն ի գործ է առաջին իսկ հայացքից տարբերակել նշված ապրանքային նշանները: Հետևաբար, Կազմակերպությանը պատկանող ապրանքային նշանը թե՛ իմաստային, թե՛ պատկերային և թե՛ ձայնային ընկալումներով շփոթելու աստիճան նման չէ Ընկերության անվամբ գրանցված ապրանքային նշանին, և ընդհանուր տեսողական և լսողական տպավորությամբ սպառողի մոտ շփոթություն առաջացնելու հնարավորությունը հավասարեցված է նվազագույնի:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ բացի «APAPAT ԱՆԻ AHI» և «ARARAT ԱՆԻ ANI» ապրանքային նշաններից, Ընկերության անվամբ գրանցված է նաև «ԱՆԻ» հանրահայտ ապրանքային նշանը, բացի այդ, «APAPAT ԱՆԻ AHI» և «ARARAT ԱՆԻ ANI» ապրանքային նշաններում «ԱՆԻ AHI» և «ԱՆԻ ANI» բառը հանդիսանում է «առաջնային ընկալման» տարր, հետևաբար Կազմակերպության անվամբ գրանցված «Ami» ապրանքային նշանի և Ընկերության կողմից օգտագործվող «ԱՆԻ» բառային և «APAPAT ԱՆԻ AHI» և «ARARAT ԱՆԻ ANI» համակցված ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս Վերաքննիչ դատարանը պետք է գնահատեր «առաջնային ընկալման» տարրի հետ նմանությունը, այլ ոչ թե համակցված ապրանքային նշանն ամբողջական ընկալմամբ:

Ընդ որում, գնահատման տարրի սխալ ընտրությունը հանգեցրել է նաև վիճելի ապրանքային նշանների նմանության վերաբերյալ սխալ եզրահանգման: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Կազմակերպությանը պատկանող ապրանքային նշանը թե՛ իմաստային, թե՛ պատկերային և թե՛ ձայնային ընկալումներով շփոթելու աստիճան նման չէ Ընկերության անվամբ գրանցված ապրանքային նշանին, և ընդհանուր տեսողական և լսողական տպավորությամբ սպառողի մոտ շփոթություն առաջացնելու հնարավորությունը հավասարեցված է նվազագույնի: Մինչդեռ «Ami» ապրանքային նշանում և «ԱՆԻ» հանրահայտ ապրանքային նշանում, «APAPAT ԱՆԻ AHI» և «ARARAT ԱՆԻ ANI» համակցված ապրանքային նշաններում առկա «ԱՆԻ», «AHI» և «ANI» տարրերում մոտ և համընկնող հնչյունների առկայությունը (այն է՝ «m» և «n», «t», «h», «N»), նշանները կազմող մոտ հնչյունների մոտիկությունը, իրար մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությունը (այն է՝ «A-mi» և «A-nի», «A-tի», «A-HI», «A-NI»), համընկնող վանկերի առկայությունը և դրանց դասավորվածությունը, նշանների մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակը (երկու վանկ՝ «Ami» և «A-nի», «A-tի», «A-HI», «A-NI»), նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղը (այն է՝ «mi» և «նի», «տի», «HI», «NI»), ձայնավորների կազմի մոտիկությունը (այն է՝ «A-i» և «A-tի», «A-ի», «A-ի», «A-ի»), բաղաձայնների կազմի մոտիկությունը (այն է՝ «m» և «n», «t», «h», «N»), շեշտադրությունը (երկու դեպքում էլ շեշտը դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա) առերևույթ վկայում են վերը նշված ապրանքային նշանների նմանության մասին, որի ստույգ առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև

շփոթություն առաջացնելու հավանականությունը կարող է պարզվել գործի նոր քննության ընթացքում՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգի 92-րդ, 96-99-րդ, 105.1-րդ կետերի խախտմամբ, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծմանը:

Նշված պայրճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար՝ գործի փաստերը վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո պարզելու և գնահատելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.04.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/8383/05/12

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Գ. Ղարիբյան

Ա. Աբովյան

Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/8383/05/12
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Հակոբյանի ներկայացուցիչ Միեր Շահնագարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 09.04.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Տիգրան Հակոբյանի՝ ՀՀ պետական բյուջեի օգտին 22.509.367 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Տիգրան Հակոբյանից բռնագանձել 22.509.367 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 04.07.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.04.2014 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի վճիռը և փոփոխվել՝ որոշվել է հայցը բավարարել մասնակիորեն՝ Տիգրան Հակոբյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել ԱԱՀ՝ 21.624.292 ՀՀ դրամ, որից ապառք՝ 16.232.313 ՀՀ դրամ, տույժ՝ 2.824.370 ՀՀ դրամ, տուգանք՝ 2.567.609 ՀՀ դրամ: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Տիգրան Հակոբյանի ներկայացուցիչը: Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ, 20-րդ, 22-րդ հոդվածները, գործի քննության պահին գործող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ, 24-րդ, 25-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշումը, ինչպես նաև սխալ է մեկնաբանել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 8-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հաշվի չի առել, որ Տեսչությունը Տիգրան Հակոբյանին նախապես չի տեղեկացրել, որ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքն իբրև կազմել է 143.936.984 ՀՀ դրամ, և որպես ապացույց ճանաչել է այնպիսի փաստաթուղթ, որի կազմմանը և ձևավորմանը պատասխանողը չի մասնակցել:

Մինչդեռ, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) 12.09.2012 թվականի թիվ ԱՏ-11/09/2012-1-0230 տեղեկանքի և դատաշինարարատեխնիկական փորձաքննության արդյունքում տրված փորձագետի եզրակացության համաձայն՝ վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքը կազմել է 63.659.443 ՀՀ դրամ: Գործում առկա նշված գրավոր ապացույցները, սակայն, Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի չեն առնվել:

Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարելու համար հիմք է ընդունել Տեսչության կողմից ներկայացված ապացույցն առ այն, որ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքը կազմում է 143.936.984 ՀՀ դրամ, մինչդեռ նշված ապացույցն ըստ էության անթույլատրելի ապացույց է, քանի որ հանդիսանում է վարչական մարմինների ներքին համագործակցության արդյունք: Ավելին, Կադաստրի կողմից Տիգրան Հակոբյանին տրամադրվել է պաշտոնական տեղեկատվություն առ այն, որ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքը կազմում է 63.659.443 ՀՀ դրամ, որպիսի տեղեկությունը պետք է բավարար լիներ Տեսչության համար:

Տվյալ դեպքում պատասխանողը կատարել է իր հարկային պարտավորությունները, իսկ Տեսչությունը, որպես վարչական մարմին, հարկատուի հետ հարաբերություններում չի պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.04.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տիգրան Հակոբյանը հանդիսացել է Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող ավտոտեխպասարկման կայանի սեփականատերը: 10.05.2012 թվականին վերը նշված անշարժ գույքը վաճառվել է այլ անձի՝ 55.000.000 ՀՀ դրամով (հատոր 1-ին,

գ.թ. 97).

2) Տիգրան Հակոբյանին հասցեագրված Կադաստրի 12.09.2012 թվականի թիվ ԱՏ-11/09/2012-1-0230 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող Տիգրան Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կադաստրային արժեքը 04.05.2012 թվականի դրությամբ կազմել է 63.659.443 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 40)։

3) 2012 թվականի 2-րդ եռամսյակի ֆիզիկական անձի իրականացված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկի համաձայն՝ Տիգրան Հակոբյանը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արմավիրի տարածքային հարկային տեսչություն (այսուհետ՝ Արմավիրի տեսչություն) է ներկայացրել նշված հաշվարկը, որի 10-րդ տողում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն կազմում է 885.084 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 17)։

4) Տիգրան Հակոբյանը 22.08.2012 թվականին դիմում է ներկայացրել Տեսչություն և հայտնել, որ Արմավիրի տեսչությունն ունի իրեն տրամադրված ֆիզիկական անձի հարկային կող և ցանկանում է օրենքով սահմանված կարգով իր կողմից ներկայացվող հարկային հաշվետվությունները, այդ թվում՝ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող ավտոտեխսպասարկման կայանի առուվաճառքի մասով ԱԱՀ-ի հաշվարկը և համապատասխան հաշվետվությունը ներկայացրել Արմավիրի տեսչություն (հատոր 1-ին, գ.թ. 9)։

5) Արմավիրի տեսչության 06.02.2012 թվականի թիվ 3065/2 տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Հակոբյանը, ըստ Արմավիրի տեսչություն ներկայացրած ֆիզիկական անձի իրականացված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկի, բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի (հատոր 1-ին, գ.թ. 16)։

6) 04.03.2013 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության որոշմամբ Տիգրան Հակոբյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է։

Քրեական գործի հարուցումը մերժելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ կատարվել է Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքի վերահաշվարկ, որի արդյունքում նշված անշարժ գույքի օտարումից առաջացած հարկի գումարը կազմել է 885.084 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ վճարվել է (հատոր 1-ին, գ.թ. 28)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար։

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձնալ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն օրենքով սահմանված դեպքերում կադաստրային արժեքով որոշելու համար վերաբերելի և թույլատրելի սպացույցների հարցին։

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, բացառությամբ նույն հոդվածով և նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքերի:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը՝ հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: Ապրանքի մատակարարում է համարվում նաև ֆիզիկական անձանց պատկանող՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի (այդ թվում՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի և հողերի) օտարումը (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում դրանց ներդրումը):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է նույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից, բացառությամբ նույն կետով նախատեսված դեպքի:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գույքահարկով **հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը** կամ այն բնութագրիչը, որի հիման վրա նույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը, ընդ որում, շինությունների հարկման բազա է համարվում նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված **կադաստրային արժեքը**:

Վճարելի դատարանը, անդրադառնալով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների մեկնաբանությանը, նախկինում կայացրած որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անշարժ գույքի սեփականատեր հարկատուն կաշկանդված չէ գույքն իր հայեցողությամբ որոշված գնով օտարելու հարցում, այդ թվում նաև՝ իրական արժեքից էականորեն ցածր գնով: Սակայն հարկային պարտա-

վորությունը հաշվարկելիս հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը: Վճարել դատարանը գտել է, որ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք առնվազն պետք է ընդունվի տվյալ շինության կադաստրային արժեքը: Քննարկվող հարաբերության նմանատիպ կարգավորում նախատեսված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետով և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (*յրե՛ս, «Կոմունախազի՞ծ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1 հարկային տեսչության թիվ ՎԴ/3112/05/08 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճարել դատարանը հարկ է համարում նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարկ վճարողն է պարտավոր ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ հարկերի ճիշտ հաշվարկը և ժամանակին վճարումը սպահովելու համար, որպիսի պայմաններում, անդրադառնալով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք տվյալ շինության կադաստրային արժեքը հիմք ընդունելուն, Վճարել դատարանը փաստում է, որ հարկ վճարողը պարտավոր է համապատասխան մարմնից ձեռք բերել անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկություն, որի հիման վրա էլ պետք է հաշվարկի և վճարի ավելացված արժեքի հարկը:

Գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Հակոբյանը 10.05.2012 թվականին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր: Գործում առկա՝ Տիգրան Հակոբյանին հասցեագրված Կադաստրի 12.09.2012 թվականի թիվ ԱՏ-11/09/2012-1-0230 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Մյանսիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող Տիգրան Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կադաստրային արժեքը 04.05.2012 թվականի դրությամբ կազմել է 63.659.443 ՀՀ դրամ: 2012 թվականի 2-րդ եռամսյակի ֆիզիկական անձի իրականացված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկի համաձայն՝ Տիգրան Հակոբյանը Արմավիրի տեսչություն է ներկայացրել նշված հաշվարկը, որի 10-րդ տողում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն կազմել

է 885.084 ՀՀ դրամ: Արմավիրի տեսչության 06.02.2012 թվականի թիվ 3065/2 տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Հակոբյանն ըստ Արմավիրի տեսչություն ներկայացրած ԱԱՀ հաշվարկի՝ բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելիս պատճառաբանել է, որ գործի փաստերով հաստատվում է այն հանգամանքը, որ Մյասնիկյան պողոտա թիվ 1/5 հասցեում գտնվող, Տիգրան Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կադաստրային արժեքը 04.05.2012 թվականի դրությամբ կազմել է 63.659.443 ՀՀ դրամ, որի նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 32-րդ և 33-րդ հոդվածներին համապատասխան պատասխանող Տիգրան Հակոբյանի կողմից Արմավիրի տեսչություն է ներկայացվել 2012 թվականի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկ և կատարվել է 885.084 ՀՀ դրամի վճարում՝ այդ հաշվարկին համապատասխան: Վերոգրյալը հաստատվել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 04.03.2013 թվականի «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշմամբ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով և Դատարանի վճիռը փոփոխելով, նշել է, որ Տեսչությունը, Կադաստրի «Երևան» տարածքային ստորաբաժանումից ստացել է տեղեկություն այն մասին, որ Երևանի Մյասնիկյան պողոտա թիվ 1/5 հասցեում գտնվող հասարակական նշանակության օտարված գույքի (ավտոտեխսպասարկման կայան) կադաստրային արժեքը կազմել է 143.936.984 ՀՀ դրամ և արդյունքում, ղեկավարվելով ՀՀ կառավարության 30.12.2010 թվականի թիվ 1775-Ն որոշմամբ, հաշվարկել է ավելացված արժեքի հարկ: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Տեսչությունը ղեկավարվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներով, որի համաձայն՝ վերջինս անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկություն է ստանում Կադաստրից, գտել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Կ. Իսանջյանը չէր կարող գնահատել վեճի առարկային առնչվող անշարժ գույքի կադաստրային արժեքը, իսկ ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ 06091307 փորձագիտական եզրակացությունը, Կադաստրի 04.02.2014 թվականի «Գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների/սահմանափակումների վերաբերյալ» տեղեկանքը սույն գործի լուծման համար որևէ էական նշանակություն ունենալ չեն կարող՝ մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ 1-ին մասի հիմքով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Կադաստրի կողմից Տիգրան Հակոբյանին տրված տեղեկության համաձայն՝ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքը 04.05.2012 թվականի դրությամբ կազմել է 63.659.443 ՀՀ դրամ, որպիսի տեղեկության հիման վրա էլ Տիգրան Հակոբյանը կազմել և Տեսչություն է ներկայացրել 2012 թվականի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, և այդ հաշվարկին համապատասխան՝ կատարել է 885.084 ՀՀ դրամի վճարում, իսկ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տիգրան Հակոբյանը, որպես հարկ վճարող, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ավելացված արժեքի հարկը ճիշտ հաշվարկելու պարտավորությունը կատարելու համար պետք է Կադաստրից ստանար անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկություն, հետևաբար Կադաստրի 12.09.2012 թվականի թիվ ԱՏ-11/09/2012-1-0230 տեղեկանքը սույն գործով վերաբերելի և թույլատրելի ապացույց է, որը 2012 թվականի 2-րդ եռամսյակի ֆիզիկական անձի իրականացված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկի և Արմավիրի տեսչության 06.02.2012 թվականի թիվ 3065/2 տեղեկանքի հետ համակցության մեջ ապացուցում է Տիգրան Հակոբյանի կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կար-

գով և օրենքով սահմանված ժամկետներում ավելացված արժեքի հարկի գումարը հաշվարկելու, 10.05.2012 թվականին իրականացրած անշարժ գույքի գործարքի համար նախատեսված ԱԱՀ-ի հաշվարկը Արմավիրի տեսչություն ներկայացնելու և օրենսդրությամբ սահմանված կարգով նշված հաշվարկի հիման վրա առաջացած հարկային պարտավորությունները կատարելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը բավարարելու համար հիմք ընդունված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 23.07.2012 թվականի գրությանը, որին կից ներկայացվել է Կադաստրի կողմից տրամադրված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ 2012 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների տեղեկությունները, որոնց համաձայն՝ Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 ավտոտեխսպասարկման կայանի կադաստրային արժեքը կազմում է 143.936.984 ՀՀ դրամ, ապա վերը նշված ապացույցների առկայության պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված

փաստաթուղթը չէր կարող դրվել Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում, քանի որ Կադաստրի կողմից միևնույն օբյեկտի կադաստրային արժեքների վերաբերյալ հարկային մարմնին և հարկ վճարողին տրված տեղեկություններում առկա է հակասություն, որը, սակայն, չի կարող կիրառվել ի վնաս հարկ վճարողի, հատկապես այն դեպքում, երբ վերջինս արդեն իսկ իրեն տրամադրված տեղեկության հիման վրա հաշվարկել և կատարել է հարկային պարտավորությունը: Դեռ ավելին, նշված հանգամանքը հաստատվել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 04.03.2013 թվականին որոշմամբ, համաձայն որի՝ կատարվել է Երևանի Մյասնիկյան պողոտայի թիվ 1/5 հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքի վերահաշվարկ, որի արդյունքում նշված անշարժ գույքի օտարումից առաջացած հարկի գումարը կազմել է 885.084 ՀՀ դրամ, որը վճարվել է: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից հիմք ընդունված ապացույցը՝ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ, չէր կարող դիտվել որպես արժանահավատ ապացույց:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը վեճը լուծելիս իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ սույն գործով վեճի առարկային առնչվող անշարժ գույքի կադաստրային արժեքը կազմել է 63.659.443 դրամ, որի հիման վրա էլ Տիգրան Հակոբյանը հաշվարկել և վճարել է ավելացված արժեքի հարկը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարան

նի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 09.04.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 04.07.2013 թվականի վճռին:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչությունից հօգուտ Տիգրան Հակոբյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 675.281 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.09.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 655.281 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.10.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ-5/0136/05/13

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ-5/0136/05/13
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՎԱ-ԱՐՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Շիկոլայ Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արթիկի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Ընկերության՝ 3.196.290 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 3.196.290 ՀՀ դրամ, որից 3.196.099 ՀՀ դրամ՝ հաստատագրված վճարի, 110 ՀՀ դրամ՝ բնապահպանական վճարի գումար, ինչպես նաև 63.925 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան) 16.08.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.02.2014 թվականի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.08.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հերյույալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը 15.03.2013 թվականի տեղեկանքի տվյալները գնահատել է որպես թյուրիմացություն, սակայն հաշվի չի առել, որ տեղեկանքը տալիս Տեսչությունն արտատպում է անձնական հաշվի այդ պահին առկա տվյալները: Տեղեկանքում նշված է, որ դրանում առկա տեղեկությունները բերված են ըստ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների: Այսինքն՝ տեղեկանքն ընդամենը քարտի տվյալ պահին առկա տեղեկությունների արտացոլումն է, ինչը նշանակում է, որ 15.03.2013 թվականի դրությամբ հաստատագրված վճարի մասով անձնական հաշվի քարտում որևէ պարտավորություն նշված չի եղել, Տեսչությունը խախտումը հայտնաբերել է դրանից հետո: Ինչ վերաբերում է գործում առկա անձնական հաշվի քարտին, ապա այն էլեկտրոնային եղանակով վարվող հաշվարկ է, որում հնարավոր է ցանկացած ժամանակ փոփոխություններ կատարել, ուստի այն սույն գործով թույլատրելի ապացույց չէ: Տեսչությունը դատարան չի ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 25.07.2003 թվականի թիվ 03/20-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն գրիչով լրացված անձնական հաշվի քարտը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տեսչության կողմից 21.06.2012 թվականին էլեկտրոնային եղանակով Ընկերությանն է ուղարկվել «Հիշեցում-ծանուցում», որտեղ 18.06.2012 թվականի դրությամբ հաստատագրված վճարի գծով պարտքի մասին խոսք չկա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցի հիմքում դրված 2007 թվականի օգոստոս ամսվա հաստատագրված վճարի գումարը չվճարելու խախտումը Տեսչությունը հայտնաբերել է 2013 թվականին, այսինքն՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված վաղեմության ժամկետը լրանալուց հետո, հետևաբար Ընկերության համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.02.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայքը՝ 3.196.099 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության կողմից 31.07.2007 թվականին Տեսչությանը ներկայացվել է հայտարարություն ավտոտրանսպորտային միջոցների գազացման (գազալիցքավորման) գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի վերաբերյալ (1-ին հատոր, գ.թ. 5):

2) Համաձայն Տեսչության կողմից 21.06.2012 թվականին էլեկտրոնային եղանակով Ընկերությանն ուղարկված «Հիշեցում-ծանուցման»՝ 18.06.2012 թվականի դրությամբ Ընկե-

րությունն ունի չմարված պարտավորություն 81,00 ՀՀ դրամի չափով՝ «Այլ» վճարատեսակի գծով (1-ին հատոր, գ.թ. 27):

3) Համաձայն Տեսչության կողմից 15.03.2013 թվականին Ընկերությանը տրամադրված թիվ 021307 տեղեկանքի՝ Ընկերությունը 15.03.2013 թվականի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մատով պարտավորություններ չունի, ունի դեբետային մնացորդ՝ 4.088.624 ՀՀ դրամի չափով (1-ին հատոր, գ.թ. 28):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը չկիրառելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ կարող են առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պարզում է այս կամ այն ապացույցի վերաբերելիության հարցը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Առաջնորդվելով հարկատուների իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությամբ՝ օրենսդիրը սահմանել է նաև, որ հարկային օրենսդրությամբ հնարավոր է նախատեսել հարկային պարտավորության դադարման այլ դեպքեր: Մասնավորապես՝ հարկային իրավահարաբերություններում կանխատեսելիությունն ապահովելու նպատակով նույն օրենքի 30.1-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է հարկային պարտավորության դադարեցման լրացուցիչ հիմք: Այն դեպքերում, երբ հարկային օրենսդրության խախտումը հայտնաբերվում է կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, հարկային պարտավորությունը համարվում է դադարած, ուստի անձն ազատվում է համապատասխան հարկային պատասխանատվությունից:

Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել վերոնշյալ նորմերի վերաբերյալ իր արտահայտած այն դիրքորոշումը, որ հարկատուի մոտ հարկային պարտավորություններ չեն առաջանում, եթե վերջինիս կողմից թույլ տրված հարկային օրենսդրության խախտումը դրան հաջորդող երեք տարիների ընթացքում հարկային մարմնի կողմից չի հայտնաբերվել (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պե-տական ծառայության Շահումյանի հարկային տեսչությունն ընդդեմ անհարձեռնարկա-տեր Գայանե Ադյանի թիվ 3-1150 (ՏԻ) գործով ՀՀ վճարել դատարանի 01.08.2007 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից 31.07.2007 թվականին Տեսչությանը ներկայացվել է հայտարարություն ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի վերաբերյալ:

Տեսչության կողմից 21.06.2012 թվականին էլեկտրոնային եղանակով Ընկերությանն ուղարկված «Հիշեցում-ծանուցման» համաձայն՝ 18.06.2012 թվականի դրությամբ Ընկերությունն ունի չմարված պարտավորություն 81,00 ՀՀ դրամի չափով՝ «Այլ» վճարատեսակի գծով: Տեսչության կողմից 15.03.2013 թվականին Ընկերությանը տրամադրված թիվ 021307 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 15.03.2013 թվականի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորություններ չունի, ունի դեբե-տային մնացորդ՝ 4.088.624 ՀՀ դրամի չափով:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանություն-ը, որ Տեսչության կողմից դատարան ներկայացված հայցապահանջի գումարը կազմում է ընդհանուր առմամբ 3.196.290 ՀՀ դրամ, որից հաստատագրված վճարի գծով պահանջը ներկայացվել է 3.196.099 ՀՀ դրամի չափով, իսկ բնապահպանական վճարի գծով՝ 110 ՀՀ դրամի չափով: Հաստատագրված վճարի 1.785.738 ՀՀ դրամ ապառքն առաջացել է դեռևս 2007 թվականի օգոստոս ամսվա ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի վերաբերյալ հայտարարությամբ, իսկ այդ գումարը սահմանված ժամ-կետում չվճարելու համար հաշվարկվել է օրական տույժ՝ 1.410.361 ՀՀ դրամի չափով: Այ-սինքն՝ 2007 թվականի օգոստոս ամսվա համար հաստատագրված վճարի ապառք, ըստ

գործով ձեռք բերված ապացույցների, Ընկերությունը չի ունեցել: Տեսչությունը 21.06.2012 թվականին Ընկերությանն էլեկտրոնային եղանակով ուղարկել է «Հիշեցում-ծանուցում», որտեղ նշվել է, որ 18.06.2012 թվականի դրությամբ Ընկերության կողմից չմարված պարտավորությունը կազմում է ընդամենը 81,00 ՀՀ դրամ: Բացի այդ, Տեսչությունը 15.03.2013 թվականին Ընկերությանը տրամադրել է պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, ըստ որի՝ 15.03.2013 թվականի դրությամբ Ընկերությունը որևէ հարկատեսակի գծով պարտավորություն չունի, ունի դեբետային մնացորդ (գերավճար)՝ ընդհանուր 4.088.624 ՀՀ դրամի չափով: Այսինքն՝ նշված փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ մինչև 15.03.2013 թվականը հարկային մարմնում 2007 թվականի օգոստոս ամսվա հաստատագրված վճարի չկատարված պարտավորություն հաշվառված չի եղել: Եթե հայցի հիմք հանդիսացող ենթադրյալ խախտումը՝ 2007 թվականի օգոստոս ամսվա հաստատագրված վճարը, սահմանված ժամկետում նույնիսկ վճարված չլիներ էլ, ապա մինևնույն է, դա հարկային մարմնի կողմից հայտնաբերվել է միայն 2013 թվականի մարտի 15-ից հետո՝ շուրջ վեց տարի անց: Հետևաբար քննարկվող հարկային պարտավորությունների մասով պետք է կիրառվի «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, որի ուժով Ընկերության մոտ չեն կարող առաջանալ վեճի առարկա հանդիսացող հաստատագրված վճարի և բնապահպանական վճարի գծով հարկային պարտավորություններ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով, պատճառաբանել է, որ Դատարանն իր եզրահանգումների հիմքում չպետք է դնել միայն 15.03.2013 թվականի տեղեկանքը, այլ գործում առկա բոլոր ապացույցները պետք է գնահատել իրենց համակցության մեջ: Մասնավորապես՝ 31.07.2007 թվականի ավտոտրանսպորտային միջոցների գազայցման (գազալիցքավորման) գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի վերաբերյալ հայտարարության համաձայն՝ Ընկերությունը հայտնել է, որ գազայցումն իրականացնելու է երկու խողովակների միջոցով: Ընկերության հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2007 թվականի օգոստոս ամսվա համար վճարման ենթակա հաստատագրված վճարը հաշվարկվել է երկու խողովակի համար՝ 1.800.000 ՀՀ դրամի չափով, սակայն վճարումը կատարված է մեկ խողովակի հաշվարկով՝ 900.000 ՀՀ դրամի չափով: Այսինքն՝ հարկային մարմինը տեղյակ է եղել և հայտնաբերել է, որ վճարումը 2007 թվականի օգոստոս ամսվա համար կատարվել է միայն մեկ խողովակի հաշվարկով: Ավելին, 15.03.2013 թվականի տեղեկանքով որևէ կերպ չի հերքվում հարկային պարտավորություն ունենալու և վճարման ենթակա գումարը չվճարելու փաստերը: Հարկային մարմնի կողմից 15.03.2013 թվականի տեղեկանքում պարտավորության չնշելը գնահատվել է որպես թյուրիմացություն, ինչը չի կարող բերել պարտավորության վերացման կամ դադարման:

Ինչ վերաբերում է բնապահպանական վճարի գծով 110 ՀՀ դրամ պարտավորության առաջացմանը, ապա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ բնապահպանական վճարի գծով անձնական հաշվի քարտի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2010 թվականի առաջին եռամսյակից սկսած՝ հաշվարկվել է եռամսյակային վճար՝ 200-ական դրամի չափով: Կատարված ընդամենը 1.300 ՀՀ դրամ գերավճարի հաշվից վճարի չափը պակասեցվել է, և 2012 թվականի չորրորդ եռամսյակում ապառքի գումարը կազմել է 100 ՀՀ դրամ, որի վրա հաշվարկվել է տույժ 12 ՀՀ դրամի չափով, ինչի հետևանքով բռնագանձման է առաջադրվել ընդամենը 110 ՀՀ դրամ:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Տեսչությունը սույն գործով պահանջել է հաստատագրված վճարի գծով պարտավորությունները չկատարելու համար Ընկերությունից բռնագանձել 3.196.099 ՀՀ դրամ, իսկ բնապահպանական վճարի գծով՝ 110 ՀՀ դրամ: 21.06.2012 թվականին Տեսչությունն էլեկտրոնային եղանակով Ընկերությանն է ուղարկել

«Հիշեցում-ծանուցում», որտեղ նշել է, որ 18.06.2012 թվականի դրությամբ Ընկերությունն ունի չմարված պարտավորություն 81,00 ՀՀ դրամի չափով՝ «Այլ» վճարատեսակի գծով: Բացի այդ, Տեսչությունը 15.03.2013 թվականին Ընկերությանը տրամադրել է պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, որտեղ նշել է, որ Ընկերությունը 15.03.2013 թվականի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորություններ չունի, ունի դեբետային մնացորդ՝ 4.088.624 ՀՀ դրամի չափով: Այսինքն՝ 15.03.2013 թվականի դրությամբ Տեսչությունը երկու անգամ մատնանշել է, որ Ընկերությունը հաստատագրված վճարի գծով որևէ պարտավորություն չունի, ինչը չի կարող որակվել իբրև թյուրիմացություն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ հաստատագրված վճարի գծով Ընկերության պարտավորությունները դեռևս 2007 թվականին հայտնաբերվելու հանգամանքը հիմնավորվում է Ընկերության անձնական հաշվի քարտի ուսումնասիրությամբ, ապա այն անհիմն է, քանի որ դատարան չի ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 25.07.2003 թվականի թիվ 03/20-Ն հրամանով հաստատված հարկային տեսչություններում հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի վարման առանձին հարցերի վերաբերյալ կարգի (այսուհետ՝ Կարգ) 2.6-րդ կետի պահանջներին համապատասխան գրիչով լրացված անձնական հաշվի քարտը: ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 25.07.2003 թվականի թիվ 03/20-Ն հրամանով հաստատված Կարգի 2.6-րդ կետի համաձայն՝ քարտը լրացվում է կապույտ կամ սև գույնի գրիչով (բացառությամբ 2.5-րդ կետում նշված դեպքից): Քարտում որևէ թիվ սխալ գրելու դեպքում, եթե դա հայտնաբերվում է մինչև հաջորդ տողում գրառում կատարելը, ապա գիծ է քաշվում այդ թվի վրա, սխալի կողքը քարտ վարողը ստորագրում է (նշելով անուն, ազգանունը) և այդ տողի գրառումները կատարում է հաջորդ տողում: Նշված իրավակարգավորման լույսի ներքո հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակը թույլատրելի ապացույց չէ, քանի որ դրանում հնարավոր է ցանկացած ժամանակ փոփոխություններ կատարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից հաստատագրված վճարի գծով 2007 թվականին կատարված հարկային օրենսդրության խախտումն օրենքով սահմանված ժամկետում պարտավոր էր հայտնաբերել Տեսչությունը, մինչդեռ վերջինս խախտումը հայտնաբերել է 2013 թվականին, հետևաբար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համաձայն Ընկերության համար հաստատագրված վճարի գծով հարկային պարտավորություն չի կարող առաջանալ:

Այսպիսով, Վճարեկ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով վճարեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի որոշումը քեկանելու համար:

Միաժամանակ Վճարեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, Ընկերությանն ազատելով նաև քննապահպանական վճարի գծով 110 ՀՀ դրամի չափով պարտավորությունից, թույլ է տվել դատական սխալ, քանի որ այդ պարտավորության առկայությունն Ընկերությունը չի վիճարկել: Մյուսն պայմաններում նշված գումարը ենթակա է բռնագանձման Ընկերությունից, և այդ մասով Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են:

Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճարեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.02.2014 թվականի որոշումը հաստատագրված վճարի և պետական տուրքի բռնագանձման մասերով և այդ մասերով այն փոփոխել. հայցը՝ 3.196.099 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, մերժել: Որոշումը՝ մնացած մասով, թողնել անփոփոխ:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արթիկի տարածքային հարկային տեսչությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 95.883 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.06.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

«ՎԱ-ԱՐՏ» ՍՊԸ-ից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 1.500 ՀՀ դրամ՝ որպես բնապահպանական վճարի գծով հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎՂ/7537/05/12**
2014թ.

Վարչական գործ թիվ ՎՂ/7537/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի 03.09.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Կոմիտեի հայցի ընդդեմ Լիլիթ Բա-
բասիևայի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Լիլիթ Բաբասիևայից հոգուտ պետական
բյուջեի բռնագանձել 481.687 ՀՀ դրամ՝ որպես Կոմիտեի հետաքննության վարչության (այ-
սուհետ՝ Վարչություն) պետի 12.09.2012 թվականի որոշմամբ նշանակված վարչական տու-
գանք, և 1.635.757 ՀՀ դրամ՝ որպես թիվ F 60852 ԲՄՀ-ով «Ժամանակավոր ներմուծում»
մաքսային ռեժիմով ձևակերպված «Opel Vectra» մակնիշի ավտոմեքենան «Ներմուծում»
ազատ շրջանառության համար՝ մաքսային ռեժիմով ձևակերպելու դեպքում վճարման են-
թակա մաքսային վճարներ և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար տույ-
ժեր:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան)
03.04.2013 թվականի վճռով հայցը՝ 1.635.757 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով,
մերժվել է, իսկ 481.687 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով գործի վարույթը կարճ-

վել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.09.2013 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.04.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Լիլիթ Բաբասիևան:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, «Բնասպահականակալն և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածի 3-րդ մասը, «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 19.04.1999 թվականի թիվ 230 որոշումը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 22-րդ, 23-րդ, 37-րդ, 40-րդ, 128-րդ հոդվածները, խախտել է գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն է հերկյալ փաարարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Լիլիթ Բաբասիևան 30.09.2009 թվականի թիվ F 60852 ԲՄՀ-ով «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով 30 օր ժամկետով հայտարարագրել է 1993 թվականի արտադրության «Opel Vectra» մակնիշի ավտոմեքենան: Հետևաբար, վերջինս պարտավոր էր պահպանել այդ ռեժիմի համար օրենսդրի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված կանոնները: Մասնավորապես՝ վկայակոչված հոդվածներում օրենսդիրը սպառիչ կերպով սահմանել է այն գործողությունները, որոնք կարող է և պարտավոր է կատարել ապրանքներ տեղափոխող անձը, եթե նա ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս ընտրել է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը, մինչդեռ Լիլիթ Բաբասիևան ոչ միայն չի պահպանել նշված մաքսային ռեժիմով ձևակերպված և մաքսային հսկողության տակ գտնվող ավտոմեքենայի վերաարտահանման պարտավորությունը, այլև այդ ավտոմեքենան օտարել է, ինչի համար վերջինս ենթակա է պատասխանատվության:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ապրանքներ տեղափոխող անձի համար մաքսային վճարներ վճարելու պարտականությունն առաջանում է դրանց ներմուծման փաստի ուժով: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի արձանագրած այն դիրքորոշումը, որ մաքսային վճարներ վճարելու պարտականությունն առաջանում է հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելու դեպքում, հակասում է օրենսդրության պահանջներին: Ավելին, օրենսդիրն ապրանքների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելը չի կապում դրանց փաստացի առկայության հետ:

Իսկ ինչ վերաբերում է ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով նախատեսված երկրնարանքի հնարավորությանը, ապա Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել այդ հոդվածը: Մասնավորապես՝ վերոգրյալ հոդվածի «բ» կետով սահմանված արտահանման իրավունքից ապրանքներ տեղափոխող անձն ըստ էության կարող է օգտվել միայն նույն հոդվածի «ա» կետում նշված ժամկետում, այն է՝ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում: Այսինքն՝ նշված ժամանակահատվածում ապրանքներ տեղափոխող անձն իրավունք ունի նաև արտահանել ապրանքները ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի «բ» կետի ընթացակարգով, իսկ այդ ժամկետի ավարտից հետո արտահանման իրավունքն արդեն սահմանափակվում

է, և ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է կատարել միայն նույն հողվածի «ա» կետով սահմանված պարտավորությունը: Տվյալ դեպքում Լիլիթ Բաբասիևայի կողմից 30.09.2009 թվականին 30 օր ժամկետով ՀՀ ներմուծված «Opel Vectra» մակնիշի ավտոմեքենայի ժամանակավոր ներմուծման ժամկետն ավարտվել է 30.10.2009 թվականին, և ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի «բ» կետով սահմանված իրավունքից վերջինս կարող էր օգտվել մինչև 20.11.2009 թվականը: Մինչդեռ, Լիլիթ Բաբասիևան բաց է թողել ավտոմեքենայի արտահանման համար նշված օրենսգրքով սահմանված ժամկետները, և մաքսային հսկողության ներքո գտնվող ավտոմեքենան, ըստ իր հայտարարության, մասմաս վաճառել է: Ուստի, վերջինս պարտավոր է կատարել ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված պարտավորությունը, այն է՝ վերահայտարարագրել ավտոմեքենան «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով և վճարել այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով նախատեսված տույժերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.09.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայրը բավարարել:

2.1. Վճարենկ բողոքի պատասխանի փաստարկները

Ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի և այլ վճարներ վճարելու պարտականության ծագումն օրենսդիրը կապել է կոնկրետ մաքսային ռեժիմի հետ, որի ընտրությունը կատարվում է հայտարարագրի միջոցով: ՀՀ մաքսային օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից մաքսատուրքի հաշվարկումն իրակա-նացվում է հայտարարագրի ներկայացման օրվա դրությամբ՝ մաքսատուրքերի գործող դրույքաչափերով: Տվյալ դեպքում այն ապրանքը՝ ավտոմեքենան, որի համար պետք է ներկայացվեր հայտարարագիրը, գոյություն չունի, իսկ Կոմիտեի պահանջը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված «Opel Vectra» մակնիշի 1993 թվականի արտադրության ավտոմեքենայի «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպելու դեպքում վճարման ենթակա մաքսային վճարները բռնագանձելու վերաբերյալ, վկայում է այն մասին, որ հայտարարագիրը բացակայում է, իսկ մաքսային հայտարարագիրը ներկայացված չլինելու պայմաններում մաքսային վճարների վճարման պարտավորություն չի կարող ծագել: Բացի այդ, ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են ապրանքները և տրանսպորտային միջոցները, և ոչ՝ գոյություն չունեցող ապրանքները և տրանսպորտային միջոցները:

Տվյալ դեպքում, Կոմիտեի 12.09.2012 թվականի որոշմամբ հաստատվել է, որ վիճելի ավտոմեքենան մաս-մաս վաճառվել է, այսինքն՝ այն, որպես այդպիսին, գոյություն չունի և չի կարող մաքսային ձևակերպման առարկա լինել: Ավելին, իրավահարաբերության ծագման պահն ուղղակիորեն կապված է հայտարարագրի իրավական հետևանքներ առաջացնելու հետ, իսկ հայտարարագիրը իրավական հետևանքներ է առաջացնում հայտարարագրի ընդունման պահից, հետևաբար, քանի դեռ «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագիր չի ներկայացվել և չի ընդունվել մաքսային մարմնի կողմից, մաքսային վճարների բռնագանձման հիմքը բացակայում է, և որևէ մաքսային ռեժիմով հայտարարագիր ներկայացնելու համար պարտադիր պայման է ապրանքի առկայությունը:

Այսինքն՝ ավտոմեքենայի բացակայության և հայտարարագրի ներկայացված չլինելու պայմաններում մաքսային վճարներ վճարելու պարտավորություն Լիլիթ Բաբասիևայի մոտ չի կարող ծագել:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանի 03.09.2013 թվականի որոշումը հիմնավոր է,

կայացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 30.09.2009 թվականի թիվ F 60852 ԲՄՀ-ի համաձայն՝ Լիլիթ Բաբասիևան 30 օր տևողությամբ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 1993 թվականի արտադրության «Opel Vectra» մակնիշի ավտոմեքենա (գ.թ. 16).

2) Լիլիթ Բաբասիևայի կողմից 01.08.2012 թվականին տրված գրավոր բացատրության համաձայն՝ նշված ավտոմեքենան վերջին անգամ Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 30.09.2009 թվականին, որից հետո այն վաճառվել է (գ.թ. 12).

3) 01.08.2012 թվականին կազմված «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Լիլիթ Բաբասիևան 30.09.2009 թվականին Վրաստանից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Հայաստան է ներմուծել «Opel Vectra» մակնիշի «TEM-267» պետական համարանիշի ավտոմեքենան և վաճառել է մաքսային հսկողության տակ գտնվող նշված տրանսպորտային միջոցը (գ.թ. 11).

4) Վարչության պետի 12.09.2012 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման համաձայն՝ Լիլիթ Բաբասիևան ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով և տուգանվել է մաքսային հսկողության ներքո գտնվող ու առանց մաքսային մարմնի թույլտվության օտարված «Opel Vectra» մակնիշի «TEM-267» պետական համարանիշի ավտոմեքենայի մաքսային արժեքի 50 տոկոսի չափով՝ 481.687 ՀՀ դրամ (գ.թ. 19-20).

5) Կոմիտեի կողմից 11.10.2012 թվականին կազմված հաշվարկի համաձայն՝ Լիլիթ Բաբասիևայի կողմից 30.09.2009 թվականի թիվ F 60852 ԲՄՀ-ով ներմուծված ավտոմեքենան «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպելու դեպքում մաքսային վճարները կկազմեն ընդհանուր 1.674.110 ՀՀ դրամ (մաքսատուրք, ԱԱՀ, բնապահպանության վճար, ճանապարհավճար, դրանց նկատմամբ հաշվարկված տույժեր և մաքսավճար) (գ.թ. 23-24):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 23-րդ, 37-րդ և 40-րդ հոդվածների սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վճարել դատարանը միաժամանակ արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի կանոնակարգումները խախտելու հետևանքով առաջացող իրավահարաբերությունների վերաբերյալ, կարևոր նշանակու-

թյուն կունենան սահմանափակ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Սահմանադրությամբ սահմանվել է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, ինչպես նաև կատարել պարտադիր այլ վճարումներ: Հարկեր, տուրքեր մուծելու և այլ պարտադիր վճարումներ կատարելու սահմանադրական պարտականությունը կրում է համընդհանուր բնույթ, այն տարածվում է բոլոր անձանց վրա: Սահմանադրի կողմից նախատեսված այս պարտականության մեջ արտահայտված է հասարակության հանրային շահերը:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածում ամրագրված «յուրաքանչյուր ոք պարտավոր է» ձևակերպումից ակնհայտ է, որ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները կրում են համապարտադիր բնույթ: Համապարտադիրությունը՝ որպես անվերապահորեն կատարման ենթակա պահանջ, տարածվում է բոլոր վճարողների վրա: Գործնականում համապարտադիրության պահանջը կյանքի է կոչվում սեփականատիրոջ գույքի մի մասի՝ հարկի կամ այլ պարտադիր վճարումների ձևաչափով պետության օգտին փոխանցելու միջոցով: Համապարտադիրության պահանջն արտահայտվում է նաև նրանում, որ կամավոր մուծումներ չկատարելու դեպքում դրանք պետության կողմից հարկադրաբար են գանձվում:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «գ» և «զ» կետերի համաձայն՝ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում է համարվում ապրանքների և տրանսպորտային միջոցների ներսբերումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք կամ դուրսհանումն այդ տարածքից՝ ներառյալ միջազգային փոստային առաքումները, խողովակաշարով և էլեկտրահաղորդման գծերով փոխադրումները, իսկ ներմուծման կամ արտահանման պահ է համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանն ապրանքների և տրանսպորտային միջոցների հատելու պահը:

Նույն հոդվածի «ժգ» և «ժը» կետերի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով մաքսային ռեժիմ է համարվում մաքսային քաղաքականության իրագործումը կանոնակարգող դրույթների համախումբը, որը որոշում է մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման նպատակը և կանոնակարգում է մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կապակցությամբ առաջացող հարաբերությունները, իսկ մաքսային վճարներ են համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված մաքսատուրքը, հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

ՀՀ մաքսային օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս մաքսային մարմինների կողմից գանձվում են մաքսային վճարներ, այդ թվում՝ ա) մաքսատուրքեր, բ) մաքսավճարներ, գ) մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անկախ ապրանքների և տրանսպորտային միջոցների բնույթից և քանակից՝ անձն իրավունք ունի ընտրել կամ փոխել մաքսային ռեժիմը, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար սահ-

մանված մաքսային ռեժիմը կարող է փոփոխվել դրանց՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով բացթողումից հետո այն ժամանակահատվածում, որի ընթացքում նույն օրենսգրքի համաձայն դրանք գտնվում են մաքսային հսկողության ներքո ...:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքով անձին իրավունք է վերապահված ընտրել կամ փոփոխել իր կողմից ընտրված մաքսային ռեժիմը: ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված այս իրավունքն անձանց համար երաշխավորում է հետևյալ իրավական հնարավորությունները. առաջին՝ ընտրել օրենքով սահմանված մաքսային ռեժիմներից որևէ մեկը՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները, երկրորդ՝ փոփոխել իր կողմից ընտրված մաքսային ռեժիմն օրենքով սահմանված մաքսային ռեժիմով՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները: Օրենսդրի կողմից սահմանված՝ անձանց մաքսային ռեժիմն ընտրելու կամ փոփոխելու իրավունքը նրանց համար չի երաշխավորում օրենքով սահմանված մաքսային ռեժիմն ընտրելու կամ չընտրելու իրավական հնարավորություն կամ օրենքով սահմանված պայմաններում մաքսային ռեժիմը փոփոխելու կամ փոփոխելուց ձեռնպահ մնալու իրավական հնարավորություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը կարգավորում է ապրանքների հետագա արտահանման պայմանով ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային այս ռեժիմի շրջանակներում՝

ա) մաքսային վճարներ չեն գանձվում, բացառությամբ մաքսավճարի և նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ վճարների.

բ) ապրանքների բացթողումը «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմով թույլատրվում է հայտարարատուի խնդրարկած ժամկետով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով, ընդ որում, եթե սկզբնապես խնդրարկված ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա վերադաս մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա կարող է երկարաձգել այդ ժամկետը ներմուծման օրվանից մեկ տարին չգերազանցող ժամկետով ...

գ) չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ, բացառությամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցների և նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ միջոցների.

դ) նույն կետի «բ» ենթակետով սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում ապրանքները պետք է վերահայտարարագրվեն «Վերաարտահանում» ռեժիմով կամ հանձնվեն մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը, որի ընթացքում հետագա արտահանման պարտավորությունը համարվում է չխախտված.

ե) արգելվում են բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի ապրանքների և տրանսպորտային միջոցների այլ փոփոխությունները.

զ) «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի այլ փոփոխությունների ենթարկելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է այդ ապրանքները և (կամ) տրանսպորտային միջոցները հայտարարագրել «Ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար՝ մաքսային ռեժիմով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանա-

տու պահպանմանը, պարտավոր է՝

ա) այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում դրանք վերահայտարարագրել «Ներմուծում» ազատ շրջանառության համար» կամ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմով վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված այդ ապրանքներն արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից, կամ՝

բ) նույն հոդվածի «ա» ենթակետում նշված ժամկետում ապրանքներն արտահանելու դեպքում վճարել նույն ենթակետում նշված տույժերը՝ հաշվարկված դրանք արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից:

ՀՀ մաքսային օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Ներմուծում» ազատ շրջանառության համար» ռեժիմը կարգավորում է ապրանքների և տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ապրանքների) ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք՝ առանց հետագա արտահանման պարտավորության:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային այս ռեժիմի շրջանակներում օրենքով սահմանված չափով և դեպքերում՝

ա) գանձվում են մաքսային վճարներ:

բ) կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Վերաներմուծում» ռեժիմը կարգավորում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից «Ժամանակավոր արտահանում» վերամշակման համար», «Ժամանակավոր արտահանում» ռեժիմներով արտահանված ապրանքների և «Արտահանում» ազատ շրջանառության համար» ռեժիմով արտահանված՝ Հայաստանի Հանրապետության ծագման, ինչպես նաև «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների հետագա ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային այս ռեժիմի շրջանակներում՝

ա) գանձվում են միայն մաքսավճարներ, բացառությամբ այն դեպքերի, երբ այս ռեժիմով ներմուծվում են նախկինում «Ժամանակավոր արտահանում» վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքներ, որոնցից մաքսային վճարների գանձումն իրականացվում է նույն օրենսգրքի 48 հոդվածի 3-րդ կետի համաձայն, ինչպես նաև բացառությամբ նույն հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետով սահմանված դեպքի:

բ) մինչև մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից «Արտահանում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների ներմուծման դեպքում վերադարձվում են նախկինում դրանց արտահանման համար գանձված մաքսատուրքի գումարները:

գ) չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ, բացառությամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցների:

դ) պահանջվում է արտահանման պահի համեմատ վերաներմուծվող ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի այլ փոփոխությունների բացակայություն: Սույն պահանջը չի վերաբերում «Ժամանակավոր արտահանում» վերամշակման համար» ռեժիմով նախկինում արտահանված ապրանքների վերամշակման հետևանքով կատարված փոփոխություններին:

ե) նախկինում «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների ներմուծման դեպքում գանձվում են միայն օրենքով սահմանված կարգով արտահանման

Ժամանակ վերադարձված մաքսային վճարները:

Վկայակոչված դրույթներից հետևում է, որ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում, բացառությամբ մաքսավճարի և ՀՀ մաքսային օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ վճարների, մաքսային վճարներ չեն գանձվում, իսկ ապրանքների բացթողումն այդ ռեժիմի շրջանակներում թույլատրվում է հայտարարատուի խնդրարկած ժամկետով, որը սակայն չի կարող մեկ տարուց ավելի լինել, այդ ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է դրանք վերահայտարարագրել «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով կամ հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը, որի ընթացքում միայն անձի կողմից հետագա արտահանման պարտավորությունը համարվում է չխախտված:

Միաժամանակ, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքներն օրենքով սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում այդ ապրանքները վերահայտարարագրել կամ «Ներմուծում» ազատ շրջանառության համար», կամ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմներից որևէ մեկով՝ վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը:

Ընդ որում, «Ներմուծում» ազատ շրջանառության համար» ռեժիմի շրջանակներում օրենքով սահմանված չափով գանձվում են մաքսային վճարներ, իսկ «Վերաներմուծում» ռեժիմի շրջանակներում գանձվում են միայն մաքսավճարներ: Ավելին, վերջին ռեժիմի դեպքում պահանջվում է արտահանման պահի համեմատ վերաներմուծվող ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի այլ փոփոխության բացակայություն:

Այսինքն՝ օրենսդիրը սահմանել է, որ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի որևէ այլ փոփոխության առաջացման դեպքում անձը գրկվում է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները «Վերաներմուծում» մաքսային ռեժիմով հայտարարագրելու հնարավորությունից: Նման պայմաններում անձը պարտավոր է ապրանքները հայտարարագրել «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով, քանի որ այս դեպքում արդեն առկա է միայն ապրանքն այդ մաքսային ռեժիմով հայտարարագրելու միջոցով իր պարտականությունները կատարելու իրավական հնարավորություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Ինչ վերաբերում է ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու հետևանքով առաջացող տուգանքի նշանակմանը, ապա այն իրենից ներկայացնում է հանրային-իրավական պատասխանատվության միջոց՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցն առանց մաքսային մարմնի թույլտվության տնօրինելու

համար և չի վերաբերում անձի կողմից մաքսային վճարներ վճարելու պարտավորության կատարումից խուսափելուն:

Սույն գործում առկա՝ 30.09.2009 թվականի թիվ F 60852 ԲՄՀ-ով հաստատվում է, որ Լիլիթ Բաբասիևան 30 օր տևողությամբ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 1993 թվականի արտադրության «Opel Vectra» մակնիշի ավտոմեքենա: 01.08.2012 թվականին կազմված «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրությամբ հաստատվում է, որ Լիլիթ Բաբասիևան 30.09.2009 թվականին Վրաստանի Հանրապետությունից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել «Opel Vectra» մակնիշի «TEM-267» պետական համարանիշի ավտոմեքենան և վաճառել է մաքսային հսկողության տակ գտնվող նշված տրանսպորտային միջոցը, որի համար վերջինս Վարչության պետի 12.09.2012 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշմամբ ճանաչվել է գանգառու ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով և տուգանվել է մաքսային հսկողության ներքո գտնվող ու առանց մաքսային մարմնի թույլտվության օտարված «Opel Vectra» մակնիշի «TEM-267» պետական համարանիշի ավտոմեքենայի մաքսային արժեքի 50 տոկոսի չափով՝ 481.687 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանը եզրահանգել է, որ մաքսային վճարներ վճարելու պարտականությունն առաջանում է միայն հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացվելու և վերջինիս կողմից այն ընդունվելու դեպքում: Ի լրումն վճռի նշված հիմնավորման՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ ապրանքի մաքսային ձևակերպման հարց կարող է քննարկվել միայն այդ ապրանքի առկայության դեպքում, մինչդեռ, գործով կողմերի կողմից որպես անվիճելի փաստ ընդունվում է, որ պատասխանողը վեճին առնչվող ավտոմեքենան մաս-մաս վաճառել է, այսինքն՝ այն որպես այդպիսին այլևս գոյություն չունի, հետևաբար չի կարող մաքսային ձևակերպման առարկա դառնալ: Ավելին, մաքսային հսկողության ներքո գտնվող ավտոմեքենան առանց մաքսային մարմնի թույլտվության նման ձևով տնօրինելու համար պատասխանողը ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռարեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ ապրանքի մաքսային ձևակերպման հարց կարող է քննարկվել միայն այդ ապրանքի առկայության դեպքում:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի «ա» կետը սահմանում է, որ «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է **այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում դրանք վերահայտարարագրել «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմով՝ վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված այդ ապրանքներն արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից**, իսկ նույն օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքներ տեղափոխող անձինք չեն ստանձնում նույն օրենսգրքի 36-րդ, 40-րդ, 44-րդ և 50-րդ հոդվածներով նախատեսված պարտավորությունները, եթե սահմանված ժամկետում հետագա արտահանման (հետագա ներմուծման) պարտավորությունը նրանց կողմից խախտելն արդյունք է անհաղթահարելի ուժի գործողության, ոչ

բնականոն պայմաններում տեղափոխման կամ պահպանման, բնական մաշվածության, ինչպես նաև պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով ապրանքների ոչնչացման, կորստի կամ այլ պատճառով անհնարիության, եթե այդ փաստը հաստատվում է փաստաթղթերով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում՝ նույն օրենսգրքով նախատեսված կարգով, և մաքսային մարմինների պահանջով ներկայացնել հայտարարագրվող ապրանքները և տրանսպորտային միջոցները:

Այսպիսով, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքներն օրենքով սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում այդ ապրանքները վերահայտարարագրել կամ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար», կամ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմներից որևէ մեկով՝ վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի որևէ այլ փոփոխության առաջացման հետևանքով անձը պարտավորվում է ապրանքները հայտարարագրել «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով, ուստի և տվյալ անձը պարտավորվում է վճարել տվյալ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները, ինչպես նաև դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը: Հետևաբար, օրենսդիրը հստակ և ոչ երկիմաստ ձևով սահմանել է անձի պարտականությունը «Վերաներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում ապրանքների բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից բացի որևէ այլ փոփոխության առաջացման դեպքում վճարել «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը:

Բացի այդ, հարկ է նշել նաև, որ հայտարարատուն «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը վճարելու պարտավորությունը չի ստանձնում ՀՀ մաքսային օրենսգրքի 55-րդ հոդվածի ուժով, ինչը քննարկվող պարագայում բացակայում է, իսկ ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը պարտավորվում է իրականացնել նույն օրենսգրքով նախատեսված կարգով, ինչպես նաև մաքսային մարմինների պահանջով պարտավորվում է ներկայացնել հայտարարագրվող ապրանքները և տրանսպորտային միջոցները, այսինքն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները ներկայացնելու համար պարտադիր պայման է մաքսային մարմնի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում դրանք պահանջելը:

Վերը նշված հիմնավորումները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված չէ և սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.09.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/5170/05/12

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ա. Աբովյան
Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5170/05/12
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐՈՍՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.03.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կոմիտեի ընդդեմ Վահե Հարությունյանի՝ 3.584.034 ՀՀ դրամ վարչական տուգանքի գումարը բռնագանձելու և ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված պարտավորությունը կատարելուն, այն է՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ոսկյա զարդերի վերաբերյալ մաքսային մարմնին հայտարարագիր ներկայացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և ըստ Վահե Հարությունյանի հայցի ընդդեմ Կոմիտեի՝ 20.07.2012 թվականի որոշումը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Վահե Հարությունյանից բռնագանձել 3.584.034 ՀՀ դրամ վարչական տուգանքի գումար, ինչպես նաև վերջինիս պարտավորեցնել կատարելու ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված պարտավորությունը, այն է՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ոսկյա զարդերի վերաբերյալ մաքսային մարմնին հայտարարագիր ներկայացնել:

Դիմելով դատարան՝ Վահե Հարությունյանը պահանջել է վերացնել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 20.07.2012 թվականի որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 05.10.2012 թվականի որոշմամբ թիվ ՎԴ/5170/05/12 և

ՎԳ/5355/05/12 վարչական գործերը միացվել են մեկ վարույթում՝ թիվ ՎԳ/5170/05/12 համարի ներքո:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 07.08.2013 թվականի վճռով Կոմիտեի հայցը բավարարվել է, իսկ Վահե Հարությունյանի հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2014 թվականի որոշմամբ Վահե Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 07.08.2013 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Կոմիտեի հայցը մերժվել է, իսկ Վահե Հարությունյանի հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ, 203-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման կարգի մասին» թիվ 1927-Ն որոշումը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային վարչության պետի ««Զվարթնոց» օդանավակայանի մաքսային կետում երկուդային համակարգի կիրառմամբ մաքսային հսկողության մասին» կարգը հաստատելու մասին 10.07.1998 թվականի թիվ 85-ՄՎԲ հրամանը, խախտել է գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պայրճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա չեն հայտարարագրման միայն այն դեպքերում, եթե դրանք սահմանված են օրենսդրությամբ: Իսկ տվյալ դեպքում առկա չէ այնպիսի օրենք, որը սահմանում է, որ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքները ենթակա չեն հայտարարագրման: Ներմուծված ապրանքների հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ գրավոր, բնավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ ապրանքների և տրանսպորտային միջոցների և դրանց տեղափոխման նպատակների մասին, ինչպես նաև մաքսային հսկողության ու ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Օրենսդիրն անձնական օգտագործման իր է դիտարկում ՀՀ մաքսային սահմանը հատող տվյալ անձի անձնական օգտագործման համար նախատեսված իրերը: Երրորդ անձին պատկանող իրը չի կարող համարվել ՀՀ մաքսային սահմանը հատող անձի անձնական օգտագործման իր:

Սույն գործերի փաստերն օրենսդրական կարգավորումների լույսի ներքո դիտարկելով՝ ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային վարչության պետի ««Զվարթնոց» օդանավակայանի մաքսային կետում երկուդային համակարգի կիրառմամբ մաքսային հսկողության մասին» կարգը հաստատելու մասին 10.07.1998 թվականի թիվ 85-ՄՎԲ հրամանի դրույթները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով հաստատվել է, որ Վահե Հա-

րությունյանի կողմից առանց հայտարարագրման ներմուծվել է այլ անձի պատկանող 10 հատ՝ 125,312 գրամ ոսկյա զարդերը, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե չեն վճարվել մաքսային վճարներ: Հետևաբար նշված զարդերը չեն կարող համարվել անձնական օգտագործման զարդեր և դրանց նկատմամբ վերոնշյալ հրամանի դրույթները կիրառելի չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.03.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Կոմիտեի հայցը բավարարել, իսկ Վահե Հարությունյանի հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 14.02.2012 թվականին ժամը 21:15-ին ՀՀ կառավարությանն առընթեր մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցները «Արմենիա» միջազգային օդանավակայանի ուղևորների ժամանման սրահում մաքսային հսկողության գոտու «կանաչ ուղու» ելքը հատելուց հետո կանգնեցրել և հսկողության են ենթարկել նույն օրը Մոսկվա-Երևան թիվ 511 չվերթով ժամանած Վահե Հարությունյանի ուղեբեռը և հայտնաբերել վերջինիս կողմից առանց հայտարարագրման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 10 հատ՝ 125,312 գրամ քաշով ոսկյա զարդեր: 14.02.2012 թվականին Վահե Հարությունյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, իսկ առանց հայտարարագրման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված ոսկյա զարդերը վերցվել են և հանձնվել Կոմիտեի հետաքննության վարչություն (հատոր 1-ին, գ.թ. 17-18).

2) ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետի 19.03.2012 թվականի թիվ 04091204 եզրակացության համաձայն՝ փորձաքննության տրամադրված 10 հատ՝ 125,312 գրամ քաշով զարդերը պատրաստված են 750 հարգի ոսկուց, որոնց շուկայական արժեքը 14.02.2012 թվականի դրությամբ կարող էր կազմել 5.580.000 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 38-42).

3) 20.07.2012 թվականի Կոմիտեի հետաքննության վարչության պետի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշմամբ Վահե Հարությունյանը ճանաչվել է գանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և տուգանվել է առանց հայտարարագրման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 10 հատ՝ 125,312 գրամ ոսկյա զարդերի մաքսային արժեքի՝ 3.584.034 ՀՀ դրամի չափով (հատոր 1-ին, գ.թ. 7-10).

4) Վահե Հարությունյանի կողմից Դատարան է ներկայացվել 08.02.2012 թվականին տրված լիազորագիր, որով ՕՖելյա Վարդանյանը լիազորել է Վահե Հարությունյանին «իր փոխարեն հանդես գալու Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի «Վնուկովո» օդանավակայանում ստանալու իրեն պատկանող 10 կտոր ոսկյա զարդերը, դրանք տեղափոխելու Հայաստանի Հանրապետություն, ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթերը, տալու հայտարարություններ, դիմումներ, ստորագրելու իր փոխարեն և կատարելու սույն լիազորություններից բխող բոլոր գործողությունները» (հատոր 1-ին, գ.թ. 146):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպ-

քում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ մասի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ, 128-րդ, 203-րդ հոդվածները սխալ մեկնաբանելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող է ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

I) ինչ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող իրը հանդիսանում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխող ֆիզիկական անձի անձնական օգտագործման իր:

II) արդյո՞ք միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձանց համար սահմանված ապրանքների հայտարարագրման պարտականությունը կարող է համարվել պատշաճորեն կատարված, երբ վերջինս, ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելով երրորդ անձի անձնական օգտագործման իրերը, ընտրել է մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կանաչ» ուղին:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով, եթե՝

ա) դրանք տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով.

բ) փոփոխվում է դրանց նկատմամբ կիրառվող մաքսային ռեժիմը.

գ) (ենթակետն ուժը կորցրել է 21.08.08 ՀՕ-155-Ն)

դ) դրանք ենթակա են հայտարարագրման՝ նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն.

ե) դրանք հանդիսանում են «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով տեղափոխված ապրանքների վերամշակումից առաջացած թափոններ կամ մնացորդներ:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ թղթային, բանավոր, էլեկտրոնային եղանակներով, կամ գործողությամբ՝ ներկայացնելով ճշգրիտ տեղեկություններ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև՝ մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է՝

ա) իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում՝

նույն օրենսգրքով նախատեսված կարգով.

բ) մաքսային մարմինների պահանջով ներկայացնել հայտարարագրվող ապրանքները և տրանսպորտային միջոցները.

գ) մաքսային մարմիններ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը՝ (...) որն առաջացնում է ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման կարգի մասին» թիվ 1927-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի համաձայն՝ «Կարմիր» ուղին նախատեսված է այն ուղևորների համար, ովքեր տեղափոխում են գրավոր հայտարարագրման ենթակա ապրանքներ: «Կարմիր» ուղին կարող են ընտրել նաև այն ուղևորները, ովքեր չունենալով գրավոր հայտարարագրման ենթակա ապրանքներ՝ ցանկություն են հայտնում լրացնելու ուղևորային մաքսային հայտարարագիր:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ «Կանաչ» ուղին նախատեսված է այն ուղևորների համար, որոնք չունեն գրավոր հայտարարագրման ենթակա ապրանքներ:

Կարգի 14-րդ կետի համաձայն՝ ուղևորի կողմից «Կանաչ» ուղին ընտրելը և նույն կարգի 4.2-րդ կետում նշված «Կանաչ» ուղու ելքը հատելը համարվում է բանավոր հայտարարագրում:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ «Կանաչ» ուղի ընտրած ուղևորի մոտ առկա են գրավոր հայտարարագրման ենթակա ապրանքներ, ապա մինչև ուղևորի կողմից «Կանաչ» ուղու մուտքը հատելը մաքսային մարմնի պաշտոնատար անձը կարող է կանգնեցնել նրան և առաջարկել տեղափոխվել «Կարմիր» ուղի:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ «Կանաչ» ուղու ելքը հատած ուղևորն իր հետ տեղափոխում է գրավոր հայտարարագրման ենթակա կամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելված ապրանքներ, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է մաքսային հսկողության գործողություններ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք մետաղներով երեսապատված մետաղներից պատրաստված ոսկերչական իրերը և դրանց մասերը ՀՀ մաքսային սահմանով ներմուծելու դեպքում գանձվում է մաքսատուրք՝ այդ իրերի մաքսային արժեքի 10% դրույքաչափով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը: Որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք՝

ա) չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում:

բ) ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանված ապրանքատեսակների:

Վկայակոչված հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, սահմանել է, որ ՀՀ մաքսային սահմանը հատելիս ֆիզիկական անձինք պարտավոր են հայտարարագրել իրենց կողմից տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները: Օրենսդիրը, միաժամանակ, նշված ընդհանուր կանոնից նախատեսել է բացառության հնարավորություն՝ ամրագրելով, որ բացառությունները պետք է սահմանվեն օրենքով:

Օրենսդրի կողմից ՀՀ մաքսային սահմանը հատող անձանց համար սահմանված ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման պարտականություն նախատեսելն ինքնանպատակ չէ: Նման իրավակարգավորման նպատակը ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված հարկեր, տուրքեր վճարելու, պարտադիր այլ վճարումներ կատարելու անձի սահմանադրաիրավական պարտականության պատշաճ կատարման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ապահովումն է, քանի որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու միջոցով լուծվում է տվյալ ապրանքի կամ տրանսպորտային միջոցի ներմուծման կամ արտահանման համար գանձվող մաքսատուրքի վճարման հարցը, ինչպես նաև պարզվում է գանձման ենթակա մաքսատուրքի չափը:

ՀՀ-ում մաքսային սահմանը հատելիս ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումն իրականացվում է թղթային, բանավոր, էլեկտրոնային եղանակներով կամ գործողությամբ: Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը, ըստ էության, ՀՀ մաքսային սահմանը հատող անձի կողմից մաքսային մարմիններին որոշակի տեղեկատվություն տրամադրելու օրենսդրորեն սահմանված եղանակ է: Մասնավորապես՝ ՀՀ մաքսային սահմանը հատող անձը պարտավոր է տեղեկություններ ներկայացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև՝ մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ տրամադրել: Միաժամանակ, ՀՀ մաքսային սահմանը հատող անձինք պարտավոր են համապատասխան մաքսային մարմիններին ներկայացնել ոչ թե ցանկացած, այլ ապրանքների մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ և ճշգրիտ տեղեկություններ:

ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի թիվ 1927-Ն որոշումը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի վերը նշված կարգավորումների լույսի ներքո վերլուծելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության համար սահմանված է առանձնահատուկ կարգ կամ այսպես կոչված՝ երկուդային համակարգ: Այն դեպքում, երբ միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձի կողմից ներմուծվում է այնպիսի ապրանք, որը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար օրենքով սահմանված է մաքսատուրք վճարելու պարտականություն, ապա միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձը պարտավոր է ընտրել մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կարմիր» ուղին: Այն դեպքում, երբ տվյալ ֆիզիկական անձի կողմից ներմուծվում է այնպիսի ապրանք, որը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար օրենքով սահմանված չէ մաքսատուրք վճարելու պարտականություն, ապա միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական ան-

ձը կարող է ընտրել մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կանաչ» ուղին, որն ընտրելը համարվում է գրավոր հայտարարագրման ենթակա ապրանքներ չունենալու մասին բանավոր հայտարարագրում: Այսինքն՝ «Կանաչ» ուղու ընտրության դեպքում բանավոր հայտարարագրումն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ միջազգային օդանավակայաններով ՀՀ ժամանող ֆիզիկական անձը ՀՀ չի ներմուծում այնպիսի ապրանք, որը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար օրենքով սահմանված է մաքսատուրք վճարելու պարտականություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք մետաղներով երեսապատված մետաղներից պատրաստված ոսկերչական իրերը և դրանց մասերը ՀՀ մաքսային սահմանով ներմուծելու դեպքում սահմանված է մաքսատուրք վճարելու պարտականություն: Մինևույն ժամանակ, նույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը ֆիզիկական անձանց համար սահմանել է արտոնություն, այն է՝ առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը, և որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք՝

ա) չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում

բ) ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի նույն 105-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ապրանքատեսակների:

Միայն վերը նշված պայմանների առկայության դեպքում է անձն օգտվում օրենսդրությամբ սահմանված արտոնությունից, որի դեպքում ապրանքների սխալ հայտարարագրելը կամ ընդհանրապես չհայտարարագրելը չի հանգեցնում նրա սահմանադրաիրավական պարտականության ոչ պատշաճ կատարմանը:

Վճարել դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, որը կարող է արտահայտվել նաև դրանց մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելու միջոցով, մեղավոր անձի նկատմամբ առաջացնում է այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով տուգանքի նշանակում: Ընդ որում, մաքսային կանոնները խախտած անձը պատասխանատվության է ենթակա այդ կանոններն ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգուշորեն խախտելու համար (*յրեւ, Արամ Բարսեղյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պե-տական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/2122/05/09 վարչական գործով ՀՀ վճարելի դա-տարանի 12.03.2010 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 14.02.2012 թվականին ժամը 21:15-ին ՀՀ կառավարությանն առընթեր մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցները «Արմենիա» միջազգային օդանավակայանի ուղևորների ժամանման սրահում մաքսային հսկողության գոտու «Կանաչ ուղու» ելքը հատելուց հետո կազնեցրել է հսկողության են ենթարկել նույն օրը Մոսկվա-Երևան թիվ 511 չվերթով ժամանած Վահե Հարությունյանի ուղեբեռը և հայտնաբերել են վերջինիս կողմից առանց հայտարարագրման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 10 հատ՝ 125,312 գրամ քաշով ոսկյա զարդեր: 14.02.2012 թվականին Վահե Հարությունյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, իսկ առանց հայտարարագրման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված ոսկյա զարդերը վերցվել են և հանձնվել Կոմիտեի հետաքննության վարչություն: ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետի 19.03.2012 թվականի թիվ 04091204 եզրակացու-

թյան համաձայն՝ փորձաքննության տրամադրված 10 հատ՝ 125,312 գրամ քաշով զարդերի շուկայական արժեքը 14.02.2012 թվականի դրությամբ կարող էր կազմել 5.580.000 ՀՀ դրամ: 20.07.2012 թվականի Կոմիտեի հետաքննության վարչության պետի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշմամբ Վահե Հարությունյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և տուգանվել է առանց հայտարարագրման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 10 հատ՝ 125,312 գրամ ոսկյա զարդերի մաքսային արժեքի՝ 3.584.034 ՀՀ դրամի չափով: Վահե Հարությունյանի կողմից Դատարան է ներկայացվել 08.02.2012 թվականին տրված լիազորագիր, որով Օֆելյա Վարդանյանը լիազորել է Վահե Հարությունյանին «իր փոխարեն հանդես գալու Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի «Վուկովո» օդանավակայանում ստանալու իրեն պատկանող 10 կտոր ոսկյա զարդերը, դրանք տեղափոխելու Հայաստանի Հանրապետություն, ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթերը, տալու հայտարարություններ, դիմումներ, ստորագրելու իր փոխարեն և կատարելու նշված լիազորություններից բխող բոլոր գործողությունները»:

Սույն գործով Դատարանը, Կոմիտեի հայցը բավարարելով և Վահե Հարությունյանի հայցը մերժելով, պատճառաբանել է, որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա չեն հայտարարագրման միայն այն դեպքերում, եթե այդպիսիք նախատեսված են օրենքով, իսկ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքները չհայտարարագրելու վերաբերյալ առկա չէ որևէ օրենսդրական դրույթ: Ֆիզիկական անձինք, որպես ուղեկցող բեռ, կարող են ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել իրենց ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերն առանց մաքսատուրքի վճարման, և ֆիզիկական անձանց կողմից ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա են հայտարարագրման, մինևս ժամանակ, եթե այդ ապրանքների մաքսային արժեքը չի գերազանցում օրենքով սահմանված չափը, այդ ապրանքների համար սահմանվում է մաքսատուրքի արտոնություն: Տվյալ դեպքում Վահե Հարությունյանը 14.02.2012 թվականին «Արմենիա» միջազգային օդանավակայանով իր հետ Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 125,312 գրամ ընդհանուր քաշով ոսկյա զարդեր՝ խախտելով ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի, 130-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, ինչը հանգեցրել է նույն օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտմանը, այն է՝ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների չհայտարարագրելուն, որն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հարկեր, տուրքեր վճարելու սահմանադրական պարտականության չկատարմանը: Դատարանը, անդրադառնալով Վահե Հարությունյանի կողմից որպես ապացույց դատարան ներկայացված 08.02.2012 թվականի լիազորագրին, նշել է, որ այն սույն գործի լուծման համար էական նշանակություն ունենալ չի կարող, քանի որ 14.02.2012 թվականին առանց հայտարարագրման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված ապրանքները հայտնաբերվել են Վահե Հարությունյանի ուղեբեռում, ինչը նշանակում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը թույլ է տրվել վերջինիս կողմից:

Վերաքննիչ դատարանը, Վահե Հարությունյանի բողոքը բավարարելով, պատճառաբանությունների հիմքում դրել է այն հանգամանքը, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի և ՀՀ մաքսային վարչության պետի 10.07.1998 թվականի թիվ 85-ՄՎԸ հրամանի իրավանդումների համադրված մեկնաբանությունից հետևում է, որ անձնական օգտագործման ոսկյա զարդերը գրավոր հայտարարագրման ենթակա չեն, իսկ տվյալ դեպքում գործով ներկայացված ապացույցների համակցությունից հետևում է որ Վահե Հարությունյանը գործել է Օֆելյա Վարդանյանի լիազորագրի հիման վրա՝ նրա հանձնարարությամբ և նրա անունից: Հետևաբար, Վահե Հարությունյանի մոտ գտնվող ոսկյա զարդերն անվերապահորեն հանդիսանում են Օֆելյա Վարդանյանի անձնական օգտագործման ոսկյա զարդեր:

րը, որոնց ՕՖելյա Վարդանյանի անունից հայտարարագրելու լիազորությունը Վահե Հարությունյանն ունեցել է և դրանց բանավոր հայտարարագրումը նա կատարել է՝ անցնելով «Կանաչ» ուղով և դուրս գալով այդ ուղուց: Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ գարդերը գրավոր հայտարարագրման ենթակա չեն եղել, հետևաբար Վահե Հարությունյանի կողմից թույլ չի տրվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ 14.02.2012 թվականին Մոսկվա-Երևան թիվ 511 չվերթով «Զվարթնոց» միջազգային օդանավակայան ժամանած Վահե Հարությունյանը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել է ոսկերչական իրեր, որոնք ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի իմաստով չեն հանդիսացել վերջինիս անձնական օգտագործման իրերը: Մասնավորապես՝ նշված ոսկերչական իրերը Վահե Հարությունյանին չեն պատկանել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործում առկա ապացույցի համաձայն՝ այդ ոսկերչական իրերը պատկանել են այլ անձի: Հետևաբար, Վահե Հարությունյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի իմաստով չէր կարող օգտվել օրենսդրությամբ սահմանված արտոնությունից և պարտավոր էր «Զվարթնոց» միջազգային օդանավակայանով ՀՀ ներմուծված ոսկերչական իրերի համար վճարել օրենքով սահմանված վճարը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը ՀՀ մաքսային օրենսդրության վկայակոչված իրավանորմերի սխալ մեկնաբանման արդյունքում սխալ հետևության է հանգել իրավախախտման բացակայության փաստի վերաբերյալ՝ անտեսելով այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից սահմանված արտոնությունից կարող է բացառապես օգտվել անմիջականորեն տվյալ իրը ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով որպես անձնական օգտագործման առարկա տիրապետող ֆիզիկական անձը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վահե Հարությունյանը պարտավոր էր ընտրել մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության իրականացման «Կարմիր» ուղին և գրավոր հայտարարագիր ներկայացնել իր կողմից տեղափոխվող ոսկերչական իրերի վերաբերյալ: Այսինքն՝ Վահե Հարությունյանը խախտել է ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտականությունը, հետևաբար և իրավաչափորեն ենթարկվել է պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտ-

ման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.03.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 07.08.2013 թվականի վճռին:

2. Վահե Հարությունյանից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել 127.521 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.09.2013 թվականի որոշմամբ հետսաձգված պետական տուրքի գումար:

Վահե Հարությունյանից հօգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 147.521 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ-2/0159/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ ՎԴ-2/0159/05/12

2014թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 08-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լուսինե Սուքոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.06.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ «Սպիտակ լիճ» արտադրական կոդպերատիվի (այսուհետ՝ Կոդպերատիվ) հայցի ընդդեմ Իջևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Տավուշի մարզային ստորաբաժանման, երրորդ անձ Լուսինե Սուքոյանի՝ Իջևանի համայնքի ավագանու 14.10.2005 թվականի թիվ 5 որոշումը, 13.02.2006 թվականին իրականացված աճուրդը, Իջևանի քաղաքապետի 22.02.2006 թվականի թիվ 25 որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանքների վերացում՝ 27.04.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա 01.06.2006 թվականին Լուսինե Սուքոյանի անվամբ կատարված իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Իջևանի Վալանսի փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող սրճարանի տարածքի նկատմամբ Կոդպերատիվի սեփականության իրավունքը ճանաչելու մասին որոշում ընդունելուն Իջևանի համայնքի ղեկավարին պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոդպերատիվը պահանջել է անվավեր ճանաչել Իջևանի համայնքի ավագանու 14.10.2005 թվականի թիվ 5 որոշումը, 13.02.2006 թվականին իրակա-

նացված աճուրդը, Իջևանի քաղաքապետի 22.02.2006 թվականի թիվ 25 որոշումը, որպես հետևանքների վերացում՝ անվավեր ճանաչել 27.04.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա 01.06.2006 թվականին Լուսինե Սուքոյանի անվամբ կատարված իրավունքների պետական գրանցումը, պարտավորեցնել Իջևանի համայնքի ղեկավարին որոշում ընդունել Իջևանի Վալանսի փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող սրճարանի տարածքի նկատմամբ Կոոպերատիվի սեփականության իրավունքը ճանաչելու մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Թորոսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.06.2013 թվականի որոշմամբ Լուսինե Սուքոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լուսինե Սուքոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Կոոպերատիվը և Քաղաքապետարանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը, գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 24-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 71-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, հակասել է ինքն իրեն՝ պարզաբանելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված է, որ բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո վարույթի մասնակիցը կորցնում է բողոքարկման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու հիմնավորմամբ բողոք բերելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ: Տվյալ դեպքում բողոքարկման ժամկետը, որն առավելագույնը պայմանավորված է 6 ամիս ժամկետով, Կոոպերատիվի կողմից արդեն իսկ բաց էր թողնվել անհարգելի պատճառով, իսկ Դատարանը, նշված հանգամանքները հաշվի չառնելով, թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի խախտում, որի հետևանքով ոչ միայն սահմանափակվել, այլև վերացվել են Լուսինե Սուքոյանի սեփականության նկատմամբ ՀՀ ներպետական նորմերով երաշխավորված իրավունքները:

Այսինքն՝ Դատարանը և Վերաքննիչ դատարանը բաց թողնված ժամկետը համարել են հարգելի այն դեպքում, երբ Կոոպերատիվն այն բաց թողնելը հարգելի ճանաչելու հիմքեր անգամ չի ներկայացրել միջնորդությամբ: Մինչդեռ, դատավարությամբ սահմանված են դատական պաշտպանության դիմելու դատավարական ժամկետները, և որպեսզի դատարան ընդունի հայցվորի իրավունքների դատական կարգով պաշտպանությունը, վերջինս պարտավոր է հիմնավորել բաց թողնված դատավարական ժամկետի հարգելի լինելը, իսկ դատարանը՝ այն հարգելի համարելը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանի վճռի պատճառաբանական մասից հստակ երևում է, որ Դատարանը նույնպես արձանագրել է նյութական իրավունքի կոպիտ խախտում, սակայն անհասկանալի պատճառներով այլ որոշում է կայաց-

րել:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է, որ աճուրդի ծանուցման մեջ չեն ներառվել բոլոր տեղեկությունները: Մինչդեռ Քաղաքապետարանն աճուրդն ացկացնելու մասին հրապարակային ծանուցումը տեղադրել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 11.01.2006 թվականի համարում հետևյալ բովանդակությամբ. «Իջևանի համայնքի ավագանու 14.10.2005 թվականի թիվ 5 և քաղաքապետի 23.12.2005 թվականի թիվ 181 որոշումներով ս.թ. հունվարի 11-ից կազմակերպվում է քաղաքապետարանի սեփականությունը հանդիսացող Վալանսի փողոցի թիվ 1 շենքի նկուղային հարկի 221,7քմ մակերեսով տարածքի աճուրդային վաճառքը: Աճուրդը տեղի կունենա քաղաքապետարանի շենքում 13.02.2006 թվականին: Աճուրդային վաճառքին մասնակցել ցանկացողները կարող են հայտեր ներկայացնել քաղաքապետարան մինչև 10.02.2006 թվականը: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարել 3-21-38 հեռախոսահամարով»: Նշված հայտարարությունը եղել է բացահայտ, և Կոտայերատիվը ցանկության դեպքում ևս կարող էր դիմել աճուրդին մասնակցելու համար, ինչը չի արել: Այսինքն՝ բողոքաբերը գտել է, որ նրա որևէ իրավունք չի խախտվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 27.06.2013 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Կոտայերատիվի վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Բողոք բերած անձը Վերաքննիչ դատարանի 27.06.2013 թվականի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքում չի հիմնավորել նյութական և դատավարական իրավունքի խախտման առկայությունը, որը կարող է ազդել գործի ելքի վրա:

2.2. Քաղաքապետարանի վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Լուսինե Սուրյանը երբևիցե Կոտայերատիվի տարածք մուտք չի գործել, գործունեություն չի ծավալել, այլ իր գործողություններով հիմնավորել է այն փաստական հանգամանքը, որ նշված տարածքը պատկանում է Կոտայերատիվին: 1991 թվականից սկսած՝ այդ տարածքը տիրապետում և օգտագործում է Կոտայերատիվը, և այդ գույքը տիրապետելու առումով ոչ մի խոչընդոտ չի եղել, քանի որ դա Կոտայերատիվի գույքն է:

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտված ապացույցների հիման վրա, իսկ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն անհիմն են:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի Տավուշի մարզային մասնաճյուղի կողմից 06.04.2012 թվականին տրված թիվ 115՝ Իջևանի քաղաքապետի 16.03.2001 թվականի թիվ 15 որոշման քաղվածքի համաձայն՝ որոշվել է Իջևանի Վալանսի փողոցում գտնվող մանկական գրադարանի հողհատկացման փաստաթղթերի վերականգնման և սեփականության իրավունքի գրանցման վկայականի ձևակերպման համար անհատույց, մշտական օգտագործման իրավունքով մանկական գրադարանի շինարարության համար հատկացնել 453քմ մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի (հատոր 1-ին, գ.թ. 12):

2) 04.04.2001 թվականի թիվ 349318 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի Վալանսի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 453քմ մակերեսով հողամասի և գրադարանի նկատմամբ գրանցվել է Քաղաքապե-

տարանի սեփականության իրավունքը՝ ՀՀ Կառավարության 14.03.1997 թվականի թիվ 51 որոշման հիման վրա (հատոր 1-ին, գ.թ. 13-15)։

3) Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 14.10.2005 թվականի որոշմամբ՝ համայնքի սեփականությունը հանդիսացող Վալանսի փողոցի թիվ 1 շենքի նկուղային հարկի 221,7քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի աճուրդային վաճառքի մասին, որոշվել է նշված տարածքը ներկայացնել աճուրդային վաճառքի (հատոր 3-րդ, գ.թ. 42)։

4) Իջևանի քաղաքապետի 22.02.2006 թվականի «Իջևան քաղաքի Վալանսի փողոցի թիվ 1 շենքի նկուղային հարկի 221,7քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի աճուրդային վաճառքի մասին» թիվ 25 որոշման քաղվածքի համաձայն՝ 13.02.2006 թվականին անցկացված աճուրդի արդյունքում հաղթող է ճանաչվել Իջևան քաղաքի բնակիչ Լուսինե Սուրբյանը (հատոր 3-րդ, գ.թ. 43)։

5) Աճուրդի արդյունքների և Իջևանի քաղաքապետի 22.02.2006 թվականի թիվ 25 որոշման հիման վրա Իջևանի քաղաքային համայնքի և Լուսինե Սուրբյանի միջև 27.04.2006 թվականին կնքվել է «Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր» (հատոր 3-րդ, գ.թ. 44-45)։

6) 01.06.2006 թվականի թիվ 2203625 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի Վալանսի փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող 221,7քմ մակերեսով տարածքի նկատմամբ 27.04.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Լուսինե Սուրբյանի սեփականության իրավունքը (հատոր 3-րդ, գ.թ. 48-49)։

7) 17.04.2012 թվականին դիմելով դատարան՝ Կոռպերատիվը պահանջել է անվավեր ճանաչել Իջևանի համայնքի ավագանու 14.10.2005 թվականի թիվ 5 որոշումը, 13.02.2006 թվականին իրականացված աճուրդը, Իջևանի քաղաքապետի 22.02.2006 թվականի թիվ 25 որոշումը, որպես հետևանքների վերացում՝ անվավեր ճանաչել 27.04.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա 01.06.2006 թվականին Լուսինե Սուրբյանի անվամբ կատարված իրավունքների պետական գրանցումը, պարտավորեցնել Իջևանի համայնքի ղեկավարին որոշում ընդունել Իջևանի Վալանսի փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող սրճարանի տարածքի նկատմամբ Կոռպերատիվի սեփականության իրավունքը ճանաչելու մասին։ Միաժամանակ, Կոռպերատիվը միջնորդել է հարգելի համարել բաց թողնված դատավարական ժամկետը (հատոր 1-ին, գ.թ. 1-8)։

8) Դատարանի 17.04.2012 թվականի որոշմամբ բավարարվել է դատարան դիմելու օրենքով սահմանված դատավարական ժամկետի բաց թողնելը հարգելի համարելու մասին միջնորդությունը, և հայցադիմումն ընդունվել է վարույթ (հատոր 1-ին, գ.թ. 32-33)։

9) Դատարանի 17.04.2012 թվականի «Դատարան հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը Լուսինե Սուրբյանն ստացել է 20.04.2012 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 47-49)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ միջանկյալ դատական ակտերի անմիջական և հետաձգված բողոքարկման կարգերի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատա-

կան պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ սույն գործով ստորադաս դատարանների կողմից հայցվորը շահագրգիռ անձ է որակվել, ապացույցների ոչ բազմակողմանի, ոչ լրիվ և ոչ օբյեկտիվ գնահատման արդյունքում՝ ի խախտումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների, ինչի հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

1) *անձը, ով օբյեկտիվորեն հնարավորություն է ունեցել բողոքարկելու առաջին աստիճանի դատարանի միջանկյալ դատական ակտը, սույն դեպքում բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման մասին միջնորդությունը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշումը, չի իրացրել այդ հնարավորությունը, կարող է արդյո՞ք այդ առնչությամբ բողոք ներկայացնել վեճն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում.*

2) *անձը, ում իրավունքները և օրինական շահերը խախտված չեն, այսինքն՝ չունի «իրական (ռեալ)» իրավունք, արդյո՞ք իրավունք ունի դիմելու դատարան՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով:*

1) Առաջին իրավական հարցադրման առնչությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կարգի առանձնահատկություններին՝ ընդհանրապես, և բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման առանձնահատկություններին՝ մասնավորապես:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենսգրքը, ի թիվս այլնի, սահմանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը:

Նույն օրենսգրքի 3-րդ հոդվածն ամրագրում է դրանով նախատեսված դեպքերում ֆիզիկական և իրավաբանական անձանց վարչական դատարան դիմելու իրավունքը, որը վերջիններս կարող են իրացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ամրագրում է կողմերի՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմերը պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **միայն օրենքով նախատեսված դեպքերում**՝ միջանկյալ դատական ակտը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, եթե օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ կերպով սահմանված է վարչական դատարանի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 125-րդ հոդվածի 1-ին մասով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերը բողոքարկման ենթակա չեն:

Վերոհիշյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է:

Օրենսդիրը գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական և հետաձգված կարգեր: Անմիջական բողոքարկման են ենթակա այն միջանկյալ դատական ակտերը, որոնց չբողոքարկման արդյունքում օբյեկտիվ արգելքներ են առաջանում գործի հետագա քննության համար, իսկ դրանց բողոքարկման անհնարինությունը դատական ակտի կայացման չարդարացված ձգձգումների և քաղաքացու իրավունքների խախտման է հանգեցնում, որոնց հետագա դատական պաշտպանությունն ապագայում չի կարող ապահովվել կամ չի կարող հանգեցնել արդյունավետ վերականգնման: Օրենսդիրը գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերի համար սահմանել է **անմիջական բողոքարկման կարգ**: Իսկ նշված դրույթով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերի համար օրենսդիրը սահմանել է «**հետաձգված բողոքարկման**» **կարգ**, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Ցանկացած դատավարական գործողություն, այդ թվում նաև՝ **տվյալ միջանկյալ դատական ակտի բողոքարկումը, կարող է կատարվել միայն այն կարգով, որը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով**: Հետևաբար, հաշվի առնե-

յով, որ օրենսդիրը գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար սահմանել է անմիջական բողոքարկման կարգ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **այդ դրույթով նախատեսված միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն անմիջական բողոքարկման կարգով**:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքն իրացնող սուբյեկտներն իրավական պաշտպանության միջոցներից, այդ թվում՝ ընդդեմ միջանկյալ դատական ակտերի, պետք է օգտվեն բարեխղճորեն: Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցից չօգտվելու դեպքում դատավարության մասնակիցը չի կարող դիմել այնպիսի պաշտպանության միջոցի, որն օրենսդիրը տվյալ դեպքի համար չի նախատեսել:

Վերոհիշյալ իրավական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը չի իրացրել գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտն անմիջական բողոքարկման կարգով բողոքարկելու իր իրավունքը, երբ նա ողջամտորեն կարող էր դա անել, ապա չի կարող այլևս տվյալ միջանկյալ դատական ակտը բողոքարկել «հետաձգված բողոքարկման կարգով», այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Շվված նորմին համահունչ՝ սույն օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված անմիջական բողոքարկման կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի սպառիչ ցանկը ներառում է նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը:

Վերոհիշյալ իրավակարգավորման հիման վրա և հաշվի առնելով, որ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին վարչական դատարանի որոշումն օրենսդիրը ևս դասել է անմիջական բողոքարկման կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքին՝ վերը շարադրված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև նշված միջանկյալ դատական ակտի առնչությամբ: Այսինքն՝ եթե դատավարության մասնակիցն օրենսգրքով սահմանված ժամկետում չի իրացրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին վարչական դատարանի որոշումն անմիջական բողոքարկման կարգով բողոքարկելու իր իրավունքը, ապա այլևս չի կարող այդ առնչությամբ բողոք ներկայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունը վկայում է, որ Կոռպերատիվը հայցադիմում է ներկայացրել Դատարան 17.04.2012 թվականին՝ միաժամանակ ներկայացնելով միջնորդություն՝ դատարան դիմելու համար սահմանված դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ: Միջնորդությունը Դատարանի 17.04.2012 թվականի որոշմամբ բավարարվել է. վերականգնվել է բաց թողնված դատավարական ժամկետը, և հայցադիմումն ընդունվել է վարույթ: Շվված որոշումը բողոք բերած անձն ստացել է 20.04.2012 թվականին, սակայն վերջինս, փաստացի գրկված չլինելով նշված դատական ակտը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասով, բողոքարկելու հնարավորությունից, չի իրացրել իր այդ դատավարական իրավունքը:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձը, չբողոքարկելով Դատարանի 17.04.2012 թվականի որոշումը՝ բաց թողնված դատավարական

Ժամկետը վերականգնելու մասով, սույն վճռաբեկ բողոքի հիմքում այլևս չի կարող վկայակոչել այն ենթադրյալ խախտումները, որոնք վերաբերում են բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության բավարարմանը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մասով վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ:

2) Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է վարչական ակտերի իրավաչափության հարցին (*Կրե՛ս, Լևոն Ղազարյանն ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի Նոր Նորքի փարածքային սպորաբաժանմանն, թիվ 3-2440(ՎԴ) քաղաքացիական գործով 21.12.2006 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով վարչական ակտերի իրավաչափության վերաբերյալ արտահայտած իր իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ստորադաս դատարանի այն եզրահանգմանը, ըստ որի՝ «վիճելի տարածքը չէր կարող հանդիսանալ մանկական գրադարանի մաս և գրանցվել որպես համայնքային սեփականություն: ... նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործով վեճի առարկա հանդիսացող տարածքը դեռևս 1988 թվականի օգոստոսի 18-ին դուրս է եկել Իջևանի քաղաքային խորհրդի գործկոմի տիրապետման և տնօրինման ոլորտից և որպես սեփականություն նախ անցել է Կենտրոնին, իսկ 1991 թվականի՝ Կոոպերատիվին, դատարանը գտնում է, որ այն չէր կարող մաս կազմել ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշման թիվ 10 հավելվածի տասներորդ տողում նշված մանկական գրադարանի և համարվել Իջևանի քաղաքային համայնքի սեփականությունը»:

Դատարանի նշված եզրահանգման առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախ՝ գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհաստատեր, որ վիճելի տարածքը Կոոպերատիվին է անցել սեփականության իրավունքով, և երկրորդ՝ ինչպես սույն վարչական գործի շրջանակներում, այնպես էլ որևէ այլ վարույթի շրջանակներում հայցվորի կողմից չի ներկայացվել 04.04.2001 թվականի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջ, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է ելնել այդ գրանցման իրավաչափության և վավերության կանխավարկածից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 04.04.2001 թվականին՝ վիճելի տարածքի նկատմամբ Իջևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքի պետական գրանցման վավերության պայմաններում, այդ տարածքի՝ Քաղաքապետարանի սեփականությունը հանդիսանալու փաստն անվիճելի փաստ է: Մինչդեռ ստորադաս դատարանը, դուրս գալով հայցի առարկայի շրջանակներից, քննարկել է 04.04.2001 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցման վավերության հարցը և գնահատական տալով գրանցման վավերությանը՝ եզրահանգել է, որ գրանցումը եղել է ոչ իրավաչափ:

Բացի այդ, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով հրապարակային սակարկությունները սահմանվում են որպես աճուրդի (մրցույթի) կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց, որին կարող է մասնակցել այդ օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ: «Սակարկության մասնակից» եզրույթը նույն հոդվածում սահմանվում է որպես օրենքով սահմանված կարգով նախավճար վճարած և հրապարակային սակարկությունների միջոցով համապատասխան պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած անձ: Մույն օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է գանգվածային լրատվության միջոցով և «<http://www.azdarak.am>» հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում աճուրդի մասին հրապարակային ծանուցում հրապարակելու պահանջը: «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի մա-

սին ծանուցման մեջ սահմանված չափով, ժամկետներում և կարգով մուծում են նախավճար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախավճարը վճարվելու դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մասնակցին տրամադրել մասնակցի վկայական, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպիչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:

Ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, այնպես էլ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը վկայում է, որ աճուրդում իրացվող գույքը տիրապետող կամ օգտագործող անձանց համար աճուրդի մասին ծանուցման որևէ հատուկ ընթացակարգ նախատեսված չէ, և վերջիններս գույքի նման եղանակով օտարման դեպքում չեն օգտվում տվյալ գույքի գնման նախապատվության իրավունքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված կանոնների խախտմամբ անցկացված սակարկությունները շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ լուծի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով՝ շահագրգիռ անձի պահանջով, եթե աճուրդն իրականացվել է նշված հոդվածով նախատեսված կանոնների խախտմամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՄԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը շարադրված իրավադրոյթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը,

որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձը ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Վերոնշյալ իրավական դրույթների վերլուծությունից հետևում է, որ վկայակոչված իրավանորմերը սահմանում են, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների պաշտպանության համար իրավունք ունի դիմելու վարչական դատարան: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում է, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ունի, և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի դիմելու վարչական դատարան:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որպես ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ, այլ խոսքով՝ շահագրգիռ անձին: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը:

Վերոհիշյալ վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իմաստով շահագրգիռ անձ կարող է լինել աճուրդի մասնակիցը, այն է՝ նախավճար վճարած և հրապարակային սակարկությունների միջոցով համապատասխան պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած անձը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ համանման դեպքերում շահագրգիռ անձ կարող է հանդիսանալ նաև աճուրդի մասնակից չհանդիսացող, սակայն աճուրդում առաջարկվող գույքի նկատմամբ գրանցված սեփականության կամ օգտագործման իրավունքներ ունեցող անձը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.02.2006 թվականին կայացել է Իջևան քաղաքի համայնքի սեփականությունը հանդիսացող Իջևան քաղաքի Վալանսի փողոցի թիվ 1 շենքի նկուղային հարկի ոչ բնակելի 221,7քմ մակերեսով տարածքի աճուրդային վաճառքը, որի արդյունքում հաղթող է ճանաչվել Իջևան քաղաքի բնակիչ Լուսինե Սուրոյանը, իսկ նշված աճուրդի անցկացման վերաբերյալ հրապարակային ծանուցումը տեղադրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 11.01.2006 թվականի համարում: Մինչդեռ, Կոոպերատիվը չի արձագանքել այդ հայտարարությանը, նախավճար չի վճարել և աճուրդի մասնակից չի հանդիսացել: Միաժամանակ, սույն գործում առկա է նրևէ ապացույց, որը կհաստատեր, որ վիճելի տարածքը Կոոպերատիվին է անցել սեփականության իրավունքով, և երկրորդ՝ ինչպես սույն վարչական գործի շրջանակներում, այնպես էլ որևէ այլ վարույթի շրջանակներում հայցվորի կողմից չի ներկայացվել վերոնշյալ անշարժ գույքի նկատմամբ Իջևան համայնքի անվամբ 04.04.2001 թվականին կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջ, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է ելնել այդ գրանցման իրավաչափության և վավերության կանխավարկածից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճելի տարածքի նկատմամբ Քաղաքա-

պետարանի սեփականության իրավունքի պետական գրանցման վավերության պայմաններում, այդ տարածքի՝ քաղաքապետարանի սեփականությունը հանդիսանալու փաստն անվիճելի փաստ է, ինչը նշանակում է, որ Կոոպարտիվը չի հանդիսանում աճուրդում առաջարկվող գույքի սեփականատեր կամ գույքային իրավունքների տիրապետող:

Վճռաբեկ դատարանը, ելնելով իր վերոնշյալ եզրահանգումներից, գտնում է, որ ստորադաս դատարանները, Կոոպերատիվին սույն գործով ներկայացված հայցապահանջների կապակցությամբ շահագրգիռ անձ դիտելով, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն գնահատել գործում առկա ապացույցները՝ ի խախտումն սույն գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների, որպիսի պայմաններում ստորադաս դատարանների կողմից հայցի բավարարումը հիմնավոր և իրավաչափ չէ:

Նշված պարճառաքանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխաններում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաքանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.06.2013 թվականի որոշումը և այն փոփոխել. «Սպիտակ լիճ» արտադրական կոոպերատիվի հայցը մերժել:

2. «Սպիտակ լիճ» արտադրական կոոպերատիվից հօգուտ Լուսինե Սուրբյանի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. «Սպիտակ լիճ» արտադրական կոդպերատիվից հոգուտ Լուսինե Սուքոյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. «Սպիտակ լիճ» արտադրական կոդպերատիվից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.10.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/3477/05/13

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Ա. Մարգարյան

Վարչական գործ թիվ ՎԴ/3477/05/13

2014թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 04.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Տիգրան Սանասարյանի հայցի ընդդեմ Քաղաքապետարանի, երրորդ անձինք Ստելլա Սողոմոնյանի, «Ազրոսպասարկում» ԱՄ ՇՄ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշումը մասնակիորեն՝ 1.700քմ մակերեսով հողամասի մատով, առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Սանասարյանը պահանջել է ճանաչել Քաղաքապետի 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշումը մասնակիորեն՝ 1.700քմ մակերեսով հողամասի մատով, առ ոչինչ լինելը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմայան) (այսուհետ՝ Դատարան) 01.11.2013 թվականի վճռով տույն վարչական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.06.2014 թվականի որոշմամբ Տիգրան Սանասարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 01.11.2013 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ և 27-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը և 90-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման հավելվածի 33-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, պատշաճ գնահատական չի տվել սույն գործի փաստերին և դրանք հիմնավորող ապացույցներին:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ եզրահանգել է, որ Քաղաքապետը, 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշմամբ «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեում Ընկերության կողմից պետական սեփականություն հանդիսացող 5.110,52քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունը ճանաչելով պետական սեփականություն, նույն որոշմամբ սահմանել է, որ հողամասի սահմանները որոշվում են Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով, և փաստել, որ թեև նշված որոշման կարգավորման անմիջական առարկան է «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեում Ընկերության կողմից ինքնակամ կառուցված շինության նկատմամբ պետության սեփականության իրավունքի ճանաչումը, սակայն նույն որոշմամբ դրանով կարգավորման առարկայի հետ համակցության մեջ սահմանվել է նաև այն համապատասխան հողամասի մակերեսը, որի վրա առկա է ինքնակամ շինությունը, ինչպես նաև տվյալ շինությամբ (կառույցով) զբաղեցված և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմանները՝ ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 731-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգին համապատասխան՝ որոշմանը կից գլխավոր հատակագծով:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը սխալ է, քանի որ գործում առկա բոլոր ապացույցների, այդ թվում՝ Քաղաքապետի վիճարկվող որոշման ուսումնասիրությունից, մասնավորապես՝ որոշման վերնագրից հստակ պարզ է, որ դրա կարգավորման առարկան հանդիսացել է Ընկերության կողմից ինքնակամ կառուցված շինությունը, և այն փաստը, որ այդ որոշմամբ սահմանվել է նաև այն համապատասխան հողամասի մակերեսը, որի վրա առկա է ինքնակամ շինությունը, դեռևս բավարար հիմք չէ եզրահանգելու, որ վիճարկվող որոշման կարգավորման առարկան հանդիսացել է նաև վիճելի հողամասը:

Այսինքն՝ տվյալ դեպքում առկա է Տիգրան Սանասարյանի՝ սույն գործով հայցադիմումը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու իրավունք չունենալու ակնհայտությունը, այսինքն՝ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը, որպիսի պայմաններում Դատարանը ճիշտ չի գնահատել Քաղաքապետի 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշումը և սխալ եզրահանգման է եկել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 04.06.2014 թվականի որոշումը բեկանել և փոփոխել այն՝ հայցը մերժել:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Քաղաքապետի 03.12.2007 թվականի «Նոյ թաղամասի թիվ 10/1 հասցեում պետական սեփականություն հանդիսացող 5.110,52քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինության նկատմամբ Երևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 5223-Ա որոշման համաձայն՝ «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեում Ընկերության կողմից պետական սեփականություն հանդիսացող 5.110,52քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունը (բնակելի տանը կից օժանդակ շինություններ, պարիսպ) ճանաչվել է պետական սեփականություն՝ հանձինս Քաղաքապետարանի: Սահմանվել է, որ հողամասի սահմանները որոշվում են Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով, իսկ շինության մակերեսները ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից տրված վկայականով (հատոր 1-ին, գ.թ. 7):

2) Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.03.2007 թվականի մասնագիտական թիվ 18-06/Ի-290 եզրակացությամբ սահմանվել է, որ Ընկերության կողմից իրականացվող կառուցվածքային և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը կազմում է 3.263,12քմ և առաջարկվել է շինության նկատմամբ ճանաչել պետության սեփականության իրավունքը՝ հետագայում օրինական ճանաչելու և կառուցապատողին օտարելու հնարավորությամբ (հատոր 1-ին, գ.թ. 8):

3) Թիվ ՎԴ/4647/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 28.11.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով Տիգրան Սանասարյանի հայցն ընդդեմ Քաղաքապետարանի, երրորդ անձ Ընկերության՝ Քաղաքապետի 28.03.2011 թվականի թիվ 989-Ա որոշումը մասնակիորեն՝ 2-րդ կետի մասով, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ թիվ 2273 ուղղակի վաճառքի պայմանագիրը մասնակիորեն անվավեր ճանաչելու, պետական գրանցումը վերացնելու և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին մերժվել է այն հիմքով, որ Քաղաքապետի 28.03.2011 թվականի թիվ 989-Ա որոշմամբ (որով Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող «Նոյ» թաղամասի թիվ 10/5 հասցեում գտնվող կառույցը և 5.068,42քմ մակերեսով հողամասի սահմաններում գտնվող այդ գործով վիճելի 2.000քմ մակերեսով հողակտորն ուղղակի վաճառքի եղանակով օտարվել են կառույցն իրականացրած Ընկերությանը) չի խախտվել Տիգրան Սանասարյանի որևէ իրավունք և վերջինիս վրա չի դրվել որևէ ոչ իրավաչափ պարտականություն (հատոր 1-ին, գ.թ. 76-85):

4) Ստելլա Սողոմոնյանի (Պատվիրատու) և «ԼԻԳԼԱՐՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՍՊԸ-ի (Կատարող) միջև 05.09.2013 թվականին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ 050913 պայմանագիրը, որով Կատարողը ստանձնել է պարտավորություն թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով Տիգրան Սանասարյանի հետ ունեցած վեճի շրջանակում Պատվիրատուին մատուցել իրավաբանական ծառայություններ և պաշտպանել վերջինիս շահերը ՀՀ բոլոր դատական ատյաններում, իսկ Պատվիրատուն պարտավորվել է կատարել վճարումներ՝ մատուցված ծառայությունների դիմաց: Պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավորվել է Կատարողին վճարել 300.000-ական ՀՀ դրամ յուրաքանչյուր ատյանի դատարանում թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով Պատվիրատուի շահերը ներկայացնելու համար (հատոր 2-րդ, գ.թ. 35-37):

5) Վճարման հանձնարարագրի թիվ 000190 անդորրագրի համաձայն՝ Ստելլա Վարդանյանը «ԼԻԳԼԱՐՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՍՊԸ-ին վճարել է 300.000 ՀՀ

դրամ (հատոր 2-րդ, գ.թ. 42):

6) Ընկերության (Պատվիրատու) և «ԼԻԳԱԼՐՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՍՊԸ-ի (Կատարող) միջև 06.09.2013 թվականին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ 060913 պայմանագիրը, որով Կատարողը ստանձնել է պարտավորություն թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով Տիգրան Սանասարյանի հետ ունեցած վեճի շրջանակում Պատվիրատուին մատուցել իրավաբանական ծառայություններ և պաշտպանել վերջինիս շահերը ՀՀ բոլոր դատական ատյաններում, իսկ Պատվիրատուն պարտավորվել է կատարել վճարումներ՝ մատուցված ծառայությունների դիմաց: Պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավորվել է Կատարողին վճարել 500.000-ական ՀՀ դրամ յուրաքանչյուր ատյանի դատարանում թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով Պատվիրատուի շահերը ներկայացնելու համար (հատոր 2-րդ, գ.թ. 38-40):

7) Վճարման հանձնարարագրի թիվ 000189 անդորրագրի համաձայն՝ Ընկերությունը «ԼԻԳԱԼՐՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՍՊԸ-ին իրավաբանական ծառայությունների մատուցման դիմաց վճարել է 500.000 ՀՀ դրամ (հատոր 2-րդ, գ.թ. 41):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դատական պաշտպանության դիմած անձի ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին չպատկանելու, այսինքն՝ հայցվորի «շահագրգիռ անձ» չհանդիսանալու հանգամանքը, գործի դատաքննության ընթացքում պարզվելու իրավական հետևանքների վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սխալ մեկնաբանելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք առկա է ենթադրաբար խախտված իրավունքը տվյալ անձին չպատկանելու, այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» չհանդիսանալու ակնհայտությունը, եթե դատարանը միայն դատաքննության ընթացքում է պարզում հայցվորի «շահագրգիռ անձ» չհանդիսանալու հանգամանքը.

2. արդյո՞ք վարչական դատարանն իրավասու է կարճելու գործի վարույթը գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածում ամրագրված որևէ հիմքով, եթե դատաքննության ընթացքում պարզում է, որ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին չի պատկանում, այսինքն՝ հայցվորը «շահագրգիռ անձ» չէ:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմին-

ների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

1) վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին.

2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ.

3) գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը.

4) գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է.

5) հայցվորը հրաժարվել է հայցից:

Ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության: Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայ-

ցաղիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցաղիմումի ընդունումը մերժելու հիմքերը:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՄԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (*Կոնս*, *Լր Քոնսյուտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի վճիռը*, պարբ. 47, *Բենթհեմն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի վճիռը*, պարբ. 32):

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել հիքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Վկայակոչված իրավանորմերը սահմանում են, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների պաշտպանության համար իրավունք ունի դիմելու վարչական դատարան: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում է, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ունի և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի դիմելու վարչական դատարան:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ոեալ)» իրավունքներ (*Կոնս*, *Կարինե Ջրավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առջնորդ անշարժ գույքի կադաստրի պեղական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկ-

ման հարցին՝ Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (*Կրե՛ս, Սվեդլանա Օհա՛նյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարան արձանագրում է, որ գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու՝ իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի ՄԴՈ-906 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները վկայում են, որ օրենսդիրը կոնկրետ դեպքում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչությամբ սահմանել է վարչական դատարան դիմելու իրավունքի իրականացման հստակ իրավական նախապայմաններ, ըստ որի՝

ա) յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ դատարան դիմելու իրավունքը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ եթե խոչընդոտներ են հարուցվել կամ չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ) շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպություններն իրավասու են դիմել վարչական դատարան՝ տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգն օրենսգրքով սահմանված լինելու դեպքում՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները՝ պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՛ ոչ:

ՀՀ սահմանադրական դատարանը 17.04.2012 թվականի թիվ ՄԴՈ-1022 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ՝ նշելով, որ «(...) ՀՀ սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն»

բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար կոյության կրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց կոյության կրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու ոչ թե կոյության կրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը, այսինքն, հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը (...):

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի տառացի մեկնաբանության և նույն օրենսգրքի այլ իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված «ակնհայտություն» եզրույթն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չլրիպող ու կասկած չհարուցող ակներևություն: Այսինքն՝ տույն իրավական նորմում տեղ գտած կարգավորումը կարող է վերաբերել միայն հայցադիմում ներկայացնելու՝ չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, և չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես՝ կոյության կրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ եզրահանգման:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ թե՛ գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, և թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է, որ հայցադիմում ներկայացնելու իրավունքի ակնհայտ բացակայության պարագայում դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է մերժել դրա ընդունումը: Օրենսդիրը նման իրավակարգավորմամբ իրավացիորեն խուսափել է ոչ տեղին ու քննության ոչ ենթակա գործերի հետազոտությունից, ինչը հանգեցնում է դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածության և դատարանի վարույթում գտնվող մյուս գործերի քննության ձգձգումների:

Այսպիսով, ակնհայտորեն նման իրավունք չունեցող անձի կողմից հայցադիմում ներկայացվելու պարագայում հայցադիմումը վարույթ չի ընդունվում, քանի որ ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի ընդհանրական ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայցվորն այդ գործով շահագրգիռ անձ չի հանդիսանում:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել էր այն իրավական հիմքերի սպառիչ ցանկը, որոնց

առկայության ուժով դատարանը պարտավոր էր կարճել գործի վարույթը: Այդ հիմքերն էին՝ 1) վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին, 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և մինևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, 3) գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը, 4) գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է, 5) հայցվորը հրաժարվել է հայցից: Վերլուծելով հիշյալ իրավական հիմքերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրենց իրավական բնույթով դրանք հստակեցնում են այն պայմանները, որոնց առկայությունն օրենքի ուժով անհնարին է դարձնում տվյալ հայցադիմումի հիման վրա վարչական դատավարության իրականացումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետի 03.12.2007 թվականի «Նոյ թաղամասի թիվ 10/1 հասցեում պետական սեփականություն հանդիսացող 5.110,52քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինության նկատմամբ Երևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 5223-Ա որոշման համաձայն՝ «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեում Ընկերության կողմից պետական սեփականություն հանդիսացող 5.110,52քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունը (բնակելի տանը կից օժանդակ շինություններ, պարիսպ) ճանաչվել է պետական սեփականություն՝ հանձնիս Քաղաքապետարանի: Սահմանվել է, որ հողամասի սահմանները որոշվում են Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով, իսկ շինության մակերեսները՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից տրված վկայականով:

Սույն գործով Դատարանը Տիգրան Սանասարյանի հայցադիմումն ընդունել է վարույթ և գործի քննության ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ հաստատված է համարել այն փաստը, որ Քաղաքապետի վիճարկվող որոշումը չի վերաբերում Տիգրան Սանասարյանի նշած՝ 1.700քմ մակերեսով հողամասին և արդյունքում գտել է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման՝ Դատարանին ընդդատյա չլինելու հիմքով:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վճիռը՝ եզրահանգելով, որ թեև Քաղաքապետի 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշման կարգավորման անմիջական առարկան հանդիսանում է «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեում Ընկերության կողմից ինքնակամ կառուցված շինության նկատմամբ պետության սեփականության իրավունքի ճանաչումը, սակայն նույն որոշմամբ սահմանվել է նաև այն համապատասխան հողամասի մակերեսը, որի վրա առկա է ինքնակամ շինությունը, ինչպես նաև տվյալ շինությամբ (կառույցով) զբաղեցված և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմանները: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում բացակայում է Տիգրան Սանասարյանի՝ սույն հայցադիմումը վարչական դատարան ներկայացնելու իրավունք չունենալու, այսինքն՝ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը, ուստի անհրաժեշտ է սույն գործն ուղարկել նոր քննության:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը բեկանել է գործի վարույթը կարճելու վերաբերյալ Դատարանի վճիռը՝ գտնելով, որ սույն գործի քննությամբ չի հիմնավորվել Տիգրան Սանասարյանի կողմից վարչական դատարան հայց ներկայացնելու իրավունք չունենալու, այսինքն՝ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարան հայց ներկայացնելու իրավունքի բացակայության ակնհայ

տությունը, գործով շահագրգիռ անձ հանդիսանալու կամ չհանդիսանալու ակնհայտությունը սույն գործի քննության և լուծման համար չունեն որևէ էական նշանակություն:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերը նշված իրավական վերլուծությունը, արձանագրում է, որ գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում տեղ գտած «հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը» ձևակերպումը վերաբերում է միայն հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալու չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ դեպքերին, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, և չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես, կյոթական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ դիրքորոշման: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հայցով դատարան դիմելու իրավունքի բացակայության ակնհայտություն» եզրույթը վերաբերում է վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության փուլին: Այլ կերպ ասած՝ հայցով դատարան դիմելու իրավունքի բացակայության ակնհայտության հարցը կարող է լուծվել միայն հայցադիմումի ընդունելիության փուլում, սակայն ոչ բուն դատաքննության ընթացքում: Դատաքննության ընթացքում ապացույցների մանրամասն ուսումնասիրության արդյունքում կոնկրետ անձի այդ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու հանգամանքը դատարանի կողմից պարզելու պարագայում բացակայում է անձի տվյալ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության պահին գործող վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ եթե հայցադիմումի ընդունելիության փուլում վարչական դատարանը հանգում է այն եզրակացության, որ անձն ակնհայտորեն չունի դատարան դիմելու իրավունք, ապա պետք է որոշում կայացնի վերջինիս հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ: Եթե վարչական դատարանը գործի դատաքննության ընթացքում է գալիս այն եզրահանգման, որ անձը չուներ դատարան դիմելու իրավունք, ապա տվյալ դեպքում բացակայում է հայցով դատարան դիմելու իրավունքի բացակայության ակնհայտությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն առ այն, որ սույն գործով Տիգրան Մանասարյանի կողմից վարչական դատարան հայց ներկայացնելու իրավունք չունենալու, այսինքն՝ գործով շահագրգիռ անձ չհանդիսանալու ակնհայտությունը չի հիմնավորվել, որևէ իրավական նշանակություն չունի վերջինիս հայցը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ հիմնավորված եզրահանգման գալու համար:

Վճռաբեկ դատարանը, միաժամանակ անդրադառնալով գործի վարույթը կարճելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով խնդրո առարկա հարցի վերաբերյալ իր ձևավորած իրավական դիրքորոշումը, ևս մեկ անգամ փաստում է, որ անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ոճալ)» իրավունքներ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական ակտերը, գործողությունները կամ անգործությունը վարչական դատավարության կարգով վիճարկելու դեպքում անձը պետք է հիմնավորի, որ այդ վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը: Եթե գործի քննության ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմն-

ված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ վարչական դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ հայցով դատարան դիմած անձի որևէ իրավունք չի խախտվել, կամ վիճարկվող վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը որևէ կերպ չեն առնչվում տվյալ անձի ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, ապա գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն պետք է վճիռ կայացնի վերջինիս հայցը մերժելու վերաբերյալ:

Վերոգրյալ պատճառաբանությունների լույսի ներքո վերլուծելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում Քաղաքապետի 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշումը որևէ կերպ չի առնչվում Տիգրան Սանասարյանի իրավունքներին և օրինական շահերին: Այսպես, Քաղաքապետի նշված որոշմամբ «Նոյ» թաղամասի թիվ 10/1 հասցեի պետական սեփականություն հանդիսացող 5.110,52քմ մակերեսով հողամասում գտնվող ինքնակամ կառույցները (բնակելի տանը կից օժանդակ շինություններ, պարիսպ) ճանաչվել են պետական սեփականություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել: Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ կարող է ճանաչվել բացառապես պետության կամ համապատասխան համայնքի սեփականության իրավունքը:

Սույն գործով վիճարկվող վարչական ակտով Քաղաքապետը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը ճանաչել է պետական սեփականություն: Հետևաբար, Քաղաքապետի 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշումն ընդունվել է ինքնակամ կառույցներին վերաբերող ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան, և դրանով ոչ միայն չեն խախտվել Տիգրան Սանասարյանի իրավունքները կամ օրինական շահերը, այլ ավելին՝ այդ որոշումը չի առնչվել Տիգրան Սանասարյանի իրավունքներին կամ օրինական շահերին: Նշվածի մասին վկայում է նաև այն, որ սույն գործում առկա՝ ըստ Տիգրան Սանասարյանի հայցի ընդդեմ Քաղաքապետարանի, երրորդ անձ Ընկերության՝ Քաղաքապետի 28.03.2011 թվականի թիվ 989-Ա որոշումը մասնակիորեն՝ 2-րդ կետի մասով, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ թիվ 2273 ուղղակի վաճառքի պայմանագիրը մասնակիորեն անվավեր ճանաչելու, պետական գրանցումը վերացնելու և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, թիվ ՎԴ/4647/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 28.11.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով հայցը մերժվել է, և մերժման համար ևս հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Քաղաքապետի 28.03.2011 թվականի թիվ 989-Ա որոշմամբ չի խախտվել Տիգրան Սանասարյանի որևէ իրավունք և վերջինիս վրա չի դրվել որևէ ոչ իրավաչափ պարտականություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանում սույն գործի քննության ընթացքում պարզվել է, որ Քաղաքապետի 03.12.2007 թվականի թիվ 5223-Ա որոշումը չի առնչվում Տիգրան Սանասարյանի իրավունքներին կամ օրինական շահերին, չի խախտում դրանք: Հետևաբար, Դատարանը պարտավոր էր գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների հիման վրա վճիռ կայացնել Տիգրան Սանասարյանի հայցը մերժելու վերաբերյալ, այնինչ հայցը մերժելու փոխարեն Դատարանը կարճել է սույն գործի վարույթը: Մինչդեռ, գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը գործի վարույթը կարճելու որևէ հիմք չի նախատեսել այն դեպքերի համար, երբ դատարանը դատաքննության ընթացքում պարզում է, որ հայցադիմում ներկայացրած անձը չի հանդիսանում շահագրգիռ անձ: Դատարանը սույն գործի վարույթը կարճել է գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (այն է՝ վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է հանրային իրավահարաբերությունների ոլորտում, հետևաբար ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին, և գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կարճելու իրավական հիմքն առկա չէ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ նշել, որ ի տարբերություն գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի, որը գործի վարույթը կարճելու որևէ հիմք չի նախատեսում այն դեպքերի համար, երբ դատարանը դատաքննության ընթացքում պարզում է, որ հայցադիմում ներկայացրած անձը չի հանդիսանում շահագրգիռ անձ, գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքն այդպիսի հիմք նախատեսում է: Այսպես, ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում օրենսդիրը սահմանել է, որ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե բացահայտվել են սույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում օրենսդիրն ամրագրել է, որ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Օրենսդրական ներկայիս իրավակարգավորումներից բխում է, որ եթե դատարանը գործի քննության ժամանակ պարզում է, որ հայցը հարուցվել է ակնհայտորեն նման իրավունք չունեցող անձի կողմից, ապա պարտավոր է կարճել գործի վարույթը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ակնհայտության հասկացության վերաբերյալ վերը նշված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև գործող իրավակարգավորման պայմաններում: Միաժամանակ, դատարանները, ելնելով արդարադատության արդյունավետության անհրաժեշտությունից, պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր դատավարական միջոցները՝ գործի վարույթի կարճման (հայցադիմումի ընդունելության մերժման) նշված հիմքը դատավարության հնարավորինս վաղ փուլերում բացահայտելու համար՝ այդուհանդերձ նկատի ունենալով, որ այդ հիմքի բացահայտումը դատաքննության փուլում ևս գործող իրավակարգավորման պայմաններում գործի վարույթի կարճման հիմք է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերագրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարտնակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում անդրադառնալ երրորդ անձանց ներկայացուցիչների վճարների՝ որպես դատական ծախսի բաշխման հնարավորության հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են **դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները**:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վկայակոչված իրավանորմների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի կազմում ներառել է նաև ներկայացուցիչների վճարները: Միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դատարանը դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցիչների վճարների բաշխման հարց կարող է լուծել միայն կողմերի պարագայում:

Վճռաբեկ դատարանը, սակայն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մի շարք նորմերի համակարգային վերլուծության արդյունքում հանգում է այն եզրահանգման, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կանոնները կիրառելի են նաև երրորդ անձանց պարագայում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

երրորդ անձինք այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են կամ մարմինները, որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ հայց (ներառյալ՝ հակընդդեմ հայց) ներկայացնելու, հայցի հիմքը և (կամ) առարկան փոխելու, հայցային պահանջների չափը ավելացնելու և (կամ) նվազեցնելու, հայցն ընդունելու կամ հայցից հրաժարվելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքներից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածը, որը սահմանում է կողմերի իրավունքները և պարտականությունները, 7-րդ մասում նախատեսել է, որ կողմերն իրավունք ունեն օգտվելու նույն օրենսգրքով իրենց վերապահված այլ դատավարական իրավունքներից:

Տվյալ պարագայում, նկատի ունենալով, որ երրորդ անձինք որոշակի բացառություններով հանդերձ օգտվում են կողմի իրավունքներից, իսկ իր կրած դատական ծախսերի հատուցում ստանալը կողմի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական իրավունք է, հետևաբար երրորդ անձինք ևս օգտվում են նշված իրավունքից և նրանց նկատմամբ նույնպես կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կանոնները:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնագանձման հարցերին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*յրե՛ս, Ֆերդինանդ Սոաբելյանն ընդդեմ Հարություն Պեյրոսյանի թիվ ԵԿԳ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո սույն գործի բարդությունը և փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (երրորդ անձանց ներկայացուցիչը սույն գործի շրջանակներում ներկայացրել է մեկ գրավոր դիրքորոշում և մասնակցել է ընդամենը երեք դատական նիստի) համադրելով գործում առկա՝ Ստելլա Սողոմոնյանի և «ԼԻԳԼԱՐՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 050913 և Ընկերության ու «ԼԻԳԼԱՐՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 060913 ծառայությունների մատուցման պայմանագրերով սահմանված վճարման ենթակա գումարների չափի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ողջամիտ է Տիգրան Սանասարյանից հոգուտ Ստելլա Սողոմոնյանի և Ընկերության բռնագանձել 100.000-ական ՀՀ դրամ՝ որպես դատական բոլոր ատյաններում գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից դատական ծախսերի կազմում ներառված է նաև պետական տուրքը: Սույն գործով նկատի

ունենալով, որ Երևանի քաղաքապետարանը վճարել է բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, վճարել բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճարել բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճարել դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Տիգրան Սանասարյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 04.06.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Տիգրան Սանասարյանի հայցը մերժել:

2. Տիգրան Սանասարյանից հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Տիգրան Սանասարյանից հօգուտ երրորդ անձ «Ագրոսպասարկում» ԱՄ ՇՄ» ԲԲԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության հատուցման ենթակա գումար:

Տիգրան Սանասարյանից հօգուտ երրորդ անձ Ստելլա Սողոմոնյանի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության հատուցման ենթակա գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1729/05/09
2014թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/1729/05/09

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ քաղաքաշինության նախարարության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բարսեղ Աղազարյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուրի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան), երրորդ անձինք ՀՀ Լոռու մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան), ՀՀ քաղաքաշինության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու, պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակում հաշվառելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բարսեղ Աղազարյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուրի գյուղական համայնքի ղեկավարի կողմից 02.03.2009 թվականի թիվ ԿԳԵ-20 վարչական ակտը և ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշման համաձայն՝ պարտավորեցնել Կաթնաջուրի գյուղական համայնքի ղեկավարին իրեն ընդգրկել աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած անօթևան մնացած բնակարանի կարիքավոր ընտանիքների հաշվառման հերթացուցակում:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 18.03.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.12.2013 թվականի որոշմամբ Շախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.03.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բարսեղ Աղազարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերը, գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 18-րդ, 19-րդ, 27-րդ, 99-րդ, 144-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Բարսեղ Աղազարյանի ընտանիքի կազմի վերաբերյալ 20.11.1990 թվականի տեղեկատվությունը չի կարող հիմք հանդիսանալ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառման հերթացուցակում ընդգրկվելու համար:

Բարսեղ Աղազարյանը հայտարարել է, որ 1982 թվականին ամուսնանալով՝ կազմել է ընտանիք և իր մորից առանձին վարել տնտեսություն: Սակայն Սեղա Աղազարյանի ներկայացրած փաթեթում առկա Կաթնաջուր համայնքի 1986-1990 թվականների տնտեսությունների գրքում նրա տնտեսությունը բաղկացած է հինգ անձից՝ ինքը, որդին՝ Բարսեղ Աղազարյանը, վերջինիս կինը՝ Գոհար Աղազարյանը և երեխաները՝ Վարսենիկ և Լաուրա Աղազարյանները. առկա է տնտեսությանը պատկանող մեկ բնակելի տուն՝ կառուցված 1954 թվականին: Հետևաբար, Բարսեղ Աղազարյանի հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 1982 թվականից առանձին տնտեսություն համարվելու և առանձին բնակելի տուն ունենալու պարագայում դեռևս Գյուղապետարանի 1981-1985 թվականների տնտեսությունների գրքում Բարսեղ Աղազարյանը պետք է հաշվառված լիներ որպես առանձին տնտեսություն: Գործի քննության ընթացքում հայցվորի կողմից Սեղա Աղազարյանի տնտեսությունից առանձնանալու տարեթիվ է նշվել 1985-1986 թվականները, այլ ոչ թե՛ 1982 թվականը:

Հետևաբար երկրաշարժի պահին մեկ բնակելի տուն կորցրած հինգ անձից բաղկացած ընտանիքին երկրաշարժի հետևանքով քանդված մեկ բնակելի տան դիմաց մեկ բնակելի տուն հատկացնելու փոխարեն՝ սույն ընտանիքի տարբեր անդամներին երեք անգամ տալով բնակարանային պայմանների բարելավման առանձին իրավունք՝ պետության վրա արհեստականորեն կղրվի ոչ իրավաչափ պարտավորություն, իսկ տվյալ ընտանիքին կտրամադրվի ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2013 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը, իրականացնելով գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչպես նաև ղեկավարվելով գոր-

ծող օրենսդրության պահանջներով, իրավացիորեն եզրահանգել է, որ 07.12.1988 թվականին՝ երկրաշարժի պահին Բարսեղ Աղազարյանն իր ընտանիքով առանձնացած է եղել իր մոր՝ Սեդա Աղազարյանի տնտեսությունից և կազմել է առանձին տնտեսություն. Կաթնաջուր համայնքում թիվ 06052 39-17 կադաստրային ծածկագրով 0,095հա մակերեսով տնամերձ հողամասի վրա ունեցել է բնակելի տուն, որը քանդվել է երկրաշարժի հետևանքով: Հետևաբար, առկա չեն եղել հիմքեր մերժելու Բարսեղ Աղազարյանի հերթացուցակում ընդգրկելու պահանջը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավարի կողմից 20.11.2002 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Կաթնաջուր գյուղի բնակչուհի Սեդա Աղազարյանի ընտանիքը հողի սեփականաշնորհման ժամանակ՝ 20.12.1990 թվականի դրությամբ բաղկացած է եղել մեկ անձից՝ Սեդա Աղազարյանից (հատոր 1-ին, գ.թ. 6):

2) ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավարի կողմից 20.11.2002 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Կաթնաջուր գյուղի բնակիչ Բարսեղ Աղազարյանի ընտանիքը հողի սեփականաշնորհման ժամանակ՝ 20.12.1990 թվականի դրությամբ բաղկացած է եղել չորս անձից՝ ինքը, կինը և երկու դուստրերը (հատոր 1-ին, գ.թ. 8):

3) ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կողմից Բարսեղ Աղազարյանին ուղղված 02.03.2009 թվականի թիվ ԿԳԵ-20 գրության համաձայն՝ Կաթնաջուրի գյուղապետարանի 1986-1990 թվականների տնտեսությունների գրքերի համաձայն՝ 01.01.1986 թվականի դրությամբ Բարսեղ Աղազարյանը մոր՝ Սեդա Աղազարյանի հետ համարվել է մեկ տնտեսություն և ունեցել է մեկ բնակարան: Այժմ Բարսեղ Աղազարյանի ընտանիքը բաղկացած է մեկ անձից, իսկ Բարսեղ Աղազարյանի նախաերկրաշարժյան բնակարանի դիմաց, որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիք, Կաթնաջուր համայնքի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում ընդգրկված է Բարսեղ Աղազարյանի մայրը՝ Սեդա Աղազարյանը: Քանի որ վերոհիշյալ տնտեսությունների գրքերում Բարսեղ Աղազարյանը որպես առանձին տնտեսություն հաշվառված չի եղել և Բարսեղ Աղազարյանի անվամբ առանձին բնակարան գրանցված չէ, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշմամբ՝ Բարսեղ Աղազարյանը չի ընդգրկվել Կաթնաջուր համայնքի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում (հատոր 1-ին, գ.թ. 11):

4) Գյուղապետարանի կողմից Բարսեղ Աղազարյանի ներկայացուցչին ուղղված 18.12.2008 թվականի թիվ ԿԳԵ-43 գրության համաձայն՝ Կաթնաջուր գյուղի թիվ 39-17 տնամերձ հողամասը 950քմ մակերեսով գտնվում է Կաթնաջուր գյուղի 5-րդ փողոցի 1-ին փակուղի թիվ 5 հասցեում, հողի վրա կառուցված է անասնագու, խորդանոց և հացատուն, գրանցված է Բարսեղ Աղազարյանի անվամբ, իսկ թիվ 39-19 հողամասը 1.000քմ մակերեսով գտնվում է Կաթնաջուր գյուղի 10-րդ փողոցի թիվ 5 տնակ հասցեում, վրան կառուցված է վագոն-տնակ և գրանցված է Սեդա Աղազարյանի անվամբ (հատոր 1-ին, գ.թ. 13):

5) Գյուղապետարանի կողմից Բարսեղ Աղազարյանի ներկայացուցչին ուղղված 16.12.2009 թվականի թիվ ԿԳԵ-40 գրության համաձայն՝ Կաթնաջուրի գյուղապետարանի 1986-1990 թվականների տնտեսությունների գրքում նշված չէ, թե Բարսեղ և Սեդա Աղազարյանները երբևանից են առանձին տնտեսություն վարում և որ հասցեում: Իսկ 1988 թվականի ղեկտեմբերից մինչ օրս Բարսեղ և Սեդա Աղազարյանները փաստացի բնակվում են ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր գյուղի 10-րդ փողոցի թիվ 5 տնակ հասցեում (հատոր 1-ին, գ.թ. 12):

6) Հայաստանի ազգային արխիվի Սպիտակի տարածքային ներկայացուցչության կողմից Բարսեղ Աղազարյանի ներկայացուցչին ուղղված 29.12.2008 թվականի գրությամբ հայտնվել է, որ նախկին Սպիտակի շրջանի Կաթնաջրի գյուղխորհրդի 1991-1995 թվականների տնտեսական գրքերն արխիվի պահպանմանը չեն հանձնվել, գյուղխորհրդի 1991-1995 թվականների տնտեսական գրքում Սեդա Աղազարյանը գրանցված է մեկ անձով (հատոր 1-ին, գ.թ. 14):

7) Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.08.2002 թվականի թիվ 916854 վկայականի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 060524-4 մատյանի 278 համարի տակ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 0,095 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ գրանցվել է Բարսեղ Աղազարյանի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 126-130):

8) Գյուղապետարանի կողմից 29.10.2011 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Բարսեղ Աղազարյանի 1986-1990 թվականների տնտեսությունների գրքում Բարսեղ Աղազարյանի տնտեսությունը՝ մոր Սեդա Աղազարյանի տնտեսությունից բաժանվելու վերաբերյալ գրառումն առկա է, սակայն ժամանակի վերաբերյալ գրանցում կատարված չէ (հատոր 2-րդ, գ.թ. 144):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունու մը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից գործի քննության պահին գործող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերը սխալ կիրառելու հետևանքով առկա առերևույթ դատական սխալով, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք 1988 թվականի դեկտեմբերի 07-ի երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը հաստատող որևէ ապացույցի բացակայության պայմաններում քաղաքացին կարող է ունենալ օրենսդրությամբ սահմանված բնակարանային պայմանները բարելավելու իրավունք:

«Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության» կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և տվյալ բնակավայրում հաշվառված ու մշտական բնակություն հաստատած (այդ թվում՝ երկրաշարժից հետո աղետի գոտու այլ բնակավայրերից տվյալ բնակավայր մշտական բնակության տեղափոխված) այն անձինք ու նրանց ընտանիքի անդամները, որոնց բնակելի տները երկրաշարժի հետևանքով քանդվել կամ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն ենթակա են քանդման:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառման ժամանակ ընտանիքի կազմը որոշվում է երկրաշարժի պահին տվյալ բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքում գրանցված, ինչպես նաև հաշվառման պահին ընտանիքի փաստացի անդամների թվով՝ որպես մեկ ընտանիք:

Կարգի 6-րդ կետը սահմանում է, որ անձը դիմումին կից ներկայացնում է՝

1) ընտանիքի անդամների անձնագրերի (անչափահաս անդամների՝ ծննդյան վկայականների) պատճենները.

2) ամուսնության (ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության) վկայականների պատճենները.

3) 1988 թվականի դեկտեմբերի 07-ի դրությամբ ընտանիքի կազմի, ինչպես նաև տուն ունենալու մասին քաղվածք՝ համապատասխան բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքից, դրա բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք և (կամ) այլ փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին տուն ունենալու փաստը.

4) ընտանիքի մահացած անդամների մահվան վկայականների պատճենները.

5) անավարտ շինարարության բնակելի տան և տնամերձ հողամասի սեփականության վկայականի պատճենները.

6) անապահովության համակարգում ընդգրկվածության և ընտանիքի անապահովության մեծության բալային ցուցանիշի մասին տեղեկանք:

Կարգի 9.1-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում ընդգրկելու համար համայնքի ղեկավարը հիմք է ընդունում տվյալ համայնքի ավագանու որոշումը՝ 1988 թվականի դեկտեմբերի 07-ի դրությամբ ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

Կարգի 11-րդ կետի համաձայն՝ դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձինք, ովքեր՝

1) ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն՝ բացառությամբ նախորդ տարիներին պետական միջոցների հաշվին առանց վարկային միջոցների ներգրավմամբ շինարարությունը սկսած անավարտ շինարարության բնակելի տների.

2) նախորդ տարիներին իրականացված պետական աջակցության ծրագրերի շրջանակներում օգտվել են բնակարանային պայմանների բարելավման համար իրենց իրավունքից.

3) 2004 թվականի հունվարի 01-ից հետո օտարել են բնակարան (բնակելի տուն), որի հետևանքով արհեստականորեն վատթարացրել են իրենց բնակարանային պայմանները.

4) երկրաշարժից հետո հրաժարվել են բնակարանի (բնակելի տան) ժառանգությունից կամ ժառանգության բացման օրվանից սահմանված ժամկետում դիմում չեն ներկայացրել բնակարանի (բնակելի տան) ժառանգման իրավունքի վկայական ստանալու համար.

5) սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ երկրաշարժի հետևանքով քանդված կամ քանդման ենթակա բնակելի տան դիմաց նախկին Հայխնայրանկում բացված իրենց ավանդային հաշիվներին փոխանցված փոխհատուցման միջոցներով կառուցել են բնակելի տուն.

6) չեն ներկայացրել նույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև 9.1-ին կետի համաձայն անհրաժեշտ փաստաթղթեր.

7) ներկայացրել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Կարգի վերոնշյալ կետերի վերլուծությունից հետևում է, որ Կարգով սահմանված է

բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային առաջնահերթության որոշման չափանիշները: Կարգով սահմանված է, որ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունքը ծագում է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր մինչև երկրաշարժը՝ 07.12.1988 թվականը, ունեցել են բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է կամ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն ենթակա է քանդման: Բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիների դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձանց դիմումները, ովքեր չեն ներկայացրել Կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև 9.1-ին կետով պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, այսինքն՝ Կարգի վերոնշյալ դրույթներին համապատասխան այն փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նաև համոզմունքի ձևավորումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պարզում է այս կամ այն ապացույցի վերաբերելիության հարցը:

Վերոնշյալ մեկնաբանությունների հիման վրա անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն անրձանագրում է հետևյալը.

Կաթնաջուրի գյուղապետարանի 1986-1990 թվականների տնտեսությունների գրքում նշված չէ, թե Բարսեղ և Սեդա Աղազարյանները երբևիցե են վարում առանձին տնտեսություն և որ հասցեներում: Իսկ 1988 թվականի դեկտեմբերից մինչ օրս Բարսեղ և Սեդա Աղազարյանները փաստացի բնակվում են ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր գյուղի 10-րդ փողոցի թիվ 5 տնակ հասցեում: ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կողմից Բարսեղ Աղազարյանին ուղղված 02.03.2009 թվականի թիվ ԿԳԵ-20 գրությամբ նշվել է, որ Կաթնաջուրի գյուղապետարանի 1986-1990 թվականների տնտեսությունների գրքերի համաձայն՝ 01.01.1986 թվականի դրությամբ Բարսեղ Աղազարյանը մոր՝ Սեդա Աղազարյանի հետ համարվել է մեկ տնտեսություն և ունեցել է մեկ բնակարան: Այժմ Բարսեղ Աղազարյանի ընտանիքը բաղկացած է մեկ անձից, իսկ Բարսեղ Աղազարյանի նախատեղաշարժյան բնակարանի դիմաց, որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիք, Կաթնաջուր համայնքի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում ընդգրկված է Բարսեղ Աղազարյանի մայրը՝ Սեդա Աղազարյանը: Այսինքն՝ տնտեսությունների գրքերում Բարսեղ Աղազարյանը որպես առանձին տնտեսու-

թյուն հաշվառված չի եղել և Բարսեղ Աղազարյանի անվամբ առանձին բնակարան գրանցված չէ: Հետևաբար Բարսեղ Աղազարյանը չի ընդգրկվել Կաթնաջուր համայնքի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելիս, իսկ Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռն անփոփոխ թողնելիս պատճառաբանել են, որ Գյուղապետարանի կողմից մերժման մասին գրության համար փաստացի որպես իրավական հիմք է ընդունվել Կարգի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 6-րդ կետի 3-րդ ենթակետը: Կաթնաջուր համայնքի ղեկավարի կողմից 02.03.2009 թվականի թիվ ԿԳԵ-20 մերժման մասին գրության ընդունման պահին փաստացի առկա են եղել Կարգի՝ տվյալ պահին գործող 6-րդ կետով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը հայցվորին հերթացուցակում որպես մեկսենյականոց բնակարան ստացող անձ հաշվառելու համար: Այն է՝ առկա է եղել հայցվորի անձնագիրը, ամուսնալուծության վկայականը, դատարան ներկայացված 1986-1990 թվականների տնտեսական գրքի (Անձնական հաշիվ N 177) 28-րդ տողի և 4-րդ բաժնի գրառումների հիման վրա Գյուղապետարանը հնարավորություն է ունեցել պարզել 07.12.1988 թվականի դրությամբ հայցվորի ընտանիքի կազմը: Առկա է եղել 30.08.2002 թվականի թիվ 916854 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի թիվ 06052 39-17 կադաստրային ծածկագրով 0,095հա մակերեսով տնամերձ հողամասը հայցվորին սեփականության իրավունքով պատկանելու մասին, հայցվորի անապահովության համակարգում ընդգրկվածության և անապահովության ցուցանիշը հաստատող ընտանիքի սոցիալական անձնագիրը, հայցվորին սեփականության իրավունքով պատկանող երկրաշարժի հետևանքով քանդված բնակելի տան դիմաց նախկին Հայինսայբանկում բացված ավանդային հաշվի գրքույկը: Տվյալ դեպքում, պատասխանող Գյուղապետարանը չի ապահովել վարչական վարույթով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը և չի բացահայտել գործի բոլոր, այդ թվում՝ հայցվորի օգտին առկա հանգամանքները: Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ 07.12.1988 թվականին՝ երկրաշարժի պահին, Բարսեղ Աղազարյանն իր ընտանիքով (ինքը, կինը և երկու դուստրերը), բաժանված է եղել մոր՝ Սեդա Աղազարյանի տնտեսությունից և կազմել է առանձին տնտեսություն, ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում թիվ 06052 39-17 կադաստրային ծածկագրով 0,095հա մակերեսով տնամերձ հողամասի վրա ունեցել է բնակելի տուն, որը քանդվել է երկրաշարժի հետևանքով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների վերոգրյալ հիմնավորումները և եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Բարսեղ Աղազարյանի կողմից որպես ապացույցներ ներկայացված փաստաթղթերով՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներով, տեղեկանքներով հաստատվում են բացառապես այն հանգամանքները, որ Բարսեղ Աղազարյանը ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուրի համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 18.04.1991 թվականի թիվ 7 որոշման հիման վրա մասնակցել է հողի սեփականաշնորհմանը և Բարսեղ Աղազարյանի ու իր ընտանիքի անդամների անունով գրանցվել են հողամասեր, միաժամանակ, սույն գործում առկա ապացույցներով որևէ կերպ չի հաստատվում այն փաստական հանգամանքը, որ Բարսեղ Աղազարյանի ընտանիքը 07.12.1988 թվականի դրությամբ համարվել է առանձին տնտեսություն և ունեցել է առանձին բնակելի տուն: Վերջիններս նախապայման են աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած և անօթևան մնացած, բնակարանի կարիքավոր ընտանիքների հաշվառման հերթացուցակում ընդգրկվելու համար:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, որպիսի խախտման արդյունքում առանց որևէ համապատասխան ապացույցի առկայության հաստատված է համարել այն հանգամանքը, որ 07.12.1988 թվականին՝ երկրաշարժի պահին, Բարսեղ Աղազարյանն իր ընտանիքով (ինքը, կինը և երկու դուստրերը), բաժանված է եղել մոր՝ Սեդա Աղազարյանի տնտեսությունից և կազմել է առանձին տնտեսություն, ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում թիվ 06052 39-17 կադաստրային ծածկագրով 0,095 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա ունեցել է բնակելի տուն, որը քանդվել է երկրաշարժի հետևանքով կամ ենթակա է քանդման:

Վերլուծելով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման վերաբերյալ հիշատակված իրավական ակտի համապատասխան դրույթները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չեն ապացույցներ, որով կհիմնավորվեն՝ Կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետով և 9.1-րդ կետով սահմանված 07.12.1988 թվականի դրությամբ ընտանիքի կազմի, ինչպես նաև բնակելի տուն ունենալու մասին փաստը, այսինքն՝ քաղվածք համապատասխան բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքից, դրա բացակայության դեպքում արխիվային տեղեկանք և (կամ) այլ փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը, իսկ նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում՝ տվյալ համայնքի ավագանու որոշումը՝ 07.12.1988 թվականի դրությամբ ընտանիքի կազմի և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին: Այսինքն՝ սույն գործով Բարսեղ Աղազարյանի կողմից չեն ներկայացվել այնպիսի վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, որով կհաստատվեր վերոգրյալ փաստը: Հետևաբար, Գյուղապետարանը, իրավացիորեն ղեկավարվելով Կարգի վերոնշյալ դրույթներով, 02.03.2009 թվականի թիվ ԿԳԵ-20 գրությամբ, որոշել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում չընդգրկել Բարսեղ Աղազարյանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գյուղապետարանի 02.03.2009 թվականի թիվ ԿԳԵ-20 գրությունն անվավեր ճանաչելու և հայցվորին աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած անօթևան մնացած բնակարանի կարիքավոր ընտանիքների հաշվառման հերթացուցակում ընդգրկելու պահանջների մասին հայցապահանջները ենթակա են մերժման:

Նշված պատճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.12.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Բարսեղ Աղազարյանի հայցն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուրի գյուղապետարանի, երրորդ անձինք ՀՀ Լոռու մարզպետարանի, ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուրի գյուղական համայնքի ղեկավարի կողմից 02.03.2009 թվականի թիվ ԿԳԵ-20 վարչական ակտն անվավեր ճանաչելու և ՀՀ կառավարության 13.12.2008 թվականի թիվ 1337-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուրի գյուղապետարանին պարտավորեցնելու իրեն աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած անօթևան մնացած բնակարանի կարիքավոր ընտանիքների հաշվառման հերթացուցակում ընդգրկելու պահանջների մասին, մերժել:

2. Բարսեղ Աղազարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար պակաս վճարված պետական տուրքի գումար:

Բարսեղ Աղազարյանից հօգուտ ՀՀ քաղաքաշինության նախարարության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Բարսեղ Աղազարյանից հօգուտ ՀՀ քաղաքաշինության նախարարության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Բարսեղ Աղազարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար պակաս վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/3271/05/12
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ա. Աբովյան
Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/3271/05/12**
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

2014 թվականի հուլիսի 18-ին,
դռնբաց դատական նիստում, քննելով «Ռեվերդի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.11.2013 թվականի որոշման
դեմ՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հայցի
ընդդեմ Ընկերության՝ դեղատնային գործունեության լիցենզիայի գործողությունը դադա-
րեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նախարարությունը պահանջել է դադարեցնել Ընկերությանը
07.07.2003 թվականին տրված դեղատնային գործունեության թիվ Կ-XX-000252 լիցեն-
զիայի գործողությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան)
04.07.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.11.2013
թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի
04.07.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նախարարությունը:

2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ, 6-րդ, 8-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 48-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ և 624-րդ հոդվածները, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին և 37-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 6-10-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին, 2-րդ, 6-րդ, 24-26-րդ, 64-68-րդ, 114-րդ, 117.11-117.14-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն վարչական գործը հարուցվել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիման վրա: Դատարանում և Վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվել է բացառապես այդ իրավական հիմքի շրջանակներում, մասնավորապես՝ Ընկերությունն իր դատավարական պաշտպանությունը կառուցել է համապատասխան իրավադրույթների վերլուծության հիման վրա, ներկայացրել և հետագոտել է ապացույցներ այդ իրավական իրողության հաշվառմամբ, որպիսի հանգամանքը դարձրել է դատական գործընթացը կանխատեսելի և որոշակի: Բացի այդ, Նախարարության վերաքննիչ բողոքի հիմքում նույնպես ընկած են եղել արդեն իսկ հիշատակված իրավական նորմերը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, չունենալով դրա լիազորությունը, կամայականորեն ընդլայնելով դատական հայեցողության սահմանները, իր որոշման հիմքում դրել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում: Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ հիմքով լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման՝ անկախ այլ փաստարկներից: Այս անակնկալ և անկանխատեսելի դատավարական «հնարքի» կիրառմամբ Վերաքննիչ դատարանն Ընկերությանը գրկել է համարժեք իրավական (դատական) պաշտպանության արդյունավետ միջոցների հնարավորությունից, կամայականորեն խախտել է իր՝ վերաքննիչ բողոքն ըստ էության քննելու լիազորության սահմանները՝ դուրս գալով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով սահմանված երաշխիք-կարգավորման շրջանակներից:

Վերաքննիչ դատարանը խախտել է գործի քննության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիության պահանջները և չի համապատասխանել «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի» բարձր չափանիշներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.11.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ օրինական ուժ տալ Դատարանի 04.07.2013 թվականի վճիռն կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1. Վճարելի բողոքի պատասխանի փաստարկները

Բողոք բերած անձը հաշվի չի առել, որ վարչական մարմիններն օժտված են լիցենզիայի գործունեությունը դադարեցնելու հայցապահանջով դատարան դիմելու իրավունքով:

Բողոք բերած անձն անտեսել է նաև, որ վարչական մարմինը պարտավոր չէ ստուգման մասին նախապես ծանուցել դեղատնային գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտին, ինչն այդպիսի ստուգումներ իրականացնելու՝ օրենքով սահմանված առանձնահատկություններից մեկն է: Բացի այդ, Դատարանը, անտեսելով գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի պահանջները, ՀՀ ֆինանսների նախարարությանը չի ներգրավել որպես երրորդ անձ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը և հիմնավորումներն անհիմն են, քանի որ Դատարանի կողմից ապացույցները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի չհետազոտելու և դրանք սխալ գնահատելու արդյունքում խախտվել են գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության հիմնարար հատկանիշները: Հետևաբար վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Նախարարությունը 07.07.2003 թվականին Ընկերությանը տվել է դեղատնային գործունեության թիվ Կ-XX-000252 լիցենզիան (հատոր 1-ին, գ.թ. 15):

2) ՀՀ առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) 08.05.2012 թվականի «ՌԵՎԵՐԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում գնում գնելու իրականացնելու մասին» թիվ 999-Ա հրամանով ստեղծվել է հանձնաժողով (անդամներ՝ Գայանե Մկրտչյան, Հարություն Հարությունյան, Մարինե Դալյաբյան), (այսուհետ՝ Հանձնաժողով), որին հրամայվել է Նախարարության կողմից 08.05.2012 թվականին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 08.05.2012 թվականից մինչև 11.05.2012 թվականն Ընկերությունում իրականացնել գնում (գործունեության վայրը՝ Երևան քաղաքի Ավանեսովի 2-րդ նրբ., թիվ 8/2.)՝ Ընկերության գործունեությունը ՀՀ դեղերի և լիցենզավորման ոլորտները կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանությունը պարզելու նպատակով (հատոր 1-ին, գ.թ. 13):

3) Նշված գնման արդյունքում Հանձնաժողովը 08.05.2012 թվականին կազմել է ակտ, որով արձանագրվել է, որ Ընկերության կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 29.06.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման, բժշկական միջին մասնագիտական ու բարձրագույն կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» թիվ 867 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգով» սահմանված լիցենզավորման պարտադիր պայմաններն ու պահանջները: Մասնավորապես՝ պարզվել է, որ դեղատնային կրպակում բացակայում է սանհանգույցը՝ լվացարանով (2քմ մակերես), իսկ գրասենյակ/հանգստի սենյակը 7,2քմ մակերես է (սվազագույն 8քմ մակերեսի փոխարեն), առևտրի սրահ/սպասարանը՝ 14,5քմ մակերես (սվազագույն 18քմ մակերեսի փոխարեն): Բացի այդ, դեղատնային կրպակում բացակայել են դեղերի պետական գրանցամատյանը, հիմնական դեղերի ցանկը, հագուստի պահարան՝ անձնական և աշխատանքային հագուստը միմյանցից մեկուսացված պահելու համար, Նախարարի 14.09.2007 թվականի թիվ 1416-Ն հրամանով հաստատված դեղատնային կրպակի առաջին օգնության պարագաների ցանկից՝ հիպոթերմիա առաջացնող փաթեթը, բեկակալը (հատոր 1-ին, գ.թ. 9-11):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սովյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայցի, ինչպես նաև վերաքննիչ բողոքի իրավական հիմքերի փոփոխման անթույլատրելիության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք վերաքննիչ դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին արյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատարանի ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին արյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր կյուրական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»):

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ

հողվածի 2-րդ մասի 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցվորի պահանջը, այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը և հայցվորի պահանջի իրավական հիմքերը:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն՝

1. հայցվորը հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխել մինչև դատաքննություն նշանակելը: Դատարանը կարող է թույլ չտալ նման փոփոխություն, եթե այն բերում է հայցի էության փոփոխության: Հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխվել գործը քննող դատարանի ընդդատության սահմաններում:

2. պատասխանողը հայցադիմումի լրացումն ստանալուց հետո կարող է ներկայացնել փոփոխված հայցադիմումի վերաբերյալ իր պատասխանը՝ նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ վերաքննիչ բողոքում նշվում են նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, այդ խախտումների, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները, բողոք բերող անձի պահանջը:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ նախկինում ձևավորած հետևյալ դիրքորոշումը:

Հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը դատական ակտ է կայացնում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը:

Փաստորեն, հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու իրավական հնարավորություն, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ներկայացնում է այն հանգամանքների փոփոխությունը, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքին համապատասխան հայցի հիմքը և առարկան փոխելու իրավունքը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի:

Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմ-

քերը, դատարանը գործով ապացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի տրամի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա տրամերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից (*յրենս, ԱԶ Էդմոնդ Ասատրյանը և Կարինե Բաղջյանն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ վարչական գործի քննության ընթացքում հայցի հիմքը կամ առարկան կարող են փոփոխվել միայն մինչև գործը դատաքննության նշանակելը և այն էլ՝ միայն հայցվորի կողմից: Հայցի հիմքը կամ առարկան փոփոխելը, փաստորեն, համարվում է հայցվորի իրավունքը և միայն հայցվորը վարչական գործի քննության ընթացքում իր հայեցողությամբ կարող է որոշել՝ օգտագործել այդ իրավունքը, թե ոչ: Դատարանն իր հերթին կարող է որոշել՝ թույլ տալ հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն, այսինքն՝ բավարարել հայցվորի նման խնդրանքը, թե ոչ: Սա նշանակում է, որ դատարանն իրավասու չէ իր նախաձեռնությամբ փոխել հայցի հիմքը և առարկան և պետք է քննի գործը հայցվորի կողմից վկայակոչված հայցի հիմքի և առարկայի շրջանակներում:

Իր նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության իրացման առանձնահատկություններին՝ Վճռարեկ դատարանը գտել է, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*յրենս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կուրիորտի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ «Ջորջ ընդ Բրանդոն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշմանն ի հավելում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն և չի վերաբերում դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայցի իրավական հիմքերը լրացնելուն, դատարանի նախաձեռնությամբ վեճի սահմաններից դուրս գալուն, ինչպես նաև սույն սկզբունքը վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում սեփական նախաձեռնությամբ և ինքնուրույն լրացնել վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով և Դատարանում գործի դատական քննությունն ընթացել է բացառապես այդ իրավական հիմքի շրջանակներում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել՝

1) լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցվելու կամ ֆիզիկական անձի մահվան դեպքերում.

3) եթե լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հետևանքով պատճառվել է ծանր վնաս.

4) լիցենզավորված անձի կողմից նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված խախտումները պարբերաբար կատարելու դեպքում.

5) մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ նույն օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերի համաձայն լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում.

6) լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում կասեցման պահանջների խախտմամբ կասեցված գործունեություն կամ այդ գործունեության առանձին գործառույթ կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություն իրականացնելու դեպքում.

7) լիցենզավորված անձի դիմումի համաձայն.

8) լիցենզիայի ժամկետը լրանալու դեպքում.

9) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է դատական կարգով՝ լիցենզավորող մարմնի դիմումի համաձայն:

Նշված նորմերի բովանդակությունից հետևում է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել բացառապես դատարանի կողմից, և այդ նպատակով դատարան կարող է դիմել միայն համապատասխան լիցենզավորող մարմինը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Նախարարության (ՀՀ կառավարության 29.06.2002 թվականի թիվ 867 որոշման համաձայն՝ վերջինս համարվում է դեղատնային գործունեության ոլորտում լիցենզավորող մարմին) հայցադիմումի համաձայն և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիման վրա, իսկ որպես օրենքով նախատեսված այլ դեպք՝ Նախարարությունն իր հայցադիմումում մատնանշել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը, այն է՝ բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարեր այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ չի կատարել: Ելնելով վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից և հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից 08.05.2012 թվականին կազմված ակտով արձանագրված լիցենզավորման պարտադիր պայմանների ու պահանջների խախտումները՝ Նախարարությունը պահանջել է դադարեցնել Ընկերությանը տրված դեղատնային գործունեության լիցենզիայի գործողությունը:

Դատարանը, հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված ապացույցները,

ինչպես նաև իր կողմից իրականացված իրեղեն ապացույցների գնանման արդյունքները, հանգել է այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից 08.05.2012 թվականին կազմված ակտով արձանագրված լիցենզավորման պարտադիր պայմանների ու պահանջների խախտումները բացակայում են, հետևաբար բացակայում են նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով Ընկերության դեղատնային գործունեության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հիմքերը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, իր որոշման հիմքում դնելով մի շարք գրավոր ապացույցներ, գտել է, որ Ընկերությունը լիցենզավորման հայտ ներկայացնելիս կեղծ տեղեկություններ է ներկայացրել լիցենզավորման ենթակա գործունեության համար նախատեսված տարածքի և դեղատնային կրպակի հազվեցվածության վերաբերյալ: Հետևաբար, Ընկերության դեղատնային գործունեության լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի ոչ թե 9-րդ, այլ 1-ին կետի հիմքով, այն է՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում: Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել գործի քննության ընթացքում բարձրացված մյուս հարցերին՝ իր որոշման մեջ շարադրելով. «(...) *անփոփելով կարգաված վերլուծությունը՝ Վերաքննիչ դատարանը վերացած է գնահատում կողմերի մասցած փաստարկներին անդրադառնալու դպրավարական անհրաժեշտությունը, քանի որ դրանց կապակցությամբ սրացվելիք ցանկացած հնարավոր արդյունք այլևս չի կարող հանգեցնել այսպեղ սրացված ամփոփիչ եզրահանգումների փոփոխության (...)*»:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործի քննության ընթացքում սեփական նախաձեռնությամբ դուրս է եկել Դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել է հայցի հիմքը և կայացրել դատական ակտ այնպիսի իրավական և փաստական հիմքերով, որոնք Դատարանում քննության առարկա չեն դարձվել: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, պարտավոր էր վերանայել Դատարանի վճիռը Նախարարության հայցադիմումում նշված իրավական հիմքի, այն է՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի շրջանակներում, ինչը չի արել:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործի քննության արդյունքում կայացնելով Նախարարության վերաքննիչ բողոքը բավարարող որոշում, այն պատճառարանել է այնպիսի իրավական և փաստական հիմքերով, որոնք Դատարանում դատական քննության ընթացքում քննարկման առարկա չեն դարձել: Սույն գործը քննելիս Վերաքննիչ դատարանը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, պատճառաբանված ներքին համոզման հանգելու նպատակով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել սույն գործի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները: Ավելին, Վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ եզրահանգելով, որ Ընկերության դեղատնային գործունեության լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի ոչ թե 9-րդ, այլ 1-ին կետի հիմքով, ըստ էության, դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ, ինչպես արդեն նշվել է, սույն գործի քննությունը հարուցվել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիման վրա և իրականացվել է բացառապես այդ իրավական հիմքի սահմաններում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունի միայն այն հարցը, թե Ընկերության դեղատնային գործունեության լիցենզիայի գործողությունը ենթակա է արդյոք դադարեցման «Լիցենզա-

վորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով, թե ոչ: Վերաքննիչ դատարանը պարտավոր էր բողոքը քննել և դատական ակտը վերանայել բացառապես այդ իրավական հիմքի սահմաններում և իրավասու չէր դադարեցնել Ընկերության ղեղապետային գործունեության լիցենզիայի գործողությունն օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով, որի կապակցությամբ Դատարանն ընդհանրապես քննություն չի իրականացրել:

Այլ կերպ ասած՝ Վերաքննիչ դատարանը կարող էր որոշում կայացնել Ընկերության ղեղապետային գործունեության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին միայն այն դեպքում, եթե ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, պատճառաբանված ներքին համոզման հանգելու նպատակով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով սույն գործի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները՝ հանգեր այն եզրակացության, որ խնդրո առարկա լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով: Հակառակ եզրակացության հանգելու դեպքում Նախարարության վերաքննիչ բողոքը պետք է մերժվեր՝ նշված հիմքով լիցենզիայի գործողությունը դադարեցման ոչ ենթակա լինելու պատճառաբանությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սովյա դեպքում Վերաքննիչ դատարանը, դուրս գալով գործի քննության շրջանակներից, հաշվի չի առել, որ Դատարանի վճիռը չի համապատասխանում դատական ակտերի հիմնավորվածության չափանիշներին: Մասնավորապես, Դատարանը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանիորեն չի հետազոտել սույն գործում առկա ապացույցները՝ իր վճռի հիմքում դնելով գլխավորապես 06.05.2013 թվականին իր կողմից Ընկերությունում իրականացրած իրեղեն ապացույցների գնման արդյունքները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալի մասով ապացույցներ պահանջելու և դրանց հիման վրա գործի փաստերն ի պաշտոնե պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.11.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 44-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի, 101-րդ հոդվածի 4-րդ կետի, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ և 113-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ կարգով չի հետազոտել և սխալ է գնահատել գործում առկա ապացույցները, ինչի արդյունքում կայացված դատական ակտը ճիշտ չի պատճառաբանել և հանգել է սխալ հետևության:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է, որ հայցի ապահովման և գումարի բռնագանձման, պարտապահի գույքի վրա արգելանք դնելն իրենցից ներկայացնում են երկու առանձին գործընթացներ: Ընդ որում, երկու դեպքում էլ պարտապահի գույքի վրա արգելանք դնելիս կամ բռնագանձում տարածելիս հարկադիր կատարողը պարտավոր է արգելանք դնել կամ բռնագանձում տարածել այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետը, ըստ որի՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Անհիմն է Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը, քանի որ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, թիվ Ե-ԲԴ/0108/02/09 քաղաքացիական գործով հայցի ապահովման նպատակով բավարարելով հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին Բանկի միջնորդությունը, 18.02.2009 թվականի որոշմամբ արգելանք էր դրել Իգաբեղլա Վանլյանին ու Սարգիս Հարությունյանին պատկանող այլ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա: Նշված որոշման կատարման նպատակով 18.02.2009 թվականին տրվել է թիվ Ե-ԲԴ/0108/02/09 կատարողական թերթը, որի հիման վրա Ծառայության 26.02.2009 թվականի որոշմամբ հարուցվել էր թիվ 01/02-442/09 կատարողական վարույթը, և դրա շրջանակներում 26.02.2009 թվականի որոշմամբ արգելանք է դրվել Իգաբեղլա Վանլյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա:

Շեռևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով նշված արգելանքը՝ որպես հայցի ապահովման միջոց, պետք է պահպանվեր մինչև վճռի կատարումը:

Մինչդեռ Ծառայությունը 03.05.2011 թվականի որոշումը կայացնելիս դուրս է եկել օրենքով իրեն վերապահաված իրավասությունների շրջանակից, ինչն էլ հանգեցրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի խախտմանը, ըստ որի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Բացի այդ, Ծառայության 03.05.2011 թվականի որոշման մեջ չի վկայակոչվել, թե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի հաստ-

կապես որ կետի հիմքով է ընդունվել այդ որոշումը:

Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ գնահատման չի արժանացվել նաև գործում առկա փաստաթղթերի՝ բողոքարկվող վարչական ակտի և Իզարելյա Վանլյանի հետ կատարման փուլում կնքված հաշտության համաձայնության ժամանակագրական տարբերությանը: Ոչ իրավաչափ վարչական ակտը կայացվել է 03.05.2011 թվականին, իսկ Բանկի և Իզարելյա Վանլյանի միջև հաշտության համաձայնությունը կնքվել է և վճռով հաստատվել է 09.02.2012 թվականին, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչական ակտի ընդունման պահից 9 ամիս անց: Պատշաճ չի ուսումնասիրվել նաև 09.02.2012 թվականին կնքված հաշտության համաձայնության վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պայմանները:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել գործով քննարկվող խնդրի շրջանակներից և պատասխան կամ վերլուծություն չի տվել այն հարցին, թե Ծառայության 03.05.2011 թվականի որոշումը ոչ իրավաչափ է, թե ոչ՝ դրա կայացման պահին, այլ վկայակոչվել է 15.11.2012 թվականի, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչական ակտի կայացումից 17 ամիս անց Իզարելյա Վանլյանին սնանկ ճանաչելու վճիռը և եզրակացրել, որ Դատարանը լրիվ չի հետազոտել և գնահատել գործում առկա բոլոր ապացույցները և դրանց ամբողջության մեջ չի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Մինչդեռ Դատարանը, հետազոտելով Ծառայության 03.05.2011 թվականի որոշումը, իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ վիճարկվող որոշումն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, ինչը հանգեցրել է նույն օրենքի 44.1-րդ հոդվածի չհիմնավորված կիրառմանը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 06.06.2013 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքացիական դատարանի 18.02.2009 թվականի որոշմամբ բավարարվել է հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին Բանկի միջնորդությունը, և որոշվել է արգելանք դնել պատասխանողներ Իզարելյա Վանլյանին ու Սարգիս Հարությունյանին պատկանող այլ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա հայցագանի՝ 343.952,35 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 4.000 ՀՀ դրամի, 2.099.707,70 ՀՀ դրամի չափով, և 18.02.2009 թվականին տրվել է թիվ Ե-ԲԴ/0108/02/09 կատարողական թերթը (թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթ, գ.թ. 2, 3-4):

2) Ծառայության 26.02.2009 թվականի որոշմամբ հարուցվել է թիվ 01/02-442/09 կատարողական վարույթը, իսկ 26.02.2009 թվականի որոշմամբ արգելանք է դրվել Իզարելյա Վանլյանին (Երևանի Չարենցի փողոցի թիվ 16, AF0234027) սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա (թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթ, գ.թ. 5-6):

3) Ծառայության 09.04.2009 թվականի որոշմամբ ավարտվել է թիվ 01/02-442/09 կատարողական վարույթը (թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթ, գ.թ. 53):

4) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 12.11.2010 թվականին տրվել է թիվ Ե-ԲԴ/0108/02/09 կատարողական թերթը, համաձայն որի՝ Իզարելյա Վանլյանից հօգուտ Բանկի պետք է բռնագանձել 215.686,61 ԱՄՆ դոլար (թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթ, գ.թ. 64):

5) Ծառայության 14.02.2011 թվականի որոշմամբ վերսկսվել է 09.04.2009 թվականին ավարտված թիվ 01/02-442/09 կատարողական վարույթը՝ թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթի համարով՝ Իգարելլա Վանլյանից հոգուտ Բանկի 215.686,61 ԱՄՆ դոլար և որպես կատարողական գործողությունների կատարման ծախս՝ 10.784 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելու մասին (թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթ, գ.թ. 71)։

6) Պարտապան Իգարելլա Վանլյանը 28.04.2011 թվականին Ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետին հասցեագրած դիմումով խնդրել է թիվ 1119/11 վարույթով Չարենցի փողոցի թիվ 16 հասցեի վրա դրված արգելանքը վերացնել՝ որպես հիմնավորում նշելով, որ գրավադրված Երևանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 36 հասցեի շուկայական արժեքը գերազանցում է պարտավորության չափից, և իրեն պատկանում է նաև Ն. Դումանի տուն 15 անշարժ գույքը (թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթ, գ.թ. 98)։

7) Ծառայությունը 03.05.2011 թվականին կայացրած որոշմամբ վերացրել է Իգարելլա Գրիգորի Վանլյանին (Երևանի Չարենցի թիվ 16) պատկանող Երևանի Չարենցի փողոցի թիվ 16 տան վրա 26.02.2009 թվականի որոշմամբ, 27.07.2009 թվականի թիվ Եա 2644/02 գրությանը, 02.03.2009 թվականի թիվ ԷԼԲ 02/1872 էլ. հաղորդագրությամբ դրված արգելանքները (գ.թ. 10 և թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթ, գ.թ. 105)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով։

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք օրենսդիրը հարկադիր կարարողին օժտել է պարտապանի դիմումի հիման վրա որպես հայցի սպահովման միջոց կիրառված արգելանքի վերացման լիազորությամբ, թե ոչ։

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք։

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք։

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»։

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քննելով Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռում նշել է. «Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրա-

վունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ, այդ իրավունքը կլինե՞ր անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլինե՞ր, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլինե՞ր իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (*չե՛ս, նաև Բուրդոնի ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի որոշումը՝ կետ 34*)»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի և դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի վերը նշված հիմնական իրավունքների լույսի ներքո:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածում օրենսդիրն ամրագրել է հայցի ապահովման միջոցները: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածում ամրագրված հայցի ապահովման միջոցներից է պատավաստողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագրի չափով արգելանք դնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին կետի հա-

մաճայն՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխելու այն: Նույն հոդվածի 2-րդ կետում ամրագրված է, որ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու հարցը լուծվում է նույն օրենսգրքի 101-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործը քննող դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կարող է վերացնել հայցի ապահովումը: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում, հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (այսուհետ՝ դատարաններ) դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարման ծառայության խնդիրները, դրա կազմավորման և գործունեության կարգը, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող պաշտոնատար անձանց (այսուհետ՝ հարկադիր կատարողներ) լիազորությունները սահմանվում են «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և նույն օրենքով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է:

Հարկադիր կատարման միջոցները սահմանված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, համաձայն որի դրանք են՝

1) պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով.

2) պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը.

3) այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը.

4) կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը.

4.1) հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը.

5) կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ:

Նույն օրենքի 43-րդ հոդվածով ամրագրվել են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ընդհանուր դրույթները: Համաձայն նշված իրավանորմի 1-3-րդ մասերի՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք):

Պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը:

Կատարողական թերթով բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա:

Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրա-

մական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե

- 1) առկա են նույն օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը.
- 2) դատարանը որոշում է կայացրել գույքն արգելանքից հանելու մասին.
- 3) պահանջատերը հետ է պահանջել կատարողական թերթը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցի ապահովումն օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է: Այն ուղղված է անձանց խախտված գույքային իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հայցի ապահովման ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ դրանով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը: Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկվելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (*տե՛ս*, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալնես Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի թիվ ՎԳ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը):

Այսպիսով, հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը, ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է հանդիսանում: Օրենսդիրը, միաժամանակ, հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի առանձնահատկությունները, հստակ սահմանել է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու, հայցի ապահովումը վերացնելու, ինչպես նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովման միջոցը ձևափոխելու լիազորությամբ օժտված է բացառապես դատարանը, որն իր այդ լիազորությունն իրականացնում է համապատասխան որոշում ընդունելով:

Իրավական պետության սահմանդրական սկզբունքի և իրավունքի գերակայության երաշխավորման նպատակով օրենսդիրն ամրագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար և ելթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ միաժամանակ սահմանելով դատական ակտերի կատարումն ապահովելու պայմանները և կարգը, նշելով, որ դատական ակտերի հարկադիր կատարումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության խնդիրն է, որը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն իրականացնում է հարուցված կատարողական վա-

րույթի շրջանակներում՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կատարողական գործողություններ իրականացնելու միջոցով:

Վերը նշված նպատակներին համապատասխան օրենսդիրը նախատեսել է նաև պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ինստիտուտը՝ նշելով, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է նաև գույքի վրա արգելանք դնելը: Միաժամանակ, օրենսդիրը հստակ սահմանել է այն իրավական հիմքերը, որոնց առկայության պարագայում հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը արգելանքից հանվում է, դրանք են՝ 1. առկա են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը, 2. դատարանը որոշում է կայացրել գույքն արգելանքից հանելու մասին, և 3. պահանջատերը հետ է պահանջել կատարողական թերթը. բացի այս հիմքերից որևէ այլ հիմքով հարկադիր կատարողն իրավասու չէ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքն արգելանքից հանելու մասին որոշում կայացնել:

Այսպիսով, վերաբերելի իրավական նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հարկադիր կատարողին չի ծծտել պարտապանի նմանօրինակ դիմումի հիման վրա որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքի վերացման լիազորությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ Ե-ՔԴ/0108/02/09 քաղաքացիական գործով հայցի ապահովման նպատակով Երևանի քաղաքացիական դատարանը, բավարարելով հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին Բանկի միջնորդությունը, 18.02.2009 թվականի որոշմամբ արգելանք է դրել պատասխանողներ Իգաբեղլա Վանլյանին ու Սարգիս Հարությունյանին պատկանող այլ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա և այդ որոշման կատարման նպատակով 18.02.2009 թվականին տվել է թիվ Ե-ՔԴ/0108/02/09 կատարողական թերթը, որի հիման վրա Ծառայության 26.02.2009 թվականի որոշմամբ հարուցվել է թիվ 01/02-442/09 կատարողական վարույթն ու դրա շրջանակներում 26.02.2009 թվականի որոշմամբ արգելանք դրվել Իգաբեղլա Վանլյանին (Երևանի Չարենցի փողոցի թիվ 16 տան) սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 12.11.2010 թվականին տրվել է թիվ Ե-ՔԴ/0108/02/09 կատարողական թերթը, համաձայն որի՝ Իգաբեղլա Վանլյանից հօգուտ Բանկի պետք է բռնագանձել 215.686,61 ԱՄՆ դոլար: Ծառայության 14.02.2011 թվականի որոշմամբ վերսկսվել է 09.04.2009 թվականին ավարտված թիվ 01/02-442/09 կատարողական վարույթը՝ թիվ 01/02-1119/11 կատարողական վարույթի համարով՝ Իգաբեղլա Վանլյանից հօգուտ Բանկի 215.686,61 ԱՄՆ դոլար և որպես կատարողական գործողությունների կատարման ծախս՝ 10.784 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելու մասին:

Իգաբեղլա Վանլյանը 28.04.2011 թվականին դիմում է ներկայացրել Ծառայությանը՝ խնդրելով Չարենցի փողոցի թիվ 16 տան վրա դրված արգելանքը վերացնել, քանի որ գրավադրված Այգեստան 10-րդ փողոցի թիվ 36 տան շուկայական արժեքը գերազանցում է պարտավորության գումարը, միաժամանակ արգելադրված է նաև իրեն պատկանող Ն. Դումանի թիվ 15 տունը: Ծառայությունը, հիմք ընդունելով Իգաբեղլա Վանլյանի դիմումը, 03.05.2011 թվականի որոշմամբ վերացրել է Երևանի Չարենցի փողոցի թիվ 16 տան վրա դրված արգելանքը:

Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ Ծառայության 03.05.2011 թվականի որոշումը բացարձակապես որևէ հիմնավորում չի պարունակում այն մասին, թե ինչու է հարկադիր կատարողը մինչև հայցը բավարարելու մասին վճռի կատարումը

վերացրել նույն վճռի կատարման նպատակով պարտապանի գույքի վրա դրված արգելանքը: Բացի այդ, արձանագրել է, որ «Ծառայության 03.05.2011 թվականի որոշման մեջ չի վկայակոչվել, թե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի հասկապես որ կետի հիմքով է ընդունվել այդ որոշումը, ՀՀ վարչական դատարանը, ապահովելով գործի փաստերն ի պաշտոնե պարզելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում ամրագրված սկզբունքի իրականացումը, 03.10.2012 թվականի թիվ ԴԴ-9-84117 գրությամբ Ծառայությունից պահանջել է դատարան ներկայացնել հիշատակված հարցի վերաբերյալ տեղեկություն, սակայն նշված տեղեկությունը պատասխանողի կողմից դատարանին չի ներկայացվել»: Նշել է նաև, որ «նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածում թվարկված հիմքերից 2-րդը՝ դատարանը որոշում է կայացրել գույքն արգելանքից հանելու մասին, և 3-րդը՝ պահանջատերը հետ է պահանջել կատարողական թերթը՝ բացակայում են, դատարանը ստիպված է եղել ենթադրել սույն գործով վիճարկվող որոշման ընդունման իրավական հիմքը և նույն գրությամբ պահանջել է Ծառայությունից դատարան ներկայացնել նաև հետևյալ տեղեկությունը. եթե վիճարկվող որոշումն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով, այսինքն՝ առկա են նույն օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը, ապա վկայակոչել 42-րդ հոդվածում նշված այն հիմքը, որի համաձայն ընդունվել է Ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի հարկադիր կատարող S. Մաճկալյանի 03.05.2011 թվականի որոշումը և գույքի վրա դրված արգելանքը վերացվել է»: Մինչդեռ «Պատասխանող կողմը պահանջված տեղեկությունը նույնպես չի ներկայացրել, որպիսի պարագայում դատարանը հաստատված է համարում, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումը սույն գործով վիճարկվող որոշման մեջ հիմնավորված չէ»: Դատարանը, հետազոտելով Ծառայության 03.05.2011 թվականի որոշումը, եկել է այն եզրակացության, որ վերը նշված որոշումն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, ինչը հանգեցրել է նույն օրենքի 44.1-րդ հոդվածի չհիմնավորված կիրառմանը:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով, նշել է, որ «Դատարանը դատական ակտով որևէ կերպ չի անդրադարձել և չի գնահատել սույն գործի համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ Երևանի քաղաքացիական դատարանի «Հայցի ապահովման միջոցների մասին» 18.02.2009 թվականի որոշմամբ և դրա հիման վրա տրված կատարողական թերթով պատասխանողներին պատկանող այլ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա, արգելանք է դրվել հայցագնի չափով, որը կազմել է 343.952,35 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, 4.000 ՀՀ դրամ և 2.099.707,70 ՀՀ դրամ, այսինքն՝ դատարանի կողմից որպես հայցի ապահովման միջոց՝ արգելանք է դրվել ոչ թե պատասխանողներին պատկանող որևէ կոնկրետ անվանական գույքի վրա, այլ որոշումը կրել է ընդհանուր բնույթ, և արգելանք է դրվել հայցագնի չափով, որի արդյունքում հարկադիր կատարողը պարտապանին պատկանող գույքի նկատմամբ հետախուզում է հայտարարել և այն հայտնաբերելով՝ արգելանքի վերցրել, ավելին, Դատարանի կողմից որևէ գնահատականի չի արժանացվել նաև այն փաստական հանգամանքը, որ Երևանի քաղաքացիական դատարանի թիվ Ե-ԲԴ/0108/02/09 գործով 21.05.2010 թվականին տրված կատարողական թերթի համաձայն՝ Իզաբելլա Վանյանից հոգուտ Բանկի պետք է բռնագանձել 215.686 ԱՄՆ դոլար 61 ցենտ, այսինքն՝ բռնագանձման գումարը պակաս է նախապես ներկայացված հայցագնի գումարից, որի չափով էլ կիրառվել էր հայցի ապահովումը, և նշվածների համատեքստում որևէ կերպ չի գնահատել նաև այն հանգամանքը, որ Երևան

քաղաքի Չարենցի փողոցի թիվ 16 տան վրա արգելանքը՝ վիճարկվող որոշմամբ վերացնելուց հետո դրված արգելանքները, պահպանվել են Երևանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 36 տան և Ն. Դումանի թիվ 15 տան նկատմամբ, որոնց շուկայական արժեքը, ըստ կատարողական վարույթում առկա գնահատման հաշվետվությունների, ակնհայտորեն ավել է թե՛ հայցագնի, թե՛ դատական ակտի հիման վրա բռնագանձման ենթակա գումարից»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումներն այն պատճառաբանությամբ, որ Ծառայության 03.05.2011 թվականի որոշմամբ կիրառված արգելանքը մասնակի վերացվել է և նշված որոշման կայացման համար հիմք է հանդիսացել Ծառայությանը հասցեագրված Իզաբելլա Վանլյանի գրությունը, որով վերջինս հայտնել է, որ արգելադրված Այգեստան 10-րդ փողոցի թիվ 36 հասցեի տան շուկայական արժեքը գերազանցում է պարտավորության չափը, և բացի այդ գույքից իրեն է պատկանում նաև անշարժ գույք հանդիսացող Ն. Դումանի թիվ 15 հասցեի տունը: Վճռաբեկ դատարանը վերը նշված դիրքորոշումների համատեքստում արդեն իսկ արձանագրել է, որ օրենսդիրը հարկադիր կատարողին չի օժտել պարտապանի նմանօրինակ դիմումի հիման վրա որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքի վերացման լիազորությամբ: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Նշված հոդվածում ամրագրված է իրավական պետության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը: Օրինականության սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա, այլ խոսքով, Սահմանադրությունը կամ օրենքը պետք է լիազորի պետական մարմին գործելու կամ չգործելու: Օրինականության սկզբունքը բացառիկ կարևոր նշանակություն ունի հատկապես այն ժամանակ, երբ պետական մարմիններն առչվում են մասնավոր անձանց հիմնական իրավունքների հետ:

Այսպիսով, Ծառայության 26.02.2009 թվականի որոշմամբ Իզաբելլա Վանլյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա դրված արգելանքը, որպես հայցի ապահովման միջոց, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 12.11.2010 թվականին տրված թիվ Ե-ԲԴ/0108/02/09 կատարողական թերթի պահանջի կատարումն ապահովող երաշխիք է հանդիսացել, որը ենթակա էր պահպանման մինչև վճռի կատարումը: Մինչդեռ Ծառայությունը 03.05.2011 թվականի որոշումը կայացնելիս, օժտված չլինելով պարտապանի նմանօրինակ դիմումի հիման վրա որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքի վերացման լիազորությամբ, դուրս է եկել օրենքով իրեն վերապահաված լիազորությունների շրջանակից, ինչն իր հերթին հանգեցրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետի խախտմանը, համաձայն որի՝ նշված արգելանքը՝ որպես հայցի ապահովման միջոց, պետք է պահպանվեր մինչև վճռի կատարումը:

Վճռաբեկ դատարանը, իրավակիրառ պրակտիկայում միասնական մեկնաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված, հարկ է համարում անդրադառնալ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածին նաև այն իմաստով, որ վիճարկվող որոշման մեջ պետք է հստակ նշված լինեք, թե ինչ հիմնավորմամբ է կատարման ենթակա վճռի կատարումն ապահովելու նպատակով արգելադրված գույքը հանվում արգելանքից, մինչդեռ Ծառայության 03.05.2011 թվականի որոշման մեջ բացակայում է նման հիմնավորումն այն պարագայում, երբ նշված օրենքով հստակ սահմանված են պարտապանի գույքն արգելանքից հանելու հիմքերը, այն է՝ արգելանքի տակ գտնվող

պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե առկա են նույն օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը, դատարանը որոշում է կայացրել գույքն արգելանքից հանելու մասին, պահանջատերը հետ է պահանջել կատարողական թերթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Նշված իրավանորմում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված որոշման մեջ, ի թիվս այլ վավերապայմանների, պետք է նշվեն նաև կայացվող որոշման հիմքերը՝ այն օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, որոնցով ղեկավարվել է հարկադիր կատարողը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում...:

Նույն օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական ակտի պարտադիր հիմնավորում պարունակելու օրենսդրի կողմից սահմանված պահանջը հարկադիր կատարողի կողմից խախտվել է: Օրենսդիրը հստակ սահմանել է, որ վարչական ակտը պետք է հիմնավորում պարունակի: Վարչական ակտում պետք է նշվեն համապատասխան վարչական ակտ ընդունելու համար բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնա-

րար իրավունքները: Միաժամանակ, վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում: Այսպիսով, հաշվի առնելով այն, թե ինչ նպատակով է օրենսդիրը նախատեսել վարչական ակտի հիմնավորված լինելու պահանջը, սույն պահանջի կատարումը չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն միայն նշանակի վարչական մարմնի պարտականություն՝ իր ընդունված վարչական ակտում լոկ հիշատակելու կիրառվող իրավական ակտը կամ իրավական նորմը: Վարչական մարմինը վարչական ակտ կայացնելիս պարտավոր է հիմնավորելու որոշման մեջ վկայակոչված իրավական նորմերի կիրառելիությունը՝ նշելով կիրառման ենթակա կոնկրետ իրավական նորմը, դրա համապատասխան մասը կամ կետը՝ բացահայտելով կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմի բովանդակությունը:

Այսպիսով, սույն գործով օրենսդրի կողմից սահմանված վարչական ակտը հիմնավորելու պարտադիր պահանջին համապատասխան հարկադիր կատարողը վիճարկվող որոշումն ընդունելիս պարտավոր էր հիմնավորելու որոշման մեջ վկայակոչված իրավա-նորմերի կիրառելիությունը՝ նշելով, թե կոնկրետ որ իրավանորմը, դրա մասը կամ կետն ինչ հիմնավորմամբ է ենթակա կիրառման՝ բացահայտելով կիրառման ենթակա իրավա-նորմի բովանդակությունը, այսինքն՝ Դատարանի եզրահանգումն այս հարցի վերաբերյալ ևս հիմնավոր է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները՝ նշված իրավունքի խախտման տեսանկյունից, վտանգ են պարունակում: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 06.06.2013 թվականի վճռին:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հոգուտ «Ինտեկոբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 45 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 700 օրինակ:

ԷԶԱԴՐՈՒՄԸ և ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ **Printinfo**
www.printinfo.am

ՀՀ, Երևան, Ծարուրի 37/1
հեռ.՝ (374 10) 465 382, 465 385
Էլ.փոստ՝ info@printinfo.am